

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ


ՉՈՐՐՈՐԴ ԳԻՐԲ.

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1890

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ.



	ԵՐԵՍ.
I. ՍՊԱՆԴԱՆՈՑ, պատկեր. ԲԱՖՖԻ	1
II. ԲԱՑ ԱԶԳՈՎ ԵՐԱԶ, ղրղյց (Պօլ Բուրժէից). ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ	10
III. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I ՈՂ, ԿԱՆԱՅԺ... (Լէ- օպարդիից). II. ԿԱՐ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ. III. ԲՈՒԳԸ- ՌՕՅԻ ՄԱԴՈՆՆԱՅԻ ԱՌԱԶ. Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.	27
IV. ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Ն. Սարոժէնկոյից)	30
V. ՄԻ ՄԵԾ ՅՕԴՈՒԱԾԻՑ ՄԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՏՈՐ. ԳԱՌՆԵՑԻ.	50
VI. ՄԻ ԿՆՈՋ ԽԵԼԱՅԻ ՄՏՔԵՐԸ. Յ. ԲԱՐԽՈՒԴԱՐ- ԵԱՆՑ.	66
VII. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, I. ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՁԵԶ (Թ. Մուրից). II. ՄԵԼՈՂԻԱ (Ֆրուզից) Ա. ԾԱ- ՏՈՒՐԵԱՆ.	86
VIII. ՄԱՌԳՕ, պատ. Ժիւլ Կլառեսսի.	89
IX. ԽՂՃԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ, հոգեք. պատ.	98
X. ԴԻՄԱԿԱՏԱՆԴԷՍ, ղրամա 4 արարուածով. Լերմոնտո- վից. Յ. ՋԱՆՈՒՄԵԱՆՑ.	112
XI. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I. ՄԵՆՔ ԿԸՌՎՈՒՄ ԵՆՔ, II. ԿՏԱԿ, III. ՎԱՀԱԳՆԱՅ ԾՆՈՒՆԴԸ. Ջ. ԲԱԼՈՒԴԵԱՆ.	224
XII. ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇԻՐԻՄ, բանաստ. ԲԱՖՖԻ	231
XIII. ՀԱՏՈՒՑՈՒՄՆ, բանաստ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ	234

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՒ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՋՈՐՐՈՐԴ ԳԻՐԲ.

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1890

УЧЕБНИКЪ СЛАВЯНОСЛАВЯНСКОМУ

Дозволено Цензурою, С.-Петербургъ. 1890 г. 8 Нояб.

СЛАВЯНОСЛАВЯНСКОМУ

УЧЕБНИКЪ

Типографія М. Бархударянъ, Газетный пер. д. Ланозова, Москва.

ВАНУНУ

0081

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

	ԵՐԵՎԱՆ
I. ՍՊԱՆԴԱՆՈՑ, պատկեր. ԲԱՅԵԹ	1
II. ԲԱՑ ԱԶԳՈՎ ԵՐԱԶ, զրոյց (ՊՈՂ Բուրժուէզ). ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ	10
III. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. I ՈՂ, ԿԱՆԱՅԲ... (ԼԵ- օպարդիէզ). II. ԿԱՐ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ. III. ԲՈՒԳԸ- ՌՕՅԻ ՄԱԴՈՆՆԱՅԻ ԱՌԱՋ. Յ. ՅՈՂԱՆՆԻՍԵԱՆ	27
IV. ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ն. Ստորոժնիկովսկի)	30
V. ՄԻ ՄԵԾ ՅՕԴՈՒԱԾԻՑ ՄԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՏՈՐ. ԳԱՌՆԵՑԻ.	50
VI. ՄԻ ԿՆՈՋ ԽԵԼԱՅԻ ՄՏԲԵՐԸ. Յ. ԲԱՐԻՈՒՈՒԴԱՐ- ԵԱՆՑ.	66
VII. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, I. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՁԵԶ (Թ. Մուրից). II. ՄԵԼՈՂԻԱ (Ֆրուզից) Ա. ԾԱ- ՏՈՒՐԵԱՆ.	86
VIII. ՄԱՌԳՕ, պատ. Ժիւլ Կլաուսսի.	89
IX. ԽՂՃԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ, հոգեր. պատ. } Գ. ՉՈՒԲԱՐ.	98
X. ԴԻՄԱԿԱՆԱՆԻԶՄ, զրամա 4 արարուածով. Լեքսիկոնո- վից. Յ. ՋԱՆՈՒՄԵԱՆՑ.	112
XI. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. I. ՄԵՆԲ ԿԸՌՎՈՒՄ ԵՆԲ, II. ԿՏԱԿ, III. ՎԱՆԱԳՆԱՅ ԾՆՈՒՆԴԸ. Ջ. ԲԱԼՈՒԴԵԱՆ.	224
XII. ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇԻՐԻՄ, բանաստ. ԲԱՅԵԹ	231
XIII. ՀԱՏՈՒՑՈՒՄՆ, բանաստ. Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ	234

XIV. ՄԻ ԵՐԵՍ ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ.	
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ	241
XV. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ, I. ԿԷՍ ԳԻՇԵՐ. II. ՍՈ.	
ՆԵՏ. III. ԹՇՈՒԱՌԻՆ. IV. ԱՒԽ, ԵՐԱՆԻ ԶԷ.	
Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	281
XVI. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I. ԱՆՊՏՈՒՂ ԵՐ-	
ԿՈՒՆԲ. II. ԷՅ, ՍԱ ԷԼ ԻՄ ՍԷՐԸ. III. ՀԱՅՈՒ	
ՄԵԾԵՐԸ. Զ. ԲԱՆՈՒՂԵԱՆ	285
XVII. ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ	290
XVIII. ԱՇՈՒՂԻ ԵՐԳ	336
XIX. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—ԴԱԽԻԹ ԵՒ ՄՅԵՐ. ԼԷՕ	237
XX. ՄԱՀԱՏՈՒՑԱԿ. ՄԿՐՏԻԶ ԷՄԻՆ.	278
XXI. ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.	279
XXII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	280

III. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I. ԱՆՊՏՈՒՂ ԵՐ-	
ԿՈՒՆԲ. II. ԷՅ, ՍԱ ԷԼ ԻՄ ՍԷՐԸ. III. ՀԱՅՈՒ	
ՄԵԾԵՐԸ. Զ. ԲԱՆՈՒՂԵԱՆ	285
XVII. ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ	290
XVIII. ԱՇՈՒՂԻ ԵՐԳ	336
XIX. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—ԴԱԽԻԹ ԵՒ ՄՅԵՐ. ԼԷՕ	237
XX. ՄԱՀԱՏՈՒՑԱԿ. ՄԿՐՏԻԶ ԷՄԻՆ.	278
XXI. ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.	279
XXII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	280

Ս Պ Ա Ն Դ Ա Ն Ո Ց .

Ա.

1872 թուականի վերջին ամսին էր: Թ.... քաղաքը խորին կերպով մրափում էր գիշերային խառարի մէջ: Իսկ մի խուլ անկիւնում, մի փոքրիկ և համեստ սննեակ դեռ լուսաւորւում էր ճրագի աղօտ լուսով: Այդ աղքատիկ բնակարանում, մահճակալի վերայ պառկած էր մանկահասակ պատանի, որոյ դունատ դէմքը, շիջած աչքերը և խորին կերպով հոգւոց հանելը, ցուցանում էին, թէ նա տանջվում էր ծանր հիւանդութիւնով:

Նորա մօտ ախուր դէմքով նստած էր մի երիտասարդ և հոգս էր տանում հիւանդին:

Դռա երկու պանդուխտ եղբայրներ էին, այնքան քնքոյշ սիրով միմեանց հետ կապւում, որք եկիլ էին այն քաղաքը Ասիայի խորին անկիւններից:

Աւագ եղբայրը իւր պարագմունքով խնամք էր տանում հայրենիքումը թողած ծնողաց ապրուստի, մի և նոյն ժամանակ հոգալով կրտսեր եղբօր կրթութեան համար, որ ուսանում էր նոյն քաղաքի մի գալլոցում, որ և այնօր հիւանդ դրած էր նորա մօտ:

Պատանին մի փոքր ուշի գալով, բաց արաւ փակած աշ-
քերը, և տեսնելով եղբօրը իւր մօտ հարցուց.

—Քանի՞ ժամն է:

—Երկրորդը, պատասխանեց մեծ եղբայրը:

—Դու դեռ չե՞ս քնել... Գնա՛, քնիր, եթէ
դու էլ հիւանդանաւ, ո՞վ կը նայէ մեզ վրայ...

—Իմ, քունս չէ՛ գալիս, միայն դու ասա՛, ինչպէ՞ս
զգում ես այժմ քեզ:

—Ես լաւ եմ... Դու գնա՛, քնիր:

Երիտասարդը վեր կացաւ հիւանդի մօտէն մօտեցաւ
զիւանին, և առանց հանուելու, ձեռքը ծնօտին դնելով,
պառկեցաւ նորա վերայ: Քունը, անբախտների միակ մխի-
թարութիւնը, վաղուց հեռացել էր նորա աչքերից:
Նա նոյն բոսկիին ընկզմուած էր դառն մտածութիւնների
մէջ... Նա ցաւակցութեամբ սրտի լսում էր եղբօր ծա-
նըր հոգւոց հանելը, որ հեռու հայրենի օջախից, հեռու
ծնողաց քնքոյշ հոգատարութիւնից, տանջվում էր հի-
ւանդութեան մէջ:

Բ.

Առաւօտեան երիտասարդը, երկար սպասելով, երբ
նշանակեալ ժամուն չեկաւ բժիշկը, կամենում էր գնալ
նորան կանչելու, կրտսեր եղբայրը ասաց նորան.

—Իմ գրասեղանի արկղում դու կը գտնես մի քա-
նի տասնեակ բուբլի, որոնք ես հաւաքել էի այն կոպէկ-
ներից, որ շատ անգամ տալիս էիր ինձ միտելու: Ես միտք
ունէի նոցանով. նոր տարուայ համար ինձ հագուստներ
կարել տալ, բայց գուցէ էլ չը պիտի հագնեմ... աս
այն փողերը, քեզ հարկաւոր կը լինին....

Երիտասարդը, չը զիպչելով նորա սեպհականութեա-
նը, ախուր զգացմունքով դուրս գնաց տանից: Նա զը-

առաւ բժրչկին մի այլ հիւանդի մօտ, և մտածելով, որ նորա ուշանալու պատճառն այն պիտի լինէր, որ կանխիկ չը վճարեց այցելութեան համար, տուեց նորան իւր մօտ դանուած վերջին տասն թուրքիանոց թղթադրամը, և հրաւիրեց հղթօր մօտ: Այնտեղ արդէն եկած էր և մի հայ բժիշկ, երիտասարդի ծանօթներէից, որ շարունակ այցելութիւն էր գործում հիւանդի մօտ:

Երկու բժիշկները, միասին մտածելով, խորհուրդ տուեցին երիտասարդին, իւր հղթայրը տանել հիւանդանոց, որովհետեւ նորա բնակարանի անյարմարութիւնը թոյլ չէր տալիս մի քանի բժշկական հնարների գործ դնելուն, որք անհրաժեշտ պէտք էին հիւանդին:

— Բայց կարելի՞ է վտաահանալ, որ հիւանդանոցում հոգ կը տանէին իմ հղթօր վերայ, որպէս հարկն էր, — հարցուց երիտասարդը, գտռնալով դէպի բժիշկները:

— Անտարակոյս, անտարակոյս, ասացին միաձայն բժիշկները: — այս քաղաքի հիւանդանոցը շատ կանոնաւոր ձևով կազմակերպուած է:

— Իսկ ինչ միջոցներով պէտք է տանել:

— Հարկաւոր է միայն ոստիկանութեան կառավարութեանը դիմել. այնտեղ ձեզ կը տան թուղթ, որով կընդունուի ձեր եղբայրը հիւանդանոցում: Ի հարկէ դուք կանխիկ պիտի վճարէք պատկանեալ մի ամսուայ արծաթը:

Երիտասարդը համոզուեցաւ, բժիշկները հեռացան:

Գ.

Մինչ երիտասարդը գնացել էր ոստիկանութեան կառավարութիւնից հրաման առնելու, հիւանդի մօտ ներս մտաւ մի իտալացի պատանի որոնց ասնում բնակվում էին երկու հղթայրները:

—Մայրս ուղարկել է քեզ բուլիօն,—ասաց պատանին մօտեցնելով հիւանդին մի գաւաթ. խմիր փոքր ինչ, քանի որ է դու ոչինչ չես կերած:

Խտալացի պատանւոյ մայրը, որ մի երաժշտի կին էր, այդ առաքելին միայն էր, որ խնամք էր տանում պանդուխտ հիւանդի պիտոյքներին:

Բայց հիւանդը հրաժարուեցաւ խմելուց.—չնորհակալ եմ, ասաց, քո մայրը այնքան բարի է, չէ մոռանում ինձ... Նա իմանում է, որ ես այստեղ մայր չունեմ...

—Դէ, խմի մի փոքր, դա ուժ կը տայ քեզ,—ստիպում էր պատանի խտալացին:

—Ձեմ կարող, Բիկօ, միայն դու ասա, ինչ ասացին բժիշկները:

Նորա խորհուրդ տուեցին, որ եղբայրդ քեզ հիւանդանոց տանէ:

Սարսափեցաւ խեղճ հիւանդը այդ խօսքը լսելով:

—Հիւանդանոցում աւելի շուտ կառողջանաս դու,—բաջալիրում էր հիւանդին խտալացի պատանին:

—Ձէ, Բիկօ, ես դիտեմ, որ այնտեղից կրկին չը պիտի դառնամ... Իմ ընկերներէց էլ մինը տարան հիւանդանոց, նա էլ ինձ պէս զարիւր աղայ էր, քանի ամսից յետոյ նորա խեղճ հայրը եկաւ, մեռած որդւոյ մարմինն էլ չը գտաւ...:

—Ի՞նչպէս չը գտաւ:

—Ասում են, այնտեղ կարատում են մեռելներին, և ածում են ո՞վ գիտէ որտեղ...:

—Թէ վախենումես, մի՛ գնայ:

—Շատ եմ վախենում, Բիկօ, բայց էլի կը գնամ... Եղբայրս շատ է մաշում իմ պտուճառաւ... Նա ամբողջ գիշերներ չէ քնում... Վախում եմ, որ նա էլ հիւանդանոց...

Դեկտեմբերի 13ին պատանին տարուեցաւ հիւանդանոց:

Դ.

Հէնց մի և նոյն աւուր կէս գիշերին, հիւանդը, սաստիկ լուծողական ընդունելով, ստիպուած էր շուտ շուտ իւր մահճակալից հեռանալ: Մի կողմից նորա անձնական տկարութիւնը, միւս կողմից լուծողականի թուլացուցիչ ազդեցութիւնը, մինչայն աստիճան ուժաթափ էին արել նորան, որ խղճալին մի անգամ վերադառնալու միջոցին, այլ ևս չը կարողացաւ իւր մահճակալին հասնել, և վեր ընկաւ ճանապարհին: Երկար այսպէս ընկած էր նա սառն յատակի վերայ, երբ նորա զրացի մի հայ պատանի հիւանդ, տեսնելով նորան, գնաց, վեր բարձրացուց անինամ ընկերին, բերեց, պառկեցրուց իւր տեղում:

Մի փոքր ուշի գալով հիւանդը, ասաց իւր զրացուն.

— Միթէ այստեղ չը կան սպասաւորներ:

— Կան մի քանի արբեցողներ, գուցէ հիմա խմած և քնած լինեն: Պատասխանեց նորա ընկերը:

— Բժիշկները ասացին եղբօրս, այստեղ լաւ են նայում...

— Ահա, այդպէս, հիւանդները օգնում են հիւանդներին...

Պատանին լռեց և ոչինչ չը խօսեց:

Քանի բոպէից յետոյ պանդուխտ հիւանդի դրութիւնը աւելի վատ էր: Նա ձայն տուեց իւր զրացի հիւանդին, որոյ անունը արդէն սովորած էր.

— Մարտիրոս, ես խիտա վատ եմ գգում ինձ:

— Ի՞նչ անեմ, եղբայր, ես էլ քեզ նման մի հիւանդ եմ: Ասաց միւսը:

—Գիտեմ. միայն աղաչում եմ քեզ, լսիր մի քանի խօսքեր, որ քեզ պիտի ասեմ:

—Դէ՛, ասա:

—Ես այս քաղաքում զարիւր աղայ եմ, ուրիշ ազգական չունեմ, բայց ունիմ մի եղբայր գիտեմ, նա առաւօտեան այստեղ կը դայ, և ես չեմ կարողանալու նորա հետ խօսելու... Նա ինձ մեռած կը գտնէ. Դու ասա նորան, որ մօրս չը գրէ իմ մահը, նա շատ էր սիրում ինձ, թող լաց չը ըլի իմ մասին. ասա եղբօրս վարժարանում դասընկերներին մինի, Ն...նի, մօտ ունիմ մի քանի գրքեր, մինը Ֆրանսերէն, մինը ռուսերէն և միւսը հայերէն, ասա, այդ գրքերը նորան թողնէ, որովհետեւ այդ աղան շատ է պարագուել ինձ հետ... ասա մանկուք ծախող Խէչօին պարտական եմ 20 կոպէկ, որից ես թուղթ էի առել, ասա, այն պարտքը վճարէ...

Եւ այլ մի քանի այդպիսի խօսքեր ասելէն յետոյ, հիւանդը կատարեց իւր կտակը և յաւիտեան փակեց իւր աչքերը...

Ե.

Միւս աւուր առաւօտը, մինչ մեռնողի մարմինը կտրատում էին անատոմիական կաթինետում, եղբայրը հիւանդանոց եկաւ նորան տեսնելու: Նա մօտեցաւ դռնապանին, յայտնեց հիւանդի անունը, ազգանունը և իւր ցանկութիւնը, որ կամենում էր նորան տեսնել:

—Ներեցէք, պարոն, չէ կարելի, որովհետեւ այսօր թոյլ արուած չէ հիւանդներին այցելութիւն առնել,— պատասխանեց դռնապանը պաշտօնական ձևով:

—Այդ ի՞նչ պատիժ է. ասաց երիտասարդը վրդովուելով:—Ես չեմ կարող տեսնել հիւանդ եղբօրս:

—Այո՛ պարոն, զուր կարող էք տեսնել նորան

միայն կիւրակէ օրերը,—կրկնեց զոնապանը աւելի սառնութեամբ:

—Մինչև կիւրակէ դեռ երեք օր կայ, գոնեա՛ տուեցէք ինձ մի լուր նորա մասին:

Դոնապանը մօտեցաւ բժշկի օգնականին, խօսեց նորա հետ, և դառնալով յայանեց երիտասարդին, թէ նորա եղբայրը այժմ շատ լու է:

Մի փոքր միտիւթարուելով այդ խօսքերից երիտասարդը դարձաւ տուն և մեծ անհամբերութեամբ սպասում էր կիւրակէ օրուանը:

* * *

Եկաւ բօթաբեր կիւրակէն:

Թէ և մինչև այնօր երիտասարդը ոչինչ լուր չունէր եղբոր մասին, այսու ամենայնիւ, նա խիստ ուրախ էր, որ կարող էր տեսնել նորան: Նա վեր առնելով իւր հետ հիւանդի բնկեր խառցացի Բիկոյին, կառք նստեցին և զիմեցին զէպի հիւանդանոց: Ճանապարհին նոքա մասն մի խանութ, գնեցին զանազան շաքարեղէններ, որ տանեն հիւանդի համար:

Կէս ժամից յետոյ նոքա հասան հիւանդանոցը: Դոնապանը, թէ և այնօր չարգելեց նոցա մուտքը, այնու ամենայնիւ զիմեցին նորան, զիտենալու թէ որ սննկումն էր դտանվում հիւանդը: Դոնապանը այդ մասին չը կարողացաւ ոչինչ տեղեկութիւն տալ նորանց: Նոքա զիմեցին հիւանդանոցի կառավարչին: Նա քրքրելով զրբերը դարձեալ ոչինչ տեղեկութիւն չը կարողացաւ տալ:

Երիտասարդը անհամբեր զրութեան միջ էր: Կարծես, ոչ որ տեղեկութիւն չունէր նորա մասին:

—Դուք չը զիտէք, թէ որ սննկումն է դտանվում իմ եղբայրը, հարցրուց նա կառավարչէն:

—Միթէ հեշտ է գիտենալ, այնքան շատ են որ հիւանդները,—խօսեց կառավարիչը յօրանջնով:

Երիտասարդի համբերութիւնը հատաւ:—Այդ ինչ սարսափելի կառավարութիւն է ...: Կոչեց նա:

Կառավարիչը սկսաւ տեղեկանալ հիւանդի մասին բժիշկների օգնականներից:

—Ո՛ր հիւանդի մասին էք հարցնում, պարոն,—խօսեց մի լղար ֆերշիլ:

—Իմ եղբօր, Ա... Մ...եանի մասին,—պատասխանեց երիտասարդը զայրացած կերպով:

—Հն, Ա.... Մ...եանին կամենում էք դուք տեսնել, կրկնեց ֆերշիլը խորհրդական ձայնով:—Գնանք, պարոն, ձեզ ցոյց կը տամ նորան:

Երիտասարդը մի փոքր հանգստացաւ և ուրախութեամբ սկսաւ դիմել ֆերշիլի հասեից, որ տանում էր նորան մի ստորերկրեայ ճանապարհով: Բայց այն խօնաւ և սառն գալիքեաները, որտեղեց հոսվում էր մահաբեր արտաշնչութիւն, միւս անգամ դող ձգեցին նորա սրտի մէջ, մինչև ֆերշիլը ներս տարաւ նորան մի սենեակ, ուր կարգաւ դրած էին մի քանի դաժաղներ:

Երիտասարդը սարսափեցաւ:

—Որոնեցէք, պարոն, դոցա մէջ կը գտնէք ձեր եղբօրը,—ասաց նա դժոխային սառնասրտութեամբ:

Երիտասարդը զրկեց մի գեղեցիկ դիակ, որ որպէս գերանդու բերնից հնձուած մի շուշան այլանդակուած էր խիբուրդի անդուծ դանակից...:

—Սպանդանոց է այստեղ, և ոչ հիւանդանոց.... հառաչեց խղճալին և նորա ձայնը կարուեցաւ:

—Փառք տուր, Աստուծուն, պարոն, ասաց մահու թաղաւորութեան սպասաւորը, թէ մի քանի րոպէ յետ կը դայիր, այդ դիակն էլ չէիր գտանելու դու: Բայց ես պահեցի նորան, մտածելով, որ դա նշանաւոր ոմն պիտի

ԲԱՑ ԱԶՔՈՎ ԵՐԱԶ.

(Պօլ Բուրժէից):

Այդ օրը եւ ճաշում էի մի հիւրանոցում, որտեղ բացի ինձանից հաւաքուել էին էլի մի տասը հեղինակներ և նկարիչներ: Պէտք է ձեզ ասած, այդ այն ամսական ճաշերից մէկն էր, որ Փարիզում սովորական է և որը այդ անգամ շատ ուրախ անցաւ: Բոլոր խօսակցողներն էլ շատ ուրախ արամապրութեան մէջ էին և հետաքրքիր անսկզօաններն ու սրախօսութիւնները հեռւում էին մէկը միւսին. մէկ խօսքով, ամեն բան շատ լաւ էր: Վերջապէս, խօսք ընկաւ Օգէօն Թատրոնում զրուած դրամայի մասին, որ Շէքսպիրից է փոխադրուած և որի բովանդակութիւնն այն էր, թէ ինչպէս երկու մարդիկ, կարող են բոլորովին իրար նման լինել: Դորանից յետոյ, սկսեցինք խօսել առհասարակ բնութեան տարօրինակ խաղի մասին, որ երբեմն զարմանալի և մինչև անգամ ֆանտաստիկական է լինում: Եւ յիշաւի, մի՞թէ զարմանալի չէ, որ երկու մարդիկ կապուած չլինելով արենակցական կապերով և չձանաչելով իրարու, երբեմն այնպէս նման են լինում միմիանց, ոչ թէ միայն երեսով, կազմուածքով, բնութեամբ, այլ և իրենց վիճակով կարծես, թէ այդ միևնոյն մարդիկը լինեն: Ճաշից յետոյ բաւական երկար նստեցինք և միայն ժամը տասներկուսին

ես զնացի իմ մէկ հեղինակ ընկերոջս հետ, որը, ահա, հիմայ գտնվում է գժանոցում ես սիրում էի այդ մարդուն, ինչպէս վիպասանները սիրում են կրթականներին, որոնք լաւ հասկացել են և զնահատել են նոցա: Ես զեռ հիւրանոցում նկատեցի, որ մեր խօսակցութիւնը ոչ միայն հետաքրքրում էր, այլ և վրդովում էր նորան, թէև նա բոլոր ժամանակ լռու էր: Բայց ես տեսնում էի այդ նորա նիհարած, կնճիռներով ծածկուծ կրիսից, որի վերայ քսանհինգ տարուան զրական գործունէութիւնը խորը հետքեր էր թողել: Հիւրանոցից մինչև Սէն-Ժերմէն կոչուած տեղը հասնելնրս, որտեղ ես մնում էի, տեսայ որ իմ ընկերս սովորականից աւելի տխուր էր: չգիտեմ իմ սրախօսութիւններս թէ՞ հանաքներս պատճառ եղան, որ նա ուզեց դարզերն ասել և ճանապարհին ինձ պատմեց իւր պատմութիւնը, որի մէջ մեծ դեր էր խաղում նոյնպէս արարիւնակ նմանութիւնը: Զգիտեմ, բովանդակութիւնը, թէ՞ նորա անկեղծ ու ողբերգուած պատմելը, ինձ վերայ այնպէս սաստիկ տպաւորութիւն թողին, որ ես իսկոյն նշանակեցի այդ թուով, այսինքն՝ 25 Նոյեմբերի, 1883 թուին... Աստուած իմ, որչափ վաղուց է այդ և ինչպէս ժամանակը թռչում է:

«Դուք չխաղուեցիք,—սկսեց նա այս օրուան խօսակցութիւնը ինձ շատ հետաքրքրեց և միևնոյն ժամանակ չափազանց վրդովեց: Նա ինձ յիշեցրեց մի անցք... թէ այդ կարելի է անցք անուանել. ես բոլորի մօտ չպատմեցի, որովհետև այդ յիշողութիւնը ինձ համար չափազանց թանկ է և ես ամօթ համարեցի խօսել նրա մասին սուրճ և խմիչքներ վայելելիս և սիգարաներ ծխելիս:

—Այո, բարեկամ, կասեմ ձեզ մի բան, շարունակեց նա բռնկելով ձեռքս և սեղմելով նորան. եթէ դուք սի-

րէք բոլոր հոգով և փոխադարձաբար սիրեն ձեզ, այն ժամանակ, հաւատացէք ինձ... իսկ ինձ կարելի է հաւատալ, որովհետեւ ես ձեզանից տասնեհինգ տարով մեծ եմ և մազերս արդէն բոլորովին սպիտակել են — երբէք չմերժէք ձեր սիրած կնոջ խնդիրքը՝ զնալ նորան տեսութեան, նշանակած ժամանակին: Ուր որ նա ձեզ կանչէ, լինչ արգելքներ որ լինեն, մոռացէք և թողէք ամեն բան-գործ, ընտանիք, պարտականութիւն, այո՛, բոլորը, բոլորը աշխարհիս երեսին, միայն թէ կատարեցէք նորա խնդիրքը, շտապեցէք նորան տեսնել: Գիտցէք, որ եռանդով, խելքով և որոշեալ յաջողութեամբ կարելի է ամեն բան ուղղել, վերադարձնել՝ զորօրինակ ընկերութեան մէջ կորցրած զիրքը, խորտակուած՝ կարողութիւնը. բայց ոչնչով չէք կարող վերադարձնել սիրոյ այն քաղցր ընկերները, որոնցից օգուտ չքաղելու մեղքը ձերն է եղել:

— Յիշեցէք, շարունակեց նա մի քանի ընկերացի-տոյն քիչ հանգստացած, — երկու տարի սորանից առաջ, ես զնացի Վենետիկ: Ի հարկէ, դուք պէտք է որ յիշէք, որովհետեւ ինձ այնտեղ նամակներ էիք գրում և ես մինչև անգամ, չ'պատասխանեցի ձեզ. իմ անքաղաքավարի լուծիւնս, երեւի, դուք վերագրեցիք այն ծուլութեանը և այն կիսաքուն ցնորքներին, որ այդ քաղաքի օդը մարդուս արամադրում է: Այո՛, Վենետիկում, ես նուիրեցի ինձ միանգամայն ցնորքների և երեսակայութիւնների, բայց ոչ այն մասին, որ դուք կարծում էք. իմ երեսակայութեանս մէջ չէին մտնում գեղեցիկ կանայք և փայլուն իշխաններ, ինչպէս Պալմէն, կամ Բօնիֆայիօն: Ես բոլորովին ժամանակ չունէի նոցա մասին մտածելու. բայց թէ ինչով իմ միտքս պաշարուած էր, չէք կարող ոչ դուք իմանալ և ոչ ոք աշխարհիս երեսին, մինչև չ'պարզեմ մանրամասն իմ առաջին երիտասարդութեանս պատմութիւնը: 1881 թուին ես

գնացի Վենետիկ, որպէս զի ինձ միանգամայն նուիրեմ այն յիշողութիւններին, որ վերաբերում է 1860 թուին, երբ ես միայն քսանեւհինգ տարեկան էի և երբ արդէն, իբրև թիավար, տանվում էի այն աքսորական նաւահանգստում, որի անունն է մամուլ և որտեղ զուք դեռ կը շարունակէք թիավարել, երբ ես արդէն կը լինեմ յաւիտենական հանգստարանում: Ես դեռ այն ժամանակ այդ արհեստը չէի սիրում, բայց այն պատահական յաջողութիւնը, որ ինձ շրջապատել էր, ինչպէս դրամատիկական հեղինակի, վճռեց իմ ապագայ բաղձը: Ինչ տարօրինակ բան է այդ «դէպքը», կամ աւելի լաւ է ասել «հասակագիրը»: մի քանիսին նա տանջում է շարունակ և յանկարծ, կեանքի վերջին անսպասելի կերպով վարձատրում է նորան առատ տուրքերով: Իսկ ինձ հէնց դորա հակառակը պատահեց: Այն ժամանակ, երբ «Comédi française»-ի բեմումը խաղում էին իմ մի արարուածով կատակերգութիւնս և թատրոնը զորդում էր ծափահարութիւններից, ես ճանաչեցի այն մի հատիկ կնոջը, որը թողել է իմ հողւոյս մէջ անջնջելի, աներևակայելի մի քաղցր յիշողութիւն: Դուք տեսնում էք, թէ ես մինչև հիմայ որչափ եմ յուզվում: այդ յիշելիս, վրդովվում եմ այն աստիճան, որ եթէ նորա անունը տամ, հէնց այստեղ, ձեզ մօտ լաց կը լինեմ... Այդ կինը ինձանից մէկ, թէ երկու տարով մեծ էր. բաւական է, որ մտաբերեմ նորա նիհար, գունատ երեսը, մոյր աչքերի մեղմ հայեացքը և իմ սիրտս մի անսովոր ջերմութիւն է զգում: Նա ինձ սիրում էր. արդեօք ինչո՞ւ համար. ա՛խ, իմ սիրելի վեպասան, ես կը պատասխանեմ ձեզ այնպէս, ինչպէս ձեր սիրտը համբէտը. հարցրէք, ամեն բանի մասին, ինչ կ'ամենաք. թէ ինչո՞ւ լուսինը փայլում է, ինչո՞ւ երկինքը ծածկուած է աստղերով, ի՞նչ բան է մարդու սկանքը, ինչո՞ւ գոյութիւն

ունեն զանազան շնչաւոր և անշունչ առարկաներ. բայց մի հարցնէք, թէ ինչո՞ւ ենք մենք սիրում: Սիրում ենք, որովհետեւ սէրը բնական է և չենք կարող չսիրել. այն սրտի առաջ, որը ընդունակ է սիրելու, կարելի է ուրախութեամբ և ջերմութեամբ ծուներ դնել, ինչպէս մի ամենալաւ, մինչև անգամ, մեր մէջ եղած միակ Աստուածային ոգու առաջ, որ Ստեղծողը մեզ պարգեւել է..

Ես նայում էի նորա վերայ զարմանքով և հաաքբքբութեամբ. նա այդ աւելի շուտ սպասում էր, քան թէ նկատում, որովհետեւ իւր ասած ճառի ժամանակ ոչ մի անգամ չնայեց ինձ վերայ և շարունակեց.

—Ներեցէք, գուցէ այս իմ քնարերգութիւնս անտեղի էր... իսկ հիմայ կը յիշեցնեմ նորից նոյն ապացոյցները... ձեզ չեմ յոգնեցնիլ մանրամասն պատմելով, թէ որտեղ և ինչ հանգամանքներում պատահեցի ես այդ կնոջը. միայն կ'ասեմ, որ նա պատկուած էր և յաջող հանգամանքը ինձ ազատել էր ծանօթ լինելու նորա ամուսնու հետ և ընկերաբար սեղմելու նորա ձեռքը: Այդ կինը փարիզեցի էր և պատկանում էր հարուստ այն վաճառականական դասակարգին, որտեղ կանայք ստիպուած չեն տնտեսութեամբ պարապելու: Միայն մէկ բանով կարելի է իմանալ նորա քաղաքավարութիւնը, որ նա չէր աշխատում ինձ տանիլ իրենց առև. իսկ թէ որչափ նա ինձ սիրում էր, դուք կը հասկանաք, եթէ ձեզ ասեմ, որ ամբողջ տարի ու կէսուայ ընթացքում, մի օր չէր լինի, որ նա չանցկացնէր մի-երկու ժամ ինձ մօտ, ինչպէս էլ լինէր հղանակը: Ինչ պատճառով էլ նա դուրս գալու լինէր ասանից, միշտ նա ճշտութեամբ գալիս էր ինձ մօտ, մեծ մասամբ ցերեկները, երբեմն էլ երեկոները միշտ նշանակած ժամանակից չուշանալով

ոչ մի բոսիկ և միշտ նա գալիս էր ուրախ ու այնպիսի հայեացքով, որը պարզ ցոյց էր առնի, թէ նա այդ բոսիկին իւր հոգին ու սիրտը ինձ է նուիրում: Երբ ևս նկատում էի, որ նորա երեսը օրէ ցօր նիհարում ու գունատվում է, աչքերը աւելի մեծանում են և մանաւանդ յաճախ կրկնուող հազը ինձ աանջում է, նա իւր փոքրիկ ձեռքով, որը երբեմն վառվում էր անդաշին ջերմութեամբ, բռնում էր բերանս, ասելով թէ այդ բոլորը նորանից է, որ նա ինձ շատ ջերմ սիրում է և ուշ-ուշ է տեսնում: Նա գուցէ բոլորովին ամուսնուց բաժանուէր, եթէ մայրը չլինէր, որին նա շատ սիրում ու պաշտում էր և որը չպիտի կարողանար տանել աղջկայ բացարձակ վարմունքը, հակառակ բարութեան և ազնուութեան օրէնքներին, այնպէս որ ստիպուած էինք տանջուել ու լսել, բաւականանալով միայն մեր տեսութեան բոսիկներով: Այո, մենք լուծ էինք, բայց և առանց խօսքերի հասկանում էինք, որ մենք միմեանց համար ամեն ինչ ենք: Ես չեմ կարող ձեզ հաղորդել այն սէրը, որի աղբիւրը մեզ երկուսիս համար մեր ներքին համակրութիւնն էր. այդպիսի հանգամանքներում, առանձին ապրելը շատ ծանր էր, բայց մենք եբէք չէինք խօսում այդ մասին: Մինչև անգամ, երբ պատահում էր, որ ևս մտածմունքի մէջ էի ընկնում, նա իսկոյն ուրախ խօսակցութիւն էր մէջ բերում, որպէս զի չկարողանամ տեսնել այն վշտի անդունդը, որը անխօս թաղնուած էր մեր երկուսի սրտերում: Ոչ, սիրել «այդպէս» միայն կարող են մի քանիսը և պէտք էլ չէ, որովհետեւ այն ժամանակ կեանքը չափազանց ծանր բռն է դառնում մարդու համար:

Այդ սէրը, որը լեքն էր անհամեմատելի ուրախութիւններով և դառն տանջանքներով, հարուած ստացաւ միանգամից այն դէպքով, որ այնքան հասարակ

ու սովորական է, և որին կարծես, մարդ ամեն բոլորէ պէտք է սպասէ. այն ինչ երբէք չէ նախատեսնում նորան: Իմ սիրածս կինը, պարահանդէսից վերադառնալիս, մըսել և անկողին էր մտել: Նորա հիւանդութիւնը այնքան ծանր էր, որ բժիշկները խորհուրդ էին տուել՝ գնալ հարաւ, գէպի Իտալիա: Պէտք է բաժանուած մնայինք երկար, մինչև երեք ամիս. այդ երկուօրս համար էլ շատ ծանր էր. հեռուից նամակագրութիւն ունենալ աւելի դժուար էր, քան թէ տեսնուել ամեն օր, ապրելով միեւնոյն քաղաքում: Բայց մենք այնքան վստահ էինք միմեանց վերայ, որ բաժանուելիցք բաւական քաջութեամբ: Նա գնաց և, ինչպէս որ Փարիզում ամեն օր ժամանակ գտնում էր ինձ մօտ դալու, այնպէս էլ այնտեղից, ամեն օր ստանում էի նամակներ, որոնց մէջ նա նկարագրում էր Գինուա, Պիզա, Հռոմ և Նէապօլ գնալը: Նորա գլխաւոր հոգսն այն էր, որ գտնէ նամակներով, մեր հեռաւորութիւնը մօտեցնէ. գեղարուեստի պատմութեան հետ նա ծանօթ էր հարեանցի, որ երբեմն օրիորդ ժամանակ սովորել էր ուսումնարանում և ինձ բաւականութիւն տալու համար, նա սկսել էր այցելել թանգարանները, ցուցահանդէսները, պատկերների դահլիճները և մանրամասն նկարագրում էր ամեն բան, ինչ որ ինձ կարող էր հետաքրքիր լինել, ինչպէս մի ժամանակակից հեղինակի: Նորա բոլոր նամակներից պարզ երևում էր, որ մինչև անգամ հետաքրքրուելով գեղարուեստի անջնջելի յիշատակներով, միաքը ինձանից անբաժան է եղել, և հոգս է քաշել, իմ և իմ ասպարէզի մասին. նա վառվում էր այն ցանկութեամբ, որ իւր հետ մտերմանալը չանցնի ինձ համար անհեղձ, այլ ունենայ ինձ վերայ բարեբար ազդեցութիւն:

Եւ որչափ ուրախութիւն և մխիթարութիւն էի

գտնում ես այդ թանգագին նամակներից. ամեն առաւօտ ինձ ծառայող պառաւ կինը, լրագրերի հետ միասին, բերում էր և իմ թղթակցութիւնը և ես մինչև անգամ չնայելով զրչին, առանց ջոկելու նամակներն, իսկոյն ճանաչում էի փոքրիկ, քառանկիւնի ծրարը, որից ծագկի անոյշ հոտ էր բուրում և այդ հոտը ամբողջ օրը ինձ հետ էր, որովհետև, սիրահարուածների սովորութեամբ, գրպանումն էի պահում նամակը, մինչև նորը ստանալս: Այն, վերջին նամակը միշտ անբաժան էր ինձանից. նա իմ գրպանումն էր, երբ ես զրնում էի խօսակցելու թատրոնների կառավարիչների հետ, երբ աշխատում էի խմբագրաներում, կամ իմ հեղինակ ընկերներիցս մէկի հետ ճաշում էի հիւրանոցում: Ի՞նչ փոյթս էր ինձ շրջապատող շրջանի բոլոր անկրաւութիւնները, ծողերը և բամբասանքները, որոնցով լեքն էին իմ ընկերակիցներիս խօսակցութիւնները: Ի՞նչ փոյթս էր իմ հակառակորդներիս կատաղի թշնամութիւնը, երբ թանգագին նամակը, որի մէջ պահուած էր իմ գաղտնիքը, գրպանումն էր:

«Ի՞նչ, բարեկամ, բացառեցէք ինձ, թէ ի՞նչպէս ես կարողացայ մերժել իմ այդքան ջերմ, բոլոր հոգով ու սրտով սիրած ու պաշտածս կնոջ միակ խնդիրքը, որով նա ինձ ղեկել էր, ոչ թէ իմ օգտի համար, ինչպէս նա միշտ անում էր, այլ իւր համար: Վենետիկից ստացածս նամակներից մէկում նա ինձ հաղորդել էր, որ ամուսինը երկու շաբաթով գնացել է Փարիզ, որ պատրաստութիւն տեսնէ իւր գալստեան համար և միւսինոյն ժամանակ խնդրում էր ինձ գնալ Վենետիկ, այդ մի քանի օրը միասին անցկացնելու: Նորա տաղանդն նամակները լեքն էին մեղմ և քաղցր սիրով, իսկ վերջինը, ընդհակառակը, շատ կրակոտ և անխորհուրդ էր, որը կարող էր խլել բոլոր կապերը: Նա աղաչում էր

ինձ ամեն բան թողնել ու գնալ, և դորանով ընծայել իրեն մի քանի քաղցր և համարեա երկնային երջանկութեամբ լի օրեր, հէնց Վնեսաիւում, որին չափազանց հաւանում էր, նորա անվրդով և բանաստեղծական լուսթեան համար: Նա ամենաչնչին մանրամասնութիւնները հաղորդել էր ինձ. թէ որտեղ պէտք է իջնեմ, որտեղ մենք կըստատահենք, թէ նա ամեն օր մի քանի ժամ դնդուրով ման է դալիս, այն ժամանակ, երբ ազատիւնը մենակ տանն է լինում: Քեզ կըստատեսեմ ճիշտ երկու օրից յետոյ, երբ, իմ հաշուով, այս նամակս հասնի և ինչպէս երջանիկ կ'լինենք միասին», վերջացնում էր նա... Միանգամայն չեմ հասկանում հիմոյ, թէ այդ նամակը ստանալով և ուրախութեամբ մի տասն անգամ կարդալուց յետոյ, ինչպէս ևս կարողացայ մերժել նորա խնդիրքը: Հէնց այդ ժամանակ կարծես դիտմամբ, մի ամսագրի մէջ, տպւում էր իմ վէպս, որ կարօտ էր շատ փոփոխութիւնների և ուղղելու: այդ միայն ևս ինքս կարող էի անել և բացի այդ ունէի շատ ուրիշ գործեր. դժբախտաբար, այդ ժամանակ նիւթական միջոցներս էլ նախանձելի չէին: 'Ի հարկէ, արդէն այն ժամանակ ևս դեր խաղալով մամուլի մէջ, հեշտութեամբ կարող էի ձեռք բերել այն գումարը, որ պէտք էր ինձ ճանապարհորդութեանս համար: Շատ, սաստիկ ուղում էի գնալ բայց այդ ժամանակ առաջ եկան սառն և վատ մտածմունքներ՝ «թէ և նա դրում է, որ տեսնուելը մեզ յարմար կ'լինի, բայց խոստպէս իմ գնալս նորան վատ դրութեան մէջ չի՞ձգիր»: Բայց Աստուած իմ, մի՞թէ առաջ նորան աւելի անյարմար չէր ամեն օր դալ իմ բնակարանս, որ ևս նորա համար զարդարում էի միշտ թարմ ծաղիկներով: Ահա և այդ զգուշութիւնը, փողի հաշիւը և խոհանութիւնը ինձ խանգարեցին կատարել նորա խնդիրքը, աղաչանքը, որ ևս

այն ժամանակ անուանում էի անմիտ ցանկութիւն: «Նա շուտով կրվիրադառնայ, ուրեմն ինչո՞ւ ես իմ դործերս թողնեմ ու գնամ նորա մօտ»: Այդպէս վճռեցի և գրեցի նորան նամակ, լի ամենաքնքոյշ զգացմունքներով և խոհմարար բացատրելով այն պատճառները, որոնք խանգարեցին իմ գալուս, աղաչելով նորան, որ քան կարելի է շուտ վերադառնալ Փարիզ. ես վճռողաբար մերժեցի նորա խնդիրքը և մնացի տանը...

Ինչպէս լաւ եմ յիշում ես այդ... մտաբերեցի, ինչպէս ինձ խելքս տանջում էր, երբ ես արդէն նամակս ուղարկել էի. ես սպասում էի նորանից դանդառների, մեղադրանքների և դորանով ցոյց տուի, թէ սրչափ վատ էի ճանաչում նորան և որչափ քիչ էի գնահատուս: Նա այն հազուադիւս կանանցից էր, որոնք կարծես ծնվում են, որ իրենց հետ բերեն աշխարհ բարձր և զոհողութեամբ լի սիրոյ դադափարը,—ինչպէս ազամարդկանցից ոմանք, որ լինեն մարդկութեան լուսաւորիչներն,—գրելով, որ նա միանգամայն արդարացնում է իմ խոհմութիւնը և մեղադրելով իւր ետական և անմիտ լինելը: Նա վերադարձաւ... Եւ միայն այն ժամանակ իմացայ ամեն բան, ինչ որ նա ինձանից ծածկում էր. նորա առողջութիւնը ոչ թէ ուղղուել էր հարաւային արեւի տակ, այլ աւելի վատացել էր. ես այդ հասկացայ իսկոյն, երբ նա առաջին և վերջին անգամ իւր վերադարձից յետոյ մտաւ իմ սենեակս, ոչ թէ միայն օրերը, այլ և ժամերը նորա հաշուած էին: Յիշում եմ, թէ ինչպէս սարսափեցի, երբ այդ տեսութեան ժամանակ նա իւր նիհարած և թաց ձեռքերը մօտեցրից իմ երեսին. ես մինչև հիմայ յիշում եմ այդ թոյլ ձայնը, որ ասաց ինձ՝ «մեղաւորը դու չես, այլ ես... դու չէիր կարող գիտենալ... բայց ինչո՞ւ չեկար, մերժեցիր իմ վերջին խնդիրքըս. ամբ, Աստուած իմ, ինչո՞ւ, ինչո՞ւ...»

«Ես էլ երբէք նորան չտեսայ, որովհետեւ մի քանի օրից յետոյ, նա արդէն մեռաւ: Տիմայ դուք կը հասկանաք, թէ ինչպէս տխրութիւն էր պաշարել սիրտս, երբ նորա մահից քսան տարի յետոյ, ես գնացի Վենետիկ այդ կինը ինձ սիրում էր այնպիսի յաւիտենական, ազնիւ ու ջերմ սիրով, որ շատ քչերին է վիճակվում... Ես մինչեւ անգամ կասեմ, որ նա ինձ շատ սաստիկ էր սիրում, այնպէս որ յետոյ ես ոչ մի կնոջ հետ չէի գտնում այնպիսի բազդաւորութիւն, ինչպէս նորա հետ: Ես առաջուց գիտէի, որ Վենետիկի ջրանցքները և ամացի լճերը տանելիս, որոնցով սաստիկ ուզում էր իմ անմոտանալի սիրուհիս հրապուրուել ինձ հետ միասին, չափազանց կը տխրեմ: Բայց մի և նոյն ժամանակ, երբէք չէի կարծում, որ յիշողութիւններս նորա մասին քսան տարուց յետոյ կը զարթննայ այդ սաստիճան տանջող և անյաղթ ոյժով: Մի՞թէ հանաք բան է, քսան տարի ամեն օր անցկացնել զթօսարաններում ման գալով և տանն ու խմբագրատներում գրականութեամբ պարապելով. այսպիսի կեանք վարելուց ամենաքնքոյշ հոգին անգամ կոշտանում է... և ի՞նչ—եկայ այն համոզմունքին, որ ամեն բանից կարելի է բաժանուել, ամեն բան մոռանալ, բայց անօգուտ և մաշող ափսոսանքներից, որ մենք երբեմն ջերմ սիրուած ենք եղել, որ այդ էլ չկայ և էլ չէ լինելու:

Բանի ես մօտենում էի Վենետիկին, ծովերի մեծ թագուհուն, ուր իւր բոլոր հոգով ու վստ կը քով երբեմն ինձ կանչում էր հանգուցեալը, քիչքիչ, սկիզբը բոլորովին աննկատելի կերպով, իմ մէջ առաջ եկան հոգեկան ցնորքներ, այնպէս որ ես պարզ շօշափում էի ամեն բան, ինչ որ երևի պէտք է զգայի քսան տարի դորանից առաջ: Երկաթուղին գնում էր նիւ ճանապարհով, որի երկու կողմին խփվում էին ալիքները:

վերջնալոյսի ճաճանչները քիչ-քիչ խաւարում էին, առանց էն էլ հրկնքի կապտութիւնը, քանի գնում, թանձրանում էր, իսկ դողդոջէն տլիքները, քանի գնում սուզվում և աղօտանում էին: Յերեկուայ լոյսի վերջին շունչը ինձ վերայ այնպէս ծանր ազդեցութիւն թողեց, որ ես շատ վատ տրամադրութեան մէջ էի: Իսկ բնդհակառակն ինչպէս ուրախ պէտք է բաբախէր իմ սիրտս, երբ ես գիտենայի, որ մի քանի ժամից յետոյ լինելու համ նորա հետ, այն միակ կիօջ հետ, որին ես սիրում էի իսկական սիրով: Չուզեմսով վերքերս աւելի բանայ, ես վճռեցի չիջեանել այն հիւրանոցում, որտեղ որ նա էր մնում, բայց դեռ չմեռած սէրը դուրս ցայտեց աւելի ուժեղ քան առողջ դատողութիւնը և երբ ես դուրս եկայ երկաթուղուց ու նստայ գոնդոլի մէջ, հակառակ իմ կամքիս, հրամայեցի թիավարին տանել ինձ հէնց այն հիւրանոցը: Երբ ես մտայ այն սենեակը, որտեղ գուցէ նա էր ապրում և որտեղից ինձ նամակներ էր գրում ու տեսութեան կանչում: Երբ ես մօտեցայ բաց պատուհանին և իմ առաջս բացուեցաւ մի տեսարան, ուր երևում էին միայն ջուրը և լուռ աշտարակները, որոնց ծայրերը հասնում էին աստղերով լի մուգ կապոյտ երկնքին,—ինձ յանկարծ թուեց, թէ այդ քսան տարուայ ընթացքը անհետացաւ և իմ սիրտս այնպէս բաբախեց, ինչպէս երբեմն երիտասարդութեան ժամանակ և որ ես երբէք չեմ դադարել սիրելուց, այն քրնքոյշ և բարի արարածը և որ նա կենդանի է և ահա կըբացուի դուռը, նա ներս կըմանի և ինձ կըհամբուրէ, ինչպէս առաջ, իւր ստոր, բայց մի և նոյն ժամանակ օրիորդական ողջախոհ կըքով... Մի տեղից լուռ հագուստի շրջեն... այդ նա է, նա, ուրիշ կերպ չի կարող լինել... ան, անօգուտ արիւնքներով համար որչափ երիտասարդութիւն է նրահվում մարդու հոգու մէջ,

մինչև անգամ այն տարիքում, երբ յուսալը արդէն ուշ է...

«Զարմանալի չէ՞, որ Վինետիկում ինձ վիճակուած էր դանկ աշնալիսի նմանութիւն, որի մասին ես ձեռ ուզում էի պատմել... յափշտակուելով ծանր յիշողութիւններով, ես կարծես հեռացայ պատմութեանս զխաւոր նպատակից... հիմայ այն կը պատմեմ նորից: Այդպէս, ես ապրեցի մի քանի օր այն Վինետիկում, որ ընդունակ է առաջ բերելու յիշողութիւններ եւ որ ինձ համար ուրիշ տեղերից աւելի զօրեղ կերպով յիշեցնում է այն թանգագին արարածը, որը սաստիկ ուզում էր այնտեղ սիրուել եւ սիրուել միայն ինձանից: Դուք երեւի կը մտածէք, թէ ես այդպիսի արամադրութեան մէջ լինելով եւ վառուելով անցեալի համար, փախչում էի ընկերութիւնից եւ զանազան նոր ծանօթութիւններից: Ո՛չ, այդ կարծելով, նշանակում է չհասկանալ մարդու երկկողմանի բնաւորութիւնը. մանաւանդ մեր հեղինակներին, որովհետեւ հէնց առաջին քայլերից, այդ սաստիկէզի մէջ, մեր մաքերն ու վարմունքները սովորում են նահամաձայնել սրտերիս հետ. ընդհակառակը ես համարեալ երբեք տանը չէի նստում. միշտ թափառում էի ծովեզերներում, անցնում էի խիտ շինուած շարքերով անմարդաբնակ պալատների առաջից, գնում էի գոնդօններով ջրանցքների վերայից, որոնք նմանում էին ինչպէս նեղ եւ երկար նախասենեակների. հիանում էի բոլոր այդ հրաշալի պատկերներով, որ նա այնքան ուզում էր ինձ ցոյց տալ: Այո՛, ես մտածում էի անդադար նորա մասին, բայց մի եւ նոյն ժամանակ Փարիզից տուած յանձնարական նամակներս բաժանում էի ամենքին: «Ինչո՞ւ համար հարկաւոր էր այդ», կը հարցնէք դուք, այո՛, ինչո՞ւ... դուք վճռեցէք այդ հարցը, պարոն հոգեբան:

«Ահա, այդպիսի մի այցելութեան ժամանակ, որ Վինետիկում սովորական է անել դիշերուայ ժամը իննից

յիտոյ, ինձ զարմացրեց այն նմանութիւնը, որի մասին
 ես ձեզ ասացի և որը առաջին բողոքին ընդունեցի ցնորքի
 տեղ: Այն դահլիճը, որտեղ ես էի, մտաւ մի կին. ես
 սկիզբը ուշադրութիւն չդարձրի նորա վերայ, որովհետեւ
 նա առանձին ոչինչ չունէր ուշադրութեան արժանի,
 թէ եւ ես նկատեցի՝ որ նա ազեղ չէր և երբեք չէի կա-
 րող նախատեսնել, որ մի քանի բողոք յիտոյ, նորա
 երեւելը ինձ այնպէս կը վրդովէ: Արտաքին նմանութիւն
 նորա հետ, որին ես սիրում էի, չկար. բայց երբ այդ
 կինը խօսեց, այն ժամանակ մի անսովոր բան պատահեց
 ինձ հետ. նորա առաջին խօսքից, ես սկսեցի զողողալ,
 իսկ երկրորդ նախադասութեան ժամանակ սիրտս այն-
 պէս խիստ սկսեց բաբախել, կարծես թէ նա, որը վա-
 զուց արդէն մեռել էր, կախարդական զօրութեամբ դե-
 րեկմանից դուրս էր եկել և նորից կենդանացած, կանգ-
 նել էր առաջս. նոյն ձայնը, նոյն քիչ երգածայն խօ-
 սակցութիւնը, նոյն շարժումները և շեշտերը: Պէտք էր
 աչքերս փակէի, և երեակայութիւնը իրականութիւն կը
 դառնար: Չեմ կարող ձեզ նկարագրել, թէ ինչ շփո-
 թութեան մէջ ձգեց ինձ այդ ձայնը, այն ձայնի ստուե-
 լը. ես պատրաստ էի ազաչել այդ կնոջ, որ արտասանէ
 այս կամ այն նորա ասած նախադասութիւնը, որոնք այդ-
 քան տարուց յիտոյ դեռ լսվում էին իմ ականջումս, ինչ-
 պէս օրինակ այս խօսքերը. «Ա՛խ, Աստուած իմ, ինչո՞ւ,
 ինչո՞ւ», որ նա մեր վերջին տեսութեան ժամանակ տեսել
 էր: Ինձ ծանօթացրին այդ կնոջ հետ, որը շարունա-
 կում էր մի աննշան խօսակցութիւն. դուրս եկաւ, որ
 նա աւստրիական մի իշխանուհի է, անցնելիս մտել է Վե-
 նետիկ և իջել նոյն հիւրանոցում, որտեղ և ես էի: Այդ
 վերջին ամենաջնչին դէպքը, ինչպէս երևում է, պատ-
 ճառ էր եղել, որ ես խիստ զգացուած, քիչ մնաց խե-
 լագարուէի. երբ տուն վերադառնալու ժամանակն եկաւ,

ես ասացի, որ վախենում եմ ջրանցքների մէջ մտնելու և ճանապարհը կորցնել, ուստի խնդրեցի, որ գոհուղ բերել տան. դեռահաս իշխանուհին նոյնպէս վերադառնալու էր տուն, այնպէս որ ինձ խնդրեց միասին գնալ. 'ի հարկէ, ես ուրախութեամբ ընդունեցի նորա առաջարկութիւնը:

«Եթէ դուք Վնեստիկ եղած չէք գարնանը, այն ժամանակ չէք կարող գաղափար կազմել նորա զիշերային կախարդական գեղեցկութեան մասին: Ձեր շուրջը տիրող հանդարտութիւնը, մեզ ալիքների վերայից արագ անցնող գոնդոները, անթիւ, անշարժ, լուռ պալատները, երկնքի հաճելի տեսարանը, լուսնու լոյսի փայլելը ըստուերների վերայով, նաւաստիների իրարու ձայները, ջրանցքների մէջ պտոյտ անելու ժամանակ, այդ բոլորը մարդու տրամադրում են երեակայելու և մեղմ ու տաք օդի հետ, կարծես, Ֆիզիքսայէս ձեզ փաթաթում են իրենց կախարդական ցանցերով: Գոնդոները արագ սահում էին ալիքների վերայից, իսկ ես բաց պատուհանից նայում էի ջրի, երկնքի, պալատների վերայ և լսում էի միայն ուղեկցիս խօսելու ձայնը, որից չէի կարող կշտանալ: Այլ, այդ խուլ ձայնը, ինչպէս քաղցր էր հնչում մթութեան մէջ: Ես երբեմն արտասանում էի մի քանի խօսք, որպէս զի խօսակցութիւնը բոլորովին չկտրուի, և որ լսելով նորան, աւելի երկար կարողանայի երեակայել, թէ ինձ հետ լինողը ոչ թէ օտար, այլ այն ամենասիրելի և պաշտելի կինն էր. այո՛, և ես այդ ցնորքի ազդեցութեան տակ, մի առանձին տեսակ փախով ու երջանկութեամբ զգում էի, որ ես նորից ծնունդ եմ և այնպէս եմ եղել, ինչպէս քսան տարի դորանից առաջ»:

«Ոչ, նա մեռած չէ, երեակայում էի ես—այդ նա է խօսում իւր քաղցր, ինձ ծանօթ ձայնով. ահա՛, նա իսկոյն կասէ այն սիրով լի նախադասութիւններից մէկը,

որոնցից իմ սիրտս քաղցր տրոփում էր: Ահ, ինչպէս հասկանալի է հիմայ, թէ ինչո՞ւ նա այդքան ուղղում էր, որ ես Վինետիկ գայի և որ մարդու հոգին փայփայող խաղաղութեան մէջ, զոնէ մի ժամ, մի րոպէ նա զգար, որ ես միանգամայն նորան եմ պատկանում, ինչպէս և ինքը ինձ. ոչ, ես նորա խնդիրքը փոքրագութեամբ չմերժեցի, թողի ամեն բան և սիրոյ քաղցր տրոփումով շոթալեցի նորան տեսնել... Այդպէս, մոռանալով ժամանակը, ում հետ լինելս և ամեն բան աշխարհիս երեսին, ես անհամեմատելի զուարճութեամբ երազների մէջ էի, երբ յանկարծ ուղեկիցս ընկերական լուծիւնից յիտոյ և երևի իւր մաքին պատասխանելով, լսում էք, արտասանեց նոյն ձայնով և նոյն խօսքերը. «Ահ, Աստուած իմ, ինչո՞ւ, ինչո՞ւ...»

— Իսկ յիտոյ, հարցրի ես բարեկամիս:

— «Յեռոյ, ոչինչ», սառը պատասխանեց նա. երևի իշխանուհին մտածում էր չնչին բաների մասին, աւելորդ գնած առուտուրի համար, կամ անտեղի ասած խօսքի համար... Բայց ահա մենք կանգնեցինք հիւրանոցի նաւահանգստի առաջ, զուրս կկանք զոնդօլից: Լուսաւորուած ընդարձակ դռներից մէկ երիտասարդ մօտեցաւ իմ ուղեկցիս. այդ նորա ամուսինն էր: Ինչպէս երևեց, նա վաղուց սպասում էր կնոջը և անհանգիստ էր հղիլ նորա բացակայութեան ժամանակ: Կինը ծանօթացրեց ինձ ամուսնու հետ և ես նորա ասելու ձևից հասկացայ, որ սիրում է նորան: Այս րոպէին, թէև երկու ձայները զարմանալի նման էին միմեանց, բայց շարժապատուղը այնքան նման չէր իմ անմիտ երազներին, որ ես միանգամից զարթեցի անդառնալի: Այստեղ խուլ թիւնը առաջս կիսւ իւր սառը, տանջող և ձանձրալի միայնակութեամբ. այդ ամբողջ գիշերը ես ճրջափ դառն արտասուքներ եմ թափել տանջուելով ուշացած

զղջումից... «Ես կարող եմ սիրածս կնոջը բաղդաւորեցնել նորա մահուանից առաջ... Հասկանում է՞ք դուք... Թէեւ ինչո՞ւ ստիպել ուրիշներին հասկանալ այն, ինչ որ լինում է օտարի սրտում. միթէ այդ կարելի է, քանի որ ես մինչեւ անգամ այն անչափ պաշտելի կնոջը լաւ ծանաչելով, չկարողացայ հասկանալ նորան»:

Սյդ խօսքերով, նա ձեռք սեղմեց և հեռացաւ. ես նորան չափհեցի, բայց երկար նայում էի նորա քիչ կռացած և ճնշուած կազմուածքի վերայ: Սյդ օրուանից միշտ եւ ինձ հարց եմ տալիս՝ Թէ խելագարութիւնը երջանկութիւն չի՞ լինիլ նորա համար: Հիմայ նա չէ հասկանում իւր զրութիւնը, նորան չէ սպառնում ձիրքի նուազելը, ընթերցողների սառնութիւնը. կարելի է նորա խանգարուած ուղեղը երազում է, որ այն սիրելի կինը, որին մոռանալ չէ կարող, դեռ կենդանի է և սիրում է նորան առաջուան պէս... Միթէ այդ աւելի լաւ չէ, քան Թէ գրիլ հազարերկուհարիւր-կորդ գրականական քրոնիկոնը, կամ քսանհինգերորդ բոմանը:

ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ.



I.

*
* *

(Զ. Լէօպարդիից.)

Ո՛հ, կանայք, ի՞նչեր դուք չէիք անի,
եթէ կամէիք, հայրենեաց համար...
Երկինքը վառեց այդ անպարտելի
Զօրութեան բոցը ձեր աչքում պայծառ:

Ձեր առաջ պողպատ ընաւ չէ շառաչում.
Ձե՛կ համար մարտի պարզվում են դրօշներ,
Պատանին էլ է առաւել վառվում
Եւ աւելի ջերմ են աղօթքի խօսքեր:

Այն խաղաղ պահուն, երբ իւր բարձունքից
Ալիքների վրայ արևն է իջնում,
Աղատ միտքն ըստրուկ ձեզ հարկ է տալիս
Եւ իշխանութիւն ձեզ է հնազանդվում:

Բայց ի՞նչ էիք դուք վարժեցնում մեր մէջ,
Պսակ էիք դնում դուք ո՛ւմ ճակատին.
Եւ դուք չէիք որ հանգցըրիք անշէջ
Սրբազան ճըրագ մեր մաքուր սրտին:

Ո՞վ խրեց ծաղիկ մանուկ ցնորքների,
Ո՞վ մեզ ներշնչեց այն շնչին կրքեր,
Ո՞վ քրնացրեց այն միտքը արի,
Որ պահում էր սուրբ աւանդութիւններ:

Կարող չենք առնել և հատու սուսեր,
Որով մարտնչում էին մեր նախնիք...
Հայրենի երկրին ո՞վ բերեց աւեր.
Ասացէ՛ք, կանայք, մի՞թէ դուք չէիք:

II.

Datemi pace, o duri miei pensieri!

Petrarca.

Կար մի ժամանակ, երազում էի
Թէ պիտի զտնեմ անդուլ վաստակով
Ես հանգիստ, որին կարոտում էի
Տանջուած, վշտաբեկ, անհուն փափագով:

Անցան տարիներ. չկայ վայելքի
Նախկին բոցավառ անուշ ցանկութիւն,
Զկայ սրտառու չհրապոյրքը ցնորքի,
Որով միշտ քաղցր է ծաղիկ մանկութիւն:

Սիրտըս դատարկ է. ո՛չ, կեանքի հոգսեր,
Ո՛չ աշխատութիւն չեն կարող ինձ տալ.
Այն իմ կորուսած ոսկի երազներ,
Մատաղ օրերիս սիրուն իդէալ:

Եւ կեանքը ահա մի վայրի անտառ,
Ուր ես մոլորուած քայլերս եմ ուղղում,
Առանց տեսնելու մի նշող պայծառ,
Ուր միայնութիւնս եմ միայն ողբում:

Իբրեւ մի նաւորդ ալեաց երեսին
Գընում եմ անդրս, վշտերից ընկճուած...
Եւ պիտի հասանեմ մի օր փարոսին,
Կեանքի կատաղի հոսանքից պրծած:

1889, 3 նոյեմբերի.

Վաղարշապատ.

III.

ԲՈՒԳՐՈՅԻ ՄԵԿՕՆԵԱՅԻ ԱՌԱՋ

Մինչ շուրջս աշխարհի ունայն հոգսերով
Վխտում է ամբոխն անմիտ ու դատարկ
Նւ զուարճանում է առօրեայ փառքով,
Մինչ վաղը դարձեալ նա ստրուկ է անարգ.
Մինչդեռ մրցելով եռում են կրքեր,
Մէկին ստոր անկումն, միւսին յաղթանակ
Պատրաստել կամին անմաքուր ձեռքեր,
Լոկ շահահնդիր մարտի ընդունակ,—

Նս աշխարհ մոռցած, հեռու աղմուկից,
Կանգնած եմ առջեւ, ո՛վ սուրբ Տիրամայր.
Ականջս ազատ է մարդկան շշուկից
Սիրոյ բարբառը լսելու համար.
Ճշքս սեւեռած լուսաւոր դէմքիդ
Կամիմ թախծալից հայեացքս կարդալ...
Գիտեմ, ողբում է այդ սիրող հոգիդ
Արեան մէջ խեղդուող մարդկութիւնն անկեալ:

Պայծառ ամպերի, հրեշտակների մէջ
Կանգնած ես երկնից փառաց թագուհի,
Պրսակուած լուսոյ պըսակով անշէջ,
Դու կարեկցութեամբ երկրիս հովանի.
Մաքուր բերկրութեամբ լի է իմ հոգին.
Ծունկ եմ խոնարհում ահա Բո առաջ,
Սուրբ զեղեցկութեան տիպար երկնային,
Կետրանի Սիրոյ Մայր լալահառաչ...

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

12 յուլիսի, 1889.
Փարիզ.

ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

(Պրօֆ. Ն. Ի. Ստորոժէնկոյի.)

Ամեն ժամանակի մանկավարժական տեսութիւնները ուղղակի կախումն են ունենում այն կենսական իրեաներից, որ սեպհական են լինում ժամանակին կամ, աւելի ճիշդ, հասարակութեան առաջնորդող դասակարգերին։ Այս դրութեան ճշմարտութիւնը մանաւանդ ապացուցանում է միջին դարու մանկավարժութեան պատմութիւնը, երբ եւրոպական հասարակութեան զեկավարող դասակարգը կաթոլիկ հոգեորականութիւնն էր, որ ձգտում էր իւր միակողմանի կղերական - ճգնաւորական (ասկետական) գրոշմը դնելու բարձրագոյն հոգեոր գործունէութեան բոլոր ճիւղերի վրայ, այն է՝ գիտութեան, գեղարուեստի, գրականութեան։ Սակայն սկզբումը հոգեորականութիւնը թշնամաբար չէր վերաբերում աշխարհիկ գիտութեանը։ Քրիստոնէութեան առաջին դարերի լուսաւորուած հովիւները, որոնք իրանք լուրջ դասական կրթութիւն էին ստացած, հնութեան մեծ մատենագիրներին համարում էին մոռաւոր չարագաման մի հղօր միջոց և մի պատուական դպրոց հեթանոսութեան դէմ մաքառելու համար։ Օրինակ, Բարսեղ Մեծը Դասական հեղինակների ուսումնասիրութեան օգտի մասին գրել է մի առանձին ճառ, որի մէջ ապացուցանում է թէ լուսաւորուած հեթանոսների դէմ յաջողութեամբ մաքառելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հեթանոս բա-

նաստեղծներին, պատմագիրներին և պերճախօսներին: «Աշխարհիկ հեղինակութիւնները,—ասում է նա,—հոգեւորների վերաբերմամբ նոյնն են, ինչ որ ծառի տերեւները նորա պտուղների վերաբերութեամբ, տերեւները առաջ են լինում, իրանց ստուերովը ծածկում ու պահպանում են պտուղները»: Երազմուս Ռօտտէրդամցուց աւելի քան հազար տարի առաջ՝ արեւելեան եկեղեցու սուրբ հայրը նոյնչափ հիանում էր դասական հեղինակների գեղարուեստական ձևի վրայ, որչափ և նոցա բովանդակութեան. նոյն իսկ մի տեղ առանց վարանելու Սոկրատէսին ու Պլատոնին նոցա գաղափարների վսեմութեան կողմից համեմատում է Պօղոս առաքելի հետ: Դժբաղդաբար Բարսեղ Մեծի օրինակին հետևողներ քիչ եղան, և արդէն նորա արեւելեան ժամանակակիցը՝ Օգոստինոս երանելին, որ երիտասարդ հասկում լալիս էր Ենէականի չորրորդ հագներգութեան վրայ, իւր կրթութեան սիստէմից դուրս է ձգում հեթանոս հեղինակներին ու գիտութիւնը և բարեպաշտական եռանդով բացագանչում է թէ քրիստոնէին լուսաւորութիւն հարկաւոր չէ, թէ անուաները ուսեալներից շուտ կրմանն արքայութիւն (Indocti surgunt et rapiunt coelum.). Զ. դարում Գրիգոր Մեծ պապը մարտնչում է ոչ միայն հռովմի դասական հեղինակների դէմ, այլ և լատիներէնի քերականութեան և պարծենում է որ ինքը սխալներով էր գրում: «Ես կ'ամաչէի,—ասում է նա,—ենթարկել աստուածային իմաստութեան խօսքերը կանոններին»: Իմանալով որ մի ֆրանսիացի եպիսկոպոս քերականութիւն է սովորեցնում և դասական հեղինակների գրուածքները կարդում է իրան յանձնած եկեղեցական դպրոցի մէջ, պապը խիստ յանդիմանութիւն է գրում նորան, որովհետեւ «անվայել է մի և նոյն շրթունքով օրհնաբանել Քրիստոսին և փառաւորել Իւպիտերին»: Գիտութեանց վարդապետն վրայ մանաւանդ կործանող ազդեցութիւն ունեցաւ մուրացիկ միաբանական կարգերի հիմնուելը, որոնք անպատականի հայեացք էին քարոզում կեանքի մասին և մարդկային գոյութեան նպատակն էին համարում աճնաւորութեան ճնշումը և կատարելութեան հասնելը հետզհետէական մարմնասպանութեամբ: Միջնադարեան ասկէտների շարադրութեանց մէջ շատ կան յարձակունքներ անտեղի հարցասիրութեան վրայ, որ գոհացումն է որոնում աշխարհային գիտութեան մէջ, և ս. Բեռնարն այս բոլոր մեղադրանքների գեղեցիկ բանաձև է տալիս իւր խօսքերովը թէ աշխարհային գիտութիւնը կրթում է մարդու մէջ

խելք և հպարտութիւն և ոչ քրիստոնէական սէր, Այսպիսի հայկացիների ազգեցութեան տակ որ միջնադարեան հասարակութեան ղեկավարող դասերը ընդունում ու քարոզում են XII և XIII դարերում, մատաղ սերունդի դաստիարակութիւնը չափազանց միակողմանի ուղղութիւն է ստանում, դաստիարակութեան նպատակն է ոչ թէ մանուկների մտաւոր զարգացումը, այլ այն յատկութիւնների արմատացնելը նոցա մէջ, որ անհրաժեշտ էին համարվում աստուածահաճոյ կեանք վարող մարդու համար, այն է՝ հեղութեան, համբերութեան և անպայման հնազանդութեան՝ եկեղեցուն ու հուգեորականութեանը, Նաո հետաքրքրական են այն մանկավարժական միջոցները, որոնց օգնութեամբ հեղութիւն, խոնարհութիւն էին ներշնչում մանկանը, Այս նպատակով մի քանի դպրոցներում պատուիրում էին աշակերտներին որ միշտ աչքները գետին խոնարհած ունենան, արգելում էին նոյնպէս բարձր անժողովների վրայ նստել, մի՛ գուցէ բարձր դիրքը աշակերտների հոգու մէջ սատանայական հպարտութեան սերմեր ցանէ։ Թէպէտ միջնադարեան դպրոցներում չդադարեցաւ այն գիտութիւնների դասաւանդութիւնը, որոնք կալում էին *trivium*՝ը (քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն—դիալեկտիկ) և *quadrivium*՝ը (երաժշտութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն և աստղաբաշխութիւն), բայց այս գիտութիւնները ինքնուրոյն նշանակութիւն չունէին և աւանդվում էին գրեթե խաւորապէս կրօնական նպատակների համար, IX դարու գերմանացի մանկավարժ Ռարան Մաւրը այսպէս է որոշում այս գիտութիւնների դասատուութեան նպատակը. «Քերականութիւնը ուսուցանում է կանոնաւոր խօսելու ու գրելու արուեստը, առանց նորան չէ կարելի հասկանալ Ս. Գրքի շրջաններն ու ձևաւոր դարձուածները, հարկաւոր չէ արհամարհել և տաղաչափութեան արուեստը, որովհետեւ սաղմոսների մէջ պատահում են շատ բազմատեսակ չափեր, որոնց մեկնութեան համար հարկաւոր է իմաստասիրել հին հեթանոս բանաստեղծներին, առաջուց նոցանից հանելով այն բոլորը, ինչ որ վերաբերում է սիրոյ զգացմունքին և հեթանոսութեան աստուածներին, նմանապէս անհրաժեշտ է Ս. Գիրքը հասկանալու համար և թուաբանութիւնը, որովհետեւ նորա մէջ յաճախ խօսք է լինում թուերի ու չափերի մասին, երկրաչափութիւնը անհրաժեշտ է նորա համար, որ Ս. Գրքի մէջ պատահում են զանազան շրջաններ ու ձևեր նոյեան տապանի և

Սողոմոնի տաճարի նկարագրի մէջ. աստղաբաշխութիւնը կարեւոր է զատկի ու տօների որոշման համար. երաժշտութիւնը անհրաժեշտ է ժամասացութեան համար որ չէ կարող առանց սորան բարեփայտուլ լինել ինչպէս հարկն է»։ Միայն զիալէկտիկային Ռարան Մարը ինքնուրոյն նշանակութիւն է տալիս, անուանում է գիտութիւնների գիտութիւն, ամենայն գիտութեան ու իմաստութեան աղբիւր, թէեւ իսկոյն աւելացնում է որ անհրաժեշտ է մանաւանդ, իրրե միջոց հերետիկոսների դէմ մաքսուելու համար։ Միջնագարեան մանկավարժութեան միակողմանի նպատակներին լիովին համապատասխանում էր և այն դպրոցական խիստ կարգապահութիւնը, որ կարող է սպանել մտքի ամենայն հարցասիրութիւն, ինքնուրոյն կամքի ամենայն արտայայտութիւն, Գաւազանը և խարազանը անգթութեամբ իջնում էին անդադար աշակերտների մէջքին, որոնք դպրոցից դուրս էին գալիս տեղեկութիւնների քիչ պաշարով բայց ամբողջ մարմնի կապուտած տեղերի ու սպիւնների մեծ քանակութեամբ։

Այսպէս էր մանկավարժութեան և դպրոցական կարգապահութեան ընդհանուր բնաւորութիւնը մինչև միջին դարու վերջը, երբ արդէն Իտալիայում սկսվում էր Վերածնութեան դարու արշաղոյսը։ Յայտնի է որ այս շրջանը նշանաւոր եղաւ մարդկային մտքի արագ զարգացմամբ, որ հարստացաւ յոյն և հռափմէացի հեղինակների քերթուածներից քաղուած բազմաթիւ նորանոր տեղեկութիւններով. այս շրջանում մարդկային խելքը սթափուած մաքառում է եկեղեցու հեղինակութեան դէմ. այս այն մեծամեծ գիւտերով ու հնարագիտութեամբ փառաւորուած շրջանն է, որ միջին դարու ու նոր ժամանակի սահմանն է կազմում։ Այս գիւտերից ամենանշանաւորը, ինչպէս սրամիտ կերպով նկատում է Միշլէն, մարդու գիւտն է, այն է՝ նոր հայեացք նորա անձնաւորութեան արժանաւորութեան և նորա գոյութեան նպատակի վրայ։ Երկրային կեանքը միայն յաւիտենական կեանքի պատրաստութիւն համարելով իսկ մարդուն իւր կրքերի խաղաղք ու սատանայի զիւրազին աւար, միջնագարեան մարդիկ սակաւ էին հոգում կեանքի յարմարութիւնների մասին, փոքր գին էին տալիս մարդու անձնաւորութեանը, նորա պահանջներին ու ընդունակութիւններին և ճգնաւորի կեանքին վայել նահատակութիւններով նկրտում էին խոնարհեցնել մարդուն, ճնշել նորա չար կամքը, սանձել մտքի վտանգաւոր հարցասիրութիւնը։ Դասական հնութեան

վերածնութիւնը այս հայեացքին վերջնական հարուած տուեց. դասական հեղինակների ուսումնասիրութեան ազդեցութեան տակ հասարակութեան մէջ նոր հայեացքներ ներմուծուեցան մարդկային անձնաւորութեան և նորա գոյութեան նպատակի վերաբերմամբ. Այս հայեացքների էութիւնը կաղմում է մի ուրախական զուտ հելլենական աշխարհայեցողութիւն կեանքի մասին, խորին յարգանք դէպի մարդկային արժանաւորութիւնը և ոչ նուազ խորին համոզմունք մարդկային բնութեան բոլոր յոյժերի ու ընդունակութիւնների զարգացման անհրաժեշտութեան ու օրինականութեան վերաբերութեամբ. Ոչ մի տեղ Վերածնութեան դարու նշանաբանը դարձած այս յարգանքը դէպի մարդկային բնութեան արժանաւորութիւնը այնպիսի զօրութեամբ չէ արտայայտուած ինչպէս իտալացի հումանիստ Պիկո դէ-լա Միրանդոլայի հռչակաւոր «De hominis dignitate» (մարդու արժանաւորութեան մասին) ճառի մէջ, որ նա կամենում էր արտասանել 1486 թ. հռովմում իւր չկայացած ընդդիմախօսութիւնից առաջ, որ պիտի ունենար կաթողիկ աստուածաբանների հետ. Այս ճառը մանաւանդ հետաքրքրական է նորա համար, որ նա, այսպէս ասած, երկու պատմական շրջանի սահմանի վրայ է կանգնած, որ նորա մէջ միջնադարեան հայեացքները աշխարհի մասին միախառնվում են հումանիստների վսեմ երազների հետ մարդկային բնութեան արժանաւորութեան մասին. Պիկոյի տեսութեան հիմքն այն է թէ երկիրը աշխարհի կենտրոնն է և նորա շուրջն են պտտվում արեգակը և միւս մոլորակները. մարդը երկրի կենտրոնն է, բոլոր տիեզերքի հանգույցը և կապն է (nodus et vinculum mundi), որովհետեւ նորա մէջ մենք գտնում ենք բոյսերի բուսական և կենդանիների զգայական կեանքը, հրեշտակների խոհական ունակութիւնը և Աստուծոյ պատկերը երկրի վրայ. Աստուած մարդուն ստեղծեց իւր ստեղծագործութեան վերջումը որ նա կարողանայ ճանաչել տիեզերքի օրէնքները, զարմանալ նորա վեհութեան վրայ, հիանալ նորա գեղեցկութեան վրայ. Իբրեւ ամբողջովին մարդու նշանագրութեան՝ Պիկոն հետեւեալ խօսքերն է ընծայում Արարչին, Ադամին ուղղած. «Ես քեզ չտուի ոչ մի հաստատուն բնակարան, Ադամ, ոչ մի մշտական պարապմունք, որ դու կարող լինիս ապրել ուր որ կամենաս և ընտրել այն պարապմունքները, որ դու կը կամենաս. Բոլոր միւս արարածները կաշկանդուած են իրանց բնութեան պայմաններովը, իսկ դու ինքդ կը վճռես, թէ ինչ պիտի

լինիս, ես քեզ չստեղծեցի ոչ մահկանացու և ոչ անմահ, որ դու ինքդ քո անդրիագործը լինիս և ընդունես այն ձևը, ինչ որ ինքդ կրկամենաս. դու. կարող ես ստորանալ մինչ կենդանի դառնալդ և բարձրանալ մինչ հրեշտակ լինելդ:»

Երբ այսպիսի հայեացքներ, որոնք ծագեցան դասական գրականութեան իմաստասիրելուց, սկսան արմատանալ հասարակութեան մէջ, նոքա անպատճառ պիտի ազդէին մանկավարժական իրէպլների փոփոխութեան վրայ: Ամենանշանաւոր փորձը այս ուղղութեամբ պատկանում է պաղուացի Վիտտորինո դա-Ֆէլտրէ հոլմանիստին, որին ամենայն իրաւունքով հարկաւոր է նոր մանկավարժութեան հայր համարել: Վիտտորինոն ծնաւ մի աղքատ ընտանիքում, 1378 թ., Ֆէլտրէ գիւղում որ պատկանում էր Վենետիկի տէրութեանը, Սկիլլեական կրթութիւնը նա ստացաւ ճարտասանութեան ու լատիներէն լեզուի հռչակաւոր թափառական ուսուցիչ Ջիովաննի դա-Ռավէննայի ղեկավարութեամբ: Յետոյ նա մտաւ Պաղուացի համալսարանը, ուր նա ապրում էր չնչին դասերով: Սաստիկ սիրելով մաթեմատիկան և միջոց չունենալով վճարելու դասերի համար այդ առակայի միակ ուսուցչին Պաղուայի մէջ՝ Բիաջիո Պէլականէին, Վիտտորինոն, ինչպէս յետոյ հայդեր, ծառայ մտաւ իւր ուսուցչի մօտ և անձնական աշխատանքով վճարում էր երկրաչափութեան դասերի վարձը: Դժբաղդաբար Բիաջիոն վատ ու դանդաղ ուսուցիչ էր, և մի կարճ ժամանակ նորանից դասեր առնելուց յետոյ Վիտտորինոն նկատեց որ այդ դասերից շատ օգուտ պիտի չստանայ և սկսեց ուսումնասիրել Եւկլիդէսին: Իւր պատուական ընդունակութիւնների շնորհիւ Վիտտորինոն շուտով այնպիսի յառաջադիմութիւն արեց մաթեմատիկայի մէջ, որ ինքը կարող էր դաս տալ այդ առարկան: 1414 թ. մենք տեսնում ենք Վիտտորինոին Վենետիկում, ուր նա գործնականապէս պարապում է մանկավարժութեամբ. նա ընդունում է իւր մօտ դաստիարակելու համար անուանի վենետիցիների որդոց, իսկ աղքատներին ուսուցանում է ձրիաբար: Վենետիկում Վիտտորինոն ծանօթանում է ու բարեկամանում Գուարինո դա-Վերոնա յայտնի հոլմանիստի հետ, որ նորան յունարէն է սովորեցնում: 1418-ին Վիտտորինոն հրաւիրվում է իւր հայրենի համալսարանը ճարտասանութեան ուսուցչապետ, բայց մանկավարժութիւնը նա չէ թողնում և շուտով բանում է մի գիշերօթիկ ուսումնարան բոլոր դասակարգերի ու վիճակի մանուկների համար: Նորա ման-

կալարժական հմտութեան հռչակը այնպէս տարածուեցաւ բոլոր Իտալիայում, որ երբ Մանտուայի դուքսը, Ջան Ֆրանչեսկօ Գօն-վապա, զաստիարակ էր որոնում իւր համար, նա ընտրեց Վիտտօ-րինոյին։ Այդ դքսի պատուաբեր հրաւերը ստանալով՝ Վիտտօրինօն 1425 թ. տեղափոխուեցաւ Մոնտուա, Դուքսը նորա լիազօր իշխա-նութեանը յանձնեց մի հոյակապ ամարանոց, որ քաղաքի աղմու-կից հեռու շինած էր մի լճի ափի վրայ, որին կից տարածուած էին ձիթենու ու նոճիի ծառաստաններ, Այս ամարանոցում, որ աւելի մի խալաքի սիրարիտի զուարճութեան պալատի էր նմանում, քան դպրոցի, բնակուեցաւ Վիտտօրինօն դքսի որդոց, նոցա ծա-ռաների և անուանի հասակակիցների հետ միասին։ Ամարանոցի վրայ մեծ գումարներ էին մտնում։ Ճաշի ժամանակ պարտիզում նուազում էր երաժշտութիւնը. անուշահոտ ջրերով օծուած ծառները համադամ կերակուրներ էին բաժանում երես առած թաւշեայ ու մետաքսեայ զգեստներով զարդարուած աշակերտնե-րին։ Վիտտօրինոյի առաջին գործը եղաւ ոչնչացնել այս շոյալ և մանկավարժական տեսակէտից վնասակար նիստուկացը և մոցնել դպրոցի մէջ խիստ կարգ ու կանոն։ Երաժշտութիւնը լուց, նուրբ ճաշակով պարաստած կերակուրները փոխարինուեցան պարզ կերակուրներով։ աշակերտները հասարակ շորեր հագան։ Պատանի դքսերի անուանի հասակակիցներից Վիտտօրինօն ընտրեց մի քանի տղայ, որոնք աւելի քիչ էին երես առած և աւելի ըն-դունակ էին աշխատանքի, իսկ մնացածներին ուղարկեց իրանց տները։ Այս վճռողական միջոցը դուր չեկաւ նոցա ծնողներին և սոքա գանգատ արին դքսին նորեկ մանկավարժի վրայ։ Երբ Վիտտօրինօն տեղեկացաւ այս մասին, իսկոյն դնաց պալատը, իւր կրթութեան ծրագիրը մեկնեց դքսին, և վերջինս անպայման կերպով հաւանեց նորա բոլոր կարգադրու-թիւններին։ Ստանալով դքսից բոլոր կա-րեւոր միջոցները և իրաւունք լիովն օգտուելու զանձարանի գու-մարներից, Վիտտօրինօն եռանդով սկսեց վերանորոգել դպրոցը, ուր նա կամենում էր ճշտութեամբ իրագործել իւր մանկավարժա-կան տեսութիւնը։ Թէպէտ սկզբում դպրոցը, դքսի մտադրութեամբ, նշանակուած էր միայն դքսի ու պալատականների որդոց հա-մար, բայց Վիտտօրինօն շուտով դպրոցի դռները ազատ բաց ա-րեց բոլոր դասակարգերի, թէ հարստների և թէ աղքատնե-րի, որդոց համար։ Աղքատ մանուկների համար դպրոցից բէ հե-ռու նա ապաստանարան հիմնեց, ուր նոցա պահում էր, հագ-

ցնում և մատակարարում նոցա բոլոր ուսումնական պիտոյքը:

Աւելորդ չենք համարում մանրամասնօրէն ծանօթացնել բնթերթողներին Մանտուայի դպրոցի կազմակերպութեան հետ, ըստ որում այդ Եւրոպայի առաջին միջնակարգ դպրոցն էր որ հիմնուեցաւ նոր սկզբունքներով: Վիտտորինոյի իդէալն էր Աթէնքի Գիմնազիոնը, ուր հաւասար ուշադրութիւն էին դարձնում պատանիների թէ մտաւոր և թէ ֆիզիքական կրթութեան վրայ, իսկ մանկավարժութեան նպատակն էր բարոյական բնաւորութեան զարգացումը: Ահա թէ ինչու Մանտուայի դպրոցում ուսումնական պարապմունքներին հետեւում էին խաղեր և ֆիզիքական վարժութիւններ բաց օդում: Ամենայն օր յայտնի ժամերում, ինչ եղանակ էլ լինէր, աշակերտները վարժվում էին վաղելու և ըմբշամարտութեան, լող տալու, գնտակ խաղալու և նետաձգութեան մէջ: Երբեմն թոյլ էին տալիս նոցա որս անել և ձուկ բռնել: Ամառները դաստիարակների առաջնորդութեամբ նոքա հեռաւոր ճանապարհորդութիւններ էին անում դէպի Վերոնա, Գարդի լիճը և մինչև անգամ գէպի Ալպեան սարերը: Դասաւանդութեան հիմքը կազմում էին հին լեզուները, որ ինքը Վիտտորինօն դաս էր տալիս մեծ դասարաններում: Դասական հեղինակներից նա միայն նոցա գրուածքներն էր մեկնում դասարանում, որոնք բարոյական-դաստիարակիչ ազդեցութիւն կարող էին ունենալ մատաղ սերունդի վրայ: Բանաստեղծներից բոլորից նա գերադասում էր Վերգիլիոսին, հոմերոսին և Լուկանոսին, պատմաբաններից՝ Տիտոս Լիվիոսին, պերճախօսներից՝ Կիկերոնին, փիլիսոփաներից՝ Պլատոնին: Դասատվութեան եղանակը Մանտուայի դպրոցում պարզ էր, մատչելի և միշտ աշակերտների հասակին ու ընդունակութիւններին: Դասական հեղինակների հետ միաժամանակ ուսումնասիրութեան նիւթ էր մանթեմատիկան, որ Վիտտորինօն մտքի վարժութեան պատուական միջոց էր համարում և որով նա կամենում էր փոխարինել սխօլաստիկական տրամաբանութիւնը: Թէպէտ մանկավարժական աշխատութեան մէջ Վիտտորինոյին գործակից էին մի քանի ուսուցիչ, բայց դասաւանդութեան ու բոլոր դպրոցի հոգին միայն նա էր: Նա սպրում էր իւր աշակերտների հետ ինչպէս հայրը իւր որդոց հետ, նա նուիրում էր նոցա իւր բոլոր ժամանակը և միջոցները: Նոցա համար նա հրաժարուեցաւ բնտանեկան կեանքի ուրախութիւնից ու զուարճութիւններից և զրկեց ձգնաւոր դարձաւ, և երբ բարեկամները նորան խորհուրդ էին տալիս պսակուել

որ իւր նման որդիք ունենայ, նա կատակով պատասխանում էր թէ առանց այն էլ շատ որդի ունի, ակնարկելով իւր դպրոցին։ Հետեւելով Պլատոնի խրատին թէ աղատ էակին պէտք է սղատ դաստիարակուել, առանց որ և է բռնութեան, Վիտտորինօն աշխատում էր ներգործել համոզելով և միայն շատ ծայրայեղ դէպքերում դիմում էր մարմնական պատիժներին։ Իսկ երբ նորա ջանքները մի փոքրիկ յաջողութիւն ունեցան, նա խոհուէն կերպով ու վերջնականապէս համարձակ քայլ արեց և արպելեց որ և է մարմնական պատիժ իւր դպրոցում։ Այն խիստ կարգապահութիւնը որ նա մտցրել էր իւր դպրոցի մէջ պահպանում էր միմիայն այս զարմանալի մարդու բարոյական ազդեցութեան շնորհիւ, այս մարդու՝ որի խելքը յուսաւորուած էր աստուածային շնորհաց ճառագայթներով, ինչպէս ասում է նորա մասին մի ժամանակակից։ Զսպելով իւր կրակոտ բնութիւնը, ինքը բարպական օրինակ հանդիսանալով իւր սաներին, Վիտտորինօն իրաւունք էր համարում պահանջել ուրիշներէն էլ որ մաքառեն բնածին զգացմունքների դէմ և անթերի կատարեն իրանց պարտականութիւնը։ Ուրախ ու զուարթ էր ընթանում դասատուութիւնը, լաւ էին դիմում իրանց աշակերտները Վիտտորինոյի դպրոցում, որ ժամակակիցները անուանում էին Ուրախ Տուն (Casa Giocosa)։ Բայց անհիմն կըլինէր կարծել թէ Մանտուայի յոռնական ձեռով կազմակերպած դպրոցում կրօնական կրթութեանը երկրորդական նշանակութիւն էին տալիս։ Վիտտորինօն թէև իւր ընդհանուր կրթութիւնը պարտական էր դասական հեղինակներին, այնուամենայնիւ ազատ էր կրօնական անտարբերութիւնից ու հեթանոսութեամբ։ Եւրոպականութեանը, որ յատուկ էր իտալացի հումանիստների մեծամասնութեանը, նորա դպրոցում ճշմարիտ կրօնական ոգի էր թափաւորում։ Եկեղեցական կանոնները և պատկեր պահպանում էին խստութեամբ, աշակերտները ամենայն օր պարտաւոր էին ներկայ լինել ժամասացութեանը, իսկ ճաշի ժամանակ կերակուրների փոխուելու միջոցներում նոցա համար կարգացվում էր Ս. Գիլբերտ։ Մանտուայի ըստ ամենայնի օրինակելի դպրոցի միակ պակասութիւնը բնական գիտութիւնների բացակայութիւնն էր, որ Վիտտորինօն դուրս էր ձգել երևի այն պատճառով, որ նորա ժամանակ դժուար էր այդ առարկաների համար ուսուցիչներ գտնել։

Վիտտորինօն իրանից յետոյ ոչ մի մանկավարժական շարա-

գրութիւն չլծողեց, նա այն կարծիքն ունէր թէ լաւ գործելը գերադասելու է լաւ գրելուց. բայց նորա գործադրած առողջամիտ մանկավարժական սկզբունքները սիստեմատիքական արտայայտութիւն գտան նորա երկու ժամանակակիցների Վերջերիոյի և Վեջիոյի շարադրութեանց մէջ, որոնց կարելի է դաստիարակութեան նոր տեսութեան գիտնական հիմնադիր համարել. Պաղուացի պրոֆեսոր Պօլօ Վերջերիոյի փոքրիկ ճառը De ingeniiis, moribus et liberalibus studiis, որ գրուած է XV դ. սկզբումը, նշանաւոր է նորանով որ նորա մէջ պարզ ու հակիրճ ձեով առաջ են բերուած հումանիտական գաղափարների հիման վրայ զարգացած դաստիարակութեան նոր տեսութեան սկզբունքները: Այս սիստեմի հիմքը կազմում են հետեւեալ գրութիւնները. ա, կրթութեան նպատակն է մարդու թէ մտաւոր և թէ ֆիզիքական բոլոր ոյժերի ու ընդունակութիւնների կանոնաւոր զարգացումը. բ, դաստիարակութեան միջոցին ինկատի պէտք է ունենալ ոչ միայն աշակերտի հասակը, այլ և նորա անհատական առանձնաշատկութիւնները. գ, որովհետեւ աշակերտի կենդանի ու տրւաւորութեան դիւրամատոյց հոգու վրայ աւելի կենդանի օրինակով կարելի է ներգործել, քան մեռեալ կանոններով, ուստի ամենալաւ միջոցը նորանում աշխու մրցումն առաջացնելու համար այն է, որ նա ծանօթանայ մեծ մարդկանց կեանքի հետ, որոնցով այնպէս հարուստ է դասական հնութիւնը և դ, կրթութիւնը պիտի հիմնուած լինի գլխաւորապէս ազատ գիտութեանց ուսումնասիրութեան վրայ. այդ գիտութեանց գլուխն է փիլիսոփայութիւնը, որ մարդկանց ազատ է կացուցանում մտաւորապէս. նորանից յետոյ կարեւորագոյնն է պերճախօսութիւնը, որ սովորեցնում է մեղ պարզ ու գեղեցիկ կերպով արտայայտել մեր մտքերը. բնագիտութիւնը, որ սովորեցնում է մեղ ըմբռնել բովանդակ բնութեան ներդաշնակութիւնը և վերջապէս պատմութիւնը, որ ներկայացնում է նախընթաց գիտութեանց ընթացքն ու զարգացումը և մատակարարում է մեղ բազմաթիւ օգտակար օրինակներ: Այս գաղափարների զարգացման մէջ Վերջերիօն ցոյց է տալիս որ նա լաւ իմաստասիրել է դասական հեղինակներին, մեծ մանկավարժական շնորհք ունի և ամենայն նրբութեամբ ճանաչում է մարդկային բնութիւնը: Այսպէս են, օրինակի համար, նորա նկատողութիւնները թէ աշակերտի միտքը աւելի զարգանում է մի հեղինակութեան հիմնաւոր ուսումնասիրութեամբ,

քան շատերի հարևանցի ընթերցանութեամբ. թէ յիշողութեան ծանրաբեռնումը բազմաթիւ մանր փաստերով ճշնում ու վերջնականապէս թուլացնում է նորան. թէ ինչպէս կարգապահութեան բացակայութիւնը դպրոցի մէջ, նոյնպէս չափազանց խիստ կարգապահութիւնը հաւասարապէս փնասակար են, որովհետեւ առաջին դէպքում աշակերտի ոգին թուլանում է, զրկւում է տոկունութիւնից ու աշխատանքի ընդունակութիւնից, իսկ երկրորդ դէպքում՝ տանջուած աշակերտը զրկւում է ամենայն եռանդից, ձեռնարկող ոգուց, ըստ որում ով որ ամեն բանից վախենում է, նա չէ կարող որ և գործ ձեռնարկել:

Մեծ հմտութեամբ ու սխտեմարար գրուած է հոսովնայեցի մանկավարժ Մատթէօ Վէջիոյի շարադրութիւնը De liberorum educatione, սա օգտուել է բացի Վերջերիոյից՝ և Կուինտիլիանից ու Պլուտարքոսից որի գրուածքը Դաստիարակութեան մասին թարգմանած էր լատիներէն Գուարինօն: Այս արդէն կատարեալ մանկավարժութիւն է որ մանկան կրթութեանը ուշ է դարձնում նորա ծննդեան իսկ օրուանից: Վէջիօն, ինչպէս յետոյ և Ռուսօն, բողոքում է երեխաներին ծծմայրերի յանձնելու սովորութեան դէմ և խստիւ պահանջում է որ մայրերը իրանք իրանց երեխաներին կերակրեն: Վէջիոյի կարծիքով կրթութեան նպատակը պիտի լինի հոգու և մարմնի կանոնաւոր զարգացումը, լաւ օրինակներով մանկան մէջ առաքինութեան սովորութիւններ արմատացնելը, հետեւելով Վերջերիոյի գաղափարին թէ դասաւանդութեանց միջոցին հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ոչ միայն երեխայի հասակի վրայ, այլ և նորա անհատական առանձնայատկութեանց, Վէջիօն մանրամասնօրէն ճառում է այս անհատական հոգեբանութեան մասին: Վէջիոյի կարծիքով մանուկների բնութիւնները այն աստիճանի բազմատեսակ են լինում, որ աւելի հեշտ է արեգակը շեղել իւր ճանապարհից, քան փոխել երեխայի բնածին հոգեւոր հակումները: Մարգկային բնութեանց բազմատեսակութեանը պիտի համապատասխան լինին նոցա կրթութեան բազմատեսակ միջոցները: Կրակոտ ու յանդուգն մանկան հետ հարկաւոր է վարուել այլ կերպ, և այլ կերպ երկշոտ ու քնքուշ հետ, նոյնը պէտք է ի նկատի ունենալ և նորա մտաւոր կրթութեան միջոցին: Այս հիման վրայ Վէջիօն խորհուրդ չէ տալիս ծնողներին երեխաներին տալ այնպիսի ուսումնարան, ուր աշակերտներ շատ կան, որովհետեւ աշա-

կերտների բազմութեան պատճառով նոյն իսկ լաւագոյն ուսուցիչը չէ կարող միշտ 'ի նկատի ունենալ իւրաքանչիւրի անհատական առանձնայատկութիւնները և սոցա համեմատ սահմանել իւր դասատուութիւնն ու վարմունքը:

Վէջիոյի շարագրութիւնը ամբողջապէս վերցրած է միայն նորա նախորդի արտայայտած սկզբունքների աւելի սխտեմատիքական զարգացումն է ներկայացնում, բայց մասնաւոր խնդիրների վերաբերութեամբ նորա գրութիւնը մէջ կան մի քանի տարբերութիւններ ու նոր մտքեր. այսպէս, օրինակ, Վիտտօրիոյի ազդեցութեան տակ՝ նա դասատուութեան առարկաների միջից դուրս է ձգում բնական գիտութիւնները և աւելի մեծ ուշադրութիւն է դարձնում կրթութեան կրօնական կողմի վրայ և հաւասարապէս յարմարեցնում է իւր մանկավարժական սկզբունքները ինչպէս տղայոց, նոյնպէս և աղջկանց դաստիարակութեանը:

Նոր մանկավարժութեան այս երեք գլխաւոր կարապետների տեսութիւնները ոչ նուազ ազդեցութիւն են ունեցել էրազմուսի, Ռարլէի, Մոնտէյնի և սոցա միջոցով և բոլոր նորագոյն մանկավարժական գիտութեան վրայ: Նոր մանկավարժական սկզբունքները ամենից առաջ հիմնաւորապէս դուրս են բերուած եւրոպական ամենահռչակաւոր հումանիստ էրազմուս Ռոտտերդամցու շատ գրութիւնների մէջ:

Էրազմուսի հայեացքները ցնահատելու համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, որ նորա ժամանակ կրթութեան սխոլաստիքական սխտեմը դեռ բոլորովին վերացած չէր, և նա նոյնչափ ստիպուած էր նորը սերմանել, որչափ և հոգս անել վատ հինը արմատախիլ անելու համար: Էրազմուսի մանկավարժական հայեացքների գլխաւոր յատկանիշն է մի խորին յարգանք դէպի մանկական հասակի սրբութիւնը: Նորա ասելով մանուկները Ս. հոգու տաճարներ են, որոնց հետ հարկաւոր է զգուշութեամբ ու սիրով վարուել: Վէջիոյի հակառակ, որ շատ մեծ նշանակութիւն էր տալիս մանկան բնածին յատկութիւններին, էրազմուսը պնդում էր թէ կրթութիւնը կարող է վերածնել նոյն իսկ բնութիւնը. խնդիրը միայն այն է, որ կրթութիւնը սկսուի մանկան ամենաքնքուշ հասակից և ղեկավարէ, առաջնորդէ նորա ամեն մի քայլը:

Ըստ էրազմուսի կրթութիւնը անպատճառ պիտի անցնէ հեռեւեալ աստիճաններից. ամենից առաջ հարկաւոր է երեխայի

քնքուշ հոգու մէջ սերմանել բարեպաշտութեան սերմեր, ներշնչել սէր դէպի Արարիչը և համոզմունք թէ Նորան յայտնի են ոչ միայն մեր գործերը, այլ և մեր մտքերն իսկ, Երբ այս ձևով գիտութիւնն ընդունելու համար հողը բաւականաչափ պատրաստուած կը լինի, կարելի է սկսել գիտութիւնների դաստանդութիւնը և վերջը զարգացնել աշակերտի մէջ պարտաճանաչութեան զգացմունք, սովորեցնել վարուել մարդկանց հետ: Ուսումը կարելի է սկսել եթէ կամ ութ տարեկան հասակից, նպելով երեխայի ֆիզիքական և մտաւոր զարգացմանը: Որովհետեւ այս քնքուշ հասակը սիրում է խաղեր ու զուարճութիւններ, ուստի հարկաւոր է այնպէս անել, որ ուսումը զուարճութեան ու զբօսանքի բնաւորութիւն ունենայ: Ամենալատ բանն այն է, թէ մանուկը զգլում է գիտութիւնից նախ, քան իմանալը թէ ինչի համար պէտք է նորան սիրել: Ծնողների առաջին հոգսը պէտք է լինի լաւ ուսուցիչ գտնելը, էրազմուսի կարծիքով աշակերտի զարգացման վրայ բարերար ազդեցութիւն ունենալու համար զպրօցական ուսուցիչը բաղձատեսակ տեղեկութեանց ահագին պաշար պիտի ունենայ: «Փիլիսոփայութիւնից նա պիտի իմաստասիրէ Պլատոնին, Արիստոտէլին, Թէօֆրաստէսին ու Պլատոնին, աստուածաբանութիւնից, բացի Ս. Գրքից, նա պիտի տեղեկ լինի եկեղեցու սուրբ հարց գրութեան հետ. աշխարհագրութիւնից, որ մի շատ կարեւոր օժանդակ միջոց է պատմութեան ուսումնասիրութեան համար, նա պիտի իմանայ Պոմպոնիուս Մէլույի, Պտղոմէոսի, Պլինիոսի և Ստրաբոնի շարադրութիւնները: Բանաստեղծներից նա պիտի ընտրէ միայն հոմերոսին ու Ովիդիոսին. բայց նա պիտի իմանայ ամեն բան որ կարող է կարեւոր լինել նոցա ստեղծագործութիւնները մեկնաբանելու համար: Դուք կարող էք ասել թէ ես ուսուցչի վրայ գուցէ նորա ուժից վեր բեռն եմ դնում: Այդ ճշմարիտ է, բայց ծանրաբեռնելով մէկին, ես հէնց դորանով թեթեւացնում եմ շատերի բեռը: Ես պահանջում եմ որ ուսուցիչը անցած լինի մարդկային իմացականութեան ամբողջ սահմանը, որպէս զի աշակերտները ազատուին նոյնը անելու իրանց աշխատանքով (De Ratione Studii, 1512): Բայց այս բոլորը զեռ բաւական չէ լաւ ուսուցչի համար. հարկաւոր է որ նա, բացի գիտնական տեղեկութիւններից, բարձր բարոյական զարգացումն ունենայ, որ նա կարողանայ վարուել երեխաների հետ և ներշնչել նոցա սէր ու յարգանք դէպի իւր անձը: Յա-

ջողութեան առաջին պայմանը աշակերտի սէրն է դէպի իւր դաստիարակը. Մի ժամանակ մանուկը, որ սիրել է գիտութիւնը իւր դաստիարակի համար, իւր բոլոր սէրը դէպի գիտութիւնը կրփոխադրէ ուսուցչի վրայ. Ինչպէս որ ընծայի մեծագին լինելը կասուած է այն անձնաւորութիւնից որ մեզ ընծայում է, նոյնպէս էլ գիտութիւնը մանկական հասակում, երբ խոհականութիւնը դեռ զարգացած չէ, սէր է զարթեցնում նորա համար, որ բղխում է սիրած դաստիարակից» (De pueris liberaliter instituendis). Ի նկատի ունենալով միշտ մանկան քերուշ կազմուածքը, Էրազմուսը բողբոջում է երկարատե դասերի դէմ, որ կարող են յոգնեցնել աշակերտների ուշադրութիւնը, և խորհուրդ է տալիս այնպիսի կարգ պահպանել, որ պարապմունքները և հանգիստն ու զբօսանքը յաճախ տեղի տան միմեանց. Որովհետեւ մանկական հասակը ընդունակ է հեշտութեամբ լեզուներ իւրացնելու, ուստի աւելի լաւ է մանկան ուսումը սկսել լեզուներից: Դասական լեզուների ուսումը գլխաւորապէս գործնական պիտի լինի. քերականութիւնից հարկաւոր է հաղորդել միայն ամենահաստատ կանոնները, առանց որոնց անկարելի է լեզուի ուսումը. Էրազմուսի կարծիքով օգտակար է միաժամանակ երկու հին լեզուների քերականութիւնն էլ աւանդել, որովհետեւ նոյա կազմութեան նմանութեան պատճառով մի լեզուի քերականութիւնը նպաստում է միւսի իւրացնելուն: Էրազմուսը օգտակար է համարում նոյնպէս գրաւոր վարժութիւնները յատիներէն լեզուի մէջ և թարգմանութիւնները յունարէնից լատիներէն, բայց սաստիկ բողբոջում է Կիկերոնի նմանելու ողորմելի ու անօգուտ ձգտման դէմ, Կիկերոնի ոճը իւրացնելու անիրագործելի ցանկութեան դէմ և այս ձգտումը համարում է բովանդակութիւնը ձեւին զոհ բերելու մի օրինակ: Իւր հռչակաւոր Ciceronianus զրդցի մէջ նա իւր սրամտութեան բոլոր զօրութեամբը յարձակվում է այն անհեթեթ իմաստակների վրայ, որոնք կարդում են միայն Կիկերոնի գրուածքները, գիտեն թէ քանի անգամ ինչ խօսք գործ է ածել Կիկերոնը և իրանց պարբերութիւնները սկսելով Կիկերոնի Etsi, Quamquam, Quum մասնիկներով՝ լրջութեամբ երեւակայում են իրանց մի-մի Կիկերոն: Երբ աշակերտը բառերի բաւականաչափ պաշար ունի և իւրացրել է երկու հին լեզուների քերականութեան գլխաւոր կանոնները, այն ժամանակ արդէն կարելի է սկսել նորա հետ լատին և յոյն հեղինակների ընթերցանութիւնը:

Դասական հեղինակների խելացի վերածնութիւնը, եթէ միայն գլխաւորապէս ուշագրութիւն է դարձրած ոչ թէ ոճի արտաքին առանձնայատկութեանց ու քերականական նրբութեանց վրայ, այլ ներքին բովանդակութեան, էրազմոսի կարծիքով կազմում է կրթութեան հիմնաքարը: Էրազմոսից լաւ ոչ որ չէ կարողացել գնահատել այն բոլոր բարոյական-կրթական տարրերը, որ պարունակվում են դասական հեղինակների գրուածքների մէջ: Նորա Colloquia-ի մէջ այս խնդրին նուիրուած է մի ամբողջ զրոյց «Կրօնական խնջոյք» վերնագրով: Այստեղ էրազմոսը պնդում է թէ քրիստոնէութեան ոգին տարածվում է շատ աւելի, քան մենք կարծում ենք և թէ հնութեան մեծ մարդկանց մէջ կան շատ այնպիսիները, որոնք իրանց կեանքի սրբութեամբն ու իրանց բարոյական հայեացքների վսեմութեամբ կարող են հաւասարուել քրիստոնէական սրբերի հետ: Նա խոստովանում է որ երբէք չէր կարող կարգալ Կիկերոնի հեղինակութիւնները «Բարեկամութեան մասին» և «Ծերութեան մասին» առանց համբուրելու այն էջերը, որ գրել է այս կարծես թէ Աստուծոյ շնչով ներշնչուած մարդը: Բացի լեզուաբանական և գրականական կրթութիւնից որ տիրապետող նշանակութիւն ունի հումանիստների բոլոր մանկավարժական տեսութեանց մէջ, էրազմոսը խորհուրդ է տալիս դաստիարակին հաղորդել աշակերտներին իրական տեղեկութիւններ պատմութիւնից, աշխարհագրութիւնից և բնական գիտութիւններից. սակայն վերջին առարկան ինքուրոյն նշանակութիւն չունի և աւանդվում է այն չափով, որով այդ հարկաւոր է դասական հեղինակների մեկնաբանութեան համար:

Իւր նախորդի, Վէջիոյի, նման՝ էրազմոսը սակաւաթիւ աշակերտներով դպրոցները գերադասում է ինչպէս ընտանեկան կրթութիւններից, նոյնպէս և բաղմամարդ հասարակաց հիմնարկութիւններից, ըստ որում՝ առաջին դէպքում անկարելի է դառնում ազնիւ մրցումը պարապմունքների մէջ որ նա յառաջիմութեան կարեւոր պայմաններից մինն է համարում, իսկ վերջին դէպքում ուսուցիչը չէ կարող ճանաչել իւրաքանչիւր աշակերտի բնութիւնը:

Մի կողմ՝ թողնելով բողոքական մանկավարժների շարագրութիւնները, որոնք գրուած են քիչ թէ շատ աստուածաբանական հոգով, ևս անցնում եմ էրազմոսի և խալաքի հումանիստների իսկական յաջորդին—անուանի Փրանսիացի վիպասան

և երգիծարան Ֆրանսուա Ռարլէին, որ ոչ թէ իւրացրեց նոցա տեսութեանց լաւագոյն մասը, այլ և լրացնելով իւր նախորդների պակասը և ուղղելով նոցա սխալները, տուեց մեզ մանկավարժութեան իւր սեփական մի տեսութիւն, որ զարմացնում է հայացքի ազատութեամբ, գործնականութեամբ և առողջ դատողութեամբ: Էրազմոսի նման ինքը անձամբ ճաշակած լինելով սխոլաստիքական կրթութեան քաղցրութիւնը, որ յայտնի է իւր անհոգի ձեւականութեամբն ու բարբարոսական կարգապահութեամբ, Ռարլէն իւր հռչակաւոր Գարգանտուա Երգիծական վիպասանութեան մէջ մի կծու երգիծարանութիւն է գրել հին մանկավարժական սիստեմի վրայ և աւելի կենդանի դարձնելու համար պատկերը դուրս է բերել կառիկատուրի ձևով: Բայց իբրև ճշմարիտ հանճար՝ մի ձևով քանդելով, նա միևսով ստեղծում էր և սխոլաստիքական կրթութիւնը ծաղը ու ծանակի առարկայ դարձնելուց յետոյ, նա ներկայացնում է մի նոր հումանիստական կրթութեան իդէալ, որով իրականանում են ու զարգանում Վիտտորինոյի, Վերջերիոյի, Վէջիոյի և Էրզամոսի ամենաջերմ ցանկութիւններն ու երազները: Ռարլէն պատմում է որ երբ Գարգանտուա հսկայի կրթութեան ժամանակը գալիս է, նորա հայրը՝ Գրանգուզիէն նորա համար դաստիարակ է կարգում Թուրալ Օյոֆէոն գիտնականին (un grand docteur sophiste) որ սովորեցնում է իւր աշակերտին այբուբէնը այնպէս լաւ, որ նա անգիր կարող էր ասել վերջից մինչև սկիզբը, (il la disoit par coeur au rebours). այս բանի համար հարկաւորում է հինգ տարի և երեք ամիս: «Բայց ի նկատի ունեցէք, որ նա մի և նոյն ժամանակ սովորեցնում էր նորան գրել գոթական տառերով և նա գրում էր իւր բոլոր գրքերը, որովհետև սպագրութեան արհեստը դեռ չկար»: Յետոյ նա նորան կարգացնում է Դոնատոսի քերականութիւնը, Ֆագետոս, Թէօդուլոս և Alanus in parabolis. սորա համար հարկաւոր է լինում 13 տարի և 6 ամիս: Այնուհետև De modis significandi Յովհաննէս Գարլանդացու (Jean de Garland) իւր բոլոր մեկնութիւններովը. այս գրքի համար հարկաւորում է 18 տարի և 11 ամիս: Այս բոլոր գիտութիւնները ձեռք բերելու համար գործ դրած ահապին ժամանակը միայն այն հետեանքը ունեցաւ որ Գարգանտուան իւր բոլոր սովորածները անգիր կարող էր ասել երկու ծայրիցն էլ: — Այս փորձութեանցը չէ գիմանում Գարգանտուայի ուսուցիչն իսկ, և

նա մեռնում է իւր դասատուութեան 16-րդ տարումը և նորա տեղը իսկոյն հրաւիրւում է նոյն ուղղութեան տէր մի ուրիշ ուսուցիչ՝ Ժօրլէն Բրիդէ (maistre Jobelin Bridé), որ Գարգանտուային կարդացնում է հուգուցիոս, հերբարի հելլենարանութիւնը, և այլն և այլն: Գարգանտուայի հայրը շատ գոհ է որ իւր որդին աշխատասէր է ու լաւ պարապում է, բայց մի փոքր զարմանում է որ այդ բոլոր գիտութիւնները օգուտ չեն տալիս իւր որդուն: Ընդհակառակը նա քանի գնում աւելի ու աւելի յիմարանում է:

Այս մասին Գրանգուզիէն խորհուրդ է հարցնում իւր զրացի Պապրլիգօսնիւրի դեր-թագաւոր (viceroi) Ֆիլիպպ դէ Մարէից: Սա իսկոյն պարզում է բանը, հասկացնելով Գրանգուզիէին որ մեղքը դաստիարակներինն է, որոնց գիտութիւնն իսկ յիմարութիւն է որ ապականում է երիտասարդութեան ծաղիկը. (corrompant toute fleur de jeunesse): «Առէք ներկայիս երիտասարդներից մէկին, որ միայն երկու տարի է սովորել, և եթէ նա աւելի խելացի չլինի, աւելի պերճախօս, աւելի ճարպիկ՝ քան ձեր որդին, ինձ մի կտոր ապուխտ համարեցէք»: Մերունի թագաւորը հրամայում է որ այդ փորձը կատարուի, և երեկոյեանը, ընթրիքի ժամանակ, դէ-Մարէն բերում է իւր մանուկ մանկաւիկներից մէկին, Եւդէմոն անունով, որ դեռ 12 տարեկան չկար: Համեստութեամբ բոլորին ողջունելուց յետոյ՝ Եւդէմոնը դառնում է Գարգանտուային և վայելուչ խօսքերով ու քաղաքավարի ձևերով սկսում է գովել նորա առաքինութիւնները և բարի վարքը, յետոյ նորա գիտութիւնը, նորա աղնիւ ծագումը, նորա մարմնի գեղեցկութիւնը: Վերջապէս յորդորում է միշտ հօրը յարգել և խնդրում է որ նորան իւր ամենախոնարհ ծառան համարէ: Եւդէմոնը իւր վայելուչ ձևերով մաքուր առողջանութեամբ, պերճախօսութեամբ ու պատուական լատիներէն լեզուովը աւելի Գրաբոսի, Կիկերոնի կամ Էմիլիոսի էր նմանում: Իսկ Գարգանտուան իբրև պատասխան այս բոլորին միայն բառանջում է կովի նման, սկսում է լալ:

Գրանգուզիէն իսկոյն հրաժարեցնում է հին ուսուցչին և իւր որդու դաստիարակութիւնը յանձնում է Եւդէմոնի ուսուցչին, Պոնոկրատէսին:

Պոնոկրատէսը մի հումանիստ-մանկավարժի համակրելի տիպ է, որ կատարելապէս ըմբռնելով իսկական դաստիարակութեան ոգին, մերժում է բոլորովին միջնադարեան կրթութեան անկեանք,

մեռեալ ձեականութիւնը, Պոնոկրատէսը իւր աշակերտի հետ
 գնում է Փարիզ և ամենից առաջ իւր սանիկին զուրս է հանում
 փակ սենեակի խեղդող մթնոլորտից մաքուր օդ և ուսուցանում
 է ընտելացնելով գիտողութեան և ընութեան ու կեանքի անմի-
 ջական ուսումնասիրութեան: Նոր ուսուցչի մանկավարժական
 հմտութիւնը մանաւանդ արտայայտում է ժամանակի սնտու-
 թեան մէջ. նորա ոչ մի ժամը ՚ի զուր չէ անցնում աշակերտի
 համար: Առաջուան դաստիարակների ձեռքի տակ եղած ժամա-
 նակ Գարգանտուան առաւօտեան ութը ժամից առաջ երբեք չէր
 զարթնում և մի երկու ժամ էլ դեռ անկողնի մէջ էր թաւալ
 գալիս. այժմ՝ նորան վեր էին կացնում չորս ժամին և իսկոյն
 ստիպում էին լուացուել ու հագնուել: Առաւօտեան հագնուելու
 ժամանակ նորա համար կարդում են Ս. Գրքից մի էջ, որ նորան
 յաճախ տրամադրում է աղօթելու: Յետոյ վարժապետը զուրս է
 տանում նորան և մեկնում է երկնքի, արեւի, լուսնի դրութիւնը
 և այլն: Այստեղ կրկնում էր և հին դասը, և ամենայն անգամ
 ուսուցիչը այս դէպքից օգուտ քաղելով ցոյց էր տալիս դասի
 գործնական արդիւնքները: Թե՛ թե նախաճաշից յետոյ երեք ժամ
 ընթերցանութիւն ու դասարանական պարապմունք էր հետեւում,
 որից յետոյ ուսուցիչն ու աշակերտը գնտակ էին խաղում և Ֆի-
 զիքական վարժութեանց էին նուիրում ժամանակը մինչև ճաշ:
 Սեղանի վրայ կարդացվում էր մի զուարճալի ու գրաւիչ բան,
 մի ասպետական վիպասանութիւն, և ուսուցիչը վարպետ ձեռով
 խօսակցութիւնը դարձնում էր սեղանին վերաբերեալ մի որ և է
 առարկայի վրայ—հացի, գինու, ձկան, մրգի, կանաչու և տեղե-
 կութիւններ էր հաղորդում նոցա պատրաստութեան մասին, իւր
 կարծիքները ապացուցանելով դասական հեղինակների գրուած-
 ների կտորներով, որ իսկոյն կարդացվում էին: Զկնի ճաշի աղօթ-
 քը կարգալուց յետոյ Պոնոկրատէսը և Գարգանտուան նստում
 էին թուղթ խաղալու, որ Ռաբլէի սխտեմով ոչ միայն զուար-
 քութիւն է, այլ և կրթական նշանակութիւն ունի, որովհետեւ
 Գարգանտուային թուաբանական հաշիւների է ընտելացնում:
 Թուղթ խաղալուց յետոյ նորից սկսում էին դասարանական պա-
 րապմունքները, որ առաւօտեան պէս տեւում էին ճիշդ երեք ժամ
 և դորանով դասերը վերջանում էին: Ուսուցիչը և աշակերտը
 զուրս էին գալիս բաց օդ և այդ տեղ Պոնոկրատէսին փոխարի-
 նում էր մարմնամարզութեան ուսուցիչը, որ երիտասարդ Գար-

գանտուային սովորեցնում էր մենամարտել, կոխ պրծնել, ձի հեծնել, լող տալ և այլն: Լուացուելուց և շորերը փոխելուց յետոյ Գարգանտուան Պոնոկրատէսի հետ, ճանապարհին բոյսեր հաւաքելով, գնում էին տուն, ուր լաւ ընթրիք էին անում ընթերցանութեան ու զարգացուցիչ զրոյցի հետ միատեղ: Ուսումնական օրը վերջանում էր աստղաբաշխութեան դասով ու աղօթքով: Որ օրը վատ եղանակ էր լինում, փոխվում էր ոչ միայն պարափոնքներէր կարգը, այլ նոյն իսկ պարափոնքները: Գարգանտուան ֆիզիքական վարժութիւններ էր անում տանը, փայտ էր սղոցում ու կոտորում և բացի դորանից գեղարուեստով պարապում, այն է՝ երաժշտութեամբ, նկարչութեամբ և արձանագործութեամբ: Այսպիսի օրերում Պոնոկրատէսը մի կողմն էր լծողնում գիրքը և իւր աշակերտին տալիս էր գործնական կեանքի ոչ նուազ խրատական գասեր, այցելում էր նորա հետ գործարաններ, արհեստանոցներ, դատարաններ, լսում էր քարոզներ և այլն և այլն: Այս է Վերածնութեան դարու հանճարեղ իմաստասէրներից մէկի մանկավարժական տեսութիւնը: Ռաբլէի գաղափարների աղբւեցութիւնը նորադոյն մանկավարժութեան վրայ շատ գիտնականներ են ապացուցել, ուստի այդ խնդիրը մի կողմ թողնելով, ես մի քանի խօսք կ'ասեմ Վերածնութեան դարու մանկավարժական տեսութեանց նշանակութեան մասին ժամանակակից դպրոցի համար: Չեմ յիշում ով է ասել, թէ համեստութեան լաւագոյն ուսուցիչը պատմութիւնն է: Ով որ մի յայտնի սկզբունքի զարգացման միայն վերջին աստիճանը գիտէ, նա հակամիտ է մտածելու թէ այդ աստիճանը ոչ միայն վերջինն է, այլ նոյն իսկ բարձրագոյնը: Բայց պատմութիւնը զրկում է մեզ այս ախորժ ինքնախարութիւնից: Ի հարկէ ժամանակակից դպրոցը մեծ առաւելութիւններ ունի Renaissance-ի դպրոցի համեմատութեամբ: Այդ առաւելութիւններից գլխաւորը այն է, որ ժամանակակից դպրոցը գոյութիւն չունի աշխուական փոքրամասնութեան համար, այլ բաց է բազմութեան համար, որ հաւասարապէս վայելում է լուսաւորութեան բարիքները. անտարակոյս նոյն իսկ դասաւանդութեան եղանակը մեզանում աւելի լաւ է, մեր դպրոցը աւելի է գիտնական տեղեկութիւններ տալիս, քան XVI դ. դպրոցը: Բայց և այնպէս կան բաներ, որոնց մէջ մեր դպրոցի յետ մնալը աներկբայելի է: Ո՞րտեղ մեր դպրոցներում մենք կրգտնենք հոգու և մարմնի այն ներդաշնակ զարգացումը,

որ XV և XVI դ.դ. մանկավարժ-հումանիստների վարդապետութեամբ կրթութեան նպատակն է կազմում: Մեր գիմնազիոններին ինչ ո՞րն է իւր նպատակը համարում բարոյապէս զարգացնել աշակերտի բնաւորութիւնը և կեանքի դէմ մաքառելու պատրաստումն: Ո՞րտեղ մեղանում այնպէս են կարգում դասական հեղինակութիւնները, ինչպէս երգմոսն էր ուսուցանում կարդալ, որ քարոզում է գլխաւորապէս ուշադրութիւն դարձնել ոչ թէ ձևի, ոճի և քերականական նրբութեանց վրայ, այլ այն մարդասիրութեան ու ազատութեան ոգու, որով ներշնչուած են դասական հեղինակների շարադրութիւնները: Ո՞րտեղ մենք հիմայ կարող ենք գտնել Պոնտկրատէսի նման բազմակողմանի մանկավաժներ, որոնք նորա նման կարողանային լայնացնել աշակերտի աշխարհաՀայեցողութիւնը և իրանց դասատուութեամբ մօտեցնել գիտութիւնը կեանքին:



ՄԻ ՄԵԾ ՅՕԴՈՒԱԾԻՑ

ՄԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՏՈՐ.



Մանկաբարձ Տ. պառաւը ուրիշ պաշտօն էլ էր կատարում, վերջինն աւելի ձեռնառու առաջնից. գիւղի բոլոր աղջիկ աղայ նշանողն էր. մօտ 60 տարեկան կին էր, 30 տարի միջիմարդ էր և ոչ մի անգամ խօսքը գեաինը չէր ընկել. ում գուռը գնացել էր «մի բուռը հող վերցնելու մի ուրիշ շէնքը շինելու համար», պարզ-երես էր յետ եկել:

Նէնց այդ էր պատճառը, որ չը կարողացաւ կեանքի մէջ առաջինը պատահած անյաջողութիւնը մարսել:

Ա-ի աղջիկն երկու տարի էր նշանած էր իւրեանց հարեանի աղայի վերայ, նշանը կատարուել էր մի զրացիական ճաշի ժամանակ՝ երկու պատկիցների մէջ՝ առանց որդուց համաձայնութեան. աղջկանը խօսք չի հասնիլ, աղան էլ գործով բացակայ էր գիւղից. հօր կարգադրութեամբը որդին պէտք է գործը վերջացնելուց յետոյ՝ զար և ամուսնանար:

Այս արտասովոր երեւոյթը Տ-ի սրտին ցաւ էր դարձել, իւր պարծեցած ժամանակը՝ թէ առանց իւր մի-

Ջամաութիան գիւղի բոլոր աղջիկները կը քաջախէին, թթու գնկու պէտք կը գային, աղայքն էլ կը հալւորէին, Սեան ճգնելու կը գնային, լինում էին մարդիկ, որոնք խաղերով Տ-ի քթումը ծխեցնում ու յիշեցնում էին Ս-ի աղջկայ նշանը:

— Եթէ էդ բանը պիտի գայ, ես իմ վարսս կը կտրեմ, պիտի գտակ կը ծածկեմ, աշխարհքի մէջ ծաղրատեղ կը դառնամ, մաղձը շարժուած՝ մօտը թափ էր տալիս Տ-ը:

Պարծենալը պարծենում էր, բայց իւր մէջ ճաքում, արաքում էր, մանաւանդ վերջին ժամանակները, երբ վանդակի պէս ձայնն աշխարհքովը մին եղաւ, թէ մի ամսից Ս-ի փեսացուն պէտք է գայ և պսակուի:

Տ-ը հերսիցը (բարկութիւն) տեղով բարձով ոտները ձգեց ու անբաց, անբաց ու թոքին տուեց (հազալ), հազաց ու ծրուց, մի խօսքով՝ բարակ էր մանում (հիւճիւ):

Ինչպէս ինքը միշտ պատմում էր, եթէ հեռեկալ դէպքը չըպատահէր, շատ չէր քաշել, չուէ ու ֆալտսը կը հաւաքէր, ասորն հանելու կերթար*):

Հարուստ վաշխառու Բ-ը 35 տարեկան մարդ էր ու իր կեանքումը կին ասած արարածի վրայ չէր մտածած. նրա ուշք ու միտքը, սէրն ու խելքը կենդրոնացած էին միայն փողի վրայ:

Ի՞նչպէս եղաւ, որ չարը բռնեց (հրել), մի երեկոյ պարոն Բ-ը տուն ընկաւ Տ-ի մօտ ու քիչ էր մնացել՝ ասները ջուր անի խմի:

— Քեզ մասաղ, Տ. նանի՛, հոգուդ մեռնի՛մ, իմ ձեռն է, քո փէշը (աղաչում եմ), իմը դու՝ քոնն Սասուած, մի ճար արած, կամ՝ զանակը վեր կալ, ճիտս (պարանոց) թոցրու:

*) Ամբողջ երկու նախադասութիւնը նշանակում է մեռնել:

Բ-ը խելի ժամանակ (բաւական միջոց) մղկտում էր և զեռ ոչինչ չէր յայանել:

Վերջը տակից դուրս եկաւ, որ, չըզիտեմ ինչ տեղ և ինչպէս, զեռի տփին Բ-ը Ա-ի աղջիկ Շ-ին տեսել է ու խելքամաղ սիրահարուելը հիմի Տ-ին է զիմում, որ մի հնարք գործ դնի, Ա-ին բան հասկացնի, նշանը յետ առլ տայ, աղջկանն առնի. հետն էլ իր աներացունին ու Տ-ին ոսկի սարեր է խոստանում:

Տ-ը քիթը վեր քաշեց, աչքերը պղտցրեց, բերանը կուշ տուեց, դունչը սրեց և էլի մի քանի զարմացական ձևեր արեց զլիտով, երեսով, ձեռներով, ուսերքով՝ իբր թէ՛ ինչպէս է թոյլ տուել իրան Բ-ի պէս խելքը զլիին մարդը իր ընկեր հարեանի, իր գիւղացու նշանած աղջկայ վերայ էդպէս հողի սեւացնող բաներ իր մաքովն անց կացնել:—Աղջիկն քանի ազատ է, իր տառ-ծը հաստատում էր Տ-ը, ամէն ջահէլ իրաւունք ունի բարձր ծառի վերեւի ճղքի վրայ եղած պողի նման՝ քար ձգել, որ էդ անուշ պառուղը վէր ընկնի, իր բերանն ընկնի, բայց երբ որ մէկի քարը զիտաւ, էլ ուրիշն իրաւունք չունի էն պողին մօտ գնալ:

Մի կողմից էս խօսքերն էր ասում պառաւը, միւս կողմից էլ՝ իբր թէ, Բ-ին շատ սիրելով՝ չէր կամենում նրա սիրտը կտարել, աւելացնում էր. — բայց եթէ քո զլիիդ գրանով մի վնաս պէտք է բերես, լաւ է՝ հոգիս սեւացնեմ, գերեզմանի դռնիցը յետ դառնամ, եփած կիրակուրը թափեմ, ուրիշն տունը քանդեմ, քոնը շինեմ:

Դեռ Բ-ի ոտքը շեմքից նոր էր դուրս գնացել, որ Տ-ը անկողինը մի կողմը շարտեց, տեղիցը ցոփ կանգնեց (ոտանուլ) ու իրան ձգեց Ա-ի տունը:

Էլ օձի աւտոն (թովչական լեզու), էլ գայլի աւտարան չի մնաց, Տ-ը կարդաց Ա-ի զլիին, բայց թէ նրան քարոզած՝ թէ ցից քարի ծէրին պոպոք (ընկոյզ)

լըրած՝ մին է. Տ-ի ոչ մի խօսքը Ա-ի գլխումը ջուր չը խմեց (զլուխը չըմառաւ). հօ՛ Ա-ը, հօ՛ ապառաժ որ-
ձաքարը, ձեռքը թափ առեց ու կտրական էջն ասաց:

Ինչ անէր Տ-ը, համ որսն էր իւղալի, համ իր
թասիբն (անձնաւորութիւն) էր իրան կրծոտում: Երկու
շարժ շատ գնալով գալով՝ Ա-ի շիմքերը մաշեց:

Ա-ը, որ շատ յուսահատուեց, էլ չը գիմացաւ.
մի օր էլ հէնց որ Տ-ը գլուխը գոնիցը ներս խցկեց,
վեր թռաւ, Տ-ի կոնիցը բռնեց, մինչև բակի դուռը
քաշ առեց ու քուչէն շարանց, դուռը վրէն պինդ
փակեց:

— Ըհ, Տ-ը չը լինեմ, թէ էս թբանքը մարտեմ, դու
ինձ վայ տաս, պարոն Ա. Եթէ էն պէս չ'անեմ, որ օրը
ցերեկով աղջկանդ կուռը բռնած՝ չոքէ չոք գնաս Բ-ի
դռան հոգը լիղկա:

Այս սպառնալիքները մրթմրթալով նա մտաւ Բ-ի
մօտ, նրանից մի քանի մանէթ փող առաւ, զրպանը
դրեց ու ձին հիծաւ, իւր որդու ուղեկցութեամբ անց-
կացաւ սահմանակից դաւառը:

Երեկոյ էր. Տ-ը իջաւ Ա. գաւառի հ. գիւղում մի
ծերունու տանը և յայտնեց, որ ինքը ևկել է բազմա-
հաշակ տէր Մ-ի դուռը:

Նա պատմեց, իբր թէ իւր քրոջ որդին գժուած
սիրահարուել է մի նշանած աղջկայ վերայ և սպառ-
նում է իւր գլուխն էլ սպանել՝ աղջկայ ծնողներին
էլ, Եթէ չըկարողանայ նշանը վերադարձնել տալ ու իր
փափագին հասնել:

— Դժուար թէ մեր երէցը էդ գործումը մատը
խառնի, ասաց Տ-ին տան տէրը:

— Էնքան լինի, որ տէրտէրը վիզն առնի թէ կա-
րող է, աջահամբոյրը լի կանենք, գործը զլուխ կըրե-
րենք, պատասխանեց Տ-ը:

—Մեր տէրաւորն շատ աչքածակիրիցն էլ չե, էդպիսի գործերն էլ նրա համար խաղ ու պար էին. յառաջ օրական տասը նշան քանդում, քսանը գլուխ էր բերուտ, բայց մի ուրիշ պատճառ կայ, որ նրա ձեռն ու ոտերը կապել է:

Ծերը պատմեց հետեւեալը.

Մի քանի տարի սրանից յառաջ՝ գործակառն իր որդուն պսակում էր. ողջ գաւառի քահանէքը հրաւիրուած էին և եկել էին, ուզում եմ ասել, թէ դեռ չ'եկած՝ իրանցից վաղ իրանց ընծաներն էին վազել վազել ու աեղաւորուել:

Հարսանիքի իւզը, բրինձը, զինին, արաղը, մսացուն, մինչև թխելու ալիւրն էլ մեր քահանէքանց ղրկածն էր:

—Աստուած ողորմի հոգուն. գործակալը որ կար՝ նա էր, հիմիկուանի նման տասին կը կշռէր, կերածը մարսել էր. հալալ էր իրան, ոնց որ տսած է՝ աղայ մարդ էր. տէրտէրների վրայ որ ծղրտում էր, կարծես թէ կայծակ տրաքեց, կէս մսերը հալում էր: Լուսահոգու մի բանը վատ էր, որ քիչ մարդով աեղից չէր շարժուում, 20—30 ձիաւորով էր ման գալիս. որ զիւղումն երեք օր մնում էր, ամբարների ալիւրի ու կճուճների իւղերի տալը տեսնում էր. օրական հինգ երիցի փիլոն իր ձեռքովն ուտերիցը վէր էր քաշում, յետ էր կանգնացնում, տասին մղում, վերջէն սև փողը ձեռքից տռնում ու ծածկում:

—Հիմի դու արի ու էդպէս գործակալի որդու հարսանիքի ընծան կարգին մի անիլ:

—Ամենից միամիտ եղբայրս գտնուեց էս մեր օրհնած աէր Մ-ը. դեռ նորընծայ էր ու անփորձ: Սա վեր է կենում ու դատարկ ձեռքով ծանրագործ զնում դրծակալի ողի հարսանիքը:

—Գլխին հարամ է կենում կերած հացը. ամեն մի խօսքին գործակալն օձի նման շանթում է: Ճարը կարած՝ պսակաճաշի վրայից լալով վիր է կենում ու յիս դառնում: Բայց դրանով նա երբ պրծաւ. զեռ նոր էր ձիու գլխից սանձը հանել, որ ազդէիլ գործակալը սուրբ Գէորգի նման քամակիցը հասաւ:

Էս անգամ գործակալը ինքը չէր մեծը: Իր հետ բերել էր Անդամին և քարտուղարին:

Սրանք էլ են եղել հրաւիրուած: Հարսանիքը վերջանալուց յետոյ բարեհոգի գործակալը չի էլ թողիլ, որ հիւրերը յետ դառնան, հազար սուտ ու ուղիղ է տակ, առել եկել:

Եկան էդ մարդիկը, մեր երիցի քունջ ու պուճախը քար ու քանդ քրքրեցին ու ինչքան թուղթ ու գիրք կար, հաւաքեցին, կնքեցին ու տէր Մ-ի փրօնն էլ խուրջինը կոխած՝ իրան էլ չօղաոխ*) եղան նման յառաջ արին ու ծանապարհ ընկան:

—Ի՞նչ անենք, ի՞նչ չանենք, գիւղահաւան խորհուրդ արինք, հարիւր հառ Նիկողայ-մանէթ առինք աւերաբերի եղբօր ձեռքը, ձի նստացրինք ու քամակներիցը թռցրինք: Կաշառքը մութը տեղը լոյս կրտայ, մանէթները զօրաւոր են եղել, երկ' օր չը քաշեց, աւերաբերն և եղբայրը գրքերն ու փիլոնը կռան տակին յետ եկան. եկան, բայց սիրաբ կոտրած: Դու մի ասիլ, մեր երեցիցը ձեռացագիր են առել, որ կեանքի մէջ գրեացութիւն չանի, թէ չէ կարգալոյժ կրլինի:

—Երկու երեք շաբաթ տէր Մ-ի դռնից ուխտաւորները կարուեցին, եկողին երեսի վրայ. լալով յետ էր դարձնում:

*) Չօղառը նրանք են, որ դարունը բացուելուն պէս՝ գիւղերից գնում են նիհար անասունները և տանում լեռներումը գերացնում, առունը թանգ ծախում.

—Ձը ծիծաղես, որ ուխտաւոր եմ ասում, շարունակեց ծիրը. աէրաէրի դուռն եկողները շատ են, քան թէ մեր Կ ա մ ա կ ա տ ա ր ի ուխտաւորները:

—Մեր գաւառի բոլոր քէթիւղէքն ու տանուաէրները հայ ու թուրք հաւաքուեցին ու դնացին Անդամիցը խնդրեցին, որ մեր քահանային հրաման տայ իր հօր արհեստը գործ դնելու, իր ռամը քցելուց ձեռք չըքաշելու, թէ չէ, ասացին՝ երկրի էլ արամը (համայնք) ձեռից գնաց, երկիրը ցաւն ու հիւանդութիւնը բռնեց, պիւհահարներն, ընկնաւորներն ու գժիրն աշխարհքը լըցուցին. քանի աէր Մ-ի գրիչը ձեռքիցը չէիք խլել, ասացին, օրական հարիւր գիւաւոր ու ցաւոսներ փրկուում էին, ամէն կորուստ գանուում էր:

—Ոչ ձեր գլխին խելք կայ, ոչ ձեր փիլիսոփայ աէր Մ-ի, փորը պինդ բռնած՝ ծիծաղելով պատաթխանում է մեր իշխաններին Անգամը. եթէ ես աէր Մ-ին գրաւորութիւնն արգելելու միտք ունենայի, գրքերն ընչու էի վերադարձնում. նա է կուռը բռնողը, օրական թող հարիւր անխելքի ընդունի ու ծանապարհ գնի, միայն թէ այսուհետեւ զգոյշ լինի, իր գործակալն սիրտը շահած պահի, իր մեծաւորներին էլ չը մոտանայ:

—Էն օրից էս օր՝ մեր աէրաէրի եկող գնացողը կայ ու կայ, մինչեւ մահն էլ պէտք է լինի ու լինի. հայ, թուրք, քուրդ, ռուս, այլազգի նրա դրանը մեղրաճանձի նման փետակի չորս կողմը զժվժում են ու մեր երիցի համար անուշ անուշ մեղր ածում: Հապա ո՞նց դիտես մեր աէրաէրին, պարծեցաւ ծերունին հիւրի առաջին:

—Ուրեմն էլ ընչի՞ ես ասում, թէ աէր Մ-ը իմ խնդիրս չի կատարել, հարցրեց ծերին Տ-ը:

—Ուրովհետեւ վատ ժամանակն ես եկել, մեր աէրաէրը հիմի քիթը սրբելու միջոց չի գտնում, կամ թէ

շատ էլ ցանկանայ մէկին օգնել՝ չի համարձակուիլ, հոգեատները կրկին ղլխին հաւաքուել են:

— Ինչպէն:

— Էնպէս որ սերը սովորը կուտի, թանը մօլորը, միանգամ դուռը ճանաչացրել է, էլ հախէն (օձիք) չի կարողանում պրծացնիլ, իւղալի կերակրի համը բերաններումն է մնացիլ, տարին մի քանի անգամ անկանչիլ, անհամեցէք գալիս բաղմում են, տէրտէրի տան բարին կտրում, նրա դուռն եկողներին էլ մեր շէքին բարձում:

Ծերը նկատեց, որ Տ-ը իր ասածներից շատ բան չը հասկացաւ, շարունակեց.

— Երեք օր է Սնդամն ու քարաուղարը կրկին եկել են ու տէրտէրի կատիկին հուպ տուել. ոչ մի անգամ խեղճի հոգին հանում են, ոչ թողնում են, որ ազատ շունչ քաշի. օդորմելին տարեկան մի երկու հեա իր եղբոր ձեռքով իւղ ու պանրից բռնած՝ մինչև օդ ձմևուռան չլը ու ր եփելու ձաւարն էլ ուղարկում է. դառն ու ոչխարը, մեղը ու կարագը հաշիւ չիմ անում: Էսքանը նրանց մօտանն մանում՝ հերիք չի՝ ինչպէս ասացի, տարեկան երկու անգամ էլ իրանք են մի քանի ձիաւորով երիցի գլխին կանգնում, դատածն ու աւաճը քթերովը բերում, քահանի դուռն եկողներին բանից զործից աւարայ անում, մեզ էլ նեղութիւն տալիս:

— Եթէ ինչպէս պատմում ես, ձեր տէրտէրն իր մեծաւորներին էգբան օգուաներ է հասցնում, էլ ինչի՞ են խեղճին էգպէս Յուդայի չարչարանքներ տալիս, զարմացմամբ հարցրեց Տ-ը:

— Է՛հ, քցրտ, յոգոց հանեց ծերը, ես ինչ եմ հասկանում, սիրտս լցուեց, աւել պակաս գլխիցս դուրս տուի, թող ասածներս Աստուած բամբասանք չը հա-

մարի. սեաւորը որ կայ՝ կրակ է, հետոյից կը տաքացնի, մօտիկից կ'այրի, գրողն էլ իրանք են, ջնջողն էլ, մեռնելու ու ծնուելու նրանց պէտք է գնանք, մեղքերըս նրանց շինքովը պէտք է փաթաթենք, մեր հոգու ճանապարհը նրանցից պէտք է խրատ տանենք, մեր լեզուն չի զօրիլ նրանց վրայ արանջալու. զէ՛ ի՞նչ վնաս ունի, աշխարհքիս բարիքն աշխարհքի մարդիկը պէտք է վայելեն. մեր տէր Մ-ի տունն անտակ ծով է, եկողը բերում, լընում է, թող մի մասն էլ իր մեծաւորներին բաժին հասնի, վազի ասակը չը լինի՝ Չալաբու խաղողն է, դու էլ կեր, ևս էլ, տէրտէ՛ր թագաւորական հարկ ու բեզառ. չի քաշում, ժողովրդի պէս չինովնիկի ու ևսասուլի ծախս չունի, մէջքին ցաւ չի տալ, որ իր գլխաւորներին պատիւ տայ:

— Ի հարկէ, ուղիղ ևս խօսում, իրաւունք տուեց Տ-ը:

— Ես ու իմ հոգին, իմ երեխէքանց արեւը, շատ խղճմտանքով մարդիկ են մեր սեաւորները, դրանք եթէ աչքները ձախ թեքէին, մեր տէրտէրների մի հաա մաղը տեղը չէր մնալ. բայց որ իրանց թեւի տակին պահում, պահպանում են, սա էլ էս տեղ ապահով որ կողմը սիրտն ուզում է՝ ձին քշում է: Էս ձիւնի պէս մի-բուքս ինձ խոսվ կենայ, թէ խօսքունս սուա լինի. Անդամի երեսին որ մտիկ եմ տալիս, սրտիս եօթը թիզ ճրագու է կանգնում, լաւ չի անում մեր երէցը, որ փախա փախա նրա վրայ արանջում է. նրանից մարդ սրտամոռայ կ'լինի՞, թէկուզ ուղիղ ծծկուլ լինի. ձեռքը համբուրելու՝ էնպէս լիասիրտ է օրհնում, որ կարծում ևս, թէ հայր Աբրահամի աջն է գլխիդ առնում: Երևի ժամիցը դուրս գալուս ինձ սիրով մօա կանչեց, աջ տուեց, հարց ու բարով արեց և եկեղեցու քամակը տարաւ, մի ժամ թագուն հետս խօսում էր:

—Դաւիթ հայրիկ, ասում էր, դու մի աստուածա-
վախ հայ-քրիստոնեայ, ճշմարտախօս մարդ ես, քո բե-
րանից դուրս եկած ամէն մի խօսքը, ասում է, իմ մօտ
հարկւր արժի ուղիղը խոստովանիր, ձեր աէրաէրն իր
հոգեմնաս արուեստն էլ դործ գնում է, թէ ձեռք է քաշել:

—Աջիկ մեռնիմ, ասացի, մենք անպող անասուն-
ներ ենք, մենք ոչ դիր ունինք՝ ոչ գրիչ: Քո ոտքը մեր
գլխիցն աւել գիտի, քեզ տուաւել լաւ պէտք է յայա-
նի լինի. մեր աէր Մ-ի եղբայրը տարէնն երկու անգամ
քո ոտքն է դալիս, աէրաէրն ինքն էլ միշտ քո սուրբ
հրամանին պատրաստ կանգնած է, ժամանակ անժամա-
նակ էլ ինքդ քո բարի ոտքովդ շնորհքդ մեր վրայ տա-
րածում ես, քո աչքովդ տեսնում ես, դու մեր աէր-
աէրի թիւսի գրիրը քո ձեռովն ատար իրանից, ինքդ
էլ յիս տուիր. եթէ պէտքական չլինէին, ինչու կը վի-
րագարձնէիր:

—Քո խօսքն ուղիղ է, ասաց ինձ Անդամը, մենք
աէր Մ-ին խղճացինք, գրքերն յիս տուինք, բայց բե-
րանիցն էլ դիր տուինք, որ չըհամարձակուի հոգեպան
գրեր անել, չըվստահանայ աղայ ու աղջիկ սիրահարից-
նել, մարդիկ զժուացնել, գող և աւաղակին օգնել. եթէ
էգ բաները չի անում՝ ի՞նչ փաստ է՝ որ չար աչքից
փրկելու, դող ու էրոջք կտրկու աղօթքներ գրի, կամ
հիւանդի ու խելագարի, դիւահարի ու ընկնաւորի վրայ
նարկներ կարդայ:

—Ես մնացի գլխիս վրայ մոլորուած, պաշարուած.
վերջը՝ վայ ինձ, վայ իմ հոգուն, սուտ վկայեցի ու աէր
Մ-իս գլուխն ազատեցի. — մենք ինչ գիտենք ասացի,
մենք էղբանն ենք տեսել:

—Յիսայ Անդամից հեռացայ ու եկայ մեր աէր Մ-ի
երեսը մի լաւ քորեցի (յանդիմանել). այ երէց, ասացի,
հերիք է, ձեռը վեր կալ աղջիկ աղայ սիրահարացնե-

լուց: Նա էլ իր կարգովն երգում հաւատ արեց, որ էս օրէջ դէնը էգպէս բաների համար գրիչ չըպէտք է ձեռք առնի: Հէնց դրա համար եմ ասում քեզ, որ դժուար թէ տէր Մ-ը քո քրոջ աղի դարգին դարման անի, մանաւանդ, որ էս անգամ, լսում ենք, թէ Անգամը խիստ է բարկացած, ինքն էլ միայն չի: Հետք բերել է մի ուրիշ անգամ, քարտուղարին և մի կատաղած բեղերն (ընչացք) ոլորած, ու ու ձեռք քշած, սպիտակ ոսկրակոթ խանչալը կախ՝ եւ մարդ ասեմ, դու վայրենի արջ, որ երեք օր է էստեղ է, բոլոր գեղը զուիրն է բերել (զղուացնել), զպախի մորակը ձեռին պտտեցնելով՝ հասնողի միջքովն է պատ տալիս, կպցրած տեղը մատիցս հասա ձուկն է կապում, հպարտութիւնիցը, հէնց իմանաս գեանի վրայ չի լինի ման գալիս, ի՞նչ է՝ թէ ինքը վանքի թուանքչոնց դաղբաշին է, սաքի թէ գլխաւորն է: Մեր խեղճ երէցը նրա ձեռիցն ետխէն (օձիք) է ձգում: Ինչ տալիս եւ, ասում է, չի կշտանում: Էս օր, լսում ենք, որ հինգ մանէթը հինգ օրէն ճանապարհ չպրտել է ու դոսգոսալով ձէնը զլուին է գցել ու տէր Մ-ին ահ տուել, թէ էդուց ոտով ձիու յառաջը պէտք է անի ու տանի վանքի թուանքչիտանէն կոխի, լուերի ու ժժմունքների մէջ փթացնի: Դէ, ինչ քար գցի տնաքանդ երէցը իր գլխին, մի աշխարհական գիւղացի կոպիտ աղայ կարգաւորի վրայ էսքան իրաւունք պէտք է բանացնի: Ի՞նչ է՝ թէ թուանքչի է: Հէնց ասենք՝ թէ տէրաէրն իր արուեստովը լաւ եկամուտ ունի, հօ՞ եկածը բոլորն ուրիշների փորը չըպէտք է լցնի: մի հասարակ թուանքչու համար հինգ մանէթը քիչ պարզեւ է: Դժուար է, քոյրս, դժուար, ապրիլը ծանրացել է, տէր Մ-ը էս օր կծու կծու երգում էր ուսում, որ երեկ իրիկուն միայն չօր փողով իր հիւրերին երեսուն պաճախու ոսկի աջահամբոյր է տուել:

— Ուրեմն քարաուղարն էլ հոգևորական է, որ աջահամբոյր է ստանում, դարմանամբ հարցրեց ծերից Տ-ը պառաւը:

— Էդ տաս, էդ տաս է. քարաուղարը պօչը կարճ չուխայ հագնողներիցն է. ճակատին էլ արծաթի աստղը ֆոֆուում է, էհ մեր մեղքիցն է, հառաչելով պատասխանեց ծերը, էն օրն էլ տեսնեք, ու քահանէն աշխարհականին ժամուց է տալիս:

— Դեռ շատ պէտք է մնան էդ մարդիկը, հարցրեց կրկին Տ-ը

— Կարծեմ՝ էդուց, միւս օրը «Տէր ուղղեան»*) կատենք, ամեն բան վերջացրել են, թղթերը գրած պրծած են: Ասում են, գրել են, սաքի թէ, եկան, տէր Մ-ի տունը տակ ու վրայ արին և ոչինչ թըխովի դիր, կամ Վեց հազարի ալ չը գտան, բայց Ասածուն էլ յայտնի է, որ բոլորը շինովի է. թէ դու տէր Մ-ի տան մի ծեղին (շեւղ) զիպել ես, նրանք էլ քեզ պէս. Վեց հազարեակի տեղը նրանց շատ լաւ յայտնի է, տէրաէրի գլխավորելի պատուհանումն ընկած է. օրն էլ տան անգամ ձեռքներն են առնում, միջին նկարած պոչաւոր ու պոչաւոր սատանէքանց պատկերները բաց անում, ծիծաղում, էլ հեռ տեղը գնում:

— Եթէ տեղը դիտեն, թող տանեն, կարծիք յայտնեց Տ-ը:

— Խեղճները հացի հեռ հօ չեն կերել, ժպտաց ծերը, մարդ իր հաստատ հացին քացով կըտայ. տանք՝ վերցրին, տարան, տէրաէրին էլ ապաշխարանքի տակ

*) «Տէր ուղղեան» մաղթանքն ասում է քահանան հետաւոր ծանապարհորդին ուղևորելու ժամանակ և աջահամբոյր ստանում:

Այդ մասին տէրտէրն առանձնապէս հրաւիրում է ուղևորի կողմից:

զրին, կամ հէնց կարգն առան. զբանով իրանց հացին իւղ կը քսուին: Մեր քահանէն նրանց կթի կովն է, «Ս ու ղ ո մ ո ն ի ն» (Վիցհազարեակ) էլ խոտն ու զարմանն է, դրել են կովն յառաջը, որ ուտի, կուրծք կաթնահալի, փրփրալով, փխփխալով, կովկիթներով կաթը ապ, իրանց էլ փորը իւղոտուի, պսօշները սերտուին:

— Մեր զաւառումը քահանէքն աւելի աղաւտ են, թուանքչի, գործակալ, վանքի վարդապետ, ուղիղ է, գալիս, դնում են, պատիւ տեսնում են, բայց էղպէս նւղութիւն չեն տալիս, տեղեկութիւն տուեց Տ-ը:

— Էդ նրանից է, որ ձեր աշխարհքը ծակի դուռն է, բունը մօտն է, արածն օրը կ'իմացուի, քաշուում են, կաշիներիցը վախենում են, բայց մեր սարերը բերդի պէս բերդ են. մինչև դու սարի քամակը համբու կը հասցնես, ամեն բան կը կարգադրուի, տեղէց տեղ կը լինի մեզանում չափովն էլ են իրանք, կարողն էլ պատժողն էլ ներողն էլ 'ի վերջոյ՝ Էդ մեր խելքիցը վեր է, թող գնան, հեռանան, Աստուած իրանց հետ: Մեր տէր տէրն ասում էր՝ ամէն ճանապարհներն ուղղել է, մնացիլ է թուանքչու բերանը ցիւկը: Էսօր խորհուրդ տուի որ էգուց հնգի վրայ հինգ մանէթ էլ աւելացնի, թուանքչու աչքը կօխի. ասացի. օրհնած հոգի, ուղարկ կլանել ես, պոչը կոկորդուսդ մնացել է՞, քանի շուտ ցանես, էնքան յառաջ ես:

— Պէտք է ասած՝ որ մեր տէրաւորն անքուն ցիցեր ունի, հինգ մանէթի համար կուչ չէր գալ, բայց խելձի ձեռին պատրաստ չը կայ:

— Միթէ տէրաւորն իր գուռն կիողներից էնքան օգուտ չունի, որ էսպէս կարիք ժամանակին հինգ-տասը մանէթի համար կուչ ու ձիգ է անում, զարմացմամբ հարց տուեց Տ-ը:

— Հը... Ժպտաց ծերը, աւագին թիւ կայ ու մեր երի-

ցի հարստութիւնին ոչ, էս տունը կըլնի, բայց անաշէնն
երբ է ձեռքին պահում, հաւաքուածը շահով է տալիս,
չորս կողմի գիւղերն տէր-Մ-ի պարտքատէրին են, մինչև
ամառը սարն եկող Ղաղախ-Բօրչալուի գաւառների
թուրքերը էլ վզնիւիցը հետ տէրաւորի պարտքումը
խրուած են. ասնեք՝ թուրքերին փողով չի պարտք տու-
ել, տէրաւորին եկած բոլոր չորքոսանին նրանք են տու-
նում:

— Շատ տաւար է դալիս, հետաքրքրուեց Տ-ը:

— Ամենապակասը՝ տարեկան կըծախի յիսուն հաւ
երինջ, արջառ, ձիու քուռակ, ոչխարի հաշիւը հօ տէր-
աւորն ինքն էլ չը գիտի, օրական մինը մօրթուում է
իր դուռն հկողնիւն կերակրելու համար:

— Աստուած իրան փառաց պահի, ինչ կուզի՝ թող
անի, միայն իմ քրոջ որդուն հանգահան լինելուց (տա-
րագիր լինելուց) ազատի, յայտնեց Տ-ը, շատախօս ծե-
րի խօսակցութիւնը կարճելու համար:

Միւս օրը տէր Տ-ի հիւրերը գնացին: Տ-ը ներկա-
յացաւ ուրիշների շարքում և իւր ինդիրն արեց:

Ծերի խօսքը մազ մնաց, որ կատարուէր. քահա-
նան մեծ գծուարութեամբ համաձայնեցաւ Տ-ի համար
սիրահարական գիր անել:

— Ես քահանայ եմ, պնդում էր տէր Մ-ը, իմ իշ-
խանութեանն ստորագրութիւն եմ տուել. եթէ իմանան,
որ հոգուս մեղք եմ արել, երկու տարուան նշանած աղ-
ջկանը իր նշանածից խլել, օտարին տուել՝ մօրուքս չղրե-
լի (բամբակ մաքրելու մեքենայ) տակո՞վն անց կըկաց-
նեն: Այդ էլ որ մի կողմը թողնենք, սիրահարացնելու
թիւամբ մեծ գծուարութիւններ ունի. լաւ է, որ էս օր
երեքշաբթի է, իրիկունս չորեքշաբթամուտ է, թիւսմի
գիշեր է, թէ չէ մինչև միւս չորեքշաբթի ևս ստիպուած
պէտք է լինէի ութ ամբողջ գիշեր անքուն հսկել, եթ-

նազդխտան զւերի հետ կռիւս տալ, մինչև որ նորից կամքի բերէի: Զէ, քորս, չէ, ձեռքը թափ առեց տէրտէրը, իմ գործը չի, ես տառնեցի: Կենդանակերպի սրտերը քաղցրացնելու կարողութիւն չունիմ: Նրանց որ մէկին կաշառեմ, որի՞ աչքը կշտացնեմ: ամէն մէկի համար քանի՞ ծակաւոր ծաղիկ հոխի (տարւոր գառն) պէտք է մատաղ տամ: ինքս էլ հիւանդոտ մարդ եմ, հարկաւոր է որ ողջ գիշերը կռանս չափ հաստ տառնեցի: մեղրամոմ վառեմ ամէն մի Կենդանակերպի համար, նորանց ամէն մէկի առաջին 12 ծունր պէտք է դնեմ, ամէն մէկի համար 12 անգամ 12 սատանայ պէտք է զրժողքիցը զուրս կանչեմ, չոքէ չոք տանեմ Կենդանակերպի առաջը, 12 անգամ 12 երկրպագութիւն պէտք է տալ տամ: Ես ինչպէ՞ն դիմանամ չար զւերի կծու ու տախա հոտերին, կիտամաշ կրլնիմ: Էն անիծեալներն էլ իրանց կարէ կարտում ածած (ձուլած) սե սե մոմեր կրպահանջեն, ինչքան փողով ես կարող կրլնիմ այնքան ծանր գործը զուէս բերել:

Վերջապէս այնպիսի իրաւացի պատճառաբանութիւններ յառաջ բերեց աէր Մ-ը, որ Տ-ը ունեցած բոլոր փողը քսակով հանեց ու տէրտէրի յառաջը դրեց:

Այնուհետև քահանան յօժարեց, ըստ իւր միւս օրուան պատմութեան, մի գիշեր անքուն լուսացնել:

Երկրորդ առաւօտը—չորեքշաբթի Տ-ը անխօս ներկայացաւ տէրտէրին և նրանից երեք հաւ եռանկիւնի ծալած թղթի փոքրիկ փաթեթներ ստացաւ:

—Այս մէկը, պատուիրեց քահանան, կանաչ խոտայ (կերպաս է) կտորի մէջ կարած՝ թաղեցէք աղջկայ շեմքի տակ և էնպէս արէք, որ եօթն առաւօտ աղջկանից վաղ շեմքի վրայով ուրիշը չ'անց կենայ: երկրորդ թուղթը ջրի մէջ լուծեցէք, անօթուց աղջկանը խմացրէք: իսկ երրորդի մէջ դրէք աղջկայ գլխի չորս կողմերից

Հանոտած երեք երեք հաա մազ, ընդ ամէնը 12 հաա մազ. փաթաթեցէք սապօն չըղիպած լուրջ կտաւի մէջ և կարեցէք աղջկայ ձախ թեւին, արմուռկից երեք մաա-նաչափ վեր՝ ոչ աւել, ոչ պակաս:


—Բայց, աէր հայր, այդ բոլորը դժուար գլուխ դա-լու յանձնարարութիւններ են, մոլորուած հարցրեց Տ-ը:

—Այդ ձեր գործն է, որդի, ես ձեռքերս լուսնում եմ, յեա եմ կանգնում. Կենդանակերպերը միայն այս պոյ-մանոֆն են հաշտուում քո քրոջ որդու հա. արիւն ձեր ի գլուխ ձեր եղիցի. չէք անիլ՝ չէք տանիլ:

Տ-ը ծործորակը քերելով՝ թղթերն առաւ ու ճա-նապարհ բնկաւ, բայց թէ կարողացաւ թլիսմի շնորհիւ Բ-ին աէր շննել Ա-ի աղջկայ զլիւն, որով և իւր գիւ-ղումը վերաւորուած ինքնասիրութեան պատիւը վերա-կանգնել, այդ մենք կարող ենք գուշակիլ՝ պառաւին ճանապարհ գնելուց յետոյ՝ բահանայի արաասանած հետեւալ խօսքերից.

—Գնացէք, անմկաներ, օգուժը ձեռքը հեռացողի ետեկց ձօճկով հեգնաբար խօսեցաւ աէր Մ-ը, եթէ ձեր նման յիմարները չ'լննէին, ես մի քանի տուն քաղ-ցած ու տկոր, սոված ճաշին քնող ծխերովս ինչսէս պէտք է զլուխ պահէի: Դրանցից հարցնող լննի, թէ ես ո՞վ եմ, որ Կենդանակերպերի հա խօսեմ, սաաանէ-քանցը հրամաններ տամ՝ և ինքս էլ դարմացած մնա-ցեմ եմ, տարեկան հազարաւոր թղթի կտորներ սեւոյ-նում եմ, խզմզում եմ, իրանց եմ տալիս, հաստատ էլ գիտեմ, որ ոչ մէկը չի կատարուում, որովհետեւ մէջը բան չըկայ՝ որ կատարուի, բայց այս ինչ կուրու թիւն է, որ ժողովուրդը մինչեւ էս օր էլ էդ սուտ սուտ թլի-սմներին հաւատում է. ինձ պէս հարիւր տիրացու, տէրաէր, մօլլայ ու ախօնդ գրքացներ յիմարների շնոր-հիւ լի ու առաա տպրում են: Շատ էլ լաւ է լննում նախնիքն ասել են. անխելքի հայր խելօքի փորը:

ԳԱՌՆԵՑԻ.



Մ Ի Կ Ն Ո Ջ

ԽԵԼԱՑԻ ՄՏՔԵՐՆ.

(Քաղուածք... յիշատակարանից).

1. ՄԱՅՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ.

Հայ մայրեր, դուք ինքներդ կը վկայէք, թէ ինչպէս մի փոքրիկ էակ զարմանալի կերպով մեր ամբողջ աշխարհը փոփոխութեան է ենթարկում և աւելի՛ քան ամուսնութիւն: Ամուսնուց մայր դառնալն աւելի է կերպարանափոխում մեր հոգեկան կեանքը, քան օրիորդից ամուսին դառնալն: Միթէ՞ իմ խօսքերը ճշմարտութիւն չեն պարունակում իւրեանց մէջ: Մի կին իւր ամբողջ կեանքում մի անգամից այնքան նոր բան չէ սովորում, որքան իւր մայր դառնալու առաջին շաբաթներում: Իւրաքանչիւր անձնաւորութիւն, որ մտնելում է կնոջ՝ կամայ ակամայ խօսակցում է նորածին որդու մասին: Ընդհանուր խօսակցութեան նիւթը կազմում է փոքրիկի սննդի և հոգացողութեան եղանակը: Լուացարար կնոջից սկսած մինչև արիստոկրատ բարեկամուհիները՝ իւրաքանչիւր այցելութեան ժամանակ բերում են իւրեանց հետ նոր փորձեր և օրինակներ: Այս բոլորը մօր համար հետաքրքրական է, բայց թէ ի՞նչ պէտք է այդ երեխայից դառնայ, դորա մասին նա դեռ չէ մտածում և կարծես թէ նա բոլորովին անտարբեր է դէպի այդ հարցը:

Ժամանակը փոխվում է՝ հնին փոխարինում է նորն և այդ վերջինն էլ բերում է իւր հետ այլ պահանջողութիւններ, այլ հոգսեր: Այդ նոր ժամանակի չըջանում ամբողջ աշխարհը

և ամբողջ մարդկութիւնը կարծես թէ բաժանվում են երկու զասակարգի. առաջինը՝ ուսուցիչների, երկրորդը՝ աշակերտների։ Այդ ժամանակամիջոցն է մանկական (8-ից մինչև 14 տ.) հասակն։ Դա այն ժամանակամիջոցն է, երբ ծնողն իւր բարեկամներին և ծանօթներին հանդիպելիս առաջարկում է հետևեալ հարցը. «Ո՞ր ուսումնարանն ես ուղարկում քո որդուն կամ թէ ընտանեկան ուսուցիչ վարձել եմ նորա համար թէ ոչ, ի՞նչպէս է պարապում նա և ի՞նչ ես վճարում նորան»։ Դա այն ժամանակամիջոցն է, երբ ծնողն համար տարին այլևս չէ սկսվում յուսուարից և վերջանում գեկտեմբերին, այլ մի արձակուրդից — միւս արձակուրդն։ «Ե՞րբ է քո որդին դպրոց մտել» հարցնում ես դու և ստանում հետևեալ պատասխանը. «անցեալ ամառուայ արձակուրդներից յետոյ»։ — «Ծաղիկ հանել են ձեր երեխայքը». «անցեալ տարի գատկուայ արձակուրդներին իմ մեծ որդին ծաղկով հիւանդ էր»։ Զարմանալի բան, այդ ժամանակամիջոցում կարծես թէ բոլոր ծնողներն էլ դրպրոց այցելող երեխաներ ունին, կամ թէ հակառակն, գուցէ մարդ այնպիսիների հետ է յարարերութեան մէջ գտնվում, որոնք դպրոց այցելող երեխաներ ունին։ Դա այն ժամանակամիջոցն է, երբ ծնողը լարուած դրութեան մէջ է գտնվում ապագայ թուանշանների համար, որի ցան ու հոգան սակաւ առ սակաւ լղարող և թառամող, դպրոցական կեանքին չգիմացող զաւակն է։ Սիրելի որդիների վիճակը դեռ մնասմը մեր ձեռքին է, թէև ընդհանրապէս նորա մեկ շատ ցաւ և նեղութիւն են պատճառում, սակայն այնու ամենայնիւ նկատում ենք մեր շարժարանքի պտուղը, հետևանքը։ Ամեն ինչ կարելի է փոփոխել, և թէ մարդուս սխալ է երևում և ինչպիսի ուրախութիւն է պատճառում ծնողներին, եթէ այդ փոփոխութիւնները բարոյական հետեանք են ունենում։ Օրէջօր աւելի են զարգանում երեխաները, նորա մինչև անգամ ճանաչում են իւրեանց բարեկամին և թըշնամուն, նոցա մտածողութիւնը մերից բաժան չէ, նոցա սիրտը երեխայական է։ Դեռ ոչ մի յոյս չէ խորտակուել, մնայր մեծ յուսով է նայում ապագային։ Նա կրթում է իւր զաւակներին իւր տեսակէտից, ինչպէս ինքը հասկանում է, նա իւր սիրտը փոքրիկների համար զոհել է, գիշեր ցերեկ մտածել է՝ այն ամենը մատչելի դարձնել իւր սիրելիներին, ինչ որ իւր կարծիքով լաւ և բարի է։ Ինչպէս կարելի է, որ իւր սիրելիները նեղու-

Թիւն քաշեն, նորա բարի և քնքոյշ էակներ են, անշուշտ պէտք է և բախտաւոր լինին: Սա մայրական կեանքի ամենանշանաւոր պարբերութիւնն է: մի պարբերութիւն, ուր մայրն իւր ամբողջ ոյժն, իւր ամուր հաւատը գործ է դնում, որ այդ վերջինն արժանի և արդիւնաւոր կերպիւ անցնէ:

Այժմ ամեն ինչ խելքից և բարի կամքից է կախուած, մայրական անշափ սիրով ոչինչ չէ կարելի անել, երեսան պահանջում է ինչ դու նորան չես կարող տալ, կեանքում գործում են նորա մարդկային ոյժերը: Այժմ դու քո երեխայի և նորա վիճակի միակ միջնորդողը չես: Շատ ծնողներ շէն ուղում հասկանալ, որ այլ ևս չեն կարող լինել իւրեանց զաւակի վիճակի ուղղութիւն տուողը, վասն զի վիճակի ուղին որոշողն ծնողը չէ, այլ բնութիւնը: Պարզ հասկանալի է, որ հաւատարիմ ծնողները հասած զաւակների համար ևս ուզում են լինել այն, ինչ որ ծննդեան օրից մինչև այս պարբերութիւնը եղել են: Սակայն զա մեծ և անբուժելի սխալմունքների առիթ տուողն է: Մեր սրտից անկեղծ բղիճած ծրագրիւները սկսում են անիրագործելի դառնալ: Սիրելի մայր, խոնարհօրդ գորան և մի կոռւիր նորա դէմ, ինչ որ այլ տեսակ չէ եղել և չի էլ կարող լինել: Ահաւասիկ սա մայրական կեանքի երրորդ պարբերութիւնն է:

Երբ ամեն ինչ իւր ուղիով արդէն ընթացել է, երբ որդիքն արդէն իւրեանց ասպարէզն ընտրել են և իւրեանց համար ընտանիք են դարձել, ահաւասիկ նախկին մայրը սկսում է որպէս մեծ մայր նոյն պարբերութիւններն անել իւր թոռների վերաբերմամբ, ինչ իւր զաւակների համար է տեղի ունեցել: Մեծ մայրը նոյն հոգսերով, մտածողութիւններով և պատվ վերաբերվում է գէպի իւր թոռներին, բայց մի բան գէթ նորան նեղացնում է, դա թոռների անհնազանդութիւնն է, նորան ցաւ է պատճառում, որ թոռները չեն ուզում նորա խօսքը լսել և մինչև անգամ համարձակվում են նորան պատասխանել: «Ախր, նանի, ի՞նչ ևս հասկանում դու, մի պառաւ կին ի՞նչ կարող է հասկանալ»:

Խեղճ մեծ մօր սիրտը ծածկվում է վէրքերով, սակայն բարեբաղդաբար Աստուածային ճարը. մեծ մօր ունեցած սէրը գէպի իւր թոռները բուժում է այդ վէրքերը: Վերջապէս թոռներն էլ են մեծանում, մօնում են բազմակողմանի կեանքը, սի-

րելիներին լծին օրէցօր բազմանում է, խեղճ մեծ մայրն աւելի է աչքից անցնում, իսկ ի հարկէ պատահում են նորա սիրելիների մէջ անհասկեր, որոնք հոգով չափ սիրում են այդ ծերունուն, նորան պատվում են, մտածելով թէ այսօր կամ վաղը նա պէտք է իւր ժառանգներից բաժանուի:

II. ՄԻ ՇՌԱՅԼ ԿՆՈՋ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ.

Իւրաքանչիւր մարդ մի օր և իցէ դէպքում շուայլ է, եթէ նա մինչև անգամ ժլատ ստորոգելին էլ է կրում: Իսկ ես երեք բանի մէջ եմ սոսկալի շուայլ, բայց Աստծոյ խաղիքն փայտ մի կոտրէք վերաս, դռա թանկ չարժեն. մարդ կարող է այդ կողմից շուայլ լինել, առանց պարտքի մէջ ընկնելու. միայն գուցէ ամենակարող Աստուածը մեզնից վերջ ի վերջոյ հաշիւ պահանջէ:

Այդ երեք իրերն, որոնց մէջ մենք անկարող ենք ժլատ լինել, կոչվում են լոյս, օր և ջուր:

Քանիցս անգամ աղախինիս վերայ բարկացել եմ պատուհանները փակելու համար: Քանիցս անգամ նոյն աղախինին յուսահատութեան աստիճանին եմ հասցրել, որ երեսնաներին փոխանակ այդի տանելու, բախումն է խաղացրել, ուր ոչ մի ժամանակ մուտք չունի մաքուր օդ: Ես ոչ մի ժամանակ չեմ դնում, մինչև որ ննջարանիս պատուհաններն ամենաքիչ 5—6 ժամ բաց չմնան, լինի դրսում 20) թէ 5 աստիճան ցուրտ: Պատուհանի փակելն իւրաքանչիւր օր իմ վերջին գործն է անկողին մտնելուց առաջ. պատուհանների բանալին, ննջարանի օդը մաքրելն իմ առաջին գործն է առաօտեան անկողնից վեր կենալուց յետոյ: Ամառը մինչև անգամ իմ կարէմքեման առաօտեանից արդէն տանում եմ պարտէզ: Ճաշի համար պատրաստութիւններն այնտեղ եմ տեսնում. կանաչի ունեմ մաքրելու, միս պէտք է կոտորեմ, հաց պէտք է պատրաստեմ, ամեն ինչ այգումն եմ անում: Ճաշում ենք այդու: Մայիսից մինչև հոկտեմբեր ամիսը սենեակներում շատ հազիւ ենք գործ տեսնում:

Նոյնը վերաբերում է լոյսին. ինչպէս եմ ատում մութ սենեակները, որոնք կարծես թէ մարդուս վերայ ճնշողութիւն են գործում: Կարծես թէ մարդ մտադիր է Աստծուց թաք կենալ: Ինչպէս ասում եմ այն ծանր, միացնող փարազոյրներն, որոնք Աստծոյ լոյսն ամբողջովին կտրում են սենեակից: Նոյնը

վերաբերում է գիշերուայ լուսաւորութեան. այս կողմից արժանի եմ շուայլ կոչուելու. Ի՛նչպիսի սոսկալի, տխուր տպաւորութիւն է անում մարդուս վերայ ճրագի աղօտ, թղլլ լոյսը. Ի՛նչպիսի սոսկալի բան է, երբ այդ թղլլ լուսաւորութեան ներքոյ 6 կամ 7 հոգի աշխատում, կարգում, նկարում, գրում, կարում, մի խօսքով աչքերը փչացնում են. եթէ սեղանիս շուրջը չորս հոգի նստած պարապում են, միշտ խնդրում եմ՝ աղախինից երկու լապտեր բերելու. Յաճախ է պատահում, որ բարեկամներիս ծաղրին խոնարհվում եմ, երբ մեր սենեակն այդպիսի լուսաւորութեան մէջ են գտնում. «այ՛ կին, մարդդ միլիոններ է աշխատում»: Ընթրիքի ժամանակ, երբ սեղանի վերայ երկու լապտեր է դրուած, անշուշտ ծիծաղաշարժ է երևում և ես թղլլ եմ տալիս իւրաքանչիւրին ծիծաղել, ինձ ծաղրել, փոյթ չէ. մինչև որ լաւ չգիտեմ, չտեսնեմ կերակուրը, լինի դա աղ ու հաց, կամ մի այլ կերակուր, մի կտոր անգամ բերանս չեմ առնիլ: Ես հաւատացած եմ, որ ուժեղ լոյսը ոչ թղլլ և ոչ լաւ աչքերին կարող է վնասել. Անշուշտ միայն հիւանդ աչքը պէտք է զօրեղ լոյսի աղդեցութիւնից հեռու լինի, այն էլ բժշկի խորհրդով: Եւ եթէ բժիշկն առ հասարակ արգելել է հիւանդին, այն ժամանակ նա չպէտք է երեկոյեանները պարապէ, սակայն եթէ մարդ աշխատում է կամ լարուած ուշադրութեամբ սենեակում նստած է, աւելի լաւ է ուժեղ քան թղլլ լոյս ունենալ:

Իսկ ինչ ջրին է վերաբերում, մենք պէտք է Աստծուն փառք տանք որ դա աժան իրերից մէկն է, և չնայելով դորան քանի ընտանիքներ կաթիլներն էլ են համարում: Որքան ծիծաղաշարժ է, որ շատ ընտանիքներ ջրին խնայողութեամբ են վերաբերում: Ես այնպիսի ընտանիքներ գիտեմ, որոնց փոքրիկ անդամներին խստիւ արգելուած է մի քանի անգամ ձեռքեր լուսնալն, որպէս զի ջրկիրն յաճախ չգայ, որ ամսական մի քանի շահի խնայողութիւն լինի. Մեր ամենագարշկի սովորութիւնն այն է, որ նորածինին լողացնելիս խնայողաբար ենք գործածում ջուրը. շատ իմաստուն մայրեր այնքան ջուր են ածում լողարանի մէջ, որ հաղիւ է սպունգը թրջվում. դռաւ չգիտեն, որ նորածին երեխայի լողացնելն փոքրիկի առողջութեան ամենագլխաւոր պայմաններից մէկն է և պէտք է լողարանը գոնէ կիսով չափ լեքը լինի. Մեր ընտանիքում այլ տեսակ է. մեզ մօտ օրը մի քանի անգամ մեր ձեռք ու երեսը լուանում ենք:

Եթէ ես մի որ և իցէ հիւրանոցում ստիպուած եմ գիշերել, առաւօտեան իմ առաջին գործը շատ ջուր պահանջելն է:

III. ԵՍ ԹՔԵԼՈՒ ԺԱՄՆԱԿ ԶՈՒՆԻՄ.

Եթէ մենք բոլորեքեանքս մեր կեանքի մէջ աննպատակ և անգործ անց կացրած ժամերն հաշուենք, գուցէ զարհուրելով բացականչենք. «զարմանալի՜ բան». և յիշաւի կըտեսնենք, որ ամբողջ տարիներ աննպատակ և անգործ կոցրել ենք և միւսնոյն ժամանակ յաճախ է պատահել, որ «ժամանակ» չենք ունեցել մի ամենաանհրաժեշտ զբաղմունքի համար:

Ամենամեծ շռայլողը նա է, ով կոպէկները չէ գնահատում և առօրեայ ծախսի վերաբերմամբ մտածում է. «ինչ մի մեծ բան է մի շահի կամ մի քանի կոպէկը», հաւատացած եղիւր, որ սա աւելի շոյալ է, քան նա, ով պղպիսի փոքրիկ փողերն պահում է և մի որ և իցէ զուարճութիւնների համար ուրբիներ է մտնում: Նոյնը վերաբերում է ժամանակին. ով իւր ըրպէները ճշտութեամբ հաշվում է, կարող է կարեւոր դէպքում մի քանի ժամերն զուարճութեան նուիրել. քանիցս անգամ մենք կանայքս մտածում ենք, օրինակի համար, «ախ մինչև ճաշէն դեռ 10) ըրպէ կայ». և մի նոր գործ էլ չէ կարելի սկսել. մարդ իւր ձեռքն է առնում մի որ և իցէ զիրք և սկսում է թերթել առանց մտածողութեամբ կարգալու, կամ նայում է պատուհանից փողոցային կեանքին. մարդ գնում է մի սենեակից միւսը՝ առանց զբաղմունքի, որպէս զի այդ մի քանի ըրպէները անց կացնէ: Բայց ես այլ կերպ եմ անում: Եթէ ճաշի պատրաստութիւնները տեսել և սեղանը սփռել եմ, չեմ նայում ժամացոյցին, — այլ ուղղակի առնում եմ կարս այն մտածմունքով, իրր թէ ժամեր աշխատելու եմ. յաճախ ականջիս է հասնում սորա-նորա ձայնը, երբ ես ասեղս ձեռքս եմ առել. բայց և այնպէս քանիցս անգամ է պատահել, որ իմ ամուսինն ուշացել է մի կարեւոր գործի առիթով և հետեւարար որոշած ժամին չէ կարողացել ճաշել, իսկ ես օգուտ քաղելով այդ դէպքից շատ բան եմ կատարել. Եթէ ես իմ կարը բոլորովին սկսած չլինէի, պէտք է մտածէի իւրաքանչիւր ըրպէ, հիմա կըգայ նա տուն, գուցէ մի քանի ըրպէից յետոյ և պղպիսով այն կէս ժամը նոյնպէս

պէտք է կորցնէի, ինչպէս առաջին օրոպէն, եւմ թէ սպասում
 ենք հիւրի, որ խրաքանչիւր րոպէ կարող է ներս մտնել և իմ
 գործին, ինձ խանգարել: Ի՞նչ փոյթ, ես հանգարտութեամբ
 շարունակում եմ իմ գործը մինչև իմ հիւրի գալը: Քա-
 նիցս անգամ պատահել է ինձ, որ հիւրը փոխանակ իսկոյն գա-
 լու, ամբողջ ժամեր ուշացել է: Եւ ես իմ ժամերն անհամար-
 րութեամբ չեմ սպասել: Իմ նշանաբանն է. առաջին՝ մի՛ թող-
 նիր մի րոպէ անգամ, որ աննպատակ անցնի, երկրորդ՝ արա կատա-
 րեալ, ինչ որ դու սկսել ես և հոգս տար, որ խրաքանչիւր
 աշխատութիւն քեզ համար օգտաւէտ լինի, այն ժամանակ քո
 կեանքի մէջ ոչ մի ժամ չէ կարելի կորած համարել: Ես չեմ
 ճանաչում ժամանակի աւելի մեծ կորուստ, քան կիսատ ու պը-
 ռատ և մահկերևութարար գործերն, որովհետեւ անկատարը կատա-
 րեալ դարձնելու համար կարեւոր է կրկնողութիւն: Խօսքս ոչ թէ
 միմիայն աշխատութեան է վերաբերում, այլ նաև զուարճութեան:
 Եթէ դու զբօսնելու ես գնում, գնա փոքր ինչ երկար, որպէս զի
 քո արած շարժողութիւնները քեզ համար օգտաւէտ լինեն: Ե-
 թէ դու ճաշում ես, մի տեսնել միայն համն, այլ կեր, որ կըշ-
 տանաս և մի մտածիլ ուտելու մասին մինչև անգամ որոշուած
 ժամանակին: Եթէ դու առաւօտեան արթնանում ես և սկսում ես
 հագնել, հագիր կատարեալ, ինչպէս պէտք է ամբողջ օրուայ հա-
 մար: Եթէ դու մի գիրք ես կարդում, մի թերթիլ միայն, այլ
 կարգա ուշադրութեամբ: Եթէ դու մի որոշ ժամ քեզ զուար-
 ճութեան ես նուիրել, աշխատիր ժամանակաորապէս ցրել քո
 մտածողութիւններն և վայելիր այդ զուարճութիւնը կատարեալ:
 այդ ժամերն էլ չէ կարելի կորած համարել, եթէ դու վրեժ և
 արժանի զուարճութիւն ես ընտրել: Ուրեմն ինչ որ մտածում
 ես, գործիր միշտ ամբողջովին և որքան կարելի է կատարեալ,
 —գորանով շատ ժամանակ կարող ես խնայել: Յաճախ ստիպ-
 ված ենք լինում ընկերական հանգամանքների ազդեցութեան
 ներքոյ մի քանի ժամեր կորցնել, սակայն այդ դէպքի համար էլ
 ունենք խորհուրդ: Ես միշտ հետեւեալ կերպով եմ վարուել. ա-
 ռաջին՝ սահմանափակել եմ իմ ժամերն հարկաւոր գործերի
 համար և ընդունել եմ Տրաւերներ միմիայն անհրաժեշտ դէպ-
 քերում: Հնայելով դորան, յաճախ ինձ ցաւ է պատճառել ժա-
 մերս անտարբեր, անհետաքրքրական ընկերութեան նուիրել:
 որպէս զի դորան էլ յալմեմ, գիմել եմ հետեւեալ միջոցի:

սովորութիւն եւմ գարծրել պղպխի գէպքերում ձեռագործութեան փորրիկ պայուսակն հետս վեր առնել և խօսելով զբաղվել, մինչքեռ միւս ընկերութիւններս անգամ զորա մասին չեն մտածել։ Սա ընտրել եւմ այսպիսի գէպքերում մի հասարակ ձեռագործական նիւթ, որ իւրաքանչիւր խօսակցութեան ժամանակ կարելի է անել, իսկ աւելի լաւ ձեռագործութիւնները տան համար եւմ պահել։ Յաճախ է պատահել, որ այսպիսի ընկերական երկկողմներին մի փորրիկ գույպայ եւմ գործել վերջացրել։

Կարող է մարդ շատ ժամանակ վաստակել, խնայել, եթէ նա սովորութիւն է գարծրել ոչ մի գործ միւս օրուայ համար չյետաձգել։ Եթէ ես մի որ և իցէ աշխատութիւն վերջացրել եւմ, առաջարկում եւմ ինձ հետեւեալ հարցը. ո՞րն է ամենակարեւորն եկող ժամուայ և եկող օրուայ համար և այդ անհրաժեշտ բանը ձեռս եւմ առնում։ Եթէ ես այս ժամի կամ այս օրուայ համար ոչինչ անհրաժեշտ բան չեւմ գտնում, մտածում եւմ, կարող է արդեօք փնաստկար լինել, եթէ ես վերջացնում այսօր այն, ինչ իսկապէս վաղը կամ միւս շաբաթ կամ աւելի ուշ պէտք է գործ ածուի. անշուշտ որ յաճախ անկարելի է շտապել, րայց ուր կարելի է, պէտք է ժամանակի խնայողութեան համար անել։ Սա միշտ աշունքին եւմ իմ երկխանների սպիտակեղէնն ու ձմեռուայ շորերը կարգի բերել։ Սա չեւմ կարող յիշել մի որ և իցէ տօն օր, որ իմ անհրաժեշտ անելիք գործերն մի քանի շաբաթ տօներից առաջ վերջացրած չլինում։ Այն գնելու բաները, որ պէտք է վաղը պատուիրեւմ, արդէն երկկողման մտածել և հաշուել եւմ։ Այսպէս այսօրուայ գործը վաղուայ չձգելով, թէ ժամանակն ենք աշխատում և թէ կարիք չունենք շտապելու, որն ոչ միշտ բարի հետեւների է հասցնում և հանդարտութեամբ և կատարեալ գործելով, մարդ ունենում է ժամանակ մի անսպասելի գործի համար։ Վերջապէս այդ բարի սովորութիւնը կրխորտակէ այս սոսկալի նախադասութիւններն. «Ես ժամանակ չունիմ», իսկ շատերն էլ չափազանցութեան հասնելով. «Աստուած վկայ, թէ քելու ժամանակ չունիմ»։ Մի բան էլ պէտք է ասել. քանիսն իրից եւմ լսել զանգամներ, որ ժամանակ չունեն իւրեանց օրգկերանց այնքան ժամանակ նուիրելու, որքան իւրանք ցանկանում են. մէկը ստիպուած է իւր ամուսնու հիւանդութեան պատճառով օրգկերանց կրթութեան գործը անուշադիր թողնել, միւսը ընտանիքի մեծութեան, երրորդը իւր սեփա-

կան թուլութեան և հիւանդութեան պատճառով: Այդ բոլոր հաւատարիմ և պաշտելի մայրերին պէտք է մի միտթարիչ խօսք ասեմ: «ոչ թէ սովորեցնելով կամ զբաղուելով ձեր որդիներանց հետ կրկրթէք նոցա, այլ մեծ մասամբ ձեր օրինակներով»: Այն բոլորներն, որ դուք բացառապէս ձեր զաւակներին պէտք է նուիրէիք, չեն կորած ձեզ համար, եթէ դուք այդ վերջիններն ծուլութեամբ, թեթեամտութեամբ, դուարձութեամբ և անհամ վիպասանութիւնների ընթերցանութեամբ չէք անցրել: Բայց դուք, եթէ այլ պարտականութիւններից էք ստիպուած ձեր զաւակների կրթութիւնը փոքր ինչ անուշադիր թողնել, հոգս մի՛ անէք. դուք ունիք ուրիշ շատ ազդու միջոցներ ձեր որդիների կրթութեան համար: Ոչ թէ միայն դուք նրանով էք կրթում, դաստիարակում ձեր զաւակներին, որ նոցա հետ խաղում, զբոսնում կամ նոցա պատմում էք, ոչ թէ միայն նորանով, որ նոցա սխալներն ուղղում էք և նոցա պատժում, այլ ուրիշ միջոցներով, որոնց մասին գուցէ դուք չէք մտածել:

Ոչ, դուք, գուցէ, աւելի ազդու էք կրթում ձեր զաւակներին, եթէ դուք ձեր հիւանդ հօրն, ամուսնուն կամ եղբօրն էք պահպանում: Ոչ, ինչ մեծ ազդեցութիւն ունի փոքրիկի հոգու կրթութեան վերայ, եթէ նա տեսնում է, իւր խելացի աչքերով դիտում է, թէ ինչպէս բարի մայրը օգնութիւն է հասնում հիւանդ հօրը: Մօր դէմքը բաւական է, որ փոքրիկ բնքոյշ սրտի վերայ ազդեցութիւն անի: Ես ճանաչում եմ մի մօր, որ իւր որդիներանց շատ մեծ ծառայութիւն է արել, չնայելով, որ նա դատապարտուած էր իւր ամենագեղեցիկ տարիներն պարկած անց կացնել և միւսնոյն ժամանակ համբերութեամբ մեծ ցաւեր կրել:

IV. ՄԱՐԴ ՊԵՏԲ Է ԵՐԿՈՒ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԻՑ ՓՈՔՐՆ ԸՆՏՐԷ:

Մարդ պէտք է երկու թշուառութիւնից փոքրն ընտրէ և անմիջապէս գիտակից լինի այդ ընտրութեանը: Ահաւասիկ սա մեր կեանքի ամենաանհրաժեշտ, նշանաւոր և մեծ արուեստներից մէկն է, մի ընդունակութիւն, որի մէջ պէտք է երկխաններին հենց սկզբից վարժեցնել: Այն հասարակ դէպքն, ուր մենք պէտք է երկու գործողութիւններից մէկն ընտրենք, որոնցից մէկը մեզ

Համար շահարեր է, իսկ միւսն փնասակար, տարաբաղդաբար շատ սակաւ է տեղի ունենում: Հասկանալի բան է, որ նոյն իսկ այսպիսի դէպքում կարելի է սխալ գործել: Բաւականին խելք, յաճախ մտաւոր ընդունակութիւն և պարզ ու առողջ դատողութիւն է հարկաւոր, որպէս զի իսկոյն որոշել, եթէ երկու կողմից էլ փնաս է սպառնում, որ կողմի փնասը աւելի թեթեւ է, քան մինչև անգամ թոյլ եւ սալիս յայտնել այն միտքն, որ մեր կեանքի նպատակներէց մէկն էլ այն է, որոշել երկու թշուառութիւնից աւելի թոյլը:

Այսօր ճաշից առաջ սպասում եմ հիւրի, մի և նոյն ժամանակ զանազան գործեր ունիմ կատարելու, իսկ լաւ հագուստս կարող եմ գործելու ժամանակ կեղտոտել, ուրեմն ի՞նչ պէտք է հագնեմ: Եթէ հիւրս ինձ տեսնէ իմ առօրեայ շորերովս աւելի փոքր թշուառութիւն է, քան թէ նոր շորերս հագնեմ և փչացնեմ: Ուստի վճռում եմ նոյն հագուստով հիւրիս առաջ դուրս գալ: Այժմ պէտք է մտնեմ խոհանոց. ծոյլ աղախինս հետացել է խոհանոցից, առանց մտածելու, թէ կրակի վերայ դրած պղինձի մէջ քիչ ջուր կայ և կարող է պղինձը փչանայ: Այժմ մնում է ինձ կամ հագուստս կեղտոտել և սեւացած պղինձն կրակից առնել կամ թողնել, որ պղինձը փչանայ. ես ոչ այն եմ անում, ոչ էլ այս, այլ առնում եմ մի աման ջուր և ածում պղնձի մէջ: Այսպիսի դէպքերն, ուր ընտրողութիւնը աւելի հեշտ է, ո՞վ չի կուլ տալիս դառն դեղը, որ հիւանդութիւնից աղատուի կամ ո՞վ կըխնայի շոր ու կօշկներ թրջելուց, որպէս զի մի երեխայի խեղդելուց ազատէ: Կնայելով դորան, նաև յաճախ են տեղի ունենում մեր կեանքի մէջ աւելի խիստ դէպքեր, ուր մտքի դժ և առողջութիւն է հարկաւոր: Գիտակցական ընտրողութիւնը կեանքի մէջ բաղդի դոներ բանովն է. Ով սովորել է արագ և գիտակցաբար երկու թշուառութիւնից փոքրն ընտրել, նորան աւելի հեշտ կերեայ խիստ ընտրողութիւններ, ինչպիսիք են օրինակի համար. տիրոջ վարմունքը կամ բռնակալութիւնը կրեմ, թէ ընդ միշտ իմ ամուր պաշտօնը կորցնեմ: Խառնուեմ աղջկանս ամուսնութեան գործի մէջ, թէ զսպեմ ինձ և խորհուրդ չտամ, որ կարող է հազար մի թշուառութիւնների առիթ տալ:

V. ՈՐԴԻՔՆ, ՈՐՊԷՍ ԾՆՈՂՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐ.

Դուք կարծում էք, թէ մեր զաւակները միայն մեր աշակերտներն են։ Ոչ, նորա նոյնպէս մեր դաստարակներն են։ Ձէ պատահել ձեզ յսել, որ այս կամ այն տիկինը, որ օրիորդ ժամանակ զուարճութեան հետեւից ընկնող, կըբոտ, փարթամ, անխելք մի աղջիկ էր, այժմ մի խելացի մայր է դարձել։ Նոյնը և վերաբերում է տղամարդին. քանի ետական շոյալ, կըբոտ մարդիկ՝ զոհարեր հայրեր են դառնում։ Այս յիշուի որ մի հրաշք է. Փառք Ասածոյ, մարդուս սէրը գէպի իւր որդիքն այն զգացումն է, որ ամեն զգացումներից ուշ մեռնողն է մարդկային սրտի մէջ և քանի սէրը կենդանի է, զաւակներն խրեանց ծնողների դաստարակներն են։ Մտածէք դորա մասին, մայրեր և հայրեր, և կըգտնէք, որ խօսքերս ճշմարիտ են։ Ահա առիկ մի օրինակ. քո ծառան մի յանցանք է գործել, և դու անխղճ մտաբար նորան ծեծում ես։ Նոյն միջոցին ձգում ես դու, երիտասարդ հայր, քո հայեացքը քեզանից ոչ հեռու կանգնած քո երեք կամ չորս տարեկան որդու վերայ, որ ամբողջ մարմնով դողում է և տիտեր աչքերով նայում քեզ։ Ես զբարդ կըգամ, եթէ հայրիկը փայտը մի կողմ չձգէ և բարեացկոտ գէպի վնաս ժպիտ չերեւայ։ Եթէ դու սովորութիւն ունես յաճախ անվայել խօսքեր գործածել և որի վերացնելու համար քո կենդանիքն հազար անգամ խնդրել է և նորա խնդիրը առանց հետեանքի է մնացել, իսկ եթէ դու նոյն խօսքերն քո երեխայիցն ես լսում, այլ ես չեմ արտասանում։ Ինչպէս կարող ես քո որդուդ արդելել, եթէ նա քեզնից յաճախ լսում է, եթէ փառ բան է, ապա դու ինքդ, որպէս օրինակ, չպէտք է գործածես։ Դու պէտք է ուսումնարանում սովորած լինիս մի առակ, որ հայրն ու մայրը խրեանց ծնողն հետ վատ են վարվում և միշտ անկիւնում նստեցրած. հետո իրանցից, փայտէ ամանով ճաշ են տալիս։ Մի օր որդին դրսին նստած փայտ է տալում։ Զօր հարցմունքին պատասխանում է փոքրիկը. «Փայտեայ աման եմ չինում, որ երբ դուք ծերանար, ձեզ դորանով կերակրեմ, ինչպէս պապին եկը կերակրում»։ Նոյն օրումանից սկսում են երեխայի ծնողները ծերունու հետ սիրով վարուել և խրեանց հետ միասին սեղանի մօտ նստեցնել և այլ եւս փայտեայ ամանով չեն կերակրում։ Ուրիշ որ միջոց, որ զգացմունքն,

որ խօսքը կարող էր հօր և մօր վարմունքին վերջ տալ, որ միջոցն կարող էր ծնողների վերայ այնպէս ազդել՝ կրթիչ ազդեցութիւն ունենալ, ինչպէս փոքրիկ որդու խօսքերն:

Վերջապէս ուզարկում ես որդուդ գպրոց. նա խր հետ հաղարատ որ հարցեր է տուն բերում, որոց պատասխանները ընականապէս ձեզնից պէտք է սպասէ: Այդ հարցերը կամ վերաբերում են պատմական, կամ աշխարհագրական, կամ բնագիտական առարկաներին: Հայրիկը կրկին մոռացել է կամ խեղճն չէ կարողանում յիշել, կամ նա այսօր ժամանակ չունի պատասխանելու, բայց երբ այդպիսի բացասական պատասխաններ յաճախ են լսում, այն ժամանակ կարելի է նկատել որդու երեսին դարմանքի արտայայտութիւն. «հայրիկն ինչպէս շուտ մոռանում է, ով գիտէ, դուքէ, ամենեկին էլ չի իմացել»: Եւ ահա նոյն հայրիկին տեսնում ես պարսպ ժամերին նստած կարգում է այս կամ այն գիրքը, նայում է քարտէզը, մի խօսքով սովորում է, որ խր որդու առաջ պարզերես դուրս գայ: Վերջապէս հասնում են այն տարիներն, որ մանուկը տանը պէտք է պարսպ ժամանակ ընթերցանութեամբ պարսպի: Հայրը անդամ է դրվում մի որ և իցէ գրադարանի, կամ ժողովարանի, որը նաև գրադարան ունի փոքրիկներին գրքեր բերելու համար: Ահա նա հարցնում է գրադարանապետին. «տուէք ինձ այնպիսի գրքեր, որոնք 12-14 տարեկան մանուկների ընթերցանութեան համար լինեն»: Այդ գրքերն, ասում եմ քեզ, ոչ լծէ միայն երեխայի համար է օգտակար հանդիսանում, այլ նաև ծնողների համար: Երիտասարդ հայրեր և մայրեր, մի՞թէ չէ պատահել ձեզ, որ դուք ձմեռուայ երկար երեկոներին ձեր որդու կարդացած պատմութիւնը լսելիս լինէք, որը ձեզ համար ես շատ անգամ օգտուէտ է հանդիսացել, հարստացնելով ձեր գիտելիքների շրջանը:

Այո, մարդիկ, եղէք հայր, այն ժամանակ կըտեսնէք, թէ ձեր կեանքը ինչպիսի փոփոխութեան է ենթարկվում: այնպիսի փոփոխութիւններ, որոնք ձեզ վերայ կրթական ազդեցութիւն ունեն:

Ինչ մայրերին է վերաբերում, աւելորդ է երկար խօսել: պարզ ըմբռնելի և անուրանալի ճշմարտութիւն է, որ նոքա իւրեանց որդիների միջոցով ամենայաւ կրթութիւնն են ստանում: Հենց նորածին որդին է մօր ստիպողն, որ նա համբերող, իւր կիրքերը գտող, աշխատասէր և կարգապահ լինի: Այս բոլոր ա-

ուաքինութիւնների սերմերը ցանկում են ծնողաց սրտերի մէջ նոցա հայրենական օջախում և այդ սերմերը բուսնում են միայն վաւականների ազգեցութեան ներքոյ: Հենց այդ հիման վերայ օրիորդի մէջ գեռ նշմարելի չեն լինում իսկական առաքինութիւններն. մայր դառնալուց յետոյ են այդ վերջիններն երևան գալիս:

Նոյնպէս և յաճախ որդիքը հանգիստնում են ծնողների փոխադարձ յարաբերութեան վերանորոգիչը: Երկուսն էլ իւրեանց որդու ներկայութեամբ քաշվում են անվայել արտայայտութիւններից և խիստ հակասութիւններից, և քանի մեծանում են որդիքը, աւելի մօտենում են ծնողներին և սկսում են նոցա ընկերութիւնից անբաժան լինել և այդպիսով խանգարում են ծնողների մէջ տեղի ունեցող վէճերն և անբաւականութիւնները:

Արդեօք ես ճշմարիտ չեմ, որ այս գլուխը վերնագրել եմ «որդիքն, որպէս ծնողների դաստիարակներ»:

VI. ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՐԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ՝ ՆԵՐՆ ԱՌԹՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ.

Քաղաքավարութիւնը և բարի սովորութիւններն առօրեայ կեանքի մէջ բազմակողմանի են. յաճախ մարդուս պատահում են ընկերական շրջանի մէջ անհատներ, որոնք գեղեցիկ ճաշակով հագնուած են. խօսում են մաքուր լեզուով և շարժվում են յատուկ կրթուած և լուսաւորուած անհատի. սակայն շնայելով դորան, մարդ մի տեսակ զգացմունքի ներքոյ յաճախ իւրեան զգոյշ է պահում դէպի նորան, աշխատում է խօսակցութեան նիւթ ընտրել այդպիսի մի դէպքում մի ընդհանուր բան և շարտայայտել սևփական կարծիք. մարդ աշխատում է չմօտենալ նորան, չմտերմանալ: Սակայն մարդուս պատահում են անհատներ, որոնց նոյն իսկ առաջին տպաւորութիւնը համոզում է իւրաքանչիւրին, որ նոցա հետ կարելի է ազատ խօսել, սևփական կարծիքն արտայայտել: Առաջիններն անում են մեզ վերայ արտաքուստ գեղեցիկ տպաւորութիւն, իսկ վերջիններն ոչ թէ միայն արտաքուստ և ներքուստ, — նոքա հանգիստնում են մեզ առողջ մտածողութեան, բնաւորութեան, բարոյականութեան տէր մարդիկ: Երկորդ տեսակ անհատները զանազանվում են առաջիններից նորանով, որ նոցա կամքը, բնաւորութիւնը, բարոյական սկզբ-

բունքները համապատասխանում են արտաքին յարաբերութեան ձևերին: Առօրեայ յարաբերութեան արտաքին փայլուն ձևը կոչվում է քաղաքավարութիւն: Քաղաքավարութիւնը ոչինչ է առանց սրտի զարգացման, մինչև անգամ անբարոյական տարրեր է պարունակում իւր մէջ. քաղաքավարի և ոչ բարեկիրթ անհատը մշտական դերասան է, մի դերասան, որի բեմը նեղ թատրոնականը չէ, այլ ամբողջ աշխարհը, նորա կեանքը: Մի փիլիսոփայի խօսքերը՝ թէ մարդ քանի աւելի է զարգանում, նոյնքան աւելի է կատարելագործվում դերասանութեան մէջ, վերաբերում է արտաքինին: Իսկ եթէ արտաքինն է անուշադիր թողված, այն ժամանակ կմնայ բարոյական սովորութեան ոգին մի աներեւոյթ բան, որ ոչ կճանաչուի և ոչ էլ կյարգուի: Միայն արտաքինի և ներքինի համերաշխ զարգացումը կարող է մեզ մարդկային բաղդին մասնակից դարձնել: Բաղդաւոր է այն մարդն, եթէ նորան վիճակուած է, որ այդպիսի մի ներդաշնակ զարգացումն պէտք է սկիզբ առնէ երեսպայական հասակից: Դուք գիտէք, թէ որքան մեծ ազդեցութիւն ունի մանկան վերայ, երբ նորան երեսպայութիւնից սովորեցնում են մի բան խնդրելն և քաղաքավարի բարեւելն:

Երեսպայի անշափ կենդանութիւնը պէտք է այն աստիճան սանձել, որպէս զն փոքրիկ երեխաներն սովորեն ժամանակին քաղաքավարի պատասխան տալ և համեստ լինել: Վտանգաւոր դէպք է, երբ փոքրիկ երեխան մի յիմարութիւն է անում և մեծերն էլ նորա յիմարութեան վերայ ծիծաղում են. «Հայրիկը մեծ քիթ ունի», ասում է մի երեք տարեկան երեխայ, բոլորեքեանք ծիծաղում են և նոյն իսկ հայրն էլ, և այդ խօսքի համար փոքրիկը ստանում է հօրից համբոյր:

Մեծ մայրը մի տիկին է բերել իւր թոռի համար, Թոռը նայելով այդ խաղալիքը, ասում է լաւ հագուստ չունի, նանի, ինչո՞ւ չես աւելի լաւը գնել: Շրջապատողները փոխանակ ծիծաղելու պէտք է խտուրթեամբ նկատեն, որ վայել չէ այդպիսի խօսքեր ասել — գնա՛ մեծ մօր ձեռքը համբուրիր, որ քեզ համար տիկին է բերել: Մեծ մայրը քեզ համար ընծայ է բերել և փոխանակ շնորհակալութեան, դու վատաբանում ես: Ամօթ է քեզ համար, եթէ մէկ անգամ էլ կրկնես, մեծ մայրը տիկինն իւր հետ կրկին կբտանէ: Այդ փոքրիկ երեխան այդ խօսակցութիւնից հէնց իրան սխալ գործած կ'զգայ և ով գիտէ թէ այդ

խօսքերը նորա քնքոյշ հոգու մէջ ամուր տեղ կրբունեն: Երև-
խային պէտք է սկզբում մեքենայարար սովորցնել հնագանդ,
քաղաքավարի, ուշադիր և համեստ լինել: Մեքենայութիւնը ա-
ւելի վաղ է սկսում քան հասկացողութիւնը: Նորա այնքան
երկար պէտք է մեքենայութեան ներքոյ գործեն, մինչև որ սո-
վորութեան և վերջ ի վերջոյ համոզմունքի փոխադրուին: Բայց
որպէս զի արտաքին փայլուն քաղաքավարութիւնը միանայ հոգու
ու սրտի մէջ զարգացմամբ ըմբռնուած տարրերի հետ, անշուշտ
անհրաժեշտ է, որ նոցա կրթողն և կառավարողն ևս օրինակե-
լի լինի:

Մի մայր, որ ընկերական շրջանում իւր գեղեցիկ հագուս-
տի հետ իւր հոգին և սիրտն էլ է փոխում, զրախ ընկերական
շրջանում այլ է, քան իւր ընտանիքի մէջ, զրախ իւր սիրտը
վարագոյրով ծածկում է և կեղծաւորութեան զոններն բացում: մի
հայր, որ հիւրի առաջ իւր քաղաքավարութիւնը ծայրահեղու-
թեան է հասցնում և հիւրի հեռանալուց իւր շրջապատ ան-
հատներին ծայրահեղ կոպտութիւն է ցոյց տալիս, պարզ է,
որ այսպիսի ծնողները իրանց զաւակներին միմիայն արտաքին
ձևեր կըսովորեցնեն և դոքա զարգանալով նոյն բնաւորութիւն-
նը կըտանան, ինչ որ ծնողներն են: Տան առօրեայ յարաբե-
րութիւնն, բնատնական կեանքի շրջանն է այն միակ զարգոյն, ուր
կարող է երևիսայի արտաքինը և ներքինը ներդաշնակ զարգանալ
և ինչպիսի սխալ է գործում մի ընտանիք, եթէ փոքրիկ դուստր
մի որ և իցէ հիմնարկութիւն է ուղարկում (գիշերօթիկ) քա-
ղաքավարութիւն և կրթութիւն ստանալու համար: Այդ աղջիկը
կըսովորէ այնտեղ ի հարկէ քաղաքավարութիւն, բայց սիրտը կը
մնայ դատարկ, նա այնտեղ աւելի թատրոնի համար կըպատ-
րաստուի, քան համեստ կեանքի համար, եթէ նա բարոյականու-
թեան սերմերն իւր հետ ընտանիքից բերած չ' լինէր:

Ընտանեկան կրթութեան գաղափիրը պարզ է. մի՛ լծոյ տալ
քեզ արտասանել մի խօսք, մի հայեցողութիւն, որ այլ է քան
քո խօսքը, հայեցողութիւնը, դատողութիւն ամենամեծ ընկերա-
կան շրջանում: Ուրիշ խօսքերով, ուր ևս, ինչ ընկերութեան
մէջ էլ գտնվում ևս, լինի դա քո ընտանիքը, թէ մի խնձոյք,
աշխատար շփոխուել, նոյն տիպարը մնալ, Մի օրինակ, «խնդրեմ»
և «շնորհակալ եմ» խօսքերը հեշտ է արտասանելն, ինչո՞ւ էք
միայն օտարի զէմ՝ գործ գնում, բոլորովին հակառակ չէ հօր և

մօր դիրքին, որ հրամանը խնդիրքի ձևով տայ, խնդիրքը կատարելուց յետոյ շնորհակալ լինի: Եթէ մայրը իւր փոքրիկ դստեր ասէ. «Զարուհի, խնդրեմ, այս սփռոցը տուր աղանիսին» և այդ խնդիրն կատարելուց յետոյ «շնորհակալ եմ, որդիս» աւելացնէ, նա պէտք է համոզուի, որ այդ փոքրիկ, քնքոյշ ու անմեղ արարածը դէպի իւր եղբայրներն ու քոյրերն էլ նոյն եղանակով պէտք է վարուի: Ընտանեկան յարաբերութիւնները հեշտացնում են զանազան դէպքեր. օրինակի համար, եթէ ամբողջ ընտանիքը հրաւիրուած է օտար ընտանիքից, այն ժամանակ կարիք չկայ փոքրիկներին նոր օրէնքներ սովորեցնել, բաւական է եթէ հայրը նկատէ. «Այնտեղ եղէք այնպէս, ինչպէս տանն էք», որովհետեւ երեխայքը տանն էլ պէտք է, ինչպէս տեսնք, համեստ, ուշադիր, քաղաքավարի լինեն. նոքա տանն էլ պէտք է մաքուր հագնուած լինեն, որոշեալ ժամերին սեղանի առաջ նստած — կամ խաղում: Նոքա հիւր գնալով աւելի լրան չպիտի տեսնեն ու լսեն, ինչ որ տանը պէտք է տեսնէին ու լսէին:

ՎՄ. Ա՛Յ, ՄԱՐԴԱԳԷԼԸ ԿԸԳԱՅ.

Սիրելի մայրեր, քանիցս անգամ է պատահել ինձ տեսնել, թէ ինչպէս զուր ձեր որդիների սիրտն ու հոգին ճնշում և այնպէս փոքրիկ շրջանակներով էք սահմանափակում, որ այլ ևս հազիս թէ կարողանայ աճել: Խեղճ զաւակին հէնց սկզբից դու երկնային լոյսը չտեսած, իւր չարն ու բարին չորոշած՝ դատապարտում էք անբախտ վիճակի: Օրօրոցի մէջ գտնուող երեխայի լացը կտրելու համար ահա խմաստուն մայրը բղաւում է. «Ա՛յ շուն, արի այստեղ. այ, շունը կըգայ ու քեզ կըտանի», և այդ դու բաւական չէ և իմ խելօք մայրը «մարդագէլին» էլ է հրաւիրում, քիչ ժամանակից յետոյ բոլոր դուերին, չար ողբիւնին, անասուններին էլ է հրաւիրում, որ որդին ահից սուս կենայ: Ահաւասիկ մայրը փոքրիկին հէնց սկզբից կրթում է դէպի վանկոտութիւնը: Հայ մայրեր, ասացէք խնդրեմ, խօսքերս ճշմարիտ չե՞ն:

Փոքրիկ որդին արդէն ոտքի է ելել, նա կարողանում է վազել, նա ընտանիքի աչքի լոյսն է, ուրախութիւնն է, նա ինչ որ տեսնում է, ուզում է խկոյն վեր առնել և երբ նորա խնդիրը չէն կատարում, նա սկսում է լալ, և մայրիկը փոքրիկի լացը

կտրելու համար նկատում է. «Եթէ դու էլի լաս, շունը, մարդագէլը, դէը, գայլը կըգայ (էլ ինչ անուններ ասես, որ նա չտայ) ու քեզ կըտանի, կ'ուտի»: Վախկոտութիւնը նորա սրտի մէջ ամուր արմատ է ձգում: Փոքրիկը սկսում է ամեն բանի վերայ ահ ու սարսափով նայել, նա այնպիսի առարկաներից է մտապատկերներ ստացել, որոնք նորա մաքի շրջանը ու սրտի հիմքը կարող են միանգամից խորտակել: Այդպիսով փոքրիկ որդին դատապարտւում է յաւիտեան վախկոտութեան և նորա սիրտը սկսում է քայքայուել: Եւ այս բոլորի պատճառը դուք էք, մայրեր, հայրեր: Փոքրիկ որդին արդէն դառնում է ծ տարեկան, նորա մտաւոր շրջանը լիքն է անպէտք գաղափարներով, նորա վառ երեակայութիւնը նկարագրում է այնպիսի իրեր, որ անկարելի է հասակաւորին երեակայել: Շնորհիւ իւր ծնողների՝ հաստատ համոզուած է նա, որ աշխարհիս երեսին գոյութիւն ունեն հրէշներ, մարդագէլեր, դէեր և այլն: Նոյն մանուկը գիշերը վախոնում է դուրս գալ բակը, նա չէ ուղում անգամ լուսաւորուած սենեակում միայնակ մնալ, նա մինչև անգամ երեկոյեան անկողնի մէջ լինելով լալիս է, որ ճրագը չհանգցնեն, նա վախոնում է: Սրգեօք ճշմարիտ չէ, որ դուք ձեր որդուն կենդանի մահի էք դատապարտում: Որդին մեծանում է այդպիսի տխուր հանգամանքների ներքոյ, նորա սիրտը նմանում է նապաստակի սրտի և դուք պահանջում էք նորանից, որ նա քաջութիւններ գործէ, տղամարդ լինի, մի բան, որ դուք ինքներդ մանուկ հասակում նորա ձեռքից իլել էք:

Բայց աւելի սոսկալի է այն հանգամանքը, երբ ծնողներն հաւատում են այդպիսի ոգիների, և ահա ժամանակով մի այդպիսի սերունդ է յառաջանում, որի միտքը գիշեր ցերեկ դէերի հետ է: Դրսում փոքրիկ դուստրը խաղում է իւր տիկիների հետ և նկատում էս, որ խաղը վերջացնելուց յետոյ մի ասել է անցնում տիկնոջ շորը. ապա փորձիւր հարցնել այդ փոքրիկ աղջկան, [Թէ ի՞նչու ես այդպէս անում: Նորանից կըստանաս հետեւեալ պատասխանը: «Ուր պողպատ կայ, այնտեղ դէ. չէ կարող մօտենալ»: Անմեղ արարածներ. ի՞նչպիսի սոսկալի պատժի էք դատապարտուած դուք:

Ես յիշում եմ իմ մանկական հասակից մեր հացթուխին, որին կարծում էի [Թէ կէս հրէշ և կէս կին է: հաց թխելու ժամանակ յաճախ դիմել եմ մօրս, որ առաջին հացը տայ ինձ. ևս

բացասական պատասխան ստանալով սկսել եմ լալ, բայց իմ լացը ինձ աւելի է վնասել, և այժմ էլ յիշում եմ, ի՞նչպէս մեր գիծ հացթուխը կապոյտ շապիկը վեր բարձրացնելով սկսել է իւր սատանայական պարը ինձ վախեցնելու համար, և իմ մայրը փոխանակ հացթուխին նկատելու, ծիծաղում էր նորա վարմունքի վերայ: Այս միակ դէպքի հետեանքը մինչև այսօր նկատելի է իմ մէջ: Իսկ ես այլ կերպ եմ կրթել իմ երեխաները. նորա մինչև ուսումնարան գնալը չեն լսել մեր ընտանիքի մէջ գայլ, դէ և այլ խօսքերը: Աղախինս մէկ անգամ արտասանել էր սատանայ խօսքը, բայց յաջողուեց ինձ բացատրել, որ սատանայ նշանակում է անհնազանդ, ես ամեն միջոցի դիմել եմ, որ այդ միակ խօսքը մեր ընտանիքի փոքրիկ անդամների մէջ գործածական չգառնայ: Ես իմ փոքրիկներին ոչ մի ժամանակ չեմ վախեցրել: Եթէ նոցանից մէկը մի բան է տեսնում ու ցանկանում, ես աշխատում եմ նոցա ցանկութիւնը կամ այլ ճանապարհով մոռացութեան տալ կամ խիստ նկատողութեան ներքոյ սենեակից հեռացնել եմ տալիս: Իմ երեխաները չգիտեն թէ ասը ինչ բան է նոցա համար, գիշերն ու ցերեկը մէկ է. քանիցս անգամ է պատահել ինձ խնդրել փոքրիկ 12 տարեկան որդուս, որ գնա մառանը մի շիշ գինի բերելու, նա առանց վախենալու իմ պատուէրը ամենայն ճշտութեամբ կատարել է: Նոյնը մինչև անգամ կրկնել եմ տուել երեկոյեաններին:

Պաշտելի մայրեր, եթէ ուզում էք բախտաւոր ու բարեկիրթ զաւակներ ունենալ, հեռու պահէք ձեր շեմքից այնպիսի սոսկալի անուններ, որոնք հէնց մի անգամից կարող են կլանել փոքրիկ որդու քրքջ սիրտը, իսկ այդ գաղափարների փոխարէն զարկ տուէք Աստուծոյ գաղափարի զարգացման, այն ժամանակ կրկնապատկէ ձեր չարչարանքը, նեղութիւնը և գործունէութիւնը:

VIII. Քեզ ՂՈՒՐԲԱՆ, ԲԱԼԱՍ.

Նոյնպէս տխրալի է, երբ հայրն ու մայրը իւր որդիներին կապիկի սիրով են սիրում: Յարգելի մայրեր, գուցէ խորթ թուի ձեզ իմ խօսքերը, բայց հեշտ է հասկանալն: Կապիկ սէր չէ, ապա ի՞նչ է, եթէ ծնողն իւր որդուն իւրաքանչիւր քայլում իւր սէրը կամ բարկութիւնը ծիծաղաշարժ գործողութիւններով է արտայայտում, որոնց կրթութեան վերայ ունեցած վնասակար աղ-

գեցուծիւնը պարզ ըմբռնելի և անուրանալի ճշմարտութիւն է: Միթէ՞ դուք մեծ կրթական ազդեցութիւն էք համարում ձեր սէրը կամ բարկութիւնը բարբարոսական ոճերով արտայայտելու: «Կե՛հա՛մ բախաս, քեզ մատաղ, մեռնեմ քեզ համար, զուրբան լինեմ, քո ոտի կոշտը դառնամ» և այլն այսպիսի աւելի կեղտոտ քան ծիծաղաշարժ նախադասութիւններ, որոնք աւելի փնասակար են, քան օգտակար: Միթէ՞, ծնողներ, ուզում էք այդ ոճերով համոզել ձեր փոքրիկներին, որ դուք նոցա սիրում էք, նոքա գիտեն և ոչ մի դէպք չէ կարող խորտակել մանկական մտքի այդ շրջանը: Ահա՛ ասիկ անցնում է մի քանի րոպէ և այդ խօսքերին փոխարինում են նախադասութիւններ, որոնք ծնողի բարկութիւնն են ուզում արտայայտել. «Ա՛յ, մեռնես դու, տալիք մանես, շանսատակ լինես, ջանափարի բաժին դառնաս», և այլն և այլն: Տէր Աստուած, ինչ նախադասութիւններ չասես, որ ծնողները չարտասանեն: Վերալիչեալ սիրոյ արտայայտութիւններն ասեմ, թէ այն կոպիտ, անհամ նախադասութիւնները: Երկու կողմից էլ ծայրահեղութիւններ են: Եւ դուք գորանով կրթում էք ձեր որդիքը, իմաստուն մայրեր, դէպի չարը: Միթէ չէ՞ կարելի ձեր սէրն և ուրախութիւնը, նաեւ բարկութիւնը այլ կերպ արտայայտել: Ձեր փայփայլուն աւելի փնասակար ծառայութիւն է անում կրթութեան, քան օգտակար:

Ահա տեսնում ես փոքրիկն յանկարծ իւր ոտը քարին խփելով վայր է ընկնում: Նորա լացի, աղաղակի ձայնը մայրը լսելով, շտապում է դէպի իւր սիրելին, բայց չէ անցում երկու րոպէ և ինչպէս խեղճ կինը իրան քսան անգամ գետին է մըտցնում, թաղում ու կրկին կենդանւում: «Այ մեռնեմ ես, հողը մանեմ, երեխիս ցաւ պատճառեցի» և այլն. նոյնը վերաբերելի բոլոր այսպիսի դէպքերին. փոքրիկը յանկարծ իւր ձեռքը կտրել է, կամ իւր եղբայրը փայտով խփել է մատին և այլն: Ուղղակի մօր վարմունքն է պատճառը, որ որդին մի շնչին բանի համար աղաղակում, բղաւում է, կարծես մի մեծ դժբախտութիւն է պատահել. ես համոզուած եմ, որ եթէ մայրը փոխանակ այն խօսքերին, թողնէր որդուն վայր ընկնելիս, որ ինքն իրան կրկին բարձրանայ և առանց ուշադրութիւն դարձնելու նկատէր, «ամօ՛ք է այդպիսի մի դատարկ բանի համար լալը», ես հաւատացնում եմ որ նա միւս անգամ այլ եւս լաց չէր լինիլ:

Ինչո՞ւ բարկութեան ժամանակ ամենամոլայել արտայայ-

տու թեանց առիթ տալ, միժէ՞ չկան ուրիշ աւելի ազդու միջոցներ. Քանիցս անգամ է պատահել ինձ լսելիս փոքրիկ երեխայի բերանից, որ հազիւ է կարողանում՝ ամենահեշտ խօսքերն արտասանել, շուն, անպիտան, յիմար խօսքերն: Նա մեղաւոր չէ, որովհետեւ սովորել է իւր ծնողներից, յանցանքը—այդ վերջիններին է: Իսկ մի բան էլ իմ կեանքի մէջ նկատել, որ շատ հայրեր իրանց սէրն դէպի որդիք հայհոյանքներով են արտայայտում: Եթէ որդին մի բան է ասում, որ գովելի է, փոխանակ երեխային նրկատել տալու, որ գոհ է՝ հայրը ուրախութիւնից ասում է «չան որդի, քո հէրն անիծեմ» և այլն և այլն, ուրիշ շատ անվայել ոճեր: Եւ ահա ասիկ փոքրիկների առաջին դասագիրքը պարունակում է իւր մէջ հարիւրաւոր հայհոյանքներ, անվայել ոճեր, վասնզի երեխան այդ խօսքերն իսկոյն ըմբռնում է և մինչև անգամ, ինչպէս տեսանք, գործածում: Իմ սէրը դէպի իմ զաւակները, գուցէ աւելի ուժեղ է, քան նոցանը, որոնք ծիծաղաշարժ ոճերով են արտայայտում, բայց իմ սիրոյ արտայայտում, մայրեր, իմ դէմքն է. բաւական է, որ փոքրիկս նայի իմ երեսին և նա արդէն գոհ է, և խրեան ուրախ է զգում: Բարկութեան արտայայտութիւնը կարգում է որդիս դէմքիցս, նա իմ երեսին նայելով, արդէն գիտէ, որ սխալ է գործել և յաճախ պատահում է, որ վրովս ընկնելով, ներողութիւն է խնդրում: Քանիցս անգամ տեղի է ունեցել, որ փոքրիկ սրդիս վայր է ընկել և նա բաւականին վերքեր է ստացել. իմ խօսքերը միշտ հետեւեալն են եղել. «ոչինչ, ամօթ չէ, որ մի այդպիսի չնչին բանի համար լաց ես լինում», փոխանակ ցաւելու, ծիծաղել կամ նորա վերայ. եւ ահա, մայրեր, հաւատացէք, որիմ խօսքերը մեծ ազդեցութիւն են ունեցել նոցա վերայ. մի այլ դժբաղդութիւն պատահելիս նկատել եմ, որ ինչպէս սառնասրտութեամբ մօտեցել են ինձ ասելով՝ մայրիկ, ձեռքս կտրել եմ, ինզրեմ շորով փաթաթիր և թելով կապիր, որ արիւն չգալ:

Յ. ԲԱՐՍԻՍՈՒԴԱՐԵԱՆ.

I.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ 269!

(Թուվմաս Մուրից, ազատ Թարգմանուհիւն.)

Խաղաղութիւն ձեզ, սո՛ւրբ մարտիրոսներ,
Որ կռուի դաշտում՝ ընկաք անվեհեր.
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.
Բայց, աւա՛ղ, ձեզ հետ մեռան ձեր ըղձեր...
Խաղաղութիւն ձեզ, սո՛ւրբ մարտիրոսներ:

Խաղաղութիւն ձեզ, ազգի քա՛ջ որդիք,
Սե հողն է այժմ ձեզ առել իւր գիրկ.
Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է եռում:
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւետ,
Բայց, աւա՛ղ, դուք էլ չէք փթթիլ յաւէտ...
Յուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,
Խաղաղութիւն ձեզ, ազգի քա՛ջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորներ.
Ձեր վերջին կամք՝ «անէ՛ծք թշնամուն» —
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն.
Անէ՛ծք ու վրէժ — դոքա մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէ՛ք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորներ...

II.

Մ Ե Լ Օ Դ Ի Ա

(Ֆրուգից)

Գիրք Ելից, Գլ. ԺԴ. 15.

Միքիա, Գլ. Բ. 10.

Ե՛ւ աչքըդ պայծառ, և՛ քայլըդ հաստատ,
Ե՛ւ ձայնըդ առողջ... Օ՛հ, ա՛ղբ իմ՝ անգին,
Էլ ի՞նչ ես այդպէս տխուր, յուսահատ
Գլուխ խոնարհած՝ կանգնել կէս ճամբին.
Դու միայնակ չես, ա՛ղբ իմ՝ սիրելի,
Տե՛ս քո որդիքը ահա խմբովին
Քո գիրկն են դարձել՝ վառ յոյսերով լի.
Սեղմի՛ր դու նոցա քո ծերուկ կրծքին
Եւ համբերելով ամեն դառնութեան,
Սիրտըդ յուսավառ, անվախ, անսասան
Գնա՛ դու առաջ,
Ա՛ղբ իմ՝ չարատանջ.

Գնա՛—հին երգի ձայնին ունկնդիր,
Քեզ գալիք փրկող դարերն են կանչում.
Քեզ որոտ, կայծակ ձայնում են. «ղարթի՛ր».
Քեզ փութորիկը վեհ հիմն է երգում.
Գնա՛—թող յոգնած, ալեգարդ գլխիդ
Անգեր և մրրիկ որոտան ուժգին,

Ուրախ ժպիտը վսեմ՝ երեսիդ՝
 Լի յուսով նայիր դու ապագային.
 Գիտեմ, վիճակըդ դառն է, թունաւոր,
 Բայց դու անվճատ, ազգ իմ ալեւոր,
 Ա՛ղբ իմ ցաւատանը
 Գրնա՛ միշտ յառաջ:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ.

8 մարտի 1890 թ.

Մոսկուա.



„Մ Ա Ռ Գ Օ“

(Պատկեր ժիւլ Կլառեսսի:)

I.

Ժամանակ առ ժամանակ հասարակաց կանայք զգում են անկեղծ, ազնիւ սիրոյ պահանջը, խիական հրջանկութեան ծարաւը. կօկօտը-կին չէ, նա հասարակութեան անդամ չէ. նորա կեանքը մի ամփոփ բանաստեղծական զրոյց է, զրոյց աբասուքների և թշուառութեան: Մառզոն, ժամանակով հռչակաւոր Մառզոն, նոյնպէս սիրել էր, սիրել անկեղծ, ազնիւ զգացմունքով. նա նոյնպէս յիշում էր իւր բաղդաւորութեան, հրջանկութեան անգարծ կորած օրերը... Մի քանի ատրի սրանից առաջ վերին հասարակութեան կօկօտ կանայքը սովորութիւն ունէին յաճախել տօն օրերը ստոր դասի, ռամկական պարահանդէսները: Նոքա մանուկ էին հասարակ աղախնի համեստ շորերով: Երեւելի, հռչակաւոր Մառզոն կատարում էր մի ուր և իցէ Միմի Պենսօնի զերը և ուրախ, զուարթ խմում էր փոխանակ սովորական թանկագին շամպայնի հասարակ, ջրով խառնած գինին:

Մի գեղեցիկ երեկոյ Մառզոն իւր ընկերուհի Մարիի հետ այցելեց այդ պարահանդէսներից մէկը: Նոքա

իսկոյն նկատեցին այնտեղ երկու գեղեցկակազմ, նոր շորեր հագած, ռամիկ բանւորներ, որոնք իրենց ձեւերով և խօսակցութիւններով ականրե կերպով զանազանվում էին հասարակ ամբօխից: Դեռ չէր անցել 10 ըոպէ անգամ և ահա մեր կոկօտները նստած էին մի սեղանի մօտ իրենց այդ երկու բանւոր բարեկամների հետ և կոնծում էին անհամ գինին: Մառգոյի մօտ նստած բանւորը՝ մի վայելչակազմ երիտասարդ, ոչ աւելի քան 25 տարեկան, արեւառ երեսով և մեծ, կլոր, այրող աչքերով — չէր դարձնում Մառգոյից իւր թափանցող հայեացքը:

— Դուք ի՞նչ տեղ էք բան տնում... ձեր ձեռները այնպէս սպիտակ են... երեւի, դուք ղերձկուհի՞ եք...

— Ոչ:

— Ծաղկեգործ էք:

Բանւորի ձայնը դողում էր: Երբ Մառգոն և նորա ընկերուհին տուին նոցա իրենց հրաժարականը, երիտասարդը բոլորովին տխրեց:

— Արդէն դուք թողնում էք մեզ... այդպէս վաղ... ինչո՞ւ...

— Ես ազատ չեմ... ապրում եմ աղքատիւներիս մօտ... իսկ արդէն շատ ուշ է, — կեղծեց Մառգոն. բայց դուք ի՞նչ տեղ էք ապրում... ես, կարելի է, որ... այցելեմ ձեզ...

Երիտասարդ բանւորը տուեց իւր հասցէն. նորա տունը շատ մօտ էր արիստօկրատների Ռէն-Բլանշ-Մօն-մառառից, մի մեծ տուն, ուր բնակվում էին միայն արհեստաւորները... նա ապրում է ամենավերին յարկում... նորա անունը Ժակ Ռեաօն է, նա փորագրող է և աշխատում է մի պատկերազարդ թերթի խմբագրութեան համար:

II.

Առաջին անգամ, երբ Մառգոն այցելեց Փակին, դուռը նորա առաջ բացեց մի պառաւ կին, բարի և համակրական երեսով. դա Փակի մայրն էր: Նա միշտ չէր ապրում իւր որդու հետ. նա եկել էր գիւղից. պառաւը այրի էր և բնակում էր այնտեղ, դիւղում, իւր հանգուցեալ մարդու ազգականների մօտ: Պառաւի երեսի ժպիտը շփոթեցրեց Մառգոյին:

— Դուք, երեւի, եկել էք ձեր ապսպրածի ետեւից... բայց որդիս այս քանի ժամանակ է շատ քիչ է աշխատում... նա դարձել է բարկացկոտ, ներդոտ... նա շատ վատ է զգում իրեն, մանաւանդ այն օրից...

— Այն օրից... չլինի, երբ բարեկամացանք մենք, — անցաւ Մառգոյի մաքով:

Ինքը Փակը սաստիկ ուրախացաւ, երբ տեսաւ Մառգոյին: Նորան երկար չտեսնելուց նա բոլորովին հիւանդացել էր: Մառգոյի փոսփորային, սուր կրակով փայլող աչքերը միշտ յուզում էին, շփոթում էին խեղճ փորագրողին... նորա թարմ-կարմրագոյն շրթունքները, սպիտակ մարմարոնեայ ձեռները և այդ սքանչելի շիկագոյն մազերը... ո՛հ... միթէ Փակը կարող էր մոռանալ այդ բոլորը...

— Ինչպէս... այդ վո՞ւք էք... Որքան բարի էք, օրիորդ:

Եւ նոքա ստէպ, շատ ստէպ տեսնվում էին միմեանց հետ: Ինչպէս ուրախացած բաժանվում էր Մառգոն իւր ամենօրեայ արտաքուստ փայլող, շլացնող կիսնքից և շտպում էր այս աղքատների թաղը, այս փոքրիկ սենեակը հինգերորդ յարկում... Այդ իդէալական սէրը շարունակուեց ամբողջ երկու ամիս: Երբեմն երկու սիրահարներն ուղղւորվում էին դէպի դաշտը, քաղա-

քից զուրս. այդ միջոցներին Մառզոն ընտրում էր միշտ մի այնպիսի խուլ տեղ, ուր չէր կարող պատահել իւր վերին հասարակութեան պատկանող երիտասարդ ծանօթներին. նոքա շատ անգամ ճաշում էին այնտեղ և կամ վարձելով երկու ջորի, բարձրանում էին մօտակայ զառիվայրը. նոքա ուրախ էին, երջանիկ կերպով երգում էին մինչև անգամ...

Ամեն ինչ այստեղ հետաքրքրում էր, զբաղեցնում էր Մառզոյին. նա մինչև անգամ սկսել էր սիրել, գոնէ մի քիչ, այդ ղեղեղիկ, ուժեղ, վառվռուն երիտասարդին: Մի երեկոյ, երբ Մառզոն այցելեց ժակին, սա ընդունեց նորան սովորականից աւել ուրախ կերպով: Ինքը երիտասարդ փորագրողը մի քիչ յուզուած էր, մի քիչ անհամարձակ, բայց ուրախ, անվերջ ուրախ...

—Դու գիտես, Մառզօ,—նկատեց նա լրջօրէն,—որքան ջերմ սիրում եմ քեզ... դու ինձ համար կնոջ իդէալ ես... եթէ, Աստուած մի արասցէ, մենք երբ և իցէ բաղդի բերամք բաժանուինք, ես անկարող կըլինիմ տանել... աստ, ուրեմն, ինձ, Մառզօ, աստ անկեղծ, կարո՞ղ ես դու դառնալ իմ կինը...

—Քո կինը...

Նա գունաթափուեց և ուղղակի նայեց ժակի աչքերին. Մառզօն կարծում էր, թէ երիտասարդը ծաղրում է նորան:

—Դո՞ւ... կամենում ես ինձ հետ ամուսնանա՞լ... մտածե՛լ ես արդեօք այդ մասին... իսկ մայրդ...

—Օ՞հ... ես վաղուց խօսել եմ նորա հետ... նա գիտէ, որ դու աղնիւ աղջիկ ես և ապրում ես քո թևերի աշխատանքով... մայրս համաձայն է... հասկացիր, Մառզօ, որ նա կամենում է միայն իմ բաղդաւորութիւնը:

—Դառնալ քո կինը, —մեքենայաբար կրկնում էր շուարած Մառզօն. նա վախեցաւ մերժել ժակի առա-

Ջարկութիւնը և զրանով վերջ տալ իւր սիրահարական յարաբերութիւններին, որ ունէր նորա հետ և որ այնքան բազդաւորեցնում էր ճշմարիտ անբաղձ Մառգոյին: Նա շէնջեց մի քաղաքապարի-պաշածեական պատասխան. իհարկէ... նա համաձայն է.. ժակը այնպէս ազնիւ է.. բայց հարկաւոր է իմաց տալ ծնողներին.. ստանալ նոցա օրհնութիւնը.. պահանջել ծննդական թղթերը...

— Լաւ.. լաւ.. սիրելիս.. միայն շտապիր նամակովք.. մհ.. որչափ ես սիրում եմ քեզ.. մենք երջանիկ կըլինինք.. շատ երջանիկ... ա՛յ, կըտեսնես.. հոգեակս..

III.

Ինչպէս վարուէր այս դէպքում, Մառգոն ինքն էլ չգիտէր. խեղճ աղայ, որչափ սիրում էր նա, որչափ հաւատում.. ժամանակը ամեն ինչ կըվճռէ,—վերջացրեց իւր մտածողութիւնները Մառգոն և սկսեց սպասել, համբերել...

Այդ միջոցին նա աւելի կապուեցաւ, աւելի սիրեց գեղեցիկ փորագրողին:

Ինքը ժակը, ստանալով Մառգոյի համաձայնութիւնը, անվրդով սպասում էր պսակի օրին:

— Բայց ինչո՞ւ այդպէս երկար չեն պատասխանում Մառգոյի ծնողները.. չեն ուղարկում հարկաւոր թղթերը.. բայց երեւի նոքա հարց ու փորձ են անում ժակի մասին.. լաւ մարդ է՞ արդեօք... Մառգոյի ծնողները բոլորովին չեն ծանաչում նորան.. ճօ.. նոքա իրաւացի են, — այսպէս հանգստացնում էր ինքն իրեն ժակը: Մի երեկոյ նա վերցրեց տոմսակ և գնաց թատրոն. խաղում էին մի նոր պիեսա. վարագոյրը իջաւ և ժակը կամենում էր գնալ ցած, երբ նորա ուշադրութիւնը գրաւեց

դահլիճում խռնուած ամբոխի շարժողութիւնը. նա նա-
յից այն կողմը, ուր նայում էին և ամենքը. օթեակում,
որ գտնվում էր Ժակի հանդէպ, երեւցաւ մի մարդ, որ
այդ բոպէին գրաւել էր ամբոխի ուշադրութիւնը և որին
ամենքը խոնարհ կերպով գլուխ էին տալիս. այդ մարդը մօ-
տեցրեց իրեն թաւշեայ բազկաթոռ և ձգելով մի թռու-
ցիկ հայիացք հանդիսականների վերայ, առաւ մօտա-
ցոյցը և ուղղեց երկրորդ կարգի օթեակներից մէկի վերայ:
— Տեսէք.. տեսէք.. նա նայում է Մառգոյի վերայ..
և կարծես անբաւական է նորա ներկայ գտնուելուց, մըրթ-
մըթում են Ժակի հարեան հանդիսականները:

— Մառգօ,— մեքենայաբար հարցնում էր նրանցից
Ժակը:

— Սա.. Մառգօն.. նրա սիրահարը...

Գործողութիւնը սկսուեց. անցաւ ¹⁾ ժամ. վարա-
գոյրը թողեցին. Ժակ-Ռեատօնը իջաւ ցած և մտաւ թատ-
րոնի դահլիճը. նա ցանկանում էր տեսնել նորան, որին
չէր կարող համակրել իբրեւ բուն հասարակապետական.
նա նոյնպէս ցանկանում էր տեսնել այն հրաշագեղ
Մառգոյին, որի մասին խօսում էր ամբողջ Պարիզը.
նա մօտենում է օթեակին, այնտեղ մութ է. օթեակի
փոքրիկ վարագոյրը թողած են ցած. ոչինչ չէ տեսն-
վում. Ժակը լսում է միայն ձայներ, շշնջոց.. նորա սիր-
աը սկսում է զարկել և աւելի շուտ... Աստուած իմ,
որքան նման է այդ ձայնը իւր հարսնացուի ձայնին...
ի՞նչ տարօրինակ դէպք... միթէ իմ Մառգօն և այս
Մառգօն, այս կայսրապետականի, այս նախարարի սիրա-
հարը.. ո՛չ.. ո՛չ...

Ժակ-Ռեատօնը աշխատում է մի բան տեսնել մութ
օթեակում... ի զուր.. այն ժամանակ նա մոռանում է
ներկայացումը և վազում է դէպի օթեակների սրահը.
այստեղ նա վճռում է սպասել այդ Մառգոյին:

Ահա վերջացաւ ներկայացումը. փայլուն շորերով սպասուորը մօտենում է օթեակի գոներին. նա բռնած ունի մի թանկագին մետաքսեայ շոր. նա նոյնպէս երեւի սպասում է Մառգոյին. ահա բացվում է օթեակի դուռը... Այո... այո... այդ նոյն իսկ Մառգօն է... Ժակի գեղեցիկ, շեկագոյն մազերով Մառգօն. սեւ թանկագին շորը հագին, մի քիչ զուռնաթափ երեսով, նա փառաւոր անցնում է Ժակի առաջեց... Երիտասարդի արիւնը զարկում է գլխին. նա կամենում է յարձակուել նորա վերայ. խեղդել... Բայց Մառգօն, նկատելով այդ, առնում է մի բարձրահասակ, երկայն, սպիտակ բեղերով պարոնի թևը և շարունակելով իւր խօսքը բարձրաձայն ծիծաղելով, հնչում է Ժակից. Երիտասարդը մնաց քարացած. նա ոչ ոյժ ունէր շարժուելու, ոչ կամք...

— Կարելի է նա չէ... կարելի է ես սխալուեցայ, — շնչում է նա մեքենայաբար:

— Բայց ոչ... նա է... նա... ես ճանաչեցի նորան... այդ ծիծաղը, այդ ձայնը, աչքերը...

Եւ նա խելագարի նման վազեց Մառգոյի ետեւից. մի կառք հնչում էր այդ լուռէին թատրոնի զլխաւոր մուտքից. Ժակ-Ռեանը ոչինչ չկարողացաւ իմանալ...

IV.

Այդպէս անվրդով, այդպէս հանգիստ նայելով Ժակի վերայ, Մառգօն կամենում էր հաւատացնել նորան, որ ամբողջ Պարիզին ծանօթ, յայտնի կօկոտ Մառգօն և խեղճ ծաղկեգործ Մառգօն — միեւնոյն անձնաւորութիւնները չեն. այնու ամենայնիւ նա վաղը կը տեսնէ Ժակի ընդունելութիւնը...

Կամոց, հաղիւ լսելի կերպով, զարկեց նա Ժակի

դուսը. շեմքում երևեց ինքը փորագրողը. սպիտակ հասարակ շորերով կանգնած էր նորա առաջ նորա գեղեցիկ հարսնացուն: Երիտասարդը գունաթափուկեց. նա աշխատեց ժպտել:

—Ախ.. դժեւ էս, — արտասանեց նա:

—Սյո.. ես եմ:

Մառգոն շտապով հանեց իւր վերարկուն և ձգեց մի փորագրական, արդէն պատրաստ քարի վերայ: Երբէք նորա գեղեցկութիւնը այնչափ հրաշալի չէր, ինչպէս այս օր: Ժակը մօտեցաւ նրան և դրեց իւր ձեռք նորա ուսին:

—Նայիր ինձ.. նայիր ուղիղ.. զիտե՛ս դու, խեղճ, աղքատ, բայց ազնիւ ծաղկեգործ աղջիկ, գիտե՛ս, թէ ինչ է անբարոյական, հասարակաց կինը..

—Հասարակաց կինը:

—Սյո, այնպիսի մի կին, որ աճուրդով ծախում է իւր մարմինը, որ ամենքին խաբում է, սնանկացնում է և շատերին հիւանդացնում: Մի կին, որի մօտ ամեն ինչ շինծու է, ամեն ինչ-կեղծ և օտար է—տուն, ձիւր կառք, բնակարան, թանկագին քարերն, մինչև անգամ գլխի մսւկերը.. այժմ ճանաչեցիր դու այդ հասարակական կոհոսին..

—Ե՛ս.. ոչ.. ես չգիտեմ:

—Ահ.. դու չգիտե՛ս.. հա՛.. հա՛.. հա՛.. տես.. զուարճացիր..

Երիտասարդը բռնեց նորա մազերից և հրեց դէպի հայելին:

—Դու չե՛ս ճանաչում այդպիսիներին.. տես ուրիմն, — արտասանեց Ժակը մի խեղդուող, խռպոտ ձայնով:

Մառգոն տեսաւ հայելու մէջ իւր մեռելային սպիտակութիւնով ծածկած երեսը, տեսաւ և Ժակի երեսը. նա սաստիկ, սաստիկ այլանդակուած էր: Երիտասարդը

բռնեց Մառգոյին և մօտեցնելով տան շեմքին, ձգեց նորան փաղոցի սալայատակի վերայ:

—Սյժմն կորիր... լսեմ ես... յաւիտեան կորիր..

Մառգոն վերադարձաւ իւր շքեղ, փառաւոր ապարանքը. նա տխուր էր. նա սիրել էր այդ ազնիւ, աշխատաւոր երիտասարդին. այս ընդէիս այդ սէրը կրկնապատկուեցաւ նորա սրտում: Անցան ամիսներ. նա գիտ յիշում էր իւր Ժակին. բայց ժամանակը ամեն բան տանում է իւր հետ ամեն, ինչ բժշկում է. նա բժըշկեց և Մառգոյի սրտի վերքը:

Սյժմ, երբ անցաւ մի ամբողջ տարի, Ժակի հետ ունեցած սիրահարական յարաբերութիւնները Մառգոյին թւում էին իբրեւ անցած-գնացած երազներ...

Մի առաւօտ խառնելով ծառայի բերած ծրարները, Մառգոն նկատեց մի փոքրիկ, կոպիտ թղթից շինած ծրար, որ զանազանվում էր իւր փայլուն, թագերով զարդարուած հարկաններից..

Սյղ—հրաւիրատոմն էր:

«Տիկին Ռեատօնը, —կարդաց Մառգոն, —պատիւ ունի հրաւիրել ձեզ իւր Ժակ որդու հարսանեաց խնջոյքին, որ պսակվում է օրիորդ Ժաննա Կօմէնի հետ: Պատկադրութեան հանդէսը լինելու է Պելվելի եկեղեցում, 18...թ յունիսի 30-ին»:

Միայն ցուլիսի 7-ին հրաւիրատոմը ընկաւ Մառգոյի ձեռք. ուրիմն անցել էր մի ամբողջ շաբաթ, ինչպէս Ժակը ամուսնացած էր: Մրարի մէջ կար մի զեղնած, չորացած ծաղիկ, դա յասմիկ էր. նրան երբեմն առել էր Մառգոն Ժակին, առել էր իւր անկողն բազդաւորութեան օրերում.. Պարիզի կօկօտը, Պարիզի վերին հասարակութեան երիտասարդների համար ապրող կօկօտը նորից կարդաց նամակը, վերցրեց չորացած յասմիկը և խորը հառաչեց..

ԽՂՃԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ

(Հոգեբանական պատկեր.)

I.

Իմ կալուածներիս մօտ զանգում էր յայտնի հոգեկան ցաւերի բժիշկ Անտօնիօ Բառբիքանի փոքրիկ կալուածք-ազարակը: Պարոնը իմ բարեկամս էր. նա կառավարիչ էր Պարիզի շրջակայքում գտնուող խելագարների մի տան. մի ահագին ստուերախիտ ծառատան շրջապատում էր այդ տխուր շինուածքը և իւր մի անկիւնով կպչում էր իմ փոքրիկ պարտիզէս: Մինք երկուսս էլ սիրող-ձկնորսներ էինք: Մինք ունէինք մի փոքրիկ լաստ, որ լողում էր Մառնա գետում..

Նետաքրքրուելով այլ և այլ հոգեբանական խննդիրներով, ես ընդունեցի բժշկի սիրալիր առաջակութիւնը և ամեն ազատ րոպէներիս այցելում էի խելագարների անկիւնոցը: «Ճանդարտ» հիւանդներից, որոնք արձակ զբօսնում էին ծառաստանի ճեմէիքներում, միայն մէկը գրաւեց իմ ուշադրութիւնը, պատճառը այդ հիւանդի երեսի, կարծես, մեռած, քարացած անշարժութիւնն էր. այն երեսի, որ չէր կրում իւր վերայ ոչ մի արտայայտութիւն. այդ աւելի ստոր էր, քան աննպատակ թմրութիւնը.. այդ մահ էր.. մահ կեանքի ժամանակ..

Ես սա էպ տեսնում էի նորան թուլացած, թմրած նստած մի նստարանի վերայ, ուր նորան բերում էին

վաղ առաւօտեան ծառաները և գիշերը յիս տանում։ Նորա նիհարացած մարմինը զողում էր ամենափոքր քամու շարժողութիւնից, նորա գլուխը թեքվում էր կրծքին, կապոյտ աչքերը սկսում էին նայել մի աղօտ, մեքենայական հայեացքով, և կիսաբաց բերանը այդպիսի լուպէներին զրկվում էր ամեն ինչացի արտայայտութիւնից։ Երբ առլիս էին նորա անունը, նա ձայն չէր հանում։ Երբ զիպչում էին նորան, նա չէր զգում։ Նորան անուննում էին Ժօռժ։

Որքան ես «հաւատացող» էի, այնչափ էլ բժիշկը անհաւատ - պօզիտիվիստ էր, և մենք համարեա միշտ վիճում էինք մէկ մէկու հետ և ի զուր աշխատում փոխադարձաբար փոխել մեր համոզմունքները և կարծիքները։ Մի անգամ, մտաբերում եմ, բժիշկը իւր դատողութեան, իւր ապացոյցների առողջամիտ լոգիկական ուժով համարեա հարկադրեց ինձ կարծես բոպէական ոգևորութեան ներքոյ բարձրաձայն բացազանչել։

— Բայց, պ. բժիշկ, կարծեմ, դուք չէք կարող չընդունել, որ խղճի խայթոցները, մարդուս ներքին ձայնը, դատաւորը հետեանք է Աստուածային նախախնամութեան։ այդ մի բարոյական ոյժ է, որ անհանգիստ է անում ոճրագործին մինչև անգամ այն բոպէին, երբ ոչինչ չէ սպասում նորան, մի ոյժ, որ ամեն գիշեր երեւան է հանում, պատկերացնում է սպանողի աչքերի առաջ նորա թշուառ զոհի արիւնոտ կերպարանքը, որ անվերջ, անվերջ անհանգստացնում է զատապարտեալի հոգեկան անդորրութիւնը, այնպէս որ, նորա ապաշխարութեան, անկեղծ, սրտանց ապաշխարութեան օրը դառնում է նորա համար ազատութեան օր... Մի թէ, պ. բժիշկ, ձեր կարծիքով, այդ ահեղ ոյժը միմիայն ուղեղային երևոյթ է...

Բժիշկը բարձրացրեց իւր գլուխը։

—Խղճի խայթոցներ, ասում էք դուք, —նկատեց նա մի տխուր անսովոր ձայնով:

Նա լռեց. իսկ ես կարծեցի, որ համոզել եմ նրան:

—Դուք լուռ էք... ուրեմն դուք համաձայն էք ինձ հետ:

—Ամենևին... միայն այդ «խղճի խայթոցներ» խօսքը, որ դուք այս ընդհանուր արտասանեցիք, դարձրեց, գրաւեց իմ ուշադրութիւնը... դիտէ՛ք... ես ահա մի տարի է, ինչպէս ուսումնասիրում եմ այդ հարցը և յուսով եմ փաստերով տպագրուցանել ձեզ, պարոն, որ նա — ճիշտ ուղիղային երևոյթ է, ինչպէս և ամեն ինչ մեր մէջ, և յուզում է մարդուս ամբողջ ջղային կազմուածքը:

—Ապացուցէք, բժիշկ, և ես կըխօստովանիմ, որ յաղթուած եմ...

Ուսումնական պարոնը լռեց և ընկաւ մտածողութեան մէջ:

—Դուք ազատ է՞ք այս գիշեր, —գարձաւ նա ինձ, սեղմելով ձեռք:

—Այո... —բայց ի՞նչ էք կամենում:

Ուրեմն, եկէ՛ք իմ հիւանդանոցս... դուք կըտեսնէք այնտեղ բաւականին հետաքրքիր երևոյթ...

—Զինի որ խղճի խայթոցների վերաբերեալ:

—Իսկ և իսկ:

—Ցտեսութիւն, բժիշկ:

—Ցտեսութիւն...

II.

Փամը գիշերուայ 10-ն էր, երբ ես և բժիշկ Բանբիքանը հիւանդանոցի երկու բարձրահասակ, ուժեղ սպասաւորների հետ անցանք ծառաստանի գլխաւոր ձի-

մեկը և ուղղեորուեցանք դէպի «անհանդիստ» հոգեկան հիւանդների բաժինը. մենք լուռ էինք և ես զգում էի ինձ շատ վատ. մեր շուրջը ամեն ինչ քնած էր խոր գիրեղմանական քնով. ծառերի տերեւները անգամ չէին շարժվում. օդը ծանր էր. մրրիկը սպառնում էր. այդ գիշերային լուսթիւնը զարհուրելի էր. ինձ թվում էր, թէ ես մանում էի մահուան և մեռածների աշխարհը... և... կարծեմ... ես չէի սխալվում...

Անցնելով կանանց բաժնի սրահով, մենք լսեցինք մի մեղեդի: Ձայնը պարզ և վրձքային էր. բայց այդ գիշերային լուսթիւան մէջ նա հնչում էր մի զարմանալի միակերպութեամբ. երգողը մի երիտասարդ խելագար կին էր. նա ոգևորուած երգում էր Ամենասուրբ Տիրամօր մաղթանքը...

Սպասաւորները կանգ առան մի քառանկիւնի շինուածքի առաջ, նոցանից մէկը բացից կողպած դուռը, և մենք մտանք մի մութ սրահ, ուր նայում էին անհամար փոքրիկ զռներ. ամեն մէկը դոցանից տանում էր մի առանձին սննեակ, որ ունէր իւր համարը. սրահի յատակը քարած էր և մեր քայլերը հանում էին մի խուլ ձայն:

— Մենք եկանք, — նկատեց պահապան սպասաւորներից մէկը և կանգ առաւ մի փոքրիկ դռան առաջ, որի վերայ կարելի էր նկատել 18-րորդ համարը:

— Բացէք, — հրամայեց բժիշկը:

Սպասաւորների ձեռների լապտերները լուսաւորեցին մի փոքրիկ սննեակ. մի հայեացքով ես կարողացայ քննել նորա կահ կարասիքը և զարդարանքը. սպիտակ պատեր, քարած յատակ, առաստաղի մէջ մի փոքրիկ վանդակով պատած լուսամուտ, մի սեղան, աթոռ և փայտեայ բազկաթոռ, որ կայքրած էր յատակին երկաթեայ օղակներով: Սննեկի խորքում, անկողնի մէջ, պառկած էր

Ժօռժը. նա քնած էր մի խոր համարեա մեռելային քնով. բայց և ատամներից զուրկ բերանը նմանում էր մի սև ճեղքի այդ, կարծես սպիտակ, մեռած հրեսի վերայ. կըրծքի վերայ խաչած ձեռները, երկարեցրած ոտները, մարմնի տարօրինակ, կարծես, սպառնող զիրքը—այդ ամենը ներկայացնում էր մի տենդային պատկեր. կարծես Ժօռժը դիակ լինէր, բայց մի քանի քայլ առաջ և դուրս կարող էիք նկատել սառանի միակերպ ել և էջը—խեղագարի շնչառութեան հետեանքը:

Տեսաբլբլուած, վախեցած, ևս դարձայ բժշկին. նա խաչել էր ձեռները կրծքին և մի լուրջ ուշադրութեամբ դիտում էր հիւանդին. իսկ դռների մօտ քնաթաթախ, անվոգով երեսներով կանգնած էին սպասաւորները. նոքա չէին նայում անգամ հիւանդի կողմը. երեւի, նոցա չէր զբաղեցնում այդ տեսարանը. ժամացոյցը խփեց տասն ու կէս, այդ րոպէին սպասաւորներից մէկը դարձաւ իւր ընկերին.

—Կէսը. իսկոյն կըսկսուի:

Բառերքանը մօտեցաւ ինձ, բռնեց ձեռս և հազիւ լսելի ձայնով շշնջեց ականջիս.

—Ուշադրութիւն:

Ես դարձայ Ժօռժի կողմը և, համարեա, ¹/₂ ժամ դիտում էի նորա երեսը. իմ սիրտս, մարմինս, մաքերս —ամեն ինչ, կարծես, մասնակից էր այն ահիզ, գաղանի զրամային, որի առաջին գործողութիւնը իսկոյն պիտի սկսուէր և ուր հանդիսանում էր միայն մէկ դերասան —ոճրագործը, որ գործել էր անհասկանալի սակայն ահիզ եղեռնագործութիւն և որը սարսուռ էր ձգում այս րոպէիս ինձ վերայ... Կեանքումս ինձ պատահել է ականատես լինել զարհուրելի, սիրտ պատառող տեսարանների, բայց, երբեք իմ, ևս երբէք տեսած չեմ մի բան, որ գէթ մի քիչ յիշեցնէր այս արդէն, կարծես,

հոգեվարք, մեռած ժողովին, որ յարութիւն էր առնում միայն նորա համար, որ կրկնէ իւր սառնանայական եղբնազործութիւնը...

Այո, երբ լռեց պատի ժամացոյցի վերջին զարկը, այդ ժողովը, այդ դիակը յարութիւն առաւ, յարութիւն — կեանքի, զգացողութեան և մտածողութեան համար: Նա արագ վեր թռաւ անկողնից. նորա միշտ բաց բերանը փակուեց և շրթունքների մօտ երևեցին փոքրիկ ծառածքներ, կնձիռներ, որոնք տալիս էին նորա երեսին ուժի արտայայտութիւն. նորա աչքերը, այդ անփայլ աչքերը, սկսեցին ցոլալ մի սուր, սպանող, փոսփորային կրակով: Եւ ես հասկացայ, որ նա ոչ ոքին և ոչինչ չէ տեսնում իւր շուրջը. նա ապրում էր իւր լուսնական ցնդրով. բայց ինչ և իցէ, նորա ամեն շարժողութիւնը կրում էր իւր վերայ իրականութեան սարսափելի կնիքը:

Նախ և առաջ, դեռ նստած անկողնում, նա սկսեց մտիկ տալ նայել իւր շուրջը և յետոյ կարծես համոզուելով, թէ ամեն ինչ քնած է, նա շտապով վերկացաւ անկողնից:

Նորա չորացած, կարծես, կմախքի ոտները նորից ստացան կենդանութիւն. ելեկտրականութեան կայծը կարծես անցած լինէր նորա անդամներով: Ժողովը սկսեց իբրեւ թէ հազնուել, յետոյ ծնկաչոք ընկաւ քարայտաակի վերայ և խաչելով ձեռները, նա սկսեց աղօթել. նորա աչքերի ցոլքը սասակացաւ: Խաչակնքելով երեսը, նա վերկացաւ տեղից և սկսեց բարձրանալ սանդուղքներով գոնէ ցոյց էր տալիս, որ բարձրանում է. ինքը չէր շարժվում տեղից, բայց նորա երեսի շարժողութիւնը, միմիկան այնպէս ներգործում էին ինձ վերայ, որ իրականութիւնը անհետացաւ իմ աչքերից, ես ոչ սենեակն էի տեսնում, ոչ բժշկին և ոչ էլ սպասաւորներին: Ես տեսնում էի միայն մի զարհուրելի արարած և դիտում էի նորան: Ես մեքենայաբար հետևեցի նորան և երբ ժողովը բացեց

երևակայական սենեկի դուռը, ես կանգ առայ նորա հետ դռան շեմքում. և երբ նա մտիկ տալով իւր շուրջը, երևակայում էր, որ բարձրանում է սանդուղքներով, ես նոյնպէս հեռւում էի նորա օրինակին.

Այն, Խրպիսի տրագիքական շարժումներով նա բարձրանում էր այդ սանդուղքներով, ինչպիսի, ճիշտ կատուի, ճարպիկութեամբ կռւանում էր նորա քամակը, որպիսի զարհուրած երեսով նա կանգ էր առնում և սկսում էր մտիկ տալ գիշերային գերեզմանական լուծութեանը...

Մի անգամ նա ցնցողաբար յետ դարձաւ և նայեց ուղիղ ինձ վերայ. այդ հայեացքը, անշարժ, ցոլացող, թափանցող հայեացքը, սարսափեցրեց ինձ... բայց նա չէր տեսնում ինձ... նա կանգ առաւ իւր երևակայական բարձրանալուց... նա բացեց երկրորդ դուռը, և մենք մտանք մի ուրիշ սենեակ: Նա գնում էր զարմանալի զգուշութիւնով և յանկարծ կանգ առաւ. կարծես, նա արձանացաւ. երեւի նա տեսաւ մի բան և նորա երեսը, որ սկզբից զուրկ էր ամեն խելացի արտայայտութիւնից, իսկ յետոյ այնպէս չար էր, այնպէս զարհուրեւի, այդ երեսը նորից կերպարանափոխուեցաւ: Աստուած իմ, ի՞նչ էր այդ անտեսանելի մեղ համար բանը, որի վերայ նայում էր նա մայրական զթութիւնով, կարծես, փաղաքշում էր, զմայլում էր... բայց այդ երկար չ'տեւեց, երեսի փաղաքշող արտայայտութիւնը նորից կորաւ. կարծես, դժոխային թեւ չարչարում էր դժբախտի հոգին և թողնում էր նորան մի լուպէով միայն, որ նորից սկսէ իշխել և տանջել... Գերբնական-սուր և այրող կրակը ցոլաց նորա աչքերում, և մի մութ, աղօտ լուսով լուսաւորեց նորա մահուան սպիտակութիւնով ծածկած երեսը: Միայն ճգնաւորներին սեպհական, ճիշտ Փանա-տիքական ջիւմեռանդութեամբ պարզեց նա իւր ձեռները

ղէպի երկինք և յանկարծ թողնելով նոցա ցած, նա կռացաւ և, կարծես, նկատելով մի բան, բռնեց իւր չորացած մասնելով այդ միայն իրեն տեսանելի, առարկան և սկսեց խեղդել... Ես մինչև անգամ, տեսայ, ինչպէս նորա երակները լցուեցան արիւնով, նորա վեզը կարմրեց. քրտինքը թափվում էր նորա ճակատից. նորա բերանը ցնցողաբար բացուեց, և նա շարունակում էր խեղդել և խեղդել...

Այդ րոպէին ես ինքս սկսեցի ցնորուել... Ես աննշում էի, ինչպէս շարժւում էր նորա ձեռների մէջ մի սպիտակ արարած... ես լսում էի մինչև անգամ խռպոտ, խեղդուող հեկեկանքներ... Ես անկարող եղայ տանել այդ տեսարանին և կամեցայ յարձակուել սպանողի վերայ, բայց այդ րոպէին մէկի ուժեղ ձեռք ակնդ բռնեց քամակիցս և այն միջոցին, երբ բժիշկ Բառբիքանը տանում էր ինձ սենեկից դուրս, ես լսեցի մի սառնանայական, սիրտ պատռող ծիծաղ և գետին փռուող մարմնի խուլ ձայնը...

Ես ոչ այնքան պարզ լսեցի, թէ ինչպէս սպասաւորները անկողին էին պառկեցնում խելագար Ժողովին:

III.

Երբ ես ուշքի եկայ, տեսայ, որ պառկած եմ ծառաստանի նստարաններից մէկի վերայ և բժիշկը հեաքբքբում է նայում է երեսիս: Երկնականմարում չէր երևում ոչ մի ամպ, և լուսինը մի մեղմ-կաթնագոյն լուսով լուսաւորում էր ձեմելիքները, ծառերը և գժանոցի կտուրը: Ես սթափուեցայ, կարծես, երկար, անհասկացիկ քնից և, դառնալով իմ բարեկամիս, արդէն կամենում էի հարց ու փորձ անել, երբ նա ինքն առաջինը սկսեց խօսել:

— Բայց, գիտե՞ք ինչ է, դուք լաւ մանէիք, եթէ

յանձնէիք ինձ ձեր հիւանդ մարմինը. ձեր ներդիրը սաստիկ լարուած են և այդ կարող է ունենալ իւր վտոհ հեռանկները, — և նա ծիծաղեց:

— Ի սէր Աստուծոյ, բժիշկ, ժամանակ չէ ծաղրել. — պատասխանեցի ևս յուզուած, — դուք լաւ է բացատրեցէք ինձ այն ահեղ տեսարանի միտքը, նշանակութիւնը, որին մենք այս րոպէիս ներկայ էինք...

— Ուրախութամբ: Մի քանի ժամ սրանից առաջ մենք խօսում էինք «խղճի խայթոցներին» մասին և դուք, րոպէական յուզմունքի, ոգևորութեան ներքոյ բացատրեցիք այդ երևոյթը, իբրև հեռանկ Աստուծային նախախնամութեան և զօրութեան: Դուք, որքան մտաբերում եմ, ասացիք. «խղճի խայթոցներ երևոյթը, որ անհանգիստ է անում ոճրագործին մինչև անգամ այն ժամանակ, երբ նորան ոչինչ չէ սպառնում, որ ամեն զիշեր կենդանացնում է, պատկերացնում է սպանողի առաջ իւր թշուառ զոհի արիւնոտ կերպարանքը, որ անվերջ մաշում է դատապարտեալին, մաշում է մինչև այն աստիճան, որ անկեղծ ապաշխարութեան օրը դառնում է նորա համար օր ազատութեան — միթէ, ո՞ր բժիշկ, ձեր կարծիքով խղճի խայթոցները միմիայն ճիշտ ուղեղային երևոյթ է և աւելի ոչինչ» — ... Եւ ահա, ես կամեցայ ցոյց տալ ձեզ, ինչպէս այդ իսկ երևոյթները տանջում են, մաշում են մի էակ, որ զուրկ է ամենատարրական բարոյական և մտաւոր ոյժերից, հասկացողութիւններից: Դուք այս րոպէիս տեսաք, այդ խղճի խայթոցների կրաւորական զոհին, մի խելագար, որի զրացողութիւնը աւելի ստոր է, քան որեւիցէ կենդանունը, մի էակ, որ, երևի, կատարել է երբ և իցէ մի զարհուրելի եղևնագործութիւն, այո՛, կատարել է, բայց ակամայ, առանց կշռելու, մտածելու, կատարել է անզգայաբար և ուրեմն մեղապարտ չէ...

—Ուրեմն, պ. բժիշկ, այդ ժողովրդը...

—Ահա նորա համառօտ պատմութիւնը, որ զուրկ է այն գեղեցիկ պայմաններից, այն զրամառիքական դրութիւնից, որոնք շատ ձեռնտու կրկնէին մեզ ժամանակակից վիպասանին: Այս ժողովրդ վերջինն է իւր հին, ազնուական առհասարակ մէջ: Ձեզ, ի հարկէ, յայտնի է, որ խելագարութիւնը աւելի ստէպ պատահում է վերին հասարակութեան մէջ, որովհետեւ այդ փքուն արխատօրատները չեն կամենում խառնուել միւս դասակարգերի հետ, խառնուել պսակով և արիւնով...

Ժողովի հայրը և պապը նոյպէս մեռած էին խելագարութեան մէջ. իսկ ինքը ժողովրդ, իւր սղայութեան և երիտասարդութեան ժամանակ, ոչնչով ցոյց չէր տալիս, որ նորան սպասում է այդպէս թշուառ ապագան:

Նորան վաղ ամուսնացրին մի աղքատ, բայց գեղեցիկ օրիորդի հետ, որ նորա ազգականն էր. կինը պաշտում էր նորան: Ժողովրդ ունեցաւ մի աղջիկ և այդ անմեղ արարածի ծննդեան առաջին օրից իսկ ժողովրդ մէջ կատարուեցաւ մի տարօրինակ փոփոխութիւն. մի քանի ամսից նա խելագարուեց. նորա խելագարութիւնը հանգիստ էր, բայց իմ կարծիքով, այդպիսի հիւանդներին միշտ հարկաւոր է պահել առանձին, որովհետեւ այդ արտաքին հանգստութեան տակ շատ անգամ թագնւում են ամենակատաղի ձգտումներ: Ժողովի հիւանդութիւնը օրէ օր սաստկանում էր. նորա կինը չէր լսում բժիշկների խորհրդներին և շարունակում էր ապրիւ նորա հետ միասին: Ինքը ժողովրդ բնակում էր իւր հոյակապ ամրոցի կից փոքրիկ տնակում. նա աշխատում էր առանձնանալ, սպանել իւր կենսատու ոյժերը. կինը չէր թողնում նորան և խեղճ խելագարը ջերմ սիրում էր միայն իւր փոքրիկ աղջկան. եթէ փոքրիկը սկսէր փաղաքշել

իւր անմեղ ձևներով մօրը, Ժօռժը կատաղում էր, սկըտում էր նախանձել...

Սյդպէս անցան ամբողջ տարիներ:

Հասաւ վերջապէս և այն օրը, երբ Ժօռժի աղջիկը պիտի ընդունէր առաջին անգամ Սուրբ Հաղորդութիւնը: Ժօռժը այդ միջոցին զգում էր իրան աւելի լաւ: Ամենքը նկատեցին, որ ժամասացութեան ժամանակ նա աղօթում էր անսովոր ջիւմեռանդութիւնով, և երբ նորա աղջիկը մօտեցաւ սեղանին, նա սկսեց յուզուել, ցնորուել... Նորան դուրս հանեցին եկեղեցուց... բայց, այնուամենայնիւ, նա հանգստացաւ, այնպէս որ, կարողացաւ ներկայ գտնուել ընտանեկան ճաշին, և երբ երեկոյեան ժպիտը բերին նա թողեց ամրոցը, բարի մարդիկ ասում էին, որ հրեշտակի աղօթքները հրաշք գործեցին և առողջացրին զժապով հօրը: Բայց այդ ամենը շինծու խաբեքայութիւն էր խելագարի կողմից:

Սյդ իսկ գիշեր, երբ հիւրերը արդէն քնած էին ամրոցում, Ժօռժը տանջուելով իւր *idée fixe*-ից, վերկացաւ իւր անկողնից, բարձրացաւ աղջկայ սենեակը և յարձակուելով նորա վերայ, սկսեց անողորմ խեղդել նորան... այո, նա, հայրը, խեղդեց իւր հարազատ աղջրկան: Ժօռժի սենեկում միւս օր գտան մի նամակ. այնտեղ խելագարը յայտնում էր, որ խեղդելով իւր զաւակը, նա ապահովացնում է նորա յաւիտենական երջանկութիւնը: Սպանելով նորան նոյն իսկ բոսկին, երբ Գրիստոսի արիւնը սրբազործում էր նորա մեղաւոր մարմինը, թշուառ ցնորուածը կարծում էր, թէ կարող է դարձնել իւր աղջկանը—հրեշտակ:

—Սյդ սարսափելի է, —շշնջեցի ևս, ակամայ ցընցուելով:

—Սյո, —պատասխանեց բժիշկը, —բայց ևս, ուրբան կարող եմ, պակասեցնում եմ խեղճի տանջանքները:

Գործելով այդ սպանութիւնը, ժողովը ուշաթափ ընկաւ գետին. երբ նա ուշքի եկաւ, նա արդէն չէր ապրում, այլ միայն կառուրում էր Ֆիդէլքական կեանքի անհրաժեշտ պահանջները. նա դարձաւ խելացիոր...

— Իսկ այս գիշեր... այս գիշեր ի՞նչ էր...

— Իսկոյն մենք կը պարզենք և այդդ էպքը. նրանում է և և այս հետաքրքիր հարցի լուծումն: Արդէն անցել է ամբողջ 10 տարի այն օրից, երբ ժողովը խելոյել էր իւր աղջկանը, 10 տարի է, ինչպէս նա հիւանդանոցում է և ի՞նչ, այդ 10 տարուայ միջոցում— ամեն գիշեր, նոյն իսկ ժամին, երբ պատահել էր այդ հղեռնագործութիւնը, մի գաղանի, գերբնական դժ յարուժիւն է տալիս այս համարեա մեռած ժողովին. նրանում նորից նշմարվում են զգացմունք, ինքնաճանաչութիւն, խիղճ, դատողութիւն և միտք. նա նորից սկսում է ապրել անցուցանել այն զարհուրելի գիշերը իւր բոլոր մանրամասնութիւններով: Նա բարձրանում է սանդուղքներով, մտնում է աղջկայ սենեակը, և 10 տարի, ամբողջ 10 տարի այդ թշուառ հայրը սպանում է իւր հարապատ զաւակը: Նա ճիշդ ամենապինդ շապիկները, ամենահաստ կապանքները... Ես հրամայեցի, որ նորան ազատ թողնեն. թէ ոչ այն ցնցողական, մարդուս ուժից վեր շարժողութիւնները իրան ազատելու համար— կարող են ունենալ մահացու հետեանքներ. ժողովը կը մեռնէր, կրկնելով վերջին անգամ իւր զարհուրելի սպանողութիւնը, նա կրվում էր գետին նոյնպէս, ինչպէս փռուեցաւ այսօր ևս, բայց սպանուողները կը բարձրացնեն միայն նորա անշունչ դիակը...

Բժիշկը լռեց, և մենք երկուսս էլ ընկանք մտածողութեան մէջ: Յանկարծ գիշերային լուսութեան մէջ լսուեցաւ մի կանաչի ձայն, նոյն իսկը, որ ես լսել էի արդէն երեկոյեան: Կարծես, երեան հանելով իւր սրտի խո-

ցը, անվերջ ցաւերը, կարծես աղօթելով, այդ կինը մեղմ
երգում էր. «Requiem aeternam dona ei, Domine!...»

— Եւ այդպէս, — շարունակեց բժիշկ Բառբէքանը
պարզ և հաստատ ձայնով, — ես ցոյց տուի ձեզ մի էակ,
որ ոչ զգալ կարող է և ոչ մտածել... Էնթարկուած է նոյն
իսկ խղճի խայթոցներին, որին դուք համարում էք մի
Աստուածային, գերբնական ոյժ... Այդ ոյժը պատկերաց-
նում է նրա առաջ, պատկերացնում է երկար, ամբողջ
10 տարիներ, թշուառ, խեղդուած զոհի կերպարանքը...
և միթէ այդ խղճի խայթոցները, որոնք երևան են գա-
լիս այդպէս զարհուրելի կերպով մի որ և իցէ խելացնոր,
անմիտ և ուրիմն անմեղ էակի մէջ, միթէ ձեր կարծի-
քով—նոքա հետեւանք են Աստուածային նախախնամու-
թեան, յաւիտենական ահեղ, բայց իրաւ դատաս-
տանի:

— Աւելի շուտ, քան թէ երբ և իցէ, — պատասխանե-
ցի ես, վեր կենալով նստարանից: — Այն, ինչ որ ես ինքս
տեսայ—թող չեն տալիս ինձ մտածել ուրիշ կերպ:
Դուք, բժիշկ, ի զուր էք կարծում, որ ժօռժը անմեղ
է... ի զուր դուք արդարացնում էք նորա սպանութիւնը
խելագարութիւնով... Ի՞նչու չէք բացատրում նրան զուր
նախանձով... Դուք չէ՞իք, որ ասացիք, թէ ժօռժը նա-
խանձում էր, տեսնելով իւր աղջկայ սէրը դէպի մայրը:
Կարելի է դուք սխալվում էք... Կարելի է ժօռժը սպա-
նել է իւր զաւակը բոլորովին գիտակցաբար... միթէ
դուք անսխալ կարող էք քննել մարդուս անքննելի
սիրտը, նորա շարժուածքները, նորա խորութիւնը... միթէ
դուք հնարել էք մի այդպիսի դործիք...

— Եւ դուք կարծում էք...

— Ես կարծում եմ, համոզուած եմ, — պատասխանե-
ցի ես գիտելով երկնակամարի պլպլոզ աստղերը, — համոզ-
ուած եմ, որ Աստուածային գործերը անքննելի և ան-

Հասանելի են և Աստուածային զատաստանը աւելի ա-
հեղ է, քան մարդկայինը...

—Կարելի է, —ժպտաց հեգնօրէն բժիշկը և շարժե-
լով ուսերը, հեռացաւ ինձնից:

Գ. ՉՈՒԲԱՐ.

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

(ԳՈՐԾ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ.)

ԳՐԱԾԱՆԳԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՐԿԱՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

Եւգենի Ալեքսանդրովիչ Արբենին.

Նինո, Արբենինի կինը.

Իշխան Զվեզդին.

Դրուհի Շտրայլ.

Աֆանասի Պալովիչ Կազարին.

Ադամ Պետրովիչ Շպրիկ.

Դիմակաւոր կին.

Աստիճանաւոր.

Ծառաներ և աղախիններ.

Դ Ի Մ Ա Կ Ա Յ Ա Ն Դ Է Ս

(ԴՈՐԾ ԼԵՐՄՈՆՏՈՎ.)

ԴՐԱՄԱ ԶՈՐԾ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ԱՐԱՐՈՒԱԾ ԼԻԱԶԻՆ.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ռ Ա Զ Ի Ն.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ԽԱՂԱՑՈՂՆԵՐ, ԻՇԽԱՆ ԶԱԷԶԻԻՉ, ԿԱԶԱՐԻՆ ԵՒ ՇԱՊՐԻՒ.

(Սոցանից մի քանիսը սեղանի շուրջը նստած խաղում են, իսկ միւսները դրցա մօտ կանգնած նայում են):

1-Ն ԽԱՂԱՑՈՂ.

Իւստ' Իլիչ, թո՛ղ տուէք, որ ես էլ մասնակցեմ:

ԲԱՆԿՈՄԵՏ.

Ինչո՞ւ չէ, համեցէք:

1-Ն ԽԱՂԱՑՈՂ.

Ահա՛, ես հարիւր ուսուրի եմ վայր դնում:

ԲԱՆԿՈՄԵՏ.

Պատրաստ եմ նոյնքան և ինքս վայր դնելու:

2-Ի ԽԱՂԱՑՈՂ.

Է՛հ, բարի ճանապարհ եմ մաղթում:

3-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Ձեր բախտը ուղղելու համար այդպիսի մի փոքրիկ գումարով դուք ոչինչ չէք կարող շինել...

4-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Իմ կարծիքով պէտք է ծալել:

3-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Մի՛ խառնուիր, այդ քո դործը չէ:

2-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Եթէ այդ բոլորին էլ խաղալու լինիք, կարող էք վնասուիլ:

4-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Ասում եմ, որ պէտք է ծալել. ով որ մեր ժամանակում չի ծալվում, նա ոչ մի հետևանքի էլ չի հասնում:

3-Դ ԽԱՂԱՑՈՂ. (ծածուկ առաջինին).

Ուշադրութեամբ նայիր սորա խաղին:

ԻՇԽ. ԶՂԷԶԴԻԶ.

Վա-բանկ:

2-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Ի՛շխան, ի՛շխան, առանց բարկութեան խաղացէք. չարանալուց դուք միմիայն ձեր արիւնն էք պղտորում և ուրիշ ոչինչ:

ԻՇԽԱՆ.

Գոնէ այս անգամ ինձ աղատ պահեցէք ձեր խորհուրդներից:

ԲԱՆԿՈՄԵՏ.

Տա՛րայ:

ԻՇԽԱՆ.

Ա՛յ սատանան էլ քեզ տանի:

ԲԱՆԿՈՄԵՏ.

Թո՛ղ տուէք ստանալ:

2-Դ ԽԱՂԱՑՈՂ. (հեգնօրէն).

Երևում է, դուք ձեր տաքացած ժամանակը ինչ ունէք ու չունէք, ամենը պատրաստ էք տանուլ տալ. Խնդրեմ, ասէք, ի՞նչ արժէն ձեր էպօլետները:

ԻՇԽԱՆ.

Դուք չէք կարող գնել այն, ինչ ես պատուով եմ ձեռք բերել:

2-Ի ԽԱՂԱՑՈՒԼ (բարկացած հետանալով):

Այդ տարիքով և այդպիսի էլ բախտով պէտք է գոնե փոքր ինչ համեստութիւն ունենալ: (Իշխանը մի բաժակ լիմօնադ խմելով, առանձնանում է և մտածմունքների մէջ խորասուզվում):

ՇՊԻԻՍ. (մօտենալով և յառակցութիւն յայտնելով):

Իշխան, գուցէ փողի մէջ կարիք էք զգում, ես հէնց այս րոպէիս կարող եմ օգնել ձեզ, տոկոսը շատ չնչին է... Շուտ էլ չեմ պահանջիլ, ուզում էք, հարիւր տարի պահեցէք, պատրաստ եմ սպասելու: (Իշխանը սառնում է, գլուխ է իջնցնում և լետոյ երեսը դարձնում: Շարիիլը հեռանում է նորանից, անբաւականութեան նշաններ ցոյց տալով):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԻ.

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐԸ.

(Արբենինը ներս է մտնում, մօտենալով սեղանին գլուխ է իջնցնում և լետոյ մի բանի նշաններ անելով, հեռանում է Կազարինի հետ միասին):

ԱՐԲԵՆԻՆ.

Այս ի՞նչ եմ տեսնում, Կազարին, չլինի թէ խաղից ձեռք ես վերցրել:

ԿԱԶԱՐԻՆ.

Նկատողութիւնդ իրաւ է, ես այժմ միմիայն օտարների խաղի վերայ եմ նայում: Ե՛հ, դ՞ուրս ինչպէս ես, սիրելիս. ասեմք, թէ պսակուել, հարստացել, մեծ մարդու անուն ես ժառանգել, րայց վաղեմի ընկերներիդ ինչո՞ւ ես իսպառ մոռացութեան տուել:

ԱՐԲԵՆԻՆ.

Ճշմարիտ որ վաղուց է, ինչ չեմ գտնուել ձեր շրջանում:

ԿԱԶԱՐԻՆ.

Երեւի, բոլոր ժամանակը գործերո՞վ ես զբաղուած:

ԱՐԲԵՆԻՆ.

Սիրո՛վ և ոչ թէ գործերով:

ԿԱԶԱՐԻՆ.

Կնոջդ հետ շարունակ պարահանդէսներ ես այցելում. հա՛:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրեմն խաղում ես:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ... հանգստացել եմ: Բայց ասա՛, խնդրեմ՝ այս ի՞նչ նոր անձնաւորութիւններ են այստեղ երևում: Այս ֆրանսի ազգ-անունը ինչպէ՞ս է:

ԿԱԶԱՐԻՆ.

Դա Ադամ Պետրովիչ Շպրիխն է... իսկոյն երկուսիդ միանգամից կըծանօթեցնեմ: (Շպրիխը այս միջոցին մօտենում է և զլուխ տալիս): Բարեկամներիս մինը այստեղ է, խնդրեմ: ծանօթանաք,—Սրբենին:

ՇՊՐԻԽ.

Ես ձեզ ճանաչում եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Եթէ չեմ սխալվում, մինչև այսօր, կարծեմ, մենք ոչ մի տեղ պատահած չկանք միմեանց:

ՇՊՐԻԽ.

Այդ ճշմարիտ է, բայց ես կողմնակի կերպով այնքան պատմութիւններ եմ լսել ձեր մասին, որ վաղուց կ'ուզենայի ծանօթանալ:

ԱՐԲԵՆԻՆ.

Իսկ ես դժբախտաբար ձեր մասին ոչինչ չեմ լսել և յոյս ունիմ, որ հէնց ներկայում նոյն իսկ ձեզանից շատ բան կըլսեմ: (Նորից միմեանց զլուխ են տալիս: Շպրիխը դէմքին թմու արտայայտումիւն տալով, հեռանում է): Ճշմարիտն ասած, ինձ դուր չեկաւ այդ մարդը: Ծիչտ է, այլանդակ դէմքեր շատ եմ տեսել, բայց այդպիսինը ստեղծել անդամ դժուար է, եթէ նոյն իսկ ցանկութիւն էլ ունենաս: Նորա այն չարախնդաց գէմքը և դա-

Ժան արտայատութիւնը, նորա այն ապակեայ աչքերը մարդու կերպարանքից միանգամայն գցում են, իսկ սատանայի էլ չէ նմանում:

ԿԱԶԱՐԻՆ.

Է՛հ, կ'ըստի, ի՞նչ նշանակութիւն ունի արտաքինը. թո՛ղ հէնց ինքը սատանան լինի... բանը նորանում է, որ դա ինքը մի շատ կարևոր մարդ է: Բաւական է, որ դիմես, որքան ցանկութիւն ունես, վերցրու, չի մերժել: Թէ ի՞նչ ազդից է, այդ ես համարձակ չեմ կարող ասել, բայց հաւանական է, որ ճիշտ լինի, որովհետեւ բոլոր լեզուներն էլ գիտէ, ամենի հետ ծանօթ է, որտեղ ուզես, գործ ունի, բոլորը յիշում է, գիտէ ամեն բան և ամբողջ կեանքն էլ հոգսերի մէջ է անց կացնում: Ոչ թէ մէկ, այլ շատ անգամ է ծեծուել սորանից և նորանից: Անաստուածի հետ անաստուած է, հաւատացեալի հետ կատարեալ ճեղուիտ, մեր մէջ մոլեռանդ խաղացող, իսկ ալիւն մարդկանց հետ մի համեստ և յարգանքի վայել անձնաւորութիւն: Գլուխդ շատ չցաւացնելու համար, կ'ասեմ այսքանս, որ դու այդ մարդուն անպատճառ կրտսիրես: Ես միանգամայն հաւատացած եմ դորա մէջ:

ԱՐԻԷՆԻՆ.

Նկարը ինքն ըստ ինքեան շատ գեղեցիկ է, բայց բնագիրն է փատ: Է՛հ լաւ, թողնենք դորան: Խնդրեմ ասես. իսկ նա ո՞վ է. ահա՛ այն բարձր հասակով, երկար բեխերով և մնգրուած դէմքով անձնաւորութիւնը: Ես հաւատացած եմ, որ այդ պարոնը մոդայի խանութների մշտական անդամ պիտի լինի, որ նա պաշտօնաթող մի սիրահար է և օտար երկիրներ շատ է ճանապարհորդել: Ես համոզուած եմ, որ այդ մարդը կատարեալ հերոս է, բայց ոչ պատերազմի դաշտում, որ նա արգելքների առաջ կանգ չէ առնում և ամենայն հմտութեամբ դիմում է իւր ծրագրած նպատակին: Ասածներս ճշմարիտ են թէ ոչ:

ԿԱԶԱՐԻՆ.

Համարեա թէ... Դա մի ժամանակ զինուորական ծառայութեան մէջ էր, բայց յետոյ մի ինչ որ մենամարտութեան համար արձակուեցաւ պաշտօնից... Մայրն էլ շատիւանց խստաբարոյ կին էր: Այդ դէպքից հինգ տարի յետոյ նա կրկին ստանում է իւր նախկին պաշտօնը, բայց այստեղ նորից մենամարտում է և մենամարտում է այնպէս, ինչպէս որ հարկաւոր է:

ԱՐՔԵՆԻՆ.

Է՛, եղբայր, ինչպէս տեսնում եմ, դու նոր մարդկանց հետ ծանօթանալու հարցում բաւական խիստ ընտրութիւն ես անում: ԽԱՂԱՑՈՂՆԵՐ. (աղաղակելով):

Կազարին, Աֆանասի, Պաւլովիչ, նեղութիւն կրեցէք մի րոպէ այստեղ գալ:

ԿԱԶԱՐԻՆ.

Գալիս եմ:

1-Դ ՄԱՍՆԱԿՑՈՂ:

Շուտ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ի՞նչ է պատահել: (Խաղաղողների մէջ փոքր ժամանակ նկատվում է կենդանի խօսակցութիւն, որից յետոյ բոլորն էլ հանգստանում են: Արքենինը այս միջոցին նկատում է Իշխան Զվէզդիչին և մօտենում նորան):

ԱՐՔԵՆԻՆ.

Իշխան, այս ի՛նչպէս է, որ դուք այստեղ էք. երեւի, առաջին անգամը չէ:

ԻՇԽԱՆ. (անբաւականութեամբ):

Թէ ի՞նչ պէտք է պատասխանէք իմ հարցին, ես այդ արդէն գիտեմ, իսկ ինչ վերաբերում է ինձ, կ'ասեմ այսքան, որ այս տեղը ինձ վաղուց է ծանօթ. Անցեալներումը շատ յաճախ է պատահել ինձ յուս ալեկոծութեամբ գիտել ու տեսնել, թէ բախտի անիւր ինչպէս է այս կամ այն կողմը շրջում, թէ ինչպէս է նա մէկին մինչև երկինք բարձրացնում, իսկ միւսին վայր զըցում և փշրում, ոչնչացնում: Աւելացրէք դորան և այն, որ դոցանից ոչ մէկը երբէք չի շարժել իմ նախանձը կամ իմ ցաւակցութիւնը: Պատահել է ինձ այստեղ տեսնել յղյսերով և զգացմունքներով լի երիտասարդներ, պատահել է ինձ տեսնել բոցավառ սրտերով կեանքի գիտութեան մէջ բաղդաւոր տգէտներ, որոնց միակ նպատակը անցեալներում միմիայն սէրն է եղել... Յրկար շտեկց այդ ամենը, դժբա հէնց իմ աչքի առաջ կորստեան անդունդ գլորուեցան, և ահա՛, նորից կարծես ինձ վիճակուած է նոյնը տեսնել:

ԻՇԽԱՆ. (գրգռուծ բռնելով Արքենինի ձեռքը):

Ինչ ունէի ու չունէի, բոլորը տանուլ եմ տուել:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ ևս տեսնում եմ, է՛հ, յետոյ, չլինի թէ խեղդուելու ցանկութիւն ունիս...

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, ևս յուսահատութեան մէջ եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Դորանից միմիայն երկու միջոց կայ ազատուելու. կամ պէտք է խեղդուէք և յետոյ ոչ մի ժամանակ խաղաթղթին չմտնաք և կամ թէ կրկին, հէնց այս րոպէիս նստէք սեղանի մօտ: Իմացէք և այս, որ եթէ վճռել էք այստեղ տանել, պէտք է թողնէք ամեն բան, բարեկամ, ծանօթ, ազգական և մինչև անդամ՝ պատիւ ասած բանը: Պէտք է սառնարիւն փորձէք, չօշափէք ձեր ընդունակութիւնները ու մտքերը: Ձեր տարիքը պէտք է գործ զնէք ձեռքի վարժեցողութեան վերայ: Ամեն ինչ պէտք է ատէք. պէտք է խոյս տաք մարդկանց ու բնութեան սահմանած օրէնքներից: Պէտք է ցերեկը մտածէք, գիշերը խաղաք և հոգեկան տանջանքներից հանդատութիւն չգտնէք և որ աւելին է, պէտք է աշխատէք ծածկել մարդկանցից ձեր այդ տանջանքները: Պէտք է չդողաք, երբ ձեր արհեստով ձեզ չափ մի հմուտ անձնատուրութեան հետ գործ ունիք, երբէք ձեր մրտքից չհանէք րոպէական ուրախութեան ամթալից վախճանը, և չկարմրէք ու չամաչէք, երբ ձեր ճակատին դրոշմեն «պաղլեց» բառը: (Փոքր ժամանակ խորին լուռութիւն է տիրում: Վերոյիշեալ խօսակցութեան միջոցին իշխանը ջափադանց դրդուած է երևում և մի և նոյն ժամանակ անուշադիր):

ԻՇԽԱՆ.

Այժմ ևս չգիտեմ, թէ ինչ անեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ինչ որ ցանկանում էք:

ԻՇԽԱՆ.

Կարելի է, բախտը նորից...

ԱՐԲԵՆԻՆ.

Օ՛, այդ մի՛ ասէք, այստեղ խօսք անդամ չի կարող լինել բախտի մասին...

ԻՇԽԱՆ.

Ձէ որ ես բոլորը տանուլ եմ տուել. ա՛խ, ՚ի սէր Աստուծոյ, ինձ մի խորհուրդ տուէք:

ԱՐԲԵՆԻՆ.

Ես սովորութիւն չունիմ խորհուրդներ տալու:

ԻՇԽԱՆ.

Է՛հ, թէ պոպէս է, ես նորից կընստեմ...

ԱՐԲԵՆԻՆ. (յանկարծ բռնելով իշխանի ձեռքը).

Ո՛չ, ձեր փոխարէն ես կընստեմ: Դուք դեռ երիտասարդ էք. ես էլ ձեզ նման մի ժամանակ եւ երիտասարդ էի եւ անփորձ. ձեզ նման միամիտ եւ անզգոյշ եւ եթէ... (կանգ է առնում) մէկը ինձ արգելէր... այն ժամանակ... (սուր հայեացք է գցում իշխանի վերայ եւ յետոյ ծայնը փոխում): Բախտի փորձ է, տուէ՛ք ինձ համարձակ ձեր ձեռքը, իսկ մնացեալը ձեր գործը չէ. (Սօսննում է սեղանին, նորան խաղացողները տեղ են տալիս): Ընդունեցէ՛ք Տին զննուորիս ձեր շարքում. ուղում եմ փորձել, թէ ի՞նչ պէտք է ասէ ճակատագիրս. ուղում եմ իմանալ, թէ նա թոյլ կրտայ արդեօք, որ Տինաւուրց իւր հաւատարիմ ծառան ամօթալից մնայ այժմեան խաղի երկրպագուների առաջ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ձկարողացար համբերել, է՛լի... սիրտդ ճաքեց, հա՛. (Ցած ծայնով): Լսի՛ր, զգուշութեամբ խաղա՛, ինչ միջոցներ որ գիտես, գործ դիր եւ ցոյց տուր դոցա, թէ ինչ ասել է Տին խաղացողի հետ գործ ունենալ:

ԽԱՂԱՑՈՂՆԵՐ.

Ինչո՞ւ չէ, համեցէք, թղթերն էլ ձեր ձեռքը կըտանք, քանի որ ձեր գիմաց մեզ խօսք չի հասնիլ:

1-Ն ԽԱՂԱՑՈՂ. (երկրորդի ականջին).

Զգո՛յշ եղիր հա՛, լա՛ւ նայիր... այս մարդուց ես վախենում եմ, սորա հետ դժուար է գործ ունենալ: Սա այնպիսի մի խաղացող է, որ գէպքը պատահած ժամանակը, կարող է ասի ասըն էլ հանել. (Խաղն սկսվում է եւ բոլոր ներկայ գտնուողները խմբվում են սեղանի շուրջը: Երբեմն, երբեմն լսվում են բացական-

չունենան: Յետագայ խօսակցութեան միջոցին շատերը մոայլ դէմքով հեռանում են սեղանից: Մարիսը Կադարինի հետ գալիս է բեմի առաջին մասը):

ՀՊՐԻՒ. (Կեղծաւորութեամբ).

Բոլորը մի տեղ են խմբուել, երևում է, փոթորիկը վըպ է հասել:

ԿԱԶԱՐԻՆ.

Տես, թէ ինչ ահ ու դող է գցելու նոցա սիրտը. մի ամսից յետոյ էլ չեն մոռանալ:

ՀՊՐԻՒ.

Երևում է, որ այդ գործում նա կատարեալ վարպետ է:

ԿԱԶԱՐԻՆ.

Ո՛չ թէ է, այլ եղել է:

ՀՊՐԻՒ.

Եղել է, իսկ այժմ...

ԿԱԶԱՐԻՆ.

Այժմ... այժմ պահուել է և մի պատուաւոր ու հարուստ անձնաւորութիւն դարձել: Նայում ես, գառան հայեացք ունի, բայց էլի էն գաղանն է, ինչ որ էր մի ժամանակ... Ինձ կարող են ասել, թէ մարդ ընդուակ է յաղթել իւր բնութիւնը, թողնել ունեցած սովորութիւնները. բայց ես չեմ հաւատում դորան. Այդ մի կատարեալ յիմարութիւն է. Թո՛ղ հէնց հրեշտակ էլ ձեռքնէ իրեն, բայց և այնպէս ես գիտեմ, որ նորա հոգւոյ մէջ պըպզած է սատանան. Դու էլ, բարեկամ, (խփելով ուսին) նորա համեմատութեամբ թէ՛ և դեռ երեխայ ես, բայց և այնպէս քո մէջ էլ է նստած սատանան: (Խաղացողներից երկուսը տաք խօսակցութեան մէջ գալիս են բեմի առաջին մասը):

1-Ն ԽԱՂԱՑՈՂ.

Ձէ՛ որ ես ասում էի քեզ:

2-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Ի՞նչ անեմ, եղբայր, երևում է, խօսքը քարին է դիպել: Էլ ինչ խարդախութիւն մնաց, որ գործ դրած չլինեմ, հա՛: Կարծես, կապալով էր վերցրել բոլորիս: Է՛հ, մտածել անգամ ամաչում եմ...

ԿԱԶԱՐԻՆ. (մտենալով դողալով):

Է՛հ, ինչպէ՛ս է գնում ձեր գործը, պարոններ: Ատամներդ չի կտրում, հա՞:

1-Ե ԽԱՂԱՑՈՂ.

Երևի, Արքենինը ձեր պարագլուխն է:

ԿԱԶԱՐԻՆ.

Ի՞նչ էք ասում, մի՞թէ կարող է այդպիսի բան լինել: (Խաղաղողների մէջ մի տեսակ խառնաշփոթութիւն է յառաջանում):

3-Դ ՄԱՍՆԱԿՑՈՂ.

Եթէ խաղը այս կերպ շարունակուի, նա անկասկած հարիւր հալարներ կըտանէ:

4-Դ ՄԱՍՆԱԿՑՈՂ.

Կոկոնդուլը կըմնայ:

5-Դ ՄԱՍՆԱԿՑՈՂ.

Լա՛ւ, տեսներ:

ԱՐԲԵՆԻՆ. (տեղեկը բարձրանալով):

Բաւական է, ես էլ չեմ խաղում: (Ժողովում է ոսկիքը և հետանում, միաները մնում են սեղանի շուրջը կանգնած: Կազարինը և Շաքիխը նոյնպէս կանգնած են այդտեղ: Արքենինը գունատուած դէմքով բռնում է իշխանի ձեռքը և ոսկիքը իրեն լանձնում):

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, երբէք, երբէք ես չեմ մոռանալ այս... Դուք փրկեցիք իմ կեանքը...

ԱՐԲԵՆԻՆ.

Եւ ձեր փողերն էլ նոյնպէս: (Դառնուի նայելով): Բայց ուղեղն ասած, շատ դժուար է որոշել, թէ ո՞րն է այդ երկուսից աւելի թանկագինը:

ԻՇԽԱՆ.

Ճշմարիտն ասած, դուք ինձ համար շատ մեծ զոհողութիւն արիք:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ մի ժամանակ: Ես ինքս ուրախ էի այդ դէպքին, քանի որ ցանկութիւն ունէի փոքր ինչ շարժել արիւնս և յուղել

ուղեղս ու սիրտս: Ես նստեցայ խաղալու ուղեղ պն վիճակի մէջ, ինչ վիճակի մէջ որ դուք կ'ուղեորուէիք պատերազմի դաշտը:

ԻՇԽԱՆ.

Բայց կարող էր պատահել, որ տանուլ տայիր:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՞վ էս, երբէք... Այն բաղդաւոր օրերը արդէն անցել, գնացել են: Ես այժմ ամեն բանի մէջ խորն եմ թափանցում, գիտեմ գոցա բոլոր խորամանկութիւնները և ահա՛, հէնց դորանից է, որ թողել եմ թղթախաղը:

ԻՇԽԱՆ.

Ինչ թուում է, որ դուք աշխատում էք խոյս տալ իմ երախտագիտութիւնս ձեզ յայտնելուց...

ԱՐԲԵՆԻՆ.

Ուղիղն ասած, ես այդ չեմ սիրում: Ես, իմ ամբողջ կեանքումս ոչ մի բանում, ոչ մի ժամանակ և ոչ որին պարտաւորած չեմ: Եթէ պատահել է, որ մէկին բարութիւն եմ արել, այդ պատահել է ոչ թէ նորանից, որ դորան սիրել կամ համակրել եմ, ոչ, հէնց էնպէս արել եմ նորա համար, որ դորա մէջ լաւութիւն, մի տեսակ սրտի սփոփանք եմ գտել:

ԻՇԽԱՆ.

Ես ձեզ չեմ հաւատում:

ԱՐԲԵՆԻՆ.

Իսկ ո՞վ է պահանջում, որ հաւատալ: Վաղուց է, ինչ ես դորան բնութայեղ եմ, և եթէ ծուլութիւնս չլինէր, գուցէ, և սկսէի երեսպաշտել... Է՛հ, լա՛ւ, բաւական է, վերջ տանք այս խօսակցութեան: (Փոքր ինչ լռութիւնից յետոյ): Վատ չէր լինիլ, եթէ այս բոլորից յետոյ փոքր ինչ մեր ուղեղը ուրիշ պարագամունքով զբաղեցնէինք: Այժմ տօն օրեր են, գուցէ այս գիշեր մի որ և է տեղ դիմակահանդէս լինի:

ԻՇԽԱՆ.

Այո՛, լինելու է:

ԱՐԲԵՆԻՆ.

Եթէ ցանկութիւն ունիք, գնանք:

ԻՇԽԱՆ.

Ինչո՞ւ չէ, շատ ուրախ եմ:

ԱՐԲԵՆԻՆ. (սուտն ձին):

Ամբոխի մէջ գուցէ փոքր ինչ հանգստանամ:

ԻՇԽԱՆ.

Օ՛, այնտեղ հրաշալի կանայք են լինում և ասում են, մինչև անգամ այնպիսիներն են լինում, որ...

ԱՐԲԵՆԻՆ.

Թո՛ղ ինչ ուզում են, ասեն, մեզ ի՞նչ: Դիմակի տակ լաւ ու վատ չկայ, բոլորն էլ մէկ են: Դիմակակիր կիներ ոչ հոգի ունի, ոչ կոչում, ունի միմիայն մարմին և եթէ դիմակով էլ ծածկում է նա իւր դէմքի զծագրութիւնը, դորա փոխարէն հոգւոյ զգացմունքներին աղատ ասպարէզ է տալիս: (Գնում են:)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ:

(Առաջիններ բացի Արբենինից և իշխանից:)

1-Ն ԽԱՂԱՑՈՂ.

Լա՛ւ է, որ շուտ վերջ տուաւ, թէ չէ մեզ նեղն էր լըծելու...:

2-Դ ԽԱՂԱՑՈՂ.

Էյ ասում ես, ի՞նչ դառնայ, թողնում էր, որ գոնէ մի րոպէ ուշքի գանք:

ԾԱՌԱՆ. (ներս մտնելով):

Ընթրիքը պատրաստ է:

ՏԱՆՈՒՏԷՐ.

Գնա՛նք, պարոններ, այժմ ձեր ցաւը միմիայն շամկայն դիւնին կարող է դարմանել: (Գնում է:)

ՀԱՐԻԻ. (միայնակ):

Ուզում եմ Արբենինի հետ մօտ բարեկամանալ, վատ էլ չէ, եթէ այստեղ ձրի ընթրեմ: (Մտալ մօտեցնելով ծախատին:): Այստեղ կ'ընթրեմ... մի քանի նորութիւններ էլ կը ժողովեմ և յետոյ հէնց իրենց հետեից դիմակահանդէսը կը վաղեմ: (Գնում է և այլ միջոցին ինքը իրեն ճետ խօսում:)

ԴԻՄԱԿԱՆԱՆԴԷՍ

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ.

ՏԵՍԻՆ, ԱՌԱՋԻՆ.

ԴԻՄԱԿԱՆԱՆԱՆ ԿԱՆԱՆԵՔ, ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԻՇԽԱՆ ԶԱԼԶԴԻՉ.

(Բեմի վերայ խումբը լետ ու առաջ է քալում: Ձախ կողմում երևում է մի այլ սենեակ):

ԱՐԲԵՆԻՆ. (Ներս մտնելով).

Իզուր աշխատանք է, քանի որ ոչ մի տեղ չեմ կարողանում զուարճութիւն գտնել: Ի՞նչ օգուտ այս բաղմերանգ գոյներով փայլող ու բծբծող խմբերից, երբ դոցանից և ոչ մէկը չի շարժում սառած հոգիս և թմրած երեակայութիւնս: Սղոթ բոլորն էլ ինձ համար օտար են և ինքս էլ նոյնպէս իրենց համար եմ օտար: (Իշխանը մօտենում է յօրանջելով): Ներկայ սերունդի ներկայացուցիչներից մինն էլ ա՛հ, սա է. մի՞թէ դորա տարիքում ևս այդպէս եմ եղել: Է՛հ, ի՞նչ կ'ասէք, իշխա՛ն, դեռ ոչ մի արկածքի չէք պատահել:

ԻՇԽԱՆ.

Ահա՛, ամբողջ մի ժամ է ման եմ գալիս և բոլորովին անօգուտ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ա՛, ուրեմն դուք ուզում էք, որ ինքը բաղդը ձեզ փաթաթուի, հա՛. այ նոր հնարագիտութիւն... Իրաւ որ արժէ այդ գիւտի մասին յայտնել աշխարհին:

ԻՇԽԱՆ.

Բոլորն էլ յիմար գիմակակիրներ են...

ԱՐԲԵՆԻՆ.

Խնդրեմ, ներէ՛ք. յիմար գիմակակիր չկայ աշխարհիս երեսին: Երբ լուռ է, նա խորհրդաւոր է. իսկ երբ խօսում է, շատ քաղցր է: Այո՛, երբ նա խօսում է, դուք կարող էք երեակայել, որ ձեզ ժպտում է, իսկ հայեացքին ձեր սրտի ցանկացած նշանակութիւնը տալ: Ահա՛, նայեցէ՛ք այն օամանցի կնոջը, տեսէք, թէ ի՞նչ վեհ քայլուածք ունի... Ի՞նչ յաղթանդամ կազմուածք: Տեսէ՛ք, թէ ինչպէս ջերմ և աղատօրէն է բարախում նո-

րա կուրծքը, Իսկ գիտէք, ով է. նա կամ մի հպարտ կոմսուհի է, կամ մի իշխանուհի, որ ասել է հասարակութեան մէջ Դիանայ, իսկ զիմակահանդէսների մէջ Վեներայ... Այսպէս թէ այնպէս, դուք երկու դէպքում էլ ոչ մի կորուստ չէք ունենալ (Գնում է):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ԻՇԽԱՆ ԵՒ ԴԻՄԻԿԱԿԻՐ ԿԱՆԱՆՑԻՑ ՄԻՆԸ.

Դիմակակիր կանանցից մի խումբ մօտենում է Իշխանին, մինչդեռ սա մտածմունքների մէջ է լինում:

ԻՇԽԱՆ.

Ընդունում եմ, որ շատ բան կարելի է անել. խօսելուց էլ հեշտ ի՞նչ բան կայ... Բայց այս ի՞նչ բանի վերայ եմ ես, շարունակ յօրանջում եմ և ուրիշ ոչինչ... Ահա՛, մէկը դալիս է... Տէր Աստուած, Դու օգնական եղիր: (Դիմակակիր կանանցից մինը առանձնանալով խմբից, մօտենում է Իշխանին և խփում նորա ուսին):

ԴԻՄԻԿԱԿԻՐ.

Ես քեզ ճանաչում եմ:

ԻՇԽԱՆ.

Եւ երևի շատ քիչ:

ԴԻՄԻԿԱԿԻՐ.

Գիտեմ և այն, թէ ինչ բանի վերայ էիր մտածում:

ԻՇԽԱՆ.

Այդ դէպքում դու ինձանից բաղդաւոր ես: (Աշխատում է տեսնել դէմքը.) Եթէ չեմ սխալվում, սա հրաշալի բերան ունի:

ԴԻՄԻԿԱԿԻՐ.

Այդ աւելի վատ, եթէ քեզ դուր եկայ:

ԻՇԽԱՆ.

Ու՛մ համար է վատ:

ԴԻՄԻԿԱԿԻՐ.

Մեր երկուսիս մէկն ու մէկի համար:

ԻՇԽԱՆ.

Ի՞նչ հիման վերայ... Լա՛ւ, իմացիր, որ ես քո գուշակութիւններից չեմ վախենում և եթէ խորամանկութիւններից էլ զուրկ եմ, բայց և այնպէս քեզ ճանաչել եմ և գիտեմ, թէ ով ես դու...

ԴԻՄԱԿԱԿԻՐ.

Ուրեմն գիտես և այն, թէ ի՞նչով պիտի վերջանայ մեր խօսակցութիւնը...

ԻՇԽԱՆ.

Այո՛, գիտեմ, կըխօսինք և յետոյ կըբաժանուինք զանազան կողմեր:

ԴԻՄԱԿԱԿԻՐ.

Ուղի՞ղ:

ԻՇԽԱՆ.

Դու ձախ կողմը կըգնաս, իսկ ես—աջ...

ԴԻՄԱԿԱԿԻՐ.

Իսկ եթէ ես ասեմ, որ հէնց դիտմամբ եմ եկել այստեղ, եթէ ասեմ, որ եկել եմ միմիայն այն նպատակով, որ քեզ տեսնեմ և հետո խօսեմ, եթէ ես քեզ ասեմ, թէ փոքր ժամանակից յետոյ պէտք է ինձ երդուես նորանում, որ երբէք ինձ չես մոռանալ, որ ուրախ կըլինես կեանքդ անգամ զո՛հ բերել ինձ այն բոպէին, երբ ես քողարկուած անունով ուրուականի նման ՚ի յաւիտեան պիտ չքանամ: Այո՛, կրկնում եմ նորից, որ այդ վայրկենին դու ամեն ինչ կըզոհես ինձ հէնց նորա համար, որ իմ շրթունքներից լոկ միմիայն մի բառ լսես. այն է «ցտեսութիւն»...

ԻՇԽԱՆ.

Դու իմ աչքում թէև խելօք դիմակ ես երևում, բայց և այնպէս պիտի նկատեմ, որ շատախօս ես, Է՛հ, եթէ իրաւ ճանաչում ես ինձ, ասա՛ ուրեմն, ես ո՞վ եմ:

ԴԻՄԱԿԱԿԻՐ.

Ահա՛ թէ ո՞վ ես դու. բնաւորութիւնից զուրկ, անբարոյական, անասուած, ինքնասէր, խտրասիրտ բայց թոյլ արարուած: Միմիայն քո մէջ է պատկերացել ամբողջապէս մեր ներկայ փայլուն բայց անպէտք դարձ: Ուզում ես ամեն բան ունենալ, բայց չես ուզում զոհարելութիւն անել, հպարտ և անգութ մարդկանցը ատում ես, մինչդեռ ինքդ հէնց այդ անձնաւորութեանց ձեռքի տակ խաղալիք ես: Օ՛հ, ես ճանաչում եմ քեզ...

ԻՇԽԱՆ.

Շատ ուրախ եմ, որ իմ մասին այդպիսի գաղափար ունիք:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Դու շատ չարիքներ ես հասցրել...

ԻՇԽԱՆ.

Այդ կարող է անգիտակցաբար եղած լինել:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Ես հակառակ չեմ գորան, միմիայն գիտեմ այսքան, որ ոչ մի կին երբեք, չպետք է սիրե քեզ:

ԻՇԽԱՆ.

Ես չեմ էլ որոնում այդ սէրը:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Ձեռ որոնում հենց նրա համար, որ որոնելու շնորհք չուներս:

ԻՇԽԱՆ.

Ընդհակառակը, աւելի՛ շատ որոնելուց եմ յոգնել:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Հա՛, ուրեմն որոնել ես, լա՛ւ, դեննք թէ այդպէս է: Այժմ եթէ բան է, յանկարծ այդ որոնածդ գայ, առաջդ կանգնէ և ասէ. «դու իմն ես». ասա՛, մի՞թէ այդ դէպքումն էլ դու համարձակութիւն կ'ունենաս սառնասիրտ քանուելու:

ԻՇԽԱՆ.

Իսկ ո՞վ է նա... երեւի այն իմ իդէալս պիտի լինի, հա՛:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Ո՛չ, այդ կարող է մի կին լինել... մնացեալի հետ դու գործ չունիս:

ԻՇԽԱՆ.

Եթէ այդ ձգմարիտ է, ապա ուրեմն և ցոյց տուր ինձ նորան, թող համարձակ մօտենայ ինձ:

ԳԻՄԱԿԱԿԻՐ.

Զգո՛յշ եղիր և լա՛ւ իմացիր, որ ուղածդ շատ մեծ բան է. մտածիր ասածիդ վերայ: (Փոքր՝ ինչ լուրուց լետոյ.) Նա քեզանից ո՛չ հառաչանքներ է պահանջում, ո՛չ խոստումներ, ո՛չ արտասուք, ո՛չ խնդիրք և ոչ էլ բոցափառ խօսքեր... Բայց ահա՛ թէ

ինչ է ասում: Երգուի՛ր, որ դու չես աշխատիլ իմանալ նորա ո՛վ լինելը և որ աւելին է, քո մէջ գաղտնիք կը պահես այդ ամենը և ոչ ոքին չես յայտնիլ...

ԻՇԽԱՆ.

Երկիր, գետին, երգում եմ պատուովս...

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Է՛հ, լա՛ւ յիշեր, որ մեր ասած ու խօսածը հանաք չէ. այժմ գնանք: (Գնում են Թե. Թեի տուած):

ՏԵՍԻԼ, ԵՐՐՈՐԴ.

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԴԻՄԱԿԱՆԻՐ ՄԱՐԴԻԿ.

(Արբենին բռնած ղոցա մէկի Թեից քաշում է բեմի առաջին մասը:

ԱՐԲԵՆԻՆ.

Դուք, պարո՛ն, այնպիսի խօսքեր ասացիք, որոնց իմ պատիւս թող չի տալիս ներել: Դիտե՛ք դուք, թէ ո՛վ եմ ես

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Թէ ո՞վ էք եղել, ես այդ արդէն գիտեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդպիսի վարմունքը ձեզ պատիւ չի բերում: Վերցրէ՛ք իսկոյն ձեր երեսից այդ գիմակը:

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Ի՞նչ կարիք կայ. իմ երեսս էլ ձեզ այնքան անծանօթ է, որքան և այս գիմակը: Ես ձեզ առաջին անգամն է, որ պատահում եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ձեմ հաւատում: Երեւում է, որ դուք ինձանից սաստիկ երկիւղ էք կրում: Գոնէ ես ինձ համար ամօթ եմ համարում այդ դէպքում ձեզ վերայ բարկանալ: Կորէք աչքիցս, վախկո՛տ:

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Լա՛ւ, թո՛ղ այդպէս լինի. մնա՛ք բարև, Բայց ահա, լսեցէ՛ք թէ ինչ պիտի ասեմ ձեզ. այս զիշեր ձեզ դժբաղդութիւն պիտի պատահի: (Անհետանում է ամբոխի մէջ):

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՞նչպէս, ի՞նչ ասացիք, սպասիր... կորաւ... Ո՛վ էր այս մարդը, Ա՛յ քեզ նոր ցաւ: Է՛հ, արժէ՛ միթէ մտածել դորա

մասին. անթիւ ու անհամար թշնամիներ ունիմ, դա էլ, երեւի, նոյանից մինն է. ճա՛հ, հա՛, հա՛, հա՛. Գնանք բարեւ, բարեկամ, Աստուած բարի ճանապարհ տայ քեզ:

Տեսիլ, ջորորոր:

ՀՊՐԻՒ ԵՒ ԱՐԲԵՆԻՆ, (ներս է մտնում Հպրիւ):

(Բեմի մի կողմում, փոքրիկ՝ բաղնոցի վերայ, նստած են երկու դիմակակիր կանայք: Սոցալ՝ մտնում է մի անյայտ, անձնաւորութիւն և զաղտնի խօսակցութիւն սկսում: Փոքր ինչ լետոյ՝ առնում է շնոյա ծեռքը... Դոցանից մինը ապաստում է և հեռանալու միջոցին անգիտակցաբար բաղնոցի վայր է գցում ապարանջանը):

ՀՊՐԻՒ.

Այն ո՞ւմ էիք պնդէս անդձաբար քարշ տալիս, Եւգենիյ Ալէքսանդրովիչ:

ԱՐԲԵՆԻՆ.

Հէնց է՛նպէս, բարեկամիս մէկի հետ հանաքներ էի անում:

ՀՊՐԻՒ.

Ինչպէս երևում է, ձեր հանաքը դաքանակի է հասել, քանի որ նա գնալու ժամանակ չարունակ ձեզ հայհոյում էր:

ԱՐԲԵՆԻՆ.

Յետոյ ո՞ւմ մօտ:

ՀՊՐԻՒ.

Մի ինչ որ դիմակաւոր կնոջ ներկայութեամբ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՜նչ սուր լսողութիւն ունէ՛ք. Ճշմարիտ որ, նախանձուել անգամ կարելի է:

ՀՊՐԻՒ.

Իրաւ որ այդպէս է, թէեւ շատ բան եմ լսում, բայց մի և նոյն ժամանակ և մի խօսք անգամ չեմ հանում, քերանիցս. Իմացե՛ք և այս, որ ես սովորութիւն ունիմ՝ ընդհանրապէս խառնուիլ պիտի գործերի մէջ, որոնք ինձ չեն վերաբերում...

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ երևում է. Այդպէս ուրեմն, չէ՛ք իմանում... է՛հ, ամեն չէ՛ միթէ ձեզ համար. չէ՛ որ արդէն դուրս մասին...

ՀՊՐԻՍ.

Ի՞նչ բանի մասին է այդ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ձէ՛, ո՛չինչ չկայ, է՛նպէս, հանաք էի անում...

ՀՊՐԻՍ.

Խնդրում եմ...

ԱՐԲԵՆԻՆ.

Ասում են ձեր կինը բաւական գեղեցիկ է...

ՀՊՐԻՍ.

Լա՛ւ, յետոյ:

ԱՐԲԵՆԻՆ, ձայնը փոխելով.

Իսկ այն երկար բեխեր ու թուխ դէմք ունեցող մարդը երբեմն-երբեմն յաճախում է ձեր տուն թէ ոչ: (Հեռանում է մի կնչ որ երգի եղանակ սուլելով):

ՀՊՐԻՍ.

Լեզուդ պապանձուի, հա... չըմ, ծիծաղում ես, հա՛. շատ բարի. եթէ դու էլ իմ օրը չընկնես, այն ժամանակ ինձ ինչ ուզում ես, ասա: (Անհետանում է ամբոխի մէջ):

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԴ.

(Առաջին դիմակակիրը յուզուած սրտով և արագ քալուածքով ներս է վազում ու բազմոցի վերայ ընկնում):

1-Ն ԴԻՄԱԿԱՆԿԻՐ.

Ո՛հ... հազիւ եմ շունչ առնում... Բոլոր ժամանակը նա իմ հետեից վազում էր: Ի՞նչ կը լինէր իմ ճարը, եթէ դիմակը երեսիցս պոկէր... Ո՛հ, ո՛չ, նա չճանաչէց ինձ և ոչ մի հնարքով էլ չի կարող կասկածիլ, որ այն կինը, որի վերայ ամբողջ աշխարհքը նախանձվում և զարմանում է, ինքնամոռացութեան ընկնիւ իւր գիրկը պիտի ընկնէ և աղաչէ, որ իրեն գոնէ երկու քաղցր վայրկեան նուիրէ, եթէ ոչ սիրուց՝ գէթ խղճահարուելուց: Որ ամենայն կատաղութեամբ պիտի ասէ իրեն, թէ ես քոնն եմ... Ո՛հ, այս գաղտնիքը նա յաւիտեան չի իմանալ... Թող... ես չեմ ուզում... ի՞նչ անեմ... մահացու ըիսկ է: (Տեսնում է յատակի վերայ ապարանջանը և լարձրացնում է): Ա՛յ բազդ, Տէ՛ր Աս-

տուած, այս Բնչ բան է. ոսկէ ապարանջան և այն էլ էմալով... Տեսնեսս ո՞վ է կորցրել: Այս շատ լաւ պատահեցաւ, կրտամ իրեն և յետոյ սորանով որքան ուզում է, թող որոնէ ինձ:

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ.

ԻՇԽԵՆ ԶՎԷՋԴԻԶ ԵՒ ԵՌԵՋԻՆ ԴԻՄԵԿԵԿԻՐ.

(Իշխանը, աչքին դրած լօրնետ խումբը ձեղքելով առաջ է գալիս):

ԻՇԽԵՆ.

Հէնց նա՛ է... ուրիշ հաղարների մէջ էլ որ լինի, ևս սորան կըճանաչեմ: (Նստում է բազմոցի վերայ և բռնում դիմակ կրող կնոջ ձեռքից): Օ՛, դու այլ ևս չես փախչիլ...

ԴԻՄԵԿԵԿԻՐ.

Ես ձեզանից չեմ էլ փախչում: ասացէ՛ք, ինչո՞րեմ, Բնչ է. ք ուզում:

ԻՇԽԵՆ.

Ձեզ տեսնել:

ԴԻՄԵԿԵԿԻՐ.

Ա՛յ ծիծաղալի միտք. ես ձեր առաջն եմ...

ԻՇԽԵՆ.

Այդ մի չարամիտ հանաք է և թէպէտ քո նպատակը այդ է. բայց իմը այլ է... Եթէ հէնց այս վայրկենիս չմերկացնես քո շնաշխարհիկ դէմքը, այն ժամանակ ես ու ժով կըպոկեմ այդ նենգապատիր դիմակը և...

ԴԻՄԵԿԵԿԻՐ.

Ա՛րի և հասկացիր տղամարդուն այդ բոլորից յետոյ... Բաւական չէ այն, որ ձեզ սիրում եմ, ո՛չ, այդ քիչ է. ք համարում... ուզում էք ամեն բան: Երևի, դուք ցանկանում էք նաև պատիւս ոտնակոխ անել, որպէս զի յետոյ պարահանդէսում կամ զբօսանքի մէջ պատահած լուպէում մի առանձին բաւականութեամբ պատմեք ձեր բարեկամներին այս տխուր ու մի և նոյն ժամանակ ծիծաղալի դէպքը և որ աւելին է, նոցա կասկածը փարատելու համար, ասէք, թա ահա՛ նա և այդ ասելու ժամանակ մատով ցոյց տաք ինձ վերայ: Այս է ձեր պահանջը, չէ՞:

ԻՇԽԱՆ.

Ես այսուհետև քո ձայնը կը յիշեմ:

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Կարող էք, բան ասաց, Դուք հարիւրաւոր կանայք կարող էք գտնել այս ձայնով խօսելիս. փորձեցէք դիմել դոցանից մէկին և յետոյ կը տեսնէք, թէ ինչպիսի նախատինք կը թափէ նա ձեր գլխին, ծշմարիտն ասած, ցանկութիւնս էլ հէնց այդ է, որ այդպիսի մի փորձանքի հանդիպէք դուք:

ԻՇԽԱՆ.

Բայց դեռ իմ բաղդաւորութիւնս թերի է:

ԴԻՄԱԿԱՆԻՐ.

Այդ դուք իրաւունք չունիք ասելու. Գուցէ դեռ ևս դուք պէտք է օրհնէք ձեր ճակատադիրը, որ ես չեմ ուզում մերկացնել իմ դէմքը, Կարող է լինել, որ ես մի պառաւ կին եմ, մի այլանդակ արարած... Ե՛հ, յետոյ ձեր դէմքին ինչ արտայայտութիւն կը տայիք:

ԻՇԽԱՆ.

Դու մտադիր ես ինձ վախեցնել, բայց իմացիր, որ այդ իզուր մի աշխատանք է: Քո գեղեցկութեան մի մասի հետ ծանօթանալով, մնացածը դժուար չէ գուշակել:

ԴԻՄԱԿԱՆԻՐ, ուզում է գնալ:

Մնաս բարև յաւիտեան:

ԻՇԽԱՆ.

Ո՛չ, ո՛չ, մնացէք մի վայրկեան ևս, Միթէ դու ոչինչ չպէտք է թողնես ինձ այս քաղցր վայրկեանը յիշելու համար. չէ՞ որ ես խելագարուած եմ: Միթէ չես տեսնում իմ թշուառ վիճակը, միթէ չես խղճում ինձ:

ԴԻՄԱԿԱՆԻՐ, երկու քայլ հեռանալով:

Ծշմարիտ էք ասում. իրաւ որ պէտք է խղճալ ձեզ և ահա՛, հէնց դորանից դրդուած տալիս եմ ձեզ իմ այս ապարանջանը, առէք: (Ապարանջանը ձգում է յատակի վերայ և մինչև իշխանի բարձրացնելը ինքն անհետանում է իւրի մէջ):

ՏԵՍԻԼ, ԵՕԹՆԵՐՈՂ.

ԻՇԽԱՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԱՐԲԵՆԻՆ.

ԻՇԽԱՆ, որոնելով գիմակ կրող տիկնոջը.

Ինձ յիմարացրեց միանգամայն այդ կինը... Եթէ ես այժմ
չխելագարուիմ՝ այդ մի մեծ քաջութիւն կրլինի իմ՝ կողմից...
(Նկատելով Արքեանին): Ահ.

ԱՐԲԵՆԻՆ, մտածմունքների մէջ խորատուցուած, ինքը իրեն
հետ խօսում է.

Ո՞վ էր այս չարամիտ մարգարէն... պէտք է, որ նա ճա-
նաչէ ինձ... Չէ նորա ասածները հանաքի կերպանանք չունէին.

ԻՇԽԱՆ, մօտենալով.

Մի փոքր առաջ ձեր տուած խրատը ինձ մեծ օգուտ տուաւ.

ԱՐԲԵՆԻՆ.

Շատ ուրախ եմ:

ԻՇԽԱՆ.

Բայց պէտք է գիտենաք, որ բազդը ինքն իրեն թռաւ իմ
առաջը.

ԱՐԲԵՆԻՆ.

Բազդը միշտ այդպէս է մարդուս գլխովը ընկնում:

ԻՇԽԱՆ.

Հէնց բռնեցի նորան՝ կարծելով թէ ամեն բան վերջացած
է և մէկ էլ յանկարծ նայեմ տեսնեմ (փչում է ձեռքի ափի վե-
րով)... Եթէ այս բոլոր պատահածը երազ չէ, այն ժամանակ
ես պէտք է բացարձակ ինձ յիմարների թագաւոր անուանեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ձեմ ուզում գորա գէմ՝ վիճել, որովհետեւ ինձ ոչինչ
յայտնի չէ:

ԻՇԽԱՆ.

Էհ, դու միշտ ուզում ես հանաք անել, բայց հիմա գորա
ժամանակը չէ: Ահ, ի սէր Աստուծոյ ասացէ՛ք ինձ, էլ ուղղել
չի՞ կարելի այս սխալը: Ահա՛ լսեցէ՛ք, ես ձեզ պատմեմ գործի
բոլոր եղելութիւնը: (Ականջին մի քանի խօսք է ասում): Ես միան-
գամայն զարմացած մնացի. Այդ չարաճճիկ խաբեբան թէեւ ձեռ-

քիցս դուրս ընկաւ, բայց ահա՛ թէ ինչ թողկց (ցոյց է տալիս ապարանքանք)։ Մինչև այժմն էլ չեմ կարողանում ուշքի գալ և բոլոր պատահածը երազի եմ նմանեցնում։ Ախտո՞ս, ախտո՞ս ո՞վ այսպիսի անմիտութար փախճան ունեցաւ...

ԱՐԲԵՆԻՆ. Ժպտելով.

Գուցէ վա՞ռ էք նկսել... Տուէ՛ք ինձ, տեսնեմ, այդ ինչ բան է։ Բաւական գեղեցիկ ապարանքան է և ինձ թւում է, թէ սո-
նոս նման մէկը ևս մի տեղ տեսել եմ... Տա՛, սպասեցէք... բայց չէ՛, այդ անկարելի է... Ո՛չ, չեմ յիշում, մոռացել եմ։

ԻՇԽԱՆ.

Այժմ ես ձրտեղ գտնեմ սորա տիրոջը...

ԱՐԲԵՆԻՆ.

Ել Տեղուն ո՞ր էք գնում, հէնց ստաջին պատահածին բռնեցէք. դորա տիրոջ նման այստեղ հաղարատորներ կրգտնուին.

ԻՇԽԱՆ.

Բայց եթէ յանկարծ դուրս եկաւ, որ նա՞ չէ։

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ էլ կարող է պատահել, բայց դա մի մեծ ցաւ չէ՛. երեւակայեցէք...

ԻՇԽԱՆ.

Ո՛չ, ո՛չ, եթէ սորա տէրը ծովի անգունդումն էլ լինի, կրկին ես պէտք է նորան գտնեմ։

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ դու գիտես, իսկ այժմ՝ արի գնանք, փոքր ինչ՝ ման գանք. եթէ այդ ապարանքան տուողը միանգամայն յիմար չէ, այն ժամանակ նա պէտք է վաղուց թողած լինի այս հանդէսը.

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Ր Ո Ր Դ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԾԱՌԱՆ.

ԱՐԲԵՆԻՆ.

Ա՜յ, որքան ուրախ եմ, որ այս երկոյթն էլ վերջացաւ, այժմ կարող եմ գոնէ փոքր ժամանակ ամեն ինչ մոռացութեան տալ և ո՛չ մի բանի մասին չմտածել: Դեռ մտքիցս չի հեռացել այն բազմերանգ խառնամբօսը և դիմապահանդէսն իւր ամբողջութեամբ: Զարմանալի՞ չէ. մէկ հարցնող լինի, թէ ես ի՞նչ էի անում այնտեղ. իրաւ, ծիծաղալի չէ. . . Սիրահարին խորհուրդներ էի տալիս, ենթադրութիւնները ստուգում էի, ապարանքներ էի համեմատում և ուրիշների փոխարէն մտածում էի ուղիղ այնպէս, ինչպէս որ այդ անում են բանաստեղծները: Ի՜նչ իմ բանն է, մի՞թէ այդպիսի զեբը համապատասխան է իմ այս հասակիս, մի՞թէ ինձ վայել է խառնուել այդպիսի գործերի մէջ: (Ծառային) Տիրուհին տուն է դարձել թէ ոչ:

ԾԱՌԱՅ.

Ո՛չ, դեռ չէ դարձել:

ԱՐԲԵՆԻՆ

Ապա ե՞րբ պէտք է դառնայ:

ԾԱՌԱՅ.

Խոստացել է տասներկու ժամին վերադառնալ:

ԱՐԲԵՆԻՆ.

Է՜հ, լա՛ւ, այժմ երկունսն է, ուրեմն ո՞րտեղ պէտք է մնացած լինի, իսկ չպէտք է գիշերէ այնտեղ:

ԾԱՌԱՅ.

Այդ ես չգիտեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Հաւատացի. Լա՛ւ, գնա՛ և մօմն էլ դիր սեղանի վերայ, եթէ հարկաւոր կըգաս, ձայն կըտամ: (Ծառան հեռանում է, իսկ ինքը տեղաւորվում է բազմոցի վերայ):

ՏԵՍԻՆ, ԵՐԿՐՈՐԴ.

ԱՐԲԵՆԻՆ, միայնակ.

Շատ իրաւացի է Աստուծոյ դատաստանը: Կարծես, ես այսօր պատժի եմ ենթարկուած իմ անցեալում գործած անթիւ ու անհամար մեղքերի համար: Ուղիղ այնպէս, ինչպէս որ ես եմ՝ այժմ իմ կնոջը սպասում, ասում եմ, ուղիղ հէնց այս դրութեան և այս վիճակի մէջ, անցեալ՝ անդարձ գնացած օրերում ուրիշների կանայքն էին ինձ սպասում: Այն խաբեւայ սիրահիներին շրջանում եւ յիմարաբար՝ միանգամայն անօգուտ տեղից թունաւորեցի երիտասարդութեանն օրերը, եւ ինչո՞ւ համար, քանի որ ես երբէք դոցա չսիրեցի: Նոքա տանջվում էին ինձ համար, սիրում էին ինձ բուն զգացմունքով, ինձ համար խելագարվում էին, նոցա սիրտը շարունակ բաբախում էր ինձ տիրելու ցանկութենից, բայց ոչինչ հետեանք չեղաւ այդ ամենից, քանի որ ես ինքս շարունակ դոցա ատելով ատում էի: Բաւական չէր այս ամենը, ես դեռ աշխատում էի ուրիշներին էլ իմ ճանապարհով տանել, աշխատում էի ուրիշների հոգւոյ մէջ էլ սիրոյ կայծեր վարժեցնել և շարունակ դոցա քարոզում էի սիրոյ մասին ուղիղ այնպէս, ինչպէս մի աղախին, երբ նա հէքիաթներ է պատմում իրեն խնամքին թողած մանուկներին: Ձանձրացայ վերջապէս այդ ամենից և յետոյ կեանքիս օրերը խաւարեցան: Չգիտեմ, ով այս տխուր միջոցին ինձ մի սատանայական խորհուրդ տուաւ, որ ես պսակուեմ... որպէս զի յետոյ էլ իրաւունք չունենամ ոչ ոքին աշխարհքիս երեսին սիրել բացի իմ կնոջից: Այդ խորհուրդից յետոյ շուտով ես գտայ մի կին, մի խոնարհ արարած: Նա այնպէս գեղեցիկ և խելօք էր, ինչպէս Աստուծոյ գառը մորթելու ժամանակ, Ահա, այդ հրաշալի արարածի ձեռքից բռնած, ես մօտեցայ սուրբ սեղանին և յանկարծ այդ ժամանակ նորից իմ մէջ արթնացաւ վաղեմի խլացած ձայնը. ես խորը թափանցեցի հոգիս և իմացայ, որ ճմարիտ դորան սիրում եմ: Թէեւ ամաչում եմ, բայց նորից կրկնում եմ, որ ես դորան սիրեցի և սարսափեցայ... Նորից ես ենթարկուեցայ մտատանջութիւնների ճնշողութեանը, նորից սիրոյ բոցավառ ճառագայթները սկսան ազատօրէն շառաչել դատարկ հոգւոյս խորքերում: Իբրեւ մի կործանուած մակոյկ, ես նորից սկսեցի պտոյտներ կատարել ծովի ճաշաւոր ալիքների մէջ: Կըհասնեմ արդեօք երբ և իցէ նաւահանգստին, թէ ոչ:

ՏԵՍԻՆԻ, ԵՐՐՈՐԴ

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ՆԻՆՕ.

Նինոն ոտի ծայրերի վերայ մտնում է սենեակի և ամուսնի լստեից համբուրում է նորա ծակատը:

ԱՐԲԵՆԻՆ.

Ա՜խ, այդ դու ես, բարե, Նինո... Վերջապէս եկար, ինչո՞ւ այսքան ուշացար:

ՆԻՆՕ.

Մի՞թէ այդքան ուշ է:

ԱՐԲԵՆԻՆ.

Ահա՛ մի ժամից ատելի է, ինչ որ սպասում եմ քեզ:

ՆԻՆՕ.

Ուղիղ ա՜խ, ի՞նչ հրաշալի մարդ ես, ի՞նչ գեղեցիկ ամուսին ես եղել դու:

ԱՐԲԵՆԻՆ.

Երեւի, դու այնտեղ այսպէս էիր մտածում, թէ թող որքան ուշում է, այն յիմարը սպասէ, իսկ ես...

ՆԻՆՕ.

Ա՜խ Աստուած, այս ի՞նչ վիճակ է... Մի ասա, ինչպե՞ս, ինչո՞ւ ես դու միշտ չարացած, ինչո՞ւ է քեզանից անպակաս քո այդ գոռոզ ու հպարտ հայեացքը: Երբէք չսպասեցի, որ ես իմ որ ե է գործողութեամբս քեզ հաճոյք, բաւականութիւն պատճառէի: Մեր միմեանցից բաժանուած ժամանակը տիրում ես, իսկ հանդիպած կամ միասին գտնուած ժամանակը չարանում ես և քրիճմնջում: Եթէ դու լաւ ամուսին ես, ասա՛ ուղիղակի, թէ, Նինո, թող աշխարհքը իւր լաւ ու վատ կողմերով, որովհետեւ ես այսօրուանից վճռել եմ միմիայն քեզ հետ ապրել և միմիայն քեզ համար: Եթէ ուղում ես, ասա, թէ, Նինո, առաւօտեանից մինչև երեկոյ ինչո՞ւ համար պէտք է քեզ միշտ ուրիշ մարդիկ տեսնեն, և այն էլ այնպիսի մարդիկ, որոնք ոչ խելք ունին և ոչ հոգի: Եթէ ցանկութիւն ունիս, միանգամից միանգամ ասա, թէ ինչո՞ւ համար պէտք է դու միշտ գտնուես զբօսարանների պճնասէր, գատարկամիտ և կօրսեւորի մէջ սեղմուած ստոր արարածների շրջանում, մինչդեռ ինքս ամբողջ

որուայ մէջ միմիայն մի ժամ եւմ կարողանում նուիրել քեզ և երկու խօսք խօսել։ Կրկնում եւմ, ասա՛ պոս ամենը, և այնուհետեւ ես պատրաստ եմ քո խոնարհ ծառայ լինելու։ ասա՛ և այն ժամանակ դու կըտեսնես, ինչ համբերութեամբ ես կըթաղեմ՝ պոս իմ ծաղիկ, երիտասարդ հասակս զի զական կեանքի մէջ։ Ասա՛ և այն ժամանակ դու կըտեսնես, թէ ինչ անձնուիրութեամբ ես կըհեռանամ պարահանդէսներից, շքեղ՝ բայց ինձ համար անտանելի կեանքից, մոգաններից և այս տխուր և միանգամայն յիմար աղատութիւնից։ Ասա՛, ասա՛, եթէ փոքր ինչ քաջութիւն ունիս, խոստովանուիր իրրեւ քո ամենամտերիմ բարեկամիդ... բայց ես շատ եմ գրաւվում, երեւակայութիւնս ինձ չափազանց հեռու տարածութիւն է մղում։ Ենթադրենք հէնց, որ ճշմարիտ ինձ սիրում ես, բայց այդ սէրը այնքան փոքր, այնքան չնչին է... Եթէ իրաւ, դու ինձ սիրէիր այնպէս, ինչպէս որ պէտք է, կամ ինչ սիրոյ որ արժանի էի, այն ժամանակ քո մէջ այսքան տարուայ ժամանակամիջոցում մի չնչին կասկած անգամ պէտք է չզարթէր իմ մասին դէպի որ և է անձնաւորութիւն։ Բայց ես երբէք քո մէջ չեմ նկատել այդ յատկութիւնը և հէնց այդ մի բանը պարզ ապացոյց է, թէ որքան դու անտարբեր ես իմ վերաբերմամբ։

ԱՐԲԵՆԻՆ.

Դորանում ես մեղաւոր չեմ ի բնէ սովորել եւմ անհոյ կեանքին և բացի դորանից, իմ կարծիքով՝ այդ տեսակ կասկածը աւելի քան ծիծաղարի է։

ՆԻՆՕ.

Ի հարկէ։

ԱՐԲԵՆԻՆ.

Դու զարմանում ես, Նինս, հա՛։

ՆԻՆՕ.

Ո՛չ, ո՛չ, ընդհակառակը ես շատ ուրախ եմ և չափազանց շնորհակալ ձեզանից։

ԱՐԲԵՆԻՆ.

Գու տխուր ես, Նինս։

ՆԻՆՕ.

Ես միմիայն այն եմ ասում, որ դու ինձ՝ չես սիրում և և ուրիշ ոչինչ։

ԱՐԲԵՆԻՆ.

Նի՛նո:

Նի՛նօ.

Ի՞նչ էք ուզում ասել:

ԱՐԲԵՆԻՆ.

Ահա՛ թէ ինչ, Մենք, Նինո՛, մեր ճակատագրի շնորհիւ ընդ միշտ կապուած ենք միմեանց հետ... Գուցէ այդ մի սխալ է, որ պատահել է, բայց իրողութիւնը կատարուել է և այժմ ոչ ևս և ոչ դու մի խօսք անգամ չպէտք է ասենք դորա դէմ: (Կնոջը մօտեցնելով, նստեցնում է ծնկների վերայ և համրորում): Դու թէ հոգով և թէ տարիքով դեռ երիտասարդ ես. կեանք վերնագով պն ահագին մեծութեամբ դրքի մէջ դու դեռ երեսի թուղթն ես կարդացել, և քո առաջ բաց են երջանկութեան և դժբախտութեան դռները: Այս երկուսից որը ուզում ես, ընտրի քեզ համար՝ յուսա՛ և երևակայիր: Քո ապագան դեռ լի է յոյսերով, իսկ անցեալդ սպիտակ և փայլուն է: Դու ինձ սիրում ես, ես այդ գիտեմ, քանի որ չճանաչելով ոչ քո հոգին և ոչ իմը, յաւիտեան դու քեզ ինձ յանձնեցիր և ինձ կենացդ ընկեր ընտրեցիր: Կրկնում եմ նորից, որ դու ինձ սիրում ես, բայց անհաշիւ, որովհետեւ դու քո զգացմունքների հետ խաղում և զուարճանում ես ուղիղ պնպէս, ինչպէս մի երեսխայ իւր խաղալիքների հետ: Ես ևս քեզ սիրում եմ, բայց ուրիշ կերպ: Կեանքի մէջ շատ բաներ եմ տեսել, ամեն ինչ զգացել եմ և բոլորը հասկացել ու իմացել: Շատ անգամ եմ սիրել, բայց աւելի յաճախ հակակրել և ամենից շատ տանջուել ու չարչարուել եմ: Սկզբում, ինչ ասես, ուզում էի, բայց փոքր ինչ յետոյ ուղածներս ատում էի, և այս կերպ անցնում էին օրերս ու տարիներս: Մարդիկ անիծեցին ինձ, իմ կեանքիս ճակատին դրած այդ դրոշմը ես յետոյ կարդացի և այդ օրուանից սառնարիւն փակեցի գիրկս աշխարհային բաղդի ու զգացմունքների առաջ: Դորանից յետոյ անցան շատ ու շատ տարիներ: Թէ ի՞նչ դառն ատելութեամբ և խորին հակակրանքով եմ յիշում քո կրծքի վերայ իմ պախարակիլ երիտասարդութեանս, քաղցր գրգռմունքներով թունաւորուած օրերի մասին, այդ միմիայն ինձ է յայտնի և Աստծուն, բայց հարցը դրանում չէ: Ես, թշուառս, սկզբում չկարողացայ հասկանալ քեզ, բայց յետոյ փոքր առ փոքր իմ հոգ-

ւոյ վրայից, անհետ կորաւ այդ շոր, անպէտք կեղեւը և իմ առաջ բացուեցաւ մի հրաշալի աշխարհ իւր բոլոր գեղեցկութիւններով։ Այդ օրուանից ևս յարութիւն առայ կեանքի և բարւոյ համար։ Բայց երբեմն, էլի մի չար հոգի ինձ ձգում տանում է և գցում այն առաջուայ փոթորկայից կեանքը, մտքիս մէջ ջնջում, խաւարեցնում է քո պայծառ հայեացքը, քո կախարդիչ ձայնը։ Ինքս իմ դէմ պատերազմի մէջ, ծանր մտածմունքների բեռան տակ, ահա՛, այդ վայրկեաններում ևս լինում եմ լուռ, դաժան և չար, քեզ շարապղծելու ցանկութեամբ, ահա՛, այդպիսի բոպէներում ևս վախենում եմ քեզ մերձենալուց, վախենում եմ որ մի գուցէ իմ հայեացքս, իմ հոգեկան տանջանքներից յառաջացած և տկամայից արձակած ձայներս, քեզ երկիւղ չպատճառեն։ Ահա՛, երեւի այդ ժամանակամիջոցներում դու ասում ես, թէ նա ինձ չէ սիրում։ (Նինօն խորամանկութեամբ նայում է ամուսնուն և ձեռքով շփում և ուղղում նորա մազերը)։

ՆԻՆՕ.

Ծմարիտ, որ զարմանալի բնաւորութեան տէր մարդ ես եղել դու Տե՛ս, երբ այդպէս ճարտար լեզուով սկսում ես նկարագրել քո՛՛ դէպի ինձ ունեցած սէրը, երբ գլուխդ այդպէս տաքանում է, երբ միտքդ այդպէս պարզ արտափայլում է աչքերիդ մէջ, ահա՛, այդ ժամանակ, առանց փոքր անգամ կասկածելու, հաւատում եմ քո բոլոր ասածներին։ Բայց ինչ կանես, որ յաճախ...

ԱՐԲԵՆԻՆ.

Յաճախ...

ՆԻՆՕ.

Ո՛չ, էնպէս երբեմն...

ԱՐԲԵՆԻՆ.

Նինօ՛, ես հոգով արդէն չափազանց ծերացած եմ, մինչդեռ դու այդ կողմից դեռ շատ երիտասարդ ես և, չնայած դորան, եթէ ուղենայինք, մենք կարող էինք համահաւասար զգալ ու հաւատալ։ Որքան յիշում եմ, ես քո տարիներում անպայման հաւատում էի այն ամենին, ինչ որ ասում ու խօսում էին։

ՆԻՆՕ.

Ինձ թւում է, թէ դու դարձեալ անբաւական ես. ախ, Աստուած իմ, Աստուած իմ, այս բ՞նչ պատիժ է։

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛հ, ո՛հ, ես բախտաւոր եմ, երջանիկ... ես զգում եմ, որ խտտախրտ մի մարդ եմ: Անմիտ շարախօս, փախիր, հեռացիր այս շարութեամբ և նախանձով լի ամբոխից: Ես բախտաւոր եմ... ես քեզ հետ եմ մինչև իմ վերջին շունչս: Թողնենք նախկին պատահածները, կատարեալ մոռացութեան տանք ծանր ազդեցութիւն ունեցող սև անցեալը: Ես տեսնում եմ, որ Ամենակարող Արարիչը՝ երկնքից քեզ ինձ համար պարգև է ուղարկել: (Համբուրում է նորա ծնոքերը և լոնկարծ, ջտեմնելով ապարանջան, լռում և գունատւում է:)

ՆԻՆՕ.

Ի՞նչ պատահեց քեզ, ինչո՞ւ գունատուեցար, ինչո՞ւ ես զողզողում... Ա՛խ, Աստուած իմ, Աստուած իմ:

ԱՐԲԵՆԻՆ, ցատկելով տեղից.

Ե՛ս, ո՛չինչ, կ'անցնի: Այդ ո՞րտեղ է քո միս ապարանջանը:

ՆԻՆՕ.

Կորել է:

ԱՐԲԵՆԻՆ.

Ա՛, կորել է:

ՆԻՆՕ.

Ի՞նչ ես ուզում զորանով ասել: Այո՛, կորել է և դամի մեծ ցաւ է, շատ, շատ, քսան և հինգ ուղիւղց նա երբէք աւել էէր արժենայ:

ԱՐԲԵՆԻՆ, տռանձին.

Կորցրած է... Զգիտեմ, թէ ինչո՞ւ է այդ դէպքը ինձ այսքան վրդովում և մտքերս պղտորում: Ո՛հ, եթէ իմանայիր, թէ ինչ տեսակ կասկածներ են ծագում իմ մէջ, թէ ի՛նչ շէնջոցներ եմ լսում շուրջս... Մի՞թէ ես այսքան ժամանակ քաղցր քնի մէջ եմ եղել և այժմս եմ միմիայն զարթնում...:

ՆԻՆՕ.

Ճշմարիտ, որ քեզ շատ դժուար է հասկանալ:

ԱՐԲԵՆԻՆ.

(Ձևոքերը խաչակնքած, սուր և թափանցող հաչեացք է ձգում կնոջ վերայ): Ասում ես, որ ապարանջանը կորցրած է, հա՞...

ՆԻՆՕ, նեղացած ձայնով.

Լաւ, սուտ եմ՝ ասում:

ԱՐԲԵՆԻՆ, աս անձին.

Բայց որքան նման են միմեանց, որքան.

ՆԻՆՕ.

Հաւանական է, որ կառքի մէջ վայր գցած լինիմ.—հրամայեցէք ծառային այնտեղ տեսնել: Երբէք, երբէք նորան եւ չէի վերցնիլ հետս, եթէ երեակայէի...

ՏԵՍԻԼ, ջՈՐՐՐՈՐԻ.

ԱՌԱՋԻՆԵՐԸ, ԵՒ ԾԱՌԱՆ.

(Արրենիին դանդաղարեւոյ լետոյ մտնում է, ծառանը:)

ԱՐԲԵՆԻՆ.

Կառքի մէջ մի ապարանջան է կորցրած, գնա՛ւ և ամենայն ուշադրութեամբ որոնիր այնտեղ... Աստուած չանէ, որ առանց նորան վերադառնաս. է՛հ, չուտ: (Կնոջը) Նինօ, իմացիր, որ այստեղ հարցը ապարանջանի մասին չէ. ո՛չ. իմ պատիւս ու բախտս գեր է կատարում այս բանի մէջ: (Փոքր ինչ լոնելոց լետոյ): Բայց եթէ նա այնտեղ չգտնէ՞ ապարանջանը.

ՆԻՆՕ.

Այն ժամանակ ասել է, որ ես նորան մի այլ տեղ եմ կորցրել.

ԱՐԲԵՆԻՆ.

Մի ա՞յլ տեղ. իսկ թէ որտեղ է, գու գիտես...

ՆԻՆՕ.

Առաջին անգամն է, որ ձեզ այդքան ժլատ ու խիստ եմ գտնում: Է՛հ, ի՛նչ արած, ձեզ մխիթարելու և հանգստացնելու համար, առանց ուշացնելու, ես հէնց վաղը կ'երթամ և կ'ըպատուիրեմ շինել իսկ և իսկ նորա նման մի նորը. (Ներս է մտնում ծառան):

ԱՐԲԵՆԻՆ.

Շուտ պատասխանիր, ի՛նչ համբաւ ես բերել...

ԾԱՌԱՆ.

Էլ տեղ չ'իջողեցի, որտեղ ասէք, ման եկայ:

ԱՐԲԵՆԻՆ.

Եւ չգտա՞ր:

ԾԱՌԱՅ.

Ո՛չ, չգտայ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ես այդ արդէն գիտէի: Լա՛ւ, գնա՛: (Սուր հայեացքով նայում է կնոջ վերայ):

ԾԱՌԱՅ.

Շատ հաւանական է, որ նա դիմակահանդէսում կորած լինի:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛հ... դիմակահանդէսի մէջ... ուրեմն դուք եղե՛ք էք այնտեղ:

ՏԵՍԻԼ, ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԲԱՑԻ ԾԱՌԱՅԻՑ.

ԱՐԲԵՆԻՆ.

(Ծառային) Կարող ես գնալ: (Կնոջը) Ասացէք, խնդրեմ, մի՞թէ դժուար էր ձեզ համար ինձ վաղորօք յայտնել զորա մասին: Ես հաւատացած եմ, որ դուք այն ժամանակ պատիւ կը համարէիք, թող տալ ինձ ձեր առաջնորդը լինել դիմակահանդէսը գնալու միջոցին, և այնտեղից էլ միասին տուն վերադառնալ: Հաւատացէք, որ ես իմ ներկայութեամբ երբէք ձեր ազատութիւնը չէի խանգարիլ ոչ իմ խիստ հսկողութեամբ և ոչ էլ իմ անտեղի ու անժամանակի գգուանքներով: Ո՛ւմ հետ էիք այնտեղ:

ՆԻՆՕ.

Համեցէք, այնտեղ եղած մարդկանցից ումից ուզում էք, հարցրէք, նոքա ձեզ ամենը կը պատասխանեն, նոյն իսկ հազար ու մի տեսակ վերադիրներով: Նոքա կէտ առ կէտ կը պատմեն ձեզ, թէ ով կար այնտեղ, թէ ում հետ եմ խօսացել և թէ ում եմ նուիրել ՚ի յիշատակ իմ ապարանջանը: Դուք այդ մարդկանցից հազար անգամ աւելի ճիշտը կ'իմանաք բոլոր եղելութիւնը, քան այն ժամանակ, երբ ինքներդ անձամբ այնտեղ գտնուէք: (Ծիծաղելով:) Աստուած է վկայ, ձեր արարմունքը այնքան ծիծաղելի է, որ էլ չեմ կարող ասել: Մի՞թէ ամօթ չէ ձեզ համար, մի՞թէ մեղք չէ, որ մի չնչին ու դատարկ բանի համար այդքան զղրկոց էք բարձրացնում:

ԱՐՔԵՆԻՆ.

Տայ՛ Աստուած, որ դա քո վերջին ծիծաղը չլինի:

ՆԻՆՕ.

Օ՛, եթէ ձեր ցնորքները դարձեալ պիտի շարունակուին, այն ժամանակ այդ ևս պէտք է համարել, որ վերջինը չէ:

ԱՐՔԵՆԻՆ.

Ո՛վ է իմանում, կարող է պատահել... բայց լսի՛ր, Նինօ...
 Ես ճշմարիտ ծիծաղելի գերի մէջ եմ հէնց այն պատճառով, որ քեզ այդչափ ուժգին ու անհուն սիրում եմ, այսինքն այն չափով, ինչ չափով որ կարող է սիրել մի մարդ: Եւ ի՛նչ զարմանալի բան կայ դորանում: Ուրիշները խրեանց կեանքի մէջ միլիօնաւոր, յոյսեր ունին աչքի առաջ: Մէկը հարստութեան է ձգտում, միւսը գիտութիւնների մէջ է խորասուզուած, երրորդը փառքի, շքանշանների ու աստիճանների հետեից է վազում, չորրորդը սիրում է հասարակութիւն և զուարճութիւններ, հինգերորդը ճանապարհորդում է, վեցերորդը զբաղվում և արիւնը եռ է ածում թղթախաղի մէջ... Ես էլ մի ժամանակ ճանապարհորդել եմ, խաղացել եմ, անմիտ դործերի յետեից եմ գնացել և աշխատել եմ: Այս բոլորի մէջ թէ բարեկամի, թէ ծանօթի եւ թէ ազգականի կողմից ես շարունակ խարդախ սէր եմ նկատել և կեղծ համակրութիւն: Ես երբէք աստիճաններ ստանալու ցանկութիւն չեմ ունեցել, իսկ փառքի էլ չեմ հասել, թէ հարստութեանս միջոցում, թէ առանց կոպէկի գտնուած բոպէներում ես շարունակ տանջուել եմ միայնակութիւնից և տրտութիւնից: Չնայած որ ամէն մի քայլափոխում կեղտոտութիւններ էի նկատում, բայց և այնպէս, ես իմ գոռոզ բնաւորութեան շնորհիւ, երբէք ոչ մէկի առաջ գլուխ չեմ խոնարհել: Կեանքիցս թէ մի բան մնացել է, այդ դու ես, մի թղլ արարած, բայց գեղեցկութեան տիպար: Քո սէրը, քո ժպիտը, քո շունչը... չէ՛ որ ես մարդ եմ, քանի որ դժբա ինձ եմ պատկանում, քանի որ դժբա իմն եմ, ես էլ ուրիշ ոչ մի բան չեմ ուզում: Առանց դոցա ես ոչ բաղդաւորութիւն ունիմ, ոչ հոգի, ոչ զգացմունք, ոչ կեանք: Բայց եթէ ճշմարիտ ես խաբուած եմ... այո՛, եթէ ես խաբուած եմ, եթէ ճշմարիտ է այն, որ այսքան ժամանակ մարդկային կերպարանքով օձ է տաքացել կրօքիս վերայ, եթէ ճիշտ եմ ենթադրութիւններս, միանգամայն ուղիղ և

Հիմնաւոր, եթէ ճշմարիտ է այն, որ դու ինձ փաղաքշանքների և գգուանքների մէջ քնացնելով մի ուրիշն հետ ծիծաղել ևս պարզամտութեանս ու յիմարութեանս վերայ... Ա՛խ, լսիր, Նինս... Ես իմ ծնունած օրից հետո ի միասին լոյս աշխարհք եմ բերել այնպիսի մի սիրտ, որ կատաղի ու բորբոքուող է ուղիղ այնպէս, ինչպէս և լաւան. Գանի որ նա չի տաքացած, ամուր է այնպէս ինչպէս և քարը... Բայց հէնց որ սկսեց եռ գալ ու վիժել, այն ժամանակ նորան մօտենալը երկիւղալի է, այդ մի անզգոյշ խաղ կը լինի իւր վնասակար հետեանքներով: Այն ժամանակ... չկայ ներողամտութիւն: Վրէժինդրութեան համար ես ոչ մի օրէնք օգնութեան չեմ հրաւիրիլ, այլ ինքս իմ ձեռքով, անանց խղճահարուելու, առանց արտասուքի մի հարուածով վերջ կըտամ մեր երկուսիս կեանքին: (Ուզում է կնոջ ձեռքից բռնել, բայց նա մի կողմ է ցատկում:)

ՆԻՆՕ.

Օ՛, մի՛ մօտենար... դու սարսափելի ես. ես քեզանից վախենում եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Մթթէ... Ես սարսափելի՞ եմ: Ո՛չ, դու այդ հանաք ես անում: Ես ոչ թէ սարսափելի, այլ ծիծաղալի եմ: Շատ բարի, ծիծաղեցէ՛ք, ծիծաղեցէ՛ք... Նպատակներիդ հասնելուց յետոյ էլ ինչո՞ւ պէտք է գունատուէ՛ք, դողողաք: Դէ՛հ, չճշտ, թող գայ այստեղ այդ բորբոքուած սիրահարը, դիմախահանդէսների այդ խաղալիքը, թող գայ, տեսնէ ու մսխթարուի: Ես ձեր շնորհիւ արդէն ճաշակել եմ բոլոր գոփոսային տանջանքները. միմիայն այդ էր պակաս, թող դա ևս լինի, ոչի՛նչ:

ՆԻՆՕ.

Հա՛, ես միմիայն այժմ հասկացայ ձեր կասկածանաց բոլոր պատճառը: Եւ այդ բոլորի մէջ միակ մեղաւորը ապարանջանն է, այնպէս չէ: Հաւատացէ՛ք, որ ձեր այդ վարմունքը ծիծաղալի է չէ թէ միայն ինձ այլ և ամբողջ աշխարհի համար:

ԱՐԲԵՆԻՆ.

Լա՛ւ, ծիծաղեցէ՛ք, ծիծաղեցէ՛ք, ո՛վ աշխարհային յիմարների. ծիծաղեցէ՛ք, ո՛վ դուք անհոգ և ողորմելի ամուսիններ, ծիծաղեցէ՛ք. բանի որ մի ժամանակ էլ ես էի ձեզ խաբում և

վրաներդ ծիծաղում: Իսկ դուք այդ մինչև այսօր էլ չգիտեք և ապրում էք, աւանդ, իրրև մի մի սուրբ արքայութեան մէջ... Է՛հ, մնաս բարեաւ, իմ գեղեցիկ, իմ հրաշալի աշխարհային դրախտ: քեզ տալիս եմ իմ վերջին ողջոյնս, մնա՛ս բարեաւ: Ես այժմ արդէն բոլորը գիտեմ: (Կնոջը:) Իսկ դու, բորիան, հեռացիր ինձանից: Ես, յիմարս, դեռ կարծում էի, թէ կըղզայ իւր յանցանքը, վշտացած, ծնկաջոք կընկնէ առաջս, կըխոստովանի ամենը և բացարձակ բոլոր եղելութիւնը կը յայտնէ ինձ: Սյո՛՛, ես կըմեղմանայի, եթէ արտասուքի մի կաթիլ տեսնէի նորա աչքերին... միմիայն մի կաթիլ... Բայց ո՛չ. նա արտասուքի փոխարէն ծիծաղով պատասխանեց ինձ:

ՆԻՆՕ.

Զգիտեմ, թէ ով է ինձ այդ կերպ զըրպարտել ձեր ներկայութեամբ և ցանկութիւն էլ չունիմ իմանալու, բայց ես ներում եմ ձեզ և խոստովանում եմ, որ դորա մէջ յանցանք չունիմ: Յաւում եմ, թէ եւ օգնել էլ ձեզ չեմ կարող: Վերջոյ, ձեզ հանգստացնելու և մոխթարելու նպատակաւ կ'ասեմ այսքան, որ ես երբեք սուտ չէի խօսիլ այսպիսի մի նշանաւոր հարցում:

ԱՐԲԵՆԻՆ.

Օ՛, լռիր խնդրեմ... բաւական է...

ՆԻՆՕ.

Բայց լսիր ինձ... ես անմեղ եմ... թող Աստուծոյ պատժին ենթարկուիմ, եթէ սուտ եմ խօսում... Ի՛ սէր Աստուծոյ, լսիր ինձ...

ԱՐԲԵՆԻՆ.

Ես արդէն անգիր գիտեմ այն ամենը, ինչ որ պէտք է դու ասես:

ՆԻՆՕ.

Ինձ սաստիկ ցաւ են պատճառում քո յանդիմանութիւնները... Ես քեզ սիրում եմ, Եւգենիյ:

ԱՐԲԵՆԻՆ.

Լա՛ւ է, լա՛ւ ժամանակ ես գտել խոստովանելու...

ՆԻՆՕ.

Աղաչում եմ, լսիր ինձ: Ա՛խ, այս քիչ ցաւ է, Աստուծո՛՛ իմ: Լա՛ւ, մէկ աստ տեսնեմ, քիչ ես պահանջում դու:

ԱՐԲԵՆԻՆ.

Վրէժխնդրութիւն:

ՆԻՆՕ.

Շատ բարի, այժմ աստ տեսնեմ, այդ ումնից ես ուզում
փրկեմ առնել:

ԱՐԲԵՆԻՆ.

Օ՛, այդ ես գիտեմ, թէ ումնից պիտի փրկեմ առնեմ: Մի՛
շտապէք, թողէք հասնի ժամը եւ այն ժամանակ ճշմարիտ, որ
կըզարմանաք ինձ վերայ:

ՆԻՆՕ.

Զլինի՞ թէ այդ փրկեմ ինձնից ես ուզում առնել... է՛հ,
էլ ո՞ր ես ուշացնում:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ անպէհ հերութիւնը ձեզ սաղ չէ գալիս:

ՆԻՆՕ, արհամարհանքով.

Ապա ումն է սաղ գալիս

ԱՐԲԵՆԻՆ.

Դուք ում համար էք երկիւղ կրում:

ՆԻՆՕ.

Աստուած իմ, Աստուած իմ, մի՞թէ այսպիսի դառն վայր-
կեանքներ դեռ էլի շատ են սպասում ինձ, Օ՛, վերջ տուր իսէր
Աստուծոյ այդ բոլորին, թէ չէ դու քո այդ տեսակ անտեղի
կասկածներով միանգամայն կըսպանես... Գիտես, որ ես ինգրե-
լու սովորութիւն չունիմ եւ աւելորդ մի աշխատանք կըլինի այդ,
քանի որ դորանով քո անողորմ գութը երբէք չի շարժուիլ...
Բայց իմացիր, որ այս մի անգամն էլ եմ ներում քեզ:

ԱՐԲԵՆԻՆ.

Աւելորդ աշխատանք է:

ՆԻՆՕ.

Բայց չէ՞ որ Աստուած կայ... Նա քեզ չի ների:

ԱՐԲԵՆԻՆ.

Շատ ափսոս, (Նինօն նշողանում է լաց լինելով:) Ահա՛ ձեզ

կին ասած ըանր... Օհ, ես ձեզ վաղուց եմ ճանաչում, ինձ յայտնի են ձեր բոլոր փաղարշանքները և յանդիմանութիւնները: Ափսոս և հազար ափսոս, որ այդ թշուառ ու ողորմելի գիտութեան դասերը ինձ վերայ չառ թանկ է նստում: Բայց մի կողմից էլ՝ ճշմարիտ որ պէտք է խոստովանուի՝ և այն, թէ ունիմ՝ արդեօք ես մի արժանաւորութիւն, որով իրաւունք ունենամ՝ դոցա սէրը վայելելու: Չիկնի թէ այս իմ ահարկու գեւթիս ու ձանկիս վերայ պէտք է սիրահարուեն դռա... (մօտենում է կնոջ սենեակի դռանը և ականջը մօտենցնում է նորան): Ի՞նչ է անում: Գուցէ ծիծաղում է... Բայց չէ՛, լաց է լինում: (Հեռանալով): Ափսոս, որ ուշ է...:

ԵՐԵՐՈՒՆԺ ԵՐԿՐԱՐԳ:

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն.

ՏԵՍԻՍ, ԱՌԱՋԻՆ.

Դրսուցին լողնած դրումեամբ՝ նստած բազմոցի մէջ, ձեռքին բռնած գիրքը մի կողմ է ձգում:

ԳՔՍՈՒՀԻ.

Ճշմարիտ, որ արժէ մտածել, թէ ի՞նչ նպատակի է ծառայում մեր կեանքը. կարծես, այդ մեզ նորա համար է տուած, որ շարունակ օտարների կամքը կատարենք և միշտ ստրուկ լինինք: Ժօրժ Սանը, իմ կարծիքով, շատ ճշմարիտ հայեացք ունի այս հարցի առթիւ: Մէկ ասացէք, խնդրեմ, ի՞նչ է ներկայացնում իրենից ներկայ ժամանակի կին-մարդը. մի՛ տարած առանց որ և է կամքի և ուրիշները կրքերի ու քմահաճութեանց խաղալիք: Ամբողջ մարդկութիւնը իրեն դատարար ունենալով, բայց և ո՛չ մէկին գոցանից իրեն հաւատարմատար ու պաշտպան, նա հարկադրուած է լինում կամ ծածկել իւր բուն զգացմունքների բոցը, և կամ թէ դոցա խեղդել զեռ իւր ծաղկափթիթ հասակում: Ի՞նչ բան է կինը, նորան արդէն մատաղ տարիներից շահաւետ փաճառքի համար են պատրաստում, կարծէք, թէ դա շուկայի որ և է ապրանք լինի: Դատապարտում են, երբ նա լոկ միմիայն իրեն, իսկ երբ ուրիշներին է ուղում սիրել, դռան նոյնպէս արգելք են լինում: Ճշմարիտ՝ ժամանակ, ժամանակ նորա մէջ

կրքերը, զգացմունքները սկսում են ալեկոծուել, բայց մի՞թէ դոքա կարող են առաջ գնալ և յենարան գտնել: Այդպիսի բուսականություն, մի կողմից երկիւղը և միւս կողմից բանականութիւնը իրենց դերի մէջ մտնելով, իսպառ խորտակում, ոչնչացնում են այդ տեսակ մտքերի գոյութիւնը, իսկ եթէ պատահում է, որ դոցանից մէկն ու մէկը, մոռացութեան տուած աշխարհի դժը, իւր մէջ շառաշող զգացմունքների ճնշման տակ, հոգով և մարմնով ամբողջապէս նուիրվում է իրեն զուարճացնող բաւականութեանց, այն ժամանակ այդպիսիների համար փակվում են ընդ միշտ բախտի և հանգստութեան դռները, իսկոյն ամբողջ աշխարհքը կը թափուի նորա գլխին, նորա համար զաղտնիք ասած բանը գոյութիւն չունի, նա շատ անգամ աղնութիւնն ու անբարոյականութիւնը տեսքից ու հագուստից է ընդունում, բայց իրենց բարեվայել կեանքին հասցրած այդ տեսակ վերաւորանքը նա չէ կարող սառնարիւն տանել և խիստ ու անգութ վճիռ կը կայացնէ այդ տեսակ անձանց համար... (Ուզում է կարդալ): Ոչ, չեմ կարողանում կարդալ. ես միանգամայն շփոթուեցայ այս մտածմունքներից, ես զորանից վախենում եմ աւելի քան թշնամուց... և յիշելով այն ամէնը, ինչ որ եղել՝ կատարուել է, միանգամայն զարմացած եմ մնում ինքս ինձ վերայ: (Ներս է մտնում Նինոն):

ՏԵՍԻՍԻ, ԵՐԿՐՈՐԴ:

ՆԻՆՕ:

Mon amour, սահնակով զբօսնելու ժամանակ, մտածեցի գալ քեզ այցելութիւն:

ԴՔՍՈՒՀԻ:

C'est une idée charmante, vous en avez toujours. (Նստում են): Այդ ի՞նչ է պատահել քեզ, Նինօ, ի՞նչու այդքան գունատուած ես: Մի՞թէ դրսի քամին և սառամանիքը կարող էին այդքան ազդել քեզ վերայ: Աչքերիդ կարմրութիւնն էլ չլինի՞ թէ արտասուքից է:

ՆԻՆՕ:

Այս գիշեր շատ անհանգիստ եմ քնել, երևի դորանից է, դեռ այսօր էլ շատ վատ եմ զգում ինձ:

ԴՔՍՈՒՀԻ:

Երևի, տանու բժիշկդ լաւը չէ, ուրիշէն հրաւիրիր:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

Ներս է մտնում իշխան Զվեղիչը:

ԴՔՍՈՒՀԻ, սառնութեամբ.

Ա՛, բարեքեզ, իշխան:

ԻՇԽԱՆ.

Ես երեկ եկել էի ձեզ յայտնելու, որ մեր հացկերդյթը խանգարուած է.

ԴՔՍՈՒՀԻ.

Խնդրեմ, նստէ՛ք, իշխան:

ԻՇԽԱՆ.

Նէնց այս բուպէիս ես վիճում եի, թէ այս լուրը ձեզ վերայ շատ անախորժ տալանորութիւն պիտի թողնէ, բայց, ինչպէս երևում է, սխալուել եմ, քանի որ ձեր դէմքի արտայայտութիւնը պնդան հանգիստ է...

ԴՔՍՈՒՀԻ.

Ճշմարիտ, ես ցաւում եմ:

ԻՇԽԱՆ.

Իսկ ես ընդհակառակը շատ ուրախ եմ. քսան այդ տեսակ հացկերդյթներ ես չեմ փոխիլ մի գիմակահանդէսի հետ.

ՆԻՆՕ.

Էրէզ դուք եղե՞ք գիմակահանդէսում:

ԻՇԽԱՆ.

Այո՛, եղել եմ:

ԴՔՍՈՒՀԻ.

Յետոյ ի՞նչ հագուստով:

ՆԻՆՕ.

Այնտեղ կային շատերը...

ԻՇԽԱՆ.

Այո՛, այո՛, այնտեղ թէև բոլորը գիմակով էին ծածկուած, բայց և այնպէս ես ճանաչեցի մեր շրջանի տիկիներէից մի քանիսին. Օ՛, ես ձեզ ճանաչում եմ, դուք ամենքդ էլ սիրում էք զարդարուել: (Ծիծաղում է):

ԳՔՍՈՒՀԻ տարադաս

Իսկ ես հարկադրուած եմ նկատելու, իշխան, որ այդ ձեր կողմից զրպարտութիւն է և կ'աւելացնեմ գորան, որ ծիծաղելու հարկ չկայ: Ասացէ՛ք, խնդրեմ, ի՞նչպէս կարող է իւր պատիւը փոքր ի շատէ ճանաչող մի կին թոյլ տալ իրեն մտնել այնպիսի մի տեղ, ուր խառնամբօս է խոնուած և ուր ամենայն մի թեթեամիտ կարող է վերաւորել ու ծաղրել: Վստահանալ գնալ և յետոյ որ և է կերպ ճանաչուի... Օ՛հ, ամօթ է, ամօթ է ձեզ համար, և կընդդրէի, որ ուրիշ անգամ փոքր ինչ գգոյշ լինէիք այդ տեսակ խօսքերից:

ԻՇԽԱՆ.

Ասածս յետ առնել էլ չեմ կարող իսկ ինչ վերաբերում է ամաչելուն, պատրաստ եմ: (Ներս է մտնում մի աստիճանաւոր):

ՏԵՍԻՒ, ՉՈՐՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ ԵՒ ԸՍՏԻՃԱՆԱՒՈՐ.

ԳՔՍՈՒՀԻ.

Ո՛րտեղից էք գալիս

ԾԱՌԱՅՈՂ.

Հէնց այս րոպէիս հեռացայ ատեանից և այժմ եկել եմ ձեր գործի մասին խօսելու:

ԳՔՍՈՒՀԻ.

Իսկ գործը վճուեցին:

ԾԱՌԱՅՈՂ.

Ո՛հ, բայց յոյս կայ, որ շուտով վճուեն: Փուցէ ես խանգարեցի... .

ԳՔՍՈՒՀԻ.

Ա՛մենեին. (Հեռանում է դէպի պատուհանը և այնտեղ շարունակում խօսակցութիւնը):

ԻՇԽԱՆ, տառնձին.

Բացատրելու ժամանակ է գտել. (Նիսոյին): Այսօր ես ձեզ խանութումը տեսայ:

ՆԻՆՕ.

Այդ ո՞ր խանութում:

ԻՇԽԱՆ.

Անդիական:

ՆԻՆՕ.

Ո՞րքան ժամանակ կը լինի:

ԻՇԽԱՆ.

Տէնց այս ժամին:

ՆԻՆՕ.

Չարմանում եմ, որ ես ձեզ չեմ ճանաչել:

ԻՇԽԱՆ.

Դուք սաստիկ զբաղուած էիք:

ՆԻՆՕ. արագութեամբ.

Ես այնտեղ ապարանջան էի ընտրում: (Հանելով րադիկիւ-
լից ապարանջանը:) Ահա՛ սորա նմանը...

ԻՇԽԱՆ.

Այ գեղեցիկ բան. իսկ ձրտեղ է սորա ընկերը:

ՆԻՆՕ.

Կ'որեղ է:

ԻՇԽԱՆ.

Ճշմարիտ էք ասում...:

ՆԻՆՕ.

Ի՞նչ զարմանալու կամ չհաւատալու բան կայ այստեղ:

ԻՇԽԱՆ.

Ուրեմն այդ գաղտնիք չէ, Ե՞րբ էք դուք նորան կորցրել:

ՆԻՆՕ.

Ձեւ իմանում. մեկել օրն էր, երեզ էր, թէ անցեալ շաբ-
թին. ես չեմ հասկանում, թէ ինչո՞ւ համար էք ուզում այդ
իմանալ:

ԻՇԽԱՆ.

Տէնց է՛նպէս. ես մի բան մտածեցի, որ գուցէ ձեզ էլ
չատ տարօրինակ երևի... (Առանձին:) Դէմքից երևում է, որ ա-
ռաջարկութիւնս սորան վրդովում է: Չարմանալի են ճշմարիտ

այս մեր համեստուհիները, (նինօլին.) Ես ուզում էի ձեզ առաջարկել իմ խոնարհ ծառայութիւնս... ապարանջանը կարող է գտնուել...

ՆԻՆՕ.

Ա՛խ, խնդրում եմ... բայց ո՞րտեղ,

ԻՇԽԱՆ.

Իսկ ո՞րտեղ է կորել նա,

ՆԻՆՕ.

Ձե՛մ յիշում:

ԻՇԽԱՆ.

Գուցէ դուք նորան կորցրել էք որ և է կերպ մի պարահանդէսի մէջ:

ՆԻՆՕ.

Կարող է լինել:

ԻՇԽԱՆ.

Կամ թէ մէկին յիշատակի համար նուիրած լինիք:

ՆԻՆՕ.

Ձե՛մ հասկանում, թէ այդ տեսակ եղբակացութիւն ո՞րտեղից հանեցիք: Ումը պէտք է նուիրէի... Գուցէ ամուսնո՞ւս:

ԻՇԽԱՆ.

Կարծէք, աշխարհիս երեսին միմիայն ամուսինը գոյութիւն ունի... Դուք անկասկած հաղարաւոր ընկերուհիներ ունիք, ա՛հ, գոցանից մէկն ու մէկին կարող էիք տալ: Բայց թողնե՛նք այդ. հարցը նորա մէջ է, որ ապարանջանը կորած է և այն մարդը, որ գտնէ նորան ու ձեղ յանձնէ, կարող է յուսալ ձեր կողմից որ և է վարձատրութիւն:

ՆԻՆՕ.

(Ժպտալով:) Նայած...

ԻՇԽԱՆ.

Բայց եթէ նա ձեզ սիրում է, եթէ նա իւր չբացած երազի իրականութիւնը միմիայն ձեր մէջ է գտել, եթէ նա ձեր մի Ժպիտի, մի խօսքի համար չի ինայիլ աշխարհային ո՛չ մի բան:

Եթէ դուք ինքներդ մի ժամանակ նորան յայտնել էք ապագայ երջանկութեան մասին, եթէ դուք ինքներդ՝ դիմակի տակ թագ-
ցրած ձեր դէմքը, փայփայել էք նորան սիրոյ խօսքերով... ()
Հասկացէ՛ք վերջապէս...

ՆԻՆՕ.

Այդ բոլորից ես միմիայն այն հասկացայ, որ դուք միան-
գամայն մոռացութեան էք տուել ձեզ և հէնց այսօր ամենա-
խոնարհաբար խնդրում եմ, որ այս մեր խօսակցութիւնն առաջին
և վերջին անգամը լինի.

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, Աստուած իմ ես երեակայում էի... Մի՛թէ ճշմա-
րիւս դուք բարկացար: (Սոսնձին:) Դու բարկացար, հա՞. չա՛տ
բարի... այդ երկար չի տեւի, կրկայ ժամը և կըտեսնես, թէ
ինչպէս ես կըհասնեմ իմ նպատակին: (Նինոն հեռանում է դէպի
դքսուհին: Պաշտօնակատարը ղուխ է իջնցնում և հեռանում):

ՆԻՆՕ.

Adieu, ma chère, մինչև վաղը. բաւական է որքան նստեցի,
տուն դառնալու ժամանակ է:

ԴՔՍՈՒՀԻ.

Ո՛ւր ես այդպէս փռազու՛մ, սպասիր փոքր ինչ էլ, mon
ange. տես, երկու խօսք չխօսած դու արդէն ուզում ես գնալ,
այդ չեղաւ: (Համբուրվում են):

ՆԻՆՕ.

(Գնալով:) Վաղը հէնց առաւօտեանից ես քեզ կըսպասեմ:
(Հեռանում է):

ԴՔՍՈՒՀԻ.

Վաղըւայ օրը շաբաթից երկար պէտք է տեւի ինձ համար:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ ԲԱՅԻ ՆԻՆՕՅԻՑ ԵՒ ՊԵՇՏՈՆԱԿԱՆՏԵՐԻՑ.

ԻՇԽԱՆ, առանձին.

Սպասիր, տես թէ ինչպէս ես կըհասնեմ իմ վրէժը. եւ
ո՞րքան էլ իրեն ամօթխած ու համեստ է երեւցնում: Դնենք թէ
եւ յիմար եմ գտնուել, եթադրենք, որ նա իւր խօսքերից կը-

Տրաժարուի, բայց չէ՞ որ ես ճանաչել եմ ապարանջանի տիրոջ, այդ էլ ըստ ական է ինձ:

ԳՔՍՈՒՀԻ.

Մտածմունքների մէջ էք խորասուզուել, իշխան, ի՞նչ է պատահել:

ԻՇԽԱՆ.

Այո՛, բայց այժմ՝ մտածածներիս մեծամասնու թիւնը տախտակա՞ծ եմ մոռացութեան յանձնել:

ԳՔՍՈՒՀԻ.

Ինձ այնպէս երեւց, որ ձեր և Նինոյի մէջ չափազանց հեռաբաժնի խօսակցու թիւն էր. ինչի՞ մասին էիք վիճում, չի կարելի իմանալ:

ԻՇԽԱՆ.

Ես պնդում էի, որ հանդիպել եմ պարահանդէսում:..

ԳՔՍՈՒՀԻ.

Ո՞ւմը:

ԻՇԽԱՆ.

Տէնց իրեն:

ԳՔՍՈՒՀԻ.

Ի՞նչպէս, Նինոյին:

ԻՇԽԱՆ.

Այո՛, ես այդ ապացուցի իրեն:

ԳՔՍՈՒՀԻ.

Եթէ՛ ես տեսնում եմ, որ դուք առանց որ և է պատկանանքի և ամօթի պատրաստ էք մարդկանց Տէնց իրենց ներկայութեամբ վատարանել:

ԻՇԽԱՆ.

Ի՞նչ արած, ես գործնում մեզ չունիմ. այդ իմ տարօրինակ ընտրութեանս պէտք է վերագրել:

ԳՔՍՈՒՀԻ.

Դո՛ւնէ ինչպե՛ղ էք այն կնոջը իւր բացակայութեան միջոցին և պարտական էք այդպէս վարուել, քանի որ ձեր ձեռքին փաստ չկայ:

ԻՇԽԱՆ.

Ո՞վ ասաց, որ չկայ: Այս ապարանջանը հէնց երեկ գիշեր եմ ստացել այնտեղ, իսկ սորա ընկերը նորա բազկի վերայ է:

ԳՔՍՈՒՀԻ.

Հա՛ւ փաստ էք ունեցել... Եւ տրամաբանութիւն. այդ ու դորա նման ապարանջաններ հազարներով կարելի է գտնել ամենայն մի խանութում:

ԻՇԽԱՆ.

Բանը հէնց դորանումն է, որ այսօր բոլոր խանութները պտտելուց յետոյ, այն եզրակացութեան եմ եկել, որ նորանից միմիայն երկու հատ գոյութիւն ունի. (Փոքր ժամանակ տիրում է լոռիմին:)

ԳՔՍՈՒՀԻ.

Նոյն իսկ վաղը ես նինջին խորհուրդ կըսամ, որ շատ էլ հաւատ չընծայի զատարկասաներին:

ԻՇԽԱՆ.

Իսկ ինձ ի՞նչ խորհուրդ կըսար:

ԳՔՍՈՒՀԻ.

Զե՛ք. Ահա՛ թէ ինչ. համարձակ շարունակել յաջողութեամբ սկսածը և ըստ չափու կարողութեան զգոյշ լինել կանանց պատիւը շօշափելու հարցում:

ԻՇԽԱՆ.

Ընդունեցէ՛ք կրկնակի շնորհակալութիւնս ձեր տուած երկու խորհրդի համար: (Գնում է:)

ՏԵՍԻՆ, ՎԵՑԵՐՈՐԴ.

ԳՔՍՈՒՀԻ, միայնակ.

Մի՞թէ կարելի է կնոջ պատուի հետ այդպէս անմտութեամբ խաղալ: Բաւական էր, որ ես էլ ճանաչուէի, նոյնը և ինձ հետ պիտի պատահէր. Այդպէս ուրեմն, ի՛շխան, մնա՛ք բարեաւ. դուք թէպէտեւ մոլորուած էք, բայց ի հարկէ ես չեմ լինելու ձեր փրկողը ձեր այդ կեղծ գրութիւնից. ո՛չ, ո՛չ, Աստուած չանէ, որ ես այդ անեմ: Ինձ միմիայն մի բան է զարմացնում. ի՞նչպէս է պատահել, որ ես գտել եմ նորա ապարանջանը: Հա՛, այժմ

ևս հասկացայ: Նինոն էրէզ պնտեղ է եղել, ահա՛ ձեզ ամբողջ
հանելուկի վճիռը... Ձգիտեմ թէ ինչ բանի համար, բայց ես
նորան սիրում եմ: Գուցէ հէնց էնպէս, միայնակութիւնից, տհա-
ճութիւնից, նախանձից... շարունակ սրտնեղում, պրփում, բոր-
բորփում եմ... և ո՛չ մի բանի մէջ չեմ կարողանում ուրախու-
թիւն գտնել: Ինձ թւում է, որ ես լսում եմ, թէ դատարկամիտ
ամբոխի ծիծաղը, թէ նոցա շնչոցը, որի մէջ դոքա իրենց դա-
ժան ցանկութիւնն ու անսոսանքն են յայտնում իմ առթիւ:
Ո՛չ, պէտք է, որ ես ինձ փրկեմ... Եթէ այդ նոյն իսկ ուրիշի
հաշուով էլ լինի. պէտք է, որ այդ կեղտից ես ինձ մաքրեմ,
թէկուզ մի շարք տանջանքներ անգամ լինին իմ այս նոր գի-
տաւորութեանս վարձատրութիւնը և իմ փրկութիւնը... (Սկսում
է մտածել:) Օ՛հ, եթէ իմանայիք, մոքերի ի՞նչ ահարկու շղթա-
ներ են պատում գլխիս մէջ, ահա՛, այս իմ նոր ձեռնարկու-
թեանս դիմաց:

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

ԴՔՍՈՒՀԻ ԵՒ ՀՊՐԻՍ.

Շարիխը ներս է մտնում և բարևում:

ԴՔՍՈՒՀԻ.

Ա՛հ, բարև քեզ, Շարիխ. ի՞նչ գիտէիր, թէ հէնց այս բո-
պէիս ես քեզ էի ուզում տեսնել:

ՀՊՐԻՍ.

Ներեցէք համարձակութեանս. ես ինձ չափազանց բախ-
տաւոր կը համարէի, եթէ որ և է կերպ կարողանայի օգտակար
լինել ձեզ: Ձեր հանգուցեալ ամուսինը...

ԴՔՍՈՒՀԻ.

Դու միշտ ես այդպէս հաճոյամիտ:

ՀՊՐԻՍ.

Երջանկայիշատակ դուքսը...

ԴՔՍՈՒՀԻ.

Սորանից հինգ տարի առաջ էր, ես այդ յիշում եմ:

ՀՊՐԻՍ.

Վերջրեց ինձանից հազար...

ԳՔՍՈՒՀԻ.

Դիտեմ, դիտեմ, այդ փողի հինգ տարու այ տոկոսը ես հէնց
այսօր քեզ կըտամ:

ՀՊՐԻՍ.

Ի՞նչ էք հրամայում, ես փողի մէջ կարօտութիւն չեմ
զգում: Հէնց ենպէս, պատահմամբ յիշեցի:

ԳՔՍՈՒՀԻ.

Ասա՛, ի՞նչ նոր համբաւ ունիս:

ՀՊՐԻՍ.

Այս րոպէիս մի կոմսի մօտ էի և հէնց այնտեղից եմ գա-
լիս. այնքան նորութիւններ լսեցի, որ էլ չեմ կարող ասել:

ԳՔՍՈՒՀԻ.

Իսկ իշխան Զվէզդիչի և Արքեանի կնոջ հետ պատահած
դէպքի մասին ո՞չինչ չես լսել:

ՀՊՐԻՍ, տարակուսած.

Ո՛չ... լսել եմ... ինչէ՞ս չէ... ո՛չ... Ե՛ր, այդ նոր բան չէ,
դորա մասին մի ժամանակ ամբողջ աշխարհքն էր խօսում, իսկ
այժմ լուել է... (Առանձին:) Այս ի՞նչ պէտք է լինի. չեմ յի-
շում, ի՞նչ վատ եղաւ...

ԳՔՍՈՒՀԻ.

Օ՛ր, եթէ այդ արդէն այդքան տարածուել է և ամենքի
խօսակցութեան նիւթ դարձել, այն ժամանակ և չարժէ անգամ,
որ դորա մասին խօսինք:

ՀՊՐԻՍ.

Բայց ես կըցանկանայի իմանալ ձեր կարծիքը:

ԳՔՍՈՒՀԻ.

Քանի որ նոքա արդէն ամբողջ աշխարհքից են դատապար-
տուած, ուրեմն և աւելորդ է միանգամայն այս դէպքում որ և
է կարծիք յայտնել. Այսպէս թէ այնպէս, ես էլի դոցա կարող
էի մի-մի խորհուրդ տալ. իշխանիս կ'ասէի, որ կանայք ընհանրա-
պէս տղամարդու մէջ գնահատում են նորա տոկունութիւնը,
թէկուզ նա հազարաւոր արգելքների հանդիպի իւր ընտրեալի
գիրկը դիմելու միջոցին. Իսկ Նինոյին կըցանկանայի փոքր ինչ

մեղմացնել իւր խստութիւնը՝ և դորա փոխարէն համեստութեան աստիճանը բարձրացնել... Այժմ՝ մնա՛ք բարեաւ, միսեօ Շպրիլի. և թէ քոյրս ինձ ճաշին սպասելիս չլինէր, ես աւելի երկար կը մնայի ձեզ հետ (Գնալու միջոցին, առանձին)։ Այժմ՝ ես ազատուած եմ, այս շատ օգտակար դաս եղաւ ինձ համար։

ՏԵՍԻՆԼ ՈՒԹԵՆՐՈՐԴ.

ՀՊՐԻՍ, միայնակ.

Հանգիստ եղէք, ես շատ լաւ հասկացայ ձեր միտքը և նեղութիւն չեմ տալ նորից կրկնելու։ Զարմանալի վառ երեակայութեան և սուր մտքի տէր է եղել այս կինը։ Հասկանում եմ, նա այս գործում ինտրիկայ է սարքում... Հէնց այդպէս է։ Էլ ի՞նչ ասել կ'ուզէ, որ ես անմիջապէս կրեառնուեմ այդ երկու անձանց յարաբերութիւնների մէջ, որի համար իշխանը անկասկած չափազանց շնորհակալ կըմնայ ինձանից։ Նախ գործակատարի պաշտօն կըստանամ իւր մօտ... յետոյ թարմ լուրերով բեռնաւորուած սորա մօտ կըվազեմ։ Գուցէ միմիայն այս ճանապարհով կարողանամ ստանալ իմ փողերի հինգ տարուայ տոկոսը։

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Բեմը ներկայացնում է Արքեանին առանձնասենեակը։ Արքեանինը նախ միայնակ է, իսկ յետոյ մտնում է ծառան։

ԱՐԲԵՆԻՆ.

Կասկածելու էլ տեղիք չկայ, այդ արդէն պարզ է, ցաւը միմիայն նորանումն է, որ ես իմ ձեռքի տակ փաստեր չունիմ։ Ժշմարիտ է, սխալանքից վախենում եմ, բայց դժ չունիմ համբերելու։ Մոռանալ թաղական ցնորքը, թողնել ամենը այնպէս, ինչպէս որ կայ... ո՛չ, ես այդ չեմ կարող, այդ տեսակ կեանքը գերեզմանից աւելի սարսափելի է ինձ համար։ Ես իմ կեանքում այն տեսակ սառած հոգով մարդիկ եմ տեսել, որոնք փոթորիկը վրայ հասած ժամանակը անգամ քաղցր ու խաղաղ նիբհում են կատարեալ երջանկութեան մէջ։ Ահա՛, գոցա կեանքը ճշմարիտ որ նախանձելի է։

ԾԱՌԱՅ, ներս մտնելով:

Տիրուհու հասցեով մի մարդ իշխանուհուց տոմսակ է բերել և ինքն էլ ցածուժ սպասուժ է պատասխանի:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՞նչ իշխանուհի է:

ԾԱՌԱՅ.

Ձե՛մ իմանում:

ԱՐԲԵՆԻՆ.

Տոմսակ, Նինոյի հասցեով... (Գնում է և բեմի վերայ միայնակ մնում է ծառան):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ԱՖԱՆԱՍԻՑ ՊԱՒԼՈՎԻՉ ԿԱԶԱՐԻՆ ԵՒ ԾԱՌԱՅ.

ԾԱՌԱՅ.

Պարոնը հէնց այս րոպէիս հեռացաւ, սպասեցէք փոքր ինչ:

ԿԱԶԱՐԻՆ.

Շատ բարի:

ԾԱՌԱՅ.

Յս իսկոյն կը յայտնեմ՝ նորան ձեր մասին, (Գնում է):

ԿԱԶԱՐԻՆ.

Ձէ՛ թէ փոքր ինչ, այլ և ամբողջ տարիներ պատրաստ եմ սպասելու, միւսեօ Արբենին, և կըսպասեմ, ճարս ինչ: Գործերս այնքան վատ ընթացք են ստացել, որ տիրութիւնից ու վրդովմունքից չգիտեմ, թէ ինչ անեմ և ինչ ելք գտնեմ: Այժմ իսկ ինձ գործին հմուտ մի ընկեր է հարկաւոր: Վատ չի լինիլ, եթէ նա դորա հետ միասին՝ յաճախակի մեծահոգութիւն ցոյց տայ, ունենայ երևք հազարաչափ ճորտ և նշանաւոր մարդկանց հովանաւորութեան ու պաշտպանութեան տակ գտնուի: Այս նեղ հանգամանքների մէջ, անշուշտ ինձ պէտք է նորից այնպիսի միջոցներ ձեռք առնել, որ Արբենինը կրկին անգամ իւր կեանքի նպատակը թղթախաղը դարձնէ: Նա իւր հին սովորութեան հաւատարիմ՝ կըմնայ, ինձ չի դաւաճանիլ, թեի տակ կըպահէ իւր վաղեմի ընկերօրը և որ աւելին է, ներկայ ժամանակի խաղացող երեխաների գիմաց երբէք չի շփոթուիլ: Իսկ մեր այժմեան երի-

տասարդութիւնը ինձ հոգի-հաւատից հանում է էլի: Որքան ուզում ես, ասա՛, ո՛չ իւր ժամանակին սկսել գիտէ, ո՛չ իւր ժամանակին վերջացնել, ո՛չ աղնութիւն ցոյց տալ դէպք եղած ժամանակը և ոչ էլ անաղնութիւն ներել այս կամ այն դէպքում: Մի նայեցէք ձեր շուրջը և տեսէք, թէ քանի, քանի ծեր մարդիկ, ինչ, ինչ աստիճանների են հասել՝ այն էլ խաղի միջոցով. նոքա, որոնք մի ժամանակ ցեխի հետ էին հաւասարուած, այժմ՝ այնպիսի կշիռ ունեցող մարդկանց հետ են յարաբերութիւն սկսել, որ չես էլ ուզում հաւատալ: Իսկ այդ բոլորը ինչի՞ցն է. հէնց նորանից, որ ամենայն մի դէպքում, դոքա կարողացել են պատշաճութիւն պահպանել, հսկել իրենց օրէնքների վերայ և իսկութեամբ կատարել սահմանած կանոնները: Այս ամենը լինելուց յետոյ՝ նայում տեսնում ես, որ թէ պատիւը և թէ միլիոները գոցա մօտ է...

ՏԵՍԻՆ ԵՐՐՈՐԴ.

ԿԱԶԱՐԻՆ ԵՒ ՇՊՐԻՒ.

ՇՊՐԻՒ, ներս մտնելով.

Ա՛, Ա.Ֆանասից Պաւլովիչ, այ՛ հրաշք. չես կարող երևակայել, թէ որքան ուրախացայ. Բոլորովին չէի սպասում ձեզ այստեղ գտնել:

ԿԱԶԱՐԻՆ.

Նոյնն էլ ես պէտք է ասէի. Երևի, այցելութիւն ես եկել.

ՇՊՐԻՒ.

Այո՛, իսկ դուք:

ԿԱԶԱՐԻՆ.

Ես նոյնպէս:

ՇՊՐԻՒ.

Ճշմարիտ, ա՛խ, շատ լաւ եղաւ, որ մենք պատահեցանք. վաղուց է, ինչ որ ուզում էի ձեզ տեսնել մի գործի համար:

ԿԱԶԱՐԻՆ.

Որքան յիշում եմ, դու միշտ շատ գործերով ես եղել զբաղուած, այժմ ի՞նչպէս է պատահել, որ միմիայն մի գործով ես պարապուած:

ՇՊԻԽ.

Ինչպէս երևում է, դուք bon mot ասած բանին այնքան էլ նշանակութիւն չէք տալիս, բայց հաւատացնում եմ, որ այդ շատ հարկաւոր է:

ԿԱԶԱՐԻՆ.

Ինչ ևս չափազանց հարկաւոր է ձեզ հետ խօսել:

ՇՊԻԽ.

Ուրեմն մենք համերաշխութեամբ կը վերջացնենք մեր գործերը:

ԿԱԶԱՐԻՆ.

Այդ չգիտեմ ես... Ասա տեսնեմ, ի՞նչ գործ ունիս:

ՇՊԻԽ.

Նախ քան դորան անցնելը, ես կ'ուզենայի ձեզանից մի բան հարցնել. արդեօք լսե՞լ էք, որ ձեր բարեկամ Արբենինը (ծաղատի վերայ մատնեղով եղջիրներ է ձևացնում):

ԿԱԶԱՐԻՆ.

Ի՞նչ... ո՛չ, պէր անկարելի է, ես չեմ հաւատում: Հաստատ ես ասում...

ՇՊԻԽ.

Ի՞նչ էք ասում: որ ես էլ հաստատը չիմանամ, ապա էլ ո՞վ պէտք է իմանայ: Սորանից մի քանի ըոպէ առաջ հէնց ես ինքս էի այդ գործը կարգի բերում:

ԿԱԶԱՐԻՆ.

Ստատանան մեզանից ձեռք չի քաշում, է՛լի

ՇՊԻԽ.

Այ՛, տեսէ՛ք, թէ գործը ինչումն է. Նորա կինը անցեալ օրը, չգիտեմ, պարահանդէսի... թէ գիմնահանդէսի մէջ տեսնվում է մի ինչ որ իշխանի հետ և վերջինիս սիրտն ու միտքը գրաւում: Արբենինի կինն էլ իւր կողմից՝ ոչ միայն սիրահարվում է, այլ և մի քանի երջանիկ ըոպէներ է պարգևում բախտաւոր իշխանին: Այս ամենը կատարուելուց մի քանի օր յետոյ, գեղեցկուհին իրեն միանգամայն անմեղ է ձևացնում և ոչ կերպ չի ուզում ճանաչել իւր սիրահարին: Իշխանը կատաղում է Արբե-

նինի կնոջ արարմունքի վերայ, մի ակնթարթում թուշում գնում է քաղաքի բոլոր անկիւնները և եղելութիւնը մի առ մի ամենքին պատմում: Ինչ ասել կ'ուզէ, որ այդ գործը շատ թշուառ հետեանքներ կ'ունենար, եթէ մի քանի մարդիկ չմիջամտէին ու չխնդրէին ինձ, որ ես մի կերպ հաշտեցնեմ երկու կողմը... Առանց երկար ու բարակ մտածելու, ես յանձն առայ և քիչ ժամանակից յետոյ ամեն բան կարգի ընկաւ: Իշխանը խոստացաւ մեռելային լուծիւն պահպանել, շտապով մի տոմսակ գրեց, որ խոնարհ ծառադ հարեանցորէն ուղղելով անմիջապէս նշանակեալ անձնաւորութեան ձեռքը հասցրեց:

ԿԱԶԱՐԻՆ.

Յետոյ որ ամուսինը իմանայ և ականջներդ քաշէ:

ՀՊՐԻՒ.

Ե՛հ, այդ ինչ ասելու խօսք է. դորանից աւելի դժուար գործերի մէջ եմ մտել ես, բայց ոչինչ, բոլորը անվտանգ է անցել, նոյն իսկ առանց մենամարտութեան...

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրեմն չեմ ել ծեծուել:

ՀՊՐԻՒ.

Թէպէտ գուք ծիծաղելու և հանաքներ անելու ցանկութիւն ունիք, բայց ես կ'ասեմ այսքանս, որ մարդ, առանց որ և է նպատակի, երբեք չպետք է կեանքը վտանգի մէջ դնի:

ԿԱԶԱՐԻՆ.

Իրաւ որ այդպիսի մի՝ բոլորիս համար թանկագին կեանքը, անօգուտ տեղից վտանգի մէջ դնելը աւելի քան մեղք է:

ՀՊՐԻՒ.

Լաւ, այդ թողնենք, հարցը դորա մասին չէ. ես ձեզ հետ մի աւելի կարեւոր գործի մասին էի ուզում խօսել:

ԿԱԶԱՐԻՆ.

Ի՞նչ գործ է:

ՀՊՐԻՒ.

Ինքն ըստ ինքեան կատարեալ մի անեկդոտ. լսիր և կ'իմանաս, թէ գործը ինչու՞մն է...

ԿԱԶԱՐԻՆ.

Ձեռք քաշիր ի սէր Աստուծոյ քո գործերով ահա՛, կարծեմ, Արքեները գալիս է:

ՀՊՐԻՒ.

Ո՛չ որ չկայ: Սորանից մի քանի ժամանակ առաջ, Կոմս Կրուտից ինձ համար հինգ հատ գամիր շներ են բերել:

ԿԱԶԱՐԻՆ.

Ո՛ւղիղ որ անեկզօտի չափազանց զուարճայի է:

ՀՊՐԻՒ.

Ձեր եղբայրը, կարծեմ, որսորդ է, այ՛, մեծ գործ տեսած կըլինէիր, եթէ այդ շները ձեռք բերէիր նորա համար:

ԿԱԶԱՐԻՆ.

Այդպէս ուրեմն, Արքեները յիմարի նման...

ՀՊՐԻՒ.

Լսեցէք, խնդրեմ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ընկել է նեղ հանգամանքների մէջ, բացարձակ խաբուել է ծիծաղելի դերի մէջ մտել, հա՛: Արի՛ այժմ ու այդ ամենից յետոյ պսակուիր:

ՀՊՐԻՒ.

Կատարեալ գանձ կըլինի ինձ համար, Աֆանասիյ Պետրովիչ և ձեր եղբայրն էլ շատ կ'ուրախանայ:

ԿԱԶԱՐԻՆ.

Սո՛ւտ է ասում, սո՛ւտ է խօսում նա, ով որ պնդում է, թէ պսակի մէջ է մարդ ու կնոջ փոխադարձ հաւատարմութիւնը և բախտաւորութիւնը, է՛յ Շպրիխ, տես այդ ամենը և երբէք մի պսակուիր:

ՀՊՐԻՒ.

Ես վաղուց է, ինչ պսակուած եմ... բայց լսեցէք, խնդրեմ, զոցանից մինը իսկ և իսկ գտած գանձ է:

ԿԱԶԱՐԻՆ.

Ո՞վ, կինդ:

ՇՊԻՒՆ:

Ո՛չ, շուներ:

ԿԱԶԱՐԻՆ:

Յոգիս հանեցիր քո շներով էլի, Լսիր ինձ, սիրելի բարեկամ: Թէ Աստուած ինչպէս կըտնօրինէ, ինչ կին կըտայ մարդուս, այդ ճշմարիտ որ ես չգիտեմ, լայց ինչ որ վերաբերում է շներիդ, այդ ես հաստատը գիտեմ, որ դու նոցանից դեռ շուտ չես ազատուիլ: (Ներսէ մտնում Արքնինը, նամակը բռնած ձեռքին: Կազարինը և Շարիխը աննկատելի կերպով մնում են կանգնած ծախ կողմում՝ բիւրօյի մօտ:) Մտածողութեան մէջ է և ձեռքին էլ նամակ ունի. հետաքրքիր է իմանալ թէ...

ՏԵՍԻԼ, ԶՈՐՐՈՐԴ:

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՆԵՐԸ:

ԱՐԲԵՆԻՆ, շնկատելով առաջիններին:

Լա՛ւ միջոց գտաւ իւր շնորհակալութիւնը յայտնելու ինձ, լա՛ւ: Մի՞թէ շատ ժամանակ է անցել այն օրից, երբ ես վերականգնեցիր նորա պատիւն ու ապագան, առանց անգամ խմանալու թէ ո՞վ է կամ ի՞նչ է նա: Եւ ի՞նչ... Այ՛ դու օձի ծնունդ, Լսել էք երբ և իցէ այսպիսի մի ստոր, ցած, գարշելի արարմունք, թէ հէնց այս է առաջին օրինակը: Խաղալով՝ գողէ գող ներս մտնել տունս, անունս արատաւորել, պատիւս կեղտոտել և ինձ էլ ոտքից գլուխ անպատուութեան ու նախատինքի մէջ շաղախել... Զարմանալին այս է, որ ես դեռ իմ աչքերին էլ չէի ուզում հաւատալ, մոռացութեան տալով միանգամայն անցեալի դառն փորձերը: Ես, ինչպէս մի երեխայ, որ չի ծանօթ մարդկանց բնաւորութեան, չէի համարձակվում երբէք այդպիսի մի չարագործութեան մէջ նորան կասկածել: Ես կարծում էի, թէ բոլոր մեղքն ու յանցանքը առաջացել է միմիայն իմ կնոջից... Թէ նա չէ ճանաչել այն կինը, որին ցանկացել է մօտենալ... Ես կարծում էի, թէ նա, գիշերուայ ժամին պատահած դէպքը մի տարօրինակ երազի նմանեցնելով՝ յաւիտեան մոռացութեան կըտայ: Բայց չէ՛, նա ոչ միայն չմոռացաւ, այլ և սկսեց որոնել ու գտաւ, և որ աւելին է, այստեղ անգամ, նորան ճանաչելուց յետոյ ևս կանգ չառաւ... Ահա՛ թէ ի՞նչ ասել է երիտասարդ լինել... Շատ բաներ էի տեսել աշխարհքի մէջ, բայց սորա

նմանը չեմ յիշում... (Բաց է անում ծրարը:) «Ես ձեզ գտայ, բայց դուք չուզեցիք խոստովանուել... Ի դեպ, դուք ձեր համեստութիւնը չափադանցութեան էք հասցնում: Բայց պէտք է խոստովանուիմ, որ դուք մի կողմից շատ խելացի շարժուեցաք. մեր խօսակցութիւնը կարող էին պատահամք լսել և այն ժամանակ ամեն ինչ պէտք է կորած համարէինք: Բաւական էր, որ ամբոխի ականջը հասնէր, նորա դատաստանից աւելի սարսափելի վճիռ էլ ինչ կարելի է երեւակայել: Այսպէս թէ այնպէս, ևս ձեր բոցավառ աչքերի մէջ ո՛չ թէ արհամարհանք կարդացի, այլ երկիւղ: Քանի որ դուք սիրում էք գաղտնիքներ ունենալ, այս էլ գաղտնիք կըմնայ, բայց իմացէ՛ք, ևս աւելի շուտ իմ կեանքից կըբաժանուեմ, քան թէ ձեզանից»:

ՇՊՐԻԽ.

Նամակն է՛, այո՛, հէ՛ց նա է... Ահա՛ այժմեանից, ճշմարիտ որ ամեն ինչ տակն ու վրայ կըլինի:

ԿԱԶԱՐԻՆ.

Օ՛, երևում է, որ շատ ճարպիկ շողորորթն է այս պարոն իշխանը... Ո՛չ, էլ համբերելու ոյժ չկայ, պէտք է սորան արիւնաշաղախ պահասխան ուղարկել: (Նկատելով Կաղարինին:) Ա՛, դու այստեղ ևս եղել:

ԿԱԶԱՐԻՆ.

Ահա՛ ամբողջ մի ժամ է, որ ևս ձեզ սպասում եմ այստեղ:

ՇՊՐԻԽ, առանձին.

Ես էլ այստեղ գործ չունեմ անելու. գնամ դքսուհու մօտ և ամենը պատմեմ, թող յետոյ ինչպէս ուզում է, այնպէս անէ: (Մօտենում է դռանը և յետոյ անհետանում:)

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ ԲԱՑԻ ՇՊՐԻԽԻՑ.

ԿԱԶԱՐԻՆ.

Միայնակ ես չեմ, Շպրինն էլ այստեղ է... Բայց այս ուր գնաց նա, ի՞նչ եղաւ... չկայ, կորել է: (Առանձին:) Հա՛, այժմ՝ ևս հասկացայ, ուրեմն այս նամակը ինքն է բերել: (Դէպի Արքանինը:) Դու մտածում ես...

ԱՐԲԵՆԻՆ.

Այո՛, ես մտածում եմ,

ԿԱԶԱՐԻՆ.

Երևի, մտածում ես աշխարհային բարիքների և յոյսերի ունայնութեան մասին, այնպէ՞ս չէ:

ԱՐԲԵՆԻՆ.

Համարեա թէ... երախտագիտութեան մասին եմ մտածում:

ԿԱԶԱՐԻՆ.

Հազարաւոր կարծիքներ կան դորա մասին, բայց ինչ էլ որ չասեն, այդ ուշագրութեան արժանի մի հարց է:

ԱՐԲԵՆԻՆ.

Բայց դու ի՞նչ կարծիք ունիս դորա մասին:

ԿԱԶԱՐԻՆ.

Ես, սիրելիս, կարծում եմ, որ երախտագիտութիւնը այնպիսի մի բան է, որ աւելի քան կախուած է ցոյց տուած ծառայութեան աստիճանից, որ ուրիշին բարութիւն անկը շատ անգամ մեր կամքից չի լինում կախուած: Ահա՛, ասում քեզ օրինակ. երեկ գիշեր Սուլիկներ կրկին անգամ ինձ հինգ հազար տանուլ տուաւ և Աստուած է վկայ, որ ես շատ ու շատ շնորհակալ եմ նորանից. այս իմ շնորհակալութիւնը ես արտայայտում եմ նորանով, որ թէ ուտելիս, թէ խմելիս, թէ քնելիս չարունակ նորա մասին եմ մտածում:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ չեղաւ, դու հանաք ես անում, Կազարին:

ԿԱԶԱՐԻՆ.

Շատ բարի, եթէ այդպէս է, ես այժմ քեզ հետ լուրջ կրեօսեմ այդ հարցի մասին, միմիայն այս պայմանով, որ թողնես քո դէմքի այդ ահարկու արտայայտութիւնը. ահա՛, միմիայն այդ դէպքում ես բնց կ'անեմ աշխարհային գաղտնիքների բոլոր խորհուրդները քո առաջ, Յեառջ կրկնողրէի քեզանից նաև միգրինչ համբերութիւն, և թէ իմ կարծիքը լսելու ցանկութիւն ունիս, Դէ՛հ, լսիր այժմ, ինչ ուղում են, թող քարուղեն թէ Վոյաերը, թէ Դեկարտը, աշխարհքը ինձ համար թղթախաղի մի կապոց է,

իսկ կեանքը բանկ։ Ճակատադիրը այ ու ձախ է դարձում, ես էլ խաղում եմ։ Ահա, ինչպէս տեսնում ես, ես լծկթախաղի օրէնքները մարդկութեան հետ եմ լաղդադում։ Այժմ այս ամենը քեզ աւելի լաւ պարզելու, բերեմ մի օրինակ, ենթադրենք, թէ ես կապոցի միջից ընտրում եմ ասը և զորա յուսով մի անգամից հազար ուրիշ եմ վայր դնում։ Նախազգում եմ, որ անպատճառ պէտք է տանեմ... Ներքի, ես փոքր ինչ սնապաշտ եմ խաղի մէջ։ Այժմ դենք, թէ առանց որ և է խաբէրայութեան, հէնց էնպէս, պատահմամբ, այդ ասը տանում է, որից, ինչ ասել կ'ուզէ, ես շատ ու շատ ուրախանում եմ։ Բայց իմացիր, որ ես ասին երբէք շնորհակալութիւն չեմ յայտնի, այդ միանգամայն աւելորդ է։ Լուծութեամբ ոսկիները կը ժողովեմ, նորից կը շարունակեմ ծախել ու խաղալ մինչև որ կը յոգնեմ։ ահա, յոգնելուց յետոյ անմիջապէս հաշիւներս կը տեսնեմ և ջարդուած լծկթերը կը թափեմ սեղանի տակը։ Այժմ... բայց դու ինձ չես յուսմ։

ԱՐԲԵՆԻՆ, մտած մտնքների մէջ.

Ուր որ նայում ես, չարիք ես տեսնում, որտեղ դնում ես, խաբէրայութիւն է տիրում։ Մի՞թէ զորա մէջ է բովանդակ աշխարհքի գեղեցկութիւնը, Զարմանալին այն է, թէ ինչպիսի սառնասրտութեամբ էի լսում անցեալ օրը այս բոլորի մասին, միանգամայն արձանացած՝ յուս ու մունջ, կարծես, թէ այդ ամենը ինձ չէր վերաբերում։

ԿԱԶԱՐԻՆ.

(Առանձին)։ Նորից մտածում է։ (Իկպի Արբենինը)։ Այժմ մի այլ դէպք վերցնենք ու քննենք, բայց աստիճանաբար, որ պէս զի սխալանքների մէջ չընկնենք։ Ասենք, թէ դու նորից ուղում ես խրուել անցեալի օրինական խաղի ու անբարոյականութեանց մէջ և հէնց այդ միջոցին քեզ պատահում է քո ընկերներից մինը և ասում է. «Է՛յ, բարեկամ, զգո՛ղջ հղիք»... և յետոյ շարունակում այս բովանդակութեամբ և ինքն ըստ ինքեան իմաստալից՝ բայց քեզ համար արժէք չունեցող խրատների կարդալ գլխիդ։ Դու պատահմամբ կամ հէնց ակամայից լսում ես նորա խորհուրդները և հեռանում քո ցանկութիւններից ու զիտաւորութիւններից։ Ինչ է մնում անել քեզ՝ այս բոլորից յետոյ, եթէ ոչ շնորհակալութիւն յայտնել բարեկա-

միդ, մաղթել նորան շատ ու շատ տարիներ և ապա հեռանալ, իսկ եթէ ոչ, այսպէս վարուիք. եթէ բարեկամդ քեզ արբեցողութիւնից է պահպանել, իսկոյն, առանց փոքր ժամանակ անգամ կորցնելու՝ արբեցրու և յետոյ նստեցնելով թղթախաղի սեղանի մօտ, նորա քո դէմ՝ ցոյց տուած ծառայութեան փոխարէն, ինչ ունի ու չունի, ամենը տար և այնպէս ճանապարհ գցիր. իսկ եթէ նա քո կեանքն է աղատել և պատիւդ պահպանել խաղի մէջ, այն ժամանակ գնա՝ պարահանդէս, սիրահարուի կնոջը վերայ... կամ՝ հէնց առանց սիրահարուելու էլ խաբիր և պատիւը ոտնակոխ արա՛, որպէս զի ամուսնոյ պարտքը վճարած լինիս և հաշիւներդ վերջացրած. երկու դէպքումն էլ քո վարմունքը արդարացի կը լինի:

ԱՐԲԵՆԻՆ.

Ինչպէս տեսնում եմ, բարեկամ, բարոյականութիւն քարոզողների մէջ, դու ամենաարժանաւոր տեղն ես բռնում: (Առանձին:) Ուրեմն իմ անպատուութեան մասին բոլորն էլ գիտեն... Օ՜ իշխան, սպասիր, սպասիր փոքր ինչ էլ և կը տեսնես այն ժամանակ, թէ ինչ խաղ կը խաղամ ես քո գլխին:

ԿԱԶԱՐԻՆ, ուշադրութիւն չդարձնելով

Մնացել է բացատրել վերջին կէտը և ապա վերջ տալ այս խոսակցութեան. Ասենք, թէ դու սիրում ես որ և է մի կընոջ, և զոհում ես նորան պատիւդ, հարստութիւնդ, բարեկամներդ և վերջոյ նոյն իսկ կեանքդ. Դու նորան շրջապատում ես ամեն տեսակ զուարճութիւններով և հրապուրանքներով, բայց մէկ ասա՛, ինչդրեմ, ի՞նչու համար պէտք է նա քեզանից շնորհակալ լինի. Չէ՞ որ այդ ամենը դու զոհել ես նորան կատարելապէս տիրելու կրքից, մասամբ ինքնասիրութիւնից, բայց ոչ նորան բաղդաւորութիւն պատճառելու. նպատակով Այո, սիրելիս, իրողութիւնը այսպէս է. փոքր ինչ սատնարիւն մտածիր այս բոլորի մասին, և այն ժամանակ ինքդ կը համոզուիս, որ ճշմարիտ աշխարհքիս մէջ ամեն ինչ պայմանական է:

ԱՐԲԵՆԻՆ, վրդովուած.

Այո՛, այո՛, ասածներդ միանգամայն իրաւացի են. ի՞նչ փոյթ այն կնոջը, որին քո ասած՝ զոհում ես ամեն ինչ գէպի նա ունեցած քո անհուն սիրուց. նա միմիայն մի նպատակի է

ծառայում, և այդ այն է, որ իւրաքանչիւր օր հոգին փառաւորէ նոր նոր յաղթութիւններով: Կուզես լաց եղիւր, կուզես արժաքուիր, կուզես ծնկաչօք աղաչիւր, այդ ամենը դատարի բաներ են նորա համար. նա առ ոչինչ կը համարէ քո արտասուքները ու հեկեկանքը, նա միմիայն կը թիծաղէ այդ ամենի վերայ: Ծշմարիտ է ասածդ. յիմար է այն մարդը, որ կլինմարդու մէջ է ուղղում գտնել իւր երկրաւոր դրախտը:

ԿԱԶԱՐԻՆ.

Ձէ', ես այժմ տեսնում եմ, որ դու թէեւ պսակուած ու երջանիկ ես, բայց դեռ զուրկ չես անողջ գատողութիւնից:

ԱՐԲԵՆԻՆ.

Մի՞թէ,

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրեմն սիւսի է կարծիքս:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ, ո՞վ է ասում... Ո՛հ, ես երջանիկ եմ... այո՛, երջանիկ եմ:

ԿԱԶԱՐԻՆ.

Թէպէտ և ուրախ եմ ՚ի սրտէ, բայց և այնպէս ցաւում եմ, որ դու պսակուած ես:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ ինչու...

ԿԱԶԱՐԻՆ.

Հէնց էնպէս... Երբ յիշում եմ մեր անցեալ, անդարձ օրերը, այն զուարճութիւնները և ուրախութիւնները, ահա՛. այդ րոպէներում և ցաւում եմ: Ա՛խ, որպիսի ժամանակներ էին. ափսոս, հազար ափսոս. Այն առաւօտեան ժամերի հանգստութիւնը և անդորր ու խաղաղ քնի քաղցր յիշողութիւնը մի՞թէ կարելի է մոռացութեան տալ... Ապա ճաշը, փայլուն բաժակների մէջ փրփրած Բաուլի գինին, այդ միջոցներում ունեցած մեր աղմկախառն վիճաբանութիւնները ու սրախօսութիւնները և վերջոյ գիւշերուան թատրոնները... Ա՛խ, երբ յիշում եմ այս ամենը, ուրախութիւնից հոգիս ուզում է դուրս թռչել իւր տեղից: Մտաբերում ես, թէ ինչեր էինք անում կուլիսների յետեւ,

երբ խարխախելով դուրս էինք քաշում գերասանուհիներին... Այ՛, այ՛, այ՛, այ՛... Ո՛չ, էլ չենք կարող տեսնել այն օրերը, երբ ամեն բանն և արժան և յաւ էր։ Այդ էլ վերջացնելուց յետոյ, յիշում ես, թէ ինչպէս գլխակոր վաղում էինք մեր ընկերներից մէկի տունը... որտեղ սեղանների վերայ արդէն գիլած էինք գտնում ոսկիների կոյտերը և խաղաթղթի կապոցները։ Դեռ մինչև այսօր էլ ես չեմ կարողանում մոռանալ խաղացողների այն հոգեկան վիճակը, այն տենդային գողցը և մեռելային գունատութիւնը, որ նշմարվում էր այս ու այն խաղացողի դէմքի վերայ։ Այդ ամենը տեսնելուց յետոյ, խօսմ գիժ չէինք, որ սառնարին նայէինք և ընդհանուր հոսանքին չեն լծարկուէինք։ Ես, ճշմարիտ, դժուարանում եմ հաշուել, թէ այդ րոպէներում որքան կըրքեր և ի՛նչ, ի՛նչ զգացմունքներ են վրդովում մարդուն հոգին ու միտքը, թէ այդ րոպէներում, երբեմն երեւան եկող հրէշային մտքերը ինչ տեսակ են լարում մեր ուղեղի զսպանակը... Ճշմարիտն ասա՛, երբ պատահում էր յաղթել հակառակորդիդ որ և է հնարքով, չէ որ այդ միջոցին քո մեծութեան զիմաց, ճակատագիրը անգամ ոչինչ էր թւում, չէ՞ որ այդ դէպքերում նապալէնը անգամ քեզ խեղճ և ծիծաղալի մի անձնաորութիւն էր երևում։ (Արքանինը դարձնում է նորանից երեսը։)

ԱՄԲԵՆԻՆ.

Ա՛խ, դարձրէ՛ք ինձ իմ քաղցր անցիւղի՝ կատաղի յոյսերը, իմ անմիտ հասակի բոցավառ օրերը։ Ես այժմ պատրաստ եմ այդ բոլորին զոհել իմ այս յիմար ու անմիտ երջանկութիւնը և այս անհոգ կեանքի հանգստութիւնը։ Ո՛չ, սորա ինձ համար չեն ստեղծուած... Մի՞թէ ես կարող եմ ամուսին լինել և ընտանեաց հայր, քանի որ արդէն ճաշակել եմ ամեն տեսակ անբարոյականութիւններ, բոլոր շարութիւնների քաղցրութիւնը և որոնց առաջ երբէք, ոչ մի անգամ չեմ զոյգացել, Կորի՛ր աչքիցս, առաքինութիւն. ես այս օրուանից քեզ այլ ես չեմ ուզում ճանաչել, Թէպէտեւ չէի սպասում, բայց քեզանից էլ խարուեցայ և հէնց զորա համար այժմեանից խախտում եմ քեզ հետ ունեցած իմ կարճ բարեկամութիւնը։ Մնաս բարեաւ և կրկին անգամ մնաս բարեաւ... (Ընկնում է ակոռի վերայ և երեսը ծածկում։)

ԿԱԶԱՐԻՆ.

Այս պարոնը ամբողջապէս իմ գերիշխանութեան տակ է,

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Ր Ո Ր Դ.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

Բեմը ներկայացնում է իշխան Զվէզդիչի տան սենեակներից մի-
նը: Դուռը բաց է դէպի միւս սենեակը և այնտեղից երևում է իշխանը,
քնած բազմոցի վերայ:

ԻԻԱՆ ԵՒ ՅԵՏՈՅ ԱՐԲԵՆԻՆ.

ԻԻԱՆ.

Արդէն եօթը ժամը լրանում է, իսկ ութին հրամայել է
զարթեցնել իրեն. հոգ չէ. նա այժմ այնքան խորն է քնած, որ
երբէք չի իմանալ, թէ ես վաղել եմ մի բանի բոպէով մեր հա-
րեան խանութը: Դռան բալանիքն էլ հետո կը վերցնեմ, որ ոչինչ
չպատահի: Բայց ահա... կարծես, ոտի ձայն է գալիս. սանդուղ-
տից բարձրացող կայ: Է՛հ, ո՛չինչ, կ'ասեմ թէ տանը չէ և ինքն
էլ կ'երթայ, կը կորչի: (Ներս է մտնում Արբենինը):

ԱՐԲԵՆԻՆ.

Տա՛նն է իշխանը:

ԾԱՌԱՅ.

Ո՛չ, պարոն, տանը չէ:

ԱՐԲԵՆԻՆ.

Սո՛ւտ ես խօսում:

ԾԱՌԱՅ.

Սորանից հինգ բոպէ առաջ նա հեռացաւ. այստեղից:

ԱՐԲԵՆԻՆ.

(Փոքր ժամանակ ականջ դնելուց լետոյ:) Ասում եմ, որ սուտ
ես խօսում, նա այստեղ է: (Յոյց տալով առանձնատնեակի վերայ:)
Երևի, շատ քաղցր քնի մէջ է, այ՛, լսիր թէ ինչպէս է շունչ
առնում... (առանձին:) Օ՛հ, այդ երկար չի տեւի:

ԾԱՌԱՅ.

(Առանձին:) Սա բոլորը լսում է... (Դէպի Արբենինը:) Իշ-
խանը հրամայել է, որ ես ոչ մի պատճառով չխանդարեմ նո-
րա քունը:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ շատ լաւ է, որ նա սիրում է քնել, նա մանաւանդ

կըպատահի, որ յաւիտեան կարող է քնել: (Մառապին:) Ես, կարծեմ, քեզ ասացի, որ այստեղ սպասելու եմ մինչև նորա զարթնելը: (Մառան հեղանում է:)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ:

ԱՐԲԵՆԻՆ, միայնակ:

Սորանից յաջող վայրկեան այլ ևս չի կարող լինել, այժմ կամ երբէք: Այժմ ես իմ մտքինս գլուխ կըբերեմ աներկիւղ՝ առանց մեծ աշխատանքի: Հէնց այժմ ես ցոյց կըտամ, որ մեր սերունդի մէջ դեռ կայ մի մարդ, որին հասցրած վերաւորանքը ցանկալի պտուղ է աճեցնում... Այո, թէպէտեւ կայ վռէժիւնդ-րութեան մի այլ միջոց, բայց ես այն չեմ կարող գործադրել, ոչ, ես ամբողջ ծառան չեմ, որ նորա առաջ խոնարհեմ գլուխս և նորա սահմանած օրէնքներով շարժուեմ: Նա պիտի ինձ վերայ ծիծաղէր, երբ ես բոլորի առաջ թշնամուս մենամարտութեան հրաւիրէի, բայց այժմ չի ծիծաղել: Ո՛չ, ես այն մարդկանցից չեմ, որ ամբողջ մի ժամ կրեմ անպատուութեան կնիքը ճակատիս վերայ և յետոյ առանց հետեանքի թողնեմ: (Բաց է անում դուռը:) Նա քնած է... Հետաքրքիր է իմանալ, թէ վերջին անգամը ի՞նչ է տեսնում երազում: (Սհարկու ժպիտով:) Կարծեմ մի հարուածով ամեն ինչ կըվերջանայ. գլուխն էլ վայր է թողել... այդ նպաստաւոր է, արիւնը ազատ կըվազէ... (Մտնում է սենեակը և երկու վայրկենաջափ մնալուց յետոյ, զոնատուած դէմքով դուրս է վազում այնտեղից:) Ոյժիցս վեր է: (Լռումին:) Այո, այո, ճշմարիտն եմ ասում, այդ գործը իմ կամքից, իմ ոյժից շատ բարձր է... Ես ինձ դաւաճանեցի, ես գողացի և այդ առաջին անգամն է իմ կեանքում: Այս ո՞ր ժամանակից է մտել իմ մէջ այսպիսի մի երկչոտութիւն... Երկչոտ... այս ո՞վ ասաց... Ե՛ս, ես ինքս ասացի և միանգամայն ճշմարիտ է... Ամօթ, մե՛ծ ամօթ: Փախիր, խղս տուր մարդկութեան երեսից, անարգ մարդ: Քեզ էլ ներկայ դարը օտարների նման՝ ճնշել, սեղմել է գետնին: Դու երեւի միմիայն քո առաջ գիտէիր պարծենալ... Ախտս, հազար ախտս... Դու ևս լուսաւորութեան շալակի տակ տկարացար և ուժասպառ եղար: Ուղեցիր սիրել, չկարողացար, ուղեցիր վռէժիւնդրութիւն, եկար և... և այդ էլ չկարողացար գլուխ բերել: (Լռում է և նստում:) Բայց պէտք է և այս էլ խոստովանել, որ ես շատ բարձրից բռնեցի. ոչ, պէտք է մի այլ աւելի

Հաստատ ճանապարհ ընտրել... Այժմ այս իմ տանջուած և չար-
չարուած հոգուս խորքում մի նոր միտք յղացաւ. այո՛, այո՛, գե-
ղեցիկ միտք է, թող նա ապրի. Սպանութիւնը ներկայում գոր-
ծածութիւնից դուրս է եկել, նա մանաւանդ, որ մարդասպաննե-
րին էլ հրապարակե մէջ կախաղան են բարձրացնում: Այսպէս
ուրեմն, իբրեւ կրթուած և լուսաւորուած մի անդամ հասարա-
կութեան, վեճիմնդրութեան համար զէնք պիտի ընտրեմ ինձ
համար ոսկին և լեզուն. այդ է ժամանակի սուրն ու թղթը:
(Մօտենում է սեղանին, տոմսակ է գրում և յետոյ վերցնելով զլիարկը՝
պատրաստվում է դուրս գնալ:)

ՏԵՍԻՆ ԵՐՐՈՐԴ.

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ԴԲՍՈՒՀԻ.

Արբենինը ուղևորվում է դէպի դուռը և պնտեղ հանդիպում է
դէմքը բողի տակ ծածկած մի տիկնոջ:

ՏԻԿԻՆ.

Ո՛հ, այժմ ամեն բան կորաւ:

ԱՐԲԵՆԻՆ.

Այս ո՞վ է:

ՏԻԿԻՆ.

(Աշխատելով ձեռքից դուրս փախչել:) Թողէք:

ԱՐԲԵՆԻՆ.

(Առանձին:) Ձէ՛, այս վաճառուող բարեհոգի անձնաւորու-
թեան աղաղակը շինծու չէր. (Խստումեամբ:) Լռեցէք, ձայն մի
հանէք, ապա թէ ոչ հէնց այս ականթարթում... Ա՛խ Աստուած,
այս ի՞նչ կասկածներ են ծագում իմ մէջ... Բարձրացրէք այդ
քողը և ցոյց տուէք ինձ այս ըռակէիս ձեր դէմքը, քանի միայ-
նակ ենք:

ՏԻԿԻՆ.

Նա ուրիշ տեղ էի գնում, սխալմամբ եմ մտել այստեղ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ինձ էլ ճշմարիտ այդպէս է լուում, որ դուք փոքր ինչ
սխալուել էք, բայց ոչ թէ տեղով այլ ժամանակով:

ՏԻՎԻՆ.

Ա՜յ, ի սէր Աստուծոյ, թողէ՛ք ինձ, ես ձեզ չեմ ճանաչում:

ԱՐԲԵՆԻՆ.

Ել ամաչելու տեղը չէ... դուք ինձ անպատճառ պէտք է ցոյց տաք ձեր դէմքը: Նա այժմ քնած է, բայց այս ընկերակա-
րող է զարթոնել, ես արդէն բոլորը գիտեմ... ուզում եմ հա-
մոզուել:

ՏԻՎԻՆ.

Բոլորը գիտէք... (Արբենինը բարձրացնում է քօղը, զարման-
քից փոքր ինչ լետ քաշվում, լետոյ ուշքի գալիս):

ԱՐԲԵՆԻՆ.

Շնորհակալ եմ Բեզնից, Ամենակարող Աստուած, որ գոնէ
այսօր ինձ միջոց տուիր սխալուելու:

ԳԲՍՈՒՀԻ.

Ո՛հ, այս ի՞նչ եկաւ գլուխս, այժմ ի՞նչ կ'ասեն մարդիկ:

ԱՐԲԵՆԻՆ.

Անտանելի է ձեր յուսահատութիւնը այժմ, տիկի՛ն, Իրաւ,
դուք շատ էլ ուրախ չպէտք է լինէք մեր՝ այսպիսի մի տեղ և
այսպիսի մի ժամ՝ միմեանց հանդիպելուն, նա մանաւանդ, որ
բոցավառ գրկախառնութեանց փոխարէն սառն ընդունելութիւն
էք գտնում... Մի՛ մտածէք, ձեր ընկերական երկիւղը առանձին
մի ցաւ չի կարող պատճառել ձեզ, Ինչ վերաբերում է ինձ,
կ'ասեմ այսքանս, որ ես համեստ մարդ եմ և պատրաստ եմ այս
դէպքի մասին գերեզմանային լուծիւն պահպանել: Շնորհակալ
եղէք Աստուածանից, որ ինձ էք պատահել և ոչ մէկ ուրիշին,
ապա թէ ոչ քաղաքի մէջ անթի ու անհամար խօսակցութիւն-
ներ կը լինէին ձեր մասին:

ԳԲՍՈՒՀԻ.

Բայց ա՜հ, կարծեմ, նա վեր է կացել և խօսում է:

ԱՐԲԵՆԻՆ.

Ցնորքի մէջ է... հանգիստ եղէք, ես այս ընկերակա-
րայց նախ քան հեռանալս կ'ուզենայի, որ ինձ բացատրէիք, թէ

Ի՞նչ իշխանութեամբ կարողացել է այս տխմարը ձեզ այդպէս կախարդել: Ասացէ՛ք մի, խնդրեմ, ինչո՞ւ բոլոր կանայք վառուած են դէպի նա բռնուն ցանկութեամբ, մինչդեռ ինքը անզգայ է այնպէս, ինչպէս մի փայտի կտոր: Ասացէ՛ք, խնդրեմ, ինչո՞ւ ինքը չէ ձեր ոտների տակ՝ վշտալի դէմքով, աղաչանքներով, երգումներով, արտասուածքով աչքերով, այլ դուք: Ինչո՞ւ դուք, մի կինմարդ, գիտակցաբար մոռացութեան տալով ձեր պատիւը, ձեր ամօթը, ինքներդ էք եկել նորան անձնատուր լինելու... Ինչո՞ւ մի այլ կին, որ ոչնչով պակաս չէ ձեզանից, պատրաստ է նոյնպէս ամեն ինչ զոհել դորան, այո՛, բոլորը՝ և բախտը և կեանքը և սէրը... և այս ամենը լոկ նորա մի խօսքի, մի հայեացքի համար: Ինչո՞ւ համար... Ո՛հ, ինձանից էլ յիմարդ մարդ... (Վատաղութեան մէջ): Ասացէ՛ք, խնդրեմ, ինչո՞ւ համար, հա՛, ինչո՞ւ համար:

ԴՔՍՈՒՀԻ.

(Վճռողական ձայնով): Հա՛, ես այժմ հասկացայ ձեր միտքը... գիտեմ, դուք եկել էք...

ԱՐԲԵՆԻՆ.

Ինչպէ՛ս, ո՞վ է պատմել ձեզ... (Ուշքի գալով): Հա՛, ասացէ՛ք տեսնեմ, ի՞նչ գիտէք...

ԴՔՍՈՒՀԻ.

Ա՛խ, աղաչում եմ, ներեցէ՛ք ինձ...

ԱՐԲԵՆԻՆ.

Երբէք մտքովս անգամ չի անցել ձեզ դատապարտելու, ընդհակառակը, բարեկամիս ուրախութիւնը ինձ աւելի քան ուշ բախտացնում է:

ԴՔՍՈՒՀԻ.

Ես միանգամայն կուրացել էի բռնուն ցանկութիւնների և կրքի ազդեցութեան տակ. այդ բոլորի մէջ միակ յանցաւորը ես եմ: Բայց լսեցէ՛ք...

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՞նչ կարիք կայ. ճշմարիտն ասած, ինձ համար այժմ բոլորը մէկ է... ես ինքս էլ խիստ բարոյականութեան յարգողներից չեմ:

ԴՔՍՈՒՀԻ.

Բայց եթէ ես չլինեի, ոչ այն նամակը կը գրուէր և ոչ էլ...

ԱՐԲԵՆԻՆ.

Օ՛ր, այդ արդէն չափազանցութիւն է... Նամակ... Ի՞նչ նամակ է... Ա՛յ, ուրեմն նոցա մտերմանալուն այն ժամանակ դուք էք նպաստել, հա՛. ուրեմն դուք էք նոցա սովորեցրել... Լա՛ւ է. յետոյ այդ ո՞ր ժամանակից էք ընդունել ձեզ վերայ այդպիսի մի գեր, ի՞նչն է ձեզ դրոշմել... Այժմ ասացէք, տեսնեմ, ձեր անմեղ զոհերը ուղղակի պատուել էք բերում, թէ իրենք երկտասարդներն են ձեզ մօտ յաճախում: Ա՛յ լաւ արհեստ... Ուրեմն դուք մեր կանանց շրջանում մի անգին գանձ էք: Եւ այդ բոլորը այժմ գիտենալուց յետոյ, էլ ինչո՞ւ պէտք է ես զարմանամ մեր տիկիներէրի վարած մոլի կեանքի վերայ...

ԴՔՍՈՒՀԻ.

Ո՛հ, ես կը գիտեմ: Սպասեցէք, բայց նա գնում է, չի ուզում լսել... Օ՛ր, այս Ի՞նչ խայտառակութիւն է, ես կը մեռնեմ...

ԱՐԲԵՆԻՆ.

Լաւ գործ է, շատ անգին պարագմունք է, խորհուրդ կը տամ, որ այսուհետեւ էլ շարունակէք նոյն հոգով գործել. այդ բանը կարող է ձեզ մեծ փառքի ու պատուի հասցնել... Է՛հ, այժմ մնաք բարեաւ. ինձանից երկիւղ չկրէք, բայց և աշխատեցէք խոյս տալ ինձանից: Ստուած չանէ, որ մենք նորից պատահենք միմեանց... Դուք ինձանից խլել էք այն ամենը, ինչ որ ինձ համար թանգ էր աշխարհքիս երեսին: Սորանից յետոյ ես պէտք է ձեզ հալածեմ՝ միշտ և ամեն տեղ, ուր էլ որ լինիք. թէ փողոցում, թէ առանձնացած ժամանակ և թէ հասարակութեան մէջ: Իսկ եթէ մի՛ գոցէ մենք նորից ընդհարուենք, այն ժամանակ... զգո՛յշ եղէք: Ես հէնց այժմ ձեզ կըսպանէի... բայց այդ մահը ձեզ համար պարգև կը լինէր. ո՛չ, ես այն պէտք է մի ուրիշ համար պահեմ: Այժմ տեսնում էք, թէ որքան բարի եմ ես, քանի որ դժոխային տանջանքների փոխարէն, ձեզ երկրաւոր դրախտ եմ պարգևում: Վայելեցէք, որքան կարող էք: (Դուրս է գնում:)

ՏԵՍԻՆ, ՉՈՐՐՈՐԴ.

ԴՔՍՈՒՀԻ, միայնակ.

ԴՔՍՈՒՀԻ, Արբենիին յետևից.

Լսեցէք, երդվում եմ... այդ մի խաբեբայութիւն է եղել... կինդ անմեղ է... և ապարանջանը... բոլորի պատճառը ես եմ...

միայն ես... Գնաց, չի լսում: Այժմ ես ի՞նչ անեմ, յուսահատութիւնը ամեն կողմից տիրել է ինձ... Բայց ո՛չինչ, ես ուզում եմ և պէտք է, ինչ էլ որ լինի, փրկեմ սորան, Կընդեմ, կ'աղաչեմ, ոտքերը կ'ընկնեմ, բացարձակ իմ գործած խաբեբայութիւններս կը յայտնեմ, ուղիղ սրտով կը խոստովանուեմ չարագործութեանս մէջ, Բայց ա՛հ, կարծեմ... Ո՛հ, այս ինչ սարսափելի տանջանք է:

ՏԵՍԻՆ, ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԴՔՍՈՒՀԻ ԵՒ ԻՇԽԱՆ.

ԻՇԽԱՆ, միտ սենեակից,

Ո՞վ է այդտեղ, Իւան... Ի՞նչ ձայներ են... Այս ի՞նչ անկարգ մարդիկ են, կէս ժամ անգամ չեն թողնում, որ հանգիստ քնեմ: (Ներս է մտնում:) Վա՛հ, ի՞նչ այցելու է այս. Ա՛յ գեղեցկուհի: Օ՛հ, ես չափազանց ուրախ եմ: (Ճանաչում է և յետոյ քաշվում:) Ա՛յ, այդ զո՞ւք էք, դքսուհի, ո՛չ, այդ անկարելի է, ես չեմ հաւատում... .

ԴՔՍՈՒՀԻ.

Ինչո՞ւ համար յետ քաշուեցիք: (Թողլ ծայնով:) Զարմանում էք, հա՛:

ԻՇԽԱՆ, շփոթուած.

Ի՞նչ էք ասում, ընդհակառակը, չափազանց ուրախ եմ... Բայց ես չէի սպասում այդպիսի մի բախտաւորութիւն:

ԴՔՍՈՒՀԻ.

Եւ շատ էլ տարօրինակ կը լինէր, եթէ ճշմարիտ սպասէիք:

ԻՇԽԱՆ.

Ի՞նչի մասին էի մտածում: Օ՛հ, եթէ ես իմանայի...

ԴՔՍՈՒՀԻ.

Դուք կարող էք ամենը իմանալ, բայց և մի և նոյն ժամանակ ոչինչ չէք իմացել:

ԻՇԽԱՆ.

Ես պատրաստ եմ յանցանքս ուղղել, պատրաստ եմ ամենայն հնազանդութեամբ կրելու այն բոլոր պատիժները, որոնք դուք կը վճռէք ինձ համար... Ես կտր եմ գտնուել և համր, ես

չեմ իմացել, չեմ հասկացել, որ ի հարկէ մեծ յանցանք է...
Ես այժմ խօսք չեմ գտնում... (Թոնելով դքսուհու ձեռքից) Ինչո՞ւ
է ձեր ձեռքը այսքան նառը, կարծէք, սառուցի կտոր լինի. ձեր
դէմքի վերայ հոգեկան տանջանք է արտայայտվում: Մի՞թէ իմ
խօսքերը կասկածելի են թուում ձեզ:

ԴՔՍՈՒՀԻ.

Դուք միանգամայն սխալվում էք: Ես վճռել եմ գալ ձեզ
մօտ՝ ոչ թէ նորա համար, որ սէր պահանջեմ, կամ սէր խոս-
տովանեմ. ո՛չ, ո՛չ, հանեցէք այդ ամենը ձեր մտքից, որովհետեւ
ես դորա համար չեմ եկել ձեզ մօտ: Մոռացութեան տալ եր-
կիւղը և ամօթը, այդ յատուկ է մեր սեռի մարդկանց, ուրեմն
և զարմանալու մի բան չէ այս, բայց եթէ այդ ամենը ես առ
ոչինչ համարելով, ոտք եմ դրել ձեր տունը, իմացած եղէք,
որ շատ կարեւոր գործ է դրդել ինձ այդ քայլը անելու, մի սուրբ
պարտաւորութիւն է ստիպել ինձ այսպիսի մի՝ ինքն ըստ ինքեան
վստահ, բայց և մի և նոյն ժամանակ երկիւղալի դերի մէջ մշտ-
նել: Կեանքիս երջանիկ օրերը արդէն անցել՝ գնացել են յաւի-
տեանականութեան գիրկը և ինձ այժմեանից մի այլ կեանք է սպա-
սում: Ահա՛, ներկայում հեռանալով փոթորկալոյ կեանքից և
աղմկալի աշխարհքից, ես իմ անցեալում գործած մեղքերից փոքր
ինչ թեթեւանալու համար, եկել եմ յայտնելու ձեզ, որ ես մի
մեծ չարիքի պատճառ եմ եղել: Ես պատրաստ եմ և ամաչել և
կարմրել և ամեն տեսակ նախատինք կրել, բայց այս ամենը դեռ
երկրորդական տեղ են բռնում և հարցը դորա մասին չէ: Որով-
հետեւ ինքս ինձ չկարողացայ փրկել, դորա համար այժմ ես ու-
ղում եմ՝ ուրիշին աղատել:

ԻՇԽԱՆ.

Ես ձեզ չեմ հասկանում, ի՞նչ են նշանակում ձեր խօսքերը:

ԴՔՍՈՒՀԻ.

Մի՛ խանգարէք, թողէք վերջացնեմ ասելիքս: Վճռել, գալ
ձեզ հետ բացատրուելու՝ այդ այնքան հոգեկան նեղութիւններ է
պատճառել ինձ, որ նկարագրելու ո՛չ միջոց կայ և ո՛չ հնար:
Ես եկել եմ ձեզ փրկելու, թէպէտեւ արժան չէք դորան միան-
գամայն. այո՛, արժան չէք, քանի որ այսքան ժամանակուայ իմ
կրած բոլոր վշտերի ու տանջանքների միակ պատճառը, միակ

յանցաւորը ձեր անհեռատեսութիւնից՝ միմիայն դուք էք եղել: Գրկնում եմ, որ վճուել եմ զալ ձեզ մօտ՝ միմիայն ձեզ փրկելու ցանկութեամբ, իսկ թէ ինչո՞ւ, կամ ի՞նչ բանի համար, այդ չգիտեմ ես... Ճշմարիտ է, թէպէտեւ դուք միանգամայն արժանի չէիք, որ ձեզ համար այսքան մեծ զոհաբերութիւններ անէին, քանի որ չկարողացաք սիրել և հասկանալ ինձ, որ գուցէ և ինքս էլ չուզէնայի, բայց այդ այժմ՝ արդէն անցել է և չարժէ, որ դորա վերայ երկար կանգ առնենք: Լսեցէք, այսօր ես իմացայ, թէ ինչպէս, այդ ի հարկէ ձեզ համար ողջ մէկ է, երեկ Արքեւնի կնոջ վերայ դուք անզգուշարար նամակ էք գրել: Շատերի ասելով, նա ձեզ սիրում է, իսկ այդ սո՛ւտ է, ի սէր Աստուծոյ, մի՛ հաւատար այդ լուրերին: Տէնց միմիայն այդ միտքը կարող է մեր բոլորի կորստեան պատճառ լինել: Այո, այո՛, այն կինը ոչինչ չգիտէ, ո՛չ մի բանից տեղեկութիւն չունի... բայց ամուսինը... կարգացել է... նա կատաղել հրէշ է սիրոյ և ատելութեան մէջ. նա արդէն ձեզ մօտ եղել է, նա կըսպանէ ձեզ... նա չարագործութիւնների մէջ վարժուած է... Դուք զեռ այնքան երիտասարդ էք...

ԻՇԽԱՆ.

Ի՛ զուր էք այդքան երկիւղ կրում, Արքեւնինը եղել ապրել է մարդկանց մէջ և այնքան գիտուն ու խելօք է, որ երբէք հասարակութեան ականջը չի հասցնիլ այդ իրողութիւնը և որ աւելին է, նա երբէք չի համաձայնուիլ, որ այսպիսի մի շնչին ու դատարկամիտ կօմեդիան դարձնէ արիւնայից զրամայ: Իսկ եթէ բարկացել է, այդ էլ մի մեծ ցաւ չէ և չարժէ, որ դորա մասին փոքր անգամ մտածենք: Շատ, շատ, վերցնեն Լիպաժի տարձա-նակներից մի մի հատ, մեզ իրարից երեսուն քայլ հեռաւորութեամբ կանգնեցնեն և ասեն, թէ փորձեցէք միմեանց վերայ ձեր ունեցած հմտութիւնը: Քաջութեանս և հմտութեանս համար էլ կարող էք միանգամայն միամիտ լինել, քանի որ դորան ապացոյց այս էպօլեոնները՝ թշնամու առաջից փախչելու համար չեմ ստացել:

ԳՔՅՈՒԷԻ.

Բայց եթէ ձեր կեանքը մէկ ուրիշ համար աւելի թանգ է, քան ձեզ համար... եթէ նա կապակցութիւն ունի մի ուրիշ կեանքի հետ... իսկ եթէ ձեզ սպանեն, սպանեն... Ո՛հ, Աստուած իմ, և այս բոլորի մէջ միակ յանցաւորը ես եմ...

ԻՇԽԱՆ.

ԴՌՔ.

ԴՔՍՈՒՀԻ.

Խնայեցէ՛ք ինձ.

ԻՇԽԱՆ, մտածելոյց յետոյ.

Քանի որ չիմանալով, ես շօշափել եմ այն մարդու պատիւը, ուստի և պարտաւոր եմ մենամարտելու նորա հետ. արդարանալու ուրիշ ո՛չ մի միջոց չկայ:

ԴՔՍՈՒՀԻ.

Կայ՛ միջոց.

ԻՇԽԱՆ.

Սուտ խօսել, երևի, այս էք ուզում ասել, խնդրեմ, ներէ՛ք. կեանքս պահպանելու համար ես չեմ կարող ստել, իսկ եթէ մի այլ միջոց գիտէք, ասացէ՛ք. Ահա՛, հէնց այս րոպէիս ես կերթամ նորա մօտ:

ԴՔՍՈՒՀԻ.

Սպասեցէ՛ք մի րոպէ ևս... Մի՛ գնաք և լսեցէ՛ք ինձ: (Բըռնելով նորա ձեռքից:) Դուք բոլորդ խաբուած էք... Այն գիմակակիրը, (արմունկով լինովում է սեղանի վերայ և լստոյ վայր ընկնում,) ես եմ եղել...

ԻՇԽԱՆ.

Ի՞նչպէս, դՌՔ, ո՞վ երկնային Նախախնամութիւն. (Լոկուց լստոյ:) Իսկ Շարի՛խը... նա է ասել... նա է մեղաւորը այս բոլորի մէջ...

ԴՔՍՈՒՀԻ, ուշքի գալով և փոքր ինչ հեռանալով.

Այն մի րոպէական ինքնամոռացութիւն էր և սարսափելի խելացնորութիւն, որ ահա՛ ես այժմ անկեղծօրէն խոստովանւում եմ: Եղածը արդէն անցել, գնացել է, ուրեմն և դուք այժմ այն ամենը մոռացութեան տուէք և դարձրէք իրեն ապարանջանը, քանի որ այն մի հրաշալի կերպով գտել եմ ես և ինքս էլ ձեզ յանձնել: Յոյս ունիմ, որ այս ամենը մեր մէջ գաղտնիք կըմնայ... Ես ինձ յանձնում եմ Աստուծոյ դատաստանին, բայց նա ձեզ կըներէ... Դուք անկարող էք ինձ ներել և հէնց դորա համար

ձեզանից ներողութիւն չեմ խնդրում... Է՛հ, այժմ ես թողնում եմ ձեզ... և կարծեմ, որ էլ երբէք միմեանց պատահելու չենք: (Դռան մօտեցած ժամանակը նկատում է, որ իշխանը ուզում է վազել հետիւից, ակելացնում է:) Այդ ակելորդ է, մի՛ հետևէք: (Գնում է:)

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ.

ԻՇԽԱՆ. միայնակ և երկար մտածելուց յետոյ.

Ես ճշմարիտ չգիտեմ, թէ ինչ մտածեմ և այս բոլորից ես միմիայն այն եմ հետևացնում, որ անփորձ աշակերտի նման, ոչինչ չարած՝ այսպիսի մի յաջող դէպք ձեռիցս բաց եմ թողնում: (Մօտենում է սեղանին:) Այս ինչ տոմսակ է, ումնից պէտք է լինի: Արբենին... մի կարգամ տեսնեմ, ինչ է ուզում: «Սիրելի ի՛շխան, այս գիշեր արի Մ-ի տունը. այնտեղ ժողովուած են լինելու շատերը և մենք ուրախ կ'անցկացնենք ժամանակը: Քեզ չգարթեցրի հէնց նորա համար, որ գիշերս չննջես: Մնաս բարեաւ, սպասելու եմ, անպատճառ գաս: Քո անկեղծ բարեկամ՝ Եւգենիյ Արբենին»: Զարմանալի չէ՞. ո՞րտեղ է տեսուած, որ մենամարտութեան հրաւիրելուց առաջ, մարդ հակառակորդին ընթրիքի հրաւիրէ: Խեղքս ոչինչ չի կտրում, այստեղ մի առանձին՝ խորը թափանցող աչք պիտի լինի, որ այս նամակի տողերի մէջ ծածկուած մի ուրիշ միտք գտնէ:

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Ր Ո Ր Դ.

Բեմը ներկայացնում է N-ի սենեակներից մինը.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

Կազարին, տանտէր և Արբենին նստում են թղթախաղի.

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրեմն ճշմարիտ ես ասում, թէ վճռել ես թողնել այն անսովոր կեանքը, որով ներկայում պարծենում են մարդիկ: Ուրեմն դու նորից ուզում ես քայլերդ ուղղել հին ճանապարհով, հա՞... Ա՛յ հրաշալի միտք... Երևում է, դու բանաստեղծական շնորհք ունես և բացի դորանից, ոլբան ես կարողացել եմ նկատել, դու կատարեալ հանճար ես: Տեսնում եմ, սիրելիս, որ ընտանեկան շրջանը ճնշումն է գործում քեզ վերայ. էլ մի

ուշացրու, տո՛ւր ինձ ձեռքդ, սիրելի բարեկամ, և այս օրուանից
դու մերը կը լինիս: Համաձայն ես թէ ոչ:

ԱՐԲԵՆԻՆ.

Համաձայն եմ, համաձայն. այս օրուանից ես ձերն եմ: Այժմ
անցեալի հետքը անգամ չի մնացել:

ԿԱԶԱՐԻՆ.

Մխիթարվում եմ: Աստուած է վկայ, երբ տեսնում եմ,
թէ խելօք մարդիկ այժմ ինչպէս են վերաբերվում դէպի այն
ամենը, ինչ որ գոյութիւն ունի աշխարհքում: Պատուաճանաչու-
թիւն ասած բանը պղպիսիների համար անտանելի է՝ շղթաներից
էլ վատթար... Ուրե՛մն այս գիշեր մենք մեր տարածն ու տանու-
տուածը կէս կ'անենք, այնպէս չէ:

ՏԱՆՏԷՐ.

Ինչ ուզում էք, արեք, այդ ձեր գործն է, միմիայն ես
այսքանս կ'աւելացնեի, որ վատ չէր լինիլ, եթէ այս գիշեր իշ-
խանին մի թեթեւ կերպով փետրէինք:

ԿԱԶԱՐԻՆ.

Այո՛... այո՛: (Առանձին:) Ա՛ զուարճալի պիտի լինի սոցա
ընդհարումը:

ՏԱՆՏԷՐ.

Տե՛նենք. Ահա՛, կարծես եկող կայ: (Դրսից ոտի ձայներ
են լսվում:)

ԱՐԲԵՆԻՆ.

Նա՛ է:

ԿԱԶԱՐԻՆ.

Ձեռքդ դողում է...

ԱՐԲԵՆԻՆ.

Չարժէ ուշադրութիւն դարձնել: Սովոր չէ, այդ նորանից
պիտի լինի: (Ներս է մտնում իշխանը:)

ՏԵՍԻԼ, ԵՐԿՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ ԵՒ ԻՇԽԱՆ.

ՏԱՆՏԷՐ.

Ա՛, բարե ձեզ, ի՛շխան, շա՛տ ուրախ եմ, համեցէ՛ք, հանե-

ցէք, ինչորեմ, մի կողմ դրէք այդ սուրը և մօտեցէք մեզ, Նայեցէք, տեսէ՛ք թէ ինչ սարսափելի կոուր մէջ եմք:

ԻՇԽԱՆ.

Ինչո՞ւ չէ, ես պատրաստ եմ նայել:

ԱՐԲԵՆԻՆ.

Երևի, դեռ այն ժամանակից էք վախենում խաղալ, հա՞:

ԻՇԽԱՆ.

Ո՛չ, ձեզ հետ ինչո՞ւ պէտք է վախենամ: (Առանձին:) Մարդկային օրէնքների համաձայն, մարդուն հաճոյանում եմ, իսկ կնոջ յետևից քարշ գալիս... Յանկայի է, որ այնտեղ շահուեմ, իսկ այստեղ որքան ուզում է տանուլ կըտամ, այդ ոչինչ: (Նստում է:)

ԱՐԲԵՆԻՆ.

Այսօր իս ձեզ մօտ էի եկել:

ԻՇԽԱՆ.

Գիտեմ, ձեր նամակը կարդացի և ահա՛, ինչպէս տեսնում էք, ես հնազանդ եմ գտնուել ձեր կարգադրութեան:

ԱՐԲԵՆԻՆ.

Հեռանալու ժամանակ՝ դռան սեմի վերայ ինձ մի անձնաւորութիւն պատահեց, բաւական շփոթուած և այլայլուած վիճակի մէջ:

ԻՇԽԱՆ.

Եւ դուք ճանաչեցի՞ք նորան:

ԱՐԲԵՆԻՆ, ծիծաղելով

Կարծես, թեթեւ կերպով ճանաչեցի. Օ՛, ի՛շխան, դուք չափազանց երկիւղալի մարդ էք, ձեզանից պէտք է զգոյշ մնալ, գիտէք, թէ ինչպէս պէտք է գայթակղել: Բոլորը ես իմացայ, ամենը հասկացայ:

ԻՇԽԱՆ, առանձին.

Որ սա ոչինչ չի հասկացել, այդ պիտի պարզ է ինձ համար: (Հեռանում է մի կողմ և վայր դնում թուրը:)

ԱՐԲԵՆԻՆ.

Ես երբէք չէի ցանկանալ, որ իմ կինը ձեզ դուր գար:

Ի Հ Խ Ա Ն, ցրտած:

Ինչո՞ւ համար:

ԱՐԲԵՆԻՆ.

Հէնց նորա համար, որ ես զուրկ եմ այն աչքի ընկնող յատկութիւններից, այն առաքինի կողմերից, որոնց կանայք որոնում են իրենց ամուսինների մէջ: (Առանձին:) Ոչ մի շփոթութիւն չի արտայայտվում սորա դէմքի վերայ... Օ՛հ, սպասիր, յիմարագլուխ և տես թէ, ինչպէս կըփշրեմ ես բո այդ քաղցր կեանքը: Եւ, թէ որքան թոյն կըխառնեմ ես նորա մէջ: Ուր էլ որ գնաս, ինչ էլ լինիս, դու պէտք է ինձնից ստանաս քեզ արժանի պատիժը: (Սկսվում է թղթախաղը և Արբենինը թղթերը դարսում է աջ ու ձախ:)

ԿԱԶԱՐԻՆ.

Ես յիսուն ուրբի եմ գալիս:

Ի Հ Խ Ա Ն.

Ես նոյնպէս:

ԱՐԲԵՆԻՆ.

Կեանքիս երիտասարդ օրերում մի անեկդօտ եմ լսել, որ այսօր իսկ մտքիցս չի անցնում և ահա՛ այժմ ուղում եմ ձեզ պատմել: Մի ինչ որ մարդ, ինքը պսակուած, — դու տարար, Կազարին, — հա՛, մի ամուսնացած մարդ՝ միանգամայն վտաճ իւր կնոջ հաւատարմութեան վերայ, շարունակ նիրհում էր քաղցր երազների մէջ: Ի՛շխան, դուք չափազանց մեծ ուշադրութեամբ էք լսում, զգոյշ եղէք, կարող էք մեծ փողեր տանուլ տալ: Ո՞րտեղ մնացի, հա՛, յիշեցի: Կի՛նն էլ չափազանց սիրում ու փայլալայում էր ամուսնուն. նոքա հանգիստ ու երջանիկ անցնում էին իրենց բախտաւոր օրերը: Այդ ամեն բարեքների հետ միասին, դոքա ձեռք են բերում և մի նոր բարեկամ... մի անձնաւորութիւն, որին երբեմն ամուսինը շատ մեծ ծառայութիւն է արած լինում և որի մէջ, կարծես, պատուաճանաչութեան ու խղճի զգացմունք էր գտել: Նոր բարեկամի հետ՝ բախտաւոր զոյգի ընտանեկան բարօրութիւնը աւելի ևս կրկնապատկւում է: Անցնում է քանի մի ժամանակ և ահա՛, չգիտեմ ինչ կերպ, ամուսինը իմանում է, որ իւր վեհանձն բարեկամը, արդէն իւր պարտաճանաչութիւնը չափազանցութեան հասցրած ընկերը, կնոջը առաջարկել է իւր խոնարհ ծառայութիւնները:

ԻՇԽԱՆ.

Յետոյ ամուսինը որ իմացել է, ի՞նչ է արել:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՛շխան, դուք միանգամայն մոռացութեան էք տուել խաղը, չէ՛ք իմանում, թէ ինչ էք տանում կամ տանուլ տալիս: (Սուր հայեացք ձգելով վերան:) Ուրեմն շատ էք ցանկանում իմանալ, թէ ի՞նչ արաւ ամուսինը... Աննշան տեղից կռուի պատճառ է գտնում և յետոյ հակառակորդին լաւ ապտակ ուտեցնում. . . Այժմ ասացէ՛ք, պիտի մի դէպքում, դուք ի՞նչպէս կրվա-
րուէիք, իշխան:

ԻՇԽԱՆ.

Ես էլ նոյնը կ'անէի. Լա՛ւ, յետոյ, ի՞նչով է վերջանում, չե՞ն մենամարտում:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրե՛մն դաշոյնահարում են միմեանց:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ:

ԿԱԶԱՐԻՆ.

Ուրե՛մն հաշտվում են:

ԱՐԲԵՆԻՆ, դա՛ւր ժպտով.

Օ՛ր, ի՞նչ էք ասում, ի՞նչպէս կ'արելի է:

ԻՇԽԱՆ.

Լա՛ւ, ասացէ՛ք տեսնենք, ինչ արաւ ամուսինը վերջ ի վերջոյ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չինչ, բաւականացաւ միմիայն նորանով, որ հակառակորդին ապտակի ամօթով թողեց:

ԻՇԽԱՆ, ծիծաղելով.

Բայց չէ՞ որ այդ տեսակ արարմունքը օրէնքից դուրս մի բան է:

ԱՐԲԵՆԻՆ.

Խնդրեմ ասէ՛ք, ատելութեան կամ վրէժխնդրութեան վե-

րաբերեալ կայ մի օրէնք կամ մի կանոն որ և է հրովարտակի մէջ: (Խաղում են, տիրում է խորին լռութիւն:) Տարաք, իշխան... ձեր ընտրած թուղթը տարաւ: (Տեղից բարձրանալով:) Բայց սպասեցէք, դուք փոխել էք այս թուղթը:

ԻՇԽԱՆ.

Ի՞նչպէս, ևս. դուք, պարոն...

ԱՐԲԵՆԻՆ.

Այո՛, այո՛, էլ չարժէ խաղալ... Այդ ամենից յետոյ քաղաքավարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել, ուստի և ես թող իմ տալիս ինձ (շնչառապառ) անամօթ, խաբերայ անուանել ձեզ:

ԻՇԽԱՆ.

Ես, ևս:

ԱՐԲԵՆԻՆ.

Այո՛, անամօթ բառը ես հէնց այստեղ կը դրօշմեմ ձեր ծակատին, որ այսուհետեւ ամենայն մի մարդ իրեն համար անպատւութիւն համարէ ձեզ հետ պատահելն անգամ: (Խփում է ձակատին թղթերի կապոցը: Իշխանը մնում է ապշած և չգիտէ թէ ինչ անէ: Արբենինը փոքր ինչ մեղմանալով շարունակում է:) Այժմ մենք վերջացրինք մեր հաշիւները:

ԿԱԶԱՐԻՆ.

Ի՞նչ ես անում, Ի՞նչ պատահեց քեզ, (Տանտիրոջը:) Ափսոս, որ սա խաղի ամենահետաքրքիր տեղը գժուեց: Տեսա՞ր թէ նա որքան էր տաքացել, անպատճառ երկուհազարաչափ տանուլ կը տար:

ԻՇԽԱՆ. ուշքի դառով և տեղից վեր թռչելով:

Եկէք, եկէք հէնց այս բոպէիս իմ յետեւից, միմիայն ձեր արիւնը, այո՛, միակ այդ արիւնը կարող է լուանալ ու մաքրել իմ այս անպատուութիւնը:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՞նչպէս, գամ մենամարտելու, այն էլ ձեզ հետ. ոչ, իշխան, դուք միջորոշած էք:

ԻՇԽԱՆ.

Երկչոտ: (Ուզում է յարձակուել Արբենինի վերայ:)

ԱՐԲԵՆԻՆ, բարձր ձայնով:

Թո՛ղ ձեր ասածը լինի, բայց և այնպէս ես խորհուրդ չեմ տալ ինձ մօտենալ և նոյն իսկ մնալ այստեղ: Ասենք, թէ ես երկչոտ եմ, բայց լաւ իմացէք, որ դուք անկարող էք վախեցնել նոյն իսկ այդ երկչոտին:

ԻՇԽԱՆ.

Օ՛հ, սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք մի առ ժամանակ և յետոյ տեսէ՛ք, թէ ինչպէս կը մենամարտէք ինձ հետ: Ես կ'երթամ և ամենայն տեղ կը պատմեմ ձեր արարմունքը. և ցոյց կը տամ, որ անամօթը ոչ թէ ես, այլ դուք էք, որ...

ԱՐԲԵՆԻՆ.

Համեցէ՛ք, ես դորա դէմ ոչինչ չունիմ:

ԻՇԽԱՆ, փոքր ինչ մօտենալով.

Ես կը պատմեմ, որ ձեր կնոջ հետ... Օ՛հ, զգո՛յ՛ն եղէք... յիշեցէ՛ք ապարանջանը:

ԱՐԲԵՆԻՆ.

Դորա համար դուք արդէն ձեր պատիժը ստացաք ինձանից...

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, կատաղութիւնս ինձ սպանում է... Մէկ ասացէ՛ք խնդրեմ, ես այս ո՞րտեղ եմ, կարծես, ամբողջ մարդկութիւնը իմ դէմ է... Օ՛հ, ես կը սպանեմ ձեզ...

ԱՐԲԵՆԻՆ.

Դորա դէմ ևս ոչինչ չունիմ և եթէ կամենաք, մինչև անգամ կարող եմ խորհուրդ տալ, որ, որքան կարելի է, շուտ սպանէք... ապա թէ ոչ ձեր քաջութիւնը կարող է մինչև մի ժամ սպառել:

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, ո՞ւր է այժմ պատիս... Յետ դարձրէք ինձ այդ խօսքը, տուէ՛ք ինձ այն և ես կը չարեմ ձեր ոտների առաջ... Մի՛թէ դուք կորցրել էք ամենայն մի սրբազան զգացմունք. դուք մարդ էք, թէ հրէշ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՞վ, ես, մի խաղացող և ուրիշ ոչինչ:

ԻՇԽԱՆ, վայր ընկնելով և դէմքը ծածկելով.

Ա. Դ., պատի՛ւս, պատի՛ւս...

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ ի զուր աշխատանք է, նա այժմեանից էլ յետ դառնալ չի կարող, դուք ընդ միշտ կորցրիք այն, Բարույ և Հարութեան մէջ եղած սահմանը ոտնակոխ է եղել և այսուհետև քեզանից ամբողջ աշխարհքը անարգանքով կը դարձնէ իւր երեսը: Դու այս օրուանից այլ ևս հասարակութեան անդամ չես, դու մերժուածների ճանապարհով պիտի ուղղես քայլերդ և ապա թէ հասկանաս արիւննալից արտասուքների քաղցրութիւնը: Այժմեանից բարեկամներիդ բախտաւորութիւնը կը ծանրանայ հոգւոյդ վերայ և գիշեր ու ցերեկ միմիայն մի բանի վերայ պիտի մտածես: Փոքր առ փոքր սիրոյ գեղեցիկ զգացմունքները անդարձ կը հանգչեն քո մէջ ու կը մեռնեն և ոչ ոք մարդկանցից չի կարող իւր արհեստով քեզ բախտաւորութիւն պատճառել: Քո բազմութիւ աղմկալից բարեկամներիդ ու ծանօթներիդ, տերևի նման կը թափուին իրենց փթած ճիւղից, ամբոխի միջից անցնելու ժամանակ, դու կը կարմրես ու կը ծածկես դէմքդ և ամօթն ու նախատինքն քեզ աւելի վիշտ կը պատճառէ քան չարագործին՝ իրեն գործած չարագործութիւնը: Այժմ՝ մնաս բարեաւ... (զնալու ժամանակ) ցանկամ երկար կեանք, (Գնում է):

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ.

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ.

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Է Ս.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ՏԱՆՏԻԿԻՆ.

Ես նաև գրասուհուն եմ սպասում, չգիտեմ գալու է, թէ ոչ, եթէ չեկաւ, ճշմարիտն ասած, ես չափազանց պէտք եմ ցաւեմ ձեզ համար:

1-Ն ՀԻԻՐ.

Ի՞նչ էք ուղում ասել, ես ձեզ չեմ հասկանում:

2-Դ ՀԻՒՐ.

Եթէ դուք դքսուհի Շարալին էք սպասում, այդ աւելորդ է, որովհետեւ նա արդէն բացակայում է քաղաքից:

ՀԱՏԵՐԸ.

Ո՛ւր է գնացել. ինչո՞ւ համար. շատ ժամանակ է, որ հեռացել է:

2-Դ ՀԻՒՐ.

Տէնց այսօր տոաւօտեան է ճանապարհուել գիւղը:

ՏԻԿԻՆՆԵՐԻՑ ՄԷԿԸ.

Ի՞նչ էք ասում... այ անսպասելի բան: Յետոյ ի՞նչն է ստիպել նորան այդպէս անել: Ես չեմ հաւատում, որ այդ իրեն ազատ կամքի թելադրութեան հետեանքը լինի:

2-Դ ՀԻՒՐ.

Շարժառիթներ չառ են եղել. օրինակ, երեակայութիւնը, բոմանների ազդեցութիւնը... Ճշմարիտն ասած, ինքս էլ լաւ չեմ հասկանում և չարժէ իսկ, որ այսքան հետաքրքրուենք. ինչ ուզում է, թող անէ: (Յրժոււ են և դոցա տեղը բռնում է մարդկանց մի այլ խումբ:)

3-Դ ՀԻՒՐ.

Լսել էք, որ իշխան Զվէլդիչը մեծ փողեր է տանուլ տուել:

4-Դ ՀԻՒՐ.

Ընդհակառակը, ասում են տարել է, բայց երևի խարդախ միջոցով, որովհետեւ տարած փողերի հետ միասին, նա մի լաւ ապտակ էլ է ստացել:

3-Դ ՀԻՒՐ.

Յե՛տոյ, մենամարտութեան չի հրաւիրել:

4-Դ ՀԻՒՐ.

Ո՛չ, չի ուղեցել:

3-Դ ՀԻՒՐ.

Ուրեմն դա մի անամօթ ու անիրաւ մարդ պիտի լինի, եթէ յանձն է առել այդպիսի մի անպատուութիւն:

5-Դ ՀԻՒՐ.

Այժմեանից նորան ես այլ ևս չեմ ուզում ճանաչել:

6-րդ ՀԻՒՐ.

Ես նշանակես, Ի՞նչ կեղտոտ արարմունք է:

4-րդ ՀԻՒՐ.

Նա այսօր այստեղ է լինելու:

3-րդ ՀԻՒՐ.

Ձեմ՝ կարծում: այդ տեսակ անպատուութիւն կրելուց յետոյ, նա էլ Ի՞նչ քաջութիւն պէտք է ունենայ մարդկանց մէջ երևելու:

4-րդ ՀԻՒՐ.

Ի՞նչպէս թէ քաջութիւն չի ունենալ. նա արդէն այստեղ է: Ահա՛, տեսէ՛ք: (Իշխանը մօտենում է. հիւրերը հազիւ զլուխ են իջեցնում և հեռանում, բացի Ծ-դ և Ծ-դ հիւրից: Փոքր ժամանակից յետոյ, սորա ևս հեռանում են: Այս միջոցին Նինօն երևում է և նըստում բազմոցի մէջ:)

ԻՇԽԱՆ, առանձին.

Այսպիսի մի յարող դէպք ուրիշ անգամ շատ դժուար է գտնել. բոլորից առանձնացած, միայնակ է և ես այժմ կարող եմ խօսել հետը: (Իէպի Նինօն:) Ես կարևոր եմ համարում ձեզ հետ մի քանի խօսք խօսել, և դուք պարտաւոր էք լսել ինձ:

ՆԻՆՕ.

Ի՞նչպէս թէ պարտաւոր եմ:

ԻՇԽԱՆ.

Այո՛, պարտաւոր էք, որովհետեւ դորանից է կախուած ձեր երջանկութիւնը:

ՆԻՆՕ.

Չափազանց տարօրինակ է թւում ինձ ձեր կարեկցութիւնը:

ԻՇԽԱՆ.

Այո՛, կարող է տարօրինակ երևիլ հէնց այն պատճառով, որ իմ կորստեան միակ պատճառը դուք էք հանդիսանում. . . Բայց լսեցէ՛ք, ես ցաւում եմ ձեզ համար, ես տեսնում եմ, որ այն ձեռքը, որ մահացու վէրք է պատճառել ինձ, ձեզ ևս պէտք է սպանէ. ճշմարիտ է, ես անպատուած եմ, բայց չեմ՝ կարող այն աստիճան ստորանալ, որ շնչին վրէժխնդրութեամբ:

փոխարէնը վճարեմ, ո՛չ, այդ անկարելի է. նա պէտք է արժանաւոր պատիժ ստանայ. բայց այդ ապագայի հարց է. Ներկայում ես կ'ուզենայի ձեզանից խնդրել, որ որքան կարելի է զգոյշ լինիք: Ձեր ամուսինը չարագործ, խղճից զուրկ և անասունած մի մարդ է. ես նախազգում եմ, որ ձեզ վտանգ է սպառնում նորանից: Այժմ մնաք բարեաւ և ընդ միշտ: Չարագործը դեռ յանցանքի մէջ չի բռնուել, ուրեմն և պատժել նորան այժմ ես չեմ կարող. բայց յոյս ունիմ, որ այդ օրը հեռու չէ. մեծ կորուստ է, կրսպասեմ այդ ժամանակին... Ահա՛, առէ՛ք ձեր ապարանջանը, ես այլ ևս կարիք չունիմ դորա մէջ: (Արբենինը հեռուից նայում է զոցա վերայ:)

ՆԻՆՕ

Ցնորուե՛լ էք, ինչ է, ի՛չխան. այդ ինչե՛ր էք խօսում: Ես գոնէ ինձ համար ամօթ եմ համարում մինչև անգամ բարկանալ ձեզ վերայ, ձեր այդ վիճակի մէջ:

ԻՇԽԱՆ.

Մնա՛ք բարեաւ յաւիտեան, խնդրում եմ վերջին անգամը...

ՆԻՆՕ:

Ինչպէս երևում է, դուք չափազանց հեռու տեղ էք ուզում ճանապարհորդել. Ձլինի՞ թէ լուսնի վերայ էք ուզում բարձրանալ:

ԻՇԽԱՆ.

Ո՛չ, այդքան հեռու չէ. ես գնում եմ Կովկաս: (Գնում է:)

ՏԱՆՏԻՍԻՆ, մի քանիսին.

Համարեա ժողովուրդ են բոլոր հիւրերը և մենք բոլորս չենք կարող այս սենեակում տեղաւորուել. Պարոնայք, խնդրում եմ շնորհ բերէ՛ք դահլիճը. Mes dames, դուք ևս համեցէք այնտեղ: (Գնում է:)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ԱՐԲԵՆԻՆ, առանձին.

Ես դեռ կասկածում էի, ես, մինչդեռ այդ արդէն բոլորին յայտնի է. Ամեն կողմից շարունակ կծու խօսքերով ինձ յիշեցնում են իմ անպատուութիւնս... ինձ խղճում են, ես զոցա ա-

ուր ծիծաղալի դերի մէջ եմ: Որտեղ մնացին իմ բոլոր ջանքերը. ուր մնաց իմ այն կարողութիւնը, որով մի ժամանակ մահու էի դատապարտում ամբոխը թէ խօսքով, թէ սրախօսութիւններով... Այդ կարողութիւնը, այդ դժուար մեղքին իմ մէջ, սպանեցին միմիայն երկու կինմարդ: Մէկը դոցանից... Ո՛հ, ես դորան սիրում եմ, այո՛, սիրում եմ բուն զգացմունքով, բայց նայեցէք, տեսէք, թէ ինչպէս անգլխաբար խաբեց, դաւաճանեց նա ինձ... Տե՛ս, ո՛չ, ես նորան այդ չեմ կարող ներել, ո՛չ, չկարծէք, թէ ես նորան կը յանձնեմ ամբոխի դատաստանին... ո՛չ, այդ անկարելի է: Մարդիկ չեն կարող մեղ դատել: Ամենասոսկալի դատաւճիռը ես ինքս իմ ձեռքով գլուխ կը բերեմ... ես ինքս գիտեմ, թէ ինչ մահուան տանջանքներ կարելի է գտնել նորա համար. իսկ ինչ վերաբերում է իմ կրած տանջանքներին ու չարչարանքներին, թող նորա այստեղ մնան փակուած: (Յոյց է տալիս կուրծքի վերայ): Նա պէտք է մեռնի, ապրել նորա հետ միասին՝ ես այլ ես չեմ կարող... Ի՞նչպէս, ապրել բաժանուած: (Կարծես ինքը իւր խօսքից վախեցած): Վճռուած է և պէտք է կատարուի. ես չեմ ուզում դաւաճանել իմ նախկին երկաթէ կամքիս, նա պէտք է մեռնի: Երևի, այդ էր նորա ճակատագիրը, երևի, վերեւից այդպէս է նախաինամուծւած, որ դեռ ծաղիկ հասակում հրաժեշտ տայ իւր կեանքին, բաժանուի այս աշխարհից՝ այն միջոցին, երբ ինձ նման մի չարագործի անհուն սիրոյ փայփայանքներից ձանձրացած ու նեղացած՝ օտարի գիրկը ընկի և նորանից սէր պահանջի... Օ՛հ, այդ պարզ է... Ել ի՞նչպէս կարող է նա ապրել այդ ամենից յետոյ... Ո՛վ դու անտեսանելի, բայց ամենատես Աստուած, ա՛ռ նորան և օրհնի՛ր, իսկ ես... ես... ո՛չ, ես չեմ ներում... (Լսվում են երաժշտութեան ձայներ, Արքանինը փոքր ժամանակ ման է զալիս յետ ու լուռ և լեռնալարձ կանգնում): Մօտ տասը տարի սորանից առաջ, երբ ես դեռ առաջին անգամ ոտք դրի այն մոլի ու անբարոյական կեանքը, մի գիշերուայ մէջ, ինչ ունէի ու չունէի, ամենը տանուլ տուի: Այդ պէն ժամանակն էր, երբ ես արդէն սովորել էի գնահատել միմիայն ոսկու, բայց ոչ կեանքի արժէքը, ես յուսահատութեան մէջ էի: Մի ակնթարթում անելիքս վճռեցի: Թողեցի խաղը, գնացի փոքր ինչ թղթի առայ և նորից վերադարձայ թղթախաղի սեղանի մօտ: Կեանքիս մէջ արիւնը, կատաղած քամու նման՝ շարունակ շառաչում էր. մի ձեռքիս մէջ բռնել

էի լիմօնադի բաժակը խառն թղթով, իսկ միւսում՝ տանձիկի չորսանոցը: Գրպանումս գտնուած միակ և վերջին ուրբին՝ այդ անգին փողու հետ միասին անհամբեր սպասում էր ճակատագրիս վճռին: Ծշմարիտ՝ թէ և մեծ ընկեր էր, բայց էլ ուրիշ ի՞նչ էր մնում ինձ անել: Ահա՛, այդ թշուառ և ողորմելի վիճակի մէջ, նայեմ տեսնեմ, բախտը ժպտեց երեսիս և մի ժամուայ մէջ բոլոր տանուլ տուածս կրկին յետ տարայ: Դաժան կեանքիս դառն ալէկոծութեանց մէջ՝ անգամ, ես այդ թղթը, իբրեւ մի հրաշալի և խորհրդաւոր թաղիման, շարունակ կուրծքիս վերայ սեղմած՝ ամուր պահել եմ՝ սեփօրուայ համար և ահա՛, այդ օրը այնքան հեռու չէ: (Իո՛րս է փազում տրագ քայլերով):

ՏԵՍԻՒ, ԵՐՐՈՐԴ.

Արրենինի վերջին խօսքերի ժամանակ ներս են մտնում տանտիկներ, Նինօն և ուրիշ մի քանի տիկնայք ու մարդիկ:

ՏԱՆՏԻԿԻՆ.

Վատ չէր լինիլ, եթէ փոքր ինչ հանգստանայինք:

ՏԻԿԻՆՆԵՐԻՑ ԱՆԿԸ մի. փն.

Այստեղ այնքան տաք է, որ քիչ է մնում հալուում:

ՊԵՏԿՈՎ.

Յոյս ուիմ, որ Նաստատիա Պաւլովնան մեզ մի փոքր կը զուարճացնէ իւր քաղցր երգով:

ՆԻՆՕ.

Ես ուրախութեամբ կը համաձայնէի, բայց դժբախտաբար նոր բոմանսներ չեմ խմանում, իսկ հները այնքան անգամ եմ երգել, որ կրկնելու էլ ախորժակ չունիմ:

ՏԻԿԻՆՆԵՐԻՑ ԱՆԿԸ.

Ծշմարիտ են ասում, Նինօ, արի՛ մի բան երգիր:

ՏԱՆՏԻԿԻՆ.

Գիտեմ, դու այնքան բարի կը գտնուես, Նինօ, որ ընդհանուրիս խնդիրքը չես մերժիլ և չես ուզենալ, որ ժամերով խնդրենք:

ՆԻՆՕ, նստելով դաշնամուրի մօտ.

Շատ բարի, ես կատարում եմ ձեր խնդիրքը, բայց և մի և նոյն ժամանակ հրամայում եմ, որ ուշադրութեամբ լսէք:

Գուցէ այդ տեսակ պատժով ես կարողանամ փոքր ինչ ուղղել
ձեզ: (Սկսում է երգել:)

Երբ որ վիշտը քո աչքերում
Դառն արցունք է ցոլացնում,
Ինձ դժուար չէ հեշտ գուշակել,
Որ դու նորան դեռ չես սիրել:

Կրժում է արդէն անզգայաբար
Կեանքը կուսի՞ր քո անպաշտպան,
Բայց ուրախ եմ ես, որ նա քեզ
Կարող չէ սիրել, որչափ ես:

Իսկ եթէ բախտը պատահաբար
Շողաց աչերիդ ճաճանչներում,
Կրտանջուեմ գաղտուկ ու չարաչար
Եւ ամբողջ դժուրն է իմ կրժքում:

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ.

ԱՌԱՋԻՆՆԵՐ ԵՒ ԱՐԲԵՆԻՆ.

(Երրորդ տունը վերջացնելուց յետոյ Արքենինը մօտենում է
դաշնամուրին և արմունկով նորա վերայ լսնվում է: Նինոն նկատում
է ամուսնուն և դադարեցնում է երգը:)

ԱՐԲԵՆԻՆ.

Շարունակեցէ՛ք, շարունակեցէ՛ք, ինչո՞ւ էք լռում:

ՆԻՆՕ.

Վերջին տողերը միանգամայն մոռացել եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Եթէ կամենաք, ես կարող եմ յիշեցնել:

ՆԻՆՕ. շփոթուած.

Ո՛չ, ի՞նչ կարիք կայ (Առանձին տանտիկնոջը:) Ես սաստիկ
վատառողջ եմ զգում ինձ: (Բարձրանում է տեղից:)

ՀԻՒՐԵՐԻՑ ՄԷԿԸ միւսին.

Ամենայն մի սիրահարական երգի մէջ այնպիսի կտորներ
կան, որոնց կանայք ընդհանրապէս դժուարանում են արտա-
սանել:

2-Դ ՀԻՒՐ.

Դորան աւելացրու և այն, որ մեր մայրենի լեզուն դեռ այնքան կոպիտ ու անմշակ է, որ մինչև օրս էլ չի կարողանում յարմարուել կանանց քմահաճութեան:

3-Դ ՀԻՒՐ.

Շատ ճշմարիտ է, ք դատում: Իրաւ որ մեր գոռոզ բարբառը, կարծես, ազատութեան սովորած մի վայրենի լինի, չի ուզում միանգամայն խոնարհել իւր գլուխը և հպատակուել: Բայց դա այնքան էլ մեծ կորուստ չէ, որովհետև դորա փոխարէն մենք ենք մէջքից ծալվում և գլուխներս խոնարհում: (Հիւրերին այս միջոցին սկսում են մեծարել պաղպաղակով: Շատերը անցնում են դահլիճի միւս ծայրը և այնտեղից մէկ մէկ հեռանում միւս սենեակը. վերջը բեմի վերայ մնում են միայնակ Նինօն և Արբենինը: Հէնց այդ ժամանակ բեմի խորքում երևում է անյայտ անձնաւորութիւնը՝ իւր ամբողջ մարմնով:)

ՆԻՆՕ. տանտիկնոջը.

Այնտեղ ես չափազանց շոգում եմ, թղլ տուէք, որ ես այստեղ մի անկիւնում փոքր ինչ հանգստանամ: (Դէպի ամուսինը:) Խնդրում եմ, հոգիս, փոքր ինչ ինձ համար բերես այն պաղպաղակից: (Արբենինը ցնցահարվում է այդ խօսքերից և յետոյ գնում կնոջ խնդիրքը կատարելու: Վերադառնալու ժամանակ, պաղպաղակի մէջ, Նինօյից ծածուկ թափում է թղին փոշին:)

ԱՐԲԵՆԻՆ, առանձն.

Ո՛րտեղ ես մահ, ահա՛, այժմ՝ օգնիր ինձ:

ՆԻՆՕ, ամուսնուն.

Մի տարօրինակ տխրութիւն և վիշտ է տիրել ինձ, երեւի, վտանգ է սպառնում:

ԱՐԲԵՆԻՆ, առանձին.

Երբեմն ես հաւատում եմ նախադասցմունքներին: (Ընծեռնելով պաղպաղակը:) Ահա՛, վերցրու, տխրութեան միակ սփոփիչը, և օգնականը սա է:

ՆԻՆՕ.

Ճշմարիտ ես ասում. այս բանը կարող է փոքր ինչ զո-վացնել ինձ: (Ուտում է:)

ԱՐԲԵՆԻՆ.

Ի հարկէ՛, ի՞նչպէս կարող է չզովացնել:

ՆԻՆՕ.

Սաստիկ տխուր է անցնում այսօր այստեղ ժամանակը:

ԱՐԲԵՆԻՆ.

Դա շատ բնական է և, զարմանալու էլ կարիք չկայ: Նս
զոնէ այսքանս կ'ասեմ, թէ նա, ով որ չի ուզում տիրել մարդկանց
չըզանում, առաջուց պէտք է սովորեցնէ իրեն միանգամայն ան-
տարբեր գտնուել դէպի այն ամեն նենդութիւնները և յիմարու-
թիւնները, որոնք տեղի են ունենում դոցա կողմից հասարակու-
թեան առաջ: Ահա՛ այն բոլորը, որի վերայ և պտտվում է աշ-
խարհքը:

ՆԻՆՕ.

Ուղիղ որ պղպէս է. ի՞նչ սարսափելի...

ԱՐԲԵՆԻՆ.

Ժշմարիտ է, սարսափելի՛ է...

ՆԻՆՕ.

Այժմ շատ դժուար է գտնել անարատ հոգի:

ԱՐԲԵՆԻՆ.

Ծիշտ է, չկայ: Նս ինքս մի ժամանակ կարծում էի, թէ
այդպիսի մի անարատ հոգի եմ գտել, բայց դժբախտաբար չա-
րաչար սխալուեցայ դորանում:

ՆԻՆՕ.

Ի՞նչ ես ասում:

ԱՐԲԵՆԻՆ.

Նս ասում եմ, որ ամբողջ աշխարհքի մէջ, այդ անարատ
հոգին միմիայն քո մէջ գտայ:

ՆԻՆՕ.

Ինչո՞ւ այդքան դունատուած ես այսօր:

ԱՐԲԵՆԻՆ.

Շատ եմ պարել, երեի, դորանից է:

ՆԻՆՕ . . .

Ուշքի եկ, սիրելիս, ինչե՞ր ես խօսում: Դու նստած տեղեցի ամբողջ գիշերը չես շարժուել, ուրեմն ի՞նչպէս կարող էիր պարել:

ԱՐԲԵՆԻՆ.

Ուրեմն նորանից է, որ քիչ եմ պարել...

ՆԻՆՕ, յետ դարձնելով պաղպաղակի դատարկ ափսէն:

Վերցրու, դիր սեղանի վերայ:

ԱՐԲԵՆԻՆ, վերցնելով.

Մի՞թէ բոլորն է կերել, մի՞թէ ինձ համար ոչինչ չի թողել... Այն անգութ կին, (Մտածողութեանց մէջ:) Ահարկու քայլը արդէն արած վերջացրած է և յետ դառնալու ոչ մի հնար չկայ. թող գոնէ ուրիշ որ և է մէկը զո՛հ չգնայ՝ սորա պատճառով: (Խփում է գետնին ափսէն և փշրում:)

ՆԻՆՕ.

Ախ, որքան անզգոյշ մարդ ես եղել դու:

ԱՐԲԵՆԻՆ.

Դատարկ բան է, շարժէ սորա համար խօսել. Բայց ահա՛, կարծես, հիւանդութեան նշաններ են երևում ինձ վերայ, վատ եմ զգում ինձ. եթէ կարող ես, արի տուն դառնանք:

ՆԻՆՕ.

Ես պատրաստ եմ, գնանք. Այդպէս ուրեմն, դու չես ուզում ինձ յայտնել քո այս օրուայ մոայլութեան պատճառը. Երևի, ինձանից անբուական ես, հա՛:

ԱՐԲԵՆԻՆ.

Ընդհակառակը, ես այսօր չափազանց գո՛հ եմ քեզանից, չափազանց. (Գնում են:)

ԱՆՅԱՅՏ, մնալով միայնակ.

Քիչ էր մնում, որ խղճահարուէի. մի ժամանակ արդէն վճռել էի առաջ վազել և... (Սկսում է մտածել:) Ո՛չ, թող կատարուի ճակատագրի վճիռը: Իսկ յետոյ և իմ հերթը կըգայ գործելու: (Գնում է:)

Պ Ա Տ Կ Ե Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ .

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

Բեմը ներկայացնում է Արքենինի ննջարանը: Ներս է մտնում Նինոն,
խսկ նորա լետեից պղախինը:

ԱՂԱԽԻՆ.

Ինչո՞ւ այդքան դունատուած էք, տի՛րուհի:

ՆԻՆՕ.

(Հանելով ականջի օղերը:) Ես հիւանդ եմ:

ԱՂԱԽԻՆ.

Յոգնել էք, երևի, նորանից է:

ՆԻՆՕ.

(Առանձնն:) Ձգիտեմ ինչու, բայց ամուսինս ինձ երկիւղ է պատճառում. շարունակ լուռ է և մի տեսակ տարօրինակ հայեացք ունի. Այժմ ասա՛ տեսնեմ, այսօր ի՞նչպէս էի հագնուած, շորերս սաղում էին ինձ, թէ ոչ: (Մօտենում է հայելուն:) Դու ճշմարիտ ես ասում, իրա՛ւ, որ գունատուած եմ, իսկ և իսկ մեռելի գոյն եմ ստացել: Բայց ի՞նչ զարմանալու բան կայ, Պետերբուրգում ո՞վ չէ գունատուած: Միմիայն ձեր իշխանուհին է բացառութիւն կազմում, այն էլ գոյների շնորհիւ Օ՛, չափազանց խորդախացել են մարդիկ: (Վերցնում է գլխից կեղծ մազերը և յետոյ ծամը փաթաթում:) Ա՛ռ, գցիր մի կողմ և տո՛ւր ինձ ծածկոցս: (Նստում է բազկաթոռի մէջ:) Ի՛նչ գեղեցիկ պար է այս նոր վալսը. Յափշտակուած միանգամայն, երբ արագօրէն պտոյտներ ես կատարում, այդ ժամանակ, ի՛նչ, ի՛նչ հրաշալի ձգտումներ են ծնվում մարդու մոքում և ի՛նչ ուժգնութեամբ են դռքա մղում, տանում դէպի հեռուն. Նոյն իսկ սիրտդ այդ միջոցին այնքան արագ է բաբախում, այնպէս է սեղմվում ու լայնանում, որ չգիտես, ուրախութեան վերագրես, թէ տրտմութեան: Սա՛շա, կարդալու ինձ մի գիրք տուր: Այն իշխանն էլ հոգիհաւատից հանեց ինձ էլի. մի կողմից էլ խղճում եմ այդ անմիտ պատանուն, ինչե՛ր էր դուրս տալիս նա այնտեղ... չարագործ... պատժել... Կովկաս... վտանգ է... Ա՛յ ցնորք:

ԱՂԱԽԻՆ.

Կըհրամայէ՞ք ժողովեմ (ցոյց տալով հազուստի վերայ:)

ՆԻՆՕ.

Հարկաւոր չէ, թող մնայ. (Սկսում է մտածել և այդ միջոցին դռան մէջ երևում է Արբենինը:)

ԱՂԱԽԻՆ.

Կը հրամայէ՞ք գնամ:

ԱՐԲԵՆԻՆ.

(Ծանր ձայնով դէպի աղախինը) Գնա՛. (Աղախինը չի հեռանում:)
Ասացի՛, որ հեռացիր. (Աղախինը հեռանում է և ինքն էլ նորա լուսնից դուռը փակում է կոխալէքով:)

ՏԵՍԻԼ, ԵՐԿՐՈՐԴ.

ԱՐԲԵՆԻՆ ԵՒ ՆԻՆՕ.

ԱՐԲԵՆԻՆ.

Կարծեմ, աղախինը քեզ այլ ևս հարկաւոր չէ:

ՆԻՆՕ.

Ա՛խ, դու այստեղ ես.

ԱՐԲԵՆԻՆ.

Այո՛, այստեղ եմ:

ՆԻՆՕ.

Ինձ թւում է, որ ես հիւանդ եմ. գլուխս կրակի նման այրվում է. Մօտ ե՛կ, տո՛ւր ինձ ձեռքդ, զգո՛ւմ ես, թէ ի՞նչպէս է նա այրվում ամբողջապէս. Միանգամայն ի դուր կերպ ես այնտեղ պաղպաղակ. Շատ հաւանական է, որ այդ ժամանակ ես մրսած լինիմ, այնպէս չէ:

ԱՐԲԵՆԻՆ.

(Միանգամայն ցրուած մտքով:) Պաղպաղա՛կ, այո՛....

ՆԻՆՕ.

Ես մէկ կ'ուզենայի իմանալ, սիրելիս, թէ այս վերջին ժամանակները քեզ ի՞նչ է պատահել. Թէպէտեւ վաղուց է, ինչ նկատում եմ՝ քո մէջ այդ փոփոխութիւնը, բայց չէի ուզում նկատել, յոյս ունենալով, որ կ'անցնի. էլ ես չեմ լսում քեզանից առաջուայ փաղաքշական խօսքերը. ձայնդ շարունակ ընդհատվում և դողում է խօսելու ժամանակ, իսկ երբեմն էլ հայ-

հացքդ այնքան սառն է, որ քիչ է մնում սպանէ ինձ: Ես հասկանում եմ, այդ բոլորի պատճառը այն գիմակահանդէսն է, բայց մի՞թէ կարելի է այդքան մեծ նշանակութիւն տալ մի չնչին ու դատարկ բանի: Օ՜հ, թող կորչեն այսուհետեւ այդ հանդէսները. այնքան եմ զզուել դոցանից, որ էլ չեմ կարող ասել: Ո՛չ, դու այսուհետեւ ինձ երբէք չես սևանիլ այդ տեղերում...

ԱՐԲԵՆԻՆ.

(Առանձին:) Ինչո՞ւ պէտք է զարմանամ, քանի որ այսուհետեւ էլ երբէք կարիք չես ունենալու դոցա մէջ:

ՆԻՆՕ.

Ահա՛ թէ ինչ է նշանակում գէթ մի անգամ անդգոյշ շարժուել:

ԱՐԲԵՆԻՆ.

Անգագոյշ, հա՛: Տըմ...

ՆԻՆՕ.

Բոլորը հէնց գորանից գոյացաւ:

ԱՐԲԵՆԻՆ.

Առաջուց պէտք է մտածէիր արածիդ ու նորա հետեւանքի մասին:

ՆԻՆՕ.

Շատ ուղիղ ես ասում: Ճշմարիտ, եթէ ես առաջուց ծանօթ լինէի քո բնաւորութեան, այն ժամանակ հաստատ կարելի է ասել, որ երբէք չէի լինիլ քո կինը: Մէկ ասա՛, ինչդրեմ, մի՞թէ սա ուրախ կեանք է, և մի առանձին բախտաւորութիւն է, երբ շարունակ պէտք է քեզ չարչարեմ և ինքս տանջուեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի դէպ, ինչի՞դ է պէտք իմ սէրը:

ՆԻՆՕ.

Իսկ ո՞վ է քեզանից սէր պահանջում: Ես միմիայն այս եմ ասում, թէ մի՞թէ սա կեանք է, որ վարում ենք:

ԱՐԲԵՆԻՆ. մօտը նստելով.

Այո՛, այո՛. ի՞նչ բան է կեանքը. ո՛չինչ, դատարկ ժամա-վաճառութիւն, Գանի որ մեր մէջ արիւնը արագ-արագ պտոյտ-

ներ է կատարում, քանի որ նա եփ է գալիս, ամեն բան աշխարհքիս երեսին մեզ ուրախութիւն ու զուարճութիւն է պատճառում: Բայց ահա, անցնում են կրքերի ու ցանկութեանց տարիները, և մեր շուրջը ամեն ինչ աստիճանաբար միմեզում ու խաւարում է: Ի՞նչ բան է կեանքը, այդ երկխաներին զրպեցնող հանկուկների նման մի շարադայ է, որտեղ առաջին մասը, մարդու ծնունդն է, երկրորդը — միմեանց հետեւող սարսափելի հոգսերի և գաղտնի վէրքերի չարշարանքները, վերջինը մահն է, իսկ ամբողջը՝ խաբերայութիւն և ուրիշ ոչինչ:

ՆԻՆՕ. Գլխի տալով կուրծքի վերայ.

Այստեղ մի ինչ որ բան այրում, խորովում է ինձ:

ԱՐԲԵՆԻՆ. շարունակելով.

Այդ կ'անցնի, ո՛չինչ, լուր ու լսի: Ես ասացի, որ կեանքը թանկ արժէ, քանի որ գեղեցիկ է. բայց արդե՞ք, այդ երկար է տևում... Կեանքը այս դէպքում կարելի է նմանեցնել մի պարահանգէսի. երբ պտոյտներ ես կատարում, այն ժամանակ չափազանց ուրախ ես զգում քեզ և շուրջդ ամեն ինչ լուսաւոր ու պայծառ է... չէնց որ վերադարձար տուն և ջարդուած հագուստդ հանեցիր, ամեն ինչ մոռացվում է և միմայն հոգածութեան զգացմունքն է թարմ մնում: Շատ լաւ բան է, երբ մարդս կարողանում է դեռ մատաղ հասակի մէջ հրաժեշտ տալ իր կեանքին, այսինքն այն հասակում, երբ հոգին սովորութիւն դարձնելով, դեռ չէ իննամացել կեանքի անմիտ ու աննպատակ բովանդակութեան հետ: Օրինակ, մի՞թէ այս բախտաւորութիւն չէ, երբ մի ակնթարթում լուռում, սլանում ես այլ աշխարհ, երբ հոգիդ ձանձրացած չէ անցեալից, երբ մահուան հետ կուտելը դեռ այնքան դժուար ու ծանր չէ: Բայց այս ինչն՞ր եմ խօսում. մի՞թէ ճակատագիրը իւրաքանչիւրի համար այս տեսակ երջանկութիւն է տնօրինել:

ՆԻՆՕ.

Ո՛հ, ո՛չ, ո՛չ, ես դեռ ցանկութիւն ունիմ՝ ապրելու:

ԱՐԲԵՆԻՆ.

Ինչո՞ւ համար, ինչն՞դ է պէտք:

ՆԻՆՕ.

Եւգենիյ, մի՞թէ չես տեսնում, որ ես տանջվում եմ, որ ես հիւանդ եմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Բայց մի՞թէ ուրիշ քիչ չարչարանքներ կան, որոնք աւելի սարսափելի և աւելի ուժեղ են քո կրածից:

ՆԻՆՕ.

Ուղարկիր բժշկի յետևից.

ԱՐԲԵՆԻՆ.

Կեանքը մշտնջենական է, իսկ մահը բոլորական.

ՆԻՆՕ.

Բայց ես դեռ ուզում եմ ապրել.

ԱՐԲԵՆԻՆ.

Իսկ եթէ իմանայիր, թէ որքան մխիթարանքներ են սպասում այնտեղ նահատակներին:

ՆԻՆՕ.

(Երկիւղով:) Բայց ես աղաչում եմ շուտ, բժշկի յետևից ուղարկիր:

ԱՐԲԵՆԻՆ.

(Տեղից բարձրանալով և սառնութեամբ:) Չեմ ուղարկելու:

ՆԻՆՕ.

Ի հարկէ դու հանաք ես անում, բայց ի սէր Աստուծոյ, լսիր ինձ, դորա ժամանակը չէ: Շուտ մի բժիշկ հրաւիրիր, թէ չէ ես կըմեռնեմ:

ԱՐԲԵՆԻՆ.

Լա՛ւ, առանց բժշկի դուք չէք կարող մեռնել, ի՞նչ է:

ՆԻՆՕ.

Եւգենիյ, մի՞թէ կարելի է այդ աստիճան անգուժ լինել, չէ՞ որ ես քո կիներ եմ յիշվում:

ԱՐԲԵՆԻՆ.

Այդ ես վաղուց գիտեմ, իսկ եթէ ուրիշ բան ունես ասելու, էլ մի՛ ուշացրու, շուտ ասա:

ՆԻՆՕ.

Ո՛հ, ի սէր Աստուծոյ, խղճա՛ ինձ. բոցը ամենայն կատաղութեամբ փարածուել, այրում է կուրծքս. ես մեռնում եմ...

ԱՐԲԵՆԻՆ.

(Նայելով ժամացոյցի վերայ.) Այդքան շուտ, չէ՛, սուտ ես
խօսում, դեռ կէս ժամ մնում է:

ՆԻՆՕ.

Օ՛հ, այժմ ես տեսնում եմ, որ դու ինձ միանգայման չես
սիրում:

ԱՐԲԵՆԻՆ.

Իսկ ինչո՞ւ համար պէտք է քեզ սիրեմ: Մի՞թէ նորա հա-
մար, որ իմ կրած բոլոր դժոխային տանջանքների միակ պատ-
ճառը դու ես հանդիսացել: Տ՛րմ, ո՛չ, ո՛չ. ես ընդհակառակը
չափազանց ուրախանում եմ, երբ տեսնում եմ քո այդ դառը
չարչարանքները, ես մխիթարվում եմ դոցանով: Աստճե՛մ իմ,
Աստճե՛մ իմ: Եւ դո՛ւ, դո՛ւ դեռ համարձակվում ես սէր պա-
հանջել: Ասա՛, մի՞թէ ես քեզ քիչ էի սիրում, ասա՛, մի՞թէ
դու գնահատեցիր այդ սէրը: Ո՞վ էր նա, որ շարունակ ժպտում
էր քեզ, ո՞վ էր նա, որ շարունակ սիրով լի բորբոքուած աչ-
քերը քո վերայ էր դարձնում: Մի՞թէ այդ ես չէի, և ի՞նչ կղաւ
այդ ամենի վարձատրութիւնը. միմիայն խաբէբայութիւն և դա-
ւաճանութիւն: Ասա՛, մի՞թէ կարելի էր այդ կերպ վարուել ինձ
հետ, մի՞թէ ներելի է քեզ: Ինձ ծախել, հա՛, ի՞նչ և այն էլ
յիմարագլուխների միջի համբոյրի համար: Խօսի՛ր, մի՛ լռիր, ասա՛
տեսնեմ, մի՞թէ կարելի էր դաւաճանել նորան, որ քո հրամա-
նով պատրաստ էր հոգին անգամ աւանդել: Ի՞նչ դաւաճանել,
ի՞նչ խաբել և այդքան շուտ...

ՆԻՆՕ.

Ո՛հ, եթէ իմանայի ինքս իմ գործած յանցանքը, այն
ժամանակ...

ԱՐԲԵՆԻՆ.

Լռի՛ր, ապա թէ ոչ ես կըգժուեմ: Ա՛խ Աստուած, երբ
պէտք է վերջանայ այս ամենը:

ՆԻՆՕ.

Դու խաբուած ես, Եւգե՛նիւ, հաւատացնում եմ, որ խաբ-
ուած ես. երգվում եմ, որ ապարանջանը իշխանին ես չեմ
տուել, այլ ինքն է գտել պարահանդէսի մէջ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ուրեմն քո ասելով ես խաբուած եմ, հա՛, Ո՛չ, ո՛չ, բա-
ւական է: Ես սխալուել եմ հէնց նրանում... ես երեւակայում
էի, թէ կարող եմ լախտաւոր լինել, մտածում էի նորից սիրել
և հաւատալ... Բայց էլ ի՞նչ կարող եմ, երբ այդ էր իմ ճա-
կատադիրը, Այն, ինչ որ երեւակայում էի, հիւանդի ցնորքի նը-
ման պիտի արդէն անցել է: Գուցէ և կարողանայի այդ շնաշ-
խարհիկ մտքերը իրագործել մօքի առաջնորդութեամբ, գուցէ
կարողանայի կենդանացնել այն ամենը, ինչ որ առաջ սրտիս
մէջ աճել, ծաղկել էր, բայց դժու չուղեցիր, դժու... Օ՛, լսի՛ր,
կոծիր, արտասուք թափիր, բայց ի՞նչ, ի՞նչ բան է, Նի՛նօ, կա-
նանց արտասուք: ջուր և ուրիշ ոչինչ: Ես եմ լաց եղել, ար-
տասուք թափել, ես, այս իմ տղամարդ հասակով չարութիւնից,
կասկածից, տանջանքներից ու ամօթից: Այո՛, ես լաց եմ եղել,
բայց գիտե՛ս, թէ ինչ է նշանակում տղամարդու լացը: Օ՛, նա
մարդկային կերպարանք չէ կրում այդ ժամին, նա հրէշ է, նա
կատաղե գազան է, նորա ձեռքում արդէն պատրաստ է մահը,
նորա սիրտը աւելի ահարկու, աւելի սարսափելի է, քան ինքը
գիտիքը:

ՆԻՆՕ, արտասուքը աչքերին ընկնում է ծնկների վերայ և
ձեռքերը բարձրացնում է գէպի երկինք:

Ո՛վ երկնային Սրարիչ, Դո՛ւ եղիր իմ պաշտպանը, օգնիր
և պահպանի՛ր ինձ: Սա չէ լսում, բայց Դու բոլորը լսում ես,
Դու ամենը գիտես և Դու Սմենակարողդ միմիայն ինձ կ'արդա-
րացնես:

ԱՐԲԵՆԻՆ.

Լուի՛ր, գոնէ նորա առաջ սուտ մի խօսիր,

ՆԻՆՕ.

Ո՛չ, ես սուտ չեմ խօսում, ես սուտ աղաչանքներով երբէք
չեմ համարձակուել նորան տեղահան անել իւր սրբավայրից:
Նորան եմ յանձնում իմ տանջուած ու չարչարուած հոգին, նա
է իմ միակ պաշտպանը, բայց և թո՛ղ նա լինի քո դատաւորը:

ԱՐԲԵՆԻՆ, ձեռքերը խաչած և ծալած անց ու դարձ և անում:

Այժմ աղօթելու ժամանակ է, Նի՛նօ. մինչև մի քանի րո-
պէ դու պէտք է մեռնիս և քո այդ մահը գաղտնի կ'ըմնայ մարդ-
կանցից. մեզ դատողը միմիայն աստուածային դատաստանը կ'ըլինի:

ՆԻՆՕ.

Ի՞նչպէս, մե՞ռնել, այժմ, հէնց այս րոպէիս... Ո՛հ, ո՛հ, այդ անկարելի է:

ԱՐԲԵՆԻՆ.

Ես արդէն սկզբից գիտէի, որ այդ յուրը պէտք է շփոթեցնէ ձեզ:

ՆԻՆՕ.

Այո՛, այո՛, ուղիղ է ասում, կարծես մահը իւր ճանկերը արդէն մօտեցրել է ինձ... Սիրտս յափում է կրակը, ամբողջ դժոխքը...

ԱՐԲԵՆԻՆ.

Ես ճշմարիտ եմ ասում, դու պէտք է մեռնես, պարահանդիսում քեզ թունաւորել եմ:

ՆԻՆՕ, փոքր ինչ լուրաց յետոյ.

Ո՛հ այդ անկարելի է, ես չեմ հաւատում քեզ, (վազում, ընկնում է ամուսնու գիրկը): Դու ծիծաղում ես ինձ վերայ... գիտեմ, դու դահիճ չես, ո՛հ, քո սրտի մէջ դեռ պէտք է գտնուի բարութեան մի կայծ... քո կարողութիւնից վեր բան է ինձ կորստեան մատնել այն էլ այսպիսի մի ծաղիկ հասակում: Եւ գե՛նիյ, մի՛ շրջիր երեսդ, վե՛րջ տուր տանջանքներիս՝ ազատի՛ր ինձ, փարատի՛ր երկիւղս... այս կողմը նայիր... (նայում է ուղղակի ամուսնու աչքերին և յանկարծ յետ քաշվում): Ո՛հ, աչքերիդ մէջ ես միմիայն մահուան կերպարանք եմ տեսնում և ուրիշ ոչինչ: (Վայր է ընկնում ամուսնու վերայ և դէմքը ծածկում ձեռքերով: Ամուսինը մօտենում է և համբուրում:)

ԱՐԲԵՆԻՆ.

Այո՛, դու կըմեռնես և ես կըմնամ այստեղ անտէր, միայնակ... Կ'անցնեն տարիներ, ես ևս կըմեռնեմ և կրկին միայնակ կը լինեմ... Ո՛հ, ի՛նչ սարսափելի միտք է: Բայց դու մի՛ վախենա՛ր, քո առաջ կըբացուի մի նոր, գեղեցիկ աշխարհ և իրենք հրեշտակները քեզ կըբարձրացնեն դէպի իրենց օթեւանը: (Սկսում է ճեղքել): Այո՛, այո՛, ես քեզ սիրում եմ, սիրում եմ ի բոլոր սրտէ... Ես այժմ այն ամենը, ինչ որ եղել, կատարուել է, մոռացութեան եմ յանձնել. վրէժինդրութեան պէտք է որ մի

սահման լինի, ահա՛ այն սահմանը, Բաց աչքերդ, նայիր, տես թէ քո դահլիճը երեխայի նման ինչպիսի արտասուքներ է թափում քեզ համար... (Լուռ լինելով):

ՆԻՆՕ, աղափում է ձեռքիցը և յանկարծակի վեր թռչում:

Եկէ՛ք այստեղ, այս կողմը, եկէ՛ք, օգնութեան հասէք... մե՛նում եմ... թունաւորած եմ... Ձե՛ն լսում... Ա՛, հասկանում եմ... Դու զգոյշ ես... Ո՛չ դք չկայ... Ո՛չ մէկը չի գալիս... Յիշի՛ր, մարդասպան, որ երկնային դատաստան կայ և ես քեզ, չարագործ, անիծում եմ՝ ի բոլոր սրտէ (Վազում է դէպի դուռը, բայց դեռ նորան չհասած՝ ուշագնաց է լինում և վայր ընկնում):

ԱՐԲԵՆԻՆ.

(Դառն ծիծաղով:) Անէ՛ծք, ի՞նչ օգուտ դորանից, ես Աստուածանից եմ անիծուած: (Մօտենալով դէպի կինը:) Խեղճ արարած, երևում է, կրած պատիժը դժից վեր էր... (Վանգնում է մօտը, ձեռքերը դրած խաչածէ:) Եւ որքան գունատուած է այս խեղճ ողորմելին: (Ցնցվում է:) Բայց որքան խաղաղ, որքան հանգիստ է դէմքի ամենայն մի գծագրութիւնը. ոչ մէկի վերայ չի արտայայտվում ո՛չ խոստովանանք, ո՛չ խղճի տանջանք... Ի՞նչ է նշանակում այս:

ՆԻՆՕ.

(Թոյլ ձայնով:) Մնաս բարեաւ, Եւգենիյ, ես թէպէտև մեռնում եմ, բայց իմացիր, որ անմեղ եմ... Դու չափազանց անգութ վարուեցար...

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ, ո՛չ, այժմ արդէն աւելորդ է այդպէս խօսել. քեզ էլ ո՛չ մի սուտ, ո՛չ մի խորամանկութիւն չի կարող օգնել... Շուտ խոստովանուիր, որ խաբել ես, դաւաճանել ես՝ ինձ... Ինքը դժոխքը չէր կարող այդպիսի մի հանաք անել ինձ հետ, այդպէս անարգել և ոտի տակ տալ իմ սէրը, Լսո՛ւմ ես, հա՛, Օ՛, ճշմարիտ որ արժանի ես այդպիսի մի վրէժխնդրութեան... Ամեն բան վերջացած է, քեզ ոչինչ չի կարող օգնել, դու պիտի մեռնես... և մարդկանց համար գաղտնի կրմնայ, այդ կողմից հանգիստ եղիր...

.ՆԻՆՕ.

Այժմ ինձ համար ողջ մեկ է... Նորից կրկնում եմ, որ
ես անմեղ եմ Աստուծոյ առաջ: (Մոռնում է:)

ԱՐԲԵՆԻՆ, մօտենում է և իսկոյն երեսը դարձնում:

Սողո ես խօսում: (Վայր է ընկնում բազկաթոռի մէջ:)

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ.

ԱՐԲԵՆԻՆ, նստած բազմնցի մէջ, սեղանի մօտ.

Հոգեկան դառը տանջանքների մէջ, ինքս իմ դէմ շարու-
նակ կռուելուց, ես այժմ միանգամայն ուժասպառ եմ եղել...
Զգայարաններս էլ ի վերջոյ՝ կարծես մի ինչ որ ծանր և խա-
րուսիկ հանգստութիւն ճաշակեցին... Միմիայն երբեմն, այս սառը
քնի մէջ անսպասելի վիշտ և տխրութիւն է ծանրանում հոգուս
վերայ և այն վրդովում, յուզում երբեմն-երբեմն էլ սիրտս այն-
պէս է մարմաջում, որ կարծես թէ դարձեալ նոր պատուհաս է
նախազգում: Մի՞թէ դեռ ամենը չի վերջացել, մի՞թէ աշխարհ-
քիս երեսին դեռ էլի կան տանջանքներ, որոնց ես պէտք է ճա-
շակեմ: Ի՞նչո՞ւ խօսքեր են... Կ'անցնեն օրեր և դոցա կը յաջորդէ
ամեն բանի մոռացութիւն, իսկ տարիների ընթացքում՝ դոցա
ծանրութեան տակ կը մեռնի իսպառ նաև երևակայութիւնս: Չէ՞
որ պէտք է հանգստութիւնը նորից բնակութիւն հաստատէ այս
սրտի մէջ... (Սկսում է մտածել. լանկարծ բարձրացնում է գլուխը և
բացականջում է:) Ինչպէ՞ս, ես սխալուած եմ եղել... Ո՛չ, այդ
անողբքելի մի յիշողութիւն է... Դեռ մտքիցս չի անցել նորա
ցաւը, վիշտն ու աղաչանքները... Ո՛հ, այս ի՞նչ օձ է, որ շա-
րունակ կը ծում է սիրտս... Ո՛չ, ո՛չ, կորիք ինձանից, ազատ թող
ինձ... (Վայր է գցում գլուխը ձեռքերի վերայ:)

ՏԵՍԻԼ, ԵՐԿՐՈՐԴ.

ԿԱԶԱՐԻՆ, ցած ձայնով.

(Առանձին:) Արբենինը այստեղ է, շարունակ հոգւոց է հա-
նում և չափազանց տխուր է երևում: Տեսնենք, այժմ ինչպէս
պէտք է կատարէ իւր դերը այս կօմեդիայի մէջ: (Դէպի Արբենինը:)

Այս ի՞նչ դժբախտութիւն է պատահել քեզ, սիրելի բարեկամ: Հէնց իմացայ թէ չէ, իսկոյն շտապեցի գալ քեզ մօտ անձամբ իմ ցաւակցութիւնս յայտնելու: Է՛հ, ի՞նչ արած, Աստուծոյ կամքն է. ճակատագիրը այդպէս է տնօրինել, ո՞վ կարող է բողբել: Ամեն մի մարդու հետ՝ այդ կամ՝ դորա նման ճախորդութիւն միշտ կարող է պատահել, ուրեմն և պէտք չէ սրտնեղել (Լոկուդ լետոյ): Է՛, բաւական է, եղբայր, որքան լուրջ մնացիր, դէ՛ն ձգիր, ի սէր Աստուծոյ, երեսիդ զիմակը: Այդ տեսակ դիրքը վայել է քեզ միմիայն հասարակութեան մէջ, հանդիսատեսների ներկայութեամբ, բայց ո՛չ իմ առաջ, որովհետեւ ես էլ պակաս զերասան չեմ քեզանից: Մէկ ասա՛ տեսնեմ, բարեկամ... Բայց ինչո՞ւ պղքան գունատուած ես այսօր, հա՛, տեսողը կրկարծէ, թէ ամբողջ գիշերը լողթախաղի մէջ ես անցկացրել և շարունակ տանուլ տուել... Ի՛նչ պտուղ ես... Լա՛, թողնե՛ք այդ, յետոյ էլ կարող ենք խօսել դորա մասին... Ահաւասիկ, ազգականներդ գալիս են, երեւի ուզում են հանգուցեալին իրենց վերջին հրաժեշտը տալ: Դէ՛հ, մնաս բարեաւ մինչև վաղը. (Գնում է:)

ՏԵՍԻԼ, ԵՐՐՈՐԻ.

Ներսէս են մտնում ազգականները.

ՏԻԿԻՆ, եղբօր ազգականը.

Երևում է, հէնց Աստուածանից է անիծուած, որ այս տեսակ դժբախտութեան է հանդիպել. անպէտք ամուսին էր և ինքն էլ անպէտք ժառանգ... հա՛, ճանապարհին չմոռանաս յիշեցնել ինձ, խանութից սև կտոր վերցնել սուգի շորի համար: Թէպէտեւ այժմ՝ ոչ մի եկամուտի աղբիւր չունեմ, բայց ի՛նչ արած, պէտք է աւերուեմ՝ բարեկամներիս համար:

ԵՂԲՕՐ ԱՂՋԻԿ.

Ma tante, ի՛նչ է եղել մեր Նինոյի մահուան պատճառը,

ՏԻԿԻՆ.

Պատճառը, սիրելի աղջիկ պարոն, այդ մօգային հետեող անմիտ ու յիմար աշխարհքն է. սպասեցէ՛ք, դուք դեռ շատ փորձանքների պիտի հանդիպէք: (Գնում են:)

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ.

Հանգուցեալի սննեակից դուրս են գալիս բժիշկը և մի ծերունի.

ԾԵՐՈՒՆԻ.

Այս հանգուցեալը ձեր ներկայութեամբ վախճանուեցաւ.

ԲԺԻՇԿ.

Ո՛չ, ինձ չեն կարողացել իւր ժամանակին հասցնել. . .
Ես միշտ ասել եմ, որ պաղպաղէնիքը և պարահանդէսները մեր
գլխին փորձանք կր բերեն.

ԾԵՐՈՒՆԻ.

Մածկոցը բաւական թանգ կտորից է. իսկ զառնառուխտը
տե՞սաք, [Ժէ ոչ, Եղբօրս դագաղի վերայ, անցեալ գարնանը, իսկ
և իսկ այդ կտորից էր. (Գնում է):

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԲԺԻՇԿ, մտնեալով գէպի Արբենինը և բռնելով նորա ձեռքը.

Ձեզ փոքր ինչ հանգստութիւն է հարկաւոր.

ԱՐԲԵՆԻՆ, ցնցահարուելով.

Նըմ... (Առանձին:) Սիրտս մորմոքվում է.

ԲԺԻՇԿ.

Դուք այս գիշեր չափազանց անձնատուր էք եղել ցաւին,
այդ փնաս է ձեզ, քնեցէք մի փոքր.

ԱՐԲԵՆԻՆ.

Կ'աշխատեմ:

ԲԺԻՇԿ.

Եղած դժբաղդութեան այժմ էլ ոչ մի հնար չկայ օգնե-
լու, ֆնում է, որ այսուհետեւ դուք ինքներդ ձեզ պահպանէք.

ԱՐԲԵՆԻՆ.

Օ՛հ, այդ կողմից դուք կարող էք միանգամայն միամիտ լի-
նել, որովհետեւ ինձ ո՛չ մի ցաւ չի կարող փնասել. Քա՛նի, քա՛-
նի տանջանքներ չի կրել այս իմ սիրտը, բայց տեսէք, ես դար-
ձեալ կենդանի եմ... Դեռ անցեալներում ես շարունակ բաղդ
էի որոնում, և կարծէք Աստուած լսեց իմ խնդիրքը, հրեշտա-
կանման կերպարանքով այնպիսի մի էակ պարգեւեց ինձ, որի

ներկայութեամբ ինձ նման չարագործի շնչառութիւնից անգամ սրբապղծւում էր Աստուածութիւնը: Ահա, այժմ նայեցէ՛ք, տեսէ՛ք թէ ի՞նչ վիճակի մէջ է այդ հրաշալի արարածը. նա արդէն սառել, մեռել է: Կեանքիս մէջ մի անգամ, ապաւինելով բախտի յաջողութեան, կորստեան անդունդից փրկեցի այնպիսի մի մարդ, որի հետ առաջուց երբէք ծանօթ չէի և այն էլ այնպիսի վտանգից, որի հետ սերտ կապով կապուած էր նա և իմ պատիւս կորցնելու հարցը: Իսկ այդ մարդը, ինձ ոչ մի խօսք չասած, ծիծաղի և հանաքի մէջ խլեց ինձանից այն ամենը, ինչ որ ունէի ու չունէի: Խլեց այն, որի գոյութեամբ էր պայմանաւորուած միմիայն իմ կեանքն ու ապագան և այդ բոլորը նա կատարում է՝ իւր պատիւը ու կեանքը իմ ձեռքով փրկելուց մի ժամ յետոյ: (Գնում է:)

ԲԺԻՇԿ.

Անկասկած սորա հիւանդութիւնը շատ ծանր կերպարանք է ստացել, և ես այժմ հաւատում եմ, որ այդ մարդը իւր կեանքի մէջ անթիւ և անհամար տանջանքների է կրել: Այսպէս թէ այնպէս, եթէ խելագարուելու էլ լինի, ես կեանքի համար միանգամայն երաշխաւոր եմ: (Գնում է և այդ միջոցին պատահում է երկու անձնաւորութեանց:)

ՏԵՍԻՆ, ՎԵՑԵՐՈՐԴ.

Ներս է մտնում անյայտ անձնաւորութիւնը իշխանի հետ միասին:

ԱՆՅԱՅՏ.

Թող տուէ՛ք հարցնել ձեզանից, կարելի՞ է արդեօք տեսնել Արբենինին:

ԲԺԻՇԿ.

Ես, ճշմարիտն ասած, դժուարանում եմ ձեր հարցին պատասխան տալ, որովհետեւ նորա կինը հէնց երեկ է վախճանուել:

ԱՆՅԱՅՏ.

Շատ ախտոս:

ԲԺԻՇԿ.

Եւ ինքն էլ այն վշտացած է...

ԱՆՅԱՅՏ.

Ես հէնց իրեն համար էլ եմ ցաւում: Բայց նա տա՛նն է թէ ոչ:

ԲԺԻՇԿ.

Նա՞. այո՛, տանն է:

ԱՆՅԱՅՏ.

Մի չափազանց կարեւոր գործի համար ես անպատճառ պէտք է տեսնուեմ նորա հետ:

ԲԺԻՇԿ.

Դուք երեւի նորա բարեկամներինցն էք, պարոններ, այնպէս չէ:

ԱՆՅԱՅՏ.

Առ այժմ ո՛չ, բայց եկել ենք հէնց այդ նպատակով:

ԲԺԻՇԿ.

Ես կարեւոր եմ գտնում ձեզ յայտնել այն, որ Արքեանինը հիւանդ է և այն էլ վտանգաւոր կերպիւ:

ԻՇԽԱՆ, վախեցած.

Իսկ յիշողութի՞ւնը ինչպէս է, տեղն է թէ ոչ:

ԲԺԻՇԿ.

Ի հարկէ. նա դեռ խօսում է, երբեմն ման է գալիս և յոյս կայ...

ԻՇԽԱՆ.

Փա՛նք Աստուծոյ, (Բժիշկը հեռանում է:)

ՏԵՍԻՒ, ԵՕԹՆԵՐՈՐԴ.

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, այսօր վերջապէս ամեն ինչ կրվերջանայ:

ԱՆՅԱՅՏ.

Դուք սաստիկ կարմրել էք, ձեր դէմքը կրակի նման այրվում է: Ինչպէս էք զգում ձեզ, հաստատ էք ձեր վճռի վերայ թէ ոչ:

ԻՇԽԱՆ.

Իսկ դուք ի՞նչպէս, երաշխաւոր էք ձեր ասածների համար, հիմնաւոր էք համարում ձեր կասկածները:

ԱՆՅԱՅՏ.

Հսեցէ՛ք, խնդրեմ. կարծեմ, մեր երկուսիս նպատակն էլ մի է, մեր երկուսիս համար էլ միշտ մարդը որքան անտանելի, նոյնքան և հակակրելի է. բացի դորանից, դուք չէք իմանում, թէ ի՞նչ հոգի ունի այդ անձնաւորութիւնը. նա այնպէս մթին ու խորթն է, որքան և գերեզմանը իւր դռներով. ճէնց որ դժբաբացուեցան մի որ և է բանի համար, էլ այնուհետեւ նորանից ազատուելու յոյս չկայ. այն յաւիտեան կը թաղուի նորա մէջ. նա ոչ մի ապացոյց չի ընդունում իւր կասկածները փարատելու համար. ներելն ու խղճալը նորա համար չէ սահմանուած. Վիրաւորանք կրած միջոցներում, նորա միակ օրէնքը, այդ վրէժխնդրութիւնն է, նորա միակ նպատակը, հակառակորդից վրէժ առնելն է. Սյդպէս ուրեմն, այս ամենը իմանալուց յետոյ, կարծեմ դուք ևս այժմ հաւատացած կը լինիք միանգամայն, որ դորա կնոջ անակնկալ մահը առանց պատճառի չէ. Նա իմացել եմ, որ դուք նորա հետ անհաշտ թշնամի էք և ահա՛, պատրաստ եմ ամենայն կերպ իմ խոնարհ ծառայութիւններս ձեզ յայտնելու. եթէ, ո՞վ գիտէ, մենամարտութեան դուրս գաք, իմացէք, որ ես ի սրտէ կը ցանկանայի հանդիսատես լինել այդ պատկերին:

ԻՇԽԱՆ.

Բայց այդ ի՞նչպէս էք իմացել, թէ մի օր առաջ ես վիրաւորանք եմ կրել այդ մարդուց:

ԱՆՅԱՅՏ.

Ուրախութեամբ կը պատմէի ձեզ, բայց այդ աւելորդ եմ համարում, նամանաւանդ որ այժմ դորա մասին արդէն ամբողջ քաղաքն է խօսում:

ԻՇԽԱՆ.

Ո՛հ, ի՞նչ անտանելի յիշողութիւն է:

ԱՆՅԱՅՏ.

Երևում է, այդ յիշողութիւնը ձեզ չափազանց է տանջում, այնպէ՞ս չէ:

ԻՇԽԱՆ.

Օ՛հ, դուք չէք կարող երեակայել, թէ ինչ ասել է անպատուած լինել:

ԱՆՅԱԼՈՒՄ.

Ոչ, ես չեմ իմանում, բայց կեանքը ձեզ էլ կըսովորեցնէ պղծ և դորա նման դէպքերը մոռացութեան տալ:

ԻՇԽԱՆ.

Բայց ո՞վ էք դուք:

ԱՆՅԱԼՈՒՄ.

Ուղղում էք անունս իմանալ. բաւական է գիտենաք այսօր, որ ես համամիտ եմ ձեզ հետ՝ ձեր պատիւը վերականգնելու հարցում, որ մեծ եռանդով պիտի օգնեմ ձեզ ձեր պղծ գործում: սորանից աւելին պէտք չէ գիտենալ ձեզ, Բայց ահա, ոտի ձայն եմ լսում... ծանր ու դանդաղ քայլուածքով գալիս է մէկը, նա է, ճշմարիտ որ նա է: Խնդրեմ մի վայրկեան հեռանաք այստեղից, ես նորա հետ հաշիւներ ունեմ և չէի ուզենալ, որ դուք վկայ լինէիք այդ խօսակցութեան:

ՏԵՍԻՆՆՆՈՒՄ.

ԱՐԲԵՆԻՆ, ձեռքին բռնած ծրագր.

Մահ, մահ եմ տեսնում ամեն տեղ, ուր որ ոտք եմ դնում, միմիայն դորա պատկերն եմ տեսնում: Էլ ինձ հանգստութիւն չի տալիս. շարունակ նա ինձ ամեն տեղ հետեւում է և իւր դաժան ու սոսկալի կերպարանքով ժպտում երեսիս: Իմ սիրտս, իմ ուղեղս, քնած ու արթուն ժամանակ շարունակ դորանով է զբաղուած: Ահա, ամբողջ մի ժամ է, ինչ ես նայում եմ նորա անշարժ, լուռ ու մունջ դիակի վերայ և այդ ժամին այնպիսի մի անբացատրելի խռովութեամբ լցուեցաւ հոգիս, որ էլ չեմ կարող ասել, նորա դէմքի իւրաքանչիւր գծագրութեան վերայ խաղաղութիւն, հանգստութիւն և մանկական անհոգութիւն է արտայայտվում, իսկ այն ժպիտը, որ երեւեց նորա երեսի վերայ՝ յաւիտենականութեան դռները իւր առաջ բացուելու ժամանակ և որտեղ նորա հոգին կարգաց իւր ճակատագիրը, դեռ չէ անցել: Մի՞թէ ես սխալուել եմ, ո՞վ կըհաստատի ինձ ապացոյցներով նորա անտմութիւնը: Սո՛ւտ են ասում, սո՛ւտ են խօսում, ո՞րտեղ են դոցա փաստերը: Ի հարկէ որ չունին, բայց ես ունիմ: Երբ ես նորան չհաւատացի, այո՛ նորան, ապա էլ ո՞ւմը պէտք է հաւատամ: Սյո՛, թէպէտ և ես բուռն սիրով ոգևորուած մի ամուսին էի, բայց և միևնոյն ժամանակ,

անկողմնապահ ու միանգամայն սառը դատաւորի դեր կատարեցի,
 էլ ո՞վ կը համարձակուի այսուհետեւ ինձ հաւատացնել, որ ես
 սխալ վճիռ եմ կայացրել:

ԱՆՅԱՅՏ.

Ե՛ս կը համարձակուեմ և միմիայն ես:

ԱՐԲԵՆԻՆ, երկիւղեց փոքր ինչ յետ է գնում և յետոյ ծրագը
 մտայնում դէմքին.

Իսկ ո՞վ էք դուք:

ԱՆՅԱՅՏ.

Զարմանալի չէ, Եւգենիյ, եթէ դու չճանաչեցար ինձ, բայց
 մենք բարեկամ էինք մի ժամանակ:

ԱՐԲԵՆԻՆ.

Բայց և այնպէս ո՞վ էք դուք:

ԱՆՅԱՅՏ.

Ես քո բարի հրեշտակն եմ: Այո՛, քեզանից գաղտնի, ես
 քեզ հետ եմ եղել միշտ և ամեն տեղ, միշտ ուրիշ դէմքով,
 միշտ ուրիշ հագուստով: Իմացել եմ քո բոլոր գործերը, երբեմն
 դուշակել եմ մոքերդ և փոքր ժամանակ էլ սորանից առաջ
 նախազգուշացրել եմ քեզ զիմակահանդէսի մէջ:

ԱՐԲԵՆԻՆ, ցնցահարուելով.

Ես չե՛մ սիրում մարգարէների հետ գործ ունենալ, ուստի
 և խնդրում եմ ձեզ առանց որ և է հանաքի, որ դուք անմիջա-
 պէս հեռանաք այստեղից:

ԱՆՅԱՅՏ.

Այդ ես լսեցի և այժմ կ'ասեմ ձեզ այն, որ առանց փոքր
 անգամ ուշադրութեան առնելու ձեր ահարկու ձայնը և վճռո-
 ղական հրամանը, պիտի մնամ այստեղ: Այո՛, ես այժմ տեսնում
 եմ, որ դու չճանաչեցիր ինձ, Ես, Եւգենիյ, այն մարդկանցից չեմ,
 որոնք ընդունակ են րոպէական երկիւղից, վտանգից մոռացութեան
 տալ տարիներով փայփայած նպատակը: Ես իմ նպատակին ահա
 արդէն հասել եմ և հէնց այստեղ, այս իմ կանգնած տեղում,
 կը մեկնուեմ, կը մեռնեմ, բայց մի քայլ անգամ ոտս յետ չեմ դնիլ:

ԱՐԲԵՆԻՆ.

Ես ինքս էլ հէնց այդ բնաւորութեան տէր մի մարդ եմ:

բայց ես գորանով չիմ պարծենում (Նստում է): Ահա՛, այժմ կարող էք շարունակել, ես ձեզ լսում եմ:

ԱՆՅԱՅՏ, առանձին.

Մինչև այժմ իմ խօսքերը ոչ մի ազդեցութիւն չարին սորա վերայ, ի՞նչ է նշանակում այս: Մի՞թէ ես սխալուել եմ ինթադրութիւնների մէջ: Լաւ, վերջը տեսնենք: (Դէպի Արքեւինը): Սորանից եօթը տարի առաջ դու ինձ ճանաչում էիր, Արքեւին, ես այդ ժամանակ անխորձ, կրակոտ և հարուստ մի երիտասարդ էի, իսկ դու... այո՛, դեռ այդ ժամանակից՝ քո կրօնի մէջ արդէն թափնուած էր սառնութիւն և դժոխային արհամարհանք դէպի այն ամենը, ինչ որ քո շուրջը կատարվում, լինում էր և ինչով որ դու պարծենում էիր ամեն տեղ և ամեն ժամանակ: Զգիտեմ, այն խելքիդ վերադարձի՞մ թէ հանգամանքներին, չգիտեմ և չեմ էլ ուզում քննել քո հոգին. նորան միմիայն Աստուած կարող է հասկանալ...

ԱՐԲԵՆԻՆ.

Յառաջաբանը լաւ է:

ԱՆՅԱՅՏ.

Վատ չի լինիլ և վերջը: Մէկ անգամ դու ինձ խաբեբայութեամբ՝ քաջեցիր տարար քո տունը... ես չէի կարող մերժել, քանի որ քսակս լիքն էր փողով և բացի դորանից հաւատում էի նաև նորան, որ բախտաւոր աստղի տակ եմ ծնուել: Այդպէս եկայ և նստեցի քեզ հետ խաղալու: Ինչ ունէի ու չունէի, ամենը տանուլ տուի: Հայրս մի ժլատ և խստաբարոյ մարդ էր և ահա՛, դորա նախատիքներին չենթարկուելու համար, վճռեցի յետ տանել տանուլ տուածս: Դու էլ թէպէտ և ինձ նման մի երիտասարդ էիր, բայց ամուր էիր կպել ինձ քո ճանկերով և բաց չէիր թողնում: Դորա շնորհիւ ես մնացեալը ևս տանուլ տուի: Յուսահատութեանս չափ չկար: Գուցէ դու դեռ յիշելիս լինիս, թէ այդ ժամանակ որքան արտասուքներ թափեցի և ինչպիսի աղաչանքներով դիմեցի քեզ... բայց ո՛չինչ, դու միմիայն ծիծաղով պատասխանեցիր այդ ամենին: Ո՛հ, աւելի լաւ վարուած կը լինէիր, եթէ իսկոյն դաշտին խրէիր սիրտս, բայց չէ՛, դու այդ ժամանակ դեռ մարգարէական հայեացքով չէիր նայում ապագայի վերայ: Այն չար սերմը միմիայն ներկայումս է

լրեն արժանի պտուղը հասցրել: (Արքենինը ուզում է, ցատկիլ տեղից, բայց նորից մտածում և նստում է:) Այդ ժամանակից ես մոռացայ ամեն բան. թողեցի կանանց, թողեցի սերը, երիտասարդ տարիներին երջանկով թիւնը, քնքոյշ երեակայու թիւները և քաղցր գրգռումները. այդ օրից ես աշխարհի մէջ գտայ մի նոր աշխարհ, մի նոր տարօրինակ զգացմունքների աշխարհ, որ լի էր ինքնասէր հոգիներով, սառած զգացմունքների տէր մարդկանցով և գրաւիչ տանջանքներով: Ես տեսայ, որ երկրագնդի թագաւորը՝ այդ փողն է և նորա առաջ խոնարհեցի գլուխս: Անցան տարիներ և դորա հետ 'ի միասին կորաւ յաւիտեան հարստութիւնս և առողջութիւնս. բաղդի զօները այնուհետեւ իմ առաջ ընդ միշտ փակուեցան: Անցեալը դարձնելու ոչ մի ելք չկար, մնում էր հաշտուել ճակատագրին հետ և հլու հպարտութեամբ ընդունել նորա առաջարկած վերջին պայմանը: Տեսնում ես, թէ Բ'նչ կերպարանք եմ կրում ես այժմ, բայց մի թէ այս պատկերով եր'եցայ քեզ այն ժամանակ, մի թէ այն ժամանակ ես այսքան թշուառ ու ողորմելի վիճակի մէջ էի... Դու դողում ես, հա՞, ուրեմն հասկանում ես իմ ասածները, զիտես իմ նպատակը, այնպէս չէ: Ապա՛, կրկնիր մի անգամ ևս, որ չես ճանաչում ինձ:

ԱՐԲԵՆԻՆ.

Հեոո՛, հեոո՛ մնա ինձանից, ես քեզ ճանաչեցի, այո՛, այո՛, ճանաչեցի...

ԱՆՅԱՅՏ.

Հեոո՛. դնամ, հա՞, և դորանով ես ուզում դու ազատուել ինձանից, այնպէս չէ: Ո՛չ, դու էիր մի ժամանակ ինձ վերայ ծիծաղում, այժմ ծիծաղելու հերթը իմն է, այժմ ես եմ ուղում ուրախանալ և զուարճանալ: Քանի մի ժամանակ սրանից առաջ, ականջիս մի այնպիսի ձայն հասաւ, թէ դու պսակուել ես և բախտաւոր ու հարուստ անհատների շարքը գրուել: Այդ լուրը առայ թէ չէ, հոգիս դառնութեամբ լցուեցաւ և սիրտս բողբոջեց: Օրերով և ամիսներով ես շարունակ այս էի մտածում, թէ ինչո՞ւ պէտք է նա բաղդաւոր լինի, իսկ ես ո՛չ: Ահա՛ այդ միջոցներում մի զգալի ձայն իմ ներսից շարունակ այս էր կրկնում. «Գնա՛, գնա՛ և տակն ու վերայ արա նորա այդ կեանքը»: Ես սկսեցի հետեւել քեզ ամբողջ միջից, քեզանից աննկատելի կերպարանքով. ես միշտ և ամեն տեղ քայլ առ քայլ գալիս էի քո

յետեկից և քո բոլոր մտադրութիւնները ու ցանկութիւնները իմանում և հասկանում: Աշխատանքներս ապարդիւն չանցան և ցանկալի հետեանքը ունեցան: Բարեկամ, ես լսել եմ, և... և ուզում եմ մի ձշմարտութիւն յայտնել քեզ... (Երկարեցնելով ծայրը:) Լսիր, ասում են, որ դու ես սպանել քո կնոջը... (Արքենինը երկիւղով յետ է քաշվում. իշխանը մօտենում է նորան:)

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՞վ է սպանել, ե՞ս:--Օ՛հ, իշխան, այդ ի՞նչ ասացիր...

ԱՆՅԱՅՏ.

Ինչ որ պէտք էր ինձ, ես արդէն ասացի, մնացեալը սա կը վերջացնի:

ԱՐԲԵՆԻՆ, կատաղած.

Հա՛, ես այժմ հասկանում եմ. դուք խօսքը մէկ էք արել իմ դէմ... այնպէս չէ... Շատ բարի, շատ գեղեցիկ: Ե՛հ, էլ ո՞ւր էք ուշացնում, ինչո՞ւ չէք ձեր ուզածը կատարում... Ո՞վ կարող է ձեզ այստեղ խանգարել, ո՞վ կը համարձակուի ձեր ձեռքը բռնել: Եւ ո՞չ մէկը... Երևի մտածել էք, թէ դուք այստեղ մի՛-մի՛ թագաւորներ էք... որ ես կը հնազանդուեմ և այս բոլորէս կը չորեմ՝ ձեր ոտների առաջ... որ ձեր լոկ հայեացքից պիտի դողամ ու շփոթուեմ... որ ես յիմարների միջն եմ, որ երեսայ եմ և ձեր խօսքերի դէմ պատասխան չպիտի գտնեմ: Երևի կարծել էք, թէ ես այժմ յաղթուած եմ, թէ հանաքի տակ անպատուութիւն կրելուց յետոյ՝ յօժարակամ և անվրդով կը խոնարհեմ գլուխս ձեր հարուածների տակ: Լա՛, է. ուրեմն դուք իսպառ մոռացութեան էք տուել այն, որ իսկեքս դեռ դըլ-խիս է, որ դեռ ինձ հետ է իմ անցեալ տարիների փորձառութիւնը և իմ մարմնական զօժը: Ուրեմն դուք այսպէս էք մտածել, թէ կնոջ մահը խլել է նորանից բոլոր նորա նախկին արժանաւորութիւնները և էլ չի կարող հին ձևի վարուել մեզ հետ: Ամբողջի նենգ պապաճելուց ուրեմն ես ձեր կարծիքով այժմ այդքան ստորացել եմ, հա՞... ձշմարիտ, որ տեսարանը բաւական մտածածին է, բայց բանը նորանումն է, հետեանքն էք մոռացութեան տուել: Իսկ այս երեսան ի՞նչ է ուզում ինձանից... Մի՞թէ սա ևս ցանկութիւն ունի իմ դէմ մաքառել: Մի ապտակը բաւական չհամարեց, ո՛չ, ուզում է երկրորդն էլ

ստանալ, Ի՞նչ եմ կորցնում, իւր ժամանակին այդ էլ կըստանաս, սի՛րելիս: Մի՞թէ կեանքը ձեզ համար արդէն այդքան ձանձրալի է դարձել: Ասենք զարմանալու էլ չէ. Ի՞նչ արժէք կարող է ունենալ մի յիմարի, թափառաշըջիկ, անամօթ և իգամոյ մարդու կեանքը: Հանգիստ մնացէք, հանգիստ և մխիթարուեցէք. ձեր սպանելը թող իմ պարտքս լինի, իսկ մնացեալի հետ գործ չունէք: Դուք կըմեռնէք իմ ձեռքից, բայց կըմեռնէք անամօթ և լիրբ մարդու անունով:

ԻՇԽԱՆ.

Այդ մենք դեռ կըտեսնենք. է՛հ, էլ մի՛ ուշացրու...

ԱՐԲԵՆԻՆ.

Գնա՛նք, գնա՛նք:

ԻՇԽԱՆ.

Ահա՛, այժմ ճշմարիտ որ ես բախտաւոր եմ:

ԱՆՅԱՅՏ, կանգնեցնելով.

Այդ բոլորը շատ լաւ, բայց դուք մոռացել էք յայտնել՝ գորան այն, ինչ որ ամենակարեւորն է:

ԻՇԽԱՆ, կանգնեցնելով Արբենին.

Սպասեցէ՛ք: Նախ քան մենամարտութիւնը, դուք պարտաւոր էք իմանալ, որ ինձ շատ ի զուր էք մեղադրել, որ ձեր զօհը ոչ մի յանցանք չի գործել. եթէ այն ժամանակ դուք ինձ պնդան խայտառակ՝ կերպով չվիրաւորէիք, ապա ես պէտք է գործի բոլոր եղելութիւնը ամենայն մանրամասնութեամբ պատմէի ձեզ... Բայց այդ յետոյ, գնա՛նք, գնա՛նք:

ԱՐԲԵՆԻՆ.

Ի՞նչպէս, Ի՞նչպէս:

ԱՆՅԱՅՏ.

Քո կինը անմեղ է, դու նորա հետ չափազանց խիստ և անգութ վարուեցար...

ԱՐԲԵՆԻՆ, երկար ծիծաղելուց յետոյ.

Ինչպէս երեւում է, դուք պատրաստի դեռ շատ հանաքներ ունէք:

ԻՇԽԱՆ.

Ո՛չ, ո՛չ, երդվում եմ Ամենակարող Արարչով, թէ իմ

խօսքերը փոքր անգամ հանաքի կերպարանք չեն կրում: Ապարանջանը պատահամբ զտեղ է դքսուհին և յետոյ ինքը իւր ձեռքով ինձ յանձնել: Ես ինքս մնասմբ մոլորուած էի, բայց յետոյ ձեր կինը մերժեց իմ առաջարկած սէրը և դորանով փարատեց իմ բոլոր կասկածներն ու ենթադրութիւնները: Եթէ ես իմանայի, որ մի սխալից կարող է այսքան չարիքներ առաջանալ, այն ժամանակ ես երբէք չէի որոնիլ ոչ նորա հայեացքը, ոչ ժպիտը... Ահա, ձեր հասցէով ուղարկած այս նամակի մէջ դքսուհին ինքը իւր ձեռքով բացատրում է ձեզ բոլոր եղելութիւնը: Սուէք, շուտ կարգացէք, որովհետեւ ինձ համար այժմ բոլորէնք թանգ արժեն... (Արքենինը նայում է նամակի վերայ և յետոյ կարդում:)

ԱՆՅԱՅՏ, աչքերը բարձրացրած դէպի երկինք, կեղծաւորութեամբ.

Ինքը, Նախախնամութիւնը պատժում է չարագործին: Խեղճ կինը անմեղ տեղից կորաւ. ափսոս, չափ ափսոս. Բայց գուցէ լաւը այդ էր. այստեղ նորան միմիայն թշուառութիւն էր սպասում: Իսկ այնտեղ, բարձրում, նա միմիայն և փրկութիւն կը գտնէ: Ահ, ես տեսել եմ նորան, այո՛, տեսել եմ թէ նորա աչքերը որքան պարզ կերպիւ էին արտայայտում հողոյ ամբողջ մաքրութիւնը: Ո՞վ կարող էր մտածել, որ այդ հրաշալի, քնքոյշ ծաղիկը կարող է ջարդ ու փշուր լինել բոլորական փութորկից... Ել ինչո՞ւ ես պապանձուել, թշուառահան, փետրի մազերդ, կրծէ միսդ, լաց եղի՛ր, գոռա՛, աղաչի՛ր... Այդպիսի՛ էլ սարսափելի արարմունք:

ԱՐԲԵՆԻՆ, յարձակուելով նոյա վերայ.

Ես կընեղդեմ ձեզ, անողորմ դահիճներ: (Յանկարծ թուլանում է և վայր ընկնում բազկաթոռի մէջ:)

ԻՇԽԱՆ, կատաղութեամբ հրելով.

Ո՛չ, այժմ աւելորդ է զղջալ, որովհետեւ նա էլ ձեզ չի օգնիլ. մեր հաշիւները դեռ վերջացած չեն, ատրձանակները մեզ սպասում են... Լուել է, չի խօսում, ի՞նչ է նշանակում. գուցէ կորցրե՞լ է միտքը...

ԱՆՅԱՅՏ.

Կարող է պատահել...

ԻՇԽԱՆ.

Այս դուք խանգարեցիք ինձ, գիտէ՞ք:

ԱՆՅԱՅՏ.

Մենք առանձին-առանձին ճանապարհներով ենք զիմում մեր նպատակին: Ես իմ վէժը առայ, վերջացրի, իսկ ձեզ համար կարծեմ ուշ է:

ԱՐԲԵՆԻՆ, բարձրանալով և վայրենի հայեացքով.

Ո՛հ, այդ ի՞նչ ասացիք դուք... Այժմ ես այլ ևս ո՛չ դժ ունիմ, ո՛չ կարողութիւն... Ես այնպէս էի անպատուած, ես այնքան հաւատացած էի... Աստուծո՛ւ իմ, Աստուծո՛ւ իմ, ների՛ր ինձ... Ո՛ւմը, ի՞նձ ներել... (Սկսում է բարձր ձիծաղել:) Իսկ նորա արտասուքները, գանգատները, աղաչանքները, իսկ նա կլնե՛րէ: (Ձորում է առաջները:) Ահա՛, տեսէ՛ք, ձեր առաջ ծնկաչոք ընկած աղաչում եմ, որ դուք հաստատէ՛ք իմ կասկածներս. ասացէ՛ք, մի՞թէ ճշմարիտ չէ, որ նա ինձ խորամանկութեամբ խաբել, դաւաճանել է... Ես պահանջում եմ, ես հրամայում եմ, որ դուք այս րոպէիս նորան դատապարտէ՛ք: Նա ամենք է. մի՞թէ դուք այստեղ էք եղել, մի՞թէ դուք թափանցել էք հոգուս խորքը: Ինչպէս որ ես եմ՝ այժմ ձեզ խնդրում, ուղիղ այս կերպ նա էր ինձ աղաչում՝ այն ժամանակ... Սխալմա՛նք է... ո՞վ, ես եմ սխալուել... Է՛հ, ի՞նչ արած. նոյնը նա էր ինձ ասում, բայց ես նորան պատասխանեցի, որ սուտ է խօսում... (Գետնից բարձրանալով:) Այո՛, ես այդ ասացի նորան: (Լռութիւն:) Ահա՛, լսեցէ՛ք թէ ինչ պէտք է յայտնեմ ձեզ. նորա դահիճը ես չեմ, (Թափանցող հայեացք է գցում անյայտի վերայ.) ո՛չ, այլ ահա՛, սա է: Դէ՛հ, չո՛ւտ խոստովանուիր, համարձակ խօսիր, գոնէ իմ ներկայութեամբ մերկացրու հոգիդ: Ա՛խ, սիրելի բարեկամ, ինչո՞ւ այդքան խստասիրտ գտնուեցար, չէ՞ որ ես նորան սիրում էի, չէ՞ որ ես նորա մի արտասուքը անգամ, եթէ կարողանայի, չէի զիջել, ո՛չ երկնքին և ոչ դրախտին: Բայց ես քեզ ներում եմ: (Վազում, ընկնում է անյայտի կուրծքի վերայ և լաց լինում:)

ԱՆՅԱՅՏ, յետ մղելով կոպտութեամբ.

Ուշքի ե՛կ, ո՛ւշքի. ժողովիր խելք ու միտք... (Իշխանին.) Դո՛ւրս հանենք նորան այստեղից, թաքտ օդի մէջ կարելի է փոքր ինչ զգաստանայ... (Բռնելով նորա ձեռքից.) Արբե՛նին:

ԱՐԲԵՆԻՆ.

Ո՛չ, մենք այլ ևս չենք տեսնուիլ յաբիտեան... Մ'նաս բարեաւ... Գնա՛նք... գնա՛նք... Ա՛յս կողմը... այս կողմը... (Ազատուելով բռնողի ձեռքից, վազում, մտնում է այն սենեակը, որտեղ դրուած է Նինայի դագաղը:)

ԻՇԽԱՆ.

Կանգնեցրէ՛ք...

ԱՆՅԱՅՏ.

Եւ այն գոռող միտքը այսօր այսպէս թուլացել, վճատել է.

ԱՐԲԵՆԻՆ, վերադառնալով և վայրենի հեկեկանքներով.

Նայեցէ՛ք այս կողմը, նայեցէ՛ք... (Վազելով բեմի մէջ տեղը:)

Զէ՛ որ ասացի քեզ, որ չու չափազանց խտտաիրտ ես գտնուել: (Վայր է ընկնում յատակի վերայ և ձգած ոտներով ու անշարժ հայեցքով նստում: Անյայտը և իշխանը մնում են մօտը կանգնած:)


ԱՆՅԱՅՏ.

Այսպիսի մի վրէժխնդրութեան ես վաղուց էի ձգտում և ահա՛, այսօր, կարծէք, ես իմ նպատակին հասայ միանգամայն:

ԻՇԽԱՆ.

Սա ցնորուել է և երջանիկ է, բայց ես յաբիտեան զրոկ-ված եմ խաղաղ կեանքից և մարդկային պատուից:

Յ. ԶԱՆՈՒՄԵԱՆՅ.



I.

ՄԵՆԵ ԿԸՌԻՈՒՄ ԵՆՔ.

(Նուէր նոր տարուան առթիւ իմ բոլոր ընկերներին.)

Թողնէք, ընկեր, մեր անձնական
Անվերջ, մանրոջ հաշիւներ.
Նորա չունին չափ ու սահման,
Ինչպէս այս մութ ալիքներ.
Մենք ժամանակ չունինք, ընկեր,
Ներքին կըռուով պարապել.
Նայիր, չարը իր սեւ թւեր
Որքան լայն է սրվորներ.
Զվատնէք, ուրեմն, մեր դժբերդ,
Նախատելով, զո՛ւր, իրար...
Մեզ գոչում է գաղափարը—
հաշտուէք միայն նրա համար.
Ես չեմ ուզում քեզինից ինձ սէր.
Սիրիր միայն գաղափարն...
Դու քո հոգւոյդ բոլոր դժեր
Զէ ո՞ր նորան խոստացար:

Մինչդեռ երկմիտ, այնտեղ ափին,
Կըտատանէինք իջնել ծով...
— «Զոհէնք մեր կեանքն իդէալին»—
Դու ասացիր անվրդով.
Այժմ ինչո՞ւ վտանգի դիմում
Նեղսրբտում ես, խըռովում...
Ասա՛, ինչո՞ւ մեղանշում ես—
Անձնականը մէջ բերում...

Ի սէր Աստծոյ, լըռի՛ր, ընկեր—
 Յանու՛ն «նորա» հաշտութիւնք...
 Արա՛ թէ չէ կ'հասնի գիշեր—
 Վա՛յ թէ ճամբուց շեղուեցինք,
 Ձեռք տանք իրար, թիավարենք,
 'Իեռ չենք անցել կէս-ճամբան,
 Փոթորիկը մօտ է... երնե՛նք
 Մենք անվեհեր յանգիման:
 Թող մեր սրբտերն չըվըհատին—
 Թէպէտ քիչ ենք մենք թրուով—
 Վարենք նաւը ի միասին—
 Հաշտ, ներդաշնակ ջանքերով...

* * *

Ամբողջ ծովը կենդանացած
 Մեզ ուզում է կըլանել,
 Ալիքները սարեր դարձած
 Մեզ ծաղրում են անարգել,
 Նոքա, բարձր գոգոռալով,
 Կարծես, կ'ասեն միմիանց.

—«Նայի՛ր, արա՛, անյաղթ մայր-ծով,
 «Ողորմելի այս մարդկանց.
 «Երկու հոգով—փոքրիկ «տաշտում»
 «Խիզախում են ճամբորդել...
 «Անմիտները չեն հասկանում,
 «Ինչ ե՛ն հրակայ ալիքներու
 «Բայց թող լողան... մութը պատէ...
 «Մուցնել կըտանք—խաղ-խաղալ...
 «Այո՛, վատ է, անչա՛րի վատ է,
 «Ալեաց հետը «կոճի տալ»:
 «Զըվարճացնե՛նք մեր մայր-ծովին—
 «Քանի օր է նա տըրտում...
 «Եկէ՛ք խաղանք մի լաւ «օրին»
 «Սոցա գըլխին խաւարում...
 «Շըրջապատե՛նք փոքրիկ «տաշտին»,
 «Որ նաւակ են անուանում,

«Եւ միայն մեր դէմքովն ահեղ
«Սառցնե՛նք արիւնն սրբտերում»։—

Աւա՛ղ, մենք չենք թիավարում.
Նաւն իր կամքին է թողած.
Մենք կըռվում ենք... անվախ կըռվում...
Բայց... իրար դէմ... ո՛չ ալեաց.
Իսկ գիշերը մօտենում է,
Ծովը փրփրած մըրթմըրթում.
Նաւը «անսանձ» թափառում է—
Ուղիղ ճամբուց խոտորվում.
Ալիքները հըռհըռում են,
Ծափահարում մէկն միւսին.
Նոքա արդէն ըսկըսում են
Ներկայացնել չար «օյինն»...
Շուտով կ'պատէ թանձրը խաւար.
Մեղ հողմն հեռու կըտանի.
Ընկեր, կ'կորցնենք «փարոսն պայծառ»...
Ո՛չ... մենք այնտեղ չենք հասնի...

II.

Կ Տ Ա Կ.

Երբ ես կըմենեմ, անմոռաց ընկեր,
 Երբուիր դագաղում դիակըս չըգնել.
 Նեղ կընի այնտեղ, չեմ կարող շարժուել,
 «Փրկութեան օրում» ելնել դէպի վեր.
 Դու իմ մարմինը չամփոփես հողում,
 Ինձ չըբանտարկես մութ ու խոր շիրմում,
 Յանուն Աստըծոյ—չըկոտրես խօսքըս,
 Թէ չէ քեզանից կըսառի սիրտըս.
 Դիակըս կըգնես լեւան դագաթին,
 Ուստից կընայեմ այն «մեռած երկրին»...
 Թո՛ղ բարձր այնտեղ ես ազատ լինեմ,
 Առանց դագաղի, անպատան պառկեմ:
 Աղգիս արցունքը, նորա աղաղակ,
 Ճընշուած բողոքը թող այնտեղ լըսեմ...
 Նորա խրոջալի ու անարգ վիճակ
 Մարած աչքերով թո՛ղ անվերջ դիտեմ:
 Դուցէ, սիրելիս, նա մի օր զարթնի—
 Տեսնէ իր վըզին բաղմած ճաճիկին...
 Ո՞վ գիտէ, գուցէ ձեռքերը մեկնի—
 Տապալէ գետին լիրբ բըռնակալին.
 Տարիներ կ'անցնեն դեռ երկաթ, երկաթ...
 Խուլ բողոքներին կ'աջորդէ «ուռուան»...
 Ես այն ժամանակ կ'իջնեմ—կ'երթամ Աւարայր,
 Որ նորից մեռնեմ յանուն փրկութեան.

III.

ՎԱՀԵՔՆԵՑ ԾՆՈՒՆԴԲ.

«Երկնէր երկին և երկիր,
«Երկնէր և ծիրանի ծով»...

ՄՈՎՍ. ԽՈՐ. ԳԻՐԳ 1. ԳԼ. 31.

Այս ի՞նչ պատահեց, այս ի՞նչ է գղերդում,
Խրոպոտ հոգւոցներ անդընդից հանում,
Մի ձայն է լըսվում—խուլ ու զարհուրիչ—
Այնտեղ ալէկոծ կատաղած ծովից,
Փրփրած ալիքներն, կարծես, վախեցած,
Փախչում են դէս-դէն, հրեւիլով իրար...
Ժիչ են արձակում, ահիցը կապտած,
Ապաստան փրնտուում թագնուելու համար,
Երերման մէջ էր կամարը երկնից,
Երերման մէջ էր երկիրն անսահման,
Ծիրանի ծովը եռում էր խորքից,
Հառաչում ծընող կրնոջը նրման,
Տատանվում էին անսասան սարեր,
Զարդվում, փըշըրվում ամրագին ժայռեր...
Դեերը, կարծես, ելած դժոխքից
Վըճուել են քանդել աշխարհը հիմքից:
Ամպը կոխել էր, սեւացրել երկինք,
Քողարկել ալը մեծ Արամազդին...
Տարերբը, կարծես, կ'ուզէին վաղուան
Այն խառնաշըփոթ դառնալ դրսութեան,

Բայց ահա քիչ-քիչ աղմուկը մեղմեց,
 Այդ օտարօտի կօնցերտը լռեց...
 Մի խորհրդաւոր ու լարուած ապշանք
 Ողջ տիեզերքին տիրեց անգուժան:
 Բնութիւնը, կարծես, հրաշքի էր սպասում...
 Եւ, իրաւ, յանկարծ—մի ակնթարթում—
 Ջուրը պատառուեց, անդունդը ճեղքուեց,
 Ճակատից կարմիր եղեգնիկ ցայտեց:
 Նա ոլորվում էր, պըտըտվում օդում,
 Փըքվում էր, ուռչում, ահագին դառնում...
 Այիբները, մեղմ վըշշալով հեռուում,
 «Կուչ եկած» իրար զարմանք են յայտնում...
 — «Այս ով է՝ ծննուել մեր մօր արգանդից—
 «Մեր մայրը սուրբ է և ազատ մեղքից...
 «Վըկայ է համայն Արարիչն երկնից,
 «Այս բանից իսկի՛ լաւ հոտ չի գալիս»...


* * *

Եղէգն ընկաւ, վերջապէս, ամին,
 Թանձր ծուխ ու հուր բերնից թողնելով—
 Ափը կազմում էր սահմանը երկրին,
 Ուր խօսում էին հայկական լեզուով:
 Յանկարծ լըսուեցաւ մի սաստիկ պայթիւն.
 Եղէգնու տեղը տեսնուեց գեղեցիկ
 Մի լուսաճաճանչ քաջ պատանեկիկ:
 Հըրեղէն տըղան չորս կողմը նայեց
 Ու հայկայ աշխարհն քայլերը ուղղեց...
 Խըրոխտ աչքերը կայծակ կ'ցայտէին,
 Իսկ ակունք երկու արեգակ էին...
 Պատանին շտապով վազում էր հասնել,
 Իր հայրենիքը վըտանգից վըրկել...
 Հարեան ցեղերն ըսպառնում էին
 Կըլանել անտէր Թորգոմայ աղգին...
 — «Կեցցէ Վահագըն—դիւցազն դիւցապանց—
 «Եւ աստուածների որդին հայկազեանց...
 «Կեցցէ Բարշամայ Ասորոց յաղթող,
 «Կեցցէ Վիշապանց աշխարհից ջընջող»:

**

Այսպէս երգեցին հովիտք ու լեռներ,
 Դիցազնայ ծնունդը փառարանելով,
 Եւ հայոց գետեր և հայոց երկիրը
 Թընդացին, նորա գալուստն ածնելով...
 Իսկ հայ գուսանը բամբուկը ձեռքին
 Հրապարակներում գովում էր քաջին...
 Եւ անցան դարեր... ամբողջ պաշտեց,
 Տիգրանայ որդուն զօհր մատուցեց,

Ջ. ԲԱԼՈՒՂԵԱՆ.



ՄՈՌԷՑՈՐԸ՝ ՇԻՐԻՄ.

(Նուէր ի Ա. . . . ի յիշատակին.)

Դու, փափկաթե անուշ հովիկ,
Ուր այդպէս լուռ մըմնջելով՝
Կը սաւառնիս մեղմիկ մեղմիկ,
Ծաղկանց ոգի ներշնչելով:

Դէպի թաւուտքն նոճիների,
Որք մենաւոր կ'ծածկէն շիրիմ,
Նուիրել համբոյր փոշիների,
Որ հայրենեայ էր մտերիմ:

Իսկ դու, սոխակ, բարի հրեշտակ,
Այդպէս քաղցրիկ և հանդարտիկ,
Տերեախիտ այդ ծառի տակ՝
Ո՞ւմ կ'նուիրես քո մեղեդիք:

Ես երգում եմ զոհի մ'աճիւն,
Որ կ'ամփոփէ այդ սուրբ դամբան.
Ի սէր ազգին թափեց արիւն,
Ճշմարտութեան էր նա պաշտպան:

Կանաչագեղ դուք վարդենիք,
Զերթ քյրիկներ ջերմ կարօտով,
Մի՞թէ եղբայր գըրկած ունիք,
Կը փայփայէք անուշ հոտով:

Այո՛, եղբայր, Այդ գերեզման,
 Ուր կայ ազգի մի նահատակ,
 Նա ունէր կամք, սէր անսահման,
 Պաշտելի է իւր յիշատակ:

Իսկ սիգաճեմ դշեղյդ երկնից,
 Ո՞ւր նալելով այդպէս յուշիկ,
 Արծաթափայլ քո վարսերից
 Կը թափես շողերդ անուշիկ:

Դէպ այդ ձորը Մասեաց լերին,
 Ուր մի շիրիմ կ'ծածկեն սօսիք,
 Յաւերթհարսունքն Արմաւիրին
 Նորա շուրջը կ'հիւսեն դաբնիք:

Ո՞վ է դրած շիրմի միջին,
 Դու խօ՛ գիտես, ասա՛ լուսին,
 Ես էլ գնամ տամ մի համբոյր,
 Յանեմ ծաղկունք վրան բարեբոյր:

Երիտասարդ մի դրած է անդ,
 Անխոնջ գործիչ հայրենիքին,
 Որ իւր ջանքը և ջերմ եռանդ
 Ողջ նուիրեց նորա փառքին:

Փլատակների հին մոխիրից
 Կ'ուզէր կանգնել հայու թիւնը,
 «Այբ ու բենի» մէջ էր գտնում
 Նորա միակ փրկութիւնը:

Հայի արտասուք նա սրբում էր,
 Ազատութեան էր միշտ պաշտպան,
 Նա չունէր սուր, մարտնչում էր,
 Նորա ղէնքն էր—գրիչ ու բան:

Բռնակալի ձեռքն դաւաճան,
Բարորութեան միշտ անհամբեր,
Նորա կեանքին տուեց վախճան.
Հասուց հարուածք իւր մահաբեր:

Այդ շիրիմն, որ հայաստանի
Կրում է զոհն իւր միջում,
Այժմ մոռացուած է հայերից,
Իմ արտասուքն է նորան թրջում:

ՐԱՖԻԻ.

✱

ՀԱՏՈՒՑՈՒՄՆ.

I.

«Կորիւր, ասում եմ, շուտով այստեղից. տանը չէ՛ աղէն.
 Նա չէ կամենում, որ քեզ նրմանների գան իրեն նեղեն.
 «Է՛յ, հասկանո՞ւմ ես, յիմարի՛ գըլուխ, պիտի գնաս թէ չէ՛»:
 Այսպէ՛ս էր գոռում շը քեղակառոյց, հարուստ մի մեծ տնի
 խիստ զոնապանը, պէխերն մատանց մէջ ոլրած ու սրածայր,
 Խոժոր նայելով մի խեղճ ծերուկի, որ ձեռքում թղթի
 Մի կտոր կար ծալած, ողորմ՝ գլխակոր, արցունքն աչքերում,
 Խնդրէր որ թոյլ տան՝ աղերսանօք լուռ և պաղատագին,
 Գոնեա այս անգամ, ի սէր իւր կընոջ, աղջկանց նորատի,
 Ներկայանալ մեծ տիրոջ բարերար, հարուստ աղային,
 Եւ անձամբ, եթէ կարելի լինի, նորան բացատրել
 Իւր վիշտն ու տագնապ, իւր աղետալի վիճակն տրնային,
 Եւ առաջարկել խնդիրքն իւր խոնարհ. այլ պէտք է շտապել,
 Զի ահա աւանդ երկու օր լինի, որ չոր հաց ուտեն:
 Այդ էլ իսկ երբեմն մեծ դժուարութեամբ կարող են ճարել.
 Այսպէսով երկար ապրել անհնար է. աղջկունքն էլ արդէն
 Սիրուն, կուսագեղ՝ չկարողացան գեռ ճարել մի պաշտօն
 Նորաժառանգ պերճ խանութներում, մօտ կար կարողաց.
 Ողջն էլ մերժելով՝ չտուին նոցա գործ, զի չունէին նոր
 Գլխարկ և կօշիկ, փողոց դուրս գալու գէթ բաճկոն համեստ:
 Գոնէ կրպակում, ուր յաճախորդաց պարտին երևել,
 Անհրաժեշտ պէտք է արժան մի կտաւից հագնել գէթ սև զգեստ:
 Այլ ի՞նչ գիմանայ, քաղցատանջ, ծարաւ չորս էակների
 Կարասիքն ծախուած, շատ բան էլ կորցրին դրաւատան վճում,
 Զի չկարողացան շահերն վճարել վաշխառու հրէին:
 Էլ այսուհետև ձեռքերնին ծալած՝ մահ են սպասում,

Թէ մի լաւ հարուստ՝ իւր կուշտ սեղանի յանկեալ փշրանաց
Գէթ մի չնչին մնսս չի կամենայ տալ, որ մի ընտանիք
Զկորչի սովամահ։

Այսպէս էր խորհում ծերունի յուսահատ,
Որի կոր գլուխն, թարշամած այտերն ու սպիտակ ալիք,
Որոշ թւում էին վաթսուն տարիներ, քաղցի աղետից
Ահագին դարեր։ Այլ բազունն ու ձեռք սեւացած և հաստ.
Տփգոյն մորթին վրայ կապոյտ երակներ ցցուած ու բորբոք,
Անցեալում տոկուն իւր աշխատանաց տային յայտնի փաստ։

II.

Այլ ափսոս, անհետ և անպտուղ անցան օրերն րարեբաղդ,
Երբ թէպէտ խոնջեալ, սակայն զեռ առողջ, գործել կարող էր
Ծանր աշխատութեանց ճնշող բեռին տակ բազկօք մշտայաղթ,
Ի սէր իւր աղջկանց, աղքտիկ մութ յարկին փայլուն դոհարներ,
Իւր տըկար սրտին բեռինք քաղցրագին, այլ յոյժ ծանրատար.
Որոց զեռ անբիծ ճակատում փայլի, զինչ առաւօտեան
Աստղն հօրիզոնին, սուրբ համեստութեան նըշոյլն անխաւար.
Կամ իւր աւամանդ յաղբիւս տնանկութեան ուր որ գերեզման
Գտնեն շատերը, թէ փայլն այդ ական պահեն անապակ,
Եւ պարծին դրանով յառաքինութիւն, տնանկ բայց անարատ.
Աղքատիկ ծնողքն շատ հեղ լուռ նային աղջուկերը վերայ,
Գեղեցիկ՝ մատաղ, երկունս էլ համեստ՝ յերկնից անվըհատ,
Մինչդեռ դառն արցունք ժայթքին թշուառաց խոնաւ աչքերից.
Իսկ մայրն ձեռնակից ծնրադրէ յաղօթս։

Այն երեկոյին

Նոյնպէս աղօթէր, երբ ծերուկ հայրը՝ իւր յօգացաւով,
Տըկար ոտքերը, գէշ պատսպարուած մի կօշկի մէջ հին՝
Յետում սպասէր քամակը տըած դրանց ընկուղնի,
Եւ պաղատագին նայելով կոպիտ դռնապանին խրոխտ,
Գութ է սպասում այդ բիրտ անբանից, ում աչքերն հային
Լոկ գրպանների. աթոռակին վրայ նստած անյողդողդ,
Իւր հին ոսկեշերտ ճարպից էլ կեղտած գտակով պարծենայ
Եւ համագլխատին քրտինքից կարմրած պղնձէ կոճակօք՝
հարստին հանդէպ ցգեալին խոնարհի, զաղքատն անխնայ
Դո՛ւրս վանէ դռնից, տալով քամակին մի կից անողոք։

Այն պահուն եկաւ ուրիշ մի ծառայ, նայեց ծերունուն
 Զննելով նորա շապիկն անփողպատ և հնացած բալթօն.
 Յետոյ ականջին խօսքեր մըմնջեց կոշտ դռնապանին՝
 Որոց մէջ լսուէր խարդախ նենգութեան, ծաղրանաց մի թօն.
 Յայնժամ՝ դռնապանն դարձաւ ծերունւոյն ասաց. «կարող ես
 «Տեսնել տան տիրոջ, սրբիւր շուտ ոտքերդ, գլխարկդ՝ ՚ի ձեռին
 «Հետէի սորան»։ Ետեց, ցոյց տալով այնտեղ մի ծառայ.
 Յետոյ ցածր ասաց. «Քոյ շահից անշուշտ ինձ էլ կ'տաս բաժին»։

III.

Նախալարկում կար մի սենեակ գաւթին վրայ,
 Զեղխ և ռամիկ բիրտ ճաշակով զարդարուն.
 Կային անդ խառն աններդաշնակ, սակայն թանկ,
 Պղնձէ, արծթէ ճոխ առարկայք, և փայլուն
 Աշտանակներ և հայելիք. այլ նրանց մօտ
 Պատից կախուած պատկերների մի մեծ շարք,
 Ո՛չ ձեռագործք, այլ իւղատիպ և արժան,
 Այլօմ գրեանք սեղանին վրայ ցիր անկարգ.
 Եւ մի փղոսկրեայ համրիչներով հաշուարան.
 Եւ աթոռներ մետաքսապատ, մի կակուղ էլ բաղկաթոռ,
 Կըրէր իւր մէջ աղէն հանգիստ թէք ընկած,
 Իւր ասղնադործ խալաթին մէջ փառաւոր,
 Որի դեղին ծոպերից մին ձեռքումը
 Դարձներ խաղար գրասեղանին յանդիման.

Նոր ածիլուած և դեռ Ֆայի նուրբ փողին
 Երեսն ծածկէր, մաղերն սանրած աղջկանման.
 Աչքերն փոքրիկ ու ներս քաշուած, նեղ ճակատ.
 Հազիւ թըւէր քառսուն տարուան. անառակ
 Եւ շատ լըպիրշ էր նայուածքը, լիրբ յամառ,
 Ինչպէս լինի մի լաւ թամբած աւանակ...

Այլ ո՛չ սակայն, մեղանչեցի՜, զի էջը
 Զորքոսանեաց խոհեմագոյնն է, տոկուն.
 Նա ունի կամք, համբերութիւն ու կորով
 Որ աշխատի, երբ դեռ մարդիկ լինին քուն.
 Այնպիսիք՝ որ նորա կէսն իսկ չեն արժեր,

Զի որքան նա օգտակար է մարդկերանց,
 Նոյնքան մարդիկ վնասակար են միմեանց.

Իտալիայի գրականութեան իբրև գանձ
 Նըկատում են այն հատորը, որ գրած է
 Մի բանաստեղծ փիլիսոփայ՝ խելացի.

Նա իրաւամբ գովում է էշն և նրա բնոյթ,
 Հէնց այդ գրքով անմահացաւ Կուէրացցի:

IV.

Սակայն թողնենք էշն օգտաւէտ,

Սենեակ մտնենք ծերուկին հետ,

Ուր որ հէգը դողայ մարմնով՝

Ու չը գիտէր թէ ո՞ր ոտքով

Կոխէ գորգերն այն թանկահիւս:

Աչքերն շիկնած իբրև աղիւս,

Շնչառութիւնն ծանր ու նեղուած,

Մնկերը թոյլ, այլ աչքերն թաց.

Մտածելով միշտ, տան մէջ քաղցած

Դարձին սպասող կնոջ, զաւակաց,

Քաջալերուեց, և ձեռքին թուղթ

Իւր վերջին յոյս, խնդիրքն և ուխտ,

Ծռելով մատոյց մեծատունին.

Մատնիներով ճոխ թանկագին

Պճնած ձեռքը կարկառեց նրան.

Ակնոցն ոսկի քթին էլ վրան

Աչքերովն իւր աղետարեր

Աղերսանաց թղթին նայէր.

Սենեկին մէջ տիրէր լուսթիւն.

Ժամացոյցին լոկ խուլ բաղեւին

Միայն լըսուէր, դաշն անողոք՝

Որի սլաքն լուրջ և անհոգ,

Մաս մաս ջարդէ մեր ժամանակ.

Թիք թաք,

Թիք թաք,

Եւ շարունակ

Միօրինակ

Հարստին համար սաստիկ արագ,
Այլ աղքատին թրւի դանդաղ
Եւ յամրաքայլ ինչպէս դադալ:

V.

Յետ կարգալուց, թուղթը ձեռքում դեռ բռնած,
Կատուի աչքերն դարձուց աղան ծերունւոյն
Ու կիսաժպիտ և յօնքերը ամփոփած
Զննեց նորան ասելով, թէ բնաւ ոչինչ
Չէ հասկանում նախ դրանից. փող է ուզում
Թէ մի պաշտօն, յայտնի չէ... յետոյ յարեց.
«Ես ի՞նչ անեմ, միթէ քիչ կան փողոցում
Կամ տների մէջ, քաղցած, աղքատ, ծեր և տկար,
Իրանք չեն խօսատառ նոցա անանկութեան.
Թո՛ւյր բոլորին գլխալ ողորմիլ հարկ լինի,
Ծայրը չի գալ, հարուստներն էլ աղքատանան»:

Ասաց՝ պրծաւ. հանեց ծոցից մի սիւսաւ
Հովանայի ընտիր տեսակ. հանդարտիկ
Վառեց, ոտքերն միմեաց վերայ դնելով՝
Ծըլում էր. երբ խեղճն թափեց վերջին ճիգ
Ու հառաչեց, յետոյ ձեռքերն միացրած
Մ'նջեց. «գլխացէ՛ք գէթ աղջկանցս, որք ի սով
«Մեռնին հիւծին, նոցա համար գալիս եմ,
«Նոցա համար է որ սպասեմ օրերով,
«Զեր գուլթն հայցել ի սէր երկնից»:—

«Լըռէ՛, մա՛րդ»,

«Կարծում ես, որ հաւատամ՝ այդ բոլորին»:
Ասաց աղէն. դէմքն էլ փոխուեց յակնթարթ.
Յետոյ յարեց. «Թէ ունիս կին և աղջկունք
Ինչո՞ւ նոքա չեկան անձամբ, և ինձ մօտ
Քեզ են ղրկում... այդպէս տրկար և հիւանդ
Հայրերնին, դուրս փողոց ձգել... մե՛ծ ամօ՛թ»...

Հիմակ պարոնն հասկանում էր, թէ ինչո՞ւ
Դռնապանը նորան ներս է ընդունել,
Հաւատարիմ, արժանաւոր իւր ծառան,
Որ կը յարգէ տիրոջ կրքերն ու շահեր:

VI.

Յուսարդդո՞ղ անկար թշուառն ակնապիշ
Կանգնած նայէր, պաղ պաղ քրտինք թափելով.
Արիւնն ի գլուխ կը բարձրանար, և զգաց
Որ անզգամն չունէր ո՛չ գութ, ո՛չ գորով:
Հայհոյում էր մինչև անգամ երեսին.

Ձեր հաւատում... և որոշեց շուտ խոյս տալ
Այդ սենեկից, ուր նախատինք միայն գտաւ,
Աւր կարող էր յանկարծ իրան մոռանալ...

Մինչդեռ աղէն հանդարտօրէն քմծիծաղ
Շարժեց գլուխը, ու դառնալով խորամանկ
Ուղղեց նորան շնացող և շուպտ մի նայուածք
Ասելով. «Թէ այդ վիճակից փոյթ անխտանկ
Փրկուիլ ուզէք, մի հնարք գտէք... գոնէ ես»...

Նա կանգ առաւ. այլ ծերուկին անձկօրէն,
Ի նշոյլ յուսոյ, սիրան սկսեց բարախել.
Զի չէր կարող դեռ ըմբռնել անօրէն
Այդ մեծատան մտադրութիւնն ու խօսքեր:
Եւ սպասէր անդարձ վճռոյն շնչասպառ,
Զինչ մահապարտ, դատաւորաց ատենում:

Բայց նա հարցուց. ծիծաղելով լկտաբար.
«Ասա՛, գոնեայ գեղեցիկ են աղջկներդ»...

Աչք ծերունւոյն սքողեց արեան մթութիւն,
Եւ խրոխտաձայն ապստամբեց իւր հոգին,
Այն հինաւուրց, անխախտ՝ համեստ հեզութիւն.

Մահասարսուռ նայեց մէկ հեղ իւր չորս գին
Առիւծի նման՝ կատաղաբար յարձկնելով
Սեղմեց վզիցն անզգամին, յափշտակեց
Մի աշտանակ պղնձաձողլ, որ ոյժով
Եւ սաստկաբար գլուխն ի վայր սոսկալի
Պիտի իջնէր հարուած մահու ահագին...

Սակայն յանկարծ արձանացաւ լուռ շուարած,
Երկիւղն հաւատք, որ ունէր առ Տէրն Աստուած,
Որ պատուիրէր չսպանանել զընկերին,
Վայրկենական ձեռքն, և եղկելոյն տարաբաղդ
Գլորուեց գետին նիհար մարմինն վշտայաղթ...

Մինչ դողդոջուն ձայնով աղան կը պողար՝
Իւր ծառայից, ոստիկանաց ձայն կուտար.

Ներողամիտ խեղճ քրիստոնեայն յուսահատ,
Երբ մի պահից բացաւ աչքերն մըթապատ,
Տեսաւ աւաղ... որ դրել էին զինքն ի բանտ՝
Զեռքն ու ոտքեր մարդասպանաց պէս կաշկանդ.

Պ. Հ. ԱՂԱՄԵԱՆ.



Մ Ի Ե Ր Ե Ս

ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ.

(Ի մ յ ի շ ա տ ա կ ա ռ ա ն ի ց.)



Զնշւեց*) սարկութիւնն ամբողջ Ռուսաստանում:
Դիւնների ազատութիւնը յառաջ բերաւ և ուղեղի
ազատութիւն:

Գրականութեան երեսին քաշած խաւար վարադոյրը
յեւ քաշւեց, և մարդիկ սկսեցին նրա մէջ տեսնել իրանց
[ընտանեկան, ազգայնական, մէկ խօսքով իրանց սե-
փական պատկերը բոլոր սցանդալի գծերով:

Ինչպէս մի դաժան ձմրան յաջորդէ մի գեղեցիկ դա-
րուն, և ամենայն ինչ սկսէ արագ արագ աճիլ ու զար-
գանալ, այսպիսի մի փոփոխութիւն եղաւ ահադին պե-
տութեան մէջ:

Այս մի ողորմութիւն էր, մի շնորհք, որ իջաւ
երկնքից ինչպէս մի պտուղ, որ հասնելուց յետոյ ինքն
իրան կտթում է և ընկնում մարդկանց առաջը: Այդ
ողորմութիւնը Ազատարար Աղէքսանդր կայսրի ձեռքով
տարածւեց իւր բոլոր հպատակների վրայ, ուրեմն և հայերի:

*) Զետեղելով «Հանդիսում» պ. Ղ. Աղայեանցի սոյն յօդուածը,
հարկաւոր ենք համարում ասել, որ իբրեւ բացառութիւն թողնում ենք
անփոփոխ յարգելի հեղինակի ուղղագրութիւնը:

Սակաւ սարուկներ չըկային և հայերից, որոնք վրայոյ հետ խառն կենում էին Վրաստանի գանազան խորշերում, թէև ոչ ոք մեզանից հետաքրքիր չեղաւ խմանալու, թէ որչափ էր նրանց թիւը և որսիսի վիճակում էին գտնուում:

Կարեկցութեան ոգին վերանում է այն տեղից, ուր թշւառութիւնն ընդհանուր է լինում: Սյւլպիսի պէպքերում բռնական մարտիկը երկու դասակարգի են բաժանում—զաղանների և անասունների, ճ'նշողների և ճընշւածների: Տիրապետող ոգին լինում է Երկիւղը: Ճնշողը՝ երկիւղից ստիպուած՝ միշտ ճ'նշած է պահում, ճ'նշւածը՝ դարձեալ երկիւղից ստիպւած՝ միշտ ճ'նշւած է մնում...

Սարսափելի՝ վիճակ. . Որքան քառմեկի տեսարաններ կան ստրկական կեանքի մէջ:

Եթէ քաղաքականապէս ազատ մի ազգի մէջ ժողովուրդը կարող է սարուկ լինել, մարդ կարող է իր զլխի տէրը չըլինել, հայրը կարող է իր որդու տէրը չըլինել, մարդն իր կնոջ, մայրն իր աղջկայ, հովեն իր ոչխարի, երկրագործն իր արաի ու ամբարի, ի՞նչ կրլինի ուրեմն և այն ազգի վիճակը որ ոչ թէ սարուկ, այլ գերի է համարւում մի այլակրօն և այլացեղ ազգի ձեռքի տակ, մի ազգի, որ ոչ միայն քրիստոնէին է տատում, այլ նոյն իսկ Քրիստոսին էլ:

Ստրկութիւնը թէև մարմնու վրայ էր տարածւում և այն էլ ժողովրդի մի մասի վրայ, բայց նրա ոգին, ստրկութեան ոգին տարածւում էր տուանց բացառութեան ամենքի վրայ, և այդ ստրկութեան ոգին, իբրև մի ժառանգական ցաւ, դեռ շարունակում է գոյութիւն ունենալ:

Ստրկութեան ոգին իշխում էր ընտանիքի մէջ: Ընտանիքի հայրը սարուկ լինելով մի բռնաւորի ձեռքում, ինքն էլ հանդիսանում էր իբրև մի բռնաւոր ընտանիքի մէջ, կինը և զաւակները ընտանիքի հօր ստրուկներն էին:

Մի և նոյն ոգին տարածւում էր և ստորադրեալ ստրուկներին մէջ, ամեն փոքր՝ մեծի ստրուկն էր, ամեն թոյլ՝ զօրեղի ստրուկն էր, թէկուզ այդ ասարբերութիւնը լինէր մի և նոյն ընտանիքի անդամների մէջ: Այսպէս ահա սարկութեան ոգին իշխում էր ընկերութեան մէջ, հասարակութեան մէջ, զրականութեան մէջ, մտածմունքի և խօսքի մէջ, վարք ու բարքի և նիստ ու կացի մէջ, մէկ խօսքով՝ տարածւած էր բոլոր դասակարգերի և անհատների վրայ, ամեն սեռի և հասակի վրայ:

Հասարակական կեանքը նման է մի օրհանիզմի, մի ամբողջ կազմւածքի. եթէ օրհանիզմի մի անդամը ցաւագորէ, նա իր ցաւը պիտի տարածէ և միւս անդամների վրայ, որովհետեւ նրանց հետ կապւած է այլ և այլ ջղերով և ներգերով:

Հայերը Կովկասում մի և նոյն պետութեան մի փոքրիկ մասը կազմելով՝ բնական և պատմական օրէնքով՝ պիտի քարշ դային իրանցից մեծ մարմնի շուրջը և նրա անմիջական ազդեցութեան տակը գտնէին: Եւ այդպէս էր հէնց: Լոյս ծագեց մեծ պետութեան մէջ, այդ լուսով լուսաւորեցին և հայերը, թէև այս բանն զգալի չեղաւ այն անձինքների համար, որոնք պէտք էր զգային և բարեյաջող հանգամանքից օգուտ քաղէին գիտակցօրէն:

Այս բարեփոխութիւնը, որ այժմ համարեա մոռացւած է, մի մեծ դաս էր, պատմական մեծ դաս, որ ժամանակը կարգաց մեր աչքի առջև: Այս դասը պէտք է սերտէ ամեն ոք, պէտք է ուսումնասիրէ ամեն մի հայ, մանաւանդ նրանք, որոնք ձգտումն ունին ծածկահայաստանում լուսաւորութիւն տարածելու: Թո՛ղ ամեն ոք հարցնէ ինքն իրան, թէ հնարաւոր է արդեօք՝ դժոխքի մէջ հեմական տունկեր բսցնել, հնարաւոր է արդեօք բռնակալի մէջ գութ ու խնամք փնտրել ու գտնել, հնարաւոր է արդեօք, սարկական վիճակի մէջ գտնել քաղաքակրթու-

Թեան և լուսաւորութեան հետքն ու արդիւնքը: Իսկ մենք
գառնանք և մի հարեանցի ականարկ ձգենք, թէ որպիսի
փոփոխութիւններ եղան մեզանում՝ ընդհանրապէս և
Թիֆլիս քաղաքում՝ մասնաւորապէս ամենակարճ ժամա-
նակամիջոցում, ընդամենը մի տասը—տասընհինգ տար-
ւայ մէջ:

Մեռաւ Ներսէսը և նրա տեղ անցաւ Մատթէոսը:
Սա թէպէտ իր նախորդի սրութիւնն ու կենդանութիւնը
չունէր, բայց բարեկաջող ժամանակի շնորհիւ յիշատակելի
անուն թողեց: Ժողովուրդը ժամանակի կենդանութիւն
տուող ողուցն ազդեա՞ծ՝ դարաւոր թմրութիւնից սթափ-
ւա՞ծ՝ շարժման մէջ էր ընկել: Մատթէոսը այդ շարժման
հակառակ չըկացաւ, այլ պաշտպան և խրախուսող հան-
դիսացաւ: «Ազգ իմ, աչք իմ», կրկնում էր նա, և ինչ որ
ուզում էր ազգը, նա տալիս էր անխնայ: Նա իր այդ
ընթացքովը շատ բան կրտար ժողովրդին, և թէպէտ զը-
րանով կրպակասէր հոգեւորների իշխանութիւնը, բայց
ազգը միայն վաստակ կունենար և ոչ վնաս: Դպրոցների
կառավարութիւնը նա յանձնեց աշխարհականներին, ո-
րոնցից հոգաբարձուներ հաստատեց, ընդ ազդեցութեամբ
տաճկահայոց սահմանադրութեան: Վանական շատ կալ-
ւածների եկամուտներ և եկեղեցական արդիւնքներ յատ-
կացրեց ուսումնարաններին և հոգաբարձուների հսկողու-
թեան տակ ձգեց այդ եկամուտները: Այս մի մեծ ողոր-
մութիւն էր և մի տեսակ ազատութիւն, որ նա ազատեց
եկեղեցիքը ստրկական վիճակից և յանձնեց հասարակու-
թեանը: Նա տւաւ Ներսէսեան դպրոցին աւելի լայն ծա-
ւալ թէ ուսումնական և թէ տնտեսական մասին: Այս
դպրոցը, որ նոյնպէս ստրուկ էր մի քանի մարդոց իշխանու-
թեան տակ ընկա՞ծ, նա շինեց ազգային — ժողովրդական:
Նա մեծամեծ կալւածներ տւաւ և Ղարաբաղի թեմական

դպրանոցին հաստատելով անմահ Շանշեանցի ծրագրած կանոնադրութիւնը: Նրա հաստատած հոգաբարձուները բարեկարգեցին արդէն եղած դպրոցները և ուրիշ նորանոր ուսումնարաններ բաց արին: Նա չունէր իր նախորդի էջմիածնական նախանձոտութիւնը և ոչ իր յաջորդի տաճկական փառամոլութիւնը: Նա մի բարի հայ և բարի քրիստոնեայ էր: Նա ինքը չէր մտածում կամ վնասում մի նոր բան, որով ուզէնար իր անունն անմահացնել, այլ միայն կատարող և հաստատող էր հանդիսանում ամեն մի բարի առաջարկութեան: Ժողովուրդը զիմում էր նրան իր խնդիրքով՝ իբրև զթառսա հօր, և նրանից բան խընդրողը դատարի չէր վերադառնում: Նրա օրով Պօլիսը մօտեցաւ Թիֆլիսին, և երկու կողմի հայերի մտքերի փոխանակութեան համար հեշտ ձանապարհ բացւեց: Այդ բարոյական և մտաւոր կապի կծիկէ՛ր էր, եթէ կարելի է այսպէս ասել, Մարկոս Աղաբէգեանը իր երիտասարդութեան վառվռուն և աշխոյժ ժամանակ: Նա ոչ այնքան իր ամառադրովը, որքան կենդանի խօսքովը և զործունէութեամբը նորագոյն մտաւոր շարժման նահապեան եղաւ: Այդ ժամանակ Պօլսում դործող անձինքը, Սահմանադրութեան հիմնադիրները այժմեան հոսոսներից չէին, այլ գաղափարի, գիտութեան և բնաւորութեան աէր մարդիկ էին, և կարժէր, որ դրանց մտքերը Պօլսից ցօլանային Թիֆլիսի վրայ. . .

Մէկը միւսի ետեւից լոյս տեսան հայերէն տմնագրեր և լրագրեր, ինչպէս Մասեաց Աղաւնի, Հիւսիսափայլ, Ճռաքաղ, Մեղու և Կռունկ: Հայկական թէատրը բուսաւ ձնձաղիկի պէս ձիւնաբայ տեղերում: Միակերպ մտածելու ձևը փոխւեցաւ, մարդիկ իրաւունք զգային իրանց սեփական կարծիքն ունենալու, որովհետեւ խօսքն ազատւել

էր ստրկութիւնից, և սկսեցին քննադատել և դատաւիտել միմեանց զազաւիար և հասկացողութիւն:

Նոր դիւտերից լուսանկարչութիւն, հեռագիր, վերջը նաեւ երկաթուղի միմեանց ետեւից գալով՝ ժողովրդի աչքերը չորս բաց անկ տւին:

Կեանքի մէջ որ կողմը նայում էիր, մի նոր փոփոխութիւն էիր նշմարում:

Մարդկանց յարաբերութիւնն սկսեց մեղմանալ միմեանց հետ: Ճաշակները քնքշացան, և ամենայն ինչ որ կուպիտ էր, վերանալ սկսեց, ինչպէս օրինակ՝ մուշտեկուիւր, զուքանների դառարէքը, մեծ մեծ բուխարի գտակները, թեւքաւոր կարէքը, լայն շաւարները, խալաղի լափչեքը, և այլն:

Նոր ձեւի և այն էլ խոշոր տներ շինեցին, նորանոր փողոցներ բացեցին, և մի մեծ այդի էլ իբրեւ զբօսատեղեւ հասարակութեան համար: Իգական սեռը ոտքը դուրս դրաւ դարաւոր թաքստարանից և սկսեց պտրտուել հասարակաց այգիում և զլիսաւոր փողոցների մայթերի վրայ, իբրեւ աղտաւ օդ շնչելու համար: Այս զբօսանքը տեղիք աւաւ հազուսանների փոփոխութեան, ասիականից դէպի եւրոպականը, և տարի չքաշեց՝ սպիտակ դաթիւբէքը յանկարծ վերացան նոյն իսկ աղքատների վրայից:

Տները զարդարեցին եւրոպական կահ-կարասիքով, և իրանց նիստ ու կայք այդ նոր կահաւորութեանը յարմարեցրին:

Այս բոլորի հետ ներս մտաւ և ծիսապահութեան թուլութիւն: Պար շատ թեթեւացաւ և շատ տներից բոլորովին դուրս վռնդեցաւ իբրեւ հնուց մնացած մի ստրկական լուծ: Դրա հետ միասին վերացաւ և կրօնական ջերմեռանդութիւնը թէ աշխարհականներից և թէ հոգևորականներից:

Երիտասարդները, համաշխարհային մօդայի հետեւ-

Թեամբ, սկսեցին մօրուք թողնել, որով շատ վշտացրին ծերերին: Մօրուքը մինչև այդ ժամանակ սուրբ էր համարում մեղանում, միայն հոգեոր անձինք էին կրում և ծերունի աշխարհականներ. այդ պատկառանքի նշանը կորցրեց իր յարզը՝ բազմելով ամեն աղայի կղակի վրայ:

Առհասարակ մի մեծ գեղութիւն ընկաւ ծերերի և երիտասարդների մէջ և սկսեցին յարձակւել միմեանց վրայ թէ խօսքով և թէ գրով: Մեղուն, Զամուրջու Երեւակը և Մասեաց Աղաւնին մի ուղղութեամբ պաշտպանում էին Հինն ու խախուար, փթածն ու անպէտքը, իսկ Նիւսիսափայլը և Սևաջեանի Մեղուն՝ նորագոյնը և օգտակարը: Նորագույնները որքան աւելի էին յարձակւում Նիւսիսափայլի վրայ, որքան աւելի էին ցոյց տալիս իրանց տխմարութիւնը, այնքան աւելի էր բարձրանում Նիւսիսափայլի նշանակութիւնը նորագոյն կեանքի զարդացման համար: Նրա հակառակորդների վերուն ճոռոմաբանութիւնները, միջնադարեան հայհոյանքները ընդհանուր լուսաւորութեան հոսանքի առաջն ընկնելով աղբի պէս սրբեցին և ընկան ցնորքների աշխարհը իրանց պաշտած զեքրի նման:

«Կռունկն» էր, որ ազատ էր երկու ծայրերից, նա միջին ճանապարհ բռնած, «հայոց աշխարհի իրաքնակ և տարաքնակ որպոյ մէջ տարածում էր Ազգային-բարոյական լուսաւորութեան պահանջն ու կարիքը»: Նիւսիսափայլը ձգտում էր վերանորոգել հայերին ռախց ցղլուխ Աւետարանի լուսով, և սրանով էր աւելի, որ իր դէմ էր բարձրացնում բոլոր հայ հոգեւորականութիւնը:

Կրօնական վէճերի այս թունդ ժամանակը Վարդապետանից իջաւ ճաշխարհիկն Խրիմեան, իբրեւ մի հինգերորդ զարու Մեսրոբ այցելեց Վրաստանը ոչ նոր զիր տալու նրան, այլ նոր ձայն հնչեցնելու հայերի ականջին և նոր հոգի փչելու նրանց սրտերի մէջ:

Իրաւի, Թիֆլիսի եկեղեցիներում լսեցաւ մինոր ձայն, ձայն Վասպուրական Սրճւոյն, որ Մայր-Հայաստանի վերքերն էր նկարագրում և նրա որդոց մէջ Հայրենասիրութեան զգացմունք զարթոյնում: Սյդպիսի ձայն Հայոց եկեղեցեաց մէջ լսած չէր... Ինչ որ ժողովրդի Համար չըկար, իսկ բանասերների Համար մի ցնորք էր և Հէքիտթ, Հոյ մարգարէի Համար մի շօշափելի իրողութիւն էր, նա ցոյց էր տալիս, որ Հայութիւնը մի մեծ ժառանգութիւն ունի ստանալու, բայց որ չի ստանում, այդ միայն նրանից է, որ ինքն իրան ապօրինի զաւակ է Համարում և ոչ օրինաւոր ժառանգ: «Պահանջեցէք ձեր ժառանգութիւնը, և կստանաք, բայց պիտի պահանջէք և ոչ խնդրէք, պիտի պահանջէք հրով ու սրով, զի «Արքայութիւնն երկնից բռնաբարի, և բռնօք յափշտակեն զնա»: Աստուած որ Աստուած է, առանց նահատակութեան մեղ արքայութիւն չի տալիս: Նոյն իսկ Աստուծոյ Որդին առանց խաչելու չփրկեց մարդկութիւնը, ամենայն Հայ, որ ապօրինի զաւակ չի Համարում իրան, պէտք է իր արիւնով զնէ իր նախնեաց ժառանգութիւնը, և ո՞ր ազնիւ զաւակը կրփախէ իր մօրն ազատելուց դարաւոր դերութիւնից:

Հայրիկը սոսկ խրատ և հրահանգ չէր տալիս, նա առանց առակի ոչինչ չէր խօսում: Նա ոչինչ չէր ասում, որի տպացոյց մի կենդանի պատկեր և օրինակ չլուար: Մերթ Վարդանին և Վահանին էր նկարագրում, մերթ Մուշեղին և Սմբատին: Հայոց բոլոր զիւյազունք Հայկ ու Արամից սկսած նրա քարոզի կենդանի պատկերներն էին:

Շուտով թոցրին նրան զէպի իր բոյնը՝ Վարադ, բայց նրա ցանած սերմերը Կովկասի Հայերի մէջ խոր արմատ բռնեցին և ժամանակին պիտի ծաղկէին և պտուղ տային:

Զարմանալի բան է, իրաւի, որ մի քանի տարի առաջ առասպելական քաղաքի պէս քարացած էինք, և յանկարծ կենդանացանք. որքան փոփոխութիւն, և որքան կարճ ժամանակում: Արեւելեան և հիւսիսային պատերազմների պատճառով վաճառականների գործը շատ յաջող էր: Կարողութիւն կար ժողովրդի մէջ և նորածիլ ու անկեղծ ազգասիրութիւն: Հռենձ շատ կար և մշակ սակաւ: Կարգալու փափաղ կար, բայց կարգալու ոչինչ չըկար: Շաբաթը մի թերթ լրագիր չէին կարողանում լոյսնել մարդավարի նիւթով, զրոյներ չըկային: Ուսումնարան պահելու նիւթական կարողութեան պակասութիւն չըկար, բայց վարժապետներ չըկային: Եղած վարժապետներն էլ կարեւոր դասաղրքեր չունէին... Որքան խեղճութիւն... Բայց այսու ամենայնիւ յառաջադիմութիւնը ամենայն տեղ և ամենայն բանի մէջ այնքան զդալի էր, որ շատերը լաւ նշան չէին համարում և վատ ապագայ էին դուշակում:

Մեղանում այսպիսի մի նախապաշարմունք կայ.— եթէ մի հոգեվարք հիւանդ, վերջին շունչն ընկած՝ յանկարծ նոր ուժ է ստանում և առողջանում, այդ համարում է վատ նշան և փառեզաւոր նոյն զերդաստանի համար, որովհետեւ եթէ նա ազատեց մեռնելուց, ուրեմն ուրիշները պիտի մեռնեն նրա փոխարէն: Այս նախապաշարմունքին հաւատացողները կարծում են, որ մահը կարելի է մէկի տեղ միւսին տալ: Սա իր հիմքն ունի անշուշտ ժողովրդի նախնական կեանքումը, և այսօր էլ շատ մայրեր իրանց սիրելի որդուն մերձիմահ տեսնելով, պըտրուում են նրա գլխովը, որով ուզում են նրա մահն իրանց վրայ առնել: Եթէ շատ տեղ չեն պտրտում այլ ևս, բայց հին ասացւածները դեռ ևս շարունակում են աւելի ինչպէս—ցաւը տանեմ.—չարը տանեմ.— զաւէյ տանեմ.— գլխովը պտի՛ւ գամ... Այսպէս մեր ժողովրդի

մէջ կարդէ դուրս լաւ դէպքը, լաւ պատահմունքը տըխրութիւն է յառաջ բերում և վտանդի կասկած: Եղաւ որ մէկի արար սովորականից բեղմնաւոր եղաւ, այդ կընշանակէ նրա տէրը նոյն տարին պիտի մեռնի, որովհետեւ լաւը գլխակեր է, արտօջ գլուխը կ'ուտէ. լաւ զաւակը չի ապրիլ, լաւ աղջիկը փորձանքի առիթ կը դառնայ, լաւ ձին՝ տիրոջ սպանութեան: «Լաւ բանն աչքով կուտես»: «Լաւից լաւ բան չի կարելի սպասել»... Եւ արդարեւ, այդպէս է եղել միշտ, թշուա ժողովուրդը լաւը վայելել չի կարողացել. խեղճ մարդն ինչ իրաւունք ունի սիրուն կին ունենալ, քեաշլան ձի, պարտքի տեղ—հարստութիւն, յնչոտիներէ տեղ—զարդարանք... Նրա փափախը մեծ պիտի լինի, որովհետեւ զլինին խփելու են միշտ. շող ժամանակն էլ նա մուշտակ պիտի հանի, որովհետեւ տարւայ ամեն եղանակին էլ նրան մարտկելու են: Հին գզերները իրանց հագուստով ժողովրդի սարկական վիճակն էին ներկայացնում, հին զեանափոր աները՝ նրանց խախուռ և փոփոխական վիճակը: Ժողովրդի նիստ ու կացի և խօսք ու զրոյցի մէջ ամբողջ վարերի պատմութիւն կայ ամփոփւած:

Ստրկական վիճակից նոր ազատւած ժողովուրդը մի կողմից ուրախ էր, միւս կողմից տխուր. ուրախ էին անփորձները, և տխուր—փորձառուները, ինչպէս 16-դ յօդւածը ջահիլներին ուրախացնում էր, իսկ ծերերին տըխրեցնում. «Այդ յօդւածը մեր աղզի աղէաքը շատացնելու է», ասում էին ծերերը: Այսպէս էին մտածում և սարքիւթիւնից նոր ազատւած ծերերը. նրանք չէին հաւատում իրանց աչքերին և վատ աղաղակ էին դուշակում*): Իբրեւ մի օրինակ, մէջ ենք բերում այստեղ նրանց խօսակցութիւնը այդ առիթով:

*) Այստեղ միտս է գալիս մեր ուսուցչական ընդհանուր ժողովը, որ իրաւի աչքով կերան: Ստրուկը լաւ բան ունենալու իրաւունք չունի:

— Իւրի Ֆեօդրիչ, մենք ուրախանում ենք, որ մեր ժողովուրդը հսկայական ոստիւններ է տնում, բայց ի՞նչ ես կարծում այս լու է թէ փառ:

— Ձրզիւեմ, ճշմարիտ, ի՞նչ տսեմ: Մի յանկարծական հոսանք է, հեղեղի պէս յառաջ է գնում, կամ ինքն իրանից մի ծով կրդառնայ, կամ կերթայ մի ուրիշ ծովի մէջ կրթափւի և կանհետանայ:

— Ինքն իրանից ծով դառնալու համար պէտք է յարմար տեղադրութիւն ունենայ. քանի որ այդ չեղայ, աւելի հաւանական է, որ ուրիշ ծովի մէջ թափւի: Եթէ մեր վախճանն այս պիտի լինի, ես աւելի լաւ կը համարէի քրդանալ քան լուսաւորեալ եւրոպացի դառնալ:

— Քուրդ դառնալով չես կարող ազատել ճակատադրի բերմունքից. չեկրթւողը, չլուսաւորւողը, ժամանակակից լուսաւորութեան պահանջներից փախուստ տրւողը աւելի շուտ կրկորչի: Քուրդն ապաղայ չունի, նրան սպառնում է անխուսափելի մահ: Մի ազդ, որի միակ շէնքը վրանն է, իսկ պարագմունքը հովուութիւնն ու աւաղակութիւնը, նրա այդ կեանքը վերանալով՝ կրվիրտնայ և ինքը: Ազդերի կեանքի տեղութիւնը նրանց կ'եանքի կ'երպիցն է կախած: Եթէ մեր ազգն աւելի է ապրել քան թէ իր դրացիներից շատերը, նա զրա համար պարտական է իր կեանքի կերպին, իր օգտակարութեանը: Ինչպէս կենդանիների մէջ պահում, պահպանւում են միայն օգտակարները, իսկ փաստակարներին հետըզհետէ ջնջում, ուղիղ այսպիսի մի երեւոյթ ենք տեսնում և մարդկային զանազան ցեղերի վերաբերութեամբ, երբ դրանք գալիս, շփուում են իրար հետ: Ես սովորութիւն ունիմ ամեն մի մշեցու պատահելիս՝ կանչել, խօսեցնել, հարց ու փորձ անել իրանց կեցութեան մասին: Մէկ անգամ մի մշեցի ինձ մի այնպիսի բան ասաց, որ ես կեանքումս առաջին անգամ լսեցի և որից շատ բան սովորեցի:

Ասացի, քրդերը ձեզ շատ են նեղացնում: Նա պատասխանեց, թէ՛ քրդերը մեզ վրայ այնպէս են նայում, ինչպէս իրանց ոչխարների վրայ. մեզ կ'թում են, խուղում են, և այս պատճառով էլ մեզ համարում են իրանց համար օգտակար կենդանի, և այս պատճառով էլ նրանք շատ անգամ մեզ պահպանում են, օգնում են: Շատ անգամ է պատահել, որ մեր առիթով քրդերի երկու ցեղեր իրար դէմ են զուրս եկել, կռւել և ջարդել իրար: Մի ցեղն ուզեցել է մեզ վրայ յարձակում դործել և կողոպտել, միւսը կարել է նրա առաջը և պաշտպանել, տեսնով, մեզ պահողը հայերն են, մեր հայը նրանք են տալիս, եթէ նրանք չըլինին, մենք կարող ենք սովամահ լինել: Եթէ հայերի արտերը ռանասակ տանք, խուրձերն պրենք, յետոյ, մենք ի՞նչ կուտենք այնուհետև:

— Ուրեմն այդ քիւրդերը այնքան էլ յիմար և վայրենի չեն, ինչքան մենք կարծում ենք:

— Ո՞ր կենդանին չըզիտէ, թէ իր սնունդը որտեղից է ստանում: Հայերը սննդաբար ժողովուրդ են, մեղքի և շերամի յատկութիւն ունին: Ամենաբարբարոս ազգերն էլ, եթէ հայերին տիրել են, չեն ուրացել հայ ժողովուրդի օգտակարութիւնը, եթէ խմբերով գերի են տարել, դարձեալ նրանցից օգտւելու համար: Քանի քանի պետութիւններ հայերի օգտակարութիւնը ճանաչելով՝ զանազան արածութիւնների տալով՝ հրաւիրել են իրանց երկիրը: Դեռ պատահած չէ, որ հայ ազգը հալածւած լինի մի որ և իցէ երկրում, ինչպէս հալածւում է օրինակ հրէան ոչ միայն քրիստոնեայ աշխարհներում, այլ և մահմեդական: Պատճառն այն է, որ հրէան օգտւել զիտէ միայն, բայց օգուտ տալ՝ ոչ, հայն, ընդհակառակը, աշխարհաշէն, երկրաշէն է, հողագործ է, մշակ է, արհեստաւոր է, ազնիւ փաճառական է: Այսօր ի՞նչ քաղաք կայ Վրաստանումը, որ հայերի շէնացրածը չըլինի. ո՞ր աէրութիւնը կարող է

օգտակարութիւն գտնել տւազակ քրդերի մէջ և նրանց հրաւիրել իր երկիրը: Նրանք կրմնան ազատ, քանի որ ազատ լեռներ և արօտներ շատ կան գեռ ևս, բայց հէնց որ այդ տեղերը բռնեն աւելի խաղաղ և օգտակար ժողովուրդներ, քուրդը տնտեսական ստրկութեան մէջ կրնկնի և կրկորչի տիրող ժողովրդի մէջ, առանց որ և է պատմական հետք թողնելու իրանից յետոյ: Ուզենք չուզենք, այս պիտի լինի քրդի փախճանը, որովհետեւ նա քաղաքակրթւել չի կարող, առանց քրդութեան անուան և նշանը կորցնելու, որովհետեւ նա չունի քաղաքակրթական ոչ մի հիմք, ոչ մի դրամադուրա, նա ազգութիւն չէ, պատմութիւն չունի: Իսկ հայն ազգ է և նշանաւոր ազգ, պատական և ազնիւ ազգ, ամեն ազգերի համակրութեանը և սիրոյն արժանի, հայը մարդկութեան ամենապատական անդամներից մէկն է, թշնամի լինել հային, կրնշանակէ թշնամի լինել մարդկութեանը:

— Իսկ այդպէս կասէք, ի հարկէ, իբրեւ ազգասէր, բայց պէտք է մի քիչ էլ քննական հայեցոյք ձդել հայի թերութիւնների վրայ: Քրդի հետ համեմատաւ՝ ի հարկէ որ հայը ամեն կողմով բարձր է նրանից, և գուցէ ասիական բոլոր ազգերից էլ բարձր է, բայց այսօր նա շփուում է եւրոպական ազգերի հետ, գերմանացու, ֆրանսիացու, անգլիացու, և մենք մեր աչքով տեսնում ենք, որ հայն սկսում է շլանալ, գլխովին անձնատուր է լինում լուսաւորեալ ազգերին, չի հասկանում, որ լուսաւորութիւնը ազգի համար է, և ոչ թէ ազգը՝ լուսաւորութեան. նա փոխանակ ուրիշից մի բան առնելու և աւելացնելու իրանի վրայ, իրանը կորցնում է, ուրիշներ գերցնում. . . Ո՛ր կրտսնէ մեզ այս ընթացքը, եթէ ոչ դարձեալ դէպի կորուստ:

— Եթէ դու այդպէս ես մտածում, դրանով արդէն ապացուցանում ես, որ այդպէս մտածողներ շատ կան:

Սյդպէս մտածող ժողովրդին ոչ մի վտանդ սպառնալ չի կարող: Սյնտեղ է երկիւղը, որտեղ երկիւղ չըկայ, այսինքն՝ մի ժողովուրդ, որ երկիւղ ունի, նա կարող է և զգոյշ լինել: Ես ինքս էլ եմ մտածել այդ մասին և մեզ ամեն վտանդից ազատ պահելու միակ հնար գտել եմ հայ կիներ, որի վրայ պէտք է դարձնենք մեր բոլոր ուշադրութիւնը:

— Ի՞նչ կարող են անել կանայք:

— Սղղային կեանք ասածդ մայրերի ձեռին է. սերունդ կրթող և մեծացնողը նրանք են. նրանք են տան հողին, գերդաստանի հողին: Եթէ բոլոր մայրերը այնքան հայրենասէր և ազդասէր լինին, որ իրանց զաւակների հետ մայրքենի լեզուով խօսեն, նրանց սրտի մէջ աղղային պատուասիրութիւն ձգեն, հայրենիքի սէր, էլ այնուհետեւ ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ:

— Բայց ո՞ւր է. մենք չունինք այդ տեսակ մայրեր:

— Մենք շատ բան չունինք, բայց ինչ որ չունինք, կարիքը կատեղծէ: Գլխաւորը մեր արամադրութիւնն է, որ ունինք: Քանի որ արամադրութիւնը կայ, մնացածն իր կարգին կըլինի: Մենք չենք կարող, օրինակ՝ մօղայից աղատուել, թէ և ըստ ինքեան դա մի յիմար բան է թրւում, բայց որ թուրքը մօղայի չի ենթարկուում, այդ էլ չի նշանակում, թէ ուրեմն մեզանից խելօք է: Բանն այստեղ ենթարկւելն է, ճիւղն է, յառաջ գնալն է: Ենթարկւելով մօղային, ենթարկւում ենք և լաւագոյն բաներին, մինչդեռ մօղային չենթարկւողը զուրկ է մնում լուստւորութեան նաեւ օգտակար կողմերից: Մենք մեր աչքով տեսնում ենք, թէ հայերէնն ու փրայերէնը ինչպէս են դուրս մղւում մեր ազգա կանանց բերաններից, մեր տներից: Սյսքանը բաւական է, որ մեր մէջ նախանձ զարթի, պատուասիրութեան և ազգասիրութեան զգացումն և սկսենք դրա առաջին առեկը աղջկանց դպրոցներ բանա-

լով, թատրոն հիմնելով, գրականութիւնը ծոխացնելով, վերջապէս ուրիշ ազդեցիկն մեզ օրինակ առնելով, նրանց վարմունքը մեզ համար խօսակցութեան նիւթ շինելով: Պէտք է հետաքրքրուենք և իմանանք, թէ ճորպիսի ճանապարհ ունեն բռնած մեր վիճակումն եզոյց եւրոպական ազդեցը, այն ազդիւրը որոնք մեռած տեղից դուրս են բարձրացրել և ազդայնապէս ապրելու իրաւունք են յայտնում: Նրանք այսօր յառաջ են գնում ոչ մեզ նման կուրօրէն, այլ զիտակցաբար, մի նախամտածւած և նախագծւած սուղութեամբ, և շատ չի քաշել այդ ազդերը կանցնեն առաջնակարգ զօրեղ ազգերի կարգը իրանց զարգացումով և զիրքով:

— Իրա համար մեզ հարկաւոր է մեծ զոհաբերութիւն. եղածը շատ քիչ է: Ինչ զոհաբերութիւն որ առնում ենք բոլոր հայերս միասին, մի յոյն, մի իտալացի, մի սերբ, մի մաջառ, մի ռումինացի, վերջապէս մի դարադադցի և բուլղար դրա տասնապատիկն է անում:

— Առաւել լաւ, այդ մեր բախտիցն է, որ դրանք այդքան ազդասէր են և հայրենասէր: Իրան ազնիւ հայ համարողը կարող չէ գրանցից յետ մնալ. հարկաւոր է միայն, որ նա իմանայ, թէ այդպիսի մարդիկ կան աշխարհիս երեսին և այդպիսի ազգեր...

— Բայց շատ բան մենք չենք կարող անել, շատ էլ որ ուղենանք: Մեր ազգի բարոյական և մտաւոր զարգացման ղեկը մեր հոգեւորականութեան ձեռին է, իսկ մեր հոգեւորականութիւնը չունի մի Եղիշէ, որ ասէ «բոլոր աշխարհիս միտք են կառավար», դրանք ոչ միտք են ճանաչում և ոչ աշխարհ, դեռ միջնադարեան խաւարի մէջ են խորխուրում և հնացած յնուրքներ պաշտպանում:

— Հոգեւորականութիւնը այդ վիճակումը մնալ երկար չի կարող, նա ուշ թէ վաղ ազգի կարծիքը կրճանաչէ և նրա հետ կրմիանայ սերտ սիրով: Քեզ օրինակ Խրի-

մեան հայրիկը, որ իր նմանը չունի նոյն իսկ աշխարհականների մէջ: Քահանան աշխարհականի պաշտօնեան է, նիւթապէս նրանից կախում ունեցող, նա ըստ ամենայնի պէտք է յարմարի իր ծուխի հասկացողութեանը, եթէ ոչ՝ հացից կըղըկէ: Եպիսկոպոսը պիտի համապատասխանէ աղգի պահանջներին, եթէ ձգտումն ունի առաջնորդութեան, պատրիարքութեան և կաթողիկոսութեան, և ի՞նչ չունի այդ ձգտումը: Ուրեմն դրանք ուզեն չուզեն՝ աղգի պահանջն յայտարար պիտի հանդիսանան: Աղղի պահանջը, կարիքը ամենին իր դերը կը յատկացնէ, և ինքն իրան կըլինի, առանց մեր միջամտութեան...

— Երանի՜ ձեզ, որ այդչափ լայնասիրտ էք. ես շատ նեղսիրտ եմ, և շատ անգամ քիչ է մնում յուսահատւեմ...

Այս խօսողները, թէև հասակով ծեր, բայց մաքրով զարգացած և թարմ սրտի տէր տղամարդիկ էին և ճշմարիտ հայրենասէր: Սրանցից մէկը հալսվերդեանն էր, ինչով թաքցնէր այդ հանճարաւոր հայի անունը: Սրա դռները բաց էին բոլոր նորահաս երիտասարդների համար, որոնք միշտ նրա խորհրդին էին դիմում, երբ ուզում էին մի նոր բան սկսել, մի նոր միտք իրագործել: Եւ նա ուրախանում էր շատ, երբ տեսնում էր նոր երիտասարդների մէջ մի անկեղծ ոգևորութիւն և անսանձ եռանդ: Մարդ էր, բառիս բուն նշանակութեամբ, մարդ կառարեալ, անխիւ սրտի ու մտքի տէր, և չըկար մի այլ ոք, որ նրա չափ ասուածային զօրութիւն աղղէր իր խօսակցի վրայ: Տողերիս գրողը բոլորովին գիպւածաբար և բախտի բերմամբ միայն արժանացել է ենթարկելու այդ վեհագոյն մարդու ընդունելութեանը. նմանին պատահած չեմ կեանքումս ոչ առաջ և ոչ յետոյ: Նա գեներալ էր, իսկ ես ձուլարանի աշակերտ, չըգտնւմ ինչ էր ասել իմ մասին

նրան պ. չ. Էնթիաճեանցը, և նա փափազ էր յայտնել տեսնել ձուլարանի տարօրինակ աշակերտիս: Եւ ես գնացի: Երբ մտայ փառաւոր դահլիճը, իբրեւ մի վայրենի՝ չքի- աէի որ կողմ ուղղեմ քայլերս, վերջապէս մի բարի տի- կին ինձ առաջնորդեց դէպի ասանձնասենեակը, ուր մեծ մեծ և շքանշաններով զարդարւած հիւրեր կային նստած. ես աւելի շշկւեցայ... բայց նա ինձ շուտով պաշտպա- նեց և ձեռքիցս բռնելով հայրական զթուլթեամբ նստե- ցրեց իր կողքին դիւանի վրայ: Այնուհետեւ ես ինձ ա- պահով զգայի՝ զտնելով մի երկնային հովանաւորու- թեան տակ: Բայց տեսնելու բան էր, ինչպիսի պատկա- ռանքով էին վերաբերուում իմ դիմաց հեռու նստած խոշոր մարդիկը դէպի այն անձը, որի կողքին միայն ես էի արժանացել նստելու, չընայած, որ այդ ժամանակ դեռ սարուկներն ազատւած չէին Ռուսաստանում: Այսքանը բաւական է կարծեմ իմանալու համար, թէ ուրեմն որ- պիսի մարդ կըլինէր հախվերդեանը: Երբ հեռացայ այդ մարդու մօտից, մի ամբողջ շաբաթ ես դժւածի պէս էի, ես զտնուում էի մի բոլորովին երեակայական աշխարհում: Այնուհետեւ իմ մտաւոր զարգացման ընթացքը այլ ուղ- ղութիւն ստացաւ, դէպի վսեմը և բարձրը, այնուհետեւ ես խեղդուում էի ստոր վարուց տէր մարդկանց մթնոլոր- տում, պահանջում էի, որ ամենքն էլ մի մի հախվերդեան լինին, բայց հետեանքն այն էր լինում, որ ես դասնում էի մարդկանց աչքում մի ինքնահաւան և կոպիտ արա- լած: Եկ հասկացրու դրանց, որ կողտուլթիւն չէ իմ վարմունքս, այլ միայն մի պահանջ, որ դուք, ով պա- տուական պարոններ, մի փոքր ազնիւ լինիք, անկեղծ լի- նիք և մարդու վայել մարդավարութիւն ունենալ:

Ժամանակի բարի ողին արեւի պէս մի բան է. նա երբ որ զարթում է, արեգակի պէս է ծագում, իր յոյսը սփռում է ամենի վրայ, ամենքն էլ տաքանում են: Դրը քիչ, Դրը շատ, նայած թէ Դրն է արեւագէտ գործնում, և Դրը ծմակում: Եւ ծնում է ամէնը ընդունակը, և չորանում՝ չորանալուն:

Մի և նոյն միտքը, մի և նոյն դադափարը միաժամանակ արծարծում են իրարից շատ հեռու եղած տեղերում: Սյս է պատճառը, որ ժամանակակից մարդիկ բոլորն էլ մի և նոյն բանն են ասում, միայն այլ ձևերով և բառերով: Միտքը թռչելու յատկութիւն է ունեցել միշտ, բայց մեր դարում մարդկային միտքը ելքարականութեան վրայ հեծած, մարմին առած՝ թռչում է աշխարհ և մի ակնթարթում աշխարհիս բոլոր մասերը իրար հետ կապում: Ինչ որ մեր մտքովը չի անցել, կանցնի մի ուրիշի մտքով, և յոյսի պէս կը տարածւի ամենի վրայ: Ինչ որ այսօր անհնարին է, փողը հնարաւոր է դառնում, որովհետեւ այդ հնարքը եթէ մի աշխարհում չի գտնւում, գտնւում է մի այլ աշխարհում և դառնում ամենի սեփականութիւն: Ազգ ասածդ, մանաւանդ եթէ մեզ պէս մի խեղճ ազգ է, բոլոր յոյսը եթէ իր վրայ դնէ, կարող է յուսահատուիլ իսկոյն, բայց իր յոյսը ոչ միայն իր, այլ և մարդկութեան վրայ դնելով՝ կարող է յուսալ, որ նրա վրայ տարածւած բարեքից ինքն անմասն չի մնալ: Եթէ մարդկութեան երջանկութիւնը պահանջում է ազատութիւն և այդ ձգտումն ունի ամեն մի անհոտ, ապա ուրեմն հայի համար բացառութիւն լինել չի կարող, ուզի չուզի նա էլ կունենայ այդ ձգտումը իբրեւ մարդկութեան մի հիւլէն: Ամենայն ինչ, որ ընդհանուր մարդկային է, նոյնն ունենալ ամեն մարդու իրաւունքն է: Հայը կարող չէ գիտութիւնից զուրկ մնալ, իսկ գիտութիւնն արդէն ինքն ըստ ինքեան ազատութեան մի գուռն

է, ամենայն բռնութիւն, ամենայն ուժ, պէտք է զիտութեան ուժի առջև գլուխ խոնարհէ: Կրկորչեն, կանհեաւնան միայն այն ազգերը, որոնք զիտութիւնից և նրա պահանջներից կրփախչեն: Ազանդ, բոշայութիւն, խաչողութիւն, քրտութիւն, բաշխողութիւն, թուրքութիւն դրանք բոլորը կը ջնջւեն, կը վերանան, և ախրող կը հանդիսանայ միմիայն զիտութիւնը, որ բոլորի միաքը սրբում, մաքրում է անասնական յատկութիւններից և մարդկանց միացնում է միակերպ մտածութեամբ: Նոյն իսկ մի և նոյն ազգի զանազան անպամները, կրօնով և ազանդով բաժանւածները միմիայն զիտութեամբ կարող են միանալ իրար հետ, որովհետեւ ազանդը բաժանող է, իսկ զիտութիւնը միացնող, որովհետեւ մէկի ազանդը միւսի համար սուտ է, իսկ սուտ և ճշմարիտ զիտութիւն չը կայ, այլ մէկ և այն բացարձակ ճշմարիտ: Ո՞ր զիտական կաթոլիկը կասէ, որ ինքը Ֆռանդ է և ոչ հայ, կամ ճոր ազես հայի հայ անւանելուն կարելի է նշանակութիւն տալ, քանի որ նա հայ ասելով լուսաւորչական է ուզում տեսնել:

Հայոց դպրոցներում, ուր էլ որ կային, զիտութիւն չէր աւանդւում, այլ միայն կրօն և հայոց լեզու: Գիտութեան տարերք կարելի էր ձեռք բերել միմիայն զիմնադներում: Բայց զիմնադ էլ մէկ հատ կար և այն էլ միայն Թիֆլիսում: Միւս տեղերում կային միայն «գաւառական» ասուած դպրոցներ, որտեղից դուրս էին գալիս հասարակ գրագիրներ: Մեր դպրոցները տալիս էին մանթեր և ախրացուններ, իսկ պետութեան դպրոցները՝ գրագիրներ: Տգիտութեան մէջ այդ կարգի գրագէտները միմեանցից յետ չէին մնում, իսկ անբարոյականութեան կողմից պապիրները զերազանցում էին ախրացուններին, որովհետեւ ժողովրդի ազաններն էին նրանք, նրանցից էին լինում թարգ-

մաներ, և զանազան աստիճանի ոստիկաններ, մինչև մօզ-
րովներ անդամ, որոնք զարհուրելի բաներ էին: Խառար էր
մեր աշխարհքը, բացարձակ խառար: Յիսնական թւական-
ներին Թիֆլիսի Կլասիքական զիմնազը հետզհետէ լաւ
աշակերտներ սուաւ, և մեր յիշած ժամանակը այդ աշա-
կերտներէց կազմեցաւ մի լաւ խումբ: Այդ խումբն ինքն
իրան անւանել էր «Սիրազումար» ժողով և սկզբումը մեծ
հոանդով մասնակցեց թէ զրականութեան և թէ ուսուց-
չութեան: Գրականութեան մէջ զրում էին նոյն իսկ աստ-
ղաբաշխութեան վրայ (Ս. Երիցեան), կատաղի կերպով
յարձակուում էին ազգային նախապաշարմունքների վրայ
(Գ. Տէր-Աղէքսանդրեան): Այս երկուքը ամբողջ խմբի
մէջ ամենից նշանաւորն էին, սրանք կազմեցին և Հայե-
րէն ընթերցարան, հնչական մեթօդ մաղրին և սկօեցին
միւս ընկերների հետ ձրի դասատուութիւն անել ծխական
դպրոցներում: Սրանց խումբն էր յառաջ մղում և Ներ-
սէսեան դպրոցի սաներին դէպի զրականութիւն և դէպի
թատրոն: Այս միջոցին նոյն սաներից երեւելի հանդիսա-
յան Գ. Մուրադեանց և Պ. Պօշեանց, երկուսն էլ տա-
ղանդաւոր և շնորհալի քաջ Հայկաբան և մօլեռանդ աղ-
դասէր: Ես այդ ժամանակ մօտիկ էի ամենքին էլ, ամենքն
էլ, չըզիտեմ ինչու, մի առանձին սէր ունէին դէպի ինձ.
և ես յայտնի էի զրանցում, որպէս «մեր Ղազարը»: Ես
սիրում էի աւելի «Սիրազումար ժողովը» անդամներին:
Նրանցից շատերը իրանց աները թողած՝ առանձին տեղ
էին ապրում ընկերութեամբ, իբր իրանց պատրաստելու
համար ապագայ ուսանողական կենսքին, թէև քչերը
զնաղին համալսարան: Իրանց շրջանում ես ամեն անգամ
մի նոր բան էի սովորում, մի նոր բան էի լսում, և հե-
տըզհետէ իմ մէջ սաստկանում էր ուսումնառութեան
փափագ: Իրանցից ոմանք թէպէտ զրականութեան չէին
մասնակցում, բայց իբրև ուսումնաւարտ պատանիք շատ

չնորհալի էին և ինձ համար մէկ մէկ փրկիսօժիտ: «Ա՛խ, ե՛րբ կըլինի, ասում էի, որ ես էլ սրանց չափ բան գիտե- նամ»... Թէ նրանք շատ հետամուտ էին ժողովրդի կեան- քին, գիտէին հետազօտել, ուսումնասիրել, դրա ապացոյցն այն է, որ դրանցից մէկը (Մ. Քօչարեանց) առաջինը հա- ւաքեց հայկական առաջները և տպեց «Կռուկէի» մէջ, Գ. Տէր-Աղէքսանյանի Թիֆլիսի Մտաւոր Կեանքը, Երկը- եանի չնագէտ դառնալը, և այլն: Եւ թէ այն ժամանակը ինչպէս էին նայում ժողովրդի կեանքի վրայ, այստեղ բե- րենք նրանց խօսակցութիւնից մի կտոր, որին ես ունկըն- ղիր էի:

Մայիսին էր, 186... թւականի: Երկու պատանի, գիմնադական հագուստով՝ նստել էին Թամաշէի քար- ւանսարի երրորդ յարկի պատշգամբում և նայելով հրա- պարակումն անց ու դարձ անող մարդկանց վրայ, իրանց հասկացողութիւնով որոշում էին. թէ ո՞վ ի՛նչ մարդ կըլինի:

—Նայի՛ր այն փորը հաստ մարդու վրայ, այնքան չաղացել է, որ հազիւ է կարողանում ման դալ: Դա երեւի շատ է հարստացել:

—Երեւի շատ փող ունի, որ այդ ահագին փորը լցնում է... բայց զիտե՛ս, հիմա հաստ փոր ունենալը մօ- դա է վաճառականների համար: Դրանք Մօսկւայում հաս- տափոր վաճառականների հանդիպելով, այն եղբակացու- թեանն են եկել, որ ում փորը հաստ չէ, նա կարող չէ հարուստ լինել: Շատերը փալաններով փաթածում են փորըները, որ հաստ երեւան, որ իրանց հաւատացող և ապրանք ու փող տւող շատ լինին: Շատերն ուրիշի փո- ղերմն են հաստացնում փորըները, յետոյ սուտ սնան- կանում: Նայի՛ր ահա այն միւս հաստափորի՛ն... Ասում են տասնըհինգ միլիօն մանէթ փող ունի, բայց աղգային

որ և է հաստատութեան համար տասնըՀինգ դոօշ չի տալիս, այնքան խող է...

—Հէնց խողի նման էլ է. վզի'ն նայիր, չի կարողանում այս ու այն կողմ թեքել. խողի նման ամբողջ մարմնով է շուռ ու մուռ զալիս: Բայց տեսնում ես այն բարձրահասակ մարդուն, որ զլիւին շլեպառ ունի. երեւի դա մի ուսումնական մարդ է և դուք է նոր է եկել Ռուսաստանից կամ արտասահմանից:

—Ի՞նչ ուսումնական, դա մի խոհարար է... Հիմա ո՞վ չի շլեպառ գնում. այդ տառջ էր, որ շլեպառ միայն ուսումնականի զլիւին էր բաղմում... Նայիր այն խմբով անց կենող կանանցը. ով գիտէ Հէնց այսօր են իրանց զաթիբէքը վերցրել. Հիմա տալմով են ման գալիս:

—Այդ լաւ միտըս գցեցիր: Գիտե՞ս, ես ինչ եմ նկատել: Նայիր ահա այն մարդին, տե՛ս, զլիւին Ֆուրաշկա ունի, բայց միւս բոլոր հագուստը առաջւանն է—մի և նոյն կաբան, մի և նոյն արխալուխը, և մի և նոյն խալազի լափչէքը: Հիմա մոտիկ տուր այն կնիկներ, տե՛ս զլուխը կապած է քաղքցնակ, իսկ ոտներին կիսաօշկեկներ ունի: Այս իմ գիւտն է, ես նկատել եմ, որ աղամարդիկ զլիւիցն են սկսում փոխել, իսկ կանայք՝ ոտքից:

—Այդ լաւ գիւտ ես արե՛լ... Էլ ուրիշ ի՞նչ ես նկատել, կամ կարող ես բացատրել դրա պատճառը:

—Կանայք խորամանկ են, շատ խորամանկ, օձի ու սատանայի խելք ունին, բայց տղամարդիկն այնքան յիմար են և ախմախ, որ զրանց անխելք և միամիտ են համարում: Կանայք առհասարակ ներքեից վերե են զընում, և տակից դէպի երեսը: Իսկ տղամարդիկ վերեից ներքե են դնում և երեսից դէպի տակը: Իրանք զլիսարկից յիսոյ պալտօ են հագնում կաբի վրայով, յետոյ կաբին տալիս են մի տեսակ սերթուկի ձև, և այսպէս քիչ քիչ հասնում են ոտներին, շաւարների նեղացնե-

լուն: Սօսընձած շապիկները ամենից յետոյ են հագնուամ, այն էլ կանանց ստիպամբ: Իսկ կանայք, կօշկից յետոյ սպիտակեղէնն են փոխում, ամենից յետոյ զաթիւբան, իսկ զլուխները մնում է անփոփոխ: Գլխները չեն փոխում նրա համար, որ երկար ժամանակ ճակատակալով պահած զլուխը շատ տգեղացած է լինում: Եթէ մի զօկ կամ զարարողիկ կնկայ տեսնես զլիարաց՝ կըսարսափես: Նրանց զլիսի փաթաթոյնները իրանց ծածկած երեսի մասերը զըրկում են աճելուց և բոլորովին մաշում: Նայում ես այտերին՝ կարծում ես մի մի վարդ են բաց էլած, իսկ միւս մասերը — թառամած, ճրմշկած: Քաղաքի կանանցն էլ ճակատն է մաշում և զրկում աճելուց:

— Բայց կարծեմ կանայք զխտակցութեամբ չեն աւնում, ինչ որ անում են, թէկուզ խորամանկութեամբ լինին անկիս. այլ թուած դնում են զէպի որ կողմ տաւում է ընդհանուր հոսանքը, ժամանակակից մօդան, թէկուզ այդ մօդան մի հրէշական բան լինի, ինչպէս օրինակ՝ այժմեան կրիտիկներ:

— Դրան խօսք չըկայ, բայց բանը նրանց արագ փոխելուքն է: Մինչև աղամարդը իր գտակը կրփոխի, կինն արդէն ամենայն բան փոխած է լինում: Տղամարդը նայում է իր վիճակին, արհեստին, հասարակական դիրքին, կարողութեանը, համբարին, իսկ կինը չունի որ և է հասարակական դիրք. նա թէև մարդու ընկերուհին է, բայց աղատ է մարդու ընկերավարական նախապաշարմունքներից. կանայք ոչ մի իրաւունք չունենալով, ոչ մի պարտականութիւն էլ չեն զգում. խարազի կինը կարող է մի և նոյն հագուստը հագնել, ինչ որ քաղաքապետի կինը. նրանք իբրև կանայք հաւասար իրաւունքի տէր են, այսինքն քաղաքացիական իրաւունքի առջև բոլոր կարգի կանայք միմեանց հաւասար են, ինչո՞ւ ուրեմն հաւասար էլ չըհագնւին: Կանայք իրանք զողկոզող փոխւելով՝ ի-

րանց զաւակներին փոխում են աշխարհ. նրանց պէրջին մօզայի հագուստովն են պահում և մի բոլորովին փոխւած նոր տարազով նոր սերունդ պատրաստում:

— Բայց նկատե՞լ ես, որ դրանք միայն հագուստով չեն բուսականանում, փոխում են և իրանց նիստ ու կացը, իրանց վարք ու բարքը...

— Օ... Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ... Թող որ ասեմ, և զու ախանջ գիր. այդ իմ մասնագիտութիւնն է: Մեր կանայք հիմա էլ առաջւանդ չեն: Հին տանտիկնութիւնը դրանք հնադարան են ձգել: Կործեն խօսք մէկ արած լինին, որ իրանց վզից թօթափեն ազամարդկանց լուծը: Տղամարդու բոլոր կարողութիւնը այժմ կինն է յափրշտակում և նրան պարսքի տակ գցում: Անճնատուր են եղել յօտօի, թղթախաղի, հաւաքւում են սրա նրա մօտ և ամբողջ գիշերներ անց կացնում: Ամենքն էլ զանգաւում են իրանց մարդկերանցից և ծիծաղում են այն կանանց վրայ, որոնք պաշտպանում են իրանց մարդկերանցը: Վարքի ազատութեան կողմանէ ուղղում են գերազանցած լինել իրանց մարդկանցը: Լինելով անուս և աղէտ, լըրբութիւնը լուսաւորութիւն են համարում:

— Այդ շատ ցաւալի բան է. մեր բնաանեկան կեանքը կարող է քայքայւիլ, եթէ այսպէս շարունակւի:

— Դրա համար երկար ժամանակի կարօտութիւն չլիայ: Տղամարդիկ փոխւում են տարիներով, իսկ կանայք — օրերով: Դրանք շուտ են հասունանում ինչպէս մարմնով, նոյնպէս և մաքով: Տասնըջորս տարեկան աղջիկն արդէն մայրութիւն է անում, մինչպէս 14 տարեկան արդան դեռ մի անպէտք աղուշ է: Կանայք աւելի խօսում են քան թէ մտածում. դրանք խօսելայաւ ունին: Իրանց զաւակների հետ մօզնի լեզւով են խօսում: Թէ որտեղ և ի՞նչպէս են սովորում մի օտար լեզու, մարդ չի նկատում: Դրանք չեն սովորում, այլ ուղղակի խօսում են: Սխալ են

խօսում թէ ուղիղ, այդ նրանց հոգը չէ, այդ ժամանակը կը շակէ... չիմա ինչ որ սկսել են հայերէն ներկայացումներ տալ, այդ բանը բաւական մեծ սղոցեցութիւն է արել կանանց լեզւի վրայ: Այդ փոփոխութիւնը դեռ այնքան քիչ է, որ իսկոյն աչքի է ընկնում: Օրինակ՝ էլ չեն ասում—կուլի, կօսէ, սկսել են գործ ածել—բայց, որովհետեւ, կարելի է, ժամանակ, ինչպէս, էսպէս, էնպէս... էլ չեն ասում ե ի ս, այլ ե ս, ասում են՝ մեզ, ձեզ, և ոչ՝ միզ, ձիզ...

—Բայց զիտե՞ս, կանանց այդ յատկութիւնից կարելի էր մեծ օգուտ քաղել...

—Ի՞նչպէս:

—Այդ գիւրաթեքութիւնը, այդ գիւրազգացութիւնը, այդ սրամտութիւնը, այդ ճարպիկութիւնը որ դրանցում կայ, տղամարդիկը չունին: Այն սղոցեցութիւնը որ մայրերն ունին նոր սերունդ կը թելում, այն սղոցեցութիւնը որ օրիորդներն ունին երիտասարդների վրայ, մի մեծ բարոյական ուժ է, ահագին ուժ. այդ ուժը ինչպէս փաստ, նոյնպէս և օգուտ կարող է բերել: Նարկաւոր է միայն, որ այդ ուժի վրայ առանձին ուշադրութիւն դարձնենք և մեր օգտին ծառայեցնենք: Մի նոր և օգտակար միտք, մի նոր գաղափար, շարժումն, դրանք աւելի շուտ կը տարածեն և կը մտցնեն կեանքի մէջ, քան թէ սղամարդիկ, որոնք մեծ մասամբ գաղափարական և իդէալական աշխարհից հեռու են, մինչդեռ կանայք շարունակ այդ աշխարհումն են պարտւում: Եւ այս կրկին, եթէ դրանք բարեկիրթ հայ ծնողի, հայ վարժուհու և դաստիարակչու հաշու պաշտօն կատարեն: Որովհետեւ, ինչպէս ասած է «Կաթի հետ մտածը հոգու հետ դուրս կը գայ», մայրեր պէտք են մեզ, որ կաթի հետ տան այն, ինչ որ մեզ հարկաւոր է:

—Դրա համար ուսումնարաններ են պէտք իդական

սեռի, միջնակարգ դպրոցներ, որ մենք չունինք: Եւ այս ի՞նչ տարօրինակ բան է, ճշմարիտ, ոչ մի հատ աղջկանց դպրոց չունենք: Խեղճ Թադեոզեանը շարունակ կանչում է—կրթութիւն կանանց, դատարարակութիւն օրիորդաց,—բայց նրան լսող չըկայ: Մինչդեռ մեր աչքով տեսնում ենք ահա, որ մեր աղջկէքքը Հակագգային կրթութիւն ստանալով՝ օտարանում են բոլորովին և մի նոր և օտար սերունդ պատրաստում:

—Իրաւ որ զարմանալի է, տեղից վեր կենողը ավագոց դպրոց է բաց անում, իսկ աղջկանց վրայ ուշադրութիւն դարձնող չըկայ: Պէտք է այս միտքն արծարծել և հօգ տանել այս մասին: Եկ այսօրւան մեր ժողովը այս խնդրին նւիրենք...

Մինչդեռ զեմագիտաները կեանքի երևոյթների վրայ էին ուշադրութիւն դարձնում և նրանց մասին խորհում, խօսում, սեմնարիստները աւելի կրօնի վրայ էին դարձնում ուշադրութիւն: Նրանց գրաւում էին աւելի կրօնական վէճերը, և ճիւսիսափայլի քարոզած կրօնական վերանորոգութիւնը մի տեսակ վերանորոգութիւն էր ձգել դպրոցական աշակերտների կրօնական հայեացքների մէջ:

Յին վանական կրթութիւնն ևս մի տեսակ ստրկական լուծ էր, պէտք էր նրանից նոյնպէս ազատել: Կեանք և դպրոց մի ուղղութեամբ չէին ընթանում, դպրոցում լրսւածը հերքւում էր կեանքի մէջ: Մինչդեռ վարժապետները շարունակ կռիւ էին մղում ճիւսիսափայլի յայտնած ազատ մաքերի դէմ, նոյն վարժապետների աշակերտները անյաղ սիրով ճիւսիսափայլ էին կարգում և նրա քարոզած հոգւովը ստորբւում: Միշտ այսպէս է երկու թերթից ազատագոյնն է ընտրում նոր սերունդը. արդիւքը միայն աւելի է քաղցրացնում նրա բովանդակութիւնը:

Իմ յիշած ժամանակ Ներսէսեան զպրօցի նորաւարտ աշակերտները բոլորն էլ չիւսիսափայլին էին համակրում և սրտասրօփ սպասում Կոմս Էմմանուէլի գրեածներին:

Մինչև չիւսիսափայլի լոյս տեսնելը մեղանում կրօնը անձեռնմխելի էր, քննադատութեան տակ ընկնել չէր կարող: Այդ տեսակ խնդիր բարձրացնելը ինքն ըստ ինքեան ունէր մեծ նշանակութիւն: Կրօնը քննադատութեան առարկայ չլինելով՝ ոչ ոք իր կրօնը չի փոխիլ: Բայց նրա կաշկանդած միտքը կարձակւի, ծէսը, սովորութիւնը, աւանդութիւնը, իրաւարանութիւնը և դաւանաբանութիւնը միմեանցից կրղատէ, կորոշէ, և շատ աւելորդ նախապաշարմունքից կազատւի:

— Եթէ այդ մարդը ճշմարիտ ազգասէր մարդ է, ինչու է լուծերականութիւն քարոզում, — հարցնում էր մի պարոյական միւսին Նազարեանցի մասին:

— Նրա քարոզածը լուծերականութիւն չէ, այլ վերանորոգութիւն Սւտարանի լուսով, առաքելական պարզ և մաքուր կրօն, որպէս զի նա բարոյապէս ազդել կարողանայ կրթւող սերնդի վրայ: Ըշմարիտ ազգասիրութիւնն էլ հէնց այս է իմ կարծիքով: Նա տեսնում է, որ մեր հոգևորականութիւնը կորցրել է իր հեղինակութիւնը, եկեղեցական շատ ծէսեր կորցրել են իրանց սրբութիւնը, ժողովուրդի մի մասը սառել է իր եկեղեցուց, զրա համար էլ նա առաջարկում է եկեղեցուն տալ այնպիսի կազմակերպութիւն, որ պատկառելի լինի ամեն կարգի հայերի համար և դէպի իրան քարշէ նրանից հեռացած զաւակներին:

— Բայց ժողովուրդը դեռ այնքան հասունացած չէ, որ կարիք զգար վերանորոգութեան: Այդ բանը կարող է աւելի մեծ գժտութիւն յարուցանել և աւելի կտոր կտոր անել ժողովուրդին:

— Ուրեմն եթէ ժողովուրդը դեռ քնած է, պէտք չէ՞

նրան զարթեցնել, այլ օրօրել, որ աւելի խօր քնի: Մեր եկեղեցին զարեբի ընթացքում շարունակ փոխւելով և մօտենալով աւելի զօրեղ կրօններին՝ մի մաղ է մնացել, որ նրանց հետ միացանայ և հուլ գնայ նրանց մէջ: Ինչո՞ւ վաղօրօք աչք չբռնալ և սպառաց վտանգի առաջքն առնելու համար չբհաստացնել այդ նրբացած անջրպետը: Եւ այդ կարելի է միայն սրբելով մեր եկեղեցին հակա-առաքելական և հակալուսաւորչական նորամուծութիւններէ: Իմ կարծիքով՝ Նազարեանցի առաջարկութիւնը խոր մտածւած և մեծ հեռատեսութեան արդիւնք է: Մի՞թէ լաւ բան է անկրօնութիւնը, մի՞թէ լաւ բան է իր եկեղեցուց չլսողականութիւնը: Ինչո՞ւ ենք ծիծաղում մենք մեր կրօնուսոյցի վրայ, ինչո՞ւ չենք հաւատում նրա տաճներին:

— Ի՞նչպէս չծիծաղենք նրա քարոզած յայսմաւուրքական առասպելների վրայ:

— Տեսնում ես, ուրեմն որ մեր կրօնուսոյցը կրօնն առասպելից զատել չգտնուի, կրօնի բարոյական սկզբունքը չըզկտէ զանազանել նրա արտաքին ձևից: Իսկ սրա հետեանքն այն է լինում, որ մեր գաղութներից գուրս են գալիս անկրօն մարդիկ, անկրօն քահանաներ: Եթէ քահանան իր պաշտօնի սրբութեանը չի հաւատում, էլ կարող ես պահանջել, որ նա լինի ջերմեռանդ քրիստոնէի և ազնիւ ու առաքինի մարդու կենդանի օրինակ իր ժողովրդի համար: Կարճը ես հիմա մեր մէջ մի առաքինի քահանայ գտնել: Բայց չէ՞ որ անբարոյականութիւնը ինքն ըստ ինքեան մի թոքախտ է և ազգասպան: Անբարոյական ազգերը, անկրօն ազգերը երկար կեանք ունենալ կարող չեն: Ոչ թէ ամեն մարդ պարտաւան է հաւատալ և սիրել իր եկեղեցին ինչ յատկութիւն էլ որ ունենայ նա, այլ ամեն եկեղեցի պիտի այնպիսի յատկութիւն ունենայ, որ չըտիրել անկարելի լինի: Ես ի՞նչպէս յարգեմ, պատւեմ, օրինակ կենձօին, Գագօրդիին, Բագի-Բուտիին,

քանի որ դրանք իմ արհամարհանքից անգամ ստոր են: Ոչ թէ ես պարտական եմ քահանային յարկելու, այլ քահանան այնպիսի անձնաւորութիւն պիտի լինի, որ ուզեմ չուզեմ, յարգեմ նրան: Ասեա՛ծ է՝ «Շարաթ վասն մարդոյ արարաւ, և ոչ մարդ վասն շարաթու»: Այսօր ամեն ինչ մեղանում զլիւիւսը է՝ դրեա՛ծ: Հոգեւորականութիւնը ազգի և եկեղեցու պաշտօնական լինելով՝ տէր է հանդիսանում՝ ազգի և եկեղեցու: Ժամանակ չէ մի՞թէ մեր եկեղեցին իր նախկին ժողովրդականութեան վերածել, նախկին սահմանադրութիւնը տալ նրան: Բայց որ նա այսօր դառել է աւաղակաց այլ, ո՞վ չի տեսնում այդ: Ինչո՞վ է ուրեմն մեղաւոր նաղարեանցը. նա եթէ լութերականութիւն քարոզէր, առաջինն ինքը կը դառնար լութերական: Մի՞թէ մենք էլ մի և նոյնը չենք մտածում, ինչո՞ւ ուրեմն լութերական չենք դառնում: Նրա համար անշուշտ, որ մեր նպատակն է մեր տունը շինել, վերանորոգել, պայծառացնել, և ոչ թէ մեր տանիցը խռովել և երթալ ուրիշ խրճիթ մօտել: Մենք՝ իբրեւ ժողովուրդ, իբրեւ եկեղեցու տէր, պարտական ենք մեր եկեղեցին ազատել բռնաւորների ձեռքից...

Այս կարգի մտածող դպրոցականները իրանց կարծիքը չէին թաքցնում ժողովուրդից, և ինչպէս որ մտածում էին առանձին, նոյնը յայտնում էին և հրապարակաւ: Գիմնազիստներն այնքան չէին յարձակւում հոգեւորականութեան վրայ, որքան հոգեւոր դպրոցից աւարտածները: Եւ այս շատ բնական է: Երբ որ մէկն սկսում է իր ստացած հին գաղափարները դուրս մղել զլիւիւս, նորերին տեղի տալու համար, նրանում յառաջ է զալիս մի տեսակ յեղափոխական շարժումն: Սրանց թիւը բաւական շատ էր. և իբրեւ Շանշեանի աշակերտներ, ամենքն էլ հալածանքի էին ենթարկւում հոգեւորականների կողմից, մինչդեռ խեղճ՝ Շանշեանցը ոչինչ մասնակցութիւն չունէր

այս պործում, և ժամանակի փրկարար ողին էր առել նրանց այդ ուղղութիւնը:

Սիրելի է ինձ յիշել միշտ այդ ժամանակը: Կեանքը, բարոյական կեանքը եւում էր: Սնունդհատ ճաշեր, ընթերիւններ, ազգային կենացներ, ճառեր... Մեր մտաւոր շարժման անմեղութեան և մանկութեան շրջանն էր: Եթէ մէկը խաչագող լինէր կամ ժուլիկ, կարող էր այդ անմեղ մարդիկներին ձեռք առնել և խաղալի շինել իր ծածուկ նպատակների համար: Չար ողին եթէ կարողանում է նոյն խակ գրախախ մէջ սողալ, աշխարհքս՝ նրա համար բաց է ու բաց: Սյդ շրջանն ազատ չըմնաց չար ողիներից, և մէկն ամենից երեւելի հանդիսացաւ իբրեւ կեղծաւոր և հաւագող աղէտ: Սյդ աղէտը գեւ. զոյութիւն ունի և գեւ. դեր է խաղում: Բայց սրա մոտին մի այլ անդամ:

Մէկ մոնենք հնութեան պաշտպանների շրջանը և աեսնենք, նրանք ինչ են խօսում:

—Հայր սրբազան, ձեր մասին բոլորք են գրել կաթողիկոսին, ձեզ ամբաստանում են, ձեզ համարում են...

—Սյո, ինձ համարում են թունաւորող: Իմ ստորագի թշնամիքս զրպարտութեան ծայրացեղն են ընտրել: Ես գիտեմ ի հարկէ, թէ ոյք են այդ բանի հնարողները և ինչ նպատակով, բայց դու հօ գիտես, Սլէքսանդր ջան, որ այդ մի սեւ զրպարտութիւն է: Առանց զրպարտութեան էլ ես այսուհետեւ պէտք է տեղի տամ իմ հակառակորդներին: Ես առաջուց էլ գիտէի, որ Ներսէսից յետոյ, որ իմ միակ պաշտպանս էր, էջմիածնեցիք ինձ իրանց միաբանակից չըհամարելով՝ պիտի հալածեն: Շէկ օձը պիտի դուրս սողայ իր բնից և դայ իմ տեղս նստի: Նրա աղէտն այստեղ՝ արդէն պատրաստում է նրա ճառարհարհը:

— Ի՞նչ պէտք է անել. ոչ ամօթ գիտեն, ոչ պատկառանք. . .

— Դիտե՛ս ինչ, Ալէքսանդր. Շուներ որ շուն է, իր տիրոջ հայն ուտում է, նրա պտանը հաչում: Մենք պէտք է շանից էլ վատթար լինենք, որ մեր եկեղեցու հայն ուտենք, և նրան չըպաշտպանենք դողերի յարձակմունքներից: Ի՞նչ է իմ յանցանքը. այն միայն, որ ես իմ եկեղեցին և նրա գաւթիժը՝ դպրոցը՝ պաշտպանում եմ, և չեմ թողնում աւաղակների ձեռքը ընկնի: Թող կաթողիկոսը լսէ զրանց, թող փոխէ. ես դարձեալ չեմ դադարիլ սաղմոսերգւի հետ ասելու. «Ուսուցից անօրինաց զձանապարհս քո և ամբարիշտք առ քեզ դարձցին»:

— Ձեր բանը հեշտ է, սրբազան հայր, բայց մեզ աւելի են ուզում խայտառակել: Հաշիւ են պահանջում մեզնից. ուզում են վռնգել դպրոցից. նոր հոգաբարձուներ են ուզում ընտրել, նոր կանոնադրութիւն են շինում:

— Թող անեն, ինչ ուզում են: Ժամանակս փոխւել է: Ձե՛ս տեսնում, ի՞նչ մարդիկ են հրապարակ դուրս եկել: Ո՞վ է իմացել, ո՞վ է լսել, որ աշխարհական մարդը ինքն իրան վարդապետ անւանէ: Եթէ այսուհետեւ աշխարհականները պիտի վարդապետութիւն անեն, նոր վարդապետութիւն քարոզեն, էլ մենք ինչի՞ ենք պէտք. . .

— Շատ ճշմարիտ էք ասում, սրբազան հայր: Ժամանակս փոխւել է. երևի աշխարհքիս վերջը մօտեցել է. նեոի գալու ժամանակն է: Երեկ ինձ այնպիսի մի բան ասեց Գ. Իւանիչը, որ մազերս փշաքաղեց: Ասում է. լօթուանդները Սօլօլակումը մի առանձին սենեակ են վարձել, իրանց համար ազօթատուն շինել: Շաբաթը մէկ անգամ հաւաքւում են այնտեղ, մէկ մէկ սպիտակ չարսաւ զցում իրանց վրայ, աղօթք անում: Խաչ, Աւետարան էլ չունեն, այլ մի աղաքար ունեն զրա՞ծ առաջնորին, նրան են պաշտում: Այդ ի՞նչ բան է, ասացի, մի՞թէ,

աղապաշտութեան կրօն կայ աշխարհիս երեսին: Նա թէ՛ ինչպէս չըկայ. հապա ինչո՞ւ են ասում աղանդ: Սրբապան հայր, մի՞թէ աղանդն աղապաշտ է նշանակում:

— Աղանդ՝ նշանակում է մոլորութիւն, սուտ կրօն: Երեւի լսել է թէ նրանք աղանդապաշտ են, կարծել է թէ աղապաշտ են:

— Դուք շատ ուղիղ նկատեցիք, սրբազան հայր, Գ. Իւանիչը բառերի ուղիղ նշանակութիւնը չի հասկանում, բայց շատ է սիրում գրաբար բառեր գործածել, որ լսողը կարծէ, թէ նա մի ուսումնական և կարդացած մարդ է: Անցեալ օրն ինձ ասում է. զիտե՛ս, Միրզոյեանները սաստիկ հարստահարւել են, բայց ուղում է ասել չափից՝ դուքս հարստացել են, այնպէս է երեւակայել, որ հարստահարւել այդ կ'նշանակէ: Դա շատ յիմարութիւններ է անում: Մեր հակառակորդների վրայ սուտ սուտ լուրեր է տարածում, նրանք էլ կարծում են, թէ մենք ենք նրան այդպէս թելադրել, և աւելի են կատաղում: Պէտք է իմ կարծիքով զգոյշ կենալ այդ տեսակ բարեկամից: Նրանք այն պտուղը չեն, որ մարսեն, դրա գլխին վատ օյին կըխաղան:

Այս խօսակցութեան մէջ յիշեա՞ծ Գ. Իւանիչը, ճիշմարիտ որ, ամեն տեղ տարածում էր, որ աղապաշտութեան մի նոր աղանդ կայ, և մասնացոյց էր լինում մոտուոր շարժման գլուխ անցած բոլոր երիտասարդների վրայ: Այս բանը շուտով հասաւ երիտասարդների ահանջը, և մէկ օր նրանք մէկ լաւ օյին խաղացին Գ. Իւանիչի վրայ: Մէկը նրանցից մի վտուփուռ և աշխոյժ պատանի Երիցուկ անունով, հնութեան կատաղի թշնամի—իր ընկերներից մի քանիսին կանգնեցրեց քաղաքի՝ զանազան անկիւններում, որանդով որ սովորութիւն ունէր անցնելու

Գ. Իւանիչը իր տնային միաձի կառքով, և պատուիրեց ամենին, որ Գ. Իւանիչն անցնելիս՝ ամենքն էլ սսեն, որ այդ մարդը դնացել է Փարիզ, այնտեղ հաւատարմութիւն և նոր հաւատով եկել, թէ նա լոթուանդ է դառել...

Սրա վրայ շատ ջանցաւ, Գ. Իւանիչը որտեղով որ անցնում էր, ետեւից բղաւում էին խանութպանները. «Էհա... դալիս է լոթուանդը»... Իսկ մրգավաճառները և բղաւում էին և դանդահարում ամենքը միասին: Այսպէս քիչ քիչ և ամեն որ բղաւելով չբառականացան, այլ ինչ որ փթած մրդեղէն ունէին—խնձոր, սեխ, ձկնրուկ բոլորն էլ Գ. Իւանիչի գլխին թափեցին: Չընայած որ կառապանք սրտը աւանցում էր, որ իր աղային ազատէ խայտառակ յարձակմունքից, նրան շրջապատեցին հաւաքարի մէկգնումը և ուղում էին քարկոծել: Այստեղ ոտիկանութիւնը վրայ հասնելով՝ ազատեց Գ. Իւանիչին, և տուն հասցրեց, բայց ամբոխն այնպէս գրգռած էր, որ ուղում էր տունը կործանել: Վերջը առաջնորդը կանչեց բոլոր համբարութեան ներկայացուցիչներին, հասկացրեց նրանց, որ Գ. Իւանիչը մի շատ ջերմուանդ և բարեպաշտ հայ քրիստոնեայ է, թէ թշնամի մարդիկ են նրա վրայ այդ բանը տարածել և խաբել ժողովրդին...

Սրանով ազատեց Գ. Իւանիչը և ազատ անց ու դարձ սկսեց: Այս հանդամանքն այն լաւ հետեւանքն ունեցաւ, որ այնուհետեւ դադարեցին ում և իցէ լոթուանդ անուանելու, այդ տիպի մոզան անցաւ:

Հետեւեց հեշտութեամբ և առանց կուրի տեղի չի տալիս նորութեանը, մանաւանդ եթէ այդ հետեւեց մի հաստատութիւն է և հետեւի ճանկերում ամփոփւած: Ներսէս Կաթողիկոսը մի ինքնակալ էր, ոչ մի ձայն և ոչ մի իրաւունք չէր տալիս ոչ ժողովրդին և

ոչ հոգեւորականութեանը: Ամենայն բանում խառնուում էր և ամենայն պաշտօնէի ինքն էր նշանակում ինքն էր դործականներ նշանակում: Նոյն իսկ աշխարհականներից և ամենայն բողոք նրանց դէմ թողնում էր անկատար, որովհետեւ նա անպայման հաւատում էր իր նշանակած մարդկանցը, և եթէ նրանք շատ էին հարստահարում ժողովրդին, ստրկութեան ժամանակ այդ տէքի չէր ընկնում, մի սովորական բան էր ինքն էլ ունէր հոգային ստրուկներ, և այսօր էլ նոյն գիւղերը իր անդականների ձեռին են: Ուսումնարանը իրանն էր, հոգաբարձուք էլ ինքն էր հրաւիրում իր ուղած մարդկանցը, իսկ նրա նշանակած մարդիկը ցկենա էին վարում իրանց պաշտօնը: Պատմութիւնը Ներսէսին շատ է բարձրացնում, երեւի իր յաջորդների ջղրու: Եթէ նա աղքատէր մարդ էր և ժիր, այս մասին ոչ ոք կտակած ունենալ կարող չէ, բայց նա իր բարձր անուն հաւատար օգուտ չունի տւած: Նրա անունն իրանից բարձր է: Նա եթէ մի կողմ դնէր իր միապետականութեան ձեւը, սերտ սիրով կապէր իր հետ հոգեւորականութեանը և ժողովրդին, աւելի շատ բան կարող էր անել: Նա հեռացնում էր իրանից անհիւ և խելօք մարդկանց և մօտ քաշում շողքօրթներին և յիմարներին: Ժամանակակից ուսումնականներից ոչ մէկը նրանից զոհ չի եղել, և ամենքն էլ զժգոհութեամբ են հեռացել նրանից: Նա ուսումնասէր մարդ չէր, այլ իշխանասէր, սիրում էր իշխել, տիրել, և այդքան միայն: Նրա մէջ իշխում էր իր ժամանակի թաւաղների ոգին, իշխանների ոգին, նրանցից մի մազն չափ բարձր չէր: Նրա դպրոցը օրինակոր կարգի տակ ընկաւ միայն նրա մեռնելուց յետոյ, իսկ նրա ժամանակ մի կատարեալ աւագականաց էր, մի հակակրթութեան տեղի, որտեղեց կարող էին միայն փչացած մարդիկ դուրս գալ և ոչ երբեք բարեկրթւած: Որքան աշխատեց խելօք Շանշեանցը, որ դըպ-

բոցին տայ բարեպատշաճ դիրք և ծաւալ, ներքին բարեկարգութիւն, բայց Ներսէսը Շանշեանցի առաջարկութիւններն ըմբռնելու չափ կրթական հասկացողութիւն չունէր. նա տառամ էր ուսումնականներին և առաւել ևս, եթէ ուսումնականը մի վարդապետ էր: «Վարդապետը եթէ ուսումնական լինի, տսել է շատ անգամ, լիբք կըլինի»: Այս իսկ պատճառով նա էջմիածնի ժառանգաւորաց դպրոցի վրայ ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում. ուսումնաւարտութիւն ունէր: էջմիածնի Հին եպիսկոպոսներից լսել եմ այսպիսի մի բան. «Առաջարկում էինք, որ մեր դպրոցը բարեկարգէ, օրինաւոր ուսուցիչներ հրաւիրէ», նա պատասխանում էր. «Բաւական է, որ իմ վարդապետը կարողանայ դրել, թէ՛ Վե՛րի իզու կտանպոն, ինձ համար մի լիւր հաղող ուղարկի՛ր»: Ասում էին նաև այսպիսի բան, թէ, Եփրեմ կաթողիկոսն տառամ էր. «Մեր Ներսէսը շատ խելօք է, այնքան խելօք է, որ շներին դուրս է անում, գայլերին ներս է անում»...

Վերելում արդէն տեսանք, որ երբ ժողովուրդն ուղեց ուսումնարաններ ունենալ, ոչ վարժապետ էր ճարւում և ոչ դասադպրեր: Ինչ էր շինել ուրեմն նախընթաց տարիներում Ներսէսը: Ներսէսը իր ժամանակից բարձր չէր ոչ մի բանով, իսկ բարձր մարդկանցից նա օգուտ քաղել չուզեցաւ. Ալամբարեան, Թադիադեան, Արովեան, Շանշեան և այլ արժանաւոր անձինք բոլորն էլ զժգոհ էին նրանից: Ազգասէր հայրապետը պէտք է իր շուրջը իւրմբեր բոլոր ազգասէր ուսումնականներին և նրանց մշակութեանը յանձնէր ազգային խոսանացած դաշար: Մեր ներկայ մասուր զարգացումը սկսւում է Ներսէսի մահւան հետ ի միասին: Կարծես նա լինէր պատճառը, որ հայերը քնացել էին մասուրապէս կաշկանդւած: Եւ այդ մասամբ հաւանական է: Ազգի մասուր զարգացման ղեկը Ներսէսի ձեռքին էր, նա պիտի դրսից մարդիկ հրաւիրէր,

բայց նա ոչ միայն չէր հրաւիրում, այլ կամովին իրանց անձը առաջարկողներին էլ մերժում էր: Եկաւ Մատթէոսը և ամենայն սիրով իր զիրին առաւ Ներսէսից հարածեալ Նալբանդեանին և նրա նմաններին, և ժողովրդի ձայնի և իրաւունքի պաշտպան հանդիսացաւ ընդդէմ խաբերանների և նման գանձապետների, որոնք Ներսէսի նորահնար ստեղծագործութիւններն էին...

Ո՞վ կարող է ասելից բարձր լինել,— և ոչ ոք: Ով որ իրան ասելից բարձր է համարում և իշխում նրա վրայ, այնպիսին մի կուռք է, որին պէտք է կործանել, այլ ոչ պաշտել: Նա էջմիածնին թողել է մի լիճ և մի անտառ, բայց իր ասղախաններին առանապատիկ աւելի է թողել...

Երկտասարդութիւնն օրէցօր աւելի ուժեղացաւ: Ժողովրդի մոտաւոր շարժման անիւր յաջող ընթացք ստացաւ և յառաջ գնաց աննշան խոչընդոտների միայն հանդիպելով: Կարօտութիւն էր գրացելում միայն մի նոր ժողովրդական առաջնորդի: Եղած առաջնորդի և երիտասարդութեան մէջ համերաշխութիւն չըկար: Եղած առաջնորդը Ներսէսի շաւղովն էր ուղղում գնալ, նրա պէս միապետական դիրք էր բռնել, ժողովրդին իրաւունք ու ձայն չէր տալիս դպրոցական գործում: Իսկ ժողովուրդը, որ Ներսէսին արդէն սրբացրել էր սրբազան տարիներում, այժմ նրա տեղը ոչ ոքի չէր գնիլ, ուր մնաց որ ժողովրդին հաւատացրել էին, որ Ներսէսին թունաւորել է նրա տեղը բռնել ուղեցողը: Թէ սա մի զրպարտութիւն էր, այն ժամանակ այդ տեղն ոչ ոք չէր կարող. ելք որ կրքերը եռում են, այնտեղ արդար և մեղաւոր հարցնող չի լինում այլ ևս: Բաւական է, որ բռնապետացար, չլրպարտեցար, պէտք է մի կողմ քաշուէս, մինչև պատմութիւնը գայ քեզ արդարացնելու: Առաջնորդը մի մօլի-

ունեղ մարդ էր, հնադաւան հայ. այս էր նրա բոլոր մեղաւորութիւնը. նա շատերին հալածում էր իբրեւ բողոքական հոգևով աղօթեալներէ, մինչև անդամ յայտնում էր ուր պէտք է, որ հսկողութեան տակ ունենան այդ մարդկանցը: Բայց նա այդ բոլորն անում էր կրօնական մոլեռանդութիւնից, նա այդ համարում էր ճշմարիտ աղօթսիրութիւն: Նա եղած կախկոպոսնորից ամենից աղօթասէր էր, ամենից աւսումնասէր, ամենից գործունեաց, ամենից զթոտ և առատաձեռն: Բայց և ամենքի ուշքումն ատելի էր նա, որովհետեւ կարողացել էր կաթողիկոսին դրաւել և նրա միակ մոտերիմը հանդիսանալ: Կաթողիկոսի մահից յետոյ ղրկւելով նրա պաշտպանութիւնից, մնաց երկու կրակի մէջ—ժողովրդի և միաբանութեան, և նա հեռացաւ գնաց, քաշւեց իր վագեմի վանքը—Սանահին, ուր պէտք է ասել աւելի մեծ գործեր ունէր կատարած իր փարպաւիտ եղած ժամանակ իբրեւ ուսուցիչ: Նա բաղմնութիւ հայկաբան և կրօնասէր քահանաներ տւաւ Գուգարաց աշխարհին, որպիսիք չեն զուրս եկած Ներսիսեան դպրոցից:

Հին առաջնորդը գնաց և նրա տեղ եկաւ նորը: Լաւ առաջնորդի սով լինելով՝ եկողն ամենից լաւ էր համարւում: Յիրաւի նա թէև մի տղէա, թոյլ, զանդաղ անգործունեաց, արծաթասէր և խաւարամիտ մարդ էր, բայց բնականաբար իր նախորդի թշնամիներէ—այն է զօրեղ երիտասարդութեան կողմն անցնելով՝ նրանց պաշտպանութեան տակ պատասպարւեցան նրա բոլոր պախարակելի թերութիւնները և մտեղային անգործունէութիւնը: Սյոյ մարդը տասնըջորս տարի առաջնորդութիւն արաւ մի ընդարձակ թեմում և ամենայն տեղ տարածեց իր ամբողջութիւն սփռող շնորհքը առանց մի որ և է յիշատակութեան արժանի բան թողնելու: Դա վնասակար էր իբրեւ

ի զուր երկիր խափանող մի անպտուղ ծառ: Ոչինչ չէր քանդում, որովհետեւ այդ ևս մի բան անել կրնանակեր, ինչպէս և չէր շինում ոչինչ: Բայց ոչ շինողներին և ոչ քանդողներին արդելք չէր լինում: Նա ինքն ասում էր շատ անգամ հետեւեալ ճառը. «Ես մի վանական մարդ եմ, աշխարհք չըտեսած, աշխարհին անձանօթ, աշխարհին, որ լիքն է հազար ու մէկ փորձանքերով: Ես աշխատում եմ ոչ թէ մի որ և է օգուտ տալ, որ իմ կարողութիւնիցս վեր է, այլ ամենայն ջանք գործ եմ դնում, որ եթէ հնար է՝ փնտս չըտամ: Ուստի օգուտ ինձանից մի՛ պատէք, այլ բաւականացէք չըտած փնտսովս: Ես նոր բան տալ չեմ կարող, այլ գոհ կըլինիմ, եթէ կարողանամ եղածը պահել: Վասնորոյ աղօթեցէք Աստուծոյ վասն իմ, զի տայէ ինձ գիտությունիւն պահպանելոյ զձեզ անվտանգ յամենայն փորձութենէ աշխարհիս. Ամէն»:

Սրբազանի այս ճառը, որ թէ ուղիղ կշռած և նախամտածած խօսքեր էին և թէ ճշմարիտ, նրա պաշտպան աղէէսները սրբազանի համեստութեանն էին վերադրում, որ սխալ էր բոլորովին: Նա ինքը թէև չունէր զարգացած խելք, բայց իր բարոյական նշանակութեամբ, բայց իբրեւ փորձառու հայի ախպար՝ իր բնական խելքովը շատ բարձր էր իր աղէէսներից և զիտէր նրանցից օգուտ քաղել առանց վնասելու: Նա շատ լաւ էր իմանում, որ ոչինչ չըշինելը, գործունեաց մարդու, ուսումնասէրի, բարերարի և հայրենասէրի համբաւ չտաւնայլը թէ ներկայումս և թէ ապագայում իրան համար շատ օգտակար է: Նա այս լաւ զիտէր, որ ասել է նա հետեւում էր մի այնպիսի քաղաքագիտութեան, որին անձանօթ էին նրա աղէէսները: Սակայն նա այս քաղաքագիտութեանը գոռով և ահամայ չէր հետեւում: Նա ինքը ի բնէ և ըստ սովորութեան ծանրաշարժ մարդ էր, ինչպէս իր տեսած բոլոր հին հօկայ և հաստափոր եպիսկոպոսները իրանց

արամսպատկան շարժմունքներով և քրմապետական ձեւ-
րով. — Ի բնէ անգործունեայ, ի բնէ ժլատ, նկատեց միայն,
որ այդ յատկութիւնները իր վեճակի համար ձեռնառու
պայմաններ են, աւելի ևս հանդարտեց և հաստատեց
նրանում: Մնացածը ինքն իրան պիտի լինէր ժողովրդի
ձայնի խեղզած ժամանակ. . .

ՎԵՐՋԱՆԱՆ.

Մեռնիլ կայ, սպրիլ կայ, ասացի, եկ մեր մտաւոր
շարժման սկզբի տարիներին օտայած սպաւորութիւնս
զրի տունեմ իբրեւ ականատես և մասամբ նաեւ իբրեւ դեր
խաղացած այդ կեանքումը, եթէ ոչ գրով, գէթ խօսքով
և զործով: Եւ ահա զրեցի, որ մեր ներկայ սերունդը չք-
մոռանայ պատկառանքով յիշել իր նախորդներին, մտա-
ւոր շարժման կարապետներին, որոնց անուններն արդէն
յայտնի են զրականութեան մէջ:

Հինգերորդ վարում մի քանիսի և այն էլ մի քանի
աւարում արած թարգմանութիւններէն շարադրութիւն-
ները մի քանի վարերի համար կենսատու պաշար վար-
ձան: Այս մի պատմական օրէնք է: Մի ազդի քաղաքա-
կան ընթրիքումները, ընդհատումները կարող չեն մահացու
լինել, եթէ նա անցեալից ստացած մի սննդարար բա-
րոյական և մտաւոր պաշար ունի: Հասնում է այդ պա-
շարը կամ կորչնում իր սննդարար յատկութիւնը, և
ահա բարոյական մահը մօտենում է իր գաժան կերպա-
րանքով: Երևակայեցէք ձեզ մի լողորդ: Գետը կամ ծովը
ալիքները քշած տանում են նրան. նա յորհել է, թու-
լացել է, էլ չի կարողանում մաքաւել կատաղի ալիքների
դէմ, և ջրասող լինելն անխուսափելի է: Եւ ահա որանդեց
որտեղ մի թուփ, մի ժայռ է հանդիպում, մի բացերես

վէմ է պատահում, կամ մի անմարդարնակ կղզի, նա բռնում է մէկից կամ զուրս է գալիս միւսի վրայ, հանդըստանում է, նոր ոյժ է ստանում և նոր ի նորոյ մաքսուելու կարողութիւն:

Մէջ ընդ մէջ քաղաքական վերակենդանութիւնը նոր ոյժ է տալիս մաքսուելու մինչև որ զարձեալ կարող իրլինի մի անգամ ևս վերակենդանանալ: Բայց պէտք է յոյս ունենալ, պէտք է հաւատ ունենալ, և ինչն է, որ տալիս է այդ յոյսն ու հաւատը, եթէ ոչ Անյեւալի յիշատակը, որի պահողը անցելուց մնացած զրականութիւնն է, որ դառնում է մի բարոյական և մոտ որ աննդարար պաշար նոր կեանք ստանալու համար:

Մենդարար զրականութիւնը մեզ պէս մի սղոգ պէտք է ամեն բանից վերադասէ, այս պատճառով, վերջացնելով խօսքս, չեմ կարող առանց յիշատակութեան թողնիլ Թաղիադեանցին, Աբովեանցին, Նաղարեանցին, Նալբանդեանցին, Աղաբէգեանն և մեր բանաստեղծներին—Պատկանեանին և Շահազիզեանին, որոնց բռնած ուղղութեան և յայտնած մտքերի ազդեցութեան տակ աճում և զարգանում էր նոյն ժամանակեայ նոր սերունդը, որից բողբոջելով ծլեցին և ծաղկեցին նշանաւոր բանասէրներ, փառասէներ, թարգմանիչներ և խմբադիր-հրատարակիչներ: Այդ շրջանը նոյնքան փառաւոր է, ինչքան և առաջինը, բայց այդ մասին պրելը թողնում եմ յետնորդներին:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՅ.



I.

ԿԷՍ ԳԻՆԵՐ.

Կէս գիշեր է, մնայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մտածում եմ—և բիւր վշտեր սիրտս ու հոգիս են մաշում...
Մտածում եմ—շուտով արդեօք, դու արշալոյս ոսկեփառ,
Կը հալածես երկրին տիրած դժնատեսիլ այս խաւար:

Բայց մնայլը գիշերային, մնայլ թանձր, անթափանց
Ամենուրեք, ամենայն տեղ իւր թևերն է տարածած.
Եւ տխուր է մայր երկիրը, տխուր որպէս սգաւոր,
Նա տանջվում է խաւարի մէջ՝ կարօտ օրուան լուսաւոր:

Տխուր է և՛ իմ խեղճ հոգին, մնայլ որպէս այդ գիշեր,
Նորան հալում ու մաշում են ազգիս ցաւերն ու վշտեր.
Եւ նա տանջվում, տառապում է մայր երկրի պէս ցաւազար,
Խղճուկ ազգիս նա երկնքից աղերսում է՝ օր պայծառ...

Կէս գիշեր է, մնայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մայր երկրի հետ և՛ ես տխուր լոյս օրուան եմ սպասում...
Օ՛հ, հանգարտուիր, դու խեղճ երկիր և դու սիրտ իմ խոռովայնը,
Ահա մըուայն հալածվում է... քաջպաղթ է արշալոյս...

5 մայիսի 1890 թ.

Մոսկուա.

II.

Ս Օ Ն Ե Տ.

Ո՛հ, ես չեմ ուզում, մանուկ գեղեցիկ,
Որ դու էլ տանջուես սիրոյ վշտերից,
Որ երկբայութեան մոպլ փոթորիկ
Դառն արցունք քամէ և՛ քո աչերից...

Ձեմ ուզում, հոգեակ, տեսնել քո պայծառ
Ոսկէ յոյսերով անհետ չքացած.
Եւ որպէս ծաղիկ խեղճ, փոթորկահար՝
Քո մատաղ սէրն էլ ոտքի տակ ընկած:

Ո՛հ, համը է սիրտը քեզ սէր կրգելու,
Դու տանջուած, կրգչիս տուր մոռացութեան.
Եւ պիտ ջերմ սէրը քո քնքոյշ հոգու
Դու զո՛հ բեր, քուրիկ, ազգիդ փրկութեան...

Եւ թող իմ կրգում դու ապրես, հոգեակ,
Իբրեւ մի լսեմ գործի նահատակ...

III.

Թ ՇՈՒՆՈՒՆ.

Ո՛վ ես դու, եղբայր—քեզ չեմ ճանաչում,
Բայց քո աղետարշ լացը տեսնելիս՝
Ե՛ւ ես դառնացած արցունք եմ թափում,
Յուզվում է սիրաբա, տանջվում է հոգիս:

Միշտ տխուր, տրտում, միշտ լուռ, միայնակ—
Դու չես մասնակցում կեանքի խնձոյքին.
Ձկան քեզ համար ո՛չ սէք, ո՛չ հրճուանք,
Սուգն ու տանջանքն է միայն քո բաժին:

Թափառում ես դու խուլ՝ փոքրոցներում,
Փախչում, ծածկվում ես մարդկանց հայեացքից.
Կարծես մարդկանց մէջ՝ էլ չես հաւատում
Գտնել անկեղծ սիրտ՝ վշտիդ կարեկից:

Կարծես քո աչքին բովանդակ աշխարհ
Ստոցապատ ծով է անկարեկցութեան.
Եւ քո արցունքը—աղբիւր անսպառ
Քարասիրտ մարդկանց վայրագ խնդութեան...

Օ՛, ո՛չ հաւատա՛, եղբայր իմ թշուառ,
Դու հոգոյս անկեղծ, խորին զգացման.
Հաւատա՛, որ քո տանջանքի համար
Շատերն են անկեղծ տանջվում ինձ նման...

IV.

ԱՄԻ ԵՐԱՆԻ ԶԵ՛...

Ա՛խ, երանի չէ՞, մի օր մեր առաջ
Բացուէր ցանկալի մարտի դաշտն՝ ահեղ,
Ուր ե՛ւ հայոցին՝ խղճուկ, ցաւատա՛նջ
Գէթ սրով՝ անէր խր ցաւին մի՛ դեղ...
Ուր կարողանար նա արեան գնով
Ազգին պարգեւել՝ յաղթութեան պսակ.
Կամ թէ չէ յաղթուած, բայց ազատ հոգով
Շունչ փչէր, իրրեւ ազգի նահատակ:

Ա՛խ, երանի չէ՞, այս թմրութիւնից
Զօրաւոր ձայնը սուրբ ազատութեան
Գոչէր մեզ մի օր դէպի ոգելից
Քաջ ճակատամարտ կեանքի և մահուան,
Այնտեղ սուր ձեռքին՝ բոցերի միջին,
Պատրաստ մեր կեանքը ազգին զոհելու,
Մենք ցոյց կը տայինք ամբողջ աշխարհին,
Թէ ո՞վ է կոչուած ըստուկ ապրելու:

Այնտեղ միաշունչ, միաբան հոգով
Մենք կը հնչէինք երգն արիութեան,
Եւ յաղթանակի մեծաշուք փառքով
Մենք կը փշուէինք ստրկութեան շղթան...
Ա՛խ, երանի չէ՞, ո՞վ ազգ իմ՝ թշուառ,
Հասնես այդ օրը, բացուէր քո առջև
Քաջ կըռուի դաշտը... այնտեղ քեզ պայծառ
Կը ժպտէր անշուշտ նոր կեանքի արեւ...

Ա. ՄԱՏՈՒՐԵԱՆ.

15 յուլիսի 1890 թ.

Մոսկուա.



I.

ԱՆՊՏՈՒՂ ԵՐԿՈՒՆԷՔ.

(Հ ա յ կ ա կ ա ն ր ա լ լ ա դ ա.)

Կինը—միայնակ, երկունքի միջում...
 Եւ նա չարաչար տանջվում է ցաւից.
 Այդ խորհրդաւոր սրտաշարժ ժամում
 Չրկայ փարստող, չրկայ կարեկից:
 Չորս կողմը դատարկ, ամպի դաշտեր,
 Լեռներ վիճխարի ե Տըսկայ ծառեր...
 Միայն մտտակայ անանց անտառում
 Գայլերը սոված ոռնում, են, ոռնում...
 Երկները տըխուր—անասող, անլուսին.
 Ծընըդկան կինը տարածուած գետնին,
 Ծընի հետ կըրծքից թըռչում են ակերի,
 Ասես, ներքինը պրուսերիս լինէր:
 Եւ չրկար ոչ որ—օգնութեան հասնէր.
 Երկիրը, կարծես, անապատ լինէր.
 Միայն մտտակայ անանց անտառում
 Գայլերը սոված ոռնում են, ոռնում...
 Ոչինչ չէ տեսնում—խաւար է չորս դին.
 Չիցէ գայլերը լափում են խեղճին.
 Կըսկծալից տընքոց ու խեղդուած մի ձայն
 Մըթնիցը յանկարծ ականջիս հասան...
 Քամին տանում է, իր հետ տարածում
 Կընոջ հառաչանքն հեռու աշխարհում:
 Բախտաւոր մարդկանց քունը կըտրելով,
 Վըրդովում նոցա իր գէշ նըւագով...
 Եւ անհայտ լիւր խաւարի մէջ,
 Եւ անհայտ լիւր խաւարի մէջ,
 Եւ անհայտ լիւր խաւարի մէջ,
 Եւ անհայտ լիւր խաւարի մէջ...

II.

Է՛Ղ, ՍԵ Է՛Լ ԽՈՒ ՍԷՐԸ.

(Ա. ՇՈՒՂԻ «ՆԷՅՆԻՄ»-ՆԵՐԻՑ.)

Աղուղի հաղը որ կըլինի,
Նէյնիմները կըսկրտի:

ԺԱՂՈՎՐ. ԱՌԱՆ.

Գիտի նրման ես սիրում եմ, բայց ո՛չ չըքնաղ մի աղջիկ,
Ես պաշտում եմ, մեծարում եմ միայն երկու սև աճիկ,
Այդ աչերը չեն գերբնական, չունին ոչինչ «երկնային»,
«հուր ու կայծակ», «թոյն մարգասպան», օ՛, չեն շանթում նայողին.
Ինձ չըգերեց այն աչերի արտասովոր մեծութիւնն
Եւ ո՛չ աղջկայ ալ թըշերը, բարակ մէջքի քընքըութիւնն..
Աստուած վրկայ, չէ պատկանում հուրիների նա կարգին,
Կուրծքն էլ բընաւ չի նրմանում «ջուխտակ կըրու շամամին»...
Այո, չունի չըքեզ մարմին, «մոմից թափած մատիկներ»
Եւ չի ասում նա բըլբուլին. «Թող ես երգեմ վարդ ու սէր»...
Մի հեզ, տըխուր, կարծես, անձայն օրիորդ է իմ սիրած—
Երկու աչեր ունի միայն, որոնց դեռ չեմ հասկեցած...
Ես չեմ ուզում ո՛չ համբուրել եւ ո՛չ «ուտել» այն աչերն—
Դա կըլինէր սըրբապրդեւ իմ անարատ, անշահ սէրն...
Միայն կամիմ հեռում կանգնել եւ լուռ նայել մեջքներն,
Կարգալ, տեսնել ի՞նչ են ասում այդ թախծալի սև աչերն...
Անուրժեղի գաղտնի մի վիշտ թագնւած է խորքերում,
Ծանրը մի քար, կարծիս, վաղուց ճընշում լինի անբախտին.
Վախենում ես, թէ մօտ գընաս, լինես նորան կարեկից—
հարցնես դարդը.— «Եար անծանօթ, ո՞ւմ ես կորցրել սըրտակից»...

...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր
 ...միայն զգուշացաւ միայն զմեզնիս զգուշացաւ, ինչ լիւր

III.

ՀԱՅՈՒ ՄԵԾԵՐԸ.

(Ըստ Պատկանեանի.)

Մէկը սաստիկ հայհոյում է, պախարակում հայերին,
 Պատճառ իրեն չեն «հասկանում», գին չեն զընում «հանձարին».
 Ամբողջ մի դար նա շուտ ծընեց, այն էլ փրկած Ասիում,
 Իր մըտքերը գուցէ միայն ըմբռնէին Եւրոպում:
 Եւ այդ «երկնից կաթած լոյսը» ման է գալիս վերդովուած,
 Միշտ միայնակ, յօնքերն կիտած, գլուխը կըրծքին խոնարհած.
 «Սմբոխը» նա խիստ տոտում է, հեռու փախչում աղմուկից.
 Հայու մասին միշտ կըրկնում է. «Բան չի դուրս գալ նորանից»:
 Միւսը զըպրօցն կիսատ թողած, երկրորդիցը խընկըած,
 Ուսումնական, խելքիցն իր վէր, քանի մի փրազ սովորած,
 Մայրանի մէջ ըզբօսնում է, չըլացընում ամենքին,
 Մերթ Եւքսպիրին, մերթ Դարվինին քըննելով շատ «խըստագին»:
 Սակայն, ախո՞ս, որ հայերն կոյր են երկու աչքերով.
 «Կապիտալիստն» չէ կամենում օգնել նորան իր փողով,
 Որ նա անցնէ արտասահման, ստանայ «բարձր կըրթութիւն»,
 հաստատէ, որ «մեծ մարդկանցով» շատ առատ է հայութիւն:
 Այս պարօնը մեծ ազգից է և ծագումով հին իշխան,
 Ունի նա մուտք յայտնի մարդկանց «ալօմները» անխափան—
 Նա յայտնել է, որ երբ հայուն «ափօնօմեա» տայ Սուլթանն,
 Գուցէ ինքը համաձայնի կառավարել հայաստան...
 Բայց առ այժմ նա չի խառնվում հայու «չնչին» գործերում...
 Գուցէ անգամ չհամաձայնուէր լինել և այդ պաշտօնում...
 — «Ո, ես գիտեմ, համոզուած եմ» — աւելացնում էր ժրպտելով
 «Որ ինձ հանգիստ, դադար չեն տալ, կառավարել խընդրելով»:

Երկու, երեք ոտանաւոր երեք տարի կարկատողն
 Խիղախում է յոգնած ձայնով զիմել հեռու ապադան.
 «Պէտք է գընամ, թող քարկոծեն» — գոչում է խեղճ ըստեղծողն—
 «Պէտք է գընամ, թէպէտ փուշ է, տատասկոտ է իմ ճամբան»:
 Ոչինչ չըգրած, ոչինչ չարած, ո՛չ մի նոր միտք չըյայտնած,
 Տըրտընջում է արգէն հայուց, իրեն Բայրօն ձեւացրած...
 Ինչ է... Խսկոյն գին չըգըրին և չեն կանգնել զեռ արձան...
 Արժէ՞ միթէ հայուն մըտցնել մոռւանների բուրաստան...

* * *

Այն երկիրը, որ կոչվում է երբեմնապէս հայաստան,
 Շատ է պարարտ—արտադրում է այսպէս մեծ մեծ մարդիկներ.
 Այդ մեծերը՝ մանր գործերն համարում են անարժան,
 Միշտ ուզում են խաղալ միայն աչքի ընկնող մեծ գերեր...
 Եւ այսպիսով կամ հեռւից են քարեր նետում, ցեխոտում,
 Կամ գեռ շեմքում, նոր ըսկըսած, մեծ պարգևներ պահանջում...
 Եւ բոլորը համարեա թէ գանդատվում են, «մըտրակում»—
 հայու գըլին «ընկոյզ կոտրել» մի սրբբազան պարտք հաշվում:
 Իսկ խեղճ ազգը, համբերելով երկար դարեր ծաղընքին,
 Դիմանում է «ճարը կըտրած» և իր որդւոց վարկերին...
 Իր ծեր գլուխը խոնարհարար քար ու ցեխին դէմ արած,
 Կարծում է, թէ ճըշմարիտ է, արժանի է «աքացեաց»:

Ձ. ԲԱԼՈՒՂԵԱՆ.



ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ա.

Նախարարներ հայոց պատմութեան մէջ կոչվում են այն իշխանները, որոնք պատմական ծագման հետ միասին ունէին և մեծ թէ փոքր տարածութեամբ կալուածներ հայաստանում: Նախարարների սկիզբը մեր պատմութեան մէջ շատ հին է. նոցա գոյութիւնը այնքան ևս հին է, որքան հին է և հայոց ազգը: Թէև մենք նախարարների, ինչպէս և բոլոր հայոց ազգի գոյութեան ամենահին շրջանի մասին շատ սակաւ տեղեկութիւն ունինք, բայց ի նկատի առնելով այն հանգամանքը, որ հայոց ազգը, գուցէ ուրիշ անունով, գոյութիւն ունէր և ապրում էր հայաստանում դեռ հայկից շատ առաջ և չէր կազմում մի ամբողջ տէրութիւն, այլ, ինչպէս և ուրիշ շատ հին ազգեր իւրեանց նախնական պատմական կեանքում, բաժանվում էր շատ մանր մասերի կամ ցեղերի, որոնցից իւրաքանչիւրը կառավարվում էր իւր առանձին իշխանով կամ ցեղապետով, կարելի է մեծ հաւաստիութեամբ ասել, որ այդ առանձին առանձին ցեղերի կամ մասերի ցեղապետները կամ իշխանները կոչվում էին նախարարներ: Մենք մինչև անգամ պատմութիւնից տեղեկութիւն ունինք այդ մինչև հայկեր հայաստանում եղած իշխանական ցեղերից մէկի մասին, որ, մտնելով հայկի իշխանութեան ներքոյ և խառնուելով ուրիշ իշխանական կամ նախարարական ցեղերի հետ, հասել էր մինչև Վաղարշակի օրերը, պահպանելով իւր արտօնութիւնները, Վաղարշակ, զանազան կարգադրութիւններ անելով նախարարական ցեղերի վերաբերութեամբ, այդ ցեղի գլխաւորին, որի անունը Սլաք էր, նշանակում է որսի վերայ վերակացու և սալիս է նորան նախարարական պատիւ, որից առաջ է գալիս

մեր պատմութեան մէջ յայտնի Սլիւնեաց նախարարութիւնը, Մովսէս Խորենացին, որի պատմութիւնից մէկը քաղում ենք այդ տեղեկութիւնը, խօսելով այդ հանգամանքի մասին, ասում է կէս հաստատ, կէս երկտաբար. «Բայց մոռացանք Սլաք անունով գարշելի մարդուն, որի մասին չեմ կարող ստոյգ ասել, չայլիցն էր, թէ նորանից առաջ նոյն աշխարհում եղածներէից, որոնց գոյութեան մասին պատմում էին զընցները: Բայց նա քաջ մարդ էր: Սորան Վաղարշակ կարգում է սակաւ մարդկանցով սարը պահելու և այծեր որսալու: Սգբա Սլիւնի կոչուեցան»¹⁾: Երբոր չայկ եկաւ հայաստան և, յաղթելով տեղացիներին, կազմեց հայաստանից մի ամբողջ տէրութիւն, գորանով ամենեւին չգաղարեցաւ նախարարների գոյութիւնը մեր աշխարհում, այլ, ընդհակառակն, նոցա թիւը քանի գնաց աւելի շատացաւ, որովհետեւ նահապետի տան երկրորդական, երրորդական, չորրորդական և այլն ճիւղերից առաջ եկան շատ ուրիշ նախարարներ, որոնք, խառնուելով առաջուայ եղածների հետ, սկսան վայելել նոյն իշխանութիւնն ու արտօնութիւնները, որ վայելում էին և միւս նախարարները, և, կարելի է ասել, իւրեանց թիւով կրկնապատկեցին նախարարական ցեղերի թիւը: Այսպէս, օրինակի համար, չայկի մահից յետոյ հէնց առաջին նուագ նոյն իսկ չայկի որդիներից և թոռներից կազմուեցան երեք մեծ նախարարութիւններ՝ Մանաւազեան, Խոռխոռունեաց և Բզնունեաց: Մանաւազեան ցեղը առաջ եկաւ չայկի Մանաւաղ որդուց, որ ժառանգեց հայկաշէնը իւր շրջակայքով: Խոռխոռունեաց ցեղը առաջ եկաւ չայկի Խոռ անունով որդուց, որ ժառանգեց հարք գաւառի հիւսիսային մասն. Բզնունեաց ցեղը առաջ եկաւ Մանաւաղի Բաղ անունով որդուց, որ ժառանգեց «աղի» կամ Բզնունեաց ծովի ափը: Չայկից առաջ եկաւ և Որդունեաց նախարարութիւնը²⁾: Տիգրանի որդի առասպելական Վահագնից առաջ եկաւ Վահնունեաց իշխանական ցեղը, իսկ նորա Սուռան և Զարեհ որդիներից—Առաւենեան և Զարեհնաւեան նախարարութիւնները³⁾: Չայկի հայաստան գալովը և միապետական նահապետական իշխանութիւն հաստատելովը նախարարները մինչև

1) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ Ը.

2) Խորենացի՝ գիրք առաջին, գլուխ ԺԲ.

3) Խորենացի՝ գիրք առաջին, գլուխ ԼԲ.

անգամ՝ զրկուեցան իւրեանց նախկին իշխանութիւնից և արտոնութիւններից. նոքա միայն արտաքին կողմից ընդունեցին հայկի և նորա յաջորդների գերիշխանութիւնը, իսկ ՚ի ներքուստ անձեռնմխելի պահեցին իւրեանց անկախ դրութիւնը և անձնիշխանութիւնը իւրեանց սեփական կալուածներում, և եղան մի տեսակ նահապետներ հայոց մեծ նահապետութեան մէջ. նախարարական ցեղերի թիւը ժամանակի ընթացքում քանի գնաց բազմացաւ և, համարեա, անընդհատ աւելանալով, շարունակուեցաւ մինչև Արշակունեաց հարստութեան վերջանալը, որից յետոյ նոյա թիւը սկսաւ փոքր առ փոքր նուազել. նախարարական ցեղերի մինչև Արշակունեաց ընկնիլը բազմանալը կատարւում էր զանազան ճանապարհներով. նախ՝ նոքա բազմանում էին բնական կերպով, այսինքն, ինչպէս վերը յիշեցինք, առաջ նահապետական, յետոյ թագաւորական սան կամ գերդաստանի երկրորդական, երրորդական և այլն ճիւղերից առաջ էին գալիս բազմութիւ իշխանական ցեղեր, որոնք ստանում էին նախարարական պատիւ և իշխանութիւն. երկրորդ՝ նահապետները և թագաւորները ինքեանք, ստիպուած այս կամ այն հանգամանքից՝ անձնական կամ քաղաքական, կամ վերջապէս, տէրութեան շոհերից, բազմացնում էին նախարարական ցեղերի թիւը, այս կամ այն մարդուն նորա մի որ և իցէ թէ՛ թագաւորութեան և թէ թագաւորին մատուցած նշանաւոր ծառայութեան համար, շնորհելով հարուստ կալուածներ և նախարարական պատիւ. վաղարշակ, ինչպէս յայտնի է պատմութիւնից, կամենալով մի հզօր կուսակցութիւն կազմել, թագաւորական իշխանութիւնը ընդարձակելու և նորան պատմական նշանակութիւն ունեցող նախարարական ցեղերի դէմ պաշտպանելու համար, բազմութիւ նորանոր նախարարութիւններ հաստատեց, որոնց մէջ նշանաւոր եղան՝ Գարեղեան, Արեղեան, Սպանդունեաց, հաւունեաց, Մանդակունեաց, Մոկաց, Մովսաց, Կորդուաց, Անձեւացոյց, Ակէացոյց և Զիւնական նախարարութիւնները¹⁾: Արտաշէս Ե. ցանկալով վարձատրել Տուր անունով մարդուն, որ, գտնուելով Երուանդ Բ-ի բանակում, նորան նպաստաւոր տեղեկութիւններ էր հաղորդել հայաստանից և այդ իսկ պատճառով բռնուել ու սպանուել էր Երուանդից, տուեց նորա որդիներին նախարարա-

1) Խորենացի՝ զիրք երկրորդ, զլուի Է և Ը.

կան պատիւ և կազմեց Տրունեաց նախարարութիւնը ¹⁾։ Նոյն Արտաշէսը կազմեց և մի ուրիշ նախարարութիւն, որ կոչուեցաւ Դիմաքսեան ²⁾։ Այդ նոյնպէս մի տեսակ վարձատրութիւն էր Ներսէսին, Գիսակի որդուն, այն մեծ ծառայութեան համար, որ ցոյց էր տուել թագաւորին Գիսակը Երուանդաւանի կոփում, զոհելով իւր անձը թագաւորի ազատութեան համար կատաղի Տաւրացի վարձկանների դէմ և նոցանից դէմքից կիսուելով։ Տիգրան Գ-ը, յաղթուելով Ղուկիոս Վերոսից, Մարկոս Աւրելիանոս կայսեր ամբողջից և ստիպուած լինելով նորա ազգականներից Ռոմի սնունով աղջկան իւրեան կնութեան առնել, կազմեց Ռոմի թագուհուց ունեցած որդիներից մի առանձին Ռոմական նախարարութիւն, որովհետեւ նա չէր կամենում, որ օտար կնոջից ծնուածները Արշակունի գրուեն ու համարուեն ³⁾։ Երրորդ՝ հայոց նախարարական ցեղերի թիւը բազմանում էր օտար իշխանական ցեղերի դալովը հայաստան։ Օտար իշխանական ցեղերը գալիս էին հայաստան կամ՝ յօժարակամ, կամ իւրեանց կամքին հակառակ, ստիպուած մի որ և իցէ հանգամանքից։ Թէ առաջիններին և թէ վերջիններին հայոց թագաւորները բնդունում էին վերին աստիճանի հիւրասիրութեամբ, մեծ պատիւ ու մեծարանք էին ցոյց տալիս նոցա, շնորհելով նոցա առատաձեռնութեամբ բնգարձակ բնակութեան տեղ։ հարուստ կայսրածնէր և, շատ անգամ, համեմատ նոցա իշխանական պատուին կամ նոցա հայաստանին ցոյց տուած ծառայութիւններին, և նախարարական իշխանութիւն և արտօնութիւններ հաւասար հայոց միւս, բուն նախարարական ցեղերին։ Այս բոլորից յետոյ սխալ չի լինիլ ասել, որ հայաստանը հէնց մեծամասնութեամբ այդ իւր թագաւորների արտաքոյ կարգի հիւրասիրութեան էր պարտական, որ այնքան բազմաթիւ օտար, բազմաազգի և բազմալեզու ցեղեր ամենայն կողմից դիմում էին հայաստան, հաստատուում էին նորա մէջ և նորան համարում էին իւրեանց համար բուն հայրենիք, և ձուլվում էին բնիկների հետ։ Իւրեանց կամքով հայաստան եկածների թիւը, սկսած, համարեա՛, մեր պատմութեան նախնական ժամանակներից մինչև վերջերը, խիստ շատ էր, բայց նոցա մէջ եղան նշա-

1) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԽԷ։

2) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԽԷ։

3) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԿԴ։

նաւոր նամանաւանդ Վանանդացիք ¹⁾, Քնթունիք ²⁾, Ամասու-
նիք ³⁾ և Կամնարականիքը ⁴⁾։ Վանանդացիք առաջ եկան Վունդ
կամ Վլուդնդուր Բուլղարացի իշխանի գերդաստանից։ Վունդ,
ինչ ինչ պատճառներից թողնելով իւր բուն հայրենիքը Վոյգայի
ափերում, իւր հպատակների հետ միասին եկաւ հայաստան Ար-
շակ Ա-ի օրերով և բնակուեցաւ Այրարատեան նահանգի Վերին
կամ Անդալոս կոչուած Բասեան գաւառում, որ շնորհուած լի-
նելով նորան Արշակից, իբրեւ բնակութեան տեղ և ժառանգա-
կան կալուած, Վունդի անունով կոչուեցաւ Վանանդ, Քնթունիք
առաջ եկան Քանանիդաս Քանանացուց, որ, գալով հայաստան
բռնակալական հարստութեան ժամանակ և հաստատուելով նո-
րա մէջ, ստացաւ իշխական պատիւ և կալուածք Գեղամայ ծովի
ափին։ Վաղարշակ իւր կարգադրութիւնների ժամանակ տալիս է
Քանանիդասի ցեղին ձեռէք զգեցուցանողի պաշտօն և նորանից
կազմում է վերդյիշեալ Քնթունեաց նախարարութիւնը։ Ամա-
սունիք առաջ եկան Մանու հրէայի ցեղից, որ, գալով հայաս-
տան Արտաշէս Բ-ի ժամանակ, ստացաւ Արաղածոտն գաւառում
կալուածներ և նախարարական պատիւ։ Կամնարականները առաջ
եկան Կամնարից, Պերդամնատի որդուց, որ գալով հայաստան
Տրդատի ժամանակ, մկրտուեցաւ և նախարարական պատուի հետ
միասին ստացաւ և հարուստ կալուած Ծիրակում։ Օտար իշխա-
նական ցեղից էր և Առաւելեան նախարարական ցեղը, որի նախ-
նիքը, գալով հայաստան Սաթենիկ թագուհու հետ միասին, իբ-
րեւ նորա ազգականներ, վարձատրուեցան Արտաշէսից հարուստ
կալուածներով և նախարարական պատուով ⁵⁾։ Հակառակ իւ-
րեանց կամքին, մի որ և իցէ հանգամանքից ստիպուած հայաս-
տան եկածներից նշանաւոր են՝ Արծրունիք, Գնունիք և Մամիկո-
նեանք։ Արծրունիք և Գնունիք Ասորեստանից էին. նոցա նախնին
կոչվում էր Ադրամէլք կամ Արդամոնդան, որ իւր եղբօր Սանա-
սարի հետ փախել եկել էր հայաստան Պարդոյի հօր Սկալորդու
ժամանակ, Ադրամէլքի և Սանասարի իւրեանց հայրենիքից փախ-

1) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ Զ։

2) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ Է։

3) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԾԷ։

4) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ Դ։

5) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԾԸ։

չեյու պատճառը լինում է այն հանդամները, որ ինչ ինչ պատճառներից նորա սպանում են իւրեանց հօրը, Սենեքերիմ՝ Թադաւորին և ապաստանում են հայոց Սկայորդուն, որ նոցա սիրով ընդունում է և բնակեցնում է Սանասարին հայաստանի հարաւային սահմանում, որի ցեղից Վաղարշակ յետոյ ժամանակի նշանակեց բղեւաշն Աղձնիքում, Ադրամելիքին հայաստանի հարաւ-արեւելեան սահմանում, որի ցեղից և առաջ եկան Արծրունեաց և Գնունեաց նախարարութիւնները նոյն Վաղարշակի օրերով¹⁾։ Մամիկոնեան նախարարութեան նախնին կոչվում էր Մամիգուն. նա ազգով ձենացի է եղել և եկել է հայաստան, անխուսափելի մահից աղատուելով, ձենաց ձենրակուր Թագաւորը ունեցել է երկու կաթնեղբայր՝ Բղդոն և Մամիգուն, որ մեծամեծ նախարարներ են եղել ձենաց երկրում։ Բղդոնը չարախօսում է Մամիգունի վերայ Թագաւորի առաջ և համոզում է նորան սպանել իւր կաթնեղբորը։ Մամիգուն, վերահասու լինելով այս եղելութեան և մահը, ինչպէս ասվում է, աչքի առաջ տեսնելով, շտապում է և իւր բոլոր գերդաստանով փախչում է Պարսկաստան նոյն իսկ ժամանակ, երբ հայաստանը գտնվում էր Պարսից Արտաշէր Սասանեանի ձեռքին։ ձենրակուր սկսում է Պահանջել Արտաշէից, որ նա իւր ձեռքը տայ փախտականին, սպանալով հակառակ դէպքում պատերազմ՝ յարուցանել։ Արտաշէի յաջորդ Շապուհը, ձենաց Թագաւորի խիստ պահանջմունքից ալատուելու համար, ուղարկում է Մամիգունին հայաստան, յայտնելով ձենրակուրին, որ ինքը Մամիգունին հարածել է դէպի արեւմուտք։ Երբ ծրգատ, պարսիկներին ջարդելով, յաղթանակով մտնում է հայաստան և բոլոր նախարարները դուրս են գալիս նորա առաջ, Մամիգունը ևս միսնների հետ միասին ընդ առաջ է գնում Թագաւորին և ստանում է ոռձիկ և կալուածք։ Յետոյ ժամանակի Մամիգունը ստանում է և նախարարական պատիւ, երբ որ սպանում է Սլուէին, որ ապստամբել էր Թագաւորի դէմ, և դորանով մեծ ծառայութիւն է ցոյց տալիս Տրդատին²⁾։ հակառակ իւրեանց կամքին հայաստան եկածների թուին պատկանում են և այն բոլոր իշխանական գերդաստանները, որոնց մեր Թագաւորները բազմաթիւ պատերազմների մէջ գերելով, բերում բնակեցնում

1) Խորենացի՝ գիրք առաջին, գլուխ ԻԳ.

2) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԶԴ և ԶԱ:

էին հայաստանում, բնակութեան տեղ և կալուածներ շնորհելով նոցա. հայոց թագաւորների գերի բերած իշխանական գերդաստաններից, նամանաւանդ, նշանաւոր եղաւ մեր պատմութեան մէջ Բագրատունեաց ցեղը, որի Շամբատ անունով գլխաւորին մեր հրաշեայ թագաւորը բերել էր հայաստան Նարեկուղծոտորի միշտ նշանաւոր հրէից պատերազմի ժամանակ, Շամբատի ցեղը, հաստատուելով հայաստանում շատ մեծացաւ, հարստացաւ և ժամանակի ընթացքում եղաւ հայոց իշխանական ցեղերի գլխաւորներից մէկը. Բագրատ, Շամբատի ցեղից մէկը, արդէն այնքան պատիւ ու մեծարանք էր վայելում հայաստանում, որ երբ հայոց նախարարները խմբովին դուրս պէտք է գալին Վաղարշակին բնաւառաջ, իւրեանց գլուխ ընտրեցին նորան, Վաղարշակ, վարձատրելով իւրաքանչիւր նախարարի, ըստ իւր արժանաւորութեան, ամենամեծ պատիւը՝ թագադիր-ասպետի և արեւմտեան զօրքի սպարապետութեան յանձնեց Բագրատին, որից առաջ եկաւ հռչակաւոր Բագրատունեաց նախարարութիւնը¹⁾ :

Բ.

Վերոյիշեալ բազմազգի, բազմատարր, բազմալեզու, բազմակրօն իշխանական գերդաստանները, գալով հայաստան և բնակութիւն հաստատելով նորա մէջ թէ ինքնակամ, թէ հակառակ իւրեանց կամքին ժամանակի ընթացքում կորցրին իւրեանց կրօնքը, լեզուն, սովորութիւնները և բոլոր իւրեանց տղգային առանձայատկութիւնները, ընդունեցին հայկական բնաւորութիւն և վերջնականապէս ձուլուեցան հայերի հետ, հայ դարձան. Օտարագգիների հայերի հետ խառնուելու և ձուլուելու այդ գործուղութիւնը կատարուեցաւ հայաստանում առանց ստիպմունքի, համեմատաբար աւելի կարճ ժամանակամիջոցում, քան թէ ուրիշ երկներում, հանդարտ, բնական կերպով, հետեւելով պատմութեան այն անփոփոխ օրէնքին, որ առաջ, թէ յետոյ փոքրամասնութիւնը պէտք է կլանուի մեծամասնութիւնից. հայաստանում բնակուած օտարագգիների հայերի հետ ձուլուելու գործողութեան համեմատաբար աւելի կարճ ժամանակում, քան թէ ուրիշ երկրներում, կատարուելու գլխաւոր պատճառը պէտք է

1) Խորենացի՝ գիրք առաջին, գլ. ԻԲ և գիրք երկրորդ, գլ. Է:

որոնք, նախ, հայոց նահապետների և թագաւորների գէպի
օտարները գործ դրած քաղաքականութեան մէջ և, երկրորդ, այդ
օտարազգիների կրօնական համոզմունքի մէջ, հայոց նահապետ-
ները և թագաւորները, ինչպէս վերն յիշեցինք, վերին աստիճա-
նի սիրելութեամբ էին ընդունում հայաստան գաղթող օտարնե-
րին, նամանաւնդ, իշխանական ցեղերին. նոքա շնորհում էին
նոցա ամենայն առատաձեռնութեամբ զիւղեր, զաստակերտներ,
ընդարձակ հողեր ու կայուածներ, մեծ քանակութեամբ ոռճիկ-
ներ, իշխանական պատիւ և մեծարանք ու նախարարական արտո-
նութիւններ. նոքա ամենեւին զանազանութիւն չէին անում օ-
տարների և հայերի մէջ, յաճախէի մինչև անդամ. նոցա աւերի
վարձատրելոյ, առաջ ամենելոյ, քան թէ բուն հայերին. թա-
գաւորների և նահապետների այս տեսակ վարմունքից օրինակ էր
առնում իւր յարաբերութեան մէջ և նախարարական զասա-
կարգը, որին իւր հերթով հետեւում էր իւր բոլոր ժողովուրդը.
Ահա՛ այսպիսով հեշտանում էր օտարների հայերի հետ ձուլու-
լու գործը, որովհետև նոքա, օտարները, ոչ մի նեղութիւն չտես-
նելով օտար երկրում, ոչ մի թշնամական յարաբերութեան
չպատահելով ժողովրդի զասակարգերից, այլ, ընդհակառակը,
վայելելով ամենից սէր և բարեկամութիւն, իսկ թագաւորներից
և պատիւ ու նիւթական ապահովութիւն, շուտով բնտէրանում
են օտար երկրի կարգ ու կանոնին, լեզուին ու սովորութիւններին
և նորան սկսում են ճանաչել իրանց իսկական հայրենիք. Գա-
լով օտարների կրօնին, որ, ինչպէս յայտնի է, մեծ գեր է իւս-
ղում մէկ ժողովրդի միւսի հետ ձուլուելու գործում, պէտք է
ասել, որ նա ոչ պակաս, քան թէ թագաւորների քաղաքակա-
նութիւնը, նպաստաւոր եղաւ օտարների հայանալու գործին.
Օտարները, ինչպէս յայտնի է պատմութիւնից, գլխաւորապէս
գաղթում էին հայաստան ոչ հեռի, գրացի երկրներից. ուստի
և, կարելի է ասել, որ նոքա շատ էլ անձանթմ և օտար չէին
հայերին. նոքա, եթէ ոչ մծուսուր, գոնէ, հեռաւոր ծանօթու-
թիւն ունէին հայոց երկրի հետ, նորա մէջ ապրող ժողովրդի և
նորա կրօնական համոզմունքի ու հիւսցքների հետ. նոցա կը-
րոնքը ևս իւր բաղմաստուած հան—հեթանոսական գաղափարնե-
րով շատ նման էր հայոց բաղմաստուած հեթանոսութեան. Ահա՛
այս իսկ պատճառով էրբ գրացի օտարները գաղթում էին հա-
յաստան, բնակութիւն էին հաստատում և բնտէրանում էին

երկրին, ոչ մի ընդգիմագրութեան կամ հակառակութեան չէին պատահում իրանց կրօնական հայեացքների և համոզմունքի կողմից բոլորովին խառնուելու հայերի հետ, որովհետև նոցա կրօնքը զիստաւոր կէտերում համարեա՝ նմանում էր հայոց կրօնքին: Արժէր միայն տեղի տալ մանրամասնութիւններում—և արդէն վերանում էր կրօնական, ուրեմն և զիստաւոր խտրութիւնը հայերի և օտարների մէջ, իսկ այդ՝ նոցա տեղի տալը մանրամասնութիւններում՝ հեշտութեամբ էր կատարւում: Ի նկատի առնելով այն նիւթական ապահով, այն, ըստ ամենայնի, բարեկեցիկ գրութիւնը, որ նորա վայելում էին հայաստանում: Իբրև ապացոյց, թէ կրօնական հայեացքների դանդաղանութիւնը և ընդհանրապէս կրօնական խտրութիւնը որքան դանդաղեցնում, կաղեցնում են երկու ժողովրդի միմեանց հետ ձուլուելու գործը, արժէ ուշադրութիւն դարձնել այն նշանաւոր դէպքերի վերայ, որ մենք պատահում ենք հայոց պատմութեան մէջ, Այն ժամանակ երբ Գրացի, իրանց կրօնական գաղափարներով հայերին նման գաղթականները հայաստանում չուտով կորցնում են իրանց ազգային առանձնադատութիւնները և ձուլվում են հայերի հետ, այնպէս որ կարճ ժամանակամիջոցում նոցա ազգութեան նշանը, հետքը եւ չէ երևում հայաստանում, հրէից գաղթականները, որոնց Մովսիսական—միաստուածեան գաղափարները ամենեւին չէին յարմարւում հայոց հեթանոսական կրօնքին, ապրելով հայաստանում և միւսների նման դանդաղելով նոյն ձախող և յաջող հանգամանքների մէջ, ենթարկուելով նոյն իսկ ազդեցութիւններին, դեռ շատ երկար ժամանակ, մինչև անգամ կրելով բազմաոսեակ ստիպմունք և նեղութիւն, պահպանում են իրանց ազգային առանձնադատութիւնները և չեն ձուլվում, ուրիշների նման, իշխող տարրի հետ: Նայոց թագաւորների հրէից գաղթականներին տուած նեղութիւնները առաջ էին գալիս ոչ թէ նոցա մոլեռանդութիւնից, այլ զուտ վարչական և տէրութեան շահերը պաշտպանելու նպատակից: Թագաւորները տեսնում էին, որ հրէից իշխանների մոփսիսական կրօնքը ընդհանրապէս մեծ վնաս է բերում տէրութեան գործերին: հրէայ նախարարները, ինչպէս, օրինակի համար, Բագրատունիները մեծ զիջք ունէին, մեծամեծ պատուաւոր և տէրութեան մէջ ամենակարեւոր պաշտօնների տէր էին. այն ինչ նոցա կրօնքը շատ անգամ բոլորովին արգելադրւում էր լինում նոցա կանոնաւոր կերպով և տէրութեան շահերին

Համեմատ կատարելու իրանց պարտականութիւնները: Հարկաւորում էր արդեօք նոցա շարաթ օրերը, համեմատ իրանց իշխանական դիրքին և պաշտօնին, մասնակցել միսս մեծամեծ նախարարների հետ միասին թագաւորական զօսանքներին—որսին, —նորա չէին կարողանում կատարել իրանց այդ պարտականութիւնը, որովհետեւ, իրանց կրօնքին համեմատ, պէտք է սուրբ պահէին շարաթը, խողի միս չպէտք է ուտէին, որ թէն մի առանձին, էական ֆիաս չէր բերում տէրութեան, բայց խանդարում էր արդէն մի անգամ թագաւորից ընդունուած ու հաստատուած կարգ ու կանոնը, որ և տհաճութեան պատճառ էր լինում. բայց որ ամենից կարեւորն ու գլխաւորն է, շատ անգամ պատահում էր շարաթ օրերը պատերազմի գնալ, որին շմանակցելը հրէաների կողմից արդէն մեծ ֆիաս էր բերում տէրութեան էական շահերին, որ և, յայտնի բան է, չէին կարող թողլ տալ հայոց թագաւորները, տէրութեան շահերի այդ ներկայացուցիչները. Ահա այս և այսպիսի շատ էական և ոչ էական պատճառներից մեր թագաւորները որոշում են, վերջապէս, վերջ գնել այն կրօնական խտրութեան, որ կար հայերի և հրէաների մէջ, գործ գնելով որոշակի և վճռողական միջոցներ վերջինների գէտ: հայոց թագաւորները, որոշելով մէկ անգամ ընդ միշտ վերացնել կրօնական խտրութիւնը, իրանց այդ որոշումն գործ գնելու գործողութեան մէջ մինչև անգամ չեն ցոյց տալիս այն մոլեռանդութիւնը, որ այդպիսի գէտքերում գործադրվում էր ուրիշ երկրներում, ի նկատի առնելով այն յամառ գիմադրութիւնը, որ տեսնում էին նորա իրանց ձեռքով մեծարանքի, պատուի և փառքի հասցրած, փայլալսած հրէայ իշխաններից. նորա, նախ, աշխատում են խօսքով համոզել նոցա թողնել իրանց հայրենի կրօնքը, ցոյց տալով նոցա կրօնական խտրութիւնից առաջ եկած ֆեասը հայոց տէրութեան համար. Այսպէս, Վաղարշակը—նա, որ տուել է, Բագրատունի նախարարներին տէրութեան ամենամեծ պատիւներից մէկը՝ թագազիր-ասպետի և արեմտեան զօրքի սպարապետութեան պատիւը, երբ առաջին անգամ առաջարկելով նոցա վերջ գնել կրօնական խտրութեան, տեսնում է, որ նորա զբաղաւորանում են կատարել նոցա ցանկութիւնը, ամենեւին մինչև անգամ չէ պնդում իւր առաջարկութեան վերայ¹⁾. Արշակը, Վա-

1) Խորենացի՝ զիրք երկրորդ, գլուխ Ը:

ղարշակի որդին և յաջորդը բաւականանում է միայն նորանով, որ Բագրատունիները խոստանում են չթլլատել իրանց զաւակներին, խողի միս ուտել և յուծել շարաթը որսի և պատերազմի գնալու ժամանակ¹⁾։ Տիգրան Բ-ը, Արշակի թուր, այն մեծ և հզօր թագաւորը, որի առաջ գլուխ էին խոնարհեցնում բոլորը, այն ջերմեռանդ հեթանոսը, որ չէր բաւականանում հայկական աստուածներով, այլ և ամենայն միջոցներով աւելացնում էր աստուածների խաւովրդ, մայրելով հայոց մէջ և յունաց աստուածների պաշտամունքը, տեսնելով Բագրատունիների ընդդիմադրութիւնը երկրպագելու հայոց կուռքերին, խլում է միայն նոցանից արեւմտեան զօրքի սպարապետութեան պատիւը և պատժում է յեզուն կտրելով Ասուգ կամ Աշոտ անունով Բագրատունի նախարարին, որ հայհոյում էր հայոց աստուածներին²⁾։ Խիստ, ստիպողական միջոց առաջին անգամ գործ է դնում միայն Տիգրանի եղբայր Արշաւը, զլուելով հրէաների երկարատե յամառութիւնից և նոյն ժամանակ համոզուելով անցեալից, որ չէ կարող հասնել իւր նպատակին իւր նախորդների բռնած կողմնակի միջոցներով, նա վերջնականապէս առաջարկում է նոցա կամ ընդունել հայոց կրօնը և մնալ իրանց պատուի ու մեծարանքի մէջ, կամ՝ ջնջուել ամբողջ գերդաստանով ու սերունդով³⁾։ Սակայն խորամանկ հրէայ իշխանները կարողանում են աղատուել և այդ սաստիկ սպառնալիքից, ի վերին երեսս կեղծելով համաձայն ահարկու թագաւորի հրամանին, իսկ ծածուկ պահելով իրանց հայրենի օրէնքը և հասնելով մինչև Արգարի և Ս. Թադէոսի քարոզութեան օրերը, երբ արդէն միւսների հետ միասին ընդունում են քրիստոնէութիւն։ Այն համբամները, որ հրէաները Արշամի ժամանակ բոյսրովին չեն ընդունում հեթանոսութիւն, շնայելով նորա բոլոր սպառնալիքին և ստիպողական միջոցներին, այլ շարունակում են ապրել իբրեւ մինչև Արգարի օրերը, հեշտութեամբ կապացուցուի, եթէ մենք ի նկատի առնենք այն, որ դեռ Արգարի ժամանակ Եղեսիպում ապրում էին հրէայ իշխանական գերդաստաններ, Յայանի է, որ Ս. Թադէոս առաքելը, գալով հայոց Միջագետք, համեմատ Փրկչի հրամա-

1) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԹԳ։

2) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԺԴ։

3) Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԻԴ։

նին, առաջին անգամ խեղցն չէ գնում՝ [ժազաւորի պալաւը, այլ առաջ իջեւանում է հրէայ Տուրի իշխանի տանը, որ և առաջնորդում է յետոյ նորան Արգարի մօտ¹⁾]:

Գ.

Հայոց նախարարական ցեղերի [ձիւր [թէ՛ բնական և [թէ՛ վերոյիշեալ երկու եղանակով ու միջոցով բազմանալով, շարունակում է, ինչպէս արդէն մէկ անգամ յիշեցինք, անընդհատ մինչև Արշակունեաց հարստութեան բառնալը (428): Թէև մենք ո՛չ ազգային աղբիւրներից և ո՛չ օտար հեղինակներից մի որոշակի տեղեկութիւն չունինք, [թէ ո՞րքանի էր հասնում նախարարական ցեղերի [ձիւր նոցա ամենաբազմացած ժամանակամիջոցում, այսինքն Արշակունեաց հարստութեան օրերում, լայց ի նկատի առնելով Մեսրոպէ Երէց կոչուած, տասներորդ դարի հեղինակի, Ստեփաննոս Սրբէկեանի, երեքտասներորդ դարի հեղինակի վկայութիւնը, որոնցից առաջինը «չորեքհարիւր» նախարարական բարձ է գնում Արշակ Բ-ի (364—382) և մեծն Ներսէս կաթողիկոսի օրերով, իսկ երկրորդը նոյնքան է համարում գլխաւոր նախարարների [ձիւր Տրդատի (286—342) և Ս. Գրիգոր Լուսաւորչի օրերով, կարելի է ասել, որ նոցա [ձիւր հասնում էր մօտաւորապէս չորսհարիւրի: Մենք գլխաւոր նախարարական ցեղերի չորսհարիւր [ձիւր մօտաւորապէս ենք համարում, որովհետև հակառակ վերոյիշեալ երկու հեղինակների վկայութեան ունինք նշանաւոր Փատոսոս Բիւզանդի, որ, ինչպէս յայտնի է, իւր պատմութեան մէջ ամենայն բանի մասին չափազանցօրէն է խօսում, և օտարազգի Պլինոս հեղինակի վկայութիւնները, որոնցից առաջինը գլխաւոր նախարարների [ձիւր Արշակ Բ ի ժամանակ գնում է իննհարիւր, իսկ երկրորդը—հարիւր քսան ներոնի և Վեսպասիանոսի օրերով: Արշակունեաց հարստութեան բառնալուց յետոյ, ինչպէս նկատեցինք, նախարարական ցեղերի [ձիւր սկսում է զգալի կերպով նուազել: Նախարարների նուազման պատճառը, կարելի է, կրկնակի համարել՝ արտաքին և ներքին: Արտաքին առաջին պատճառը մենք կոչում ենք նորա համար, որ նախարարների [ձիւր նախ և առաջ և գլխաւորապէս նուազում է

¹⁾ Խորենացի՝ գիրք երկրորդ, գլուխ ԼԳ:

արտաքին հանգամանքներից, արտաքին թշնամիների ձեռքով: Յայտնի է, որ Արշակունենաց հարստութեան վերջանալուց յետոյ, հայաստանը ընկնում է պարսից «արքայից արքաների» ձեռքը և, թէև պահում է իւր ներքին անկախութիւնը և կառավարվում է նախարարների ձեռքով, բայց, իրօք, նա դառնում է Պարսկաստանի մեծ նահանգներից մէկը, գտնուելով Մարզպան կոչուած պարսից կառավարչի անմիջական հսկողութեան ներքոյ: Սկսվում են յայտնի կրօնական պատերազմները, որոնց պարագլուխ լինելով նախարարները, ստիպուած են լինում նոքա և նոցանից առաջ եկած բոլոր նեղութիւնները և ծանրութիւնը բառնալ իրանց ուսերի վերայ: Շուտ չեն վերջանում Վարդանանց և Վահանայ պատերազմները, նոքա, ընդհակառակն, տեսւմ են շատ երկար և մղվում են երկու կողմից ևս՝ հայերի և պարսիկների վերին աստիճանի խստութեամբ և յամառութեամբ, մէկ արիւնահեղ պատերազմը տեղի է տալիս միւսին, պարսից թագաւորների մէկ խորամանկ քաղաքականութիւնը բռնում է միւսի տեղը, իսկ որտեղ գործ չէ կարողանում տեսնել պատերազմի սուրբ, յատաճ են գալիս թոյներ, կաշառքը, քսութիւնը և խաբէութիւնը, որոնք, գուցէ, աւելի վտանգաւոր են լինում, քան թէ առաջինը: Այս երկարատեւ և արիւնահեղ պատերազմների մէջ հայոց նախարարներից շատերը, կորցնելով իրանց թէ նիւթական և թէ բարոյական ոյժերը և դորա հետ սերտ կապերով կապուած իրանց նշանակութիւնը և երկրի մէջ ունեցած ազդեցութիւնը, ընկնում են, նուաղում, և, վերջ ի վերջոյ, բոլորովին ոչնչանում: Իսկ եթէ այդ բոլորի վերայ աւելացնենք և այն, որ նախարարներից շատ շատերը ուղղակի ընկնում, մեռնում են պատերազմների մէջ, շատերը ևս նոցանից մաշում են իրանց կեանքը պարսից երկրի խաւարտշին և խոնաւ բանտերում, կըստանանք մի պատկեր, որի մէջ պարզ, ինչպէս հայելու մէջ, կարելի կըլինի տեսնել նախարարական ցեղերի նուազման իսկական պատճառներից մէկը: հայաստանը, պարսից ձեռքից դուրս գալով, ընկնում է կրօնամոլ յոյների ձեռքը, որոնք, թէև հաւատակից էին հայերին, բայց Քաղկեդոնի ժողովի պատճառով աուլցուած լինելով դէպի հայերը կրօնական ատելութեամբ, ոչ սակաւ նեղութիւն էին տալիս հայերին, քան պարսիկները, անդադար ահագին զօրքով հեղեղելով մեր երկիրը և բոնի կերպով ստիպելով հայերին ընդունել վերոյիշեալ ժողովի կանոնադրութիւնը:

Այդ խառնշուփ զրույթիւնը, որ ասած էր գալիս յոյների վերո-
շիշեալ յարարերով թիւնից զէպի հայերը, յայտնի բան է, չէր
կարող նպաստել նախարարական ցեղերի զօրանալուն, այլ, ընդ-
հակառակն, աւելի ևս նուազեցնում էր նոցա թիւը, որովհետեւ
նոքա էին միայնակ հայաստանի դժը, նոքա էին խեղճ ժողովուրդի
յոյն ու ապուէնը այդ թշուառութեան օրերում, նոքա էին,
վերջապէս, և հայաստանեայց Ս. եկեղեցու պաշտպանը. նոքա
ևս հէնց այդ իսկ պատճառով պէտք է կրէին զլիսաւոր փեսան
ու զըզանքն, նուազուելով թէ՛ նիւթականապէս, թէ՛ բարոյապէս
և թէ՛ թուով օրհններից յետոյ հերթը գալիս է արաբներին կամ,
ինչպէս նոքա մեր պատմութեան մէջ կոչվում են, հազարացի-
ներին, որոնք արդէն ուղղակի հետեւում էին այն քաղաքակա-
նութեան, որ ջնջին նախարարական ցեղերը հայաստանից և,
պիտիւսով զրկելով հայաստանը նորան պաշտպանողական դժից,
հեշտութեամբ տարած են իսլամութիւնը հայ ժողովուրդի մէջ, միով
բանիւ հայաստանում նոյն իսկ զերը խաղան, որ և յաջողու-
թեամբ խաղացել էին Պարսկաստանում։ Ում յայտնի չէ Ար-
դուլայի, ասածին հայոց Ոստիկանի գործողութիւնները, որ, հա-
մաձայն Դամասկոսի ամիրապետից ստացած հրամանին, ժողովեց
բոլոր հայոց մեծամեծ նախարարներին, որոնց մէջ և նշանաւոր
Սմբատ Բագրատունի նախարարին, և շղմայակապ ուղարկեց
Դամասկոսի բանտերը. ում յայտնի չէ և Արդուլայի յաջորդ
Կաշմի կամ Կասրմի արարմունքը նոյն իսկ նպատակով, որ խա-
բէութեամբ ժողովեց հայոց նշանաւոր նախարարներին Նախիջևա-
նի և Խրամի եկեղեցիներին մէջ և բոլորին միասին անդթարար
այրեց. ում, վերջապէս, յայտնի չէ և անգութ Բուղայի կար-
գադրութիւնները, որով նա միանգամայն ամայացրեց հայաստանը
նախարարական յայտնի ցեղերից։ Նախարարական ցեղերի նուազ-
ման պատճառներից երկրորդը մենք կոչում ենք ներքին, որովհե-
տեւ նա կատարուեցաւ հայաստանի մէջ, նոյն իսկ հայերի ձեռքով
ներքին խռովութիւնների, անիշխանութիւնների և պատերազմների
միջոցով։ հայաստանի ներքին խռովութիւնների և պատերազմների
պատճառները բազմաթիւ էին, բայց նոցանից ամենագլխաւորը և
առաջի ընկնողը երկուսը կարելի է համարել, որոնք գոյութիւն
ունէին հայաստանում ոչ միայն Արշակունեաց հարստութեան
վերջանալուց յետոյ, այլ և նոյն իսկ Արշակունիների ծաղկած
ժամանակ։ Այդ երկու գլխաւոր պատճառներից մէկը համարվում

է հայոց թագաւորների ձգտումն ընդլայնացնել թագաւորական իշխանութիւնը, սահմանափակելով նախարարների իշխանութիւնը, իսկ երկրորդը—մէկ նախարարական ցեղի ձգտումն հարստանալու և հզօրանալու, խլելով միւսից նորա սեփական կալուածները և իշխանական պատիւը, Թէ այս և թէ այն ղէպքում առաջ էին գալիս վերոյիշեալ բազմաթիւ ներքին խռովութիւններն ու պատերազմները, որոնց մէջ նախարարների թիւը բնականաբար նուազում ու պակասում էր: Նախարարական ցեղերի նուազման այդ երկու ներքին պատճառների վերայ պէտք է աւելացնել և մի երրորդը, որ առաջ գալով նոյն իսկ երկու առաջիններից, ոչ պակաս նպաստում էր նախարարների թիւի նուազելուն: Շատ նախարարական գերդաստաններ, տեսնելով իրանց հայրենեաց ներքին անապահով դրութիւնը, որ առաջ էր գալիս ներքին յաճախակի կրկնուող խռովութիւններից ու պատերազմներից, տեսնելով արտաքին թշնամիների՝ Պարսից, Յունաց և Արաբացոց տուած նեղութիւնները և ոչ մի տեղ ընդարձակ հայաստանի մէջ կեանքի ապահովութիւն, հանգստութիւն և անդորրութիւն չվայելելով, թողնում են իրանց արխնով շաղկապած հայրենիքը և գիմում են օտար երկրներ, նամանաւանդ, Բիզանդիոն, որտեղ խառնուելով տեղացիների հետ, կորչում են և անհետանում իսկոյն: Սակայն հայոց նախարարական ցեղերը, վերոյիշեալ թէ ներքին և թէ՛ արտաքին պատճառներից նուազելով և թուով ևս պակասելով, ամենեկին երբէք չեն ոչնչանում: Նոքա, երբ 1393 թ. իսպառ վերջանում է հայոց թագաւորութիւնը և բոլոր հայաստանը ընկնում է օտարների ձեռքը, մտնում են այդ օտար տիրապետողների իշխանութեան ներքոյ, հնազանդում են նոցա, պահելով նոյն ժամանակ իրանց ձեռքին թէ՛ իրանց կալուածները և թէ՛ իշխանական պատիւը: Օտար տիրապետողների ձեռքի տակ հայոց նախարարական ցեղերից ոմանք կորչում են բոլորովին, ոմանք ևս, կորցնելով իրանց հարստութիւնը ու կալուածները, ընկնում են պատուից և իշխանութիւնից: Սպառուած ու իշխանութիւնից ընկած ցեղերի տեղ կազմվում են նոր իշխանական ցեղեր, որոնք իրանց իշխանական պատիւը ձեռք են բերում, օտար տիրապետողներից զանազան օգտաւէտ ծառայութիւններ մատուցանելով: Թէ հին ժամանակներից մնացած նախարարական ցեղերը և թէ նոր կազմուածները, հաստատուած լինելով իրանց իշխանութեան մէջ օտար տիրապետողներից, ի-

րանց կազմակերպութիւնը յօրինում են համաձայն այդ օտար-
ների օրէնքներին և սովորութեան, իրանց իշխանական կոչումները,
պատուանունները կամ տիտղոսները ստանում են նոցանից: Այս-
պէս ահա՛ առաջ են գալիս հայերի մէջ հայ պատրիկներ, մա-
գիստրոսներ, դուքսեր, կոմսեր կամ կոմէսներ, հիւպատոսներ,
էքսարքոսներ, սերաստոսներ, պանսերաստոսներ, ամիրաներ, մե-
լիքներ, խաներ, բէկեր, իւզբաշխներ, սուլթաններ, աթաբէկներ,
քալանթարներ, թաւաղներ, բէյեր, չէլիբիներ, էֆէնդիներ,
բարոններ, գրաֆներ, կնեազներ և այլն, որոնցից շատերը գոյու-
թիւն ունին մեր մէջ մինչև ցայսօր:

Դ.

Մեծ հայաստանի բոլոր տասն և հինգ նահանգների գա-
ւառները, բացի Այրարատեան նահանգի մեծամասնութիւնից, որ
համարվում էր թագաւորական տան սեփականութիւն, բացի
Զորորդ-հայքի հաշտենից, Տուրուբերանի Աղիովտ և Վասպու-
րականի Առբերանի գաւառներից, որոնց մէջ բնակվում էին
արքագունները, կառավարուելով նոցանից ստացած եկամուտով,
և, վերջապէս, բացի այն բոլոր կալուածներից, որոնք պատկա-
նում էին, հեթանոսութեան ժամանակ, քրմերին և մեհեաններ-
ին, քրիստոնէութեան ժամանակ, հոգևորականութեան, վան-
քերին, եկեղեցիներին և աստուածահաճոյ հաստատութիւններին,
բաժանուած էին նախարարական ցեղերի մէջ, կազմում էին նոցա
սեփականութիւնը և կոչվում էին նախարարական կալուածներ:
Իւրաքանչիւր նախարարական ցեղ կազմում էր մի տուն, որ կոչ-
վում էր նախարարութիւն և բաժանվում էր մեծ և փոքր նա-
խարարութիւնների: Մեծ կոչվում էին այն նախարարութիւնները,
որոնք, հարուստ և մեծ կալուածների տէր լինելով, իրանց աղ-
գակցութեամբ ևս մօտ էին հին նահապետական և թագաւորա-
կան գերդաստաններին և կամ իրանց սկիզբն առնում էին ամե-
նահին և նոյն ժամանակ պատմութեան մէջ դեր խաղացած
իշխանական ցեղերից: Իսկ փոքր կոչվում էին նոքա, որոնք, ընդ-
հակառակն, համեմատաբար աղքատ լինելով, աղգակցութեամբ
ևս հեռի էին հին նահապետների և թագաւորների գերդաստան-
ներից: Թէ մեծ և թէ փոքր նախարարութիւնները կազմում էին
ինչպէս յիշեցինք, մի տուն կամ գերդաստան, որի գլուխը կոչ-

վում էր Տէր, Նահապետ, Տանուտէր, Զեռնաւոր իշխան, իսկ գերդաստանի միւս անդամները — սեպուհներ, Նախարարական գերդաստաններում Նախարարական պատիւը ժառանգական էր և անցնում էր որդէ ցորդի. հօրը ժառանգում էր մեծամանու-
թեամբ մեծ, անդրանիկ որդին, որին միւս անդամները պարտական էին ցոյց տալ նոյն անպայման հնազանդութիւնը, որ ցոյց էին տալիս հօրը նորա կենդանութեան ժամանակ: Ամենայն մի նա-
խարարութիւն տիրում էր իւր կալուածներին անձնիշխանաբար և, թէև կառավարում էր իւր կալուածքի ժողովուրդը բռնակալա-
կան իշխանութեամբ, բայց այդ բռնակալական անտահման և բացարձակ իշխանութիւնը կրում էր իւր վերայ աւելի Նահապե-
տական բնուորութիւն, այսինքն այնպէս, ինչպէս մի հայր կա-
ռավարում է իւր ընտանիքը, քան թէ բռնակալական, բառի բուն նշանակութեամբ, ծորտութիւն կամ սորկութիւն, ինչպէս ուրիշ երկրներում, հայաստանում երբեք եղած չէ, գոնէ, ոչ մի հեղինակի, ոչ մի պատմագրի գրուածների մէջ մենք չենք գտնում տեղեկութիւն դորա մասին: Գրաւոր օրէնք չկար, ամե-
նայն բանում տիրում էր նախարարի կամքը, որ իւր հերթով սահմանափակվում էր սովորութեան իրաւունքով, որ դարերով կազմակերպուած և արմատացած լինելով ժողովրդի մէջ, ստա-
ցել էր մի տեսակ գրաւոր օրէնքի նշանակութիւն: Տանուտէրը, իբրև տէր իւր կալուածքի, ստանում էր երկրի արդիւնաբերու-
թեան մի մասն և այդ եկամտով իւր բոլոր գերդաստանը կա-
ռավարում էր, ինչպէս կամենար: Ոչ որ, մինչև անգամ թագա-
ւորը ևս իրաւունք չունէր խառնուելու նախարարների ներքին գործերի և կարգադրութիւնների մէջ: Այսպիսի մեծ իշխանու-
թիւն վայելելով իրանց սեփական կալուածներում, նախարարները արտաքոյ իրանց կալուածների հպատակում էին թագաւորին, սակայն այդ հպատակութիւնը շատ թոյլ էր և արտապայտովում էր շատ շնչին կերպով: Նախարարները պարտական էին, նախ,
իրանց սեփական ոյժերով պաշտպանել իրանց կալուածները թշնամիների յարձակմունքից, երկրորդ, նոքա պարտական էին որոշեալ թուով, նայելով իրանց կարողութեան, պատրաստի՝
զինուորուած և զգեստաւորուած, զօրք հասցնել թագաւորին պատերազմների ժամանակ և, վերջապէս, երրորդ, նոքա պէտք է իւրաքանչիւր տարի որոշեալ հարկ տալին թագաւորական գան-
ձարանին: Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ նախարար-

ների հպատակութեան երկրորդ կէտը ևս լաւ որոշուած չէր և նոցա կողմից այդ կէտի բնաւ կամ թերի կատարելը չէ երեւում մեր պատմութիւնից, որ ապստամբութիւն համարուէր, կարելի է գաղափար կազմել, թէ ինչպէս շնչին էին այն պարտականութիւնները դէպի թագաւորը, որ նոքա կատարում էին, հակառակ այն մեծ, և անսահման իշխանութեան, որ նոքա վայելում էին թէ՛ իրանց սեփական կալուածներում և թէ՛ ընդհանրապէս թագաւորական գործերի մէջ: Իսկ նոցա իշխանութիւնը թագաւորական գործերում և ընդհանրապէս բոլոր հայոց տէրութեան մէջ իրաւի որ շատ մեծ էր: Նոքա հայ ժողովուրդի մէջ կազմում էին առաջին, գլխաւոր ղինուորական-ազնուական դասակարգը, կոչվում էին ազատ, ազատորեար և վայելում էին ամենայն բանում մեծամեծ արտօնութիւններ թագաւորութեան ընդհանուր և եկեղեցական օրէնքների հիման վերայ: Օրինակի համար, եկեղեցական օրէնքների հիման վերայ, մի և նոյն ոճրի կամ յանցանքի համար նախարարը աւելի թեթեւ պատիժ էր ստանում, քան թէ սոսկը, բայց որ գլխաւորն է, ազատը երբէք չէր ենթարկվում մարմնական կամ ֆիզիքական պատժի, այլ միայն դրամական տուգանքի, այն ինչ սոսկը տուժում էր և նիւթապէս և ֆիզիքապէս, ինչպէս այդ կարելի է տեսնել 447 թուականին եղած առաջին Շահապիւանի եկեղեցական ժողովի կանոնադրութիւնից՝ «Եթէ որ կին ունիցի և պոռնկիցի, և զկարգ ամուսնութեան սրբութեամբ ոչ պահիցէ... զայնպիսն կշտամբեսցեն գլխաւորը գանիւք և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյն հանցեն... Եթէ ազատ է և գան չմարթի հարկանել, 'ի տուգանն և յապաշխարութիւնն... և այլն»: Նախարարները, բացի պատերազմական գործերից, զուարճութիւններից և որսի գնալուց, ուրիշ ոչնչով չէին պարապում: Նոքա չէին ցանում, բայց հրնձում էին, այսինքն ապրում էին ուրիշների քրտնքի աշխատանքով, պատրաստի եկամուտով, որ առատութեամբ ստանում էին իրանց կալուածներից: Նոքա էին կազմում թագաւորի փայլուն սվիտը. նոքա էին վարում տէրութեան մեծամեծ՝ թագադիր-ասպետութեան՝ երկրորդութեան, հաղարապետութեան, բզեաշխութեան, կողմնակալութեան, սպարապետութեան, յիշեցուցանողի, զգեցուցանողի, քրմապետութեան, մարդպետութեան, թիկնապահութեան կամ մալխազութեան, դատաւորութեան, քաղաքապետութեան և այլն պաշտօնները: Նոքա, միով բանիւ,

ինչպէս վկայում է Պլինտսը, վայելում էին այնքան մեծ իշխանութիւն, որ կազմում էին բազմաթիւ մանր թագաւորութիւններ հայոց ընդհանուր և մեծ թագաւորութեան մէջ: Եւ ճշմարիտ, հայոց մեծամեծ նախարաները ամենայն բանով՝ թէ արտաքին և թէ ներքին ձևերով, թէ իրանց կալուածների կազմակերպութեամբ և թէ իրանց կենցաղավարութեան տարազով նմանում էին և աշխատում էին նմանել հայոց թագաւորին և արքայազուններին: Նոքա հագնվում էին շքեղութեամբ և թագաւորավայել կերպով: Նոցա լոգիկը ասրանիւթ էր, պինայ, կոջուած ծովային կենդանու մանրաթելից գործած: Նոցա զգեստը ծիրանի էր և կապելու տեղը ոսկեհուռ զարդ ունէր. լոգիկ վերին ծայրում՝ գտնվում էր ալնիւ աղունքով յեռուած վարսակալը, որից կախուած էին երեք յակինթ ոսկե շղթայով: Նոքա ունէին մետաքսեայ պարեգօտ, ոսկեղէն, պալատազարդ, կօշիկներ նոնազոյն, մինչև ծնկները պատած: Նոքա ունէին իրանց մայրաքաղաքները, որոնք կոչվում էին Ոստաններ, ապարանքները, պալատները, որոնք իրանց միջի սարգ ու կարգով շատ նմանում էին արքունիքին: Նոքա ունէին իրանց զօրքը, պաշտօնեաները ներքիններով, մեհեանները քրմերով ու քրմապետով հեթանոսութեան ժամանակ, եկեղեցիները, վանքերը զրան երէցով և մի գլխաւոր եպիսկոպոսով: Նոքա ունէին նոյն տխրութիւնները և վիշտը, նոյն զուարճութիւններն ու զբօսանքը, որ և թագաւորը: Նոքա ունէին իրանց ընտանեկան շիրիմներն ու հանգիստը և մինչև անգամ, ինչպէս թագաւորները, ունէին իրանց ցեղերի առանձին տարեգրերը ու պատմագրերը, որոնք գրի առնելով նոցա գործերը, անմահացնում էին նոցա յիշատակը: Եւ վերջապէս, որպէս զի լիովին լինի նախարարների և թագաւորների միմեանց նմանելու պատկերը, այս բոլորի վերայ մենք պէտք է աւելացնենք և այն, որ նոքա արտաքին քաղաքականութեան մէջ ևս վարվում էին, ինչպէս անկախ թագաւորներ: Նոքա զեսպան էին ուղարկում, զեսպան էին ընդունում զրացի թագաւորներից և առհասարակ այնպիսի յարաբերութիւններ կապում օտարների հետ, որ կարող է կապել մի ընդարձակ երկրի անկախ թագաւոր: Այսպիսի մեծ իշխանութեան և նշանակութեան հայոց նախարարները, յայտնի բան է, մէկ անգամից չէին հասել: Նոցա իշխանութեան այդ տեսակ կազմակերպութեան հիմքը, ընդհակառակն, կորչում է խորին հնութեան մէջ և հասնում է մինչև անգամ հայոց հնաբոյն

պատմութեան առաջին շրջանին, Նախարարութեան իշխանութեան սկիզբն և նոցա կալուածական իրաւունքները, սկսուելով հայաստանի քաղաքական կեանքի հնագոյն ժամանակներից, կազմակերպուել ու զարգացել են, համեմատ հայ ազգի քաղաքական կեանքի հանգամանքներին, ճիշտ այնպէս, ինչպէս մենք այդ տեսնում ենք շատ ուրիշ երկրներում: Հայոց թագաւորների հայաստանում հաստատած միապետական իշխանութիւնը չէ եղել միապետական բառի բուն նշանակութեամբ, այլ միապետական-նահապետական, Իսկական միապետական իշխանութիւնը, որ տեղ տեղ մենք տեսնում ենք մեր պատմութեան մէջ մի քանի թագաւորների ժամանակ, երբէք մի ընդհանուր կանոնի բնաւորութիւն չի ստացել, այլ միշտ, համարեա՛, կապուած է եղել, կախումն է ունեցել միապետի անձնական ընդունակութիւններից և նորա բազկի զօրութիւնից: Ընդհանրապէս Նախարարական ցեղերը ունեցել են այնքան դժ, որ երբէք, համարեա՛, չեն կորցրել իրանց ունեցած արտօնութիւնները. նոքա միշտ ունեցել են ազդեցութիւն թագաւորական գործերի վերայ և իրանց իշխանութեամբ սահմանափակել են թագաւորի իշխանութիւնը: Այսպիսով հայոց թագաւորութիւնը հէնց սկզբից ստացել է մի տեսակ աւատական-տանտէրական կամ ֆեոդալական, նման միջնադարեան Եւրոպայի իշխանութիւններին, կազմակերպութիւն, որի մէջ թագաւորը համարվում էր Տէր կամ մեծ Նախարար, իսկ Նախարարական ցեղերը փոքր Նախարարներ կամ վասսալներ:

Ե.

Պատմութեան օրէնքները ամենայն տեղ անփոփոխ են. նոքա բոլոր ազգերի մէջ գործում են մի և նոյն տեսակ, առաջ բերելով նոցա կեանքում բազմաթիւ համանման երեւոյթներ, որոնք, թէև մասնաւորում զանազանվում են միմեանցից, ի նկատի առնելով ժամանակը, հրե կատարվում են այդ երեւոյթները, երկիրը, ժողովուրդը, որի մէջ երևան են գալիս նոքա, բայց ընդհանուրում, համարեա՛, նոյնն են. հայոց ազգը, իբրև քաղաքական և կրօնական օրէնքների հիման վերայ դեռ շատ հին ժամանակներից կազմակերպուած մի հասարակութիւն, իբրև իւր սեփական երկիրը, կառավարութիւնը, սովորութիւնները, լեզուն, գրականութիւնը և կրօնը ունեցող մի ժողովուրդ, մի խօսքով, իբրև

պատմական մի ազգ, որ ամենահին ազգերի՝ Փիւնիկեցիների, Եգիպտացիների, Բաբելացիների, Ասորեստացիների հետ միասին քաղաքական կեանք ստանալով, դուրս է եկել պատմական ասպարէզ և գործել ըստ իւր կարողութեան և հանգամանաց, յայտնի բան է, չէր կարող բացառութիւն կազմել այդ ընդհանուր պատմութեան օրէնքներից, հայոց պատմութեան մէջ ևս գործել են վերոյիշեալ անփոփոխ օրէնքները, որոնց հիման վերայ աստիճան առ աստիճան զարգացել ու կազմակերպուել են հայի քաղաքական և հասարակական կեանքի երեւոյթները, որոնք, միատեսակ պատճառների հետեանք լինելով, ստացել են և ուրիշ ազգերի պատմութեան մէջ նոյն անփոփոխ օրէնքների հիման վերայ արտայայտուած երեւոյթների բնուորութիւնը, Այսպիսի ընդհանուր երեւոյթներ հայոց պատմութեան մէջ շատ կան, նոցա թուին պատկանում է և հայ իշխանական ցեղերի կազմութեան, նոցա մեծամեծ իշխանութեան ձգտելու և հասնելու երեւոյթը, աւատական կամ ֆեօդալական իշխանութեան սիստեմի գոյութիւնը հայաստանում, որի մասին մենք առիթ ունեցանք յիշել անցեալ գլխում: Աւատականութիւնը Եւրոպայում սկըսվում է հին դարերի վերջերում և միջին դարերի սկզբներում: Ինչպէս յայտնի է, միջին դարերը բացվում են թէ հին դարերի տէրութիւնների և նոցա վարչութեան ձևի փոփոխմամբ և թէ բազմաթիւ նորանոր ազգերի շարժմամբ, տեղափոխութեամբ և քաղաքական կեանք ստանալով և պատմական ասպարէզ դուրս գալով: Ընկնում է Արևմտեան հռոմայեցոց ահեղ տէրութիւնը, տեղի տալով նոր, բարբարոս և խուժադուժ Կելտական, Գերմանական և Սլաւոնական ցեղերին, որոնք, իրանց անընդհատ արշաւանքներով խախտելով ահագին կայսերութեան հիմքը, հաստատում են իրանց իշխանութիւնը նորա աւերակների վերայ: Այդ նոր հաստատուած բարբարոս տէրութիւններից առաջին տեղը բռնում է Փրանկների տէրութիւնը, որի իշխանութիւնը տարածվում է, համարեա՛, բոլոր այժմուայ Գաղղիայի և Գերմանիայի մի մասի տարածութեան վերայ: Փրանկները իրանց արշաւանքները կատարում էին զօրավարների կամ հերցոգների առաջնորդութեամբ, որոնք, տէրութեան մէջ կազմելով մի առանձին զինուորական դասակարգ, բաժանել էին միմեանց մէջ տէրութեան հողերը և այդպիսով ձեռք էին բերել իշխանութիւն բոլոր ժողովրդի վերայ: Խլոդվիգը, որ 486 թ. կազմելով Փրանկների մեծ

տէրութիւնը, Փրանկների հզօրանալու իսկական պատճառը եղաւ, թագաւորական պատիւ և իշխանութիւն վայելում էր տէրութեան մէջ Կելտացիներից և Գերմանական ուրիշ ցեղերից, իսկ բուն Փրանկների աչքում նա միշտ մնաց հասարակ հերցոգ. իւր իշխանութեամբ համահաւասար միւս հերցոգներին, Զօրավարների կալուածները ժառանգական էին և կոչվում էին Ալլոգներ, որոնք և կալմում են իսկական հիմքն ու սկիզբն, որից ապագայում զարգացաւ և կալմուհցաւ բուն Փէօդալական սիստեմը, աւատականութիւնը, Ալլոգները իրանց տարածութեամբ հաւասար չէին. մեծամեծ հերցոգների ալլոգները աւելի ընդարձակ էին, քան թէ միւսներինը, իսկ թագաւորինը իրանց մեծութեամբ գերազանցում էին բոլորից. ժամանակի ընթացքում երբ, բազմաթիւ պատերազմների պատճառով, թագաւորի իշխանութիւնը աւելի հզօրացաւ, նորա ձեռքի տակ կենտրոնացան շատ աւելորդ հողեր և կալուածներ, որ և թագաւորները սկսան բաժանել իրանց հաւատարիմ ծառայող իշխաններին: Այդ նոր կալուածները, որ թագաւորները շնորհում էին յայտնի պայմաններով իշխաններին ցմահ, Փրանկների լեզուով կոչվում էին «Լեհն» (Lehn). իսկ լատիներէն՝ «beneficium»: Լեհն-շնորհ ընդունողը կամ Լեհնսմանն-ը (Lehnsmann) ստանձնում էր իւր շնորհ տուող տիրոջ կամ Lehnsherr-ին պաշտպանելու, կամ տուրք տալու, կամ նորա դրանը ծառայելու պարտականութիւն: Շնորհ բաժանողը թագաւորի կողմից առհասարակ լինում էր Maior domus-ը, որ ոչ սակաւ օգտվում էր նորանից: Ալլոգական սիստեմը աւելի ընդարձակվում, բայց և նոյն ժամանակ աւելի որոշ կերպարանք է ստանում Կարոլոս մեծի ժամանակ, որ տիրելով արեւմտեան Եւրոպայի մեծամասնութեան, տարածեց ամենայն տեղ մի և նոյն կարգ ու կանոնը, Կարոլոսի ցանկութիւնն էր բոլոր արեւմտե ն Եւրոպայից կազմել մի հզօր, անսահման իշխանութեամբ կառավարուող միապետութիւն իւր ձեռքի տակ: Այդ իւր նպատակին հասնելու համար Կարոլոսին պէտք էր հզօրացնել թագաւորական իշխանութիւնը, սահմանափակելով հերցոգների և Lehnsmann-երի իրաւունքները և իսպառ հնազանդեցնելով թագաւորին: Նա ձեռնարկում է իւր այդ դիտաւորութիւնը իրագործելու մեծ աջողութեամբ. նա խստութեամբ է վարվում գոռոզ հերցոգների հետ. շատերին նոցանից ուղղակի նուաճում է իւր ձեռքի տակ, իսկ բոլոր Լեհնսմաններին ընդհանրապէս

ստիպում է ուղղակի և ըստ ամենայնի կախումն ունենալ իւր կամքից, որով մի կողմից հզօրանում է թագաւորական իշխանութիւնը, միւս կողմից իսկութեամբ որոշվում է իշխանների յարաբերութիւնը, նոցա պարտականութիւններն ու իրաւունքները դէպի թագաւորը: Լեհնսմանն-ը Կարոլոսի ժամանակ պարտական էր անձամբ ներկայանալ թագաւորին, նորա խնամքի տակ մշտնել (recommendare) և, մերկանալով զէնքերը ու չորհրդով, ձեռքերը տիրոջ ձեռքի մէջ դնել և երգուել հաւատարմութեամբ ծառայելու նորան, որի փոխարէն տէրը աշխարհական Լեհնսմաննին առաջին ժամանակներում տալիս էր հող, քար կամ արօտ, վերջերում մի տէգ դրօշակով իսկ հոգւորին «խնվեստիտուրա», այսինքն գաւազան կամ մատանի: Բոլոր այս ծիսակատարութիւնը նշանակում էր, որ տէրը Լեհնսմաննին շնորհում է ֆեօդ (fe և od = հաւատարմական կալուածք), որ և խոստանում է չխզել նորանից ցմահ: Ֆեօդ կամ հաւատարմական կալուածք ընդունողը այնուհետև դառնում էր տիրոջ մարդը (homo), կամ վասսալը, կամ բառնը, իսկ տէրը նորան Սիւզերենը կամ Սենեօրը: Կարոլոսի այս նոր կարգադրութիւնների հիման վերայ առաջուայ ալլոդական և լեհնական սիստեմների տեղ կազմվում է մի նոր կալուածատիրական սիստեմ, որ ընդունուած է կոչել ֆեօդալականութիւն, որ այնքան մեծ նշանակութիւն ունեցաւ միջնադարեան Եւրոպայի պետութիւնների կեանքում: Ֆեօդալականութիւնը Կարոլոսի համար օգտաւէտ էր, որովհետև նորա ձեռքն էր տալիս իշխաններին, բայց նորանից սաստիկ տանջվում ու վնասվում էին մանր հողատէրերը և ժողովուրդը: Վասսալը, հովանաւորուած լինելով իւր Սենեօրից, սաստիկ նեղում էր փոքր հողատէրներին, որոնք իրանց հերթով, Վասսալի տուած նեղութիւններից ազատուելու համար, դառնում է Սուբվասսալ, որից առաջ էր գալիս մի տեսակ ճորտութիւն, որի հիման վերայ ամբօխը, կորցնելով իւր սեփական իրաւունքը իւր հողի վերայ, ստիպուած էր հարկ տալ իւր հողից օգտուելու համար և, այդպիսով աղքատանալով, դառնալ ստրուկ և ծառայ: Սակայն այն կռիւն ու մաքառումն, որ սկսել էր Կարոլոսը իւր իշխանների հետ, թագաւորական իշխանութիւնը հզօրացնելու համար, չվերջացաւ ֆեօդալական սիստեմի կազմակերպութեամբ, որովհետև որքան և իշխանները կախումն ունենային թագաւորից, որքան խոնարհ հնազանդութիւն ցոյց տային նորան, նոքա դարձեալ

արգելադրութիւն լինում թագաւորների միապետական իշխանութեան, անդադար ապստամբելով և խռովութիւն ձգելով տէրութեան մէջ, չենք ասում արդէն ժողովրդի մասին, որի աղքատ և ստրկացած զրութիւնը մեծապէս փնասում էր տէրութեան շահերին: Կարողութիւն յաջորդները այս իսկ պատճառով չէնց, հետեւելով նորա քաղաքականութեան, շարունակում են նորա սկսածը, մինչև որ, երկար մաքառումից յետոյ, յաջողում են քանդել գոռոզ բառնների ամրոցները և վերջ դնել ֆեոդալականութեան: չայաստանի կալուածատիրական սիստեմը իւր սկզբնական կազմակերպութեամբ և զարգացման աստիճաններով եթէ ոչ բոլորովին, գոնէ, շատ կողմերով նմանում է արեւմտեան Եւրոպայի այդ աւատականութեան: չայոց նախարարները ևս իրանց տանտիրական իրաւունքներով և տէրութեան մէջ ունեցած մեծ իշխանութեամբ, նոյն իսկ կազմակերպութիւնն են ունեցել, նոյն իսկ զարգացման ֆազիսներից են անցել, որից և Եւրոպական աւատականները, Եւրոպական աւատականութեան սկիզբն, ինչպէս մենք տեսնք, կազմում էր Ալլոգականութիւնը, որի գոյութիւնը չայաստանում նկատվում է դեռ չայոց ազգի քաղաքական կեանքի նախնազոյն շրջանում: Այդ ժամանակ չայաստանում դեռ մի ամբողջ տէրութիւն չկայ. երկրի մէջ իշխող տարրը կազմում են նահապետները կամ տանտէրները, որոնք կազմելով մի առանձին զինուորական դասակարգ, բաժանել են միմեանց մէջ բոլոր երկիրը, կազմելով նորանից բազմաթիւ տանտիրական կամ նախարարական կալուածներ, ինչպէս Ֆրանկների տանտէրները իրանց Ալլոգները, Տանտէրների կալուածները իրանց տարածութեամբ հաւասար չեն միմեանց, ինչպէս հաւասար չէին և հերցոգների Ալլոգները: Մեծ նահապետների կալուածները ընդարձակ էին, քան թէ փոքրներինը, իսկ թագաւորինը, երբ այդ պատիւը մեծ նահապետներից մէկը սեփականեց իրան, իրանց ընդարձակութեամբ գերազանցում էին բոլորից, չայ թագաւորը, ինչպէս և Ֆրանկներինը, առաջին ժամանակները ոչինչ առանձին նշանակութիւն չունէր տէրութեան մէջ. նա մեծ նահապետ էր միայն և չայոց միւս նահապետները նայում էին նորա վերայ, ինչպէս իրանց համահաւասար իշխանութիւն ունեցողի վերայ: Սակայն ժամանակի ընթացքում, ինչպէս Խլովիիի տէրութեան մէջ, չայոց թագաւորների իշխանութիւնը ևս սկսում է փոքր առ փոքր մեծանալ. արտաքին բազմաթիւ պատերազմների պատ-

Ճառով նոցա իշխանութեան տակ ևս կենտրոնանում են շատ ընդարձակ տարածութեամբ հողեր ու կալուածներ, որ նոքա ֆրանկների պէս սովորութիւն են անում շնորհել իրանց հաւատարիմ ծառայող թէ հայ և թէ օտար իշխաններին նախարարական պատուի հետ միասին, որով հայաստանի մէջ ևս, ինչպէս արեւմտեան Եւրոպայում, հաստատուում է մի տեսակ լեհնական-կալուածատիրական սիստեմ, միայն այն զանազանութեամբ, որ հայոց թագաւորները այդ կալուածները շնորհում էին ոչ ցմահ, ինչպէս Եւրոպացիք, այլ ժառանգարար, իրանց վերապահելով, նախարարի թագաւորի դէմ արած մի որ և է անհաճոյ գործի համար, նորանից այդ կալուածքը յետ խլելու իրաւունքը, հայկական այդ տեսակ կալուածատիրական սիստեմը զարգանում է և որոշ կերպարանք է ստանում, Վաղարշակի ժամանակ, որ, գալով հայոց երկիրը, ուրիշ շատ անկարգութիւնների և պակասութիւնների թուում, նախարարութեան կազմակերպութիւնը ևս գտնում է վերին աստիճանի անորոշ և մութ, որի մասին զանգատուելով, նա գրում է իւր եղբօրը. «Այս աշխարհի երեւելիներից յայտնի չէ ոչ առաջինն և ոչ վերջինը, և չկայ ոչինչ օրինաւոր, այլ բոլորը խառն ի խառն է և վայրենի»: Վաղարշակ մինչև իւր ժամանակ հայաստանում եղած կալուածատիրական սիստեմը չէ փոխում, նա, ընդհակառակն, շարունակում է աւելի ևս առատութեամբ բաժանել կալուածներ իշխաններին, որով, թէև մի կողմից աւելի ևս զարգացնում է հայաստանի կալուածատիրութիւնը, բայց միւս կողմից հզօրացնում է և թագաւորական իշխանութիւնը, հնազանդեցնելով հզօր նախարարներին իւր կամքին և որոշելով նոցա պարտականութիւնները դէպի թագաւորը և իրաւունքները տէրութեան մէջ: Վաղարշակ այս դէպքում հայաստանում խաղում է այն դերը, կատարում է այն, ինչ որ Կարոյոս մեծը Եւրոպայում: Նա սկիզբն է դնում իշխանների թագաւորի կամքին հնազանդելու գործին, որից, ինչպէս և արեւմտեան Եւրոպայում Կարոյոսի ժամանակ, առաջ է գալիս երկար ու ձիգ մաքառումն թագաւորի և նախարարների մէջ, որ, թէև այնպիսի յաջող ելք չէ ունենում թագաւորի իշխանութեան համար, ինչպէս Եւրոպայում, բայց և այնպէս հայոց կալուածատիրական սիստեմին տալիս է մի նոր բնաւորութիւն, որ շատ մտնում է ֆեոդալականութեան: Զիշտ է, հայաստանում չէ կատարվում ֆեոդալականութեան վերաբերեալ

այն մանրամասն և հանդիսաւոր ծիսակատարութիւնը, որ այդ դէպքում կատարւում է Եւրոպայում, թէև կալուածներ ու նախարարական պատիւ բաժանելու սովորութեան հետ միասին մեր մէջ ևս ընդհանրանում է զանազան պալատական պաշտօններ, իբրև շնորհ, տալու սովորութիւնը, այնպէս ճշտօրէն չեն որոշւում նախարարի պարտականութիւնները և իրաւունքները, այնպիսի վճռողական քաղաքականութիւն չէ լինում նախարարների վերաբերութեամբ, ինչպէս Եւրոպայում, բայց Վաղարշակի բոլոր ձգտումները, նպատակները և ձեռնարկութիւնները և ընդհանրապէս բոլոր նորա գործունէութեան ձևն ու հոգին հայաստանի կալուածատիրութեան կազմակերպութեան վերաբերութեամբ մեզ յիշեցնում են, յայտնի բան է, աւելի համեստ ու փոքր ձևով Եւրոպայի ֆեօդալականութիւնը Կարոլոսի ժամանակ, Ահա՛ այսպիսի, ընդհանուրում նման Եւրոպական ֆեօդալականութեան, իսկ մասնաւորում իւր արևելեան-հայկական առանձնայատկութիւններով, աւատական բնաւորութիւն հայաստանը պահպանում է ոչ միայն հայկազանց և Արշակունեաց ժամանակները, այլ Բագրատունեաց հարստութեան ժամանակ ևս, այսինքն մինչև բուն Մեծ հայոց թագաւորութեան բառնալը, փոխելով իւր արևելեան բնաւորութիւնը և ստանալով բուն Եւրոպական ֆեօդալականութեան ձև Ռուբինեանց հարստութեան ժամանակ հայաստանից դուրս, Կիլիկիայում կազմուած հայոց փոքր իշխանութեան մէջ:

2.

հայկական կալուածատիրական սիստեմի փոփոխուելու և Եւրոպական ֆեօդալականութեան իւր բոլոր մանրամասնութիւններով հայերի մէջ Ռուբինեանց հարստութեան ժամանակ մուտ գործելու պատճառը պէտք է որոնել, նախ, այն երկրի աշխարհագրական դիրքի մէջ, որտեղ հաստատուեցաւ և իշխեց վերջին հայոց թագաւորական ցեղը. երկրորդ, այն պատմական հանգամանքների մէջ, որոնց ազդեցութեան տակ գտնւում էր այդ ժամանակ Եւրոպան, Կիլիկիան, ինչպէս յայտնի է, բուն հայոց երկիր չէր. հայ ժողովուրդը ևս նորա մէջ բնիկ չէր, այլ գաղթական մեծ հայաստանից. սակայն օտար լինելով հանդերձ, նա հայերի համար նոցա բուն հայրենքի վերայ ունէր մի քանի ա-

ռաւելութիւններ, որոնցից առաջին տեղը բռնում էր նորա բնական ամուր զիրքը, որ միջոց էր տալիս բնակիչներին փոքր զբոսարարութիւն գնալ մեծ զօրութիւն ունեցող թշնամիների դէմ, իսկ երկրորդը—նորա աշխարհագրական յարմարութիւնը Միջերկրական ծովի ափին, որով նա մօտենում ու կապւում էր հարաւային Եւրոպայի ամենածաղկեալ տէրութիւնների՝ Զանովայի և Վենետիկ հասարակապետութիւնների և ուրիշների հետ։ Յայտնի է, որ հայերի պարապմունքների մէջ, երկրագործութիւնից յետոյ, առաջին տեղը՝ բռնում է վաճառականութիւնը, որով նորա սիրում էին զբաղուել զիս շատ հին ժամանակներից, հաստատուելով Կիլիկիայում, հայերը, յայտնի բան է, ձեռք չեն վեր առնում իրանց այդ սիրած զբաղմունքից, նամանաւանդ որ երկիրն ու տեղն էլ մեծապէս նպաստում էին զորան, նորա, օգտուելով Կիլիկիայի նաւահանգիստների յարմարութիւնից և ծովային երթուհիներից, հեշտութիւնից, իսկոյն և եթաձեռնարկում են վաճառականութեան, հաստատուելով թէ Կիլիկիայում և թէ Եւրոպայի վերջիշեալ տէրութիւնների մէջ իրանց վաճառատները, որով և սկսւում է եւրոպացւոց և հայերի մէջ փոխադարձաբար յարաբերութիւն։ հայերը սկսում են ճանաչել եւրոպացւոց, իսկ եւրոպացիք փոխադարձաբար ծանօթանում են հայերին. առաջ է գալիս վարքի ու բարքի, սովորութիւնների ու կենցաղավարութեան փոխանակութիւն, որի մէջ եւրոպացիք, բարձր լինելով հայերից իրանց քաղաքակրթութեամբ, սկսում են ազդել հայերի վերայ, աւելի շատ տալով, քան թէ ստանալով հայերի և եւրոպացիների մէջ վաճառականութեան պատճառով սկսւած այդ ծանօթութեան ու յարաբերութեան հզօրանալուն նպաստում է, նամանաւանդ, այդ ժամանակուայ Եւրոպայի գրութիւնը։ Պետրոս Անապատացու ոգևորութեամբ քարոզները և կաթողիկէ եկեղեցու հովուապետի ջերմ հրաւերքը, զէնք առնելու ի սէր Քրիստոսի և Սուրբ երկիրը մահմեդականների ձեռքից ազատելու, ոգևորուելով եւրոպացւոց, առաջ էին բերել նշանաւոր իաջակիր արշաւանքները, որոնց կատարուելը զարմանալի զուգահիշութեամբ հանդիպել էր հայերի Կիլիկիայում հզօրանալու և իշխանութիւն ձեռք բերելու ժամանակամիջոցին։ Եւրոպացիք, իաջակիր արշաւանքների պատճառով, մեծ բազմութեամբ հեղեղում են Ասորիքը, Կիլիկիան և Փոքր-Ասիայի միւս գաւառները. կազմւում է Երուսաղէմի թագաւորութիւնը, Անտիոքի գքսութիւնը

կամ, ինչպէս կիլիկեցիք կոչում են, Անտիոքի Բրինձութիւնը, Մարաշի և Եդեսիոյ կոմսութիւնները, Ռուբինեանք, շրջապատուած լինելով մէկ կողմից իրանց ատելի յոյներով, միւս կողմից—ահարկու Սելջուկների սուլթանութիւններով, սրտով ուրախ են խաչակրներին. նոքա սիրով ընդունում են լատինացի իշխաններին ու նոցա զօրքերին, պաշար են հայթայթում, ճանապարհ են ցոյց տալիս անծանօթ երկրում և մասնակցում են նոցա պատերազմներին Սարակինոսների դէմ, ներքին կողմից, ըստ ամենայնի ենթարկուելով նոցա ազդեցութեան, իսկ արտաքին, քաղաքական կողմից աւատական յարաբերութիւնների մէջ մտնելով և Վասսալ կամ, ինչպէս կիլիկեցի հայերը կոչում են, լիճ գառնալով Անտիոքի Բրինձին. հայերը հաւատում էին խաչակրութեան յաջող ելքին, խաչակիր գրաֆների, մարքիզների, բառոնների և մեծամեծ հերցոգների ազնուութեան, իսկ որ գլխաւոր է, նոքա հաւատում էին պապերի նպատակների անկեղծութեան... Ռուբինեանք մինչև Լևոն Բ-ի թագաւորութիւնը, համարուելով Անտիոքի լիճը, իրանց նորահաստատ, փոքրիկ լեռնային իշխանութիւնը ևս կազմակերպում են, ըստ ամենայնի նորա նմանութեամբ. շուտով փոխվում ու Եւրոպական բնաւորութիւն են ստանում Կիլիկեցւոց իրանց բուն հայրենիքից բերած կարգ ու կանոնները, բարքն ու վարքը, սովորութիւնները, կեանքի ներքին և արտաքին տարազը. ընդունվում է Եւրոպացւոց օրէնսդրութիւնը՝ Նրուսադէմի և Անտիոքի «Ասսիզները», որոնցից վերջինը թարգմանվում է յետագայ ժամանակներում հայերէն լեզուով և թողորովին գործածութեան մէջ է մտնում է Կիլիկիայ զարպաններում կամ ատեաններում. հայոց լեզուն աղճատվում է, ողողուելով լատինական և ֆրանսիական ոճերով ու բառերով, և, մինչև անգամ լատինականութեան ազդեցութեան ներքոյ, լուսաւորչական եկեղեցու անարատութիւնը ևս խախտվում է. Պապերի հոգատար խնամատարութեամբ, լուսաւորչական հոգեւորականութեան համբերատարութեամբ և հայոց իշխանների ու թագաւորների քաղաքականութիւնից առաջ եկած զիջումներով առաջ է գալիս «Ունիտորութիւնը», որ Կիլիկիայում սկիզբն դնելով կաթոլիկութեան, նպաստում է յետագայ ժամանակներում մի անկախ հայ-կաթոլիկ եկեղեցու հաստատուելուն հայերի մէջ. Այս բոլոր յեղափոխութիւնների ժամանակ, երբ ամենայն ինչ կերպարանափոխ է լինում Կիլիկիայում, յայտնի բան է,

չէր կարող անաղարտ մնալ հայ իշխանների՝ Ռուրիկեանց, Ապրէ-
ղարիպեանց, Օշինեանց, Նաթանայէլեանց և ուրիշների հայաս-
տանից իրանց հետ բերած կալուածատիրական սիստեմը։ հայոց
նախարարական կալուածատիրութիւնը, ինչպէս մէջք արդէն տե-
սանք անցեալ գլխնետում, արդէն առանց այն ևս նման էր Եւ-
րոպականին, կրելով իւր մէջ աւատականութեան կամ ֆեոդա-
լականութեան սաղմը։ Այժմ նա Կիլիկիայում պատահելով և
մշտապէս ընդհարուելով Եւրոպական ֆեոդալականութեան հետ,
յայտնի բան է, շատ հեշտութեամբ և կարճ ժամանակամիջո-
ցում, ինչպէս հայկական կեանքի և բոլոր միւս կողմերն ու ար-
տայայտութիւնները, պէտք է փոխէր իր հայկական-արեւելեան
բնաւորութիւնը և ընդունէր Եւրոպական ֆեոդալականութեան
կերպարանք։ Ֆեոդալականութեան ևս ամենածաղկած ժամանա-
կամիջոցն էր. Վասսալները, օգուտ քաղելով Կարոյինգների թու-
լութիւնից, մեծ ազատութիւն էին ձեռք բերել։ Նոքա իրանց
կալուածներում, որոնց վերայ արդէն ձեռք էին բերել ժառան-
գական իրաւունք, շինել էին իրանց ահեղ ամրոցները, որոնք ահ
ու սարսափ էին ձգում ժողովրդի վերայ։ Ճորտութիւնը խստու-
թեամբ թաղաւորում էր ամենայն տեղ։ Օրինակը շատ գրաւիչ
էր և հայ իշխանները շուտով ենթարկուեցան նոցա ազդեցու-
թեան։ հայոց հին նախարար անունը կորչում է և առաջ են
գալիս, Եւրոպական բառոնների նմանութեամբ, հայկական պա-
րոնները, որոնք, լճութեան օրէնքներով կապուած լինելով մի-
մեանց հետ, նոյն իսկ օրէնքներով կապվում են և հայոց պարոնի
հետ, որ իւր հերթով մինչև Լեոն երկրորդի թաղաւորիլը հա-
մարվում էր Անտիոքի Բրնձի մեծ լիճը։ Պարոնները, բառոնների
պէս, շինում են իրանց կալուածներում անմատչելի ամրոցներ՝
Պապեռոնը, Լամբրոնը, Բարձր-բերդը, Կապանը, Կոռիկոսը և
ուրիշները և նոցա հովանաւորութեան տակ իշխում են ժողո-
վրդի վերայ կալուածատէրների ֆեոդալական անձնիշխան իրա-
ւունքով, որ այն ժամանակուայ լեզուով կոչվում էր լիճ-ճոր-
տութիւն։ Կարճ ժամանակամիջոցում բոլոր լեւոնային և քարուտ
Կիլիկիայի գահոյքը և դաշտային Կիլիկիայի ծովափունքը ծածկ-
վում են անթիւ-անհամար ամրոցներով, որոնցից շատ մասը ա-
ւերուած դրութեան մէջ կային դեռ Կիլիկիոյ առաջուայ տիրա-
պետողների ժամանակներից։ Լիճ-ճորտութիւնը ընդհանրանում է
Կիլիկիոյ մէջ, մի խօսքով միջնադարեան ֆեոդալական Եւրոպայի

կեանքը իւր բոլոր մանրամասնութիւններով տեղափոխւում է Կիլիկիոյ հօդի վերայ, Լեոն Բ-ը, որ ազատելով Կիլիկիան նորա զէպի Անտիոքը ունեցած յճութեան պարտականութիւններից, մի բոլորովին ինքնուրոյն իշխանութեան կեանք տուեց նորան, որ հայոց իշխանների կամ պարոնների պատիւը թագաւորականի փոխելով, բարձրացրեց Կիլիկացի նշանակութիւնը թէ դրացի և թէ հեռաւոր տէրութիւնների առաջ, որ, վերջապէս, Եւրոպական տէրութիւնների կարգ ու կանոնը ընդունելով, Կիլիկիոյ հայոց թագաւորութեան իսկական կազմակերպողը եղաւ, համարւում է և Կիլիկիայի հայ ֆեոդալականութեան առաջին կազմակերպողն ու տնօրէնը, նա, կարգի ու կանոնի տակ դնելով Կիլիկիայի աւատականութիւնը, զխաւոր բերդատէր աւատականների թիւը հասցնում է 72-ի, որոնցից մեծ մասը, առաջ եկած լինելով տեղացի օտարազգիներից՝ յոյներից և եւրոպացիներից, հայ չէր ոչ կրօնքով և ոչ ծագումով: Ինչպէս մի ժամանակ Վաղարշակ իւր նախարարներին, պալատական պաշտօններ տալով, մօտեցրեց նոցա իրան և կապեց պալատի հետ, նոյնպէս և Լեոն, իւր մեծամեծ աւատական պարոններին պայլի (bayulus), իշխանաց իշխանի կամ թագաւորութեան իշխանի, գունդստապի (connétable), մարաջախտի (marechal), սենեսզալի կամ սենեսկալի (sénéchal), ջամբուլայի (chambellan), ջանցլերի (chancelier), պօդլերի (boutilier), աւագ չայուշի, պոռքսիմոսի, բաժտան գլխաւորի, մինապանի և այլն պաշտօններ տալով, մօտեցնում է նոցա իրան և նոցանից կազմում է, Եւրոպական պալատների նմանութեամբ, իւր փայլուն սուիտը: Այդ եօթմասսուն և երկու բերդատէր պարոնների անուններից մեր ձեռքը հասել է միայն մի մասի անունական ցուցակը, որի մէջ համարւում են 45 հոգի, որոնք, ինչպէս ամենամեծերը աւատականներից, ներկայ գտնուեցան Լեոնի թագաւորութեան հանդիսին այս կարգով՝

1. Իշխանն Պաղըասայ՝ Ատանն.
2. » Զկերդյն՝ Աւստն.
3. » Համուսին՝ Արեւգոյնն.
4. » Սարվանդաւի՝ Սմբատն.
5. » Հարունոյն՝ Լեոն.
6. » Սիմանակլային՝ Սիրուհի.
7. » Անէդյն՝ Տեոփ.

8. Իշխանն Կուտաֆոյն՝ Ապղարիպ Գունդստապլն.
9. » Ընկուզտին՝ Պաղտինն.
10. » Թոռկային՝ Ստեֆն.
11. » Բերդուսին՝ Լևոն և Գրիգոր.
12. » Կանչոյն՝ Աշոտն.
13. » Ֆաւռնաւսայ՝ Ապղարիպն.
14. » Կապնուռն՝ Տանկրի.
15. » Ճանճոյն՝ Կոստանդին.
16. » Շողկանն՝ Ծաւֆրի.
17. » Մաղոտ-Խաչին՝ Սիմոնն.
18. » Թլին՝ Ըռաւպերտն.
19. » Թլսապոյ՝ Թորոս.
20. » Վաներոյն՝ Վասիլ մարաջախտն.
21. » Բարձրբերդոյ՝ Գէորգ.
22. » Կոպիտառոյ՝ Կոստանդին.
23. » Մալուվոնին՝ Աժառոսն.
24. » Կուկլկայ՝ Սմբատ.
25. » Լամբրունին՝ Հեթում.
26. » Լուլայոյ՝ Շահինշահն.
27. » Պապեռունին՝ Բակուրան.
28. » Ասկուռոյ՝ Վասակ.
29. » Մանաշոյ՝ Հեթում.
30. » Բերդկանն՝ Միխայլն.
31. » Պռականոյ՝ Տիգրանն.
32. » Սիւլլոյ՝ Աւշինն.
33. » Կուռիկուսոյ՝ Սիմոնն.
34. » Սելեկիոյ և Պունառոյ՝ Կոստանցն.
35. » Սինիտու և Կովասու՝ Ռոմանոսն.
36. » Վէտին և Վէոքսկու՝ Նիկիֆոն.
37. » Լավզատոյ և Տիմիտուպոլսոյ՝ Խոսաւֆոն.
38. » Մանիւանին, Լամաւսոյ, Ժեոմականն, Անամուռին՝
Հալկեմն.
39. » Նորբերդոյ և Կամառուտիսոյ՝ Հեոի Սեաստոս.
40. » Անդաւշին և Կուպային՝ Պաղտինն.
41. » Մաղվայոյ և Սիկոյ և Պալապոլին՝ Կեռ-Սակն.
42. » Մանաւզատին և Ալարոյ՝ Միխայլն.
43. » Լակուսենոյ՝ Կոստանդինն և Նիկիֆոն.

44. Իշխանն Կալանաւնաւոսոյ, Այժուտապին, Սուրբ Սոփէ և Նաղլաւնին՝ Կեռ-Վարդն:

Եւրոպական աւատականութեան հետ միասին մտնում է Կիլիկիայի հայերի մէջ և ասպետութիւնը կամ, ինչպէս այն ժամանակ հայերը կոչում էին, Ձիաւորութիւնը, որ համարվում էր աւատականութեան իսկական զօրութիւնն ու պաշտպանը: Ձիաւորները շատ ժամանակ էր, որ գոյութիւն ունէին Եւրոպայում: Նոքա առաջ էին եկել այն աւատականներից, որոնք, իրանց կալուածների փոքրութեան ու քիչ եկամուտ ունենալու պատճառով, աղքատանալով, ստիպուել էին Վասսալ դառնալ մեծ ֆէոդալներին և կախումն ունենալ ամենայն բանում նոցանից: Այսպիսով ահա՛ Եւրոպայի աւատականները, ընդհանուր մտքով, սկզբունքով կազմելով մի դասակարգ, բաժանվում էին, ըստ իրանց կարողութեան, երկու մասի՝ հարուստ և մեծ աւատականների, որոնք կազմում էին աւատական բարձր-ազնուական դասակարգը, և աղքատ ո՞ւր փոքր աւատականների, որոնք կազմում էին աւատական ստորին դասակարգը: Բարձր-ազնուական դասակարգին պատկանում էին աշխարհականներից՝ գրաֆները, մարկգրաֆները և զենդգրաֆները. հոգեորականներից՝ եպիսկոպոսները և աբբաները, իսկ ստորին դասակարգին—աշխարհականներից՝ Ձիաւորները, հոգեորականներից՝ քահանաները և կանոնիկոսները: Ձիաւորների դասակարգը նիւթականապէս աղքատ լինելով, քան վերին դասակարգը, հարուստ էր նորանից ոյժով, որովհետեւ կալմում էր աւատականութեան զինուորական զօրութիւնը, որով և, կարելի է ասել, իւր ձեռքին էր պահում այն ժամանակուայ Եւրոպայի բախտը, ժամանակի ընթացքում, անընդհատ պատերազմների պատճառով Ձիաւորների (Reiter) զօրութիւնը քանի գնում աւելանում է, որի հետ միասին բարձրանում է ձիաւորութեան պատիւն ու նշանակութիւնը ընդհանրապէս: Սակայն իսկական ասպետութիւնը, իբրեւ մի զինուորական-եղբայրական միութիւն, ինչպէս առհասարակ մենք սովոր ենք հասկանալ նրան, կազմուեցաւ միայն խաչակրաց ժամանակները, թէև Ձիաւորները կալմում էին մի զինուորական դասակարգը, ինչպէս վերն յիշեցինք, բայց այն շահերի ընդհանրութիւնը, այն եղբայրական համերաշխութիւնը, այն պրինցիպների իդէալականութիւնը, որ առաջնորդում էին ասպետներին խաչակրութեան ժամանակ, դեռ չկար, դեռ զարգացած չէր նոցա

մէջ, խաչակրութեան ժամանակներում, այդ իսկական ասպետական դարում արեւմտեան Եւրոպայի ասպետութիւնը կազմում է մի եղբայրութիւն. նա աւատականների մի դասակարգից անցնում է միւսին և դառնում է աւատականութիւնը ընդհանուր սեփականութիւն. ասպետ կոչումն ընդհանրանում է և դառնում է մի այնպիսի պատուաւոր անուն, որ բոլորեքան, սկսած թագաւորներից, թագաւորազուներեցից և մեծամեծ իշխաններից, մեծ պատիւ են համարում իրանց համար կրել նորան. մինչև անգամ կազմվում է մի ամբողջ արարողութիւն, մի հանդիսաւոր ցերեմոնեայ ասպետութեան կոչումն ստանալու համար. Ասպետների գլխաւոր պարագմունքը կազմում էին պատերազմական գործերը, իսկ պատերազմ չեղած ժամանակ, նոքա իրանց ժամանակն անցնում էին ուրախութեան, զբօսանքի և զանազան զինուորական խաղերի—տուրնիրների (tournoi) մէջ. Կիլիկեցի հայերի մէջ ասպետութիւնը մուտ է գործում խաչակրութեան ժամանակ խաչակիր ասպետներից, որոնցից շատերը բնակութիւն էին հաստատել Կիլիկիայում և նորա սահմաններում. բացի այդ Կիլիկիայի մէջ և նորա սահմաններում ապրող ասպետներից, որոնք, միշտ գտնուելով հայերի աչքի առաջ, օրինակ էին լինում նոցա, Երուսաղէմի թագաւորութիւնը, Անտիոքի Բրինձութիւնը, Գերմանիկի (Մարաշի) և Նեփսիոյ կոմսութիւնները, որոնց հետ հայերը մշտական յարաբերութիւն ունէին, մի մշտական առատ աղբիւր էին, որտեղից ասպետութիւնը միւս Եւրոպական կարգ ու կանոնի հետ միասին անարգել տարածվում էր Կիլիկիայի մէջ. Սակայն այդ բոլորի մէջ, ասպետութեան օրէնքների Կիլիկիոյ հայերի մէջ մուտ գործելու վերաբերութեամբ, գլխաւոր դերը խաղում է Երուսաղէմի թագաւորութիւնը, որի երեք ասպետական-աբեղայական կարգերը՝ Ոսպիթալիկ Զիաւորքն կամ Ֆրէրն, Դամբլուն Զիաւորքն և Նլամանք կամ Տեւտոնեանք մեծամեծ կալուածներ ունէին Կիլիկիայում և վայելում էին թագաւորների հովանաւորութիւնը, թէև նոքա շատ անգամ ի չարն էին գործ դնում հայոց թագաւորների սիրելիութիւնը. Ասպետական կոչումն Կիլիկիայում տրվում էր աւատական կարգով, այսինքն իւրաքանչիւր լինձ ստանում էր այդ պատիւը իւր վեհից կամ սիւզերենից և կոչվում էր Լիճ-Զիաւոր. Ռուբինեանք, քանի որ համարվում էին Անտիոքի Բրնձի լիճը, իրանց ձիաւորութեան պատիւը ստանում էին Բրնձից, բայց երբ նոքա ազատուեցան

լճութեան պարտականութիւնից, սկսան ինքեանք տալ այդ կոչումն իրանց որդիներին և լճերին: Աստիղների խօսքին նայելով, որ մի տեղ ասում է. «Լջորդ հասակն տասնուհինկ տարին է, և ձիաւորութիւնն. զի առանց ձիաւորութեան չկայ հասակ», ձիաւորութիւն ստանալու հասակը Կիլիկիոյ մէջ համարվում էր 15 տարին, թէև այդ օրէնքով որոշուած հասակը խստութեամբ չէր կատարվում: Այսպէս, օրինակի համար, հետում Ա. թագաւորը 1259 թ. ձիաւորեցնում է իւր Թորոս որդուն, երբ նա 15 տարեկանից աւելի էր, իսկ Լեոն երրորդը 1284 թ. ձիաւորեցնում է իւր հետում Բ. և Թորոս որդիներին, երբ հետում 18 տարեկան էր, իսկ Թորոս 14 ևս գեռ չկար: Իսկ թէ ի՞նչ տեսակ ծիսակատարութիւն կամ արարողութիւն էր կատարվում հայերի մէջ ձիաւորութեան կոչումն ընդունելու ժամանակ և նմանում էին արդեօք այդ ծիսակատարութիւնները Եւրոպականին, ինչպէս և լճութիւն ընդունելու օրէնքների մանրամասնութիւնները, որոշ կերպով յայտնի չեն մեզ, որովհետև մինչև ցայժմ գեռ գրտ նուած չէ մեր մէջ մի այդպիսի ծիսակատարութեան հաւաքածու կամ ծիսարան, թէև նորա գոյութեան մասին, եթէ ոչ իբրև ինքնուրոյն գրութեքի, գոնէ, իբրև թարգմանութեան եւրոպականից, կասկած չէ կարող լինել: Մեզ միայն յայտնի է, որ այդ արարողութիւնները կատարվում էին վերին աստիճանի շքեղութեամբ, և կազմում էին Կիլիկիոյ հայոց թագաւորութեան հանդէսների մէջ գլխաւորներից մէկը: Պատմութիւնից գեռ յայտնի է այն մեծ հանդիսի մասին, որ կատարուեցաւ վերոյիշեալ Լեոն Գ-ի հետում և Թորոս որդիների և շատ մեծամեծ իշխանազունների և պալատականների ձիաւորութեան պատիւ ընդունելու ժամանակ, երբ նշանաւոր Յովհան Երզնկացին, որ ներկայ էր այդ հանդիսին, ճառախօսութիւն արեց, նիւթ առնելով՝ «Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է» և այլն և զորանով աւելի ևս փայլ տուեց հանդիսին:

Է.

Հայաստանի կալուածատիրական սիստեմի աւատականութիւնը հայկական բնաւորութեամբ, շարունակուելով հայկազանց, Արշակունեաց և Բագրատունեաց հարստութիւնների ժամանակ և Եւրոպական ֆեոդալականութեան բնաւորութեամբ—Ռուբինեանց հարստութեան ժամանակ, կամ մինչև հայոց թագաւորա-

կան իշխանութեան իսպառ վերջանալը, ունենում է հայոց ան-
կախութեան վերաբերութեամբ ամենակորստաբեր ազդեցութիւն:
Կորստաբեր և վնասակար էր այդ դրութիւնը հայաստանի հա-
մար, որովհետեւ խանգարում էր հայոց թագաւորութեան միու-
թիւնը, բաժանելով նորան բազմաթիւ իշխանութիւնների, որոնք,
ոչ մի կապ չունենալով միմեանց հետ և շատ շնչին, թոյլ կա-
պուած լինելով թագաւորի հետ, ոչ թէ հայրենեաց ընդհանուր
շահերի վերայ էին հոգում, այլ միայն իրանց սեփական օգտի
համար էին մտածում: Վնասակար էր, որովհետեւ սահմանափա-
կում էր թագաւորի իշխանութիւնը և գորանով միջոց էր տա-
լիս թագաւորին ընկած տեղը ժողովել բոլոր հպատակներին իւր
դրօշակի տակ և միաբան, ընդհանուր դժբերով պաշտպանել
հայրենիքը և նորա շահերը օտարների դէմ: Վնասակար էր և
նորա համար, որ ընդդիմանում էր թագաւորի ամենայն մի ընդհա-
նուրի համար օգտաւետ, բայց նախարարների արտօնութիւննե-
րին վնասակար, կարգադրութիւններին, պատճառ լինելով մշտա-
կան ներքին խռովութիւնների, ջլատելով և թուլացնելով հա-
յաստանի թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական կարողութիւնը և
այդպիսով անընդունակ անելով նորան մեծ դիմադրութիւն ցոյց
տալու վտանգաւոր դրացիների չար ձգտումներին: Եթէ այս բոլորի
վերայ աւելացնենք և այն, որ նախարարական ցեղերը չէին բա-
ւականանում նորանով, որ անձեռնմխելի էին պահում իրանց
արտօնութիւնները և իշխանութիւնը, այլ ամենայն տեսակ աշ-
խատում էին ընդլայնել իրանց կալուածների սահմանները, իւրե-
լով միմեանցից հողեր ու կալուածներ և գորանով անդադար
պատերազմների և կռիւների պատճառ էին լինում, պատերազ-
մների, որոնց մէջ, բացի նորանից, որ կոտորվում էր երիտասարդ
սերունդը, այլ և երկիրը ևս, դեկուելով աշխատող ձեռքերից,
մնում էր անմշակ, աւերվում ու քանդվում էր, և եթէ ի նկատի
առնենք, որ նոքա ամենայն տեսակ աշխատում էին հասնել աւելի
մեծ, թագաւորական իշխանութեան, զոհ բերելով իրանց նպա-
տակներին հայրենեաց ընդհանուր շահերը, ինչպէս Արծրունիները,
որոնք, կազմելով Արծրունեաց Վասպուրականի թագաւորութիւ-
նը, Բագրատունեաց թագաւորութեան հիմնաքարերից ամենա-
զըլխաւորը խախտեցին, կարելի է գաղափար կազմել հայաստանի
անկման գլխաւոր պատճառներից մէկի և, գուցէ, ամենազըլխաւորի
մասին: Հայոց թագաւորները տեսնում էին, յայտնի բան է,

աւատականութիւնից առաջ եկած այդ սարսափելի վիճակը, նորա շատ լաւ հասկանում էին նախարարական ցեղերի այնպիսի ընդարձակ իշխանութեան վնասակարութիւնը հայաստանի միութեան համար. նորա նոյն ժամանակ և զգում էին այդ բոլորից հայաստանի համար ապագայում առաջ գալիք տխուր հետեանքները և աշխատում էին իրանց ձեռքից եկած բոլոր միջոցներով ընդդիմադրել, սահմանափակել նախարարների իշխանութիւնը, հզօրացնել թագաւորին, հնազանդեցնել գոռոզ իշխաններին իրանց իշխանութեան, բայց նորա անկօր էին. նորա հաստատ հող չունէին իրանց ոտքի տակ, չունէին մի ստուար ոյժ, մի առանձին կուսակցութիւն, որի վերայ կարողանային յենուել, այդ մեծ գործը կատարելու համար. Ժողովուրդը ապրում էր նախարարական կալուածներում, կախումն ունէր նոցանից և հնազանդում էր նոցա անպայման. նա տգէտ էր, չէր հասկանում ոչ թագաւորական իշխանութեան նշանակութիւնը և ոչ նախարարական իշխանութեան վնասակարութիւնը հայաստանի համար. նորա վերայ յոյս դնել անկարելի էր. հայոց հեթանոս հոգեւորականութիւնը նոյնպէս չէր նպաստում թագաւորական իշխանութեան հաստատուելուն ու ընդարձակուելուն, որովհետեւ ունենալով հարուստ կալուածներ, որ նա ստացել էր իբրեւ նուէր մեծամասնութեամբ նախարարական ցեղերից, ինքը ևս կազմում էր մի մեծ նախարարութիւն, վայելելով նոյն իսկ իշխանութիւնը և արտօնութիւնները, որ ունէին և նախարարները. նպաստել թագաւորական իշխանութեան զօրանալուն, նշանակում էր թշնամանալ նախարարների հետ, զրկուել նոցա առատ նուիրաբերութիւններից և, որ գլխաւորն է, զրկուել իրանց մեծամեծ արտօնութիւններից և նիւթական մեծ հարստութիւնից. Քրիստոնեայ հոգեւորականութիւնը, որ յետոյ ժամանակի բռնեց քրմութեան տեղը, նոյնպէս չհրաժարուեց հարուստ կալուածներից, որ նոցա պէտք էին, պահպանելու բաղաժիւ կուսակրօն հոգեւորականութեան դասը, եկեղեցիները, վանքերը և աստուածահաճոյ հաստատութիւնները, չհրաժարուեց և այդ կալուածների հետ կապուած արտօնութիւններից. Սակայն հարուստ կալուածներից ստացած եկամտի և մեծամեծ արտօնութիւնների գործադրելու եղանակում առաջին և երկրորդի մէջ մեծ անդունդ կայ. Այն ժամանակ, երբ հեթանոս հոգեւորականութիւնը միայն մտածում էր իւր սեփական օգտի վերայ, քրիստոնեայ հոգեւորականութիւնը իւր ազդեցութիւնը,

իւր ունեցած-չունեցածը ծախում էր այն ժողովրդի վերայ, որից նա այդ բոլորը ստացել էր. նա, պաշտպանելով հայրական խնամքով հայ ժողովրդի բոլոր դասակարգերը, հոգալով նորա բոլոր հոգեւոր և մտաւոր պիտոյքները, պաշտպանում էր և թագաւորին և նորա իշխանութիւնը, բայց թագաւորին ցոյց տուած այդ պաշտպանութիւնը նա այլ տեսակ էր հասկանում: Նոքա միջնորդ էին լինում հայոց թագաւորի և օտարների մէջ և, իրանց կեանքը մինչև անգամ յաճախակի փոխնդի ենթարկելով, հաշտեցնում էին նոցա միմեանց հետ. նոքա համոզում էին նախարարներին միամտութեամբ ծառայել թագաւորին, բայց երբեք չէին մտածում այնպէս նպաստել թագաւորին, որ նա կարողանայ սահմանափակել նախարարների իշխանութիւնը. նոքա պաշտպանում էին թագաւորին, ինչպէս կարգի ու կանոնի ներկայացուցիչ, բայց երբեք չէին մոռանում և թագաւորին հասկացնել, որ նա պէտք է հաշտուի նախարարների վայելած իշխանութեան հետ և քաղցրութեամբ, ուղղութեամբ ու սիրով վարուի նոցա հետ. միով բանիւ նոքա ընդունում էին statu quo-ն և պաշտպանում էին նորան: հայոց թագաւորներից առաջինը, ինչպէս առաջ գեռ յիշեցինք, Վաղարշակը եղաւ, որ հասկացաւ հայոց թագաւորութեան թուլութեան պատճառը, որ կայանում էր գլխաւորապէս նախարարական իշխանութեան ընդարձակութեան մէջ. նա առաջինը ուշադրութիւն դարձրեց այդ հանգամանքի վերայ, առաջինը ևս ձեռք վարկեց ապագայ փոխնդի առաջն առնելու: Սակայն Վաղարշակ, մտածելով սահմանափակել նախարարների իշխանութիւնը, այդ նպատակին հասնելու համար ոչ զէնք և ոչ դժ գործ դրեց, այլ գիմեց խաղաղ, ճիշտ է, մի փոքր դանդաղ, բայց բոլորովին նպատակայարմար քաղաքականութեան, որովհետեւ տեսնում էր իմաստուն թագաւորը, որ նախարարների այդ գրութիւնը խոր արմատներ է ձգել երկրի մէջ և ժողովրդի սրտում: Վաղարշակ բազմաթիւ նոր նախարարութիւններ հաստատեց, կամենալով նոցանից կազմել իւր համար մի հզօր կուսակցութիւն հին, պատմական նշանակութիւն ունեցող նախարարների գէմ, իսկ հին, մեծամեծ նախարարներին, պալատական պաշտօններ շնորհելով, նա աշխատեց կապել նոցա պալատի հետ և մի տեսակ սովորեցնել նոցա հնազանդել նոցա թագաւորին: Արշակունեաց առաջին թագաւորի այս քաղաքականութիւնը, որ վերին աստիճանի նպատակայարմար էր մեծ

Թագաւորի ձեռնարկած մեծ գործը զլուխ բերելու, որովհետեւ աչքի էջը ընկնում, այլ տակից, ծածուկ էր գործ տեսնում, սակաւ առ տակաւ պատրաստելով հողը, շունեցաւ զժրաղղարար այն արդիւնքը, որ սպասում էր իմաստուն Թագաւորը։ Վաղարշակի քաղաքականութեան անյաջողութեան պատճառը պէտք է որոնել ոչ թէ նորա անյարմարութեան մէջ, այլ այն հանգամանքում, որ նա չարունակութիւն չունեցաւ, չգարձաւ ընդհանուր քաղաքականութիւն բոլոր Արշակունեաց հարստութեան համար։ Ժիշտ է, նախարարների իշխանութիւնը սահմանափակելու միտքը ընդհանրացաւ յետագայ բոլոր Թագաւորների մէջ, բայց նոցանից իւրաքանչիւրը իւր քաղաքականութիւնը՝ դժիւ և զէնքի վճռողական քաղաքականութիւնը գործ դրեց, ուստի և պատահեցաւ անյաջողութեան։ Տիրան երկրորդի և Արշակ երկրորդի խոստութիւնները նախարարական ցեղերի վերաբերութեամբ, բոլորովին թշնամացնելով Արշակունի Թագաւորներին նախարարների հետ, միայն շտապեցրին Արշակունեաց հարստութեան ընկնիլը, առանց մի որ և է զգալի օգուտ բերելու այդ հարստութեան Վաղարշակից հաստատուած քաղաքականութեան։ Ոչ մի ուրիշ բանով չէ կարելի ապաքէն մեկնել հայոց նախարարների միահամուռ Պարսից Վռամ Թագաւորին դիմելը և հայոց Թագաւորի տեղ պարսիկ մարդպան խնդրելը, եթէ ոչ այն սաստիկ ատելութեան զգացմունքով, որ կար հայաստանում իշխանութիւն ունեցող այդ երկու հակառակ տարրի մէջ։ Արշակունիների և նախարարների մէջ եղած սաստիկ ատելութեան և թշնամութեան հետեանքն էին և Արտաշէր երկրորդ, վերջին Արշակունի Թագաւորի խօսքերը, որ նա ասաց Վռամի առաջ իւր նախարարների վերաբերութեամբ։ «Որպէս սովոր են ի բնէ թշնամանել զտեսարս իւրեանց՝ ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զչար կամաց իւրեանց զինդիրս. քանզի միշտ իշխանափոխք լուալ են և տիրատեացք»։ Դոյն իսկ անհեռատես քաղաքականութիւնը նախարարների վերաբերութեամբ գործադրեցին և Բագրատունեաց Սմբատ երկրորդ և Աշոտ երկրորդ Թագաւորները, որի մասին Յովհանէս պատմաբան կաթողիկոսը գանգատուելով իւր պատմութեան մէջ մի տեղ ասում է. «Իսկ Թագաւորը մեր և պետք և իշխանք՝ զորս ի բնէ նախարարութիւնք էին՝ ջանային վարատել և խել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծել պայապատս»։

Ը.

Վաղարշակ, զանազան կարգադրութիւններ անելով նախարարների մասին և նոցա վերաբերութեամբ նոր քաղաքականութիւն ստեղծելով, պատճառ եղաւ և նոցա առաջին անգամ կանոնաւոր կազմակերպութեան: Նորան է վերադրւում, թէ և այդ հաւանական եւթադրութիւն է միայն, առաջին անգամ այն նշանաւոր ցուցակի կազմութիւնը, որի մէջ արձանագրուած էր բոլոր նշանաւոր նախարարական ցեղերի անունները, որոշած էր նոցանից իւրաքանչիւրի բարձն ու գահը, ըստ մեծութեան և արժանաւորութեան, ճիշտ այնպէս, ինչպէս այդ սովորութիւն էր պարսից Սասանեանների արքունիքում: Այդ ցուցակը, որ մեր պատմութեան մէջ կոչւում է Գահ-Նամակ, որովհետեւ պարունակում էր իւր մէջ նախարարների գահերի կամ բարձրի կարգը, Վաղարշակից անցնում է միւս թագաւորներին, փոփոխւում, ընդունւում և հաստատւում է նոցանից յաջորդաբար և ստանում է մի տեսակ կանոնագրքի նշանակութիւն, որով ղեկավարւում էին թագաւորները նախարարների վերաբերութեամբ արած մի որ և է կարգադրութեան ժամանակ: Թէ որքան էր նախարարական գահերի թիւը ամենահին Գահ-Նամակի մէջ և կամ ինչպիսի խմբագրութիւն ունէր նա Վաղարշակի ժամանակ,— մենք չգիտենք: Մենք միայն հաւանական կերպով կարող ենք եւթադրութիւն անել, որ նորա մէջ արձանագրուած էին բոլոր այն նախարարների գահերը, որ վաւերացրեց և նորից հաստատեց Վաղարշակ, Մովսէս Խորենացին Վաղարշակի այդ վաւերացրած և հաստատած նախարարական ցեղերը գնում է այս կարգով՝

- | | |
|--------------------------|--------------------------|
| 1. Բագրատունեաց նախարար. | 10. Հաւենունեաց նախարար. |
| 2. Գնթունեաց » | 11. Զիւնական » |
| 3. Խոռխոռունեաց » | 12. Մարդպետական » |
| (Մալխաղունիք.) | |
| 4. Գաբելեան » | 13. Գուգարաց բղեշխ. |
| 5. Աբելեան » | 14. Աղձնեաց բղեշխ. |
| 6. Սիւնեաց » | 15. Աշոցայ նախարար. |
| 7. Արծրունեաց » | 16. Որդունեաց » |
| 8. Գնունեաց » | 17. Անգեղ-տուն. |
| 9. Սպանդունեաց » | 18. Ծովաց մեծ » |

- | | |
|-------------------------|---------------------------|
| 19. Ապահունեաց նախարար. | 26. Զարեհաւանեան նախարար. |
| 20. Մանաւազեան » | 27. Մոկաց » |
| 21. Բղնունեաց » | 28. Կորդուաց » |
| 22. Սիկունեաց » | 29. Անձնացուց » |
| 23. Մանգակունեաց » | 30. Ակէացուց » |
| 24. Վահունեաց » | 31. Ռշտունեաց » |
| 25. Առաւունեան » | 32. Գողթնեաց » |

Այս նախարարական ցեղերի թւում պէտք է համարել և թագաւորի երկրորդին, որ ընտրվում էր Աժդահակի ցեղից, կոչվում էր Մուրացան-տէր և բազմաթիւ ու ընդարձակ կալուածների տէր էր, և երկու բլեշխներին, որոնց բնակութեան տեղը թէև ճշտութեամբ որոշուած չէ, բայց և այնպէս նոքա մեծ դիրք ունէին իշխանների կարգում և միւս երկու բլեշխների Գուգարքի և Աղձնքի հետ կոչվում էին «Գահերէց, Բարձրէց տաճարին արքունի»:

Գահ-Նամակի այս հին ենթադրական օրինակը մենք առաջին անգամ փոփոխուած ենք տեսնում մեր պատմութեան մէջ Խոսրով մեծի և Տրդատի ժամանակները, թէև այդ փոփոխման հանգամանքը ևս մեզ ոճով յայտնի չէ, որովհետև Գահ-Նամակի այդ նոր խմբագրութեան իսկական օրինակը ևս մեր ձեռքը չէ հասել: Մենք այդ նոր խմբագրութեան մասին տեղեկութիւն ենք ստանում միայն Ագաթանգեղոսի պատմութիւնից, որի մէջ արձանագրուած են աւագութեան կարգով այն 15 մեծ նախարարների անունները, որոնք նշանակուեցան Տրդատից, ուղեկցելու Գրիգոր Լուսաւորչին Կեսսարիա ձեռնադրութեան: Իսկ որ Ագաթանգեղոսի յիշած նախարարների կարգը համաձայն էր այն ժամանակուայ Գահ-Նամակին, ընդունվում էր թագաւորից և նախարարներից,—այդ երևում է նորանից, որ երբ Շապուհ երկրորդը, հայաստանի իւր իշխանութեան տակ գտնուած ժամանակ, պահանջեց հայոց նախարարներից, որ ներկայացնեն իրան հայոց Գահ-Նամակը, նոքա, չունենալով Պարսկաստանում իրանց ձեռքին Գահ-Նամակի օրինակը, ներկայացրին Ագաթանգեղոսի պատմութեան օրինակը, որ և մեծ սիրով ընդունեց թագաւորը: Ագաթանգեղոսի յիշած 15 մեծամեծ նախարարների կարգը հետևեալն է՝

1. Իշխանն Անգեղ տանն.

2. Իշխանն Աղձնեաց, որ է րդեշխ մեծ.
3. » Մարդպետութեան.
4. » Թագակապ իշխանութեան Ասպետութեան.
5. » Սպարապետութեան, զօրավար հայոց աշխարհին.
6. » Կորդուաց աշխարհին.
7. » Ծովաց աշխարհին.
8. » Գագարացուց աշխարհին.
9. » Լուուշտունեաց աշխարհին.
10. » Մոկաց աշխարհին.
11. » Սիւնեաց աշխարհին.
12. » Ծօղէից աշխարհին.
13. » Ուտէացուց աշխարհին.
14. » Զարաւանդ և հեր գաւառի Ծահապ.
15. » Արծրունեաց աշխարհին.

Հայոց Գահ-Նամակը նշանակութիւն ունէր հայաստանում ոչ միայն հայոց թագաւորների իշխանութեան ժամանակ, այլ և պարսից իշխանութեան ժամանակ. զանազանութիւնը միայն նորանումն էր, որ հայոց թագաւորների իշխանութեան ժամանակ նա հաստատուում ու փոփոխվում էր հայոց թագաւորից, իսկ պարսից ժամանակ—պարսից թագաւորից: Պարսից թագաւորները մինչև անգամ այնքան մեծ նշանակութիւն էին տալիս հայոց Գահ-Նամակի հաստատելու ու նորան փոփոխութեան ենթարկելու իրաւունքին, որ դեռ Արշակունեաց թագաւորութիւնը չվերջացրած, իրանց էին սևտականացրել նորան կաթողիկոս հաստատելու իրաւունքի հետ միասին, որ շատ պարզ կերպով երևում է պարսից Արտաշէր թագաւորի հայոց Վռամշապուհին գրած նամակից. «Սահակի որդեգրած համազասպին, գրում է Արտաշէր Վռամշապուհին, մեր հրամանով ձեր զօրքերի վերայ սպարապետ կըկարգես և դորա ազգին կըտաս ձեր նախարարներին յատուկ հինգերորդ գահը, որ դժբա ստանան այն գիւղերը և կալուածները, որ քո նախնիները տուել են դորա հայրերին, Նոյնպէս և երկու՞ յանցաւոր ազգերի կայքերը, որ արքունիք գրաւեցինք, թող տուր, որ նոցանից մնացածները առանց երկիւղի ժառանգեն, րայց հայրական գահերի պատուին արժանի չանես նոցա. ինչպէս մենք ևս մեր գիւանում հրամայեցինք գրել»։ Պէտք է, յայտնի ըան է, կարծել, որ պարսիկները հայոց Գահ-Նամակը

ստանալու և նորա մէջ զանազան փոփոխութիւններ անելու իրաւունքը իրանց սեփականեցրին այն ժամանակ, երբ նոքա ձեռք բերին գերիշխանութիւն հայաստանի վերայ: Այդ այն ժամանակն էր, երբ Թէոդոս մեծի մահուամբ Արկադէոս, Բիւզանդիոնի կայսրը և Շապուհ Բ, արքայից արքայն, պայմանաւորուելով, բաժանում են միմեանց մէջ հայաստանը երկու մասերի՝ արեւելեան Պարսկական և արեւմտեան—Յունական: Ճիշտ է, հայոց երկրի պիղ երկու մասերը ևս ունէին իրանց հայ թագաւորը Արշակունեաց ցեղից, բայց նոքա արդէն առաջուպ հայոց անկախ թագաւորի իշխանութիւնը չունէին. նոքա ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հասարակ կառավարիչներ, նշանակուած Պարսկական հայաստանում պարսից թագաւորից, Յունականում—կայսրից: Նամանակ դժուար էր Պարսից հայաստանի հայ թագաւորի դրութիւնը. նա ոչ մի իրաւունք չունէր, այլ ամենայն բան պէտք է հարցնէր պարսից թագաւորից, ամենայն բանի մասին պէտք է նորան տեղեկութիւն տար. նա ոչ կաթուղիկոս կարող էր հաստատել, ոչ մեծամեծ պաշտօնեաներ նշանակել, ոչ հայոց նախարարների կարգը փոխել, ոչ յարաբերութիւն ունենալ օտար թագաւորների հետ, նամանակագրուել յունաց, բայց որ զիսաւորն է, նա պէտք է ամենայն բանում հաշիւ տար պարսից աստիճանաւորին, որ նստում էր հայաստանում և նշանակուած էր վերահսկողութիւն ունենալու թագաւորի գործողութիւնների վերայ:

Պարսից հայաստանի հայ թագաւորի անտանելի կացութեան մասին գաղափար ստանալու համար, բաւական կրլինի յիշել, որ Արշակ երկրորդ թագաւոր, երբ լսեց յունաց բաժնի Վաղարշակ թագաւորի մահը, ձգեց ամենայն բան և գնաց յունաց մասն, թէև այնտեղ ևս նախանձելի չէր հայ թագաւորի դրութիւնը. Խոսրով երրորդը շղթայակապ Անյուշ բերդը տարուեցաւ, որովհետև համարձակուել էր Սահակ Պարթևին կաթուղիկոս հաստատել և Արկադէոսի հետ յարաբերութիւն ունենալ: Սահակ կաթուղիկոսը ստիպուեցաւ Պարսկաստան գնալ, որպէս զի իրաւունք ստանալ Արտաշէից իւր փեսայ համազասպին սպարապետ կարգելու հայոց զօրքի վերայ մեռած Սահակ ասպետի տեղ, որովհետև Վռամշապուհ վախկնտում էր ինքնագլուխ այդ անկ: Նայելով պատմութիւնից մեր ձեռքը հասած տեղեկութիւններին, պարսից իշխանութեան ժամանակ հայոց Փահ-Նամակը պարսից թագաւորներից երկու անգամ փոփոխութեան է ենթարկուել:

Առաջին փոփոխութիւնը եղել է Հայոց Վառնապուհ թագաւորի և պարսից Արտաշէր ժամանակ, երբ Կամարականաց և Ամատունեաց նախարարական յեղերը, Խոսրով Գ-ին Պարսկաստան տանելու ժամանակ դիմադրութիւն ցոյց տալու համար, զըզուեցան մեծամեծ կայուածիւրից և Գաշ-Նամակի մէջ ստոր դասուեցան, իսկ Մամիկոնեան նախարարութիւնը, համազասպի սպարապետութեան պաշտօն ստանալու պատճառով, հինգերորդ գահը ստացաւ: Երկրորդը եղել է Արշակունեաց հարստութեան վերջանալու ժամանակ, երբ Սահակ Պարթևը, որ Արտաշէր Գ-ի հետ միասին կանչուած էր Տիսրոն պատասխան տալու նախարարների նոցա վերայ տուած բողոքին, տեսնելով, որ չէ կարող աղատել Հայոց թագաւորութիւնը անկումից, աշխատեց և հաստատել տուեց Վառնի հայոց Գաշ-Նամակը, որպէս զի պարսից մարդպանը ինքնագլուխ չկարողանայ փոփոխել Հայոց նախարարների կարգը: Ահա՛ հէնց Սահակ Պարթևի հաստատել տուած ու հայաստան բերած այդ հայոց Գաշ-Նամակի վերջին խմբագրութիւնն է, որ, մի հրաշքով մինչև ցայսօր պահպանուելով, մեր ձեռքն է հասել, թէև նորա մէջ շատ բան խառնուած և թերի է երևում: Հայոց Գաշ-Նամակի այդ պատճէնը, որ մենք պատշաճ ենք համարում կոչել «Հախվերդեան», որովհետև առաջին անգամ նորան գտաւ Թիֆլիսեցի գիտնական հախվերդեանը, հայկական հին ձեռագրերից մէկի կազմի մէջ և քիմիական վերլուծութեամբ կարողացաւ կարգալ, ունի նախարարական յեղերի հետեւեալ դասակարգութիւնը՝

Առաջին իշխանն ու Մալխազն.

ա. Սիւնեաց տէր.

ժա. Ապահունեաց տէր.

բ. Ասպետն.

ժբ. Կամարականն.

գ. Արծրունեաց տէր.

ժգ. Այդ Ապահունի.

դ. Մամիկոնէից տէր.

ժդ. Վանանդացին.

ե. Շահապն Ծոփաց տէր.

ժե. Ամատունի տէր.

զ. Մոկաց տէր.

ժզ. Գողթան տէր.

է. Ռշտունեաց տէր.

ժէ. Գնունեաց տէր.

ը. Վահունեաց տէր.

ժը. Սյդ Անձաւացի.

թ. Կասպէից տէր.

ժթ. Տայոց.

ժ. Անձաւացեաց տէր.

ի. Բասնոյ դատաւորն.

իա. Գնթունեաց տէր.	խզ. Ընծայեցին.
իբ. Վարձառունին.	խէ. Մանդակունին.
իգ. Գարդմանայ տէր.	խը. Սղկունին.
իդ. ՍաՀունին.	խթ. Տայգրեանն.
իե. Գարեղէնից տէր.	ծ. Երմանթունին.
իէ. Աբեղէնից տէր.	ծա. Սպանդունին.
իը. Սխնեաց երկրորդն.	ծբ. Առաւելեանն.
իթ. Արծրունեաց երկր.	ծգ. Տրունին.
լ. Արծրունեաց երրորդն.	ծդ. Մամբերացին.
լա. Մամիկոնէից երկր.	ծե. Հաւնունին.
լբ. Ռոփսեան.	ծզ. Բժնունին.
լգ. Գալոցեանն.	ծէ. Քաջբերունին.
լդ. Դիմաքսեանն.	ծը. Մեհնունին.
լե. Բուխա Դիմաքսեանն.	ծթ. Նախճերին.
լզ. Այլ Դիմաքսեանն.	կ. Քաղաքապետն արքունի.
լէ. Պալոնին.	կա. Որսապետն արքունի.
լը. Առաւելունն.	կբ. Արտաշեսեանն.
լթ. Աշահմարեանն.	կգ. Վանանդացին երկրորդ.
խ. Համբուժեանն.	կդ. Յուն.
խա. Վարասպակեանն.	կե. Վիժանու.
խբ. Զինականն.	կզ. Աբաժոյ.
խգ. Ահէացին.	կէ. Շերակա Դիմաքս.
խե. Զարեհաւանեանն.	կը. Գաղբիկանն.
	կթ. Մարացեան տէր.
	հ. Վազրասպունին.

Որքան լրջութեամբ և խստութեամբ հայոց և պարսից թագաւորները նայում էին Գահ-Նամակի վերայ, նոյնքան և գուցէ աւելի ևս լրջութեամբ ու խստութեամբ վերաբերում էին դէպի նա ինքեանք նախարարները. նորա ժամանակի ընթացքում այնքան ընտելանում են Գահ-Նամակի կարգ ու կանոնին, որ ամենայն մի ձգտումն թագաւորների կողմից, նորա մէջ մի որ և իցէ ծանրակշիռ փոփոխութիւն մտցնելու, մեծ խռովութիւնների և մինչև անգամ պատերազմների պատճառ է լինում։ Այդպիսի մի դէպքի մասին, որ պատահեցաւ Շապուհ Բ-ի օրով, երբ հայաստանը գտնվում էր նորա իշխանութեան ներքոյ, պատմում է Ստեփանոս Օրբէլեանը. Շապուհ Բ.-ը, ասում է նա, կարգադրելով հայոց նախարարների գահերը, համեմատ Ագա-

Թանգեղոսի պատմութեան, 14 տեղը նշանակում է Սիւնեաց նախարարութեան համար: Անդով, Սիւնեաց Նահապետը, այդ բանից անհնարին կերպով վերաւորուելով, այն օրը ոչ սեղան է նստում և ոչ վայելում է «յայնմ ուրախարար արքունական ընդունելութենէն», այլ «հպարտութեամբ խրոխտացեալ» մտածում է վրէժինդիր լինել: Երբ որ Շապուհ գնում է պատերազմի Խաղերների վերայ, նա, յարմար րոպէ գտնելով, եօթն հարիւր մարդով յարձակվում է Տիգրանի վերայ, քանդում, աւերում է քաղաքը և, կողոպտելով քաղաքը, թագաւորի ու իշխանների պալատները, փախչում, ամրանում է իւր երկրի Բազարբերդ ամրոցում: Շապուհ չարդում է բերդը, բայց չկարողանալով առնել նրան, հրամայում է բոլոր Սիւնեաց երկիրը հիմնայաւոր անել, իսկ Անդով, յարմար ժամանակ գտնելով, փախչում է Բիւզանդիոն, որտեղ և մեռնում է:

Նախարարական ցեղերը, պատճառ լինելով հայաստանի աւատական գրութեան և դորանով մեծապէս վնասելով հայոց թագաւորութեան ամրութեան ու կայուն դրութեան, մինչև անգամ, ինչպէս արդէն մէկ անգամ յիշեցինք, նորա անկման պատճառներից մէկը լինելով, ունէին և իրանց լաւ կողմերը, որոնցից մէկը անշուշտ պէտք է համարել այն, որ նոքա, շնայելով, որ հայոց գահը մշտական տատանմունքի մէջ էր լինում և յաճախակի ընկնում էր օտար տիրապետողների ձեռքը, որոնց իշխանութիւնը շատ երկար էր տևում հայաստանի վերայ, կարողանում էին պաշտպանել ներքուստ իրանց անկախ հայկական իշխանութիւնը, արտաքուստ հնազանդելով օտարներին և ընդունելով նոցա գերիշխանութիւնը: Նոքա չէին թողնում, որ հայկական իշխանութիւնը իսպառ վերջանայ հայաստանից, և փոքր առ փոքր հզօրանալով, նորից վերականգնում էին իրանց կորցրած թագաւորական իշխանութիւնը և այդպիսով ծառայում էին իբրև հիմն կամ օղակների, որով շղթայի պէս կապվում էր հայկական հարստութիւնների շարքը միմեանց հետ: Այսպէս, երբ 428 թ. վերջացաւ Արշակունեաց հարստութիւնը և երկիրը ընկաւ Պարսից կառավարութեան ներքոյ, հայաստանը սկսաւ կառավարուել առանձին կառավարիչներով: որոնք կոչվում էին մարզպաններ և ընտրվում էին մեծամասնութեամբ հայոց մեծա-

մեծ նախարարներից. յուրաց իշխանութեան ժամանակ մարզպանական իշխանութիւնը փոխվում է կիւրոպալատութեան. կիւրոպալատները բոլորը ևս ընտրվում էին նոյնպէս հայոց նախարարներից. Արաբացւոց արշաւանքի և աշխարհակալութեան ժամանակ, երբ համարեա՝ բոլոր հայաստանը ընկնում է Ամիրայետների ձեռքը և երկիր կառավարելու համար նշանակվում են ոստիկաններ, իշխանաց իշխաններ, նոցանից մի մասն ընտրվում էր նոյնպէս հայոց նախարարներից, Առհասարակ այդ Արաբացւոց իշխանութեան ժամանակ կառավարիչներ հայաստանի վերայ նշանակվում էին Բագրատունեաց ցեղի նախարարներից, որոնց յաջողում է, վերջապէս, վերականգնել հայոց թագաւորութիւնը. Ռուբէնը ինքը ևս Բագրատունեաց ցեղից էր, որ, Բագրատունեաց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ, կարողացաւ հաստատել մի նոր անկախ հայկական թագաւորութիւն Կիլիկիայում, որ տևեց մինչև 1393 թ.: Երբ որ Լևոն վեցերորդի մահուամբ իսպառ վերջացաւ հայոց թագաւորութիւնը և հայաստանը ընկաւ օտարների ձեռքը, նախարարական ցեղերը, ինչպէս ասացինք, չվերջացան, այլ շարունակեցին ապրել, գոնէ, ի ներքուստ անկախ կերպով և կարողացան մեր օրերով ելծէ ոչ բոլորովին անկախ, գոնէ, առանձին հայկական մէլեքների իշխանութիւնը հաստատել:

ԵՐ. ՇԱՅԱԶԻԶ.

ԱՂԲԻՒՐՆԵՐ.

1. Մովսէս Խորենացի, Թարգմանութիւն Խորէն Ստեփանէի:
2. Պատմութիւն Հայոց Չամչեանի:
3. Պատմութիւն Սո. Օրբելեանի:
4. Ազաթանգեղոս:
5. Ազար Փարպեցի:
6. Յովհաննէս Կաթողիկոս:
7. Սիսուան Ալիշանի:
8. Средняя Исторія Трачевскаго.

ԱՇՈՒՂԻ ԵՐԳ.

Տինգ բարա ծաղկէ ևս դու, նաղանի եար,
Կանանչ, կարմիր, սիպտակ, գիւլգեազ ալի հետ.
Անուշաֆոտ վարդ ևս դրախտի նուբար,
Բլբուլ եմ շատ հասրաթ ևս քու դալի հետ:

Ծոցումդ պահել ևս երկու անգին քար,
Բարակ մէջքիդ ի՞նչ կըսազի կապես, ետր.
Էրկու տուտըն ալմաստով մարգարտէ շար
Ջաւահիրով շարուած խառըն լալի հետ:

Մինաջաղ քեամարդդ դուռչամ չըրաղով,
Ձառ-զարբար մունթանէդ ոսկէ վարաղով,
Ղօշայ շարղաթ քցի գլխիդ նաւրաղով
Գիւլաղն գիւլաղի, ալըն ալի հետ:

Յուշըդ, միտքըդ, խելքըդ քեամալի բիւթուն
Էս Սէֆիլ Գեօֆթարի ասածըն ևս դուն.
Մարգարտով շարուած ծամերդ ա ղյղուն,
Սիպտակ բոխաղ, կարմիր թուշըդ խալի հետ:

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ԴԱԻԹ ԵՒ ՄՅԵՐ

(Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Վ Ա Ն Վ Է Պ *).

I.

Շատ քիչ կան մեր նորագոյն գրականութեան մէջ այնպիսի գեղարուեստական գրուածներ, որոնք քննադատի առաջ բաց են անում մտածելու լայն ասպարէզ, որոնք բազմաթիւ մտքեր են ծնեցնում, բազմաթիւ հարցերի պատճառ են դառնում և այդ հարցերը հարիւր ու մի տեսակ վճիռների են հասցնում: Այդպիսի գործերը, ի հարկէ, հազուադիւրս պիտի լինին մեր մէջ, որովհետեւ դեռ ի՞նչ է մեր գրականութիւնը և ո՞վ կայ, որ տայ մեզ այդ տեսակ գրուածքներ: Մեր մէջ գեղարուեստը դեռ այն աստիճանին չի հասել, որ սերտած, անգիր արած, հազար ու մի անգամ կրկնուած և արդէն բաւական ձանձրացրած մի մտքից բարձրանայ, ընդարձակուի, ամփոփէ իր մէջ բոլորովին նոր, թարմացնող գեղեցիկութիւններ: Բայց այս անգամ ամեն մի հայ ընթերցողի առաջ դրուած է մի այնպիսի գործ, որի վրայ ուրբան շատ մտածես, այնքան

*) Հրատարակել է Շուշում պ. Մ. Աբեղեան (1889 թ), որ և գրել է այդ վէպը Մոկացի Նահապետի թելադրութեամբ:

շատ գեղեցիկութիւններ կրգտնես: Այդ դործը մի բացառիկ գործ է, մի ամբողջութիւն է, որի մէջ ծածկուած միտքը, զաղափարը յայտնուած է ամեն մի հոչակաւոր գրչեց փառք ու պատիւ բերող նրբութեամբ, ճարտարութեամբ: Եթէ վայր ի վերոյ կարդաք այդ դործը, կրգտնէք մի հասարակ պատմութիւն որ հարուստ էլ չէ երեակայութիւնը լարող, միտքը գրգռող մանրամասնութիւններով: Բայց այդ հեղինակութիւնը ամբողջապէս ընթերցողի մտածողութեանն է յանձնուած, նրան պէտք է լաւ հասկանալ, ըմբռնել, թէ չէ, հեղինակի ամբողջ ընդունակութիւնը, հանձարը, ջուրն ընկած պէտք է համարել: Այդ հեղինակը փոճուած հեղինակ է, հարիւրաւոր տարիների տեսել և հասկացել է, փորձել է այն ճշմարտութիւնները, որ այնպիսի ճարտարութեամբ թաղել է իր այդ ստեղծագործութեան մէջ: Հեղինակը—հայ ժողովուրդն է, ըստեղծագործութիւնը «Դաւիթ և Մհեր» վէպը:

Հայ ժողովուրդի ստեղծագործական տաղանտն, առհասարակ, շատ աղքատ է. գոնէ մենք այսպէս ենք դատում, տեսնելով թէ ինչպէս այժմ մեր ժողովուրդը մոռացած իր սեփական բանաստեղծութիւնները, անասելի սիրով բռնել, իր կրծքին է սեղմել օտարամուտ զանազան բանաստեղծութիւններ, սկսած թուրքական վաւաշուտ, անբարոյական հրպերից մինչև այն ահագին հէթիաթները, որոնք ստեղծուել են Պարսկաստանի կամ Սրաբիայի խորքերում և պատկերացնում են արեւելցու, այսինքն արեւելցի մահմեդականի սէրը, որ ճշմարիտ որ ցաւ ու կրակ է: Միթէ հայ աղղը իր պատմական կեանքի ընթացքում չի կարողացել որոշել իր համար և պաշտել մի որ և է դա՛ղափար. ի՞նչ կերպով է կարողացել նա արտայայտել այդ դա՛ղափարը (եթէ ունեցել է): Այս և այս տեսակ հարցերը շատերն են առաջարկել, խմանալով որ պարսկական, յունական հնութիւնները թողել են ժողովուրդի ստեղ-

Ճած պօէմաները, որոնք այժմ էլ պահոււմ են իրանց մէջ ժողովրդի ոգին, իպէալները: Հայ ժողովուրդը, ըստ երեւոյթին, չի ունեցել ոչ ժամանակ, ոչ կարողութիւն, և ոչ էլ ընդունակութիւն այդպիսի բաներով պարապելու, այսպէս էր համարեալ միակ պատասխանը, որով վճռվում էին վերոյիշեալ հարցերը: Բայց «Դաւիթ և Մհեր» վէպը հրատարակուելուց յետոյ, մենք էլ ամենայն իրաւունքով պարծենալու հիմք ունինք, որովհետեւ մեր ժողովուրդն էլ հղել է գեղեցիկ գործի հեղինակ:

Երկար ու ձիգ նախաբանութիւնները աւելորդ համարենք, դիմենք փաստերին:

Որք է Սամայ քաղաքի իշխանի որդի Դաւիթը: Նա դեռ մանուկ է, երբ մեռել է հայրը, իսկ մայրը թողել է նրան, զնացել Մարամելիքի կին զառել: Որքը մի ամիս մնում է իր հօրեղբօր, Ձէնով-Յովանի մօտ, բայց մայրը նրան տանում է, իր մօտ պահում: Խաղաղ ու անգործ կեանք կրկարէր Դաւիթը իր հօր և հարուստ խորթ հօր մօտ, թէ նրա մէջ չըլինէր հսկայական ոգին, որ տանը նստելու, ամեն տեսակ դուրթեան անտարբեր մնալու համար չէր տուած նրան: Մարամելիքը մի անգամ գնում է գուրդ խաղալու և իր կնոջ թախանձանքով հետը տանում է և Դաւիթին: Թէև վերջինիս հեռու տեղ է կանգնեցնում ու ինքը իր խաղն սկսում, բայց տեսնում է որ մանուկը իր արձակած գուրդը բռնում է ձեռքով. և բարկանում է, տեսնելով մանուկի մէջ այդքան յոյժ: Նա պատմում է այդ մասին իր կնոջը, որ միամտեցնում է նրան, ասելով թէ անհասկացող երեխայ է: Սակայն Մարամելիքը տառում է Դաւիթի յոյժը և թէև փորձում է տեսնում, որ Դաւիթը իսկ որ դեռ անհասկացող

մանուկ է, բայց իր տանը չի պահում, յետ է ուղարկում Ձենով-Յովանի մօտ:

Ի հարկէ, հօրեղբայրն էլ զիտէ, որ Դաւիթը հասարակ մահկանացու չէ: Պողպատէ արեխներ և պողպատէ գաւազան է շինել տալիս նրա համար, գառնարած է շինում: Միամիտ է այդ գառնարածը, պարզամիտ, անհասկացող մի մանուկ, այնքան միամիտ, որ սար ու ձոր է ընկնում, իր պողպատէ օտնամանները մաշեցնում, ինչքան աղուէս, նապաստակ, դայլ կայ, հաւաքում է, բերում իր դառների հետ խառնում և երեկոյեան այդ վարմանալի հօտը բերում է քաղաք: Նրա մէջ, ինչպէս տեսնում էք, կայ ահագին դժ, հերոսական ճարպիկութիւն, բայց նա իրան չի ծանաչում, չգիտէ թէ ինքը մի գերբնական հրաշք է կատարել: Ձենով-Յովանն ասում է.

— Դաւիթ, քեօ բան ի՞նչպէս ի:

Դաւիթ պատասխանում է.

— Խորողբէր, էն սիւ ուլեր օխնած ին, էն բողբալակ ուլեր անիծած ին, ձի շատ կըչարչըին:

Ուրեմն նա չարչարուել էլ զիտէ, նա զգում է որ զուր տեղից չէ մի օրում մաշել իր պողպատէ արեխները, բայց իր բերած բոլոր կենդանիներին ուլեր է համարում... Ոյժը, ֆիզիքական կարողութիւնը խելքից, հասկացողութիւնից առաջ է ընկել: Բայց և այդպէս նա չար տղայ չէ: Ոյժը հսկայական մեծագործութիւններ է անել տալիս, տանում է նրա մանուկ, անգարգացած մարմինը սար ու ձոր դցում, շարժել ու չարչարել է տալիս, բայց վնաս չի արտադրում. նոյն իսկ հաւաքած աղուէսները, նապաստակները ողջ և առողջ են, հսկայական ոյժը նրանց չի կոտորել, այլ հարկադրել է հաշտուել, միանալ գառների հետ: Բարերար ոյժ:

Միւս օրը փոխվում է պաշտօնը. Դաւիթին յանձնում են նախիրը, բայց այդ փոփոխութիւնը նշանակու-

Թիւն չունի: Այժմ էլ բանում է արջ, տախտ, վաղր, մեծ մեծ կենդանիներ և խառնելով նախրի հետ, բերում է, քաղաքն ածում, ինքը քնում: Քնում է և չգիտէ, որ իր արած հասարակ դործը քաղաքի մէջ մեծ յուզմունք է տարածել: Հասարակ մահկանացուները դանդաղում են Ձէնով-Յովանին: «Ձէնով-Յովան, քեօ տղէն մեր քաղաք տւրեց, մենք կրվախնանք էսա գէշերաց, արջերաց, լպտախնեւրաց»: Ծիծաղելին այն է որ ողորմելի «լպտառախներն» էլ վախեցնում են Սասմայ մարդկանց, ծիծաղելի է և միանգամայն ճիշդ, նրանք վախենում են ոչ թէ այդ ողորմելի կենդանիներէց, որոնցից աշխարհիս վրայ շատ քչերն են վախենում, այլ այն անսովոր ոյժից, որ հաւաքել, բերել է նրանց: Ամբոխի բնաւորութեան լաւ բնութեան մի յատկանիշն է. ամբոխը վախում է ոյժից, մեծութիւնից, եթէ մինչև անգամ ոյժն ու մեծութիւնը նրա աչքի տուօն են դալիս մի ամենահասարակ, անմեղ, ողորմելի կեղևի տակ:

Հովուութիւնը Դաւթին խելք չսովորեցրից: Վաղը, ո՞վ գիտէ, խեղճ Սասմայ քաղաքի գլխին ինչ մի պատուհաս կրգար: Հովուութիւնը աւելի ևս պիտի նպաստէր անհասկացողութեան, աւելի ևս պիտի զարգացնէր ոյժը և թրմբացնէր մարդկային ընկերութեան համար անհրաժեշտ հասկացողութիւնը, բանականութիւնը: Ուստի Դաւթին զրկում են հանգից ու արօտից, տուն են բերում, յանձնում են նրան աւելի կանացի պաշտօն — հիւրընկալութիւն: Իսկ որ Ձէնով-Յովանը լաւ սանձեր էր հնարում: Հիւրը Աստուծու ուղարկած մարդն է. մարդկանց դասակարգելը հիւր անուան տակ կորչում են. եկողին հիւր են ասում, լինի նա աղքատ, լինի նա իշխան: Ձեն հարցնում թէ նա ինչ է, քանի գլուխ տաւար ունի, ինչ աստիճանի տէր է, այլ ճառալուծում են նրան, պատիւ տալիս, ճանապարհ գնում: Դաւթի թը պիտի սովորէր մեծին

ու փոքրին ծառայել, խոնարհուել, տան «չէնքն ու շնորհքը» սովորել:

Բայց հիւրընկալութիւնն էլ Դաւթին խելքի չի հասցնում: Զէնով-Յովանն: ունի մի կին, որի անունը Սառիայ է: Մեր ժողովրդի հասկացողութիւնը կնոջ մասին կենտրոնացած է այս անձի մէջ. իր ամուսնու հարստութիւնը շուայլող. բայց միշտ աչքը ուրիշի վրայ դրած մի անհաւատարիմ կին է. Դաւիթը նրան զուր է դալիս, նա ուզում է նրան իր զիրկն առնել: Ծջմարիտ, էլ ի՞նչ յարմարութիւն է հարկաւոր. մի մարդ, որ աղուէսն ու դայլը իր ուլերից չի որոշում, գանձում է կնոջ լեզուի ազդեցութեան տակ, մի լեզուի, որ սովորաբար օձի լեզու է կոչվում: Բայց Դաւիթը միանգամից է հոսկանում թէ ինչ միտք կայ: Անգէտ հովիւը, որ իր ոյժի խաղալիք դարձած հնազանդութեամբ ընդունում է հիւրընկալի պաշտօնը, հասկանում է թէ ինչ է մեղքը, գիտէ թէ ինչ է ընտանիքի պատիւը, օջախը, հայրենական ծխի սրբութիւնը: Սառիայի սարսափելի ցանցը մի փորձաքար է, որի առաջ ժողովուրդը կանգնեցնում է իր հերոսին: Թող այնուհետեւ Դաւիթը աշխարհ նուաձէր, հաղարաւոր զերիններ փրկէր, բայց մարդկանց սիրելին չէր լինի, եթէ խաբուէր այդ կնոջ փաղաքշանքից, արատաւորէր իր հայրական տան անունը: Սա աննշան բան չէ, ժողովրդի աչքում օջախի սրբութիւնից բարձր իզէալ հազիւ թէ լինի: Եւ Դաւիթը պատասխանում է իր փորձիչին. «Խըրօղբօր կնիկ, տիւ իմ մէրն իս, ևս լէ քիօ որդին իմ»: Բայց եւայի աղջնկը հարապէտ է, ինչպէս «միտքը ծուռ» մի կնիկ: Արի, մտածում է նա, զլուխս լուանամ, Դաւթին ասեմ գլխիս ջուր ածէ, որ «իմ լէշ տեսնայ, էնու սիրտ մեղաւորնայ, կեայ խեա իմ ձեռայ»:

Բայց ի՞նչ է կնոջ «լէշը» մի մաքուր սրտի համար: Տեսէ՛ք. այդ վիթխարի ոյժը, այդ հերոսը հպատակվում

է այդ կնոջ հրամանին, ջուր է վերցնում, նրա գլխին է տնոմ հսկան, փահէլանը ողորմել, գլխով չըզիտէ. նա սաստիկ ինքնատէր է լինում, շուտ վերաւորուող: Իսկ Դաւիթը կանգնած է կնոջ բաց «լէշ» մօտ, հասկանում է թէ ինչու համար է «լէշ» բաց արած, լուս կանգնած է և միայն իր աչքերն է ձեռքով ծածկել, որ չտեսնէ այդ «լէշ»: Նա հնազանդ է, նա չի կարող վատութիւն տանել, փշռել այդ կնոջ մերկ լէշը, այլ իր զգայականներն է զսպում, ճնշում է իր հսկայական «եսը», որ կարող էր հսկայական կիրք ծնեցնել: Եւայի աղջիկը յետ է նայում, տեսնում որ հերոսը իրանից շատ է ստորացել, բարձրանում է: Նա հանդէս էր դրել իր բաց մարմնը, իր «լէշ» ուղղում էր ամենաստոր կերպով վաճառել, բայց այդքան ստորութիւնն էլ նրան տակը իրաւունք է տալիս: Վերաւորուած է այլանդակ ինքնասիրութիւնը և այդ կինը պատմում է իր մարդուն թէ Դաւիթն ուղղում էր իրան բռնաբարել, ինքը չթողեց: Կին է և կնոջ զօրծ: Բայց Զէնով-Յովան խելօք, հասկացող մարդ է, վէպը, առհասարակ, վկայում է որ նա սիրում է Դաւիթին: Իհնչպէս եղաւ որ այդ խելօքը մարդը տանց հարց ու փորձ տնելու, տունց պատճառն ու հանգամանքը իմանալու նոյն իրիկունը փակում է դուռը, Դաւիթն դուրս անում:— Զէնով-Յովանից երկու, երեք աստիճան խելօք մարդն էլ ուրիշ կերպ չէր կարող վարուել. այդտեղ կնոջ զրպարտութիւնն է, այնպիսի մի զրպարտութիւն, որ կնոջ միակ անխորտակելի զէնքն է. արեւելցին պիտի միայն իր կնոջ հաւատաց այդ զէնքում, իսկ դատ ու դատաստան բանալ այդ մասին անհնարին է. կնոջ վզին է փաթաթուած ընտանեկան պատուի մեծ մասը: Եւ տղամարդը, որ դրել է նրա վզին այդքան մեծ պարտականութիւն, ինքն էլ ազատ չէ այն իսկ մաքից, որից զրդուած չաբախօսել է կինը: Նա անպաւաճառ պիտի հաւատաց որ

այդ ճիշդ է, կենը մի այնպիսի բան է, որ ամեն մէկը կարող է մօտենալ, անպատուել. հարկաւոր է, ուրեմն, կնոջը փակել տան մէջ, իսկ անպատուել ուղղովն հեռացնել, կորցնել:

Բայց ի՞նչ կըլինի այդպիսի խայտառակ կերպով վռնդուած Դաւթի գրութիւնը: Նա, որ իր արածի համար լիովն շնորհակալութիւն պիտի ստանար, հալածվում է իբրեւ մի լիտի, անպիտան տղայ, որ ապականել էր կամենում իր բարերարի օջախը: Սրդար բարկութիւնը զայիս է նրա վրայ և այդպիսի մի բարկութեան ժամանակն է նա յիշում, որ իր բազուկն ունի մի աւերիչ զօրութիւն. այդ տեսակ դառն րոպէում նա իր բերանով խոստովանում է, որ եթէ մի քացի տայ, Ձէնով-Յովանն էլ, տունն էլ, դուռն էլ անդունդ կերթան: Բայց վատութեան միտքը շուտ չէ կարողանում նստել նրա մէջ: «Ի՞նչ անեմ, հօրեղբայր, բողից խաբուած ես»: Նա էլի խղճում է իր հօրեղբօրը, կարծես բաւական է համարում այն պատիժը, որ նա մի այդպիսի կին ունի:

Հեռանում է Դաւիթը իր հայրական տանից, տանում է իր հետ իր անօգնականութիւնը, անհասկացողութիւնը: Ի՞նչպէս տեղ գտնել մարդկանց մէջ: Ի՞նչ անել: Ինչ անելու հարցը նրա խելքին ու մտքին ամենեւին չի մօտենում: Եւ այդ պատճառով ծաղրելի ծայրահեղութեան մէջ է ընկնում. նեւ ու աղեղ է շինում, ընկնում է արտերը, լոր, ճնճղուկ է որսում, իսկ զիշերները օթեան է դնում մի պառաւի տանը: Պառաւը Դաւթի հօր սիրուհին է եղել մի ժամանակ, այժմ թէև տեղ է տալիս թափառական որբին, բայց շարունակ յանդիմանում է նրան, որովհետեւ նա լոր ու ճնճղուկ որսալով կոխ է ապլիս իր արտը: Խելքը կորցրած հսկան այդ յանդիմանութիւնից բոլորովին շուարում է և նրա համար անվճիռ մնացած հարցը—ի՞նչ անել—մէկ էլ

կրկնվում է պառաւի մօտ: Պառաւը խօսք է սկսում Դաւթի հօր, իր սիրեկանի մասին: Բոլոր պառաւած մարդիկ այնպէս են, որ կարծում են թէ իրանց հետ ամեն ինչ պառաւել է, հինը դնացել է, զեղեցիկ է եղել և այդ զեղեցիկութեան կէսն անդամ չըկաց իրանց աչքի առաջ սկսուողն մէջ, չպիտի էլ լինի: Եւ ահա այդ պառաւը կէս յեզնութեամբ ցոյց է տալիս իր մանուկ հիւրին, որ նրա հայրը լաւ մարդ էր, շատ գանձ, ապրանք, իշխանութիւն ունէր: Քանի կենդանի էր, Մարամելքին հարկ չէր տուած, իսկ մեռնելուց յետոյ Մարամելքը հօթն տալուց հարկ է պահանջում:

Այդքանը միայն: Իսկ թէ Դաւիթն ինչ պիտի անէ— այդ մասին պառաւը չի խօսում: Դաւիթն էլ այնպիսի մարդ չէ, որ կարողանայ իրանից մի բան սկսել: Քանի որ զրութիւնը կայ, քանի որ ոչ ոք նրան չի խօսեցնում, նա չի կարող մի բան անել: Թող հարկը տանեն, տեսնենք այդ բանն ինչպէս է կատարվում, թող ուրիշները սկսեն: Եւ հսկան միւս օրն էլի գնում է, ճիճղուկ ու լոր է որսում, պառաւի արտը կոխ տալիս:

XXX.

Բայց ահա, վերջապէս, ցոյց են տալիս այդ անհասկացող հսկային, թէ ինչ պիտի անէ: Ի՞նչ են ցոյց տալիս:—Ո՛չ ասպետական արշաւանք է, ոչ զեւերի ու հրէշների հետ աննպատակ կռիւ, ոչ էլ մի ինչ որ կախարդական զեղեցիկահու համար սարքած տարիների արհաւիրք ու նեղութիւն: Դաւթի առաջին դործը հայրենի ժառանգութեան պահպանութիւնն է: Թող Մարամելք նստէր իր տանը, մոռանար Սաամայ քաղաքի հօթը տալուց հարկը և Դաւիթը, որի համար է զրել բանաստեղծը՝ «տուէք ինձ սարեր, սարեր կործանեմ, սուր ակ-

ռաներովն՝ երկաթ կըծամեմ», տանք՝ կընտէր, ծիտ ու լոր կ'որսար և ամեն օր պառաւի թթու յանդիմանութիւնների հետ կ'ուտէր այդ օրսը: Բայց եկաւ Մարամեղքի՝ զեսպանը, Կօղբաղինը, ասում է Ձէնով - Յովանին. «Տուր, թէ չէ Մարամեղք կըքանդէ Սասմայ քաղաքը, կըտանէ Մարայ քաղաքի դէնը նոր Սասմայ քաղաք կը շինէ»: Հե՛շա է այդպիսի սպառնալիք լսելը: Պատասխան է. «Տա՛ր»:

Բայց պառաւը դարձեալ նախատում է Դաւթին, որ նա կոխ է տալիս իր արար, ապրուստից զրկում: «Գնա՛, ասում է, Կօղբաղինը եկել է, քո հօր գանձը տանում է»: Եւ թմրած վիթխարի ոյժը, որ մի ժամ առաջ «ինչ անել» է հարցնում, միանգամից արթնանում է, գանում է շարժուելու, շփուելու ճանապարհը: Գնում է, տեսնում, որ այդ Կօղբաղինը չափում է իր հօր ոսկիները: «Որ Դաւիթ տեսաւ, բարկութենէ արիւն լցաւ աչքը, խերստտաւ»: Սուրբ, արդար բարկութիւն. նա պաշտպանում է իրանը, նա չի թողնում, որ զօռի իրաւունքով տանեն այն, ինչ իր ժառանգութիւնն է: Անընկճելի ոյժը ուղղվում է դէպի նպատակի կէտը՝ նախ մէկ հանաքի ձեւով. Դաւիթը դէն է շարտում Կօղբաղինին, ինքն է նստում նրա տեղ՝ որ ոսկին չափէ: Ամանը, որով պիտի չափուի, շուռ է տալիս յատակի վրայ, մի քանի ոսկի է դնում տափակ տեղը և փայտով հաւանսարում է, այսինքն՝ զրած ոսկիներն էլի թափում է ու զատարկ չափը դնում է չուալի մէջ, համրում. «է՛ս մէկ»... Ի՞նչ կծու նախատինք: Հղօր Մարամեղքի գոռող զեսպանը, պարզ է պիտի վերաւորուի, գայրտնայ: Եւ նա հրամայում է Ձէնով - Յովանին որ դուրս տանեն այդ «տղային», կրկնում է իր սպառնալիքը Սասմայ քաղաքը աւերելու մասին: Դաւիթն այդ իր ականջովն է լսում. հանաքը փոխվում է: Ոսկու չափը, որ Սասմայ քաղաքի գերութեան չափն էր, զարկ-

վում է գերութիւն բերողի ճակատին: Դաւիթը կորում է Կողբաղինի շրթունքները, ատամները հանում է, ճակատին անկում: Սեփականութեան իրաւունքը այսպիսի այլանդակ բան անել տուաւ այն հերոսին, որ մի նապաստակ չէր սպանել:

Այնուհետեւ սկսվում է կռիւր Մարամելքի հետ: Այս նոյնպիսի կռիւ է, որպիսին վարում էր պարսկական ժողովրդական հերոս Ռուստէմը: Պատերազմ, սուր ու կոտորած, աշխարհ արարած պիտի խառնուի, զարնուի մի մանուկ տղայի պատճառով: Մարամելքը կուտում է իր ահաղին զօրքը Մասմայի մօտ, մի դաշտում և կրկին հրաւիրում է Ձէնով-Յովանին հնազանդուել: Ձէնով-Յովան խելօք մարդ էր, խոհեմ անուանածներից մէկը: Ընտանում է իր ձեռքերը, յետ կանգնում ինքը չի կռուիլ, եթէ ուզեն, պատրաստ է հարկը վճարել: Բայց կայ Դաւիթը, եթէ սա ուզում է, թող ինքը կռուի: Երբ յայտնում է հսկային, սա վճռաբար ասում է որ իր հօր զանձը չի տալ: Ախր, ասում են, կրդան, մեզ կըսպանեն, մեր քաղաքը կ'աւերեն. հսկան պատասխանատու է դառնում, հօրեղբօրը խնդրում է, որ գնայ քնի:

Իսկ ինքը մինչև լոյս մտածում է, չի կարողանում քնել: Մեծ անցքեր պիտի կատարուեն միւս օրը, նա ստեղծել է մի ծանր զրոյթիւն, նա այժմ պատասխանատու է մի ահաղին ամբոխի առաջ: Նա մի անհեթեթ հսկայ չէ, որ պատերազմ է դնում միայն արիւն թափելու, իր անձոռնի ծարաւը յաղեցնելու:

Առաւօտը վեր է կենում, վերցնում է իր նետն ու աղեղը, որոնցով ծիտ էր որսում, գնում է՝ այդ գէնքերով մեծ պատերազմ մղելու: Միամիտ, անպատրաստ տղայ, որ թէև զիտէ թէ ինչ պիտի անէ, բայց չըզիտէ թէ ինչ պէս անէ: Պատաւը կրկին յանդիմանում է նրան և այդ յանդիմանութեան մէջ ցոլում է ժողովրդի գաղափարը:

Քրոդս քե տանր, ափսոս չէր տիւ էն խօր աղէն բրնիս: Քեո խէր ունէր Քուսկիկ-Ջալալին, թուր կէծակին, գլխի դեօտին, կապէն խարուկին, քամարն ի մէջքին, Մարու-թայ բանձրիկ Աստուարածին խաչ-պատարազին ընչ վար աջ թւին: Ժողովուրդը այստեղ հաւատ չէ բնծայում անձնական ղյօթին, հերոսութեանը, որքան և մեծ լինի նա: Թէ ինչ են Դաւթի հօր այդ զէնքն ու հագուստը, այդ «խաչ-պատարազին», վճռել չեմ կարող, թողնում եմ այն բանասէրներին, որոնք մեր ազգային աւանդութիւններն ու հաւատալիքներն են քրքրում: Բայց իմ մաքի առաջ պատկերանում է մի այսպիսի այլաբանութիւն: Դաւիթը մաքուր, գեղեցիկ հերոս է, պատրաստվում է մի սուրբ պարտականութիւն կատարելու. հօր յիշատակը պիտի վառ պահէ, հօր ժառանգութիւնը պիտի պաշտպանէ և ինչո՞ւ չըպիտի օգնեն նրան այն ամեն ուժեղ և կարող բաները, որոնք օգնել են այդ հօրը մի այդպիսի ժառանգութիւն, անուն ստեղծելու: Ահա ձին Քուսկիկ-Ջալալին—մարդու անզուգական հաւատարիմ ընկերը: Ահա թուր-կէծակին — կտրիճ մարդու աջ թւը: Ահա գլխու գեօտին, որ ամեն մի տղամարդի տնարարութեան նշանն է, մի նշան, որ ցոյց է տալիս թէ այդ մարդը ունի խելք, հաստատակամութիւն, տղամարդի բարձրութիւն, ինքնասիրութիւն, մտաբերկնք թէ ինչ է ուղում յայտնել ժողովրդի մարդը, երբ ասում է. «Ես փափախը գլխին տղամարդ եմ»: Ահա կապէն խարուկին, քամարն ի մէջքին—նշան կառավարութեան, զգաստութեան, իշխանական պշտանքի: Եւ այդ բոլորի վրայ խաչ-պատարազին — օրհնութիւն Աստուծու, զօրութիւն երկնային, նստած աջ ուսի վրայ: Այդ բոլորը զեռ չունի Դաւիթը, ի՞նչպէս է կռիւ դնում:

Բայց ինչո՞ւ Զէնով-Յովանը, ինչպէս ասում է պառաւը, այդ բոլոր բաները խաթրով չափաի տայ Դաւ-

Թին: Պատճառը դարձեալ Ձէնով-Յովանի խելօքութիւնն է, խոհեմութիւնը: Իրանք անձնական ոյժի պէս բաներ չեն, ոյժը այս ու այն կերպ կարելի է դործ ածել, բայց այդ հրաշալի բաները դործ ածելը չափազանց դժուար է, ամեն մարդու խելքի բան չէ: Մի անգամից հասկացել են որ դրանք այդպիսի հրաշալի, հազուադիւտ, գերբնական բաներ են, և խոհեմութիւնը ասել է. հեռու պահիր քեզ նրանցից, թող փակուած մնան մի տեղ, ինչ ուզում են թող դառնան, միայն թէ դու հեռու մնա: Եւ տեսէք. Դաւիթը բռնութեամբ հարկադրում է հօրեղբօրը ցոյց տալ այդ բաները: Մի՞թէ ձին չի հաստատում իմ այս կարծիքը: Դաւիթը գնացել է նրա մօտ որ հեծնէ. ձեռք է տալիս ձիուն, ձին իմաստուն է, գիտէ որ եկողը մանուկ է. մի քացի է տալիս, որ Դաւթին չի զիպչում: Եւ Դաւիթը, երևի, հասկանում է պատճառը, լաց է լինում, գոռում.

— Ես ի՞նչ անեմ, Քուռկիկ-Ջալալին, ես գիտէր, որ տիւզիս ազատէր էսա կուռց:

Յայանի եղաւ, ուրեմն, որ այդ մանուկը գործի է գնում, պատրաստուել, կազմուել է ուղղում. զուարճութեան համար չէ հարկաւոր ձին, ծանր գործի ընկեր պիտի լինի նա: Աստուծու հրամանով ձին լեզու է ստանում, խօսում է.

— Դաւիթ, որ էն պէսն ի, ես քե, տիւ ձը տես:

Ձին հնազանդվում է. տակայն ի՞նչ դրութեան մէջ է: Լսենք նրա գանգատը. «Քեո խրօղէր զիս չի պախած, զիս տուտաղի պէս ի պախած»: Եւ իրաւ, հաւերն այնքան ծրուել են, որ խեղձ ձիու վրայ մի թիղ ծիրա է կուտուել: Միւս բաներն էլ անխնամ են պահուած. իսկ խաչ-պատարազին փակուած է մութ սնդուկի մէջ: Բայց երբ Դաւիթը գնում է, սնդուկի տաաջ չորում, աղաչում է, պաղատում, խաչ-պատարազին զուրս է թռչում, նրա-

տուում է նրա աջ թևին: Խոհեմութիւնը եօթը տարուայ հարկ է տալիս անխօս ու անարտունջ. չէ՞ որ այն պատճառով որ այսպիսի զօրութիւնները նա անխնամ է պահել մոռացել, ծածկել փոշու տակ:

Եւ զնում է որդին իր հօր ճանապարհով. մի որդի է, որ սրբութեամբ կատարում է մեծաւորների խրատը. «Քո հօր ճանապարհով զնա»: Այդ ճանապարհի վրայ կայ այնպիսի մի զեղեցիկ պարզեւ, որպիսին է սքանչելագործ կաթնաղբիւրը: Նրա մէջ լողանում է Դաւիթը, վարձատրվում է իր հօր բոլոր բարեմասնութիւններով. հասակ, յոյժ է ստանում, կաղնուրվում է, մեծանում: Այժմ նա գտել է ամեն բան, որ կարող է նրան անփորձ ու անապաւն առաջ տանել, նպատակին մօտեցնել:

Կարծում էք թէ ամեն բան է ձեռք բերել: Ոչ, դեռ պակասում են մի քանի յատկութիւններ: Ձին տակ է որ երբ ինքը կաթնաղբիւրի մօտ կանգնէ, Դաւիթը պիտի ցած իջնէ: Հասնում են աղբրին, բայց Դաւիթը մոռացել է և կարծում է թէ ձին յօգնել է, ուստի ոտով զարկում է, նրա կողաշարը կտրում: Ձին բարկանում է. «Կարամ զքե տամ էրիքսկան էրիցիս, ինչպէս տիւ իմ խօսք շիւտ մոռացար»: Դաւիթը ձիւն որ մոռացել է որ թէ և իրան շրջապատել են երկրի ու երկրի զօրութիւնները, բայց ինքն էլ պիտի ունենայ խելք: Այդ հաւատարիմ ընկերը բարի է և բարի ճանապարհ է ցոյց տալիս, ինչու նրան չի լսում: Այս մէկ դաս, որ ամեն մի մարդ, ինչքան և զօրեղ ու փառաւոր լինի, պիտի լսէ սրասկից ընկերին, որ իրանից մեծ է, փորձուած: Ի՞նչ կրկնէր Տելեմաքը առանց Մենտորի:

Պատերազմից առաջ մի փորձ է հարկաւոր: Դաւիթը իր սրի մի հարուածով կտրեց դաշտի մէջ կանգնած սիւնը, կընշանակէ թէ նա պիտի յաղթէ. եթէ չկտրեց, պիտի յետ դառնայ: Մի՞թէ Դաւիթի քաջութիւնը դեռ

նոր պիտի փորձուի: մի՞թէ նրա անցեալը բաւական չէ մի ահարկու զօրութեան մասին վկայելու համար: Ոչ բանն այդ քաջութիւնը չէ: Ահա տեսէք: Նա զարկեց սիւնին և սիւնն այնպէս կտրուրեց, որ կտորները միմեանցից չբաժանուեցան, չհեռացան. սիւնը կանգնած է ինչպէս առաջ: Դաւիթը պիտի յուսահատուի այդ սոսկալի գրութիւնից, պիտի յիտ դառնայ պատերազմ չսկսած: Զայրացած հերոսը առանց երկար ու ձիգ մտածելու անիծում է իրան.

«Զնոնիկ, տիւ կոտուր կենէր,

Որ զարկեցի թուր չկտրեց.

Աջքիկ, դու խաւար կենէր,

Որ էս բաներ ես չըտեսնէր»:

Անէճք բարի հոգուց, խտակ սրտից... Եւ կատարուեցաւ նրա հայցումը: Զեռքը կտրւում է, աչքը կուրանում: Ի՞նչ դառաւ: Կանգնած է, չգիտէ թէ ինչ անէ: Բարի և ազնիւ ընկերը, ձին, ասում է.

—Քեռ բերան կտորուի, տէր իմ, քանի մ'ուզը Ասծուց:

Յուշմունք է դէպի ամենահոգորը, դէպի ամենաբարձրը, որին Դաւիթը մոռացել էր, չէր յիշել: Առանց Աստուծու հրամանի ոչինչ չի կարելի անել. նրանից հեռու պահուողն աչքի առաջ կտրուած սիւնն էլ չկտրուածի պէս կ'երևայ: Եւ ինչո՞ւ անիծել, չար, վատ բան խնդրել: Ահա նա կանչեց Աստուծուն, քամի վեր կացաւ, մի բուրբուր բացաւ մելորուածի սիրտը, սիւնը կէս դառաւ, ընկաւ: Անէճքը օրհնութեան փոխուեց. օրհնութիւնը շինեց, կենդանութիւն տուաւ, կտրած ձեռքը առողջացաւ, կուրացած աչքը էլի լոյս ստացաւ: Որն էր լաւը: Ժողովրդական փիլիսոփայութիւն է կամքը, բերանը դէպի չարը կամ բարին տանելու մասին:

Այդտեղ էլ ուրիշ զոս առաւ Դաւիթը, գնաց, դաշտը տեսաւ: Նրա աչքի առաջ Մարամելիքի անհամար զորութիւնն է, որ վախեցնում է նրան: Բայց ձին սիրտ է տալիս և նա առաջ է գնում:

Այնիւ է Դաւիթը իր թշնամիների հետ, այդ նրա մանկութիւնից էր նկատելի: Եւ այժմ չի ուզում զոգի պէս յարձակուել թշնամու վրայ, յանկարծակի, անսպասելի խառնակութիւն ձգել բանակի մէջ և բոլորովին ապօրինի կերպով օգտուել այդ խառնակ զորութիւնից: Ուստի սարի գլխից ձայն է տալիս, հասկացնում է ամենքին և ամեն մէկին, որ պատրաստուեն: Մեծ առաքինութիւնը, մեծ արդարութիւնը այն է, որ ամեն մէկին իրաւունք է տրվում պաշտպանուել:

Բայց միայն պաշտպանուելու իրաւունքը չէ տուած պատերազմող ամբոխին: Ինչո՞ւ է նա պատերազմում, այդ էլ նա իրաւունք ունի հարցնելու: Դաւիթ առաջն է դալիս ծեր զինուորը և հարցնում է. «Ինչո՞ւ ես կոտորում այս մարդկանց. ամեն մէկը մի մօր որդի է. Մարամելիքը ամենքին զօրով է բերել, դնա՞, նրա հետ կռուի՞ր»: Եւ իրաւ. պատճառն ո՞վ է և ո՞վ պիտի արիւն թափէ: Դաւիթը գնում է զէպի Մարամելիքի վրանը:

XX.

Մարամելիքը իշխան է, երկրի և ժողովրդի տէր. իսկ Սասմայ քաղաքի վերաբերութեամբ մի բռնաւոր է, որ գերել է Դաւիթի հօր բոլոր կարողութիւնը, իշխանութիւնը և դեռ եօթն տարուայ հարկի համար այդպիսի մի ահազին զօրք է հաւաքել, որ կոտորէ ժողովուրդը: Խաւար, անձոռնի դժ է, մի և նոյն ժամանակ հսկայ է: Դաւիթը մօտենում է այդ անձոռնի դժի վրանին և ասում. «Մարամելիք կանչէք ի կեայ կոխ անենք. անմախ

ի, էնու մութ իմ բերի, անգրող ի, էնու գրող իմ բերի»։
Եւ նրան ո՞վ է առաջին անգամ պատահում։— Իր մայրը։
Այդ մայրը որդուն չի գրկում, չի համբուրում, թէ՛ն տես-
նում է որ նա մեծացել է, հսկայ է դառել, հագել է իր
մեռած ամուսնու շորերն ու զինուել է նրա զէնքով։
Դաւիթը, որ այդ կնոջ համար երկու պատկեր ունի, ա-
մուսնու և որդու պատկերը, այսպիսի խօսքեր է լսում
նրա բերանից. «Դաւիթ, Մարամելիք քնած է»։ Մայրը
բռնութեան կողմն է, մայրը այդ բռնութիւնն աւելի է
սիրում, քան թէ իր անցեալը, իր երիտասարդութեան
քաղցր օրերը, իր առաջին սէրը։ Դժուարադոյն դու-
թիւնն հէնց այդ է, որ երկրի մարդը իրաւունք պաշտ-
պանելու է զնում, տեսնում է որ երկրի մայրը բռնու-
թեան կողմն է անցել և սառն է, անտարբեր դէպի այն
փորձը, որ անում են իր սրտին մօտիկ մարդիկ։ Մարա-
մելիք քնած է, ասում են, եօթն օր է քնում։ Պէտք է
զարթեցնեն նրան. շամիրուր են տաքացնում, ոտների տակ
դնում, նա քնի մէջ կանչում է թէ լուսնեկը կծում են։
Դուրսանի խօփն են տաքացնում, նոյն ազդեցութիւնն է
անում։ Ի՛նչ մեծ, ահուելի թմրութիւն է, որի մէջ այդ
բռնաւոր հսկան է անշարժացած։ Հէնց այդ քունը շատ
լաւ է նկարում Մարամելիքի պատկերը։ Նա թմրած, ան-
հեթեթ մի գօրութիւն է. նա այդ քունն է մոռում՝
թանձր և մռայլ հողին ու մարմինը հանգստացնելու։ Եւ
որքան դուռը, որքան ինքնահաւան։ Երբ վեր է կենում,
տեսնում է Դաւիթին, խփոյն փչում է, կամենալով այդ
շունչով ողնացնել իր ախոյեանին։ Բռնաւոր ոյժը այդ-
պէս է իր գործը կատարում։ Մի անգամ փչելով, մի
փոքրիկ, հեշտ դործով է ուղղում ողնացնել իր առջև
կանգնած արդելքը։

Բայց Դաւիթն անսասան է, հրաւիրում է նրան
կռուել։ Հո՛ւ, հիմա բռնակալի դերը փոխուեց։ Անսասան

ոյժը նրան յետ է կանգնեցնում: Նա սովոր չէր ուղիղ այդ ոյժի աչքին նայել, նա սովորել էր միշտ տեսնել մի շունչի առաջ ամեն զարուժոս հարթացած: Եւ այժմ նա մոռնում է ուրիշ կեղեի տակ: Ձեանում է հիւրասէր, բարի: Տնաշէն, ասում է, ի՞նչ կայ, զիւ նստիր, ասենք, խօսենք, հաց ուտենք, յետոյ կռիւ դուրս գանք: Խորամանկութիւն, խաբէբայութիւն, անվախ մարդու սիրտը ստոր կերպով թակարդի մէջ ձգել—ահա ինչ կարողացաւ անել բռնութիւնը վճռական բռնութեամբ: Իսկ Դաւիթը մինչև այդ ժամը մարդ ճանաչելու հարկաւորութիւն չի ունեցել, դեռ միամիտ է, կարծում է թէ բոլոր մարդիկ մի և նոյն տեսակի են, ասում են, ինչ որ իսկապէս ուղիւմ են, յետին միտք չունին: Եւ միամիտ է այնքան, որ իր գեղեցիկ ու սրտացաւ ընկերը, ձին, թողնում է, իջնում և բոլոր գոյութեամբ մոռնում է այդ բռնաւորի յարկի տակ: Ձին փախչում է բարկացած, գնում է սարի գլուխը:

Դաւիթը նստում է հաց ուտելու: Բայց բռնակալութեան որոգայթը շատ և շատ անգամ է լարվում հացի և սրբութեան մօտ: Ազնիւ, անարատ դիւցազնը այդ չի իմանում և չիմանալով նստում է ծածկուած խոր հորի վրայ և ընկնում է հորը, կորչում սոսկալի շղթաների տակ: Փառաւորվում է բռնաւորը: «Էն էք ինչ խեղձի կռիւ էնէ՛ր, թըխ կենայ ընտէ, չուր ոսկորքեր փրտը»: Կորաւ Դաւիթը...

Կապոյտ երկնքի վրայ խիոյն գծագրվում է երկրի վրայ անգլի ունեցած ցաւերն ու փոփոխութիւնները: Երկինքը զրիչ չունի, լեզու, վրձին չունի. նա գծագրում է մարդու ճակատագիրը իր անհամար աստղերով: Նա ուշադիր է դէպի մարդիկ, ամեն մէկի հաշիւը պահում է, ամեն մէկի համար մի աստղ, որ մարում է, խաւարում, երբ նրա տէրը նոյնպէս մարում է, պայծառանում է, երբ

տէրն է պայծառ: Այդ գիշեր երկու աստղ իրանց անհամար քայրերի մէջ տարօրինակ տեսարան են ներկայացնում. մէկը պայծառ է, փայփլում է, Մօրայ աստղն է. միւսը գունաւոր է, մարում է, դա էլ Սասմայ աստղն է: Զէնով-Յովան նրանց տեսնում է երազում, վեր կացնում իր կնոջը. «Կնի՛կ, իլի վեր, Դաւիթ ձեռաց գնաց»: Զէնով-Յովանը, մենք զիտենք, սիրում էր Դաւիթին, նա չի կարողանում տանել, որքան և խոհեմ է, Սասմայ աստղի այդ օրհասական տալիսալը: Կնիւր վեր է կենում և զեռքնաթաթախ՝ չարախօսում է. «Քեռ տուն աւրի. քիւն քի կըքնես, էրազ հալղին կըտենես: Ով զիւր Դաւիթ վիր կնկան ծոց պառկի քէ՛Ք կանը»: Սառիէն է, մեր վաղածանօթ Սառիէն: Տեսնես ո՞ր կնկայ ծոցում քէ՛Ք է անում. ահա Սառիայի ամբողջ հոսկացողութիւնը, այն կէտը, որ նրա աչքի առաջ ամեն կարգ ու կանոնի սահմանազուլին է: Խօսքն այնպէս չի ասուած, որ Զէնով-Յովան նորից չքնէ:

Բայց երկնքի վրայ շարունակվում է սրտասրատաւ տեսարանը. Մօրայ աստղը աւելի և աւելի պայծառացել է, Սասմայ աստղը աւելի աղօտ է: Եւ այդ աստղը զարհուրանք է պատճառում. օրհասի անմխիթար, զարդանդ տարածող պատկերն է, որ ամեն մէկին հրաւիրում է օգնութեան. այդ այն դրութիւնն է, երբ ձեռքից ցնացողի համար ամեն մի սրտից յուսահատութեան աղաղակ է դուրս թռչում: Ահա օրհասը եկաւ. Մօրայ աստղը արշաւեց, կուլ տուեց Սասմայ աստղը: Կուլ տուածի տեղ մնաց մի խաւար դատարկութիւն... Այս անգամ Զէնով-Յովան չզիմացաւ: «Կնի՛կ, իլի վեր, Դաւիթ սպանեցին»- Կնիկն էլի իր փշերն է հանում: Բայց Զէնով-Յովան այս անգամ ոյժ է ունենում ամեն ինչ փչացնող, սառցնող չարամտութեան, բամբասանքին մի քացի զարնել և վեր է կենում, օգնութեան է զնում: Հեծնում է հրեղէն սև

ձին, մի ակնթարթում հասնում է պատերազմի տեղը, կանգնում է սարի գլխին: Ի՜նչ սրտառու է տեսարան. Քուռկիկ - Ջալալին տխուր, յուսահատ թափառում է այդտեղ:

Ձենով-Յովանը ունի դարմանալի մեծ ձայն: Ձայն է տալիս, ձայնը սար ու ձոր է ընկնում. «Դաւիթ յո՛ւսան իս, թը սող իս, յիշա զՄարութայ բանձր Աստուարածին խաչ-պատարաղին, ինչ վար քո աջ թևին»: Օգնութեան ձայնը հասնում է Դաւթին: Մեր մոռացկոտ հերոսը լսում է, իմանում որ նա ընկել է այդ խոր փոսի մէջ տանելով իր հետ զերութեան անյուշուրը և մի բան, որ իր աջ բազուկի դժն է և որ կարող էր փրկել նրան ամեն մի փորձանքից: Ո՛չ, միանգամայն Դաւթի ճակատագիրն այնպէս է, որ նա մենակ իր անձնական ուժով շատ բան անել չի կարող: Այդ դժբ, այդ հրաշալի կարողութիւնը մեռած անպէտք բան է, քանի որ հերոսը չի կարողանում խելք, իմաստութիւն առնել իր մէջ, քանի որ մոռանում է, որ առանց մի բարձր, գերագոյն դժի ինքը միշտ անօգնական է: Նկատեցէ՛ք: Ամեն անգամ, երբ հարկաւոր է այդ դժբ գիտակցօրէն զործադրել, ամեն անգամ, երբ հերոսը իր զործողութիւնների համար իր դժն է տուած քաշում, միշտ մոռացվում է գերագոյն դժբ, միշտ հեռանում է աստուածայինի միտքը: Ոչ մի ժամանակ— այսպէս է ասվում— մարդկայինը, ուրբան և կատարեալ լինի, չի կարող ինքնազուլի դործ կատարիլ: Բռնութեան հետ դործ ունենալու համար բաւական չէ դժ միայն. հարկաւոր է նաև իմաստութիւն, սառնասրտութիւն, հեռատեսութիւն, եթէ ոչ, գերի կ'ընկնէ ոչ միայն անպարտելի դժբ, այլ և այդ ուժի օգնութեան եկած բոլոր գերահրաշ զօրութիւնները: Դաւիթը մէկ անգամ էլ հասկանում է այդ, զիմում է երկնային զօրութեան. խոր հօրի բերանը բացվում է, գերութեան շղթաները խոր-

տակվում են, գերի հերոսը էլի լոյս աշխարհումն է: Գր-
նում է հօրեղբոր մօտ: Բայց Քուռկիկ-Ջալալին բարկացած
է, չի մօտենում Դաւթին: Ի՞նչ անէր խեղճը: Եւ Ձէտով-
Յովանն է նրան հաշտեցնում Դաւթի հետ:

Մ.

Վերջապէս Դաւիթը Մարամելիքի մօտ է, հրաւիրում
է կռիւ անել: Նա հասկացել է բռնաւորի խաբեացու-
թիւնը, բռնաւորն էլ ուրիշ զէնք չունի, դարձեալ հրա-
ւիրում է նստել իր վրանի տակ: Դաւիթն այս անգամ
չի խաբվում, տագնապը պատել է Մարամելիքի չորս կողմը:
Պատ իպատ առաջարկութիւններ է անում: Հերթով պէտք
է կռուել. ինքը մեծ է, հերթն իրանն է, ինքը պիտի
առաջ զարկէ: Եւ Դաւիթը համաձայնում է: Զարմանալի
ազնուութիւն: Բռնաւորը տարիքով մեծ է, հետեաբար
նրան է վայել առաջին անգամ հարուած տալ: Բաւա-
կան չէ, որ Դաւիթը գողն պէս չի յարձակվում, բաւա-
կան չէ, որ պաշտպանուելու ազատ իրաւունք և կարո-
ղութիւն է տալիս, գեռ տարիների առաւելութիւնն էլ է
ընդունում իր անաղնիւ, խարդախ հակառակորդից այդ-
պիսի վճռական ըոպէում:

Եւ որքան ուրախ է բռնաւորը: Գնում է, գալիս,
գուրդը զարնում է, մինչև երկինք փռի է բարձրացնում
և մեծամեծ, ինչպէս միշտ, անյող, հպարտ կանչում է.
«Դաւիթ խող էր և խող դարձաւ»: Երեք անգամ այդ-
պէս զարկում է և ոչ մի անգամ չի մոռանում այդ
փքուն խօսքերն արտասանելը: Բայց Դաւիթը կենդանի է
մնում: Ահա, վերջապէս, հասաւ ըոպէն, երբ կարելի է
տսել. «Խեղճ բռնաւոր»: Ոտով ու ձեռով կաշկանդուած
և կաշկանդուած ոչ իր մինչև այդ օրը գործ դրած շղ-
թաներով ու կապանքներով, այլ լոկ մի երեսապինդ,

Համարձակ և մի և նոյն ժամանակ ազնիւ, մաքուր Հերոսի առաջ իր բռնած դիրքով, նա «մահաթ», ժամանակ է խնդրում: Ոչ մի բան այդքան չէր կարող նեղել հսկայ բռնաւորին, այն անտիճան ամաչացնելը, Դաւիթը, որին նա վստահաբար խաբել էր, կանգնած է իր առաջ, հերթին է սպասում. նա ոչ բարկացած է, ոչ կրքերով վառւած և նրա արեան այնքան ծարաւ չէ, որ առանց պատճառն իմանալու, առանց հարց ու փորձ անելու միանգամից սպանէ: Ո՛չ, իբրեւ ծանր, անվերջով մի պատիժ, իբրեւ մի անյիշաչար, բայց իր գործին նուիրուած մարդ, կանգնած է Դաւիթը, ասում է. ինչ կուզես արա՛ւ: Եւ բռնաւորը, որ խնայել չգիտէ, շտապում է ծածկուել հեռանալ, մանեւ քառասուն զառ հօրի մէջ, քառասուն ջրաղացքար, քառասուն «գրգա՛ծ» զոմշի կաշի գցել իր վրայ և այդպէս պատրաստուել Դաւիթի հարուածն ընդունելու:— Բռնաւոր այժմ բաւական հասկանալի չէ:

Դաւիթը գնում է իր հարուածը տալու: Բայց նրա առաջն է զուրս գալիս իր մայրը, յիշեցնում է, որ նրան ծիծ է տուել և խնդրում է, որ մի հարուածը իրան բախչէ: Ո՛ւր էր այդ մայրը, երբ Մարամիկը զոռողաբար զոչում էր թէ Դաւիթը հող էր և հող դարձաւ. ինչո՞ւ այն ժամանակ չէր գնում, չէր աղաչում իր ամուսնուն, որ խնայէ իր նորաբողոք հերոսին: Ի հարկէ, նա անտարբեր էր այդ դէպքում: Եւ այժմ միայն, երբ բռնութիւնը պիտի պատժուի, նա, մայրը, խնդրում է խնայել բռնութիւնը. իր կաթն է յիշեցնում, իր մայրական քրնքշուքիւնն է գին հանում, որպէս զի բռնութեան հրէշը ապրէ իր համար: Եւ որդին այնքան ապերախտ չէ, որ ուրանայ մօր ծիծը, ժողովրդի հասկացողութեամբ այդ էլ մի մեծ առաքինութիւն է. մօր ծիծը սբբութիւն է, ուստի Դաւիթը համաձայնում է, առաջին անգամ չի զարկում: Երկրորդ անգամ Մարամիկի քոյրն է գալիս,

խնայրում: Դու մանուկ էիր, տաում է, ես քեզ շաղակում էի, ման ածում: այս անգամն էլ ինձ բախշիր: Ի՛նչպիսի հաւասարիմ մարդիկ ունի բռնաւորը: Դաւիթն այդ անգամն էլ Մարամելքի քրոջը բախշեց: Երեք բան մնաց նրա աչքի տուաջ. մէկ Աստուած, մէկ ինքը և մէկ էլ վերջին հարուածը: Մարամելքի քոյրը էլի գալիս է խընդրում, որ այդ վերջին հարուածն թողնէ: Դաւիթը այլ ևս աշխարհի վրայ ոչ ոքին «խաթը» անել չի կարող: Եթէ իմանար թէ բռնաւորը այնպէս միշտ կըմնար երկրի տակ, քառասուն ջրաղաց, քարի, քառասուն «լբլած» կաշու տակ, գուցէ այդ անգամն էլ չզարկէր: Բայց բռնակալ ոյժը հէնց այդպիսի տեղերից է ծնվում, զուրս գալիս, գործում: Եւ մօտենում է Դաւիթը—այս անգամ կատարեալ մարդ է դառել—Աստուծու և «խաչ-պատարազին»-ի անունը յիշում է, զարկում իր գուրգը, որ կտրում, անցնում է բռնաւորի բոլոր յոյսերն ու նեցուկները, կըտրում է նրա գլուխը: Ազատարար հարուածի ոյժը այն սասիճան սաստիկ էր, որ Մարամելքի գլուխը դեռ մարմնի վրայ է մնում և նա խօսում է, բայց երբ. թափահարում է ինքզինքը, մարմինը երկու կէս է դառնում:



Դործը կատարուեց, վերջացաւ: Դաւիթը կատարեց իր դերը, նրա չափազանց ոյժը գտաւ գործադրութեան ուղիղ ճանապարհ: Այժմ նա պիտի իր առանձին ընտանիքը կազմէ: Ձենով-Յովանը նրա համար ուղւում է Ձմուց-կիկ-Սուլթանին: Բայց գալիս են մարդիկ, գովում են Խանդուծ-Խաթունի գեղեցկութիւնը: Երգը նկարագրում է նրա սպիտակութիւնը, փափկութիւնը, յօնքերը, աչքերը, ճակատի լայնութիւնը: Երգը դիւթում է հսկայի սիրտը, այդ գեղեցիկ երգը, որ թէև անարուեստ է, բայց

Հովուական պարզութեամբ զրաւիչ է: Բանաստեղծը միայն յաղթում է ամեն մի հսկային, այդ նոր լսուած բան չէ: Դաւիթը յայտնում է, որ Ձմուշկիկ-Սուլթանին չի ուզում և գնում է որոնելու այն գեղեցկութիւնը, որ աշխարհի երեսին երգի մէջ է մտել:

Խանդութ-Խաթունի երկրպագութեան են հկել 40 փահլէւաններ, բայց նրանցից ոչ մէկը չի կարողանում տիրանալ այդ գեղեցկութեան: Խանդութ-Խաթունը նոյնպէս մի հսկայական անձնաւորութիւն է. նրա քաղաքը ապահով է, որովհետեւ պահպանն է համբօլը: Սյդ զրունապանը վէպի մէջ ունի խիստ որոշ կերպարանք. դա մի անաչառ ծառայ է, իր դործին անձնատուր. ոչ ոքին իր կեանքում բարեւ չի տուել, հսկել է, պահպանել, բարեկամութիւն, ծանօթութիւն չձանաչելով: Սյդ խիստ, անաստան պահապանին տեսնելով, Դաւիթը վախում է, վախից բարեւ է տալիս, թէև իր կեանքում դեռ ոչ ոքին բարեւ չէր տուել: Երեւակայեցէք թէ ինչ կրկնի այդ համբօլը, որ Դաւիթն է վախում նրանից: Սակայն ինքը, համբօլն էլ վախել իմացել է. լսելով Դաւթի բարեւը, նա վախելուց ընդունում է նրա բարեւը, թէև իր կեանքում երբեք մէկից բարեւ չէր ընդունած: Սյդ արդէն մի նշան է, որ Դաւիթը յաջողութիւն պիտի ունենայ գեղեցիկ աղջկայ մօտ: Եւ իրաւ, աղջիկը Դաւթին տեսնելուն պէս՝ խնձոր է զարկում նրան:

Սիրային պատմութիւնը յաջողութեամբ առաջ է գնում: 40 փահլէւանները, ի հարկէ, նախանձվում են և ծաղրում Դաւթին. բայց սա նրանց բոլորին հարբեցնում է, քնով անում, վերցնում է նրանց սրերը, կոտորում, իր ձիու համոր պայտ ու մեխ շինել տալու համար: Յաղթուած սիրտը ընդունում է իր յաղթողին. Խանդութ-Խանումը թոյլ է տալիս Դաւթին իր մօտ քնելու մինչև անպամ առաւօտեան ջուր է տնջում հերոսի ձեռ,

քերին: Հերոսը կուրանում է, սիրոյ այդքան խոնարհութիւնից, այդքան փաղաքշանքից և դրկում է Խանդութ-Խանումին, ուզում է նրան համբուրել, մոռանալով որ դեռ այդ աղջկայ հետ ոչինչ կապ չունի: Եւ այդ յափըշտակութիւնը, այդ սխալը պատժվում է մի փառաւոր ապտակով, որ տալիս է նրան Խանդութ-Խանումը: Առաջին անգամ ստանալ ապտակ և այն ունից: Դաւիթը, մի այնպիսի անյաղթ, ուժեղ հերոսը, որ կամքի յոժով, անվախութեամբ այնպիսի մեծ զործ էր կատարել, այդպէս հեշտ յաղթվում է սէրի առաջ: Դաւիթը չի պատասխանում այդ ապտակին, այլ անզօր ու յաղթուած սրտով դառնում է դէպի Աստուած, խնդրում է որ Խանդութ-Խանումի քաղաքը այդ զիշեր պաշարեն անթիւ թշնամիներ: Մեծ վեշտ էր նրա համար այդ ապտակը, սաստիկ վիրաւորանք. այդ կարող էք իմանալ նրանից թէ ինչպիսի մեծ պատիժ է նա խնդրում Աստուծուց:

Նրա խնդիրքը կատարվում է: Միւսը օրը քաղաքը շրջապատվում է անթիւ բանակներով. ահա մի միջոց, որով Դաւիթը կարող է իր յոժը ցոյց տալ Խանդութ-Խանումին: Նա գնում է, սկսում է կոտորել թշնամիներին: Բայց ինչո՞ւ է կոտորվում այդ բաղմոնթիւնը, ինչո՞ւ են մեղաւոր այդ զօրքերը, որ Դաւիթն է բերել այդ քաղաքի շուրջը: Իր կարողութիւնը, իր հերոսական քաջութիւնը մի կնոջ ցոյց տալու համար կոտորել այդքան բաղմոնթիւնը... անմիտ մարդասպանութիւն, սոսկալի ոճրագործութիւն: Դաւիթն ընկաւ...

Քաղաքը պաշարողները մարդ են զրկում Սասմայ քաղաքը, մի փահլէւան են կանչում, որ գայ, կռուի Դաւիթի հետ: Դալիս է Դաւիթի հօրեղբօր որդին, Յուսն-Վէրգոյի տղան, Պարոն-Աստղիկը: Պատմութիւնն այնպէս է տարած, որ ոչ Ձէնով-Յովանը, ոչ Յուսն-Վէրգոն չեն իմա-

նում թէ՛ ով է այն մարդը, որի հետ պիտի կռուի Պարոն-Աստղիկը: Հրեղէն ձին հեծած, հաւունի թուրը կապած, գալիս է Պարոն-Աստղիկը պատերազմ: Դաւիթը նրան ճանաչում է՝ և յետ է կանգնում, յայտնում է Խանդուբ-Խանումին, թէ ինքն այլ ևս կռուել չի կարող: «Որ տիւ չես ամաչի, ես կերթամ կռիւ», պատասխանում է աղջիկը: Դժուար գրութիւն է Դաւթի համար. բայց դարձեալ սէրն է յաղթում և նա գնում է կռիւ, խօսք առնելով Խանդուբից որ սա տանից դուրս չի գալ, դուռ ու երդիկ չի բանալ, չի տեսնիլ թէ ինչ կայ: Պարոն-Աստղիկը չի ճանաչում Դաւթին, սա էլ չի ուզում յայտնել իրան և չի ուզում կռուել. Պարոն-Աստղիկը թրուշում է օդի մէջ, կրակ է թափում վերեւից. Խանդուբ-Խանումը այդ կրակը տեսնելով, իր խոստման հակառակ, իբրեւ հետաքրքիր կնիկ, դուրս է գալիս նայում է թէ ով է այդ և ի՞նչ բան է: Եւ տեսնում է որ Դաւիթը մնացել է անշարժ, մինչդեռ նրա վրայ կրակ է թափվում: Նա մի երգով ողջունում է Պարոն-Աստղիկին, յայտնում է որ այդպէս կրակ թափելով նա աւերում է իր, Խանդուբ-Խանումի տունը: Նա ուզում է յայտնել թէ Դաւիթը յաղթվում է և յաղթուելով պիտի իր սիրած աղջկան անտանելի ցաւ պատճառէ: Դաւիթը լսում է այդ երգը և շտապում է կատարել մի ուրիշ, աւելի սարսափիկ եղեռնադորձութիւն. նիզակով տալիս է, սպանում Պարոն-Աստղիկին: Սէրը Դաւթին այս գրութեանն էլ է հասցնում: Սպանուած աղգականը ընկնում է նրա մօտ և նա ինքն իրան մոռացած՝ հարցնում է նրանից թէ դու ով ես, կարծես նոր էր նրան ճանաչում: Եղեռնադորձութեան մի յատկութիւնն էլ հէնց այն է, որ եղեռն դորձողը առաջին րոպէում կորցնում է իրան, մոռանում է տեղն ու հանգամանքը և, երեւի սրտին քիչ հանգստութիւն տալու համար, ծիծաղելի բաներ է խօսում: Եւ

յետոյ, երբ նրա սպանած ազգականը իր ձեռքերի վրայ փշում է վերջին շունչը, նա ուշաթափվում է: Դաւիթը ուշաթափ... Տեսէք որքան մեծ հոգեկան յուզմունքներ են եղել նրա մէջ, որքան նա տանջուել է մի կարճ միջոցում:

Խանդութ-Խանումը տղամարդու չոր հագած՝ գնում է Դաւիթի դիակը գտնելու: Դաւիթը իր շարերը փոխած՝ դալիս, հանդիպում է նրան և ասում է. «Քո ուզած մարդուն ես սպանել եմ»: Խանդութ-Խանումը հրաւիրում է նրան կռուել. բայց դեռ կռիւը չսկսած յայտնում է որ ինքը կռուող չէ, կին է: Ես գիտեմ, որ դու կին ես, ասում է Դաւիթը, այն օրը խփեցիր ինձ, արիւն եկաւ քթիցս: Ի՜նչպիսի խոնարհ, անմեղ խոստովանութիւն: Երկու սրտերը ճանաչում են միմեանց և պղպիսի մի խորհրդաւոր տեղ, պատերազմի գաշտում, նրանք միանում են, մարդ ու կին դառնում:

Սիրային պատմութիւնը վերջացաւ: Մենք տեսնք, որ այդ պատմութիւնը թէև Դաւիթի հերոսական վէպի անընդհատ շարունակութիւնն է, բայց այնքան ոգևորիչ չէ, չունի իր մէջ իդէալական մոթեր: Սյգքան թոյլ բան է սէրը մեր ժողովրդի հասկացողութեամբ: Գուցէ Դաւիթի վէպը ունի մի զլխաւոր իդէա—հերոսական՝ հայրենասիրութեան և ազատարար յոյժի իդէա. գուցէ սէրը ուրիշ հրաշալի զէմք ունի մի ուրիշ տեսակ ժողովրդական վէպի մէջ, բայց մեր առջև դրած սէրը միանգամայն թոյլ է, ունի միանգամայն բացասական բնութորութիւն: Դաւիթը սիրեց, բայց սէրը տեսնք ինչեր անել տուան նրան—Ձուր տեղից այնքան մարդ կոտորեց, իր ազգակից նին այնպէս տմարգի կերպով սպանեց: Թուլացել է նրա հոգին, հեռացել է նրանից այն միտքը, այն դադափտոր, որ Մարամլիքի առաջ այնքան հրաշալի պատկեր էր տուել նրան: Սէրը կսամոլ է, սէրը լուծող, քանկող է,

կլանում է մարդուն, այսպէս է տառւմ ժողովուրդը: Դա-
ւիթն այժմ մի հասարակ հսկայ է, մի անորոշ դիւցազն:
Սէրը պատրաստել է նրա առաջ մի խորխորատ, որի մէջ
պիտի խորտակուի նա:

Ահա նա իր կնոջ հետ գնում է Սասմայ քաղաք:
Նրա առաջն է դուրս գալիս Չմուցիկիկ-Սուլթանը, նրա
նախկին հարսնացուն, բաւականութիւն է պահանջում:
Դու, տսում է, ինձ էիր ուզում, միթէ ես բաւական դե-
ղեցիկ չէի, որ ինձ թողեցիր ու Խանդուլ-Խանումին ու-
ղեցիր: Սյժմ արի՛ կռուենք, կամ ես քեզ կըսպանեմ և
այն ժամանակ ես ու Խանդուլ-Խանումը կըմնանք որդե-
կայրի, կամ թէ չէ՝ դու ինձ կըսպանես և կըգնաս, կըքնես
Խանդուլ-Խանումի հետ:

Չմուցիկիկ-Սուլթանը վռէժխնդիր կնոջ փայլուն պատ-
կերն է. նրա վարմունքը հերոսական է, նա չի ուզում
տանել անպատուութիւնը, նա իրաւունք է պահանջում:
Եւ երբ նա տսում է թէ Դաւիթն սպանելով ինքն էլ,
Խանդուլ-Խանումին էլ որբեւայրի կըմնան, նշանակում
է, որ նա ինքն էլ իր վիճակը կապել է Դաւիթի հետ,
նա ինքն էլ ունի սիրտ, ցնորքներով, ցանկութիւններով
լիքը սիրտ, որ վերաւորուած է՝ խաբուած լինելով:

Դաւիթը լսում է այդ համարձակ առաջարկութիւնը.
և ահա՛ք որքան է նա ընկել, որ աստիճան նա ստորա-
ցել է: Կայ արդեօք առաջուայ և այժմեան Դաւիթի մէջ
նմանութիւն: Առաջուանին տեսանք, իսկ այժմեանը լսե-
ցէք, ժամանակ է խնդրում այդ կնոջից, մի հասարակ
պարտականութիւն կատարելը այժմ դժուար է, նա այժմ
կնիկ ունի: Խնդրում է որ թոյլ տան իրան կնոջը Սաս-
մայ քաղաքը տանել, խոստանում է յետոյ գալ և կռիւն
անել: Ո՛չ, Դաւիթը ստորացել է, մոռացել է իրան:
Ճշմարիտ է, այդ բոլոր դործողութիւններով նա ցոյց է
տալիս թէ որքան վառ սէր ունի, որքան մեծ, յաղթա-

Հարող բան է այդ սէրը, բայց այդ մեծութիւնը, ջերմութիւնը ցոյց է արվում մի շատ յուսահատ գրութեամբ, միւս գեղեցիկ յատկութիւնների կատարեալ ոչնչացմամբ: Սէրը տառջ է գալիս իբրեւ մի հրաշագեղ փափուկ բան, որի առաջ հալվում է մեր Դաւթի գեղեցիկ բնաւորութիւնը. նա եղակի տիպից, իզէպից զուրս է գալիս, մի րնջանուր, հասարակ երեղթ դառնում: Իր կեանքում Դաւթը երկու անգամ է բացարձակապէս «խաչ-պատարագին» օգնութեան դիմում: Մի անգամ օգնութիւնն էր խնդրում խաւար ոյժի հետ կռուող անժախ զինուորը, որ զանվում էր օրհասական տագնապի մէջ, խոր անդունդում, մի այնպիսի վճռական ընդհանում, երբ բռնութիւնը էլի պիտի իր շղթաները տարածէր աշխարհի վրայ. և սրբութեան օգնութեամբ բարձրանում է ընկած զրութիւնից, նորից կեանք, կարողութիւն է ստանում, կատարվում է այն գործը, որի համար երկինք ու երկիր ուրախ էին: Երկրորդ անգամ նա դիմում է այդ գերահրաշ զօրութեանը իբրեւ սիրով շղթայուած մի մարդ, որ մի կնոջից, Զմուցկիկ-Սուլթանից ժամանակ խնդրելու աստիճանին է հասել: Դիմում է և ընկնում, ստորանում է: Խնդրած ժամանակը ստանում է, գնում Ստամպ քաղաք: «Ինչ Խանդութ-Խանմոջ ծոց պառկաւ, խաչ-պատարագին, որ յէրգում արիւր, մոռացաւ, գնաց ութ տարի»: Թուլացած, երգմնազանց հերոս, սիրոյ իսկական նահատակ:

Զմուցկիկ-Սուլթանի և Խանդութ-Խանումի մէջ ժողովուրդն ի՞նչ զանազանութիւն է գնում: Դաւթը առաջինի վրայ չէր սիրահարուել, թէև նշանուելու խօսք էր տուել. երկրորդին սիրել էր այնքան սաստիկ, որ իր բնաւորութիւնն անգամ փոխել էր և մի քանի ոճիրներ գործել: Եւ ի՞նչ, նրա ցաւալի կորստեան պատճառը Զմուցկիկ-Սուլթանն է, այն կինը, որի սրտի հետ այնքան

կոպիտ խաղ էր խաղացել Դաւիթը: Խօսքը առաջինն էր. նրա կողմն էր իրաւունքը: Իսկ սէրը, կ'ասէք զուգ, չէ՞ որ սէրն էլ իր իրաւունքը ունի: Այո՛, ճիշտ է, բայց սէրը այս հանգամանքում իրաւունքի չափ զօրութիւն չունի: Սա մեր ժողովրդի դարաւոր իմաստութիւններից մէկն է: Սէրը մի անկախ զրութիւն, ուրիշ հանգամանքների վրայ իշխող բնաւորութիւն չպիտի ունենայ. սէրը պիտի հնազանդուի այս ու այն պատահական հաշուին, պիտի զոհուի հասարակական կարգ ու կանոնին, այնպիսի բաների, ինչպէս են ծնողական իրաւունք, երախտիք, տեղի ու ժամանակի հանգամանք: Մեր ժողովրդի ստեղծած նրդերը չեն մեծարում սէրը իբրեւ մի զեղեցիկ ոյժ, որ ոգևորում է մարդուն, մի քիչ զոնէ բարձրացնում է հասարակ մարդկանց դասից. ընդհակառակն, սէրը մնում է իբրեւ մի անհատի ծածուկ զգացմունք, որ արտայայտվում է կսկիծներով, մտչեցնող զոյներով. սիրահարը սիրոյ առարկայի առաջ փչրուած սարուկ է, որ զիտէ միայն հառաչել, ողբալ: Աւելի առաջ գնալով տեսնում ենք որ սէրը, ժողովրդի հասկացողութեամբ, նոյն իսկ լուծող, փշայնող բան է, որ խլում է մարդուց նրա բոլոր զեղեցիկ յատկութիւնները և մի ամենափայլուն զրութիւնից ցած է զլորում, ոչնչացնում: Բարոյական պարտք է ամեն մէկի համար ամուսին ընտրելիս խիստ զգոյշ լինել. մէկին ուզելը և յետ դառնալն, ուրիշին ուզելը շատ վատ բան է համարվում, նոյն իսկ եթէ մէջ տեղ լինին շատ յարգելի պատճառներ: Տգեղութիւնը, անձնական արատն անգամ, որ յայտնում է խօսք տալուց յետոյ, ժողովրդի հասկացողութեամբ, յետ դառնալու իրաւունք չի տալիս:

XXI.

Այդպիսի մի թմրած, ընկած զրութեան մէջ, այդ ուխտագնացութեան ժամանակ ծնվում է վառ սիրոյ պրտուղը, որին Մհեր անունն են տալիս: Ի՞նչ կրլինի նա, այդ պտուղը:

Մհերը ժառանգել է իր հօր ու մօր անձնական ահագին ոյժը. և այդ միայն: Իսկ միակ ոյժ և չափազանց ոյժ ժառանգողը թէ ինչ է—այդ ժողովուրդը ցոյց է տալիս Մհերի պատմութեամբ:

Մհերը հէնց առաջին օրից երևում է իբրև չոր պատուհաս, պատիժ: Բարի, անմեա, փրկարար ոյժը թմրել է, իր հաշիւները վերջացրել.—այդ Դաւիթն է. նրանից ծնուել է փնասակար ոյժը, մթին, դժոխային զօրութիւնը,—այդ էլ Մհերն է: Հայրը հասարակաց հանգստութեան, փրկութեան գործում ցոյց տուաւ իր պատկերի ամենազեղեցիկ, փայլուն կողմը. որդին, բոլորովին հակառակ հասարակաց հանգստութեան, չարչարանքի գործում է ցոյց տալիս իր կարողութիւնը: Նա դեռ երկիւյս է, խաղում է երեխաների հետ: Եւ ի՞նչ Բարտի ծառը պոկում է, իր խաղակիցներին նստացնում այդ ծառի վրայ, այնպէս է շարժում ծառը, որ ամեն մի երեխայ քաղաքի մի թաղն է ընկնում: Նա Սասմայ գետի վրայ կամուրջ է շինում: Մարդիկ գնում են այդ կամրջի վրայով, բայց Մհերը նրանց ծեծում է, ստում: «Ես կարմունջ կապիր իմ, ձի խամար իմ կապի, ինչի՞ վար իմ կարմնջին ի կերթէք»: Եւ մարդիկ հալածուած թողնում են կամուրջը, գետովն են անցնում: Մհերը էլի ծեծում է նրանց. «Ես կարմունջ կապիր իմ, ձի համար իմ կապի, դիւք ինչու կրտէք ջրան, ջիւր գձե տանի, մեղք ինձի իմ վիզ»: Արի ու հասկացիր չարութեան միտքը. ո՞ր ջուրն ընկնեն քաղաքացիք: Մհերը լաւութեան կամ վատու-

Թեան մասին մի և նոյն կարծիքն ունի, նրա համար մի և նոյն է թէ որտեղով կանցնեն մարդիկ—կամուրջով թէ գետով: Եւ կամուրջը չի շինել յարմարութեան համար, այլ դա մարդկանց աանջելու մի պատրուակ է: Նրան հարկաւոր է չարչարել մարդկանց. և այդ դժոխային նպատակի համար նա մեղքի մասին մտածող էլ է ձեանում, ասում է թէ չի ուզում որ մարդիկ կոտորուին ու մեղքն իր վեցն ընկնէ:

Մարդիկ բողոքում են ասնջանքի պէմ, գանդատվում են Դաւթի մօտ: Դաւիթը ուզում է խրատել, ծեծում է որդուն: Բարձրանում է անհնազանդութիւնը, բռի ոյժ է առաջ բերում. նա՝ ընդդիմանում է հարազատ հօրը, կուում է նրա հետ: Ինչպէս երկու սար կրգնան, կրգան, միմեանց կըզարնուեն, ասում է վէպը, այնպէս էլ հայր ու որդի են զարնվում: Սոսկալի՜ տեսարան: Մի տանից, մի օջախից են դուրս եկել այդ երկու ոյժերը և միմեանց հակառակուած՝ այգպիսի հսկայական մարտ են մղում միմեանց պէմ: Դուրս է գալիս Խանդութ-Խանումը, տեսնում է այդ տեսարանը և կանչում է Դաւթին, ասում որ չզարնէ իր միռնար երեխային: Դաւիթը հայր է, ունի պութ, բարի է. նա պատրաստ է չզարնել, յետ դառնալ, բայց հարկադրուած է պաշտպանուել իր որդու հարուածներից: Խանդութ-Խանումը դառնում է Մհերին, յորդորում է, որ չզարնէ «Թուխ-մորուս Դաւթին»: Մօլ խնդիրքն էլ զուր է անցնում. այդ չար որդին ոչ դքի չի լսում և մարանչում է կատաղաբար: Ո՞վ պիտի մօտենայ նրանց, ո՞վ պիտի բան հասկայնէ: Մօլ խնդիրքով երկնքից իջնում է Գարբիէլ հրեշտակը, հեռացնում է սղան հօրից:

Այն ժամանակ Դաւիթը անիծում է չար սղային և ասում. «Մհեր, որ դիւ կուի հետ ձի երեցիր, ձի ամանց-ցրիր մընչ խալիին, կանչիր իմ քաղցրիկ Ասուած, քեռ

մօտէն ժառանգ չընկնի դիւրս, քե մահ չընի չեւ Բրիտոս դեպ դատաստան»։ Հայրական անէծքը լսվում է Աստուծու առաջ. Գաբրիէլ հրեշտակը հանում է Մհերի մէջքի երակը և նա դատապարտվում է յաւիտեան կենդանի մնալ. անմահութիւնն էլ սոսկալի պատիժ է մի մահկանացուի համար։ Այսպէս Մհերի բոլոր վատ յատկութիւնների վրայ աւելացաւ հօր անէծքը։

Այդ անէծքից յետոյ է Դաւիթը տեսնում որ իր աջ թևի վրայ դրած «խաչ-պատարազին» սևացել է և սոսկալով յիշում է որ Զմուցկիկ-Սուլթանին խօսք է տուել։ Նա պատմում է իր կնոջը, ասում է որ Մհերի հարուածները չէին իրան դիպչում, այլ «խաչ-պատարազին»-ի հարուածները։ Եւ գնում է իր խոստումը կատարելու։ Ութ տարուց յետոյ պիտի կատարէ այն, ինչ պարտաւոր էր ութ օրից յետոյ անել։ Ո՛ւշ է։ Դաւիթն այսուհետեւ ոչինչ է, այսուհետեւ էլ պէտքական չէ։ Գնում է և սպանվում այն կնոջից, որ վրէժ էր պահել։ Սէրը պատժվում է սարսափելի կերպով։ Խանդութ-Խանումը ամուսնու մահը լսելով ինքն իրան թունաւորում է, սպանում։

XIII.

Մենակ է Մհերը։ Զենով-Յովանը հալածում է նրան քաղաքից։ «Մհեր, կոնդ իս, խեռ քեռ խէր կռիւ արիր, իլի գնա մեր քաղքէն, մը դադրի մեր քաղաք»։ Հալածվում է բռի, անհոգի ոյժը։ Ո՛ւր գնայ։ Նրա հայրն էլ մի ժամանակ չգիտէր թէ ինչ անէ։ Բայց նա այսպիսի յուսահատ դրութեան մէջ չի եղել. նա բամբասանքի մի անմեղ զոհ էր, իսկ սա, Մհերը, տեղ չունի մարդկային հոսարանութեան մէջ. սրան համբերել չեն կարողանում և հալածում են։ Եւ հալածականը գնում է իր ծնողնե-

րից խորհուրդ հարցնելու: Լաց լինելով հարցնում է նրանց թե ի՞նչ անէ, ուր գնաց: Հայրն ու մայրը գերեզմանից խորհուրդ են տալիս որ հալէք գնաց: Եւ նա գրնում է:

Նրան պատահում է մի պառաւ մաճնոտ շերեփը ձեռքին բռնած: Պառաւն ասում է թէ Դաւիթն սպանել է իր եօթն որդիներին, հիմա նա լսել է Դաւթի մահը, դնում է որ այդ շերեփով Մհերի գլխին գարնէ: Զաւակասէր պառաւը, ի հարկէ, խելքից ընկած է. գոնցէ անտանի ի կսկիծն է նրա ձեռքին դրել մի այնպիսի թշուառ զէնք, որպիսին է մաճնի շերեփը և դուրս է բերել տանից վրէժ հանելու մի այդպիսի անկարող միջոցով: Մի ուրիշը կըխղձար նրան. բայց Մհերը բռնում է միամիտ պառաւին, ձգում է, երկու կտոր անում, անցնում:

Յետոյ նրա առաջն է գալիս մի հրէշաւոր պառաւ, որի ծծերը շան ծծերի պէս են, այնքան երկայն, որ ուտոյն է պցել: Մհերը նրան տեսնելով, վախենում է. մտածում է որ լաւ կըլինի եթէ զաղաազողի յարձակուի, սպանէ նրան: Եւ յանկարծակի վրայ է ընկնում, բռնում է այդ անձոռնի ծծերը, որոնցից «արիւն, արիւնջուր» է թափվում: Զգուելի՛ տեսարան: Այդ ի՞նչ ոյժ է, ինչ հսկայութիւն, որ այսպիսի վատ տեսարանների մէջ է ելեւում: Պառաւը խոսանում է իր աղջկ Գոհար-Խաթունը Մհերին տալ և զրանով միայն ազատվում է հսկայի արիւն և շարաւ դուրս ածող ձեռքերից:

Հալաբայ. թաղաւորը Գոհար-Խաթունին կին առնել է ուզում, բայց չի կարողանում, ուստի անդադար կռիւներ է մղում այդ աղջկայ հետ: Մհերը գնում է հալէք, մի տէրտէրի մշակն է դառնում: Այստեղ հօր ու որդու վիճակները միանման են. Դաւիթն էլ մի ժամանակ հովիւ էր, չունէր տուն ու տեղ: Բայց հայրը միամիտն էր, անփնտր, իսկ Մհերը երբ լսում է որ նորից պատերազմ

կայ Գոհար-Խաթունի հետ, վերցնում է մի անթարոյց, կռիւ գնում: Տեսնում է մի ձիաւոր և ասում է. «Ես Մհեր ընխիմ ձի չունիմ և զարկում է, ձիաւորին սպանում, ձին խլում: Գոռոզ, մեծամիտ է Մհերը, գիտէ, որ ինքը Մհերն է, գիտէ որ ուժեղն է և պիտի այդ յոժով հարստահարէ ուրիշին: Գողութիւն անել, ուրիշն սեփականութիւնը խզել, իրաւունքը ոտի տակ ձգել — այդ, ի հարկէ, կարող է դուրս գալ Մհերի պէս մի կռպիտ, խաւար յոժից: Նա պատերազմ է դնում, նա ուրեմն, այն բանակիցն է, որի հետ դուրս է եկել դաշտ: Բայց թողնում է իր ընկերներին, անցնում է հակառակ կողմը, Գոհար-Խաթունի մօտ և մի ամբողջ գիշեր քէֆ է անում նրա հետ: Հարկաւոր էր որ Մհերը խարդախ, ցած, նենգ բռնաւոր, զղուեղի մասնիչ էլ դառնայ և դառնում է: Գոհար-Խաթունը նրան ուղարկում է թագաւորի մօտ, ասում որ մինչև որ հալէք քաղաքի այն բոլոր բնակիչները, որ դպալ վերցնել են կարող, չգան իր մօտ, նա չի համաձայնիլ թագաւորի կինը լինիլ: Թագաւորը հրամայում է, բոլոր ժողովուրդը դուրս է թափվում քաղաքից: Մհերն ընկնում է ամենքի ետքը, սկսում է կոտորել, Գոհար-Խաթունն էլ առջևից է կոտորում և այդպէս ղնալով միմեանց պատահում են, ասել է թէ բնաջինջ են անում ամբողջ ժողովուրդը: Խորամանկութիւն, աւաղակային անապնդութիւն, խաբեբայութիւն, այս բոլորը գործ են դրվում, որպէս զի Մհերը Գոհարի տէրը դառնայ: Բայց այդպէս էր Դաւիթը: Յիշեցէք նրա պատերազմը Մարամեղիքի հետ, յիշեցէք նա ինչպէս էր կանչում սարի զլխից. «Վով քնիր էք, յարթուն կացէք, վով յարթուն էք, ելէք կայնեցէք, վով կայներ էք, ձի ճակիր կապեցէք»: Այնտեղ Դաւիթը մի փառաւոր աստղ է, մի ազնիւ, սրտաբաց ասպետ. իսկ այստեղ Մհերը մի դարսնամուտ զազան է, մի սևերես մարդ, որ իսկ և իսկ

արժանի էր շան ծծերի տէր մի պառաւի փեսայ լինելու, որ մի խաթունի սիրտն էր առել այդ դարշելի ծծերից արիւն, արիւնջուր քամելով:

Քառասուն տարի ասլոյց Մհերը Գոհար-Խաթունի հետ: Ո՞վ կարող էր պատմել թէ այդ քան ժամանակ ինչեր արաւ նա: Քառասուն տարուց յետոյ մեռնում է Գոհարը, Մհերը մենակ է մնում: Այդ պատիժը, այդ անմահ պատուհասը ինչպէս կրպահուէր, եթէ շարունակ մնար մի և նոյն դրութեան մէջ: Բայց նա մի և նոյնը չի մնում, նա շղթայվում է: Սակայն ո՞վ կարող է Մհերի համար շղթաներ կռել-կոփել, եթէ ոչ ինքը: Նրա ներքինը, նրա ամբողջ ահաւոր կարողութիւնը, այդ զօրութիւնը որ տուած էր նրան չարութեան, միայն չարութեան համար, հաւաքվում է, ծանրանում նրա սեփական մարմնի վրայ: Ինքն իրան կապում է, կաշկանդում է ճողը չի թողում նրան հանգիստ քայլել. խոնարհվում է նրա ոտների տակ մինչև այն աստիճան, որ այդ խոնարհութիւնը անտանելի է դառնում հսկայի համար: Նրա ոտները խրվում են հողի մէջ, նա շարժուել չի կարողանում և այդպէս աղատ, սուանց որ և է կապանքի շղթայուած է մնում: Բռնութիւնը, չարութիւնը մինչև այս աստիճան զլուխ բարձրացնել է կարող, այսքան ահռելի կերպարանք կարող է ստանալ, քանի որ չորս կողմում ոչ մի արգելք չկայ, քանի որ նա մեծացել է, բարձրացել չորս կողմը ոտնահարելով, ճմլելով: Բայց վերջը: Չկայ աշխարհիս վրայ ծայրահեղ կարողութիւն, չափ ու սահման անցնող բռնութեան, այս է ասում ժողովրդի խմաստութիւնը: Եթէ սոսկալի կերպով աճող աւերիչ ոյժի առաջ չի էլ լինում արգելք, ընդդիմադրութիւն, այդ չի նշանակում թէ նա, այդ ոյժը, պիտի համսէ իր բարձրութեան դազաթնակէտին. ոչ, այդ ոյժը ինքն իրան կըխորտակէ:

Մհերը սրտի է գնում, որսորդները բռնում են նրան,

գցում են խոր հորի մէջ: Մի պառնաւ տանում է իր աղջիկը նոյն հորը գցում, որ Մհերից մի փահլէւան ծնուի: Յիմար պառաւ. նա չգիտէ թէ ինչ պտուղ է ուզում, չգիտէ որ Մհերի ոյժից ոչ ոք օգուտ չի տեսնել: Մհերը սպանում է այդ աղջկան, նրա մէջքից կապած պարանը իր մէջքին է կապում և կանչում. «Մարէ՛, ձի քաշի՛ դիւրս»: Ուրախացած պառաւը քաշում է, հաճութեամբ գցում է որ իր աղջիկը ծանրացել է, բայց երբ տեսնում է, որ իր աղջիկը չէ՛ դուրս եկողը, այլ Մհերն է, ուզում է կրկին ներս գլորել: Մհերը բռնում է, պառաւին էլ սպանում: Ու դնում է, մի մարդու ձին է խլում, հեծնում: Բայց կապանքը կապանք է. ձիու ոտներն էլ խրվում են հողի մէջ: Անճարայած Մհերը Խլաթայ այրն է քաշվում, քսան տարի աղօթք անում, որ իրան հրաման լինի Վանայ այրը դնալու: Խնդիրքը կատարվում է, այժմ էլ Մհերը բանտարկուած է Վանայ այրում մինչև Քրիստոսի գալուստը: Այսպէս չար ու անճոռնի ոյժը, վերջապէս, դադարում է մի մուլթ այրի մէջ, մի յաւիտենական վճռի աչք տնկած: Հայաստանի սարերում երկու այգափսի բանտարկուածներ կան, Արտաւազդը՝ Մասիսի վիհում, Մհերը Վանայ այրում: Երկուսն էլ մի ճակատագրի տէր, երկուսն էլ հայրական անէծքի սարսափելի ծանրութեան տակ. . .

Իր կործանիչ ոյժի յատկութեամբ Մհերը նման է պարսկական «Շահ-Նամէ»-ի Հերոս Ռուստէմին: Երկուսն էլ չէին կարողանում հողե վրայ ազատ շրջել, խրվում էին: Բայց մեր Մհերը Ռուստէմի պատճէնը չէ՝ հէնց այդ ոյժի չափազանցութիւնն է միայն երկուսի մէջ մի ազգակցութիւն դնում: Իսկ Հերոսները մի և նոյն չին: Ռուստէմը, ինչպէս յայտնի է, ժողովրդական համակրելի Հերոս է.

եթէ երկիրը նրա ոստերի տակ չի զիմանում, այդ պարզապէս նրանից է, որ Ռուստէմը չափազանց ուժեղ է: Այդ ոյժով նա բարի գործեր է կատարում. յաղթում, փշրում է հայրենիքի թշնամիներին և իրանի ու թուրանի դարաւոր թշնամութիւնների պատմութեան մէջ նրանով մարմնանում են ժողովրդի հայրենասիրական գաղափարները: Իսկ մեր Մհերը, ինչպէս տեսանք, անհարկաւոր ոյժ է, մարմնացած վատութիւն է, ոչ ոքին սիրելի չէ և ժողովրդի սիրած գաղափարներից ոչ մէկի արտադրութիւնը չէ: Հետեաբար մենք չենք կարող ասել թէ Մհերի վէպի կազմութեան վրայ ազդեցութիւն է արել Պարսից հռչակաւոր հերոսական պոէման. չենք կարող ասել թէ մեր այդ վէպի մէջ նկատելի է հետևողութիւն պարսկական մտքին ու գաղափարին, մի հետևողութիւն, որ այնպէս նկատելի է մեր ժողովրդական կեանքի բոլոր պարագաների մէջ: Ընդհակառակն, եթէ փորձենք Դաւիթն ու Մհերը միասին վերցրած համեմատել Ռուստէմի պատմութեան հետ, բոլորովին ուրիշ, ինքնուրոյն միտք կը ստանանք: Տեսէք երկու ոյժեր, Դաւիթ ու Մհեր: Դաւիթն անձնաւորութիւնը իդէալական է. նա բոլորովին որոշ և առանձնացած տիպ է, Մհերը բոլորովին ուրիշ տիպ: Մեր ժողովուրդը, ինձ այդպէս է երևում, աւելի խնամքով է նկարագրել բարի և չար ոյժը, քան պարսիկ ժողովուրդը: Ռուստէմը սիրելի հերոս է, բայց տեսէք Ռուստէմին. նա անողոք է, խորամանկ է, արիւնալիք: Նա երբ յաղթվում է իր որդուց, խորամանկութեամբ թողութիւն է աղաչում յաղթողից, ստանում է թողութիւն, ընկած տեղից վեր է կենում ու յետոյ սպանում այդ յաղթող երիտասարդին: Բարի և չար յատկութիւնները միաւորվում են նրա անձի մէջ: Բայց հայ ժողովուրդն այդպէս չի արել: Ազատութեան գաղափարը, անկասկած, մարդու ամենասուրբ, ամենաբարձր գաղափարն է և այդ-

պիսի գաղափարին կարող է ծառայել սուրբ, մաքուր, ազնիւ մարդը: «Մի որ յերեխայից, մի որ յապաշխարողաց, և մի որ յանմաքրից մերձեցի...»: Այդ բաւական չէ: Չար ղյժը անհաղորդ է այդպիսի մի գործին, արատաւոր է գաղափարի համար: Եւ ճշմարիտ, ի՞նչպէս կարող է նենգութիւնը, արնախում թշնամութիւնը, խաբէրայութիւնը մասն ունենալ մի այնպիսի գործում, որի նշանաբանն է եղբայրութիւն, իրաւունք: Բայց Ռուստէմն ունի այդ առաքինական դաղնփարը, բացասող յատկութիւնները. նա աւելի մի վարձկան պատերազմասէր է, իր ղյժի համար զոհ պահանջող է: Ո՛չ, այդ յատկութիւնները խաւար, անձոռնի ղյժին են պատկանում, մի ղյժի, որ ոչինչ պաշտպանելու, ոչինչ հասարակաշահ և մարդասէր նշանակութիւն չունի: Եւ այդպիսի մէկն է Մհերը, որին ահաանք, որ Դաւթի հակապատկերն է:

Իմ այս միտքը գուցէ շատերի համար ծիծաղելի, յանգուզն համարուի: Բայց մեր ժողովրդական դիւցազնական վէպը բովանդակութեան, մտքի կողմից ինձ այդքան բարձր, խնամքով ստեղծուած է երևում: Այդ վէպի մէջ ես ահանում եմ հայ ժողովրդի պատկերը, նրա տաժարով մտաւոր աշխարհը. հայի բնութեան յատուկ է այն դանդաղկոտութիւնը, այն երկար ու ձիգ փորձերը, որոնք Դաւթի գործունէութիւնն են փայլեցնում: Մի կրօնասէր, խաղաղ ժողովուրդ դարաւոր լուծի տակ խեղդուած՝ կարող էր այսպիսի գաղափար կազմել բարերար ղյժի մասին: Այդ ժողովուրդը փառ երեակայութեան ծնունդ չի տուել. դուք տեսնում էք թէ որքան անպաճոյճ, հասարակ ստեղծագործութիւն է նրա ինքնուրոյն վէպը. չկան կնճռոտ ինտրիգաներ, չկայ ոգևորութիւն հերոսի գեղեցիկ յատկութիւններով, բնութեան, գեղեցիկութեան տեսքով. ամեն ինչ պատմվում է մի զարմանալի սառնասրտութեամբ. ստեղծողի հոգին չի երևում, փաստերն են

միայն, որոնք խօսում են հրապարակում: Դաւիթն այն-
քան լաւ հերոս է—ժողովրդական բանաստեղծի բերանից
մի գովասանք չի դուրս գալիս դէպի նրան: Մհերը վատ
է, անհամակրելի—բանաստեղծը ոչ մի բանով չի գատա-
պարտում նրան: Ո՞ւր են մեր գեղարուեստական զրակա-
նութեան մէջ այնպիսի գործեր, որոնց մէջ չերևեր հե-
ղինակի անձնաւորութիւնը, նրա կարծիքն ու միտքը,
բայց ժողովուրդը մի վարմանալի անկողմնապահութիւն է
ցոյց տալիս իր ստեղծագործութեան մէջ, մի անտարբեր,
սառն նկարագրական ոճ ունի, որ օրինակելի պիտի հա-
մարուի մեր հեղինակների համար:

Ամեն ազգ ունի իր անցեալից մնացած մի գործ,
որով նա պարծենում է զրականութեան մէջ: Մենք էլ
ամենայն իրաւունքով կարող ենք պարծենալ այս նոր
դատած վէպով: Ճշմարիտ է, այդ վէպը շատ սեղմուած է,
չունի բանաստեղծական մեծ արժանիք. ճշմարիտ է, նա
պատմվում է մի այնպիսի համառօտ ոճով, որ Խորենա-
ցուն պատիւ կարող է բերել և պատմվում է շատերի
համար անհասկանալի մի դաւառական բարբառով, բայց
այդ ամենը պակասութիւն չպիտի համարենք, ի նկատի
առնելով վէպի ամբողջութիւնը, գեղեցիկ հիւստուածքը:
Մենք պէտք է հասկանանք որ ժողովուրդը իր բոլոր մանր
թէ մեծ ստեղծագործութիւնների մէջ շատ փորձուած
հեղինակ է, խօսում է բառերով, ամեն մի բառին միտք,
հասկացողութիւն հաղորդելով: Նա անհատ հեղինակ չէ,
որ չէ կարողանում պահել իր սրտի մէջ եռացող կիրքը,
յուսահատութիւնը, ուրախութիւնն ու վիշադը և դրանց
համար ծախում է նախադասութիւններ, ոլորուն ու ազ-
դող ոճեր: Ժողովուրդը սառն է, չյափշտակուող, իբրև
դանդաղաշարժ ժամանակը, որ անցնելով կուլ է տալիս
անհամար մանր երևոյթները և պահում է միայն ընդ-
հանուր ոգին, ընդհանուր հասկացողութիւնը մի ուր և է

չըջանի մասին:—«Դաւիթ և Մհեր»-ը մի պատուանդան է, որի վրայ կարող է բարձրանալ մի հրաշալի բանաստեղծական կոթող, եթէ Աստուած հայ բանաստեղծին հանձար տալու միտք ունենայ: Ֆիրդուսին անմահացրել է Ռուստէմին և Զոհրաբին, Շէքսպիրի անուան հետ չի մեռնիլ ժողովրդական աւանդութիւնը համէտ արքայորդու մասին և մեր Դաւիթը իր ներկայ անպաճոյճ ու անզարդ պարուրանքներից մի հրաշալի վերածնութիւն կըստանայ, եթէ, կրկնում ենք, հայ բանաստեղծի զրչին կըտրուի զօրութիւն յայտնել, մեծացնել, բարձրացնել իսկական զեղարուեստը:

Իսկ մինչև այդ ժամանակը բաւականանանք ժողովրդի բանաստեղծին լսելով, այն բանաստեղծին, որ ծածկուած է ցնցոտիներով, որ միշտ խեղճ է, մի անտաշ սաղի կամ ուրիշ նահապետական զործիքի ընկերացած: Այդպիսի բանաստեղծներից մէկն է Մոկացի Նահապետը, որ պատմել է պ. Աբեղեանին Դաւիթի և Մհերի վէպը: Նրան բանաստեղծ անունը տալու իրաւունք ունինք: Մի դեղեցիկ բանաստեղծութիւն թարգմանողից պահանջում են— և բոլորովին իրաւացի—որ նա լինի բանաստեղծ: Այդպիսի լաւ թարգմանչի դերը կատարում է նաև այն մարդը, որ ժողովրդի ծոցում դոյութիւն ունեցող բանաստեղծութիւնը զեղեցիկ և ամբողջ պահում է իր մըտքում և պատմում ուրիշին, բոլորովին հարազատ մնալով իր լսածին, բոլորովին անխարզախ միջնորդ լինելով ժողովրդի և լսողի մէջ: Միայն տաղանդաւոր մարդն է կարող այդպէս լաւ պատմել, չմոռանալով որ ինքը միայն պատմող է և ոչ բանաստեղծ: Ուրեմն շնորհակալ լինինք Մոկացի Նահապետից և ասենք՝ օրհնեալ լինի նա իր մաշեցնող պանդխտութեան և աղքատութեան մէջ:

† ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ.

Դեկտեմբերի 13 ին կնքեց իւր մահկանացուն հայազգի գիտնական Մկրտիչ Էմինը, նա ծնուել է 1813 թ. Իսպահանի հայաբնակ Նոր-Ջուղայ արուարձանում: Իննը տարեկան հասակում հայրը տանում է նորան հնդկաստան՝ Կալկաթա ուսում տալու «Մարդասիրական ձեմարանում»: Այս տեղ ընկնում է նորա ձեռը Լազարեանց ձեմարանի կանոնադրութիւնը, և նա փախաւոր է դալ Մոսկուա իւր ուսումը շարունակելու յիշեալ ձեմարանում: Քաղաքի նշանաւոր մարդիկ մեծ դժուարութեամբ համոզում են նորա տալին, որ թողնէ նորան գնալու: Եւ ահա Էմինը յանձնւում է շուեղական հիւպատոսին և շուեղական շոգենաւով ձանապարհ է ընկնում: զանազան արկածներից յետոյ հասնում է նա Մոսկուա: Այստեղ նրա վերայ Լազարեանները առանձին ուշադրութիւն են դարձնում, նկատելով նորա բնորոնակութիւններն ու հաղուագիւտ աշխատասիրութիւնը: Այս երիտասարդը լաւ ապագայ է խոստանում, — ասած է ձեմարանի տարեկան հաշիւներից մէկում, — նա արդէն գիտէ հայոց, անգլիացոց, բենգալացոց, պարսից և մասամբ լատին լեզուները: Նա հիմնական կերպով ուսումնասիրելով ռուսերէնը, ապագայում կրկին ուսուցիչ ուսաց լեզուի հնդկաստանում»: Բարեբախտաբար Լազարեանների այս մտադրութիւնը չկատարուեց, և Էմինը նուիրեց բոլոր իւր գործունէութիւնն իւր ազգի մատենագրութեան:

Հանգուցեալը նշանաւոր էր որպէս թարգմանիչ: Դեռ նորա ուսանող ժամանակ արած Ֆրանսերէնից ռուսերէն թարգմանութիւնը, Վիլմենի Միջին դարերի գրականութեան պատմութիւնը, արժանացաւ իւր ժամանակի ռուս մամուլի ուշադրութեան: Համալսարանից աւարտելուց յետոյ նա նշանակւում է Լազարեան ձեմարանում արեւելեան լեզուների վերահսկող: Եւ հետեոյաբար նա ստանում է այն տեղ տեսչի, հայոց լեզուի ուսուցչի և ուսուցչապետի պաշտօնները: Նա նոյնպէս եղել է վերատեսուչ Վլադիմիրի և Մոսկուայի գիմնազիոններում:

Հանգամանքները մեղ չեն ներում այս համառօտ մահացուցակում խօսել մանրամասնօրէն հանգուցեալի գրականական գործունէութեան մասին. կ'ասենք միայն, որ նա թողել է բաւականին անտիպ ձեռագիրներ, ի միջի այլոց և Մովսէս Խորենացու նոր թարգմանութիւնը նորանոր ծանօթութիւններով և մեկնութիւններով: Բացի այդ հանգուցեալը իւր քրտինքով վաստակած գումարի մեծ մասը կտակել է գրականական-ուսումնական մրցանակարաշխութիւնների համար:

Sit tibi terra levis!

ՍՏԱՑԱՆՔ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Աղայեանց Ղ. — Բանաստեղծութիւններ, հրատարակուածին մի խումբ համակրողների. 1890, Թիֆ. տպ. Տ. Նազարեանի. գինն է 1 ր. 50 կ. Ափրիկեանց Պ. և Վ. Վիշնեակ. — Արաքսի արտապոները, ձայնագրած. գինն է 60 կ.

Բազմավէպ հանդիսարան 1890 թ. Վենետիկ.

Դէպի հիւսիսային զլուխ. Թարգ. Հ. Մեսրոպ վ. Ծաղիկեան Մխիթարեան ուխտէն, Վիեննա, Մխիթ. տպարան 1891.

Աղբիւր և Տարազ. 1890 թ. Թիֆլիս.

Թումանեանց Ա. — Արքեպոստոլ և տաք սէր, պատկեր իրական կեանքից. Բազու, տպարան Ս. Բ. Յէր-Յովհաննիսեանցի. գինն է 30 կ.

Ծաղիկ շաքաւածներ. Կ. Պոլիս 1890

Ծաղկահատումեան հնարողը՝ Դոքտոր Ջէններ. Թարգմ. տիկին Մարգարիտ. Մոսկուա 1890, տպար. Մ. Բարխուդարեանի.

Կուսիկեանց Յ. Ս. — Միր ձանաչները, կոմեդիա երեք արարուածով և երկու պատկերով, ոտանաւորով գրուած, Թիֆլիսի կեանքից. Թիֆլիս, 1890, տպար. Մ. Վարդանեանի, գինն է 1 ր.

Հանդէս ամսօրեայ 1890 թ. Վիեննա.

Մարդեան Յ. — Քանդած օջաղ, անցեալից մի յիշողութիւն. Ախալցխա, տպ. Մկ. Ղալամբարեանի, 1889. գինն է 20 կ.

Մուրճ ամսագիր 1890. Թիֆլիս.

Նաւասարդեան Տ. — Հայ-ժողովրդական հէքիւծներ. վեցերորդ գիրք. Թիֆլիս, 1890. տպար. Մ. Ռօտինեանցի. գինն է 50 կ.

Սարգսեանց Լ. — Այց Թիւրքաց Հայաստանին. Թիֆլիս, տպար. Մ. Ռօտինեանցի, 1890. գինն է 60 կ.

Սեղրակեան Ար. եպ. — Ամուսնական խնդիրներ. Մոսկուա. տպ. Մ. Բարխուդարեանի 1891 թ.

Սմայլս Ա. — Ինքնօգնութիւն, Թարգ. Փ. Վարդանեան. Թիֆլիս տպ. Յ. Մարտիրոսեանի. գինն է 1 ր. 50 կ.

Սոխակ Հայաստանի, լիակատար երգարան, հատոր I. հրատ. Գ. ք. Գրիգորեանցի. Մոսկուա տպարան Մ. Բարխուդարեանի, 1890, գինն է 1 ր. 20 կ.

Րաֆֆի. — Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը. Թիֆլիս, տպ.

Տ. Նազարեանի, 1890. գինն է 1 ր. 50 կ.

— Խենթը, արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից. — Զալալէղդին, մի պատկեր նորա արշաւանքից. Մոսկուա. տպ. Մ. Բարխուդարեանի 1890, գինն է 2 ր. 50

Կայծերի վերջը. Թիֆլիս, տպ. Տ. Նազարեանի. 1890 գինն է 50 կ.

Դաւիթ բէկ I, II, III և IV մի զրքում. Թիֆլիս. տպ. Տ. Նազարեանի, 1890. գինն է 2 ր. 50 կ.

Փափազեանց Վ. — Թօփալ. Տփլիս, 1890 տպ. Տ. Նազարեանի. գինն է 5 կ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գործադիր մնայուն Յանձնաժողովոյ Յ. Իզմիրեանց կտակին.

Հստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց, Գործադիր Մնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն որք ազգային զարուժեան և պատմութեան վերաբերեալ որ և է աշխատութեամբ մը կը փափաքին մասնակցիլ Սահակ Մկարտչեան գրական Մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յաւաքիկայ 1891 տարւոյ Յունվարի վերջ առ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հայրն, Յանձնաժողովոյս հասցէին.

Տպագրեալ աշխատութիւնք պէտք է երեք օրինակ յուղարկուին. իսկ ձեռագիրք բնաւ յետ չեն դարձուիր.

Լոյս տեսաւ

ՍՄՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ

Ի Ն Ք Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Գերմաներէնից Թարգմանեց

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ.

Գ ի ն ն է 1 թուր. 50 կոպ.

Մինչև այժմ լոյս են տեսել նոյն Թարգմանչի հրատարակութեամբ

	Բ.	Կ.
1. Ծ. ՇՄԻԴԹ, Ֆրանկլին, 2 տիպ	—	40
2. ————— Վաշինգտոն » »	—	60
3. ————— Իլիական, պատկերներով	1	—
4. ————— Ողիսական »	1	20
5. ՍՄԱՅԼՍ, Բնաւորութիւն	1	50
6. ԱՄԻՉԻՍ, Սիրտ !	1	—
7. ————— Սպէիններից մինչև Անդերը	—	20
8. ԱՐԵԻՆԵԼԵԱՆ ՎԻՊԱՇԽԱՐՀ, Ս.	—	20
9. ՇԻԼԼԵՐ, Աւազակներ, ողբերգութիւն	—	50

Ճանապարհածախքը Թարգմանչի վրայ է.

Հասցէն՝ Тифлисъ, Филиппу Артемьевичу Вартамянцу. Мариино-Анановское училище.

Մամուլի տակ է

Ֆ. ՇՄԻԴԹ, ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՈՒԷՍԸ.

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴԻ ԳՐԹԻ

ԲՈՎԱՆԻ ԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

I. Աղամայ մութը, ականդութիւն. Պերճ Պռօշեանց. II. Բանաստեղծութիւններ Մ. Նալբանդեան. III. Դօն Բիշոփի իմաստը (Ն. Ստորոժենկօ). IV. Տղմուտ. Զինուորի մահը. Տեսնում եմ ահա... բանաստ. Յ. Յովհաննիսեան. V. Առաւօտեան ժամին, Սերբիական զրոյց Լ. Կ. Լազարեւիչից. VI. Գողթան երգիչներին, բանաստ. Լ. Մանուէլեանց. VII. Փիլիսոփայական մանկավարժութեան հիմունքներն ըստ Լինդների, Յ. Բարսուղարեան. VIII. Երկու վարդ (Մ. Վալդաուից), Մարգարիտներ և Երգեր (Բ. Պրուտցից). Երգեր (Հայնէից). Փոթորկից յետոյ (Բ. Պրուտցից). բանաստ. Աղ. Մատուրեան. IX. Ինչո՞ւ աշխարհս բարեկարգուած չէ, Կօտ-Մուրիկայից. Մ. Տէր-Զաքարեանց. X. Մաշան, պատկեր. Սուլթան. XI. Մարտովից. Օտար պօետին. Սոկոլովից. Նոր յուրեր Տաճկահայաստանից. Էշը. Եթէ դու մի օր... բանաստ. Զ. Բալուդեան. XII. Հանս Շիլլերերգերի կեանքի և ճանապարհորդութեան մասին. Վ. Սուրէնեանց. XIII. Դաւաճանին, Իմ հայրենիք... բանաստ. Լ. Մանուէլեանց. XIV. Կարբաս, Մօրիս Մօնտրգիւից. 2. Պ. XV. Արծիւ, բանաստ. Սէֆ. XVI. Ուրուականներ, Փանտազիա. Բ. Տուրգենեւից. XVII. Ծեր ժամկօջը, գարնանային իդիլիա. Վ. Կօրլէնկոյից. XVIII. Թափոր Աւագ ուրբաթ Երեկոյեան, բանաստ. Պ. Ն. Աղամեան. XIX. Վարդանանց պատերազմի պատճառներն և հետևանքը. Եր. Շահադի. XX. Լէօպոլդ Փօն Ռանքէ և հայոց պատմութիւնը, Լօրդ. XXI. Շահիր Խաչատրի երգերից. XXII. Մատենախօսութիւն. Սօս և Վարդիթեր, վէպ Պերճ Պռօշեանցի. Մ. Նալբանդեան. XXIII. Ստացուած գրքեր. XXIV. Յայտարարութիւններ.

I. Հայագիտութիւն, հաղորդեց Կ. Եղեանց.

Հրատարակիչ Մ. ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆ.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Բարոյական, Ուսումնական, Արուեստագիտական.

Ե. ՏԱՐԻ.

Բաժանորդագիրն է 8 ֆրանք—4 ռուբլի թղթադրամ—4 ֆլորին. Հասցէն. ВЪ Вѣннѣ (Австрія). Редакция «АНДЕСЪ». Vien. VII. Mechitaristengasse 4. և համ. Rédaction de la Revue «HANDESS», Vienn (Autriche) VII. Mechitharistengasse 4.

Խմբագր. «ՀԱՆԴԻՍ».

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ՆԵՐԿԱՅ 1891 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Ուրբաթ օրը)

Հրատարակվում է նոյն գիրքով և նոյն ծրագրով.

Խմբագրությունը ստանում է իւր սեպհական հեռագիրները:

Տարեկան գինն է 10 ռ. վեց ամսուանը՝ 6 ռ. հատով՝ 5 կ.:

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռուոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆր.:

Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն:

Թիֆլիսում բաժանորդ են գրվում միայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը:

Խմբագրատանը գտնվում է Բարոնսկայա փողոցում, պոստհեռագրատան դէմ, տուն № 12:

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան. Тифлисѣ, въ редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase), Rédaction du journal «NOR-DAR».

Խմբ. հրատ. ՍՊԱՆՏԻՍՏ ՍՊԱՆՏԻՍՏԻԱՆՆ.

„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՀԱՍՏԻՐԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԵՐԻԻ 1891 թ.

Բաժանորդ պ գրող թիւնը շարունակվում է.

«Մուրճը» հրատարակվում է ամեն ամիս 9—11 թերթ մեծութեամբ:

Տարեկան բաժանորդագինը 10 ռ. է, կէս տարուանը 6 ռ, երեք ամսուանը 4 ռ. մի գրքոյկը 1 ռ. 50 կոպ:

Ընդունվում է բաժանորդագրութիւն նաև մաս-մաս առաջին կիսամեակում ամբողջը վճարելու պայմանով:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисѣ, въ редакцію журнала «МУРЧЪ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction de la Revue «MOURTCH».

Խմբ. հրատ. ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՆ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ „ԱՐՁԱԳԱՆՔ“

1891 թուականի յունուարից «Արձագանք» շաբաթաթերթը
հրատարակվում է

ՔԱՍԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՁԵՌՔՈՎ.

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ

ԿՐԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ.

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ.

Պատկերազարդ «Արձագանքը» կը պարունակէ ձեռնեւալ

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՒ ՆԿԱՐՆԵՐԸ.

- I. Պատկերներ հայրենի և օտար ժամանակակից ու պատմական գործիչների, հռչակուած պետական ծառայութեան, գիտութեան, գրականութեան և գեղարուեստի ասպարէզներում:
 - II. Պատկերներ արձանների, զանազան տեսարանների և պատճէներ գեղարուեստական նկարների:
 - III. Ուրուագիծներ, գծագրութիւններ, յուսանկարներ տեղադրական և հնագիտական բովանդակութեամբ:
 - IV. Ճարտարապետական, դրամագիտական և դրոշագրական նկարներ և պատկերներ:
 - V. Ծածկանկարներ և բառախաղութիւններ:
- Պատկերազարդ «Արձագանքի» բաժանորդագիրն է տարեկան ՏԱՄՆ թուրքի, կէս տարով ՎԵՑ թուրքի:
- Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
- Թիֆլիսում բաժանորդագրութիւն ընդունվում է խմբագրութեան մէջ, Կենդրոնական գրավաճառանոցում և խմբագրի մօտ (Փոխադարձ Վարկի Ընկերութիւն):
- Օտար քաղաքներից պէտք է գիմել՝ Тифлисъ, Редакция еженедѣльнаго иллюстриров. журнала «АРДЗАГАНКЪ». Իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase, Russie) Rédaction du journal illustré «ARDZAGANG».

Խմբ.-հրատ. Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսաթերթ, իմ տարի.

Տարեկան բաժանորդագիրն է 10 ֆր. (4 թուրք.).

Հասցէն՝ Rédaction de la Revue «Basmavep», Venise (Italie), St-Lazare.

Բացում է 1891 թ. բաժանորդագրումինը

„Ա Ղ Բ Ի Ի Ր“

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կըհրատարակուի նոյն ուղղութեամբ, ծրագրով և նոյն աշխատ-
կիցների մասնակցութեամբ:

Աղբիւրի Ա. պրէմիան է ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ խոյ արածելիս:

Աղբիւրի Բ. պրէմիան՝ նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեանի
ԱԼԱԶԱՆԻ ՀՈՎԻՏԸ:

Աղբիւրի Գ. պրէմիան գալ 1892 թ. համար դեկտեմբերի №-ի
հետ կուղարկուի մի պատի-տախտակ և մի գրպանի փոքրադիր օրա-
ցոյց: Բացի դրանցից, տարուայ ընթացքում կառաջարկուին հանելուկ-
ներ, ռեքլամներ, որոնցից առաջին վճռողները կըստանան մրցանակներ:

Բաժանորդ գրուողը ստանում է Ա. պրէմիան իսկոյն, իսկ միւս
քաղաքները ուղարկվում են ներձով, վճարը մեզ հասած օրից ամենա-
ուշը մինչև մի ամս:

Աղբիւրի տարեկան բաժանորդագիրը 3 ռ. է և պրէմիայի ձա-
նապարհաձախ պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա:

Արտասահմանի համար պրէմիաներով 4 ռուբլի:

Ապագիկ ոչ դից չի ընդունվում:

Հասցէն՝ Тифлис, редакция «АГБУРЪ», իսկ արտասահ-
մանից՝ Tiflis, (Caucase) rédaction de la revue AGBUR.

Խմբ. հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

Բացում է 1891 թ. բաժանորդագրումինը

„Տ Ա Ր Ա Զ“

ԱՂԲԻՒՐԻ

ՅԱԻՆԼՈՒԱՅ

ԳԵՂԱՐՈՒԻՍՏԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՅԱԹԱԹԵՐԹԻ.

Պատկերազարդ Տարազ շաբաթաթերթը լոյս կըտեսնէ ամեն
կիրակի օր և այժմեան Տարազ ամսաթերթի դիրքով իւրաքանչիւր
համարը երկու թերթից:

Տարազ պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժա-
նորդագիրը 6 ռուբլի է, արտասահմանի համար 7 ռուբլի (20 Փր.):
Հասցէն՝ Тифлис, ред. иллюстр. еженед. журн. ТАРАЗЪ կամ
Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré TARAZ.

Խմբ. հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ.

XIV.	ՄԻ ԵՐԵՍ ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ. Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ	241
XV.	ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I. ԿԷՍ ԳԻՇԵՐ. II. ՍՈ. ՆԵՏ. III. ԹՇՈՒԱՌԻՆ. IV. Ա՛Խ, ԵՐԱՆԻ ԶԷ. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	281
XVI.	ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. I. ԱՆՊՏՈՒՂ ԵՐ- ԿՈՒՆՔ. II. Է՛Յ, ՍԱ ԷԼ ԻՄ ՍԷՐԸ. III. ՀԱՅՈՒ ՄԵԾԵՐԸ. Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆ	285
XVII.	ՆԱԽԱՐԱՐ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ	290
XVIII.	ԱՇՈՒՂԻ ԵՐԳ	336
XIX.	ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ—ԴԱԻԻԹ ԵՒ ՄՅԵՐ. ԼԷՕ	337
XX.	ՄԱՀԱՅՈՒՑԱԿ. ՄԿՐՏԻԶ ԷՄԻՆ.	378
XXI.	ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.	379
XXII.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	380



ՀԱՅԱՍՏԱՆԻ

1891 թ.

ՀԱՆԴԵՍ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

Մ ԵՒ ՄԻ ԴՐՔԵՐԸ

Բաժանորդագրին է 3 ռ. իսկ իւրաքանչիւրը առանձին
2 ռուբլի:



„ՀԱՆԴԵՍ“

I, II, III և IV

Դրքերը միասին դնողները վճարում են 6 ռ. իսկ իւրա-
քանչիւր դրքի համար առանձին 2 ռ.:

Ցանկացողները դիմում են հետևեալ հասցեով.

Москва, Газетный пер., д. Лянозова, Ти-
пография М. БАРХУДАРЯНЪ.



